

Արտատպած է՝ Ինժեներ Գարինի հիպերբոլիդը; Աւլիտա:— Եր.: Սովետ. գրող, 1982:

## ԱԼԵՔՍԵՅ ՏՈԼՍՈՅ

### ԻՆԺԵՆԵՐ ԳԱՐԻՆԻ ՀԻՊԵՐԲՈԼԻԴ

Ռուսերենից թարգմանեց Սուրեն Խաչատրյանը

Ռուս ականավոր գրող Ալ. Տոլստոյը խոշոր ավանդ ունի գիտաֆանտաստիկ վեպի ասպարեզում: Նրա «Ինժեներ Գարինի հիպերբոլիդը» այն վեպերից է, որոնք սկզբնավորեցին խորհրդային գիտագեղարվեստական ֆանտաստիկան:



Այս վեպը գրվել է 1920—1927 թվականներին, վերամշակվել է, նոր գլուխների ներմուծումով, 1937-ին:

## ՀԵՂԻՆԱԿ

### 1.

Այդ սեղոնին Փարիզի գործարար հասարակությունը ձաշելու էր հավաքվում «Մաժեստիկ» հյուրանոցում: Այստեղ ինչ ազգի նմուշ ասես կարելի էր տեսնել, բացի ֆրանսիացուց: Ճաշի ընթացքում գործնական խոսակցություններ էին գնում և գործարքներ կնքվում երաժշտախմբի նվազի, խցանհանների պայթյունների ու կանանց ճռվողյունի տակ:

Հյուրանոցի փառահեղ, թանկարժեք գորգերով պատկած հոլլում, ապակյա պտտվող դռների մոտ ծանրումնեծ ետուառաջ էր անում բարձրահասակ, ալեհեր, Ֆրանսիայի հերոսական անցյալը հիշեցնող ավյունալի, ածիլված դեմքով մի մարդ: Հազին սև լայն ֆրակ էր, մետաքսե գուլպաներ և ճարմանդներով լաքած կոշիկներ: Կրծքին օրորվում էր արծաթե շղթան: Գերազույն բարապանն էր, «Մաժեստիկ» հյուրանոցը շահագործող բաժնետիրական ընկերության հոգեոր փոխանորդը:

Հոդատապով տառապող ձեռքերը դնելով մեջքին, նա կանգ առավ ապակյա պատի առջև, որի մյուս կողմում, կանաչ լայնարերան տակառների մեջ փթթող ծառերի և արմավենու սաղարթների ներքո, ճաշում էին հաճախորդները: Նա այդ պահին նման էր ակվարիումի պատի միջով բույսերի և միջատների կյանքն ուսումնասիրող պրոֆեսորի:

Կանայք լավն էին, ինչ ասել կուզի: Զահելները հմայում էին ջահելությամբ, անգլոսաքսոնական՝ կապույտ, հարավամերիկյան՝ գիշերվա պես սև, ֆրանսիական՝ բաց մանուշակագույն աչքերի փայլով: Տարեց կանայք իրենց խամրող գեղեցկությունը համեմել էին արդուզարդի անսովորությամբ, ինչպես տապական՝ կծու սոսուսով:

Այս, ինչ վերաբերում է կանանց՝ ամեն ինչ բարեհաջող էր: Սակայն գերազույն բարապանը չէր կարող նույնն ասել ուստորանում գտնվող տղամարդկանց մասին:

Պատերազմից հետո որտեղի՞ց, ո՞ր սև անապատից բանեցին կարճիկ, մատանիավոր մազմզոտ մատերով, դժվարությամբ ածելու ենթարկվող բորբոքուն այտերով այս ճարպակալած ճարպիկ տղաները:

Նրանք փութագար ամեն տեսակ խմիչքներ էին կոնծում առավոտից մինչև առավոտ: Նրանց մազմզոտ մատերն օդից փող էին հյուսում, փող ու էլի փող... Նրանք մեծ մասամբ սպրդել էին Ամերիկայից, այն անհջայ երկրից, ուր ծունկնիհետ քայլում են ոսկու մեջ, ուր պատրաստվում են ջրի գնով առնել ամբողջ հին լավ աշխարհը:

Հյուրանոցի շքամուտքին անաղմուկ մոտեցավ մի ոռլս-ոռյս՝ կարմրափայտե թափքով երկարավուն ավտոմոբիլ: Բարապանը, շղթան զնզգնացնելով, շտապեց դեպի պտտվող դուռը:

Առաջինը մտավ դեղնավուն-գունատ դեմքով, ոչ բարձրահասակ, կարծ կտրած սև մորուքով, լայնառունգ մսեղ քթով մի մարդ: Պարկանման երկար վերարկուով էր և հննքերին քաշած կոտելոկով<sup>1</sup>:

Կանգ առավ՝ նեղարտած սպասելով ուղեկցուիուն, որ խոսում էր շքամուտքի սյան ետևից ավտոմոբիլին ընդառաջ դուրս թռած մի երիտասարդի հետ: Ուղեկցուիին, զլխով անելով նրան, ներս եկավ պտտվող դռնով: Հոչակավոր Զոյա Սոնրոզն էր, Փարիզի ամենափառահեղ կանանցից մեկը: Մահուդե սպիտակ կոստյում էր հազին, որի թևքերը, դաստակից մինչև արմունկ, շրջակարկած էին սև կապկի երկայն մորթիով: Նրա ֆետրե փոքրիկ զլխարկը մեծ Կոլոյի ստեղծագործությունն էր: Նրա շարժումներն ինքնավստահ էին և անփույթ: Գեղեցիկ էր, նրբիրան, բարձրահասակ, երկայնավիզ, փոքր-ինչ մեծ բերանով և փոքր-ինչ վեր ցցված քթով: Նրա կապտավուն մողոշիկ աչքերը պաղ ու կրքոտ երևույթ ունեին:

— Մենք ճաշելո՞ւ ենք, Ռոլինգ, — հարցրեց նա կոտելոկով մարդուն:

— Ոչ, ես նրա հետ կիսում մինչև ճաշելը:

Զոյա Սոնրոզը քմծիծաղեց, կարծես բարեսրտորեն ներելով պատասխանի չոր տոնի համար: Այդ պահին դռնից ներս ընկավ ավտոմոբիլի մոտ Զոյա Սոնրոզի հետ զրուցող երիտասարդը: Նա փեշերը բաց վերարկուով էր, նուրբ ձեռնափայտով, մյուս ձեռքին՝ լայնեզր փափուկ զլխարկ: Նրա հուզաբորբոք դեմքը պատված էր պեպեններով: Կոշտամազ ցանցատ բեղիկներն ասես սոսնձված էին: Նա, երևում է, մտադիր էր բարեկ ձեռքով, սակայն Ռոլինզը, ձեռքը չհանելով վերարկուի գրպանից, ասաց ավելի չոր:

— Դուք ուշացել եք քառորդ ժամ, Սեմյոնով:

— Ինձ պահեցին... Հենց ձեր իսկ գործով... Շատ ու շատ ներողություն եմ խնդրում... Ամեն ինչ կարգավորված է... Նրանք համաձայն են... Վաղը կարող են մեկնել Վարշավա...

— Եթե շարունակեք այդպես բղավել հյուրանոցով մեկ՝ ձեզ դուրս կհանեն, — ասաց Ռոլինզը՝ նրան հառելով պղտորավուն աչքերը, որոնք ոչ մի լավ բան չէին խոստանում:

— Ներեցեք, ես կամաց... շշուկով կիսում... Վարշավայում արդեն պատրաստ է ամեն ինչ՝ անձնագրեր, հազուստներ, զենք ու մնացած բաները: Ապրիլի առաջին օրերին նրանք կանցնեն սահմանը...

---

<sup>1</sup> Եվրոպական կոշտ զլխարկ (ծ. թ.):

— Հիմա ես ու մաղմուազել Մոնրովը պիտի ճաշենք, — ասաց Ռոլինզը, — իսկ դուք կգնաք այդ պարոնների մոտ և կհաղորդեք նրանց, որ ես ցանկանում եմ տեսնել իրենց այսօր ժամը հինգի սկզբներին: Նախազգուշացրեք, որ եթե մտքներով անցնի զիսիս խաղ խաղալ՝ իրենց կհանձնեմ ոստիկանության ձեռքը...

Այս խոսակցությունը տեղի ունեցավ 192... թվականի մայիսի սկզբին:

### 3

Լենինգրադում լուսադեմին, թիավարության դպրոցի ջրապատվարի մոտ, Կրեստովկա գետի ափին կանգ առավ երկթի մի նավակ:

Նավակից ելան երկու մարդ և հենց ջրի կողքին կարծ խոսակցություն ունեցան. խոսում էր միայն մեկը՝ կտրուկ ու հրամայաբար, մյուսը նայում էր հորդառատ, հանդարտահոս մթափուն գետին: Կրեստովսկի կղզու թափուտներից այն կողմ, գիշերվա կապույտի մեջ սկսում էր ծավալվել գարնանային այգալույսը:

Հետո երկուսն էլ կռացան նավակի վրա, և լուցկու բոցը լուսավորեց նրանց դեմքերը: Նավակի միջից փաթեթներ հանեցին, և նա, որ լուսում էր, վերցրեց դրանք ու գնաց անհետացավ անտառում, իսկ նա, որ խոսում էր, թռավ նավակի մեջ, ետ մղվեց ափից ու շտապով գործի դրեց թիերը: Թիավարող մարդու ուրվապատկերն անցավ ջրի արեգնալույս շերտի միջով և ձուլվեց, կորավ հանդիպակաց ափի ստվերում: Մի փոքրիկ ալիք ծփալով գարկվեց ջրապատվարին:

«Սպարտակ» մարզական ընկերության անդամ Տարաշկինը, որ մրցալողի գիշկայի<sup>2</sup> «առաջին թին» էր, այդ գիշեր հերթապահում էր ակումբում: Զահելությունից ու գարնանային եղանակից, կյանքի վաղանցուկ ժամերը պարզապես քնի վրա ծախսելու փոխարեն, Տարաշկինը նստել էր քնած ջրերի վրա բարձրացող պատվարին՝ ծնկները գրկած: Գիշերվա անդորրում կարելի էր մի լավ մտածել: Երկու տարի անընդմեջ անիջալ մուսկվացիները, որ իսկական ջրի հոտն էլ չեն առել, թիավարության դպրոցի ջարդը տալիս են միաթի, քառաթի, ութաթի մակույկներով մրցելիս: Շա տ վիրավորական է...

Բայց մարզիկը գիտի, որ պարտությունը հաղթանակի է տանում: Սա՝ իր հերթին, բայց հետոն էլ երևի գարնանային այգաբացի թռվշանքը, խոտի ու թաց ծառերի սուր հոտն էին օգնում, որ Տարաշկինը պահպանի հոգու արիությունը՝ այնքան անհրաժեշտ հունիսյան մեծ մրցալողից առաջ մարզվելու համար:

<sup>2</sup> Նեղ, երկայն թիանավակ (ձ. թ.):

Զքապատվարին նստած՝ Տարաշկինը տեսավ, թե ինչպես ափի մոտ կանգնեց և հետո էլի հեռացավ երկթի նավակը։ Տարաշկինն անվրդով, հանգիստ էր մոտենում կյանքի երևոյթներին։ Բայց այս անզամ նրան արտառոց թվաց մի բան. ափ իջած մարդիկ նման էին իրար զույգ թիերի պես։ Երկուսն էլ մի հասակի էին, միատեսակ լայն վերարկուներով, ճակատներին քաշած փափուկ լայնեզր զիսարկներով ու համանման սրածայր փոքրիկ մորուքներով։

Բայց, վերջ ի վերջո, հանրապետությունում արգելված չէ, որ մարդիկ, ցամաքում թե ջրում, զիշերները շրջեն իրենց նմանակի հետ։ Տարաշկինը երևի հենց տեղնուտեղն էլ մոռանար սրածայր մորուքավորներին, եթե հենց նույն առավոտյան մի արտաստվոր դեպք չպատահեր թիավարության դպրոցի մոտերքում, կեչու անտառակում, մեխված պատուհաններով կիսավեր փոքրիկ ամառանոցում։

#### 4

Երբ վարդագույն իրացոլքի միջից կղզիների թփուտների վրա բարձրացավ արևը, Տարաշկինը ճորժարքոց մկաններն ու գնաց ակումբի բակը տաշեղ հավաքելու։ Ժամը վեցը կլիներ։ Թիսկաց դրնակը, և թաց արահետով, հեծանիվը կողքից բերելով, մոտեցավ Վասիլի Վիտալիիշ Շելգան։

Շելգան լավ մարզված ատլետ էր, մկանուտ ու թեթև, միջահասակ, ամուր պարանոցով, արագաշարժ, հավասարակշռված ու շրջահայաց։ Նա ծառայում էր քրեական հետախուզությունում և սպորտով զբաղվում էր ընդհանուր մարզման համար։

— Հը, ի՞նչ կա-չկա, ընկեր Տարաշկին։ Ամեն ինչ կարգի՞ն է, — հարցրեց նա՝ հեծանիվը դնելով սանդղամուտքի մոտ։ — Եկել եմ մի քիչ զբաղվեմ... Տես ի՞նչ աղք է, ա՛յ, ա՛յ, ա՛յ...

Հանեց զինվորական բլուզը, շապիկի թևքերը քշտեց նիհար ու ջլուտ կոների վրա և սկսեց հավաքել-մաքրել ակումբի բակը, ուր ջրապատվարի վերանորոգումից հետո դեռ շինանյութի թափոն էր մնացել կիտված։

— Էսօր գործարանից տղերքը կզան, մի զիշերվա մեջ ամեն ինչ կարգի կրերենք, — ասաց Տարաշկինը։ — Հը, Վասիլի Վիտալիիշ, գրվելո՞ւ եք վեցտեղանոցների թիմում։

— Ի՞նչ ասեմ, չզիտեմ, — պատասխանեց Շելգան՝ զլորելով ձյութի տակառը։ — Մի կողմից՝ մուսկվացիներին հարկավոր է ջարդ տալ, մյուս կողմից՝ վախենում եմ, որ չկարողանամ կանոնավոր գալ մարզումների... Մի տիսմար գործ է ձեռքներս ընկել։

— Էլի բանդիտների հաշվո՞վ երևի։

— Չե, ավելի վեր բարձրացիր՝ քրեական գործ միջազգային մասշտարու։

— Ակսոս, — ասաց Տարաշկինը, — մի քիչ իրար հետ կթիակեինք։

Բարձրանալով ջրապատվարի վրա ու նայելով, թե ինչպես են արևի ցոլքերը խաղում գետով մեկ, Շելգան թիւկացրեց ցախավելի կոթով ու կիսածայն կանչեց Տարաշկինին.

— Դուք լա՞վ գիտեք, թե ովքեր են ապրում այս կողմերի ամառանցներում:

— Թափառական մարդիկ են գալիս մնում էստեղ-էնտեղ:

— Իսկ այս ամառանցներից մեկը ոչ ոք չի՞ եկել մարտի կեսերին:

Տարաշկինը աչքերը շլեց արեգնացոլ գետին, ոտքի եղունգներով քորեց մյուս ոտքը:

— Այ, են անտառակում դուռ-լրուսամուտ մեխած ամառանց կա,— ասաց,— մի չորս շաբաթ առաջ, հիշում եմ, նայեցի՝ ծխնելույզից ծուխ էր դուրս գալիս: Մտածեցինք՝ կամ անտեր-անտուն մարդիկ են, կամ բանդիտներ:

— Այդ ամառանցում մնացողներից մեկնումեկին տեսե՞լ եք:

— Սպասեք, Վասիլի Վիտալիիչ: Ոնց որ հենց դրանց կլ տեսա էսօր:

Եվ Տարաշկինը պատմեց ձահճոտ ափին իջած երկու մարդու մասին:

Շելգան զլիսով էր անում՝ «այդպե՞ս, այդպե՞ս», և կկոցվում էին նրա սրաթափանց աչքերը:

— Գնանք՝ ցույց տուր, թե որ ամառանցն է,— ասաց նա ու շոշափեց ետևում գոտուց կախ ատրճանակի պատյանը:

## 5

Կեչու նվազ անտառակում գտնվող ամառանցը թվում էր անբնակ՝ սանդղամուտքը փուել էր, պատուհանների խլափեղկերի վրայից տախտակներ էին մեխսված: Կիսավերնահարկի պապակինները ջարդվել թափվել էին, տան անկյունները մասհակալվել էին ջրհորդանների մնացորդների տակ, պատուհանազոգերի ներքեսում թելուկ էր աճել:

— Դուք իրավացի եք, այստեղ մարդ է ապրում,— ասաց Շելգան՝ ամառանցը դիտելով ծառերի ետևից, ապա զգույշ պտտվեց տան շուրջը:— Այսօր այստեղ մարդիկ են եղել... Բայց ի՞նչն է ստիպել իրենց, որ լուսամուտից ներս խցկվեն: Տարաշկին, հապա եկեք այստեղ, մի բան կարծես այն չի:

Նրանք արագ մոտեցան սանդղամուտքին: Աստիճանների վրա ոտնահետքեր էին նշմարվում: Սանդղամուտքից ձախ, պատուհանից կողքահան կախված էր խլափեղկը: Երեսում էր, որ նոր էր տեղահան արված: Պատուհանը բացված էր դեպի ներս: Պատուհանի տակ, խոնավ ավազի վրա դարձյալ ոտնահետքեր կային. խոշոր-խոշոր, հավանաբար՝ ծանր մարդու, և ավելի փոքր, նեղ-նեղ, թաթերը՝ ներս:

Սանդղամուտքի վրայինը ուրիշ կոշիկների հետքեր են,— ասաց Շելգան:

Նա ներս նայեց պատուհանից, կամացուկ սուլեց, կանչեց. «Հե՛յ, քեռի, ձեր լուսամուտը բաց է, հանկարծ բան-ման չտանեն»: Ոչ մի պատասխան: Կիսախավար սենյակից քաղցրավուն անդուր հոտ էր փշում:

Շելգան կանչեց ավելի բարձր, ելավ կանգնեց պատուհանի գողին, հանեց ատրճանակն ու փափուկ թռավ սենյակ Նրա ետևից ներս մտավ նաև Տարաշկինը:

Առաջին սենյակը դատարկ էր, ոտի տակ թափված էին փշրված աղյուսներ, ծեփ, թերթերի պատառիկներ: Կիսաբաց դուռը տանում էր խոհանոց: Այստեղ ժանգոտ կափարիչով սալօջախի, սեղանների ու աթոռակների վրա պրիմուսներ ձենապակե հալոցամաններ, ապակյա և մետաղե թորանոթներ բանկաներ և ցինկե արկղեր կային: Պրիմուսներից մեկը դեռ թշշում էր՝ հանգչելով:

Շելգան նորից կանչեց. «Հե՛յ, քեռի»: Օրորեց զլուխն ու զգուշորեն մի թեթև բացեց մյուս դուռը. կիսամութ սենյակ էր՝ պատուհանների խլափեղկերից ընկնող արևի հարթ շողերով շերտատված:

— Ահա նա,— ասաց Շելգան:

Սենյակի խորքում, երկաթե մահճակալին հագուստներով, երեսնիվեր պառկած էր մի մարդ: Զեռքերը զլիսից վեր ոլորված կապված էին մահճակալի ճաղերին: Ոտքերը փաթաթված էին պարանով: Պիջակն ու շապիկը պատառոտված էին կրծքի վրա: Գլուխը ետ էր ընկած անբնական, սուր տնկվել էր փոքրիկ մորուքը:

— Ohn՝, տես ինչ են արել սրան,— ասաց Շելգան՝ զննելով սպանվածի կրծքապտկի տակ մինչև կործ մեխված ֆիննական դանակը:— Խոշտանգել են... Նայեցեք...

— Վասիլի Վիտալիիչ, սա հենց էն մարդն է, որ նավակով եկավ: Մեկուկես ժամից ավել չի լինի, ինչ սպանել են սրան:

— Մնացեք այստեղ, հսկեք, ոչ մի բանի ձեռք չտաք, ոչ ոքի ներս չթողնեք, լսո՞ւմ եք, Տարաշկին:

Մի բանի րոպե անց Շելգան ակումբից հրահանգներ էր տալիս հեռախոսով.

— Կարգախումբ ուղարկել կայարանները... Ստուգել բոլոր ուղևորներին... Կարգախմբեր՝ բոլոր հյուրանոցներում: Ստուգել բոլոր նրանց, ովքեր հյուրանոց են վերադարձել առավոտվա վեցի և ութի արանքում: Գործակալ և շուն ուղարկել իմ տրամադրության տակ:

Ամենուր աղբ էր թափված, փշրված ապակի, պաստառի ծվեններ, պահածոյի ժանգոտ տուփեր: Պատուհանները բռնված էին սարդոստայնով, իսկ անկյուններում՝ սնկիկներ, բորբոս: Երևում է՝ ամառանցը լրվել էր դեռ 1918-ից: Բնակելի էին մնացել միայն խոհանոցն ու երկաթե մահճակալով սենյակը: Ոչ մի տեղ՝ ոչ մի հարմարակեցության նշան, ոչ մի ուտելիքի մնացորդ, բացի սպանվածի զբանից գտնված ֆրանսիական բուլկուց ու էժանագին երշիկի կտորից:

Այստեղ չին ապրել, այստեղ եկել էին անելու մի բան, որ հարկ էր եղել գաղտնի պահել: Սա էր խուզարկությունից հետևող առաջին եզրահանգումը, որ արեց Շելգան: Խոհանոցի զննումը ցույց տվեց, որ այստեղ աշխատել են քիմիական ինչ-որ պատրաստուկների վրա: Տնտղելով սալօջախի կափարիչի տակի մոխրակույտը, ուր, ակներևաբար, քիմիական փորձեր էին կատարվել, թերթելով որոշ էջերի անկյունները ծալված մի քանի բրոշյուր, նա արեց երկրորդ եզրահանգումը՝ հանգուցյալն զբաղվել է ընդամենը սովորական պիրոտեխնիկայով<sup>3</sup>:

Նման հետևությունը Շելգային փակուղու մեջ դրեց: Նա նորից խուզարկեց սպանվածի հազուստները, բայց ոչ մի նոր բան չտապ: Այնժամ նա հարցին մոտեցավ մի ուրիշ կողմից:

Պատուհանի տակի ոտնահետքերը ցույց են տալիս, որ մարդասպանները երկուսն են եղել, որ նրանք մտել են պատուհանից՝ անպայման աչքի առաջ ունենալով դիմադարձության հանդիպելու վտանգը, քանի որ ամառանցում եղած մարդը պոկվող խլափեղի ճայթյունը չէր կարող չլսել:

Այնուհետև. եթե ենթադրենք, որ նրանք ցանկացել են պարզապես վերջ տալ այդ մարդու կյանքին, ապա նախ՝ դա կարող էին անել ավելի հասարակ ձևով, ասենք, դարանելով նրան ամառանցի ճանապարհին, և երկրորդ՝ մահճակալի վրա սպանվածի դիրքը ցույց է տալիս, որ նրան տանջաքնել են, որ խողիսողել են ոչ անմիջապես: Մարդասպանները ձգտել են ինչ-որ բան իմանալ այդ մարդուց, որ նա չի ցանկացել ասել:

Իսկ, հետաքրքիր է, ի՞նչ կարող էին կորզել նրանից: Փո՞՞ղ: Դժվար է ենթադրել, թե պիրոտեխնիկայով զբաղվելու համար գիշերով լրված ամառանցը գնացող մարդն իր հետ շատ փող վերցնի: Ավելի հավանական է, որ մարդասպանները ցանկացել են ինչ-որ գաղտնիք իմանալ՝ կապված այդ մարդու գիշերային զբաղմունքների հետ:

Այսպիսով, մտքերի ընթացքը Շելգային հասցրեց այն բանին, որ նա նորից սկսեց հետազոտել խոհանոցը: Ետ քաշեց պատի տակի արկղերն ու հատակին քառակուսի դրոնակ տեսավ, որ նկուղ էր տանում. ամառանցներում հաճախ նկուղներն անում են ուղրակի խոհանոցի տակ: Տարաշկինը վառեց կիսայրված մոմի կտորն ու պառկեց փորի վրա՝ լուսավորելով խոնավ ներքնատունը: Արդեն փստել սկսող, լպրծուն սանդուղքով Շելգան զգուշորեն իջավ ցած:

<sup>3</sup> Պայթուցիկ և հրկիղվող նյութերի, հրթիռների արտադրությամբ զբաղվող տեխնիկա (Ճ. թ.):

— Հապա այստեղ եկեք մոմով,— մթության միջից ձայն տվեց Շելգան:— Ահա թե որտեղ է նրա իսկական լաբորատորիան:

Նկուղն զբաղեցնում էր ամբողջ ամառանցի տակի տարածությունը: Աղյուսե պատերի տակ խաչափառ ոտքերով մի քանի տախտակաշեն սեղաններ կային, զազի բալոններ, ոչ մեծ էլեկտրաշարժիչ և դինամոմեքենա, ապակե վանսաներ, որոնց մեջ սովորաբար էլեկտրոլիզ են անում, փականագործի գործիքներ և բոլոր սեղանների վրա՝ մոխրակույտեր...

— Ահա թե ինչով է նա այստեղ զբաղվել,— որոշ տարակուսանքով ասաց Շելգան՝ տնտղելով նկուղի պատին հենված փայտի հաստ չոր սուներն ու ստվար երկաթաթերթերը: Ե՛վ երկաթաթերթերը, և՝ չոր սուները շատ տեղերում շաղափված էին, դրանցից մի քանիսը երկու կես էին արված, և հատման տեղերն ու անցքերը մակերեսից վառված ու հալված էին թվում:

Դիք կանգնած կաղնու տախտակի մեջ այդ անցքերը հազիվ մեկ տասներորդ միլիմետր տրամագիծ ունենային, կարծես ասեղով էին ծակել: Տախտակի մեջտեղում խոշոր տառերով գրված էր. «Պ. Պ. Գարին»: Շելգան շուտ տվեց տախտակը, և հակառակ կողմում էլ նույն տառերն էին՝ շրջված, ինչ-որ անհասկանալի եղանակով երեք դյույմանոց տախտակը միջաթափանց այրվել-ծակատվել էր այդ ստորագրությամբ:

— Թո՞ւ, չար սատանա,— ասաց Շելգան:— Ոչ, Պ. Պ. Գարինն այստեղ պիրոտեխնիկայով չէ, որ զբաղվել է:

— Իսկ սա՞ ինչ է: Վասիլի Վիտալենիչ, — հարցրեց Տարաշկինը՝ ցույց տալով մեկուկես դյույմ բարձրությամբ, մոտ մեկ դյույմ հիմքով, ինչ-որ գորշ նյութից մամլած մի բրգիկ:

— Որտեղի՞ց գտաք:

— Էստեղ մի ամբողջ արկդ կա սրանից:

Զեռքում այս ու այն կողմ շուտ տալուց, հոսոտելուց հետո Շելգան բրգիկը դրեց սեղանի ծայրին, կողքից մեջը խրեց վառվող լուցկին ու ետ քաշվեց նկուղի հեռավոր անկյունը: Լուցկու բոցը հասավ բրգիկին, և սա բոնկվեց կուրացուցիչ ճերմակ-կապտավուն լույսով: Վառվեց հինգ րոպեից քիչ ավելի, գրեթե անհոտ:

— Խորհուրդ եմ տալիս մյուս անգամ նման փորձեր չանել,— ասաց Շելգան, — բրգիկը հանկարծ կարող էր զազամում դուրս գալ, ու այդ դեպքում մենք չենք ելնի նկուղից: Շատ լավ, ուրեմն մենք ի՞նչ իմացանք: Փորձենք հանրագումարի բերել: Նախ՝ սպանությունը չի կատարվել վրեժ լուծելու կամ կողոպուտի նպատակով: Երկրորդ՝ վավերացնենք սպանվածի ազգանունը — Պ. Պ. Գարին: Առայժմ՝ այսքանը: Դուք ուզում եք առարկել, Տարաշկին, որ թերևս Պ. Պ. Գարինը նապակով հեռացողն է: Չեմ կարծում: Տախտակի վրա ազգանունը գրել է ինքը՝ Գարինը: Դա հոգեբանորեն հասկանալի է: Եթե ես, ասենք, հնարեի այսպիսի հիանալի մի բան, ապա ուրախությունից հաստատ իմ անունը կգրեի

վլան և ոչ մի դեպքում՝ ձերը: Մենք գիտենք, որ սպանվածն աշխատել է լաբորատորիայում, ուրեմն նա էլ հենց զյուտարարն է, այսինքն՝ Գարինը:

Շելգան ու Տարաշկինը դուրս եկան նկուղից և, ծխախոտ կպցնելով, նստեցին սանդղամուտքի աստիճանին, արևի տակ, սպասելով գործակալին ու շանը:

## 7

Գլխավոր փոստատան ընդունման պատուհանից, որ արտասահմանյան հեռագրերի համար էր, ներս խցկվեց մսեղ, կարմրավուն մի ձեռք ու կախվեց դողացող հեռագրաբլանկով:

Հեռագրիչը մի քանի վայրկյան նայեց այդ ձեռքին և, վերջապես, հասկացավ. «Հա՝, հինգերորդ մատը չկա՝ ձկույթը», և սկսեց կարդալ բլանկը:

«Վարշավա, Մարշալկովսկի, Սեմյոնովին: Հանձնարարությունը կատարված է կիսով չափ, ինժեները ճանապարհվեց, փաստաթղթերն ստանալ չհաջողվեց, եմ կարգադրությունների: Ստաս»:

Հեռագրիչը կարմիր մատիտով ընդգծեց «Վարշավա»-ն: Ելավ տեղից և, իրենով պատուհանը ծածկելով, սկսեց վանդակաձաղերի արանքով նայել հեռագիր տվողին: Միջին տարիքի, զանգվածեղ մարդ էր դա՝ փրկած դեմքի անառողջ, գորշ-դեղնավուն մաշկով, բերանը ծածկող կախ-կախ դեղին բեղերով: Աչքերը պահված էին ուռած կոպերի ձեղքերի ետևում: Սափրված զլիին թավշե դարչնագույն կարտուզ էր: Ի՞նչ պատահեց,— հարցրեց նա կոպիտ:— Ընդունեք հեռագիրը:

— Հեռագիրը ծածկագրված է, — ասաց հեռագրիչը:

— Այսինքն ինչպես՝ ծածկագրված է: Ի՞նչ եք դատարկ-մատարկ դուրս տալիս: Սա առևտրական հեռագիր է, պարտավոր եք ընդունել: Ես վկայական ցույց կտամ, ես լեհական հյուպատոսությանն եմ ծառայում, դուք պատասխան կտաք ամենափոքր ուշացման համար:

Չորսմատնանի քաղաքացու այտերը խլխում էին վրդրվմունքից, ոչ թե խոսում էր նա, այլ հաշում, բայց նրա ձեռքը պատուհանի գոգին շարունակում էր դողալ տագնապով:

— Գիտեք ինչ, քաղաքացի, — ասաց հեռագրիչը, — թեև դուք ուզում եք հավատացնել, թե իբր ձեր հեռագիրն առևտրական հեռագիր է, բայց ես հավատացնում եմ, որ քաղաքական է, ծածկագրված:

Հեռագրիչը քմծիծաղեց: Դեղին պարոնը, ավելի բարկանալով, բարձրացրեց ձայնը, իսկ այդ ընթացքում փոստատարը ծառայող օրիորդն աննկատ վերցրեց նրա հեռագիրն ու տարավ դրեց այն սեղանին, որի մոտ Վասիլի Վիտալիկը Շելգան նայում էր այդ օրը հանձնված բոլոր հեռագրերը:

Կարդալով բլանկի վրա՝ «Վարշավա, Մարշալկովսկի», նա դուրս եկավ միջնորմի մյուս կողմը՝ սրահ, կանգ առավ զայրացած առաքիչի թիկունքում և նշան արեց հեռազրիչին։ Սա, քիթը վեր քաշելով, իր հեզնանքն արտահայտեց լեհական քաղաքականության հասցեին և նստեց անդորրազիր գրելու։ Լեհը ծանր ֆախում էր չարությունից, ոտքից ոտք էր փոխվում՝ ճռճացնելով լաքած կոշիկները։ Շելգան ուշադիր նայում էր նրա մեծ-մեծ ոտքերին։ Հետո զնաց դեպի ելքի դուռը, հերթապահ գործակալին գլխով լեհի կողմը ցուց տվեց։

— Հետևել։

Երեկվա հետախուզական որոնումների ժամանակ խուզարկու շունը տարավ հասցրեց Կրեստովկա գետի առափնյա կեչու անտառակին, և ափին էլ հետքերը կորան։ մարդասպաններն այստեղ անկասկած նավակ էին նստել։ Երեկ նոր տվյալներ չհայտնաբերվեցին։ Հանցագործները, ինչպես երևում է, լավ թաքնվել էին Լենինգրադում։ Ոչինչ չտվեց նաև հեռազրերի ստուգում։ Թերևս այս վերջինը միայն, որ հաղորդվելու է Վարշավա, Մեմյոնովին, որոշ հետաքրքրություն է ներկայացնում։

Հեռազրիչն անդորրազիրը տվեց լեհին, սա ձեռքը տարավ ժիշտի գրպանը՝ մանր հանելու։ Այդ պահին բլանկը ձեռքին արագաքայլ պատուհանին մոտեցավ գեղեցիկ, թխաչյա, փոքրիկ սուր մորուքով մի մարդ և, սպասելով, թե երբ տեղ կազատվի, սկսեց հանգիստ անբարյացակամությամբ նայել բարկացկոտ լեհի պատկառելի փորին։

Հետո Շելգան տեսավ, թե ինչպես սուր մորուքով մարդը հանկարծ ձգվեց ամբողջ մարմնով։ Նա տեսավ չորսմատնանի ձեռքն ու անմիջապես լեհի դեմքին նայեց։

Նրանց հայացքները հանդիպեցին։ Լեհի ծնոտը կախ ընկավ։ Ուռած կոպերը լայն բացվեցին։ Պղտոր աչքերում սոսկում առկայծեց։ Նրա դեմքը, հրեշավոր քամելեռնի կերպարանքի նման, մեկեն փոխվեց՝ դարձավ կապարազույն։

Եվ միայն այդ ժամանակ Շելգան հասկացավ, — ճանաչեց լեհի առջև կանգնած մորուքավորին։ Կրեստովկի կեչու անտառակի ամառանցում սպանված մարդու նմանակն էր…

Լեհը խռպոտ ճիշ արձակեց և անհավատալի արագությամբ սլացավ դեպի ելքը։ Հերթապահ գործակալը, որին հրամայված էր միայն հեռվից հետևել այդ մարդուն, նրան անարգել բաց թռղեց փողոց և, աննկատ դուրս սահելով, թռավ ետևից։ Սպանվածի նմանակը կանգնած մնաց ընդունման պատուհանի մոտ։ Մութ շրջանակներով նրա պաղ աչքերը ոչինչ չեն արտահայտում, բացի զարմանքից։ Նա ուսը թռթվեց, և հենց լեհն անհետացավ՝ բլանկը տվեց հեռազրիչին։ «Փարիզ, Բուլվար Բատինյոլ, ցպահանջ, 555 համարին։ Անհապաղ անալիզ կատարել, որակը բարձրացնել հիսուն տոկոսով, մայիսի կեսերին սպասում եմ առաջին ծանրոցին։ Պ. Պ.»։

— Հեռազրիրը վերաբերում է գիտական աշխատանքների, այդ գործով հիմա զբաղվում է Անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից Փարիզ գործուղված իմ ընկերը, — ասաց

նա հեռագրիչին: Հետո գրանից անշտապ դուրս քաշեց ծխախոտատուփը, մի զլանակ տկտկացրեց տուփին ու սկսեց հանդարտ ծխել: Շելգան քաղաքավարի ասաց նրան.

— Թույլ տվեք ձեզ հետ մի երկու խոսք փոխանակել: Մորուքավորը նայեց նրան, ցած թողեց արտևանունքներն ու պատասխանեց ծայր աստիճան սիրալիր.

— Խնդրեմ:

— Ես քրեական հետախուզության գործակալ եմ,— ասաց Շելգան՝ թեթևակի բացելով ու ցույց տալով տումսը,— գուցե ավելի հարմար տեղ գտնենք խոսելու համար:

— Դուք ուզում եք ինձ ձերբակալե՞լ:

— Մազաշափ անգամ այդպիսի մտադրություն չունեմ: Ես ուզում եմ ձեզ նախազգուշացնել, որ այստեղից դուրս փախած լեիր մտադիր է սպանել ձեզ, ինչպես երեկ Կրեստովկակի կղզում սպանել է ինժեներ Գարինին:

Մորուքավորը մի պահ մտածմունքի մեջ ընկավ: Նրան չլրեցին ոչ քաղաքավարությունը և ոչ էլ հավասարակշռությունը:

— Խնդրեմ,— ասաց նա,— գնանք, ես տասնհինգ րոպե ազատ ժամանակ ունեմ:

## 8

Փոստատանը մերձ փողոցում վազելով Շելգային մոտեցավ հերթապահ գործակալը՝ կարմրատակած, բծավորված դեմքով.

— Ընկեր Շելգա, նա ծլկեց:

— Ինչո՞ւ բաց թողիք ձեռքից:

— Նրան ավտոմոբիլ էր սպասում, ընկեր Շելգա:

— Ω՞ւր է ձեր մոտոցիկլետը:

— Այ ընկած է Էնտեղ,— ասաց գործակալը՝ ցույց տալով փոստատան շքամուտքից մի հարյուր քայլ այն կողմ գետին տապալված մոտոցիկլետը:— Նա մոտ թռավ ու դանակով ծակեց դողը: Ես շվացրի: Նա իրեն գցեց մեքենա ու՝ վլ՛զզ...

— Վերցրի՞ք ավտոմոբիլի համարը:

— Չե:

— Ես ձեզ վրա գեկույց կտամ:

— Իսկ ի՞նչ անեի, որ նրա համարը դիտմամբ լրիվ սվաղված էր ցեխով:

— Լավ, գնացեք բաժանմունք, մի քան րոպեից կզամ:

Շելգան հասավ մորուքավորին: Որոշ ժամանակ քայլում էին լուռ: Թեքվեցին դեպի Պրոֆմիությունների զբոսարանը:

— Դուք զարմանալիորեն նման եք սպանվածին,— ասաց Շելգան:

— Ինձ վիճակվել է այդ բանը հաճախ լսել, իմ ազգանունը Պյանկով-Պիտկելչ է,— պատասխանեց մորուքավորը հոժարակամությամբ:— Երեկվա երեկոյան թերթում կարդացի Գարինի սպանության մասին: Սարսափելի է: Ես լավ գիտեի այդ մարդուն, գործիմաց աշխատող էր, հիանալի քիմիկոս: Հաճախ էի լինում Կրեստովսկի նրա լաբորատորիայում: Նա խոշոր հայտնագործություն էր պատրաստում քիմիայի ասպարեզում: Դուք պատկերացում ունե՞ք, այսպես կոչված, ծիսամունքի մասին:

Շելգան շեղակի նայեց նրան, չպատասխանեց, հարցրեց.

— Ինչ եք կարծում, Գարինի սպանությունը կապվա՞ծ է Լեհաստանի շահերի հետ:

— Չեմ կարծում: Սպանության պատճառը շատ ավելի խորն է: Գարինի աշխատանքների վերաբերյալ տեղեկություններն ընկել են Ամերիկյան մամուլը: Լեհաստանը կարող էր միայն փոխանցիչ ինստանցիա լինել:

Զբոսարանում Շելգան առաջարկեց մի քիչ նստել: Մարդ չկար: Շելգան պայուսակից հանեց ոռուսական և արտասահմանյան թերթերի կտրածոներ, փոքր ծնկներին:

— Դուք ասում եք, թե Գարինն աշխատում էր քիմիայի ասպարեզում, թե նրա վերաբերյալ տեղեկությունները թափանցել են արտասահմանյան մամուլ: Այստեղ ինչ-որ բան համընկնում է ձեր ասածին, ինչ-որ բան ինձ համար այնքան էլ պարզ չէ: Ահա, կարդացեք.

«... Ամերիկյում հետաքրքրվում են մի ոռու գյուտարարի աշխատանքների մասին Լենինգրադից ստացված հաղորդագրությամբ: Ենթադրում են, թե նրա սարքն օժտված է մինչև օրս հայտնի բոլոր սարքերի համեմատ առավել հզոր կործանիչ ուժով»:

Պիտկելչը կարդաց և ասաց ժպտալով.

— Տարօրինակ է, չգիտեմ... Չեմ լսել այդ մասին: Ոչ, սա Գարինի մասին չէ:

Շելգան նրան մեկնեց երկրորդ կտրածոն.

«... Խաղաղօվկիանոսյան ջրերում ամերիկյան նավատորմի առաջիկա մեծ զորախաղերի կապակցությամբ ուզմական մինիստրությունում հարցում է արված՝ հայտնի՝ արդյոք հսկայական կործանիչ ուժ ունեցող սարքերի մասին, որ պատրաստվում են Սովետական Ռուսաստանում»:

Պիտկելչն ուսերը թորթեց՝ «Դատարկ բան ե», և Շելգայի ձեռքից վերցրեց երրորդ կտրածոն.

«... Քիմիայի արքա, միլիարդատեր Ռուխնզը մեկնել է Եվրոպա: Նրա այցը կապված է ածխածյութից և կերակրի աղից նյութեր մշակող գործարանների տրեստ կազմակերպելու

հետ: Ուոյլինգը Փարիզում ինտերվյու է տվել՝ համոզմունք հայտնելով, որ քիմիական այդ ահոելի կոնցեռնը հանգստություն կրերի հեղափոխական ուժերից սասանվող Հին Աշխարհի երկրներին: Ուոյլինգն առանձնապես ազրեսիվ խոսեց Սովետական Ռուսաստանի մասին, ուր, ըստ լուրերի, խորհրդավոր աշխատանքներ են տարվում տարածության վրա ջերմային էներգիան հաղորդելու ուղղությամբ»:

Պիտկեահչը կարդաց ուշադիր: Մտքերի մեջ ընկալ: Ասաց՝ հնաքերը խոժոռելով.

— Այս: Շատ հնարավոր է: Գարինի սպանությունն ինչ-որ տեղ կապված է այս տողերի հետ:

— Դուք մարզի՞կ եք,— անսպասելիորեն հարցրեց Շելգան, առավ Պիտկեահչի ձեռքն ու շուր տվեց ափն ի վեր:— Ես խենթի պես տարված եմ սպորտով:

— Դուք ուզում եք տեսնել՝ ձեռքերիս մեջ կոշտուկներ չկա՞ն թիավարելուց, ընկեր Շելգա... Տեսնո՞ւմ եք այս երկու բշտիկը. սրանք ցույց են տալիս, որ ես վատ եմ թիավարում, և որ երկու օր առաջ ես իրոք թիավարել եմ մոտ մեկուկես ժամ շարունակ՝ Գարինին նավակով տարել եմ Կրեստովսկի կրօգի... Զեզ բավարարո՞ւմ է այս տեղեկությունը:

Շելգան բաց թողեց նրա ձեռքն ու ծիծաղեց.

— Կեցցեք, ընկեր Պիտկեահչ, հետաքրքիր կլիներ ձեզ հետ գործ ունենալ լրջորեն:

— Լուրջ պայքարից ես երբեք չեմ հրաժարվում:

— Ասացեք, Պիտկեահչ, դուք առաջներում գիտեի՞ք չորսմատնանի այդ լեհին:

— Ուզում եք իմանալ, թե ինչո՞ւ զարմացա՝ տեսնելով նրա չորսմատնանի ձեռքը: Դուք նուրբ դիտողականություն ունեք, ընկեր Շելգա: Այս, ես զարմացա... ավելին, վախեցա:

— Ինչո՞ւ:

— Այ, այդ մեկը ես ձեզ չեմ ասի:

Շելգան կծոտեց շրթունքի մաշկը: Նայեց թափուր զրոսարանի երկայնությամբ:

Պիտկեահչը շարունակեց.

— Նրա ձեռքը չի միայն այլանդակված, նրա կրծքի վրա էլ շեղակի մի ահավոր սպի կա: Գարինն է խեղել հազար ինն հարյուր տասնինը թվին: Այդ մարդու անունը Ստաս Տիկլինսկի է...

— Չինի՞ հանգուցյալ Գարինը նրան խեղել է նույն եղանակով, ինչ եղանակով կտրատել է երեք դյումանոց տախտակները,— հարցրեց Շելգան:

Պիտկեահչն արագ դեմքը դարձրեց զրուցակցի կողմը, և նրանք որոշ ժամանակ նայում էին իրար աչքերի մեջ, մեկը՝ հանգիստ ու անթափանց, մյուսը՝ զվարթ ու շիտակ:

- Այնուամենայնիվ մտադի՞ր եք ինձ ձերբակալել, ընկեր Շելգա:
  - Ոչ... Այդ բանը մենք երբ էլ ասես կարող ենք անել:
  - Իրավացի եք: Ես շատ բան գիտեմ: Բայց, իհարկե, ոչ մի հարկադրական միջոցով ինձնից դուրս չեք քաշի այն, ինչ չեմ ուզում ասել: Հանցագործության մեջ ես խառը չեմ, դուք ինքներդ էլ գիտեք: Ուզո՞ւմ եք՝ խաղաթոթերը բաց խաղանք: Մենամարտի պայմանները՝ մի լավ հարվածից հետո հանդիպում ենք և անկեղծ զրուցում: Դա կնմանվի շահմատի պարտիայի: Արգելված հնարքները՝ չօքարդել իրար մինչև մահվան դուռը հասցնելը: Ի միջի այլոց, ինչ մենք զրուցում ենք՝ դուք ձեզ ենթարկել եք մահացու վտանգի: Հավատացնում եմ ձեզ, չեմ կատակում: Եթե ձեր տեղը նստած լիներ Ստաս Տիկլինսկին, ես, ասենք, շուրջու կնայեի՝ մարդ չկա և անշտապ կգնայի Սենատի իրապարակ, իսկ նրան կգտնեին այս նստարանի վրա անհուսալիորեն անկենդան, մարմնի վրա՝ նողկալի թեր: Բայց, կրկնում եմ, ձեր հանդեպ այդ ֆոկուսները չեմ բանեցնի: Ուզո՞ւմ եք՝ մի պարտիա:
  - Լավ: Համաձայն եմ,— ասաց Շելգան՝ աչքերը փայլեցնելով,— առաջինը ես եմ հարձակվելու, եղա՞վ:
  - Իհարկե, եթե դուք ինձ չճանկեիք փոստատանը, ես ինքս, անշուշտ, չէի առաջարկի խաղալ: Իսկ ինչ վերաբերում է չորսմատնանի լեհին՝ խոստանում եմ օգնել, գտնեք նրան: Որտեղ էլ նրան հանդիպեմ՝ իսկույն կհայտնեմ հեռախոսով կամ հեռագրով:
  - Լավ: Իսկ հիմա, Պիտկեսի, ցույց տվեք, թե ինչ կա ձեզ մոտ, որով սպառնում եք այդպես...
- Պիտկեսին օրորեց զլուխը, քմծիծաղեց՝ «Թող ձեր ուզածը լինի, խաղում ենք բաց խաղաթոթերով», և կողքի գրպանից զզուշորեն հանեց մի հարթ տուփ: Տուփի մեջ մատի հաստությամբ մետաղե խողովակ կար:
- Ահա և եղած-չեղածը, հարկավոր է միայն սեղմել մի ծայրից, և ներսում ապակի կճայթի:

## 9

Մոտենալով քրեական հետախուզության բաժանմունքին, Շելգան մեկեն կանգ առավ, ասես ճակատով զարկվեց հեռագրապայնը «Հը՝ մ,— փնչաց նա, — հը՝ մ...— և կատաղի ոտքը խփեց գետնին:— Ա՝ իս, սատանա, ա՝ իս, դերասան»...

Շելգան, իսկապես, հիմար որության մեջ էր զգում իրեն: Ինքը երկու քայլի վրա էր եղել մարդասպանից (հիմա կասկած չկար որանում) և չեր բռնել նրան: Խոսել էր մի մարդու հետ, որը, հավանաբար, գիտեր, թե ուր են տանում սպանության բոլոր թելերը, բայց նա հաջողացրել էր ոչինչ չասել իրեն ըստ էության: Այդ Պյանկով-Պիտկեսին ինչ-որ գաղտնիք գիտեր... Ինքն արդեն բռնել էր Պյանկով-Պիտկեսիչի պոչից, բայց ահա՝ «դուրս պրծավ, անիծվածը, աչքիս թող փչեց ու ձղեց արանքը»...

Շելգան վազելով բարձրացավ երրորդ հարկ, իր սենյակը: Սեղանի վրա լրազրի թղթից փաթեթ կար: Պատուհանի խոր խորշում նստած էր փայլեցրած սապոններով հաստլիկ, հեզիկ մի մարդ: Կարտուզը փորի վրա պահած՝ նա գլուխ տվեց Շելգային:

- Բարիչև, տնային կառավարիչ,— ասաց նա՝ տնական օդու սուր հոտ փշելով,— Պուշկարյան փողոց, համար քսանչորս տուն, բնակընկերություն:
  - Դո՞ւք եք այս փաթեթը բերել:
  - Ըիր, ե՞ս: Համար տասներեք բնակարանից... Դա գլխավոր շենքում չի, կից շինությունում է: Երկրորդ օրն է՝ կենվորը կորել է, չկա: Էսօր միլիցիա կանչեցինք, դուռը բացեցինք, ակտ կազմեցինք օրինական կարգով,— տնային կառավարիչը ձեռքով ծածկեց բերանը, այտերը կարմրատակեցին, աչքերը մի թեթև դուրս պրծան, խոնավացան, և տնական օդու հոտը բռնեց սենյակը,— ուրեմն, եղ փաթեթն էլ ես լրացուցիչ կարգով գտա վառարանի մեջ:
  - Կորած կենվորի ազգանո՞ւնը:
  - Սավելի, Իվան Ալեքսեևիչ:
- Շելգան բաց արեց փաթեթը: Դուրս եկան Պյանկով-Պիտկսիչի լուսանկարը, սանր, մկրատ և մուգ գույնի հեղուկի սրվակ՝ մազերի ներկ:
- Ինչո՞վ եր զբաղվում Սավելիը:
  - Գիտական գծով: Երբ որ մեր կոյուղու խողովակը տրաքեց՝ կոմիտեն դիմեց նրան... Նա թե՝ «ուրախությամբ կօգնեի ձեզ, բայց ևս քիմիկոս եմ»:
  - Նա գիշերները հաճա՞խ էր բացակայում տնից:
  - Գիշերնե՞րը: Չե: Չի նկատվել,— տնային կառավարիչը նորից ծածկեց բերանը,— հազիվ լույսը բացված՝ տնից դուրս էր զալիս, դա՝ հաստատ: Բայց էնպէս, որ գիշերները գնար՝ չէ, չի նկատվել, հարբած չենք տեսել:
  - Նրա մոտ ծանոթներ զալի՞ս էին:
  - Չի նկատվել:

Շելգան հեռախոսով խնդրեց միացնել Պետրոգրադյան կողմի միլիցիայի բաժանմունք: Պարզվեց, որ Պուշկարյան փողոցի համար քսանչորս տանը իսկապէս ապրել է Իվան Ալեքսեևիչ Սավելի անունով մի մարդ, երեսունվեց տարեկան, ինժեներ-քիմիկոս: Այնտեղ նա բնակություն է հաստատել փետրվարին, Տամբովի միլիցիայի տված անձնական վկայականով:

Շելգան հեռազրով հարցում ուղարկեց Տամբով և տնային կառավարչի հետ ավտոմոբիլով գնաց Ֆոնտանկա, ուր քրեական հետաքննության բաժանմունքում, սառցապահարանի

Վլա մեկնված էր Կրեստովսկում սպանվածի դին: Տնային կառավարիչն իսկույն ձանաչեց ու ասաց, որ դա տասներեքերորդ համարի կենվորն էր:

## 10

Մոտավորապես այդ ժամանակ իրեն Պյանկով-Դիտկևիչ հորջորջած մարդը ծածկած կառքով հասավ Պետրոգրադյան կողմի պարապուտներից մեկին, վճարեց, իշավ ու մայթով քայլեց պարապուտի երկայնությամբ: Մտավ տախտակե ցանկապատի դռնակով, անցավ բակն ու հետնամուտքի նեղիկ սանդուղքով բարձրացավ հինգերորդ հարկ: Երկու բանալիով բացեց դուռը, դատարկ նախասենյակում միակ մեխից կախեց վերարկուն ու գլխարկը, մտավ սենյակ, ուր չորս պատուհանները կիսով չափ ծածկված էին կավճածեփով, նստեց բզկտված բազմոցին և դեմքն առավ ափերի մեջ: Միայն այստեղ, մեկուսի սենյակում (որ կահավորված էր գրադարակներով ու ֆիզիկայի սարքերով), նա կարող էր վերջապես անձնատուր լինել ահավոր հուզմունքին, գրեթե վիատությանը, որ ցնցում էր նրան երեկվանից:

Դեմքին սեղմված ձեռքերը դողում էին: Նա հասկանում էր, որ մահացու վտանգը չի անցել: Ըսկել էր շրջապատման մեջ: Միայն ինչ-որ չնշին հնարավորություններ կարող էին ստեղծվել իր օգտին, հարյուրից իննատունինը դեմ էին: «Ի՞նչ անզգուշություն, ախ, ի՞նչ անզգուշություն»,— մրմնջում էր նա:

Կամքի ուժով վերջապես հաղթահարեց իր հուզումը, բռունցքով խփեց կեղտոտ բարձին, պառկեց երեսնիվեր ու փակեց աչքերը:

Ահավոր լարվածությամբ ծանրաբեռնված նրա մտքերը հանդարտվեցին: Մեռյալ անշարժության մի քանի բոպեն թարմացրեց նրան: Ելավ տեղից, բաժակը մաղերա լցրեց ու խմեց մի ումպով: Երբ տաք ալիքը տարածվեց մարմնում, նա սկսեց ետուառաջ անել սենյակում մեթոդիկ անշտապությամբ, որոնելով փրկվելու այդ փոքրիկ հնարավորությունները:

Պատի շրիշակի մոտից նա զգուշորեն ետ տարավ հին, պոկված պաստառը, տակից գծազրի թերթեր հանեց ու փաթաթեց խողովակի ձևով: Դարակներից մի քանի գիրք վերցրեց և այդ ամենը, գծազրերի ու ֆիզիկայի սարքերի մասերի հետ, դրեց ճամպրուկը: Ամեն վայրկյան ականջը ձայնի՝ ճամպրուկը ցած տարավ և վառելափայտի մույթ նկուլներից մեկում պահեց աղբակույտի տակ: Նորից բարձրացավ իր սենյակը, գրասեղանի դարակից հանեց ատրճանակը, տնտղեց, խոթեց ետևի գրպանը:

Հինգից քառորդ էր պակաս: Նա նորից պառկեց ու սկսեց ծխել մի գլանակը մյուսի ետևից՝ քնթուկներն անկյունը նետելով: «Իհարկե, նրանք չե՞ն գտել»,— համարյա բղավեց նա՝ ոտքերը ցած զցելով բազմոցից, և կրկին սկսեց ետուառաջ անել սենյակի անկյունագծով:

Իրիկնամուտին ոտքերին քաշեց կոպիտ սապոգները, հազար պարուսինե վերարկուն և դուրս եկավ տնից:

Կեսզիշերին միլիցիայի տասնվեցերորդ բաժանմունքում հեռախոսի մոտ կանչեցին հերթապահին: Աճապարող մի ձայն նրա ականջին ասաց.

— Կրեստովսկի կղզու այն ամառանցը, ուր նախանցյալ օրը սպանություն է կատարվել, իսկույն միլիցիայի կարգախումբ ուղարկել...

Չայնն ընդհատվեց: Հերթապահը մի լավ հայիոյանք նետեց խոսափողի մեջ: Կապվեց ստուգիչ կայանի հետ. պարզվեց, որ զանգել են թիավարության դպրոցից: Զանգեց թիավարության դպրոց: Այնտեղ հեռախոսն իրեն պատում էր երկար, վերջը մի քնաթաթախ ձայն՝ հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում:

— Նոր զանգեցի՞ն ձեր մոտից:

— Հա, զանգեցին,— հորանջելով պատասխանեց ձայնը:

— Ո՞վ զանգեց... Դուք տեսա՞ք...

— Չե, մեզ մոտ էլեկտրականությունը փչացել է: Ասին՝ ընկեր Շելգայի հանձնարարությամբ:

Մի կես ժամ հետո փոքրիկ բեռնատարից չորս միլիցիոներ ցած թռան Կրեստովսկի կղզու լքալ ամառանցի մոտ: Կեշիների ետևում աղոտ բոստրին էին տալիս վերջալուսի մասունքները: Լոռության մեջ թույլ տնքոցներ էին լսվում: Քուրքով մի մարդ բերանքսիվայր ընկած էր տան ետևի սանդղամուտքի մոտ: Շրջեցին՝ պահակն էր: Կողքին քլորոֆորմով թրջված բամբակ էր ընկած:

Սանդղամուտքի դուռը բաց էր կրնկի վրա: Կողպեքը պոկված էր: Երբ միլիցիոներները մտան ներս, նկուղից ինչ-որ խուլ ձայն կանչեց.

— Դոնա՝ կը, խոհանոցի հատակի դրոնա՝ կը բացեք, ընկերներ...

Խոհանոցի պատի մոտ կիսված էին սեղաններ, արկղեր, ծանր պարկեր: Մտնողները դեռ ու դեն զցեցին դրանք, բարձրացրին դրոնակը:

Նկուղից դուրս թռավ Շելգան՝ ոտքից գլուխ կորած սարդոստայնի ու փոշու մեջ, աչքերում՝ վայրենի փայլ:

— Շո՛ւտ, այստեղ եկեք,— գոռաց նա՝ անհետանալով դռան ետևում:— Լուս, շո՛ւտ, շո՛ւտ:

Սենյակում (ուր երկաթե մահճակալն էր), գրպանի լապտերների լույսի տակ հատակին տեսան կրակելուց հետո դեն նետված երկու ատրճանակ, թավշե դարշնագույն մի կարտուզ և սուր հոտ արձակող փսխունքի գարշելի հետքեր:

— Զգո՞ւշ, — բղավեց Շելզան: — Շունչներդ պահեք, հեռացեք, սա մա՞ հ է:

Ետ-ետ գնալով, դուն կողմը մղելով միլիցիոներներին, նա սարսափով ու զազրանքով նայում էր հատակին ընկած մետաղե մատնաշախ խողովակին:

## 12

Խոշոր մասշտաբի բոլոր գործարար մարդկանց նման քիմիայի արքա Ռոլինզը նույնպես գործով ընդունում էր հատուկ դրա համար վարձված շենքում՝ օֆիսում, ուր նրա քարտուղարը զտում-ջոկում էր այցելուներին, որոշում նրանց կարևորության աստիճանը, կարդում նրանց մտքերը և սարսափելի քաղաքավարությամբ պատասխանում բոլոր հարցերին: Սղագրուիին մարդկային խոսքի բյուրեղների էր վերածում Ռոլինզի գաղափարները, որոնք (եթե վերցնենք դրանց մեկ տարվա թվաբանական միջինը և բազմապատկենք դրամական համարժեքով) արժեին մոտավորապես հիսուն հազար դոլար՝ անօրգանական քիմիայի արքայի գաղափարահոսքի յուրաքանչյուր վայրկյանում: Չորս մեքենագրուիիների նշանը եղունգներն անդադար թոշկոտում էին չորս ունդերվուդների ստեղների վրա: Հանձնակատար մանջուկը կանչը լսելուն պես ակնթարթորեն հայտնվում էր Ռոլինզի աշքի առաջ՝ որպես նրա կամքի նյութականացված թանձրուկը:

Ռոլինզի օֆիսը, որ հարակից էր Մալգերք բուվարին, մռայլ ու լուրջ շինություն էր: Մթավուն ծանրապաստառ պատեր, մթավուն բորբիկ<sup>4</sup> հատակին, մթավուն կաշեպատ կահույք: Ապակեծածկ մթավուն սեղանների վրա ռելլամների ժողովածուներ էին, տեղեկատու գրքեր՝ դարչնագույն կաշվե կազմերով, քիմիական գործարանների ծանուցատերեր: Բուխարին զարդարված էր պատերազմի դաշտերից բերված մի քանի ժանգոտ գազի արկերով ու ոմբանետերով:

Մթավուն ընկուզափայտե բարձր դրան ետևում՝ առանձնասենյակում, դիագրամներով, քարտագրամներով ու լուսանկարներով շրջապատված, նստած էր քիմիայի արքա Ռոլինզը: Զտված-ջոկված այցելուները բորբիկի վրայով համրաքայլ մտնում էին ընդունարան, նստում կաշեպատ աթոռներին և հուզումով աշքները հառում ընկուզափայտե դրանք: Այստեղ՝ դրան ետևում, արքայի առանձնասենյակում, օդն իսկ անսաելի թանկ գին ուներ, քանի որ համակված էր վայրկյանում հիսուն հազար դոլար արժեցող մտքերով:

Մարդկային ի՞նչ սիրտ կմնա հանգիստ, երբ պատկառելի լռության մեջ ընդունարանում հանկարծ շարժվի ընկուզափայտե դրան բրոնզե, գունդ պահած թաթի նմանվող զանգվածեղ բռնակը, և հայտնվի մուգ մոխրագույն բաձկոնակով, ամբողջ աշխարհին հայտնի՝ այտերը ծածկող կարճ մորուքով, տանջալիորեն անբարեհամբույր մի մարդուկ, համարյա գերմարյ, որի դեղնավուն-անառողջ դեմքը հիշեցնում է նշանավոր մի արտադրանքի՝ չորս սև զոլերով դեղին զավաթի, ողջ աշխարհին ծանոթ

<sup>4</sup> Ցից խալով մահուլ (ծ. թ.):

ապրանքատեսակը... Կիսաբաց անելով դուռը, արքան հայացքը բներեց այցելուին և ասաց ամերիկյան թունդ առողանությամբ՝ «խնդրեմ»:

## 13

Քարտուղարը, երկու մատներով ոսկե փոքրիկ մատիտը պահած, հարցրեց (սարսափելի քաղաքավարությամբ).

— Ներեցեք, ձեր ազգանո՞ւնը:

— Գեներալ Սուլուտին, ոուս... վտարանդի:

Պատասխանողը զայրացկուտ վեր նետեց ուսերն ու ճմոթված թաշկինակը տարավ գորշ բեղերի վրայով:

Քարտուղարը, ժպտալով այնպէս, կարծես խոսքն ամենահաձելի, սրտամոտ բաների մասին էր, մատիտը վազեցրեց բլոկնոտի վրայով և հարցրեց արդեն միանգամայն զգույշ.

— Ի՞նչ նպատակ է հետապնդելու, մայո Սուլուտին, ձեր նախատեսած զրույցը միստր Ռոլինզի հետ:

— Բացառիկ, խիստ էական նպատակ:

— Թերևս փորձեմ հակիրճ շարադրել այդ ամենը՝ միստր Ռոլինզին ներկայացնելու համար:

— Գիտեք ինչ, այսպէս ասած, պարզ նպատակ է դա, պլան... Երկկողմանի շահ...

— Պլան, որ վերաբերում է բոլշևիկների դեմք քիմիական պայքարին, ես ձեզ ճի՞շտ հասկացա,— հարցրեց քարտուղարը:

— Միանգամայն ճիշտ... Ես մտադիր եմ այդ պլանն առաջարկել միստր Ռոլինզին:

— Վախենում եմ,— հմայիչ քաղաքավարությամբ այցելուի խոսքն ընդհատեց քարտուղարը, և նրա հաճելի դեմքը նույնիսկ տառապանք արտահայտեց, — վախենում եմ, թե միստր Ռոլինզը փոքր-ինչ ծանրաբեռնված լինի նման պլաններով: Անցած շաբաթվանից սկսած հենց միայն ոռւսներից հարյուր քանչորս առաջարկ ենք ստացել բոլշևիկների դեմք քիմիական պատերազմի վերաբերյալ: Մեր պորտֆելում Խարկովի, Մոսկվայի և Պետրոգրադի վրա ծրագրված համաժամանակյա օդային-քիմիական հարձակման հիանալի դիսպոզիցիա կա: Հեղինակը սրամտորեն ուժերը ծավալում է բուժերային պետությունների պլացդարմներում... շատ շատ հետաքրքիր է: Նա նույնիսկ ստույգ նախահաշիվ է տալիս, — վեց հազար ութ հարյուր հիսուն տոննա մանանեխի գագ՝ այդ մայրաքաղաքների բնակչությանը գլխովին բնաջնջելու համար:

Գեներալ Սուլուտինը, կաս-կարմիր կտրելով սաստկորեն զլիին տված արյունից, ընդհատեց նրան.

— Բանն ինչո՞ւմն է, միստր, ուրեմն: Իմ պլանը վատր չի, բայց դա էլ հիանալի պլան է: Հարկավոր է գործել: Խոսքից անցնել գործի... էլ ինչո՞ւ եք ուշացնում:

— Թանկագին գեներալ, ուշացնում ենք այն պատճառով միայն, որ միստր Ռոլինգն առայժմ չի տեսնում իր ծախսերի համարժեքը:

— Ի՞նչ համարժեք, ի՞նչ բան:

— Վեց հազար ութ հարյուր հիսուն տոննա մանանեխի գազը աերոպլաններից թափելը մեծ դժվարություն չէ միստր Ռոլինգի համար, բայց դրա իրազործումը որոշ ծախսեր կպահանջի: Պատերազմը փող արժի, այդպես չէ՞: Ներկայացված պլաններում միստր Ռոլինգն առայժմ միայն ծախսեր է տեսնում: Այնինչ համարժեքը, այսինքն՝ բոլշևիկների դեմ կատարվելիք դիվերսիայից ակնկալվող հասույթը, ցավոք, դեռ չի երևում:

— Պարզ է լույս-օրվա պես... հասույթ... հսկայակա՞ն հասույթ կհասնի բոլոր նրանց, ովքեր Ռուսաստանին կվերադարձնեն նրա օրինական կառավարողներին, նրա օրինական, նորմալ կարգերը,— ոսկու սարե՞ր կհասնեն այդ մարդկանց...— Գեներալը, արծվի նման, հոնքերի տակից աշքերը սեղուի կր քարտուղարի դեմքին:— Հա, ուրեմն համարժե՞քն էլ ցույց տամ:

— Ճիշտ այդպես, պետք է ներկայանալ՝ զինված թվերով. ձախում՝ պասսիվը, աջում՝ ակտիվը, հետո՝ զիծ և տարբերությունը՝ պյուս նշանով, որ կարող է հետաքրքրել միստր Ռոլինգին:

— Ըհը՝,— գեներալը ֆսֆսաց, ճակատին քաշեց փոշոտ զլիարկն ու վճռականորեն քայլեց դեպի դուռը:

Գեներալը դեռ դուրս չէր եկել, երբ շքամուտքից լսվեց հանձնակատար տղայի բողոքող ձայնը, հետո մի ուրիշ ձայն ցանկություն հայտնեց, որ սատանան տանի տղային, և քարտուղարի առջև բռնեց Սեմյոնովը՝ կոճակներն արձակված վերարկուով, ձեռքին՝ լայնեզր զլիարկն ու ձեռնափայտը, բերանի անկյունում՝ ծամծմված սիզար:

— Բարի լույս, բարեկա՞մ,— ասաց նա քարտուղարին փութով և սեղանին նետեց զլիարկն ու ձեռնափայտը,— ինձ արքայի մոտ թողեք հերթից դուրս:

Քարտուղարի ոսկե մատիտը կախվեց օդում:

— Բայց միստր Ռոլինգն այսօր արտակարգ զբաղված է:

— Է՛, դատարկ բան է, բարեկամս... Իմ ավտոմոբիլում սպասում է մի մարդ, որ հենց նոր է ժամանել Վարշավայից... Ասացեք Ռոլինգին, որ մենք եկել ենք Գարինի գործով:

Քարտուղարի հոնքերը թռան ճակատին, և նա անհետացավ ընկուզափայտե դռան ետևում: Մի բոպեից գլուխը դուրս գցվեց. «Մայո Սեմյոնով, ձեզ խնդրում են», — սվավացրեց քարտուղարը մեղմիկ շշուկով: Եվ ինքն էլ սեղմեց գունդ պահած թաթի նմանվող բոնակը:

Սեմյոնովը հառնեց քիմիայի արքայի աչքի առաջ: Ընդ որում նա ոչ մի առանձին հուզում չցուցաբերեց, նախ՝ այն պատճառով, որ բնավորությամբ գրեհիկ էր ու լկտի, և երկրորդ՝ որ այդ պահին արքան ավելի շատ ի՞ր կարիքն ուներ, քան ինքն՝ արքայի:

Ռոլինգը շաղափում էր նրան կանաչ աչքերով: Սեմյոնովը, դրանից էլ չշփոթվելով, սեղանի մյուս կողմից նստեց դեմառեմ: Ռոլինգն ասաց.

— Հապա՞:

— Գործն արված է:

— Գծագրե՞ ըլ:

— Գիտեք, միստր Ռոլինգ, այդ հարցում որոշ թյուրիմացություններ են եղել...

— Ես հարցնում եմ՝ ո՞ւր են գծագրերը: Ես գծագրեր չեմ տեսնում,— ասաց Ռոլինգը ցասկոտ և ափով թեթև զարկեց սեղանին:

— Լսեք, Ռոլինգ, մենք պայմանավորվել ենք, որ ես ձեզ կտրամադրեմ ոչ միայն գծագրերը, այլև հենց սարքը... Ես չափից դուրս շատ բան եմ արել... Մարդիկ եմ գտել... Ուղարկել Պետրոգրադ: Նրանք կարողացել են մտնել Գարինի լաբորատորիան: Տեսել են, թե ինչպես է գործում սարքը... Բայց այդ ժամանակ սատանան գիտի թե ինչ է պատահել... Նախ՝ պարզվել է, որ երկու Գարին կա:

— Ես դա ենթադրում էի հենց սկզբից,— ասաց Ռոլինգը քամահրանքով:

— Մեկին հաջողվեց վերացնել մեջտեղից:

— Սպանեցի՞ք:

— Եթե կուզեք՝ այդպիսի մի բան: Համենայն դեպս, նա մեռել է: Այդ բանը ձեզ չպիտի անհանգստացնի. լիկվիդացիան կատարվել է Պետրոգրադում, լիկվիդացվածն ինքը սովետական հպատակ է՝ դատարկ բան... Բայց հետո հայտնվեց նրա նմանակը: Եվ մենք ահավոր շանքեր գործադրեցինք...

— Մի խոսքով,— ընդհատեց Ռոլինգը,— նմանակը կամ ինքը՝ Գարինը ողջ է, և դուք ինձ չեք հասցրել ոչ գծագրերը, ոչ սարքը, չնայած իմ արած ծախսերին:

— Ուզում եք՝ կանչեմ, ավտոմոբիլում նստած է այդ ամբողջ գործի մասնակից Ստաս Տիկինսկին, նա ավելի մանրամասն կպատմի:

— Ոչ մի Տիկլինսկու էլ չեմ ուզում տեսնել, ինձ պետք են գծագրերն ու սարքը... Զարմանում եմ ձեր համարձակության վրա՝ ներկայանում եք դատարկ ձեռքով...

Չնայած այս խոսքերի սառնությանը, չնայած այն բանին, որ խոսելուց հետո Ռոլինզը սպանիչ հայացքով նայեց Սեմյոնովին՝ վստահ, որ քննողութ վտարանդին կմոխրանա, կշքվի անհետ,— Սեմյոնովը, առանց շփոթվելու, բերանը խոթեց ծամծմված սիզարն ու ասաց ժիր-ժիր.

— Որ չեք ուզում տեսնել Տիկլինսկուն՝ պետք էլ չի, մեծ բան չեք կորցնի: Բայց տեսեք ինչ կա. ինձ փող է հարկավոր, Ռոլինզ, քսան հազար ֆրանկ: Չե՞կ կգրեք, թե կանխիկ կտաք:

Իր ողջ վիթխարի փորձառությամբ և մարդկանց ճանաչելով հանդերձ, Ռոլինզը կյանքում առաջին անգամ էր տեսնում նման անպատկառ մարդու: Նրա մսեղ քթի վրա նույնիսկ քրտինքի պես բան դուրս տվեց՝ այն աստիճան էր իր վրա ճիգ գործ դնում, որ թանաքամանը չհասցնի Սեմյոնովի պեապենուտ մոռութին... (Բուկ քանի՝ քանի թանկարժեք վայրկյաններ կորան այդ տիսմար ու ավելորդ խոսակցության ընթացքում...):

Տիրապետելով ինքն իրեն, նա ձեռքը մեկնեց զանգին:

Սեմյոնովը, նրա ձեռքին հետևելով, ասաց.

— Բանն այն է, թանկագին միստր Ռոլինզ, որ ինձեններ Գարինը հիմա Փարիզում է:

## 15

Ռոլինզը վեր ցատկեց տեղից. ոունգները լայնացան, ուուեց հոնքամիջի երակը: Նա վագեց ու դուռը փակեց բանալիով, հետո կիա մոտեցավ Սեմյոնովին, մի ձեռքով բռնեց աթոռի թիկնակը, մյուսով կառչեց սեղանի եզրից: Կռացավ՝ դեմքը հասցնելով նրա դեմքին.

— Ստում եք:

— Այդ էր պակաս, ինչո՞ւ այսի ստեմ... Տեսեք ինչպես է երել. Ստաս Տիկլինսկին այդ նմանակին հանդիպել է Պետրոգրադում, փոստատանը, երբ սա հեռագիրը տալիս է երել, ու նկատել է հասցեն՝ Փարիզ, Բուլվար Բատինյոլ... Երեկ Տիկլինսկին հենց եկավ Վարշավյից՝ մենք իսկույն վազ տվինք Բատինյոլ բուլվար և սրճարանում քիթ-քթի դեմ ելանք Գարինին կամ նրա նմանակին՝ ի՞նչ իմանաս, սատանան էլ չի ջոկի:

Ռոլինզի հայացքը սողաց Սեմյոնովի պեպենուտ դեմքի վրայով: Ապա շտկվեց նա, և թոքերից գերայրված շունչ դուրս ժայթքեց.

— Դուք շատ լավ եք հասկանում, որ մենք Սովետական Ռուսաստանում չենք, այլ Փարիզում. եթե հանցանք կատարեք՝ ես ձեզ չեմ ազատի գիլիտինից: Բայց եթե փորձեք ինձ խարել՝ ես ձեզ կտրորեմ, փոշի կդարձնեմ:

Վերադարձավ իր տեղը, նողկանքով բացեց չեկի գործույկը. «Քսան հազար չեմ տա, ձեզ հինգն էլ հերիք ե»... Գրեց չեկը, սեղանի վրայով եղունգով հրեց Սեմյոնովի կողմն ու հետո, մեկ վայրկյանից ոչ անց, արմունկները հենեց սեղանին ու դեմքը սեղմեց ափերի մեջ:

## 16

Իհարկե, պատահականության կամքով չեր, որ գեղեցկուի Զոյա Մոնրոզը դարձավ քիմիայի արքայի սիրուիին: Ամեն տեղ պատահականություն են տեսնում միայն հիմարներն ու նրանք, ովքեր չգիտեն, թե ինչ ասել է պայքար և հաղթանակ: «Այս բախտավոր աստղի տակ է ծնվել», — ասում են նրանք նախանձով և հաջողակ մարդուն նայում ինչպես հրաշքի: Սակայն բավական է տապալվի նա, որպեսզի հազարավոր հիմարներ հաճույքով ոտքի տակ տան նրան՝ աստվածային պատահականությունից մերժված այդ թշվարին:

Ոչ պատահականության ոչ մի նշույլ Զոյա Մոնրոզին խելքն ու կամքը միայն հասցրին Ռուինզի անկողնուն: Նրա կամքը, պողպատի նման, կոփված էր տասնինը թվականի արկածներով: Նրա միտքը սուր էր, այնքան, որ նա զիտակցաբար շրջապատողների մեջ վառ էր պահում իր հանդեպ աստվածային ճակատագրի կամ՝ Երջանկության բացառիկ բարեհաճության հավատը...

Այն թաղամասում, ուր ապրում էր նա (Սեն գետի ձախ ափ, Սեն փողոց), մանր ապրանքների, համեմունքի, զինու, ածխի և նպարեղենի կրպակներում Զոյա Մոնրոզին սրբի պես մի բան էին համարում:

Նրա ցերեկային ավտոմոբիլը՝ 24HP սև լիմուզինը, նրա զբոսամեքենան՝ 80HP կիսաստվածային ռոլս-ռոյսը, նրա իրիկնային ծածկակառքը՝ Էլեկտրական լուսերով, ներսը՝ մզդակած մետաքսով, փոքրիկ ծաղկամաններով, արծաթե բռնակներով, և առանձնապես Դովիլի կազինոյում մեկուկես միլիոն ֆրանկ շահելու իրողությունը կրոնական հայցը էին առաջ բերել թաղամասում:

Զոյա Մոնրոզը շահած գումարի կեսը շրջահայցորեն, մեծ բանիմացությամբ «մուծեց» մամուլ:

Հոկտեմբերից (փարիզյան սեզոնի սկիզբը) մամուլը «գեղեցկուի Մոնրոզին գրչի վրա առավ»: Նախ, մանրբուրժուական մի թերթում պասկվիլ հայտնվեց Զոյա Մոնրոզի սնանկացած սիրեկանների մասին: «Գեղեցկուիին չափից դուրս թանկ է նստում նրանց վրա», — աղաղակում էր թերթը: Հետո մի ազդեցիկ ուսդիկալ պաշտոնաթերթ, որտեղից որտեղ, այդ պասկվիլի առիթով որոտագին արտահայտվեց մանր բուրժուաների մասին, որոնք պատլամենտ են ուղարկում իրենց թաղամասից ոչ լայն մտահորիզոնով խանութպանների և զինեվաճառների: «Դիցուք թե Զոյա Մոնրոզը սնանկացրել է մի դյուժին օսարերկրացիների, — բացականչում էր թերթը, — բայց դրա փոխարեն նրանց փողերը շրջանառություն են կատարում Փարիզում, ավելացնում են կյանքի էներգիան:

Մեզ համար Զոյա Մոնրոզը կենսական առողջ հարաբերությունների խորհրդանիշ է միայն, հավերժական շարժման խորհրդանիշ, ուր մեկն ընկնում է, մյուսը՝ բարձրանում»:

Զոյա Մոնրոզի դիմանկարն ու կենսագրությունը տպագրվում էին բոլոր թերթերում:

«Նրա հանգուցյալ հայրը ծառայել է Սանկտ-Պետերբուրգի կայսերական օպերայում: Ութնամյա հմայիչ աղջնակ Զոյային տալիս են բալետի դպրոց: Անմիջապես պատերազմից առաջ նա ավարտում է դպրոցն ու բալետում իր անդրանիկ ելույթն ունենում այնպիսի հաջողությամբ, ինչպիսին չէր հիշում Հյուսիսի մայրաքաղաքը: Բայց ահա՝ պատերազմ, և Զոյա Մոնրոզը գրառատությամբ առլեցուն մատադ արտով նետվում է ռազմաճակատ՝ կարմիր խաչը կրծքին մոխրագույն զգեստով: Նրան տեսնում են ամենավտանգավոր տեղերում՝ թշնամական արկերի մրրիկի մեջ հանգիստ խոնարիված վիրավոր զինվորի վրա: Ինքն էլ է վիրավորվում (որ, սակայն, վնաս չի տալիս դեռատի գեղուհու նրա մարմնին), նրան տանում են Պետերբուրգ, և այնտեղ նա ծանոթանում է ֆրանսիական բանակի մի կապիտանի հետ: Հեղափոխություն: Ռուսաստանը դավաճանում է դաշնակիցներին: Զոյա Մոնրոզի հոգին ցնցված է Բրեստի հաշտությունից: Իր բարեկամի՝ ֆրանսիացի կապիտանի հետ նա փախչում է հարավ և այնտեղ ձի հեծած, հրացանը ձեռքին, որպես մոլեզնած գեղանազություն, կովում է բոլշևիկների դեմ: Նրա բարեկամը մերնում է բծավոր տիֆից: Ֆրանսիացի ծովայինները Զոյա Մոնրոզին ականակրով տանում են Մարսել: Եվ ահա նա Փարիզում է: Նա ընկնում է այրեգիդենտի ոտքերը՝ խնդրելով իրեն հնարավորություն տալ ֆրանսահպատակ դառնալու: Նա պարում է ի նպաստ ավերված Շամպանի թշված բնակչության: Նա բարեգործական բոլոր երեկոների մասնակիցն է: Նա շլացուցիչ աստղ է՝ ընկած Փարիզի մայթերին»:

Ընդհանուր կողմերով կենսագրությունը հավաստի էր: Փարիզում Զոյան արագ շուրջը նայեց ու գնաց ուղիղ գծով՝ միշտ առաջ, միշտ պայքարի մեջ, միշտ դեպի ամենադժվարինն ու արժեքավորը: Նա իսկապես սնանկացրել էր մի դյուժին վաղահաս հարուստների՝ հենց այն կարձլիկ տղաներից, որոնք մատանիավոր մազմզու մատներ ունեն և բորբոքուն այտեր: Զոյան թանկ կին էր, և նրանք կործանվեցին:

Նա շատ շուտ հասկացավ, որ այդ վաղահասներն իրեն մեծ շուր ու փայլ չեն տա Փարիզում: Այնժամ նա սիրեկան ընտրեց մի ճանաչված լրագրողի, հետո նրան դավաճանեց ու կապվեց խոշոր արդյունաբերությունից ներկայացված պառլամենտական մի գործչի հետ և հասկացավ, որ քաներորդ դարի քանական թվականներին ամենափառավոր բանը քիմիան է:

Քարտուղար վարձեց, որն ամեն օր նրան գեկուցում էր քիմիական արդյունաբերության հաջողությունների մասին և անհրաժեշտ տեղեկություններ տալիս: Եվ այդպես նա իմացավ, որ առաջիկայում Եվրոպա գալու մտադրություն ունի քիմիայի արքա Ռուխնգը:

Խսկույն մեկնեց Նյու Յորք: Այնտեղ, տեղում, հոգով ու մարմնով գնեց խոշոր թերթի մի ռեպորտյորի, և մամուլում հաղորդագրություն հայտնվեց՝ Նյու Յորք է եկել Եվրոպայի ամենախելացի, ամենագեղեցիկ կինը, որն իր մեջ միավորում է պարուհու մասնագիտությունը և հետաքրքրությունն ամենամոդայական գիտության՝ քիմիայի

հանդեպ, և որը նույնիսկ, ավանդական աղամանդների փոխարեն, վզին լուսատու գագով լցված բյուրեղապակյա գնդիկների մանյակ է զցում: Այդ գնդիկներն իրենց ներգործությունն ունեցան ամերիկացիների երևակայության վրա:

Եթե Ռուսական բարձրացավ Ֆրանսիա մեկնող շոգենավը, վերևի տախտակամածին, թենիսի հրապարակում, ծովային քամուց խշշացող լայնատերև արմավենու և ծաղկուն նշենու միջն, հյուսկեն թիկնաթոռին նստած էր Զոյա Մոնրով:

Ռուլինգը գիտեր, որ դա ամենամոդայական կինն է Եվրոպայում, բացի այդ, Զոյա Մոնրովն իսկապես դուր եկավ իրեն: Ռուլինգը նրան առաջարկեց լինել իր սիրուհին: Զոյա Մոնրովը պահանջ դրեց պայմանագիր կնքել՝ մեկ միջին դոլլարի տուժավճարով:

Ռուլինգի նոր կապի և արտասովոր պայմանագրի մասին հաղորդվեց ռադիոյով հենց բաց օվկիանոսից: Էյֆելյան աշտարակն ընդունեց այդ սենսացիան, և հաջորդ օրը Փարիզն սկսեց խոսել Զոյա Մոնրովի և քիմիայի արքայի մասին:

## 17

Ռուլինգը չեր սխալվել սիրուհու ընտրության մեջ: Դեռ շոգենավում Զոյան ասաց նրան.

— Սիրելի բարեկամ, իմ կողմից հիմարություն կլիներ, եթե քիթս խոթեի ձեր գործերի մեջ: Բայց դուք շուտով կտեսնեք, որ իբրև քարտուղար ես շատ ավելի հարմար եմ, քան սիրուհի: Կանացի զիզի-պիզիներն ինձ քիչ են զբաղեցնում: Ես փառասեր եմ: Դուք մեծ մարդ եք, ես հավատում եմ ձեզ: Դուք պիտի հաղթեք: Չմոռանաք՝ ես հեղափոխություն եմ տարել, հիվանդացել եմ բծավոր տիֆով, ես կուել եմ իբրև զինվոր և ձի հեծած հազարավոր կիլոմետրեր եմ կտրել: Այդ ամենն անկարելի է մոռանալ: Իմ հոգին խարանված է ատելությամբ:

Ռուլինգին զվարճալի թվաց նրա պաղ կրքոտությունը: Մատով թեթևակի զարկեց նրա քթի ծայրին ու ասաց.

— Պստիկս, գործարար մարդու մոտ քարտուղար լինելու համար դուք չափից շատ կիրք ու եռանդ ունեք, դուք խելազար եք, քաղաքականության մեջ և գործերում դուք միշտ դիլետանտ կմնաք:

Փարիզում Ռուլինգն սկսեց բանակցություններ վարել քիմիական գործարանները միավորելով տրեստ կազմելու շուրջ: Ամերիկան խոշոր կապիտալ ներդրեց Հին Աշխարհի արդյունաբերության մեջ: Ռուլինգի գործակալները հեռատեսորեն գնեցին բոլոր բաժնետոմսերը: Փարիզում Ռուլինգին «ամերիկյան գոմշացուլ» էին ասում: Եվ իրոք, նա հսկա էր թվում եվրոպական արդյունաբերողների շրջապատում: Նա ընթանում էր՝ ոչ մի արգելքի չնայելով: Նրա դիտանկյունը նեղ էր ու սուր, նա իր առջև տեսնում էր սոսկ մի նպատակ՝ համաշխարհային քիմիական արդյունաբերությունը կենտրոնացնել մեկ (սեփական) ձեռքում:

Զոյա Մոնրոզը կարձ ժամանակում ուսումնասիրեց նրա բնավորությունը, պայքարի նրա հնարքները: Հասու եղավ նրա ուժին ու թուլությանը: Ոոլինզը վատ էր գլուխ հանում քաղաքականությունից ու երբեմն հիմարություններ էր դուրս տալիս հեղափոխության ու բոլշևիկների մասին: Զոյա Մոնրոզն աննկատելիորեն նրան շրջապատեց պետքական և օգտակար մարդկանցով: Կապեց նրան լրագրողների աշխարհի հետ՝ այստեղ զրույցները դեկավարողի դեր ստանձնելով: Նա կաշոռում էր մանր խրոնիկորներին, որոնց վրա Ոոլինզն ուշադրություն չէր դարձնում, բայց որոնք նրան ավելի մեծ ծառայություններ էին մատուցում, քան հեղինակավոր լրագրողները, որովհետև մժուկների պես թափանցում էին կյանքի բոլոր ծակուծուկերը:

Եթք Զոյա Մոնրոզը «դասավորեց» պառամենտում աջ դեպուտատներից մեկի ոչ մեծ ճառը «Ֆրանսիայի քիմիական պաշտպանության նպատակներով ամերիկյան արդյունաբերության հետ սերտ կապի անհրաժեշտության մասին», Ոոլինզն առաջին անգամ տղամարդավարի, բարեկամաբար, թոթվելով սեղմեց նրա ձեռքը.

— Շատ լավ, ես ձեզ քարտուղար եմ վերցնում շարաթական քսանյոթ դոլլար ոռձիկով:

Ոոլինզը հավատաց Զոյա Մոնրոզի օգտակարությանը և սկսեց նրա հետ անկեղծ լինել գործնականորեն, այսինքն՝ մինչև վերջ:

## 18

Զոյա Մոնրոզը կապ էր պահպանում ոուս վտարանդիներից մի քանիսի հետ: Նրանցից մեկը՝ Սեմյոնովը, Մոնրոզի մոտ ոռձիկով մշտական ծառայության մեջ էր: Նա պատերազմական ժամանակների շրջանավարտ ինժեներ-քիմիկոս էր, հետո եղել էր պրապորշչիկ, հետո՝ սպիտակ սպա, իսկ տարագրության մեջ զբաղվում էր առևտրական մանր միջնորդ գործարքներով, ընդիուպ մինչև փողոցային առջիկներին մաշված զգեստներ վերավաճառելը:

Զոյա Մոնրոզի մոտ նա հակահետախուզական գործունեություն էր վարում: Նրա համար բերում էր սովետական հանդեսներ ու թերթեր, հաղորդում տեղեկություններ, բամբասանքներ ասեկոսեներ: Ճշտակատար էր, հանդուգն ու ոչ մի բանից չխորշող:

Մի անգամ Զոյա Մոնրոզը Ոոլինզին արևելյան լրագրից մի փոքրիկ հողված ցույց տվեց, ուր հաղորդվում էր Պետրոգրադում պատրաստվող կործանիչ ահուելի ուժ ունեցող սարքի մասին: Ոոլինզը ծիծաղեց.

— Ցնդաբանություն է, ոչ ոքի չեն վախեցնի... Դուք չափից դուրս վատ երևակայություն ունեք: Բոլշևիկներն ընդունակ չեն որևէ բան ստեղծելու:

Այնժամ Զոյան նախաձաշի հրավիրեց Սեմյոնովին, և նա այդ հոդվածի առիթով արտասովոր մի պատմություն արեց.

«... Տասնինը թվին Պետրոգրադում, իմ փախուստից քիչ առաջ, փողոցում հանդիպեցի բարեկամներից մեկին՝ լեհ Ստաս Տիկլինսկուն, որի հետ ավարտել եմ տեխնոլոգիական ինստիտուտը: Թիկունքին՝ մախաղ, ոտքերը փաթաթված գորգի կտորներով, վերարկուի վրա՝ կավճով գրված թվանշաններ-հերթերի հետքեր: Մի խոսքով, ամեն ինչ պետքն եղածի պես: Բայց դեմքն աշխույժ է: Աչքով է անում: Ի՞նչ է եղել տեսնես: «Ձեռքս, ասում է, այնպիսի մի ոսկի գործ է ընկել, այ լուլի՝, միլիոնանոց գործ: Ի՞նչ միլիոնանոց, հարյուրավոր միլիոնների (ոսկով, իհարկե):» Ես, հասկանալի է, կպա թե՝ պատմիր, բայց նա ծիծաղեց միայն: Դրանով էլ բաժանվեցինք: Մի երկու շաբաթից անցնում էի Վասիլկյան կղզիով, որտեղ Տիկլինսկին է ապրում: Հիշեցի նրա ոսկի գործը, ասի ինձուինձ՝ արի այդ միլիոնատիրոջից մի կես ֆունտ շաքար խնդրեմ: Մտա մոտը: Տեսնեմ՝ Տիկլինսկիս պառկած է համարյա մահամերձ, ձեռքերն ու կուրծքը բինտով փաթաթված:

- Այդ ո՞վ է քեզ այդպես մշակել:
- Սպասի՞ր,— ասում է,— սուրբ կույսն ինձ օգնի՝ լավանամ, պիտի դրան սպանեմ:
- Ո՞ւմ՝ դրան:
- Գարինին:

Ու նա պատմեց, Ճիշտ է, կցկտուր ու մշուշապատ՝ չցանկանալով մանրամասները բացել, թե ինչպես իր հին ծանոթը՝ ինժեներ Գարինը, իրեն առաջարկել է ածխամումեր պատրաստել չտեսնված կործանիչ ուժ ունեցող ինչ-որ սարքի համար: Տիկլինսկուն շահագրգուելու համար խոստացել է տուկոս բաժին հանել նրան շահույթից: Մտադիր է փորձել ավարտելուց ետ պատրաստի սարքն առած ծլկել Շվեյցարիա, այնտեղ արտոնագիր ձեռք բերել և անցնել սարքի շահագրծմանը՝ ինքնուրույն ու անկախ:

Տիկլինսկին ոգևորությամբ սկսում է աշխատել բրգիկների վրա: Խնդիրն այն էր, որ դրանք, հնարավորին չափ փոքր ծավալ ունենալով, հնարավորին չափ մեծ ջերմություն արձակեին: Գարինը սարքի կառուցվածքը գաղտնի է պահում, ասում է, թե դրա սկզբունքը չտեսնված պարզ է, ուստի ամենափոքր ակնարկն իսկ կրացի գաղտնիքը: Տիկլինսկին նրան բրգիկներ է մատակարարում, բայց ինչքան էլ խնդրում է՝ ոչ մի կերպ չի կարողանում համոզել, որ սարքը ցույց տա:

Նման անվստահությունը կատարեցնում է Տիկլինսկուն: Նրանք սկսում են հաճախակի վիճել: Մի անգամ Տիկլինսկին թաքուն հետևում է Գարինին մինչև փորձավայրը՝ Պետերբուրգյան կողմի խուլ փողոցներից մեկում գտնվող կիսավեր մի տուն: Տիկլինսկին մի կերպ ներս է սողոսկում Գարինի ետևից, երկար իշխում է ինչ-որ աստիճաններով, գնում ապակիները շարդված պատուհաններ ունեցող դատարկ սենյակներով և վերջը ներքնահարկից լսում ժայթքող գոլորշու ձայն հիշեցնող ահավոր ֆշտոց և վառված բրգիկների ծանոթ հոտն առնում:

Նա զգուշորեն իջնում է նկուղ, բայց ոտքը դիմչում է կոտրատված աղյուսների, ընկնում է, աղմուկ հանում և, մի երեսուն քայլի վրա, ճրագի լուսի մեջ տեսնում է Գարինի ծամածոված դեմքը: «Ո՞վ է, ո՞վ կա այստեղ», — գոռում է Գարինը կատաղի, և նույն պահին

գործելու ասեղից ոչ հաստ կուրացուցիչ մի ձառագայթ պոկվում է պատի մոտից և հասնում Տիկինսկուն՝ շեղակի ձեղքելով կուրծքն ու թեր:

Տիկինսկին ուշի է գալիս առավոտվա դեմ, երկար օգնություն է կանչում և արյունաշաղախ, չորեքթաթ դուրս է սողում նկուղից: Նրան վերցնում են անցորդները և ձեռնասայլակով հասցնում տուն: Երբ լավանում է, սկսվում է պատերազմը Լեհաստանի հետ, և նա ստիպված պոչը քաշում է «Պետրոգրադից»:

Այս պատմությունը Զոյա Մոնրովի վրա արտակարգ տպավորություն գործեց: Ուոլինզը թերահավատորեն քմծիծաղում էր. նա հավատում էր միայն հեղձուցիչ գագերի ուժին: Զրահանավերը, ամրոցները, թնդանոթները, մեծ ու ծանրաշարժ բանակները և նման բաները, նրա կարծիքով, բարբարոսության մնացուկներ էին: Աերոպլաններ և քիմիա՝ ահա պատերազմի միակ հզոր զենքերը: Իսկ պետրոգրադյան ինչ-որ սարքեր-մարքեր դատարկ բաներ էին ու դատարկ բաներ...

Սակայն Զոյա Մոնրովը չհանգստացավ: Նա Սեմյոնովին ուղարկեց Ֆինլանդիա, որ այնտեղից ստույգ տեղեկություններ ստանա Գարինի մասին: Սեմյոնովի վարձած սպիտակ սպան դահուկներով անցավ ոուսական սահմանը, Պետրոգրադում գտավ Գարինին, խոսեց նրա հետ և նույնիսկ առաջարկեց միասին աշխատել: Գարինն իրեն շատ զգույշ էր պահում: Հստ երևույթին հայտնի էր նրան, որ իրեն հետևում են արտասահմանից: Իր սարքի մասին խոսում էր սոսկ այն իմաստով, որ առասպելական զորություն է սպասում նրան, ում ձեռքին կլինի այդ հրաշքը: Սարքի մոդելի փորձարկումները փայլուն արդյունքներ տվին: Գարինն սպասում էր միայն, որ ավարտվեն աշխատանքները մոմբրգիկների վրա:

## 19

Վաղ գարնանային կիրակնօրյա անձրևոտ այդ երեկոյան պատուհանների և անհամար լապտերների լույսերն արտացոլվում էին փարիզյան փողոցների ասֆալտի մեջ:

Թաց ավտոմոբիլները սլանում էին ասես սև ջրանցքներով, իրե խորխորատների վրայով: Վազ տախիս, բախսվում, պտույտ-պտույտ էին անում ջրաթաթավ հովանոցները: Անձրևամշուշը հագեցած էր զբոսարանների փտահոտ տամկությամբ, բանջարեղենի կրպակների, բենզինի այրուքի և օծանելիքի հոտերով:

Անձրևաջուրը չոչում էր գրաֆիտե տանիքների, պատշգամբների վանդակների, սրճարանների լայնատարած պարուսինե շերտավոր ծածկերի վրայով: Մշուշում աղոտ վառվում, պտտվում, առկայծում էին բազմապիսի զվարճավայրերի լուսառելամները:

Այդ օրը փոքր մարդիկ՝ գործակատարներ ու գործակատարուհիներ, մանր պաշտոնյաներ ու ծառայողներ, ժամանակ էին անցկացնում ով ինչպես կարող էր: Խոշոր, գործարար,

պատկառելի մարդիկ նստել էին իրենց տներում, բուխարիների առաջ: Կիրակին հասարակ ժողովրդի՝ ամբոխի օրն էր, որ տրվել էր նրան հոշտելու համար:

Զոյա Մոնրոզը, ծնկներն իրեն քաշած, նստել էր լայն բազմոցին, շրջապատված բարձիկներով: Ծխում էր ու նայում բուխարու կրակին: Ռոլինզը ֆրակով տեղափորվել էր խոշոր թիկնաթոռի մեջ, ոտքերը դրել աթոռակին և նույնպես ծխում էր ու նայում վառվող ածուխներին:

Բուխարու բոցից լուսավորված նրա դեմքը թվում էր կաս-կարմիր շիկացած,— տիեզերքի տիրակալի դեմքը՝ մսեղ քիթը, կարճ մորուքով պատված այտերը, թեթևակի բորբոքված աչքերը կիսախուփ կոպերի տակ: Նա անձնատուր էր եղել հաճելի տաղտուկին, որ անհրաժեշտ է շաբաթը մեկ անգամ՝ ուղեղին ու նյարդերին հանգիստ տալու համար:

Զոյա Մոնրոզն առաջ պարզեց գեղեցիկ հոլանի ձեռքերն ու ասաց.

— Ճաշից հետո արդեն երկու ժամ է անցել, Ռոլինզ:

— Այո, — պատասխանեց Ռոլինզը, — ես ել ձեզ նման, կարծում եմ, որ մարտողության ակտն ավարտված է:

Զոյա Մոնրոզի ջինջ, համարյա երազկոտ աչքերը սահեցին նրա դեմքի վրայով: Կամացուկ, լուրջ ձայնով դիմեց նրան՝ տալով անունը: Նա արձագանքեց՝ առանց շարժվելու տաքացած թիկնաթոռի մեջ.

— Այո, լսում եմ ձեզ, պստիկս:

Խոսելու արտոնությունը տրված էր: Զոյա Մոնրոզը, տեղաշարժվելով, նստեց բազմոցի ծայրին, զրկեց ծունկը:

— Ասացեք, Ռոլինզ, քիմիական գործարանները մե՞ծ վտանգ են ներկայացնում պայթյունի համար:

— Օ՛, այո: Քարածիսի չորրորդ ածանցյալը՝ տրոտիլը, չափազանց հզոր պայթուցիկ նյութ է: Քարածիսի ութերորդ ածանցյալով՝ պիկրինաթթվով, լցնում են ծովային հրանոթների գրահահար արկերը: Բայց կա նաև ավելի զորեղ մի բան՝ տեսրիլը:

— Իսկ դա ի՞նչ է, Ռոլինզ:

— Էլի նույն քարածուխը: Բենզոլը ( $C_6H_6$ ), ութսուն աստիճանի տակ խառնված ազոտաթթվի ( $HNO_3$ ) հետ, տախս է նիտրոբենզոլ: Նիտրոբենզոլի բանաձևն է  $C_6H_5NO_2$ : Եթե այստեղ  $O_2$  թթվածնի երկու մասը փոխարինենք  $H_2$  ջրածնի երկու մասով, այսինքն՝ եթե նիտրոբենզոլը ութսուն աստիճանի տակ սկսենք դանդաղ խառնել թուզի խարտուքի, փոքր քանակությամբ աղաթթվի հետ, ապա կստանանք անիլին ( $C_6H_5NH_2$ ): Անիլինը, հիսուն մթնոլորտ ճնշման տակ խառնվելով փայտի սպիրտի հետ, կտա դիմեթիլ-անիլին: Հետո փորենք մի հսկա հոր, շրջապատենք հողաթմրով, մեջը սարայ սարքենք ու այնտեղ առաջ բերենք դիմեթիլ-անիլինի ռեակցիան ազոտաթթվի հետ: Այդ ռեակցիայի ժամանակ

հարկ կլինի, որ ջերմաչափերին հետևենք հեռվից, հեռադիտակով: Դիմեթիլ-անիլինի ռեակցիան ազոտաթթվի հետ մեզ կտա տետրիլ: Հենց այդ տետրիլ ասվածն իսկական դև՝ ռեակցիայի ժամանակ երբեմն պայթում է անհայտ պատճառներից և հսկայական գործարանները փոշի դարձնում: Դժբախտաբար, ստիպված ենք լինում գործ ունենալ դրա հետ. տետրիլը, մշակված ֆոսգենով, տալիս է կապույտ ներկ՝ կրիստալ-վիոլետ: Դրանով ես լավ փող եմ վաստակել: Դուք ինձ ծիծաղելի հարց տվիք... Հըմ... Ես կարծում եի, թե դուք ավելի քաջատեղյակ եք քիմիային: Հըմ... Քարածիսի ձյութից, ասենք, պիրամիդոնի մի դեղահատ պատրաստելու համար, որը, ասենք, կանցկացնի ձեր զիսացավը, անհրաժեշտ է հաջորդական աստիճանների մի երկար շարք անցնել... Քարածիսից մինչև պիրամիդոնը կամ օծանելիքի սրբակը կամ սովորական լրւանկարչական պրեպարատն ընկած ճանապարհին այնպիսի դիվային բաներ կան, ինչպիսիք են տրոտիլն ու պիկրինաթրուն, այնպիսի հրաշալի բաներ, ինչպիսիք են բրոմ-բենզիլ-ցիանիդը, քլոր-պիկրինը, դի-ֆենիլ-քլոր-արսենը և այլն, և այն, այսինքն՝ մարտական գազերը, որոնցից փոշտում են, արտասկում, իրենց երեսներից պոկում պաշտպանական դիմակները, շնչահեղձ լինում, արյուն փսխում, պատվում թարախապալարներով, նեխում ողջ-ողջ...

Քանի որ Ռոլինգը ձանձրանում էր կիրակնօրյա այդ անձրևոտ երեկոյան, ուստի հաճույքով անձնատուր եղավ քիմիայի մեծ ապագայի վերաբերյալ խորհրդածություններին:

— Ես կարծում եմ (նա քթի մոտ թափահարեց կիսով չափ ծիսված սիզարը), ես կարծում եմ, որ Սալվաֆն աստվածը երկինք և երկիր և ամենայն կենդանի բան արարել է քարածիսից ու կերակրի աղից: Աստվածաշնչում այդ մասին ուղղակի չի ասված, բայց կարելի է կոսակել: Նա, ով տիրում է քարածիսին ու աղին՝ տիրում է ամբողջ աշխարհին: Գերմանացիները տասնչորս թվի պատերազմի մեջ մտան միայն այն պատճառով, որ ամբողջ աշխարհի քիմիական գործարանների ինք տասներորդը պատկանում էր Գերմանիային: Գերմանացիները հասկանում էին քարածիսի ու աղի գաղտնիքը. նրանք միակ կուլտուրական ազգն էին այդ ժամանակ: Բայց նրանք հաշվի չէին առել, որ մենք՝ ամերիկացիներս, ինն ամսում Էջվուդի գինագործարան կարող ենք կառուցել: Գերմանացիները բաց արին մեր աշքերը, մենք հասկացանք, թե ուր պետք է ներդնել փողը, և այժմ աշխարհին պիտի տիրենք մենք և ոչ թե նրանք, որովհետև պատերազմից հետո փողն էլ է մեզ մոտ, քիմիան էլ: Մենք ամենից առաջ Գերմանիան, իսկ հետո նաև աշխատել իմացող մյուս երկրները (չիմացողները կմեռնեն կզնան բնական կարգով, այդ բանում մենք կօգնենք նրանց), մի խոսքով, այդ բոլոր երկրները կվերածենք մի հզոր ֆարբիկայի... Ամերիկյան դրոշը կգոտևորի ամբողջ հողագունդը, ինչպես ժապավենը՝ կոնֆետի տուփը, հասարակածով մեկ ու բներից բնեռ...

— Ռոլինգ,— ընդհատեց Զոյան,— դրանով դուք ինքներդ ձեր զիսին փորձանք կրերեք... Չէ՞ որ այդ դեպքում նրանք կոմունիստ կդառնան... Կզա մի օր, երբ նրանք կհայտարարեն, թե դուք այլս պետք չեք իրենց, թե իրենք ցանկանում են աշխատել իրենց համար... Օ՛, ես արդեն ապրել եմ այդ սարսափը... Նրանք կիրաժարվեն ձեզ վերադարձնել ձեր միլիարդները...

— Այդ դեպքում, պստիկս, ես Եվրոպան կխեղդեմ մանանեխի գազով:

— Ո՞ւշ կլինի, Ռոլինգ: — Զոյան ձեռքերի մեջ սեղմեց ծունկը, թեքվեց առաջ: — Հավատացեք ինձ, Ռոլինգ, ես երբեք ձեզ վաս խորհուրդներ չեմ տվել... Ես ձեզ հարցրի՝ պայթյունի համար վտանգ ներկայացն՝ ու են արդյոք քիմիական գործարանները... Բանվորների, հեղափոխականների, կոմունիստների ձեռքը, մեր թշնամիների ձեռքը, — ես դա գիտեմ, — օրերից մի օր ահավոր հզորության զենք կրնկնի... Նրանք կկարողանան հեռվից պայթեցնել քիմիական գործարաններ, վառողի պահեստներ, կկարողանան մոխիր դարձնել աերոպլանների էսկադրիլիաններ, ոչչացնել զազի պաշարներ՝ ամեն ինչ, որ կարող է պայթել ու վառվել:

Ռոլինգն աթոռակից իջեցրեց ոտքերը, ճպճպացրեց կարմրած կոպերն ու որոշ ժամանակ ուշադիր նայում էր երիտասարդ կնոջը:

— Որքան հասկանում եմ՝ դուք նորից ակնարկում եք այն...

— Այո, Ռոլինգ, այո, ինժեներ Գարինի սարքը... Ինչ հաղորդվել է դրա մասին՝ եկել անցել է ձեր ուշադրության կողքով... Բայց ես հո գիտեմ, թե որքան լուրջ է դա... Մեմյոնովն ինձ մի տարօրինակ բան բերեց: Ռուսաստանից է ստացել....

Զոյան զանգը տվեց: Մտավ սպասավորը: Հետո տիրուհու հրամանով գնաց ու բերեց սոճեփայտ մի արկղիկ, որի մեջ կես դյույմ հաստությամբ պողպատաշերտի կտոր կար: Զոյան հանեց պողպատի կտորն ու մոտեցրեց բուխարու լույսին: Մետաղի ստվար շերտի վրա ինչ-որ նուրբ գործիքով միջաքափանց ուղիղ ու ոլորուն գծեր էին արված՝ ասես արագագիր գրչով շեղակի գրված էր. «Հզորության փորձարկում... փորձարկում... Գարին»: Որոշ տառերի ներսում մետաղի կտորները թափվել էին: Ռոլինգը երկար զննում էր պողպատաշերտը:

— Սա նման է զրչածայրը փորձելուն,— ասաց նա ցածրածայն,— կարծես ասեղով փափուկ խմորի վրա գրած լինեն:

— Սա արված է Գարինի սարքի մոդելը երեսուն քայլի վրա փորձարկելիս,— ասաց Զոյան: — Մեմյոնովի ասելով, Գարինը հույս ունի ստեղծել մի սարք, որը կարող է քսան կարելտովի<sup>5</sup> վրա հեշտությամբ, կարագի պես միջից երկու կես անել հսկա զրահանավը... Ներեցեք, Ռոլինգ, բայց ես պնդում եմ՝ դուք պետք է ձեռք գցեք այդ ահավոր սարքը:

Զուր չե, որ Ռոլինգն Ամերիկայում կյանքի դպրոց էր անցել: Մինչև վերջին բջիջը նա մարզված էր պայքարի համար:

Մարզումը, ինչպես հայտնի է, ստույգ տեղաբաշխում է աշխատանքը մկանների միջև ու դրանց մեջ առավել հնարավոր լարում է առաջ բերում: Այդպես էլ Ռոլինգի զիսում, պայքարի մեջ մտնելիս, նախ սկսում էր գործել Երևակայությունը, որ նետվում էր ձեռնարկությունների կուսական թափուտներն ու այնտեղ հայտնաբերում ուշադրության արժանի որևէ բան: Մտո՞ւ: Երևակայության աշխատանքն ավարտվել է: Հիմա արդեն իր

<sup>5</sup> Երկարության չափ՝ 185,2 մետր (ծ. թ.):

գործն էր սկսում առողջ բանականությունը՝ գնահատում էր, համեմատում, ծանրութեթև անում, զեկուցում՝ օգտակար է: Ստո՛պ: Հերթը գործնական խելքինն էր՝ հաշվում էր, հաշվարկ կատարում, հանում հաշվեկշիռ՝ ակտիվ: Ստո՛պ: Եվ, վերջապես, հանդես էր գալիս կամքը՝ մոլիբդենային պողպատե ամրոց ոռյինզյան ահավոր կամքը, և նա, աչքերն արյուն կոխած գոմշացուլի պես, խոյանում էր դեպի նպատակն ու հասնում էր դրան՝ ինչ գնով էլ լիներ թե իր և թե ուրիշների համար:

Մոտավորապես այդպիսի մի պրոցես կատարվեց նաև այս պահին: Ռոլինզը մտովի հայցը նետեց անհայտ-անձանոր թափուտները, և առողջ բանականությունն ասաց՝ Զոյան իրավացի է: Գործնական խելքը հաշվեկշիռ հանեց՝ ամենաօգտակարը գծագրերն ու սարքը հափշտակելն է, Գարինին մեջտեղից վերացնելը: Վերջակետ: Գարինի ճակատագիրը վճռված էր, վարկը՝ բացված, և գործի անցավ կամքը: Ռոլինզը ելավ թիկնաթոռից, հետևն արեց բուխարու կրակին և, ծնոտը դուրս ցցելով, ասաց.

— Վաղը ես Սեմյոնովին սպասում եմ Մալզերք բուլվարի իմ գրասենյակում:

## 20

Այդ երեկոյից անցավ յոթ շաբաթ: Գարինի նմանակն սպանված էր Կրեստովսկի կղզում: Սեմյոնովը Մալզերք բուլվարի գրասենյակ էր եկել առանց գծագրերի ու սարքի: Ռոլինզը հազիվ էր զսպել իրեն, որ նրա գլուխը ջարդի թանաքամանով: Գարինին, կամ նրա նմանակին, երեկ տեսել էին Փարիզում:

Հաջորդ օրը, սովորականի պես, ցերեկվա ժամը մեկին Զոյան գնաց Մալզերք բուլվար: Ռոլինզը ծածկած լիմուզինում, նրա կողքին նստած, կզակը հենեց ձեռնափայտին ու ասաց ատամների արանքից.

— Գարինը Փարիզում է:

Զոյան ետ ընկավ բարձիկներին: Ռոլինզը նրան նայեց անուրախ:

— Սեմյոնովին վաղուց պիտի զիսատած լինեին զիլիոտինով, թափթփվածի մեկն է, էժան մարդասպան, լայիրշ ու տիմար,— ասաց Ռոլինզը:— Ես վստահեցի նրան ու ծիծառելի դրության մեջ ընկա: Պետք է ենթադրել, որ նա ինձ այստեղ զազրելի պատմության մեջ կը քաշի...

Ռոլինզը Զոյային պատմեց Սեմյոնովի հետ ունեցած իր ամբողջ խոսակցությունը: Գծագրերն ու սարքը չի հաջողվել հափշտակել, որովհետև Սեմյոնովի վարձած անբանները սպանել են ոչ թե Գարինին, այլ նրա նմանակին: Ռոլինզին առանձնապես շփոթեցնում էր նմանակի հայտնությունը: Նա հասկանում էր, որ հակառակորդը ճարպիկ է: Գարինը կամ իմացել է պատրաստվող մահափորձի մասին, կամ կրակել է, որ մահափորձից, միևնույն է, խուսափել չի լինի, և խառնել է հետքերը՝ իր փոխարեն իրեն նման մարդու դնելով հարվածի տակ: Այս ամենը շատ էր անորոշ: Բայց ամենաանհասկանալին այն էր, թե նրան ինչն էր ստիպել հայտնվելու Փարիզում:

Լիմուզինը ավտոմոբիլների հոսանքի մեջ ընկած շարժվում էր Ելիսեյան դաշտերով: Օրը տաք էր, գաղց, նուրբ երկնագույն մշուշի մեջ ուրվագծվում էին Մեծ Սալոնի թևավոր նժույգներն ու ապակյա զմբեթը, բարձր շենքերի կիսաբոլորակ տանիքները, պատուհանների արևակալները, շագանակենիների փարթամ սաղարթները:

Ավտոմոբիլներում,— ոմանք՝ ետ փոփած, ոմանք՝ ծունկը ծնկին, ոմանք՝ մոռութը դեմ տված ձեռնափայտի գլխիկին,— մեծ մասամբ վաղ հարստացած կարճլիկ տղերքից էին՝ գարնանային լայնեզր գլխարկներով, վառվուն փոքրիկ փողկապներով: Նրանք Բուլոնյան անտառ նախաճաշի էին տանում սիրունիկ աղջիկների, որոնց Փարիզը սիրով տրամադրում էր օտարերկրացիներին՝ զվարճության համար:

Էտուալ հրապարակում Զոյա Մոնրովի լիմուզինը հասավ վարձու մեքենային, որի մեջ նստած էին Սեմյոնովն ու դեղին, պարարտ դեմքով ու փոշոտ բեղերով մի մարդ: Նրանք երկուսն էլ առաջ թերքած, խիստ ուշադիր և նույնիսկ մի տեսակ մոլուցքով հետևում էին մի փոքրիկ կանաչ ավտոմոբիլի, որ հրապարակով թեքվում էր դեպի ստորերկրյա ուղու կանգառը:

Սեմյոնովն իրենց վարորդին ցույց էր տալիս այդ ավտոմոբիլը, բայց մեքենաների հոսանքի միջից դժվար էր ելնել: Վերջապես դուրս պրծան և շարժվեցին լրիվ ընթացքով՝ կանաչ ավտոմոբիլի ճամփան կտրելու: Սակայն փոքրիկ մեքենան արդեն կանգ էր առել մետրոպոլիտենի մոտ: Ավտոմոբիլից ելավ միջահասակ, կովերկոտե լայն վերարկուով մի մարդ և անհետացավ գետնի տակ:

Այս ամենը կատարվեց երկու-երեք րոպեում, Ռոլինզի ու Զոյայի աշքի առաջ: Զոյան ձայն տվեց վարորդին, որ նա մեքենան դարձնի մետրոյի կողմը: Նրանք կանգ առան Սեմյոնովի մեքենայի հետ գրեթե միաժամանակ: Զեռնափայտը վեր ու վար շարժելով, Սեմյոնովը մոտ վազեց լիմուզինին, բացեց փայլուն դրնակն ու ասաց սարսափելի հուզված:

— Դա Գարինն էր: Չըվեց: Բայց, միևնույն է, այսօր կգնամ նրա մոտ՝ Բատինյոլ, հաշտ գործարք կառաջարկեմ: Հարկավոր է պայմանավորվել, Ռոլինզ, ինչքա՞ն եք հատկացնում սարքի ձեռքբերմանը: Կարող եք հանգիստ լինել, ես կգործեմ օրենքի սահմաններում: Ի միջի այլոց, թույլ տվեք ձեզ ներկայացնել Ստաս Տիկլինսկուն: Միանգամայն օրինավոր մարդ է: Թույլտվության չսպասելով՝ ձայնեց Տիկլինսկուն: Սա մոտ թռավ շքեղ լիմուզինին, գլխից պոկեց գլխարկը, խոնարհվեց ու համբուրեց պանի Մոնրովի ձեռքը:

Ռոլինզը, ձեռքը չտալով ոչ մեկին, ոչ մյուսին, լիմուզինի խորքից փայլեցնում էր աշքերը, ինչպես կատվառյուծը՝ վանդակից: Հրապարակում, ամենքի աշքի առաջ մնալն անխոհեմ բան էր: Զոյան առաջարկեց գնալ նախաճաշելու ձախ ափի «Լապերուզ» ռեստորանում, ուր տարվա այդ եղանակին հաճախորդներ թիւ էին լինում:

Տիկլինսկին ամեն բոպէ զլխով էր անում, հարդարում կախված բեղերը, տամուկ հայացքով նայում Զոյա Մոնրոզին և ուտում զաված ազահությամբ: Ռոլինզը նստել էր մոայլ, թիկունքով պատուհանին դարձած: Սեմյոնովը շաղակրատում էր՝ ոչ ոքից չքաշվելով: Զոյան թվում էր հանգիստ, ժպտում էր թովիչ, հայացքով հասկացնում էր ավագ սպասավորին, որ ավելի հաճախ հյուրերի բաժակները լցնի: Երբ շամպայն մատուցեցին, նա Տիկլինսկուն խնդրեց սկսել իր պատմությունը:

Տիկլինսկին վզից պոկեց անձեռոցիկը:

— Պան Ռոլինզի համար մենք մեր կյանքը չխնայեցինք: Մենք սովետական սահմանն անցանք Սեստրորեցկի մոտերքից:

— Այդ ո՞վ՝ մենք,— հարցրեց Ռոլինզը:

— Ես ու, եթե պանը բարեհաձում է իմանալ, իմ օգնականը՝ Վարշավայից մի ռուս, Բալախովիչի բանակի սպա... Շատ դաժան մի մարդ... Նզովյալ լինի նա, ինչպես և բոլոր ռուսները, այդ շան արյունը, նա ինձ ավելի վնասեց, քան օգնեց: Իմ խնդիրն էր՝ հետևել, իմանալ, թե Գարինը որտեղ է փորձեր անում: Ես եղա ավերված տանը. պանին և պանը գիտեն, իհարկե, որ այդ տանն անիծյալ վիժվածքը քիչ էր մնում ինձ երկու կես աներ իր սարքով: Այնտեղ, նկուղում ես պողպատի մի շերտ գտա. պանի Զոյան այդ շերտն ստացել է ինձնից և կարող է համոզվել, որ ես ջանք ու եռանդ չեմ խնայել: Գարինը փոխեց փորձերի տեղը: Ես օր ու գիշեր չեմ քնում՝ ձգտելով արդարացնել պանի Զոյայի և պան Ռոլինզի վստահությունը: Ես մրսեցրի թոքերս Կրեստովսկի կղզու ճահիճներում և հասա նպատակիս: Հետևեցի Գարինին ու տեղը գտա: Ապրիլի քսանյորի գիշերը ես ու օգնականս» զաղտագողի մտանք նրա ամառանցը, Գարինին կապեցինք երկաթե մահճակալին ու խուզարկեցինք ամեն ծակուծուկ... Ոչ մի բան... Մարդ քիչ էր մնում խելազարվեր՝ սարքի ոչ մի հետք... Բայց ես հո գիտեի, որ Գարինը սարքը պահում է ամառանցում... Օգնականս, տեսնելով՝ քան դուրս չի գալիս, մի քիչ կտրուկ մոտեցավ Գարինին... Պանին ու պանը կհասկանան մեր հուզմունքը... Ես չեմ ասում, թե մենք այդպես վարվեցինք պան Ռոլինզի ցուցումով... Չե, օգնականս, չափից դուրս տաքացավ...

Ռոլինզը նայում էր ափսեի մեջ: Զոյա Մոնրոզի երկար ձեռքը, որ ընկած էր սփոռցի վրա, հերթով արագ շարժեց մատները, և սրանք շողշողացին կոկված եղունգներով, մատանիների աղամանդներով, զմրուխտներով, շափյուղաներով: Տիկլինսկին ոգևորվեց՝ նայելով այդ անզին ձեռքին:

— Պանին և պանն արդեն գիտեն, թե ինչպես մեկ օր անց փոստատանը հանդիպեցի Գարինին: Սո՞ւրբ Աստվածածին, ո՞վ չի վախենա դեմ՝ առ դեմ՝ կենդանի հանգուցյալի հանդիպելով: Ու հետն էլ դեռ անիծյալ միլիցիան ընկալ ետևից: Մենք խարեւության զոհեր դարձանք, անիծյալ Գարինն իր փոխարեն ինչ-որ մի ուրիշին խցկեց մեր ձեռքը: Ես որոշեցի նորից խուզարկել ամառանցը. այնտեղ պիտի որ ներքնատուն լիներ: Հենց նույն գիշերն ամառանց գնացի մենակ, քնեցրի պահակին: Մտա պատուհանից... Թող պան Ռոլինզն ինձ մի ուրիշ տեսակ, ծուռ չհասկանա... Երբ Տիկլինսկին զոհում է կյանքը, զոհում է հանուն զաղափարի... Ինձ համար դժվար չէր ետ թռչել պատուհանից: Երբ

ամառանոցում այնպիսի շրիւկ-թրիւկոց լսվեց, որ իմ տեղն ով էլ լիներ մազերը բիզ-բիզ կկանգնեին... Այո, պան Ռոլինգ, այդ պահին ես հասկացա, որ աստծու կամքն էր ձեզ թելադրում, երբ դուք ինձ ուղարկեցիք ուսւների ձեռքից խլելու ահավոր մի զենք, որը նրանք կարող էին գործադրել քաղաքակիրթ ամբողջ աշխարհի դեմ: Դա պատմական պահ էր, պանի Զոյա, երդվում եմ իմ շյախտայական պատվով: Ես զազանի նման նետվեցի խոհանոց, որտեղից լսվում էր աղմուկը: Ու տեսա Գարինին. նա պատի մոտ իրար վրա դիզում էր սեղաններ, պարկեր, արկղեր: Տեսնելով ինձ, իսկույն վերցրեց վաղուց ինձ ծանոթ կաշվե ճամպրուկն ու դուրս թռավ հարևան սենյակը: Ես քաշեցի ատրճանակս ու նետվեցի նրա ետևից: Նա արդեն բացել էր պատուհանն ու պատրաստվում էր դուրս թռչել: Կրակեցի: Նա, մի ձեռքին՝ ճամպրուկը, մյուսում՝ ատրճանակը, ետ-ետ փախչելով հասավ սենյակի ծայրը, պատսպարվեց մահճակալով ու սկսեց կրակել: Իսկական մենամարտ էր դա, պանի Զոյա: Գնդակը ծակեց իմ գլխարկը: Հանկարծ նա ինչ-որ լարով փակեց բերանն ու քիթը, իմ կողմը մեկնեց մետաղե փոքրիկ մի խողովակ. կրակոց լսվեց՝ շամպայնի խցանի պայթյունից ոչ բարձր, և նույն վայրկյանին հազարավոր մանրիկ մազիլներ խրվեցին իմ քիթը, կոկորդը, կուրծքը, սկսեցին պատառ-պատառ անել ինձ, աչքերս արցունքակալեցին անտանելի ցավից, սկսեցի փոշտալ, հազար քիչ էր մնում փորոտիքս դուրս գար բերանովս և, ներեցեք, պանի Զոյա, այնպիսի փսխուք սկսվեց, որ թափալվեցի հատակին:

— Դիֆենիլ-ֆլոր-արսեն՝ խառնված ֆոսգենի հետ, ամեն մեկից՝ հիսունական տոլկու,— էժան բան է, մենք հիմա ոստիկանությանը զինում ենք այդպիսի նոնակներով,— ասաց Ռոլինգը:

— Այո... Պանն իրավացի է, զազի նոնակ էր դա... Բարեբախտաբար, միջանցուկ քամին արագ տարավ զազը: Ուշքի եկա ու կիսակենդան հասա տուն: Ես թունավորված էի, զախչախված, գործակալները փնտրում էին ինձ քաղաքում, մնում էր միայն փախչել Լենինգրադից, որը և մենք արեցինք մեծ վտանգների ենթարկվելով ու մեծ դժվարություններով:

Տիկլինսկին տարածեց ձեռքերն ու գլուխը խոնարհեց՝ անձնատուր լինելով ողորմածության: Զոյան հարցրեց.

— Դուք համոզվա՞ծ եք, որ Գարինը նույնպես փախել է Ռուսաստանից:

— Նա պիտի որ թաքնվեր: Այս պատմությունից հետո նա, միևնույն է, ստիպված պիտի լիներ բացատրություններ տալ քրեական հետախուզությանը:

— Բայց ինչո՞ւ է նա ընտրել հատկապես Փարիզը:

— Նրան ածխային բրգիկներ են հարկավոր: Նրա սարքն առանց այդ բրգիկների նույնն է, ինչ որ դատարկ հրացանը: Գարինը ֆիզիկոս է: Նա ոչինչ չի հասկանում քիմիայից: Նրա պատվերով այդ բրգիկների վրա աշխատում էի ես, հետազայում՝ նա, ով դրա համար կյանքով հատուցեց Կրեստովսկի կղզում: Բայց Գարինը մի գործընկեր էլ այստեղ՝

Փարիզում ունի. նրան կլուղարկեց հեռագիրը՝ «քուվար Բատինյոլ»։ Գարինը եկել է այստեղ, որ հետևի բրդիկների վրա տարվող փորձերին։

— Ի՞նչ տեղեկություններ եք հավաքել ինժեներ Գարինի գործընկերոց մասին, — հարցրեց Ռոլինզը։

— Նա ապրում է բավական վատ հյուրանոցում, Բատինյոլ քուվարի վրա։ Մենք երեկ եղանք այնտեղ, դրանապանն ինչ-որ բան պատմեց մեզ, — պատասխանեց Սեմյոնովը։ — Այդ մարդը տուն է գալիս միայն քնելու։ Ոչ մի իր չունի։ Տնից ենում է պարուսինե բալախոնով<sup>6</sup>, որից Փարիզում հագնում են բժիշկները, լաբորանտներն ու քիմիկոս ուսանողները։ Հավանաբար, աշխատում է հենց այդտեղ, մոտերքում։

— Իսկ արտաքի՞նը. Սատանան ձեզ տանի, ես ի՞նչ գործ ունեմ նրա պարուսինե բալախոնի հետ։ Դռնապանը նկարագրե՞ց նրա արտաքինը, — ձչաց Ռոլինզը։

Սեմյոնովն ու Տիկլինսկին իրար նայեցին։ Լեհը ձեռքը սեղմեց կրծքին։

— Եթե պանք ցանկանում է, մենք այսօր ևեթ տեղեկություններ կհասցնենք այդ պարոնի արտաքինի մասին։ Ռոլինզը երկար լուս էր, հոնքերը կիտվում էին։

— Ի՞նչ հիմք ունեք պնդելու, որ նա, ում երեկ տեսել եք Բատինյոլի սրճարանում, և այն մարդը, որ Էտուալ հրապարակում չքվեց գետնի տակ, նույն անձնավորությունն են՝ հենց ինժեներ Գարինը։ Դուք մի անգամ արդեն սխալվել եք Լենինգրադում։ Հը<sup>7</sup>։

Լեհն ու Սեմյոնովը նորից հայացքներ փոխանակեցին։ Տիկլինսկին ժպտաց ծայրագույն քաղաքավարությամբ։

— Պան Ռոլինզը, կարծում եմ, չի պնդի, թե Գարինը բոլոր քաղաքներում նմանակներ ունի...։

Ռոլինզը համառորեն տարութերեց գլուխը։ Զոյա Մոնրոզը նատել էր՝ ձեռքերը փաթաթած կնզումի մորթիով, և անտարբեր դուրս էր նայում պատուհանից։

— Տիկլինսկին շատ լավ գիտի Գարինին, սխալներ չեն կարող լինել։ Հիմա կարևոր է պարզել մի ուրիշ բան, Ռոլինզ։ Թույլ տալի՞ս եք, որ մենք մենակ անենք վերջացնենք այդ գործը՝ մի գեղեցիկ օր Մալգերք քուվար բերենք սարքն ու զծագրերը, թե՝ դուք էլ պիտի գործեք մեզ հետ։

— Ո՛չ մի դեպքում, — անսպասելիորեն մեջ մտավ Զոյան՝ շարունակելով դուրս նայել պատուհանից։ — Միստր Ռոլինզը խիստ հետաքրքրվում է ինժեներ Գարինի փորձերով, միստր Ռոլինզի համար խիստ ցանկալի է սեփականատիրության իրավունք ձեռք բերել այդ գյուտի վրա, միստր Ռոլինզը միշտ գործում է խիստ օրինականության սահմաններում։ Եթե միստր Ռոլինզը հավատար Տիկլինսկու պատմածի գեթ մի բառին, ապա, իհարկե, չեր հապաղի զանգել ոստիկանության կոմիսարին՝ նման սրիկային ու

---

<sup>6</sup> Երկար ու լայն խալաթ (ծ. թ.)։

հանցագործին իշխանությունների ձեռքը հանձնելու համար: Բայց քանի որ միստր Ռոլինզը հիանալի հասկանում է, որ Տիկլինսկին հորինել է այդ ամբողջ պատմությունը՝ հնարավորին չափ շատ փող շորթելու համար, ապա նա բարեհոգաբար թույլ է տալիս այսուհետև և իրեն փոքրիկ ծառայություններ մատուցել:

Ամբողջ նախաճաշի ընթացքում առաջին անգամ Ռոլինզը ժպտաց, Ժիլետի գրպանից հանեց ոսկե ատամմաքրիչն ու իրեց ատամների արանքը: Տիկլինսկու կաս-կարմիր կտրած լայն ձաղատի վրա քրտինք հայտնվեց, այտերը կախ ընկան: Ռոլինզն ասաց.

— Ձեր խնդիրն է՝ ինձ ստույգ և մանրամասն տեղեկություններ տալ ըստ այն կետերի, որ ձեզ այսօր ժամը երեքին կհաղորդվեն Մալզերք բուլվարում: Ձեզնից պահանջվում է օրինավոր խուզարկուի աշխատանք, և միայն այդքանը: Ոչ մի քայլ, ոչ մի բառ՝ առանց իսկ կարգադրության:

## 22

Նորդ-Զյուդ գծի՝ ստորգետնյա երկաթուղու սպիտակ, կոկիկ, փայլվլուն գնացքը մեղմ դդիրդով սուրում էր Փարիզի մութ ներքնուղիներով: Ոլոր-մոլոր թունելներում երեսվում ու անցնում էին էլեկտրական հաղորդալարերի ոստայններ, խորշեր՝ ցեմենտե հաստ պատերում, ուր սեղմվում-պահվում էր թռչող լուսերի մեջ հայտնված որևէ գործավոր, սևի վրա դեղին տառեր՝ «Դյուրոնե», «Դյուրոնե», «Դյուրոնե»— զզվելի մի խմիչքի անուն, որ ռեկլամները մեխում էին փարիզյաների գիտակցության մեջ:

Կարճատև կանգառ: Ստորգետնյա լուսով ողողված կայարան: Ռեկլամների գունավոր ուղղանկյուններ՝ «Ճրաշք օճառ», «Ամուր տարատակալներ», «Վարս՝ առյուծի զլիտվ», «Ավտոմոբիլի դողեր», «Կարմիր դև», ռետինե կրունկացու, էժանագին վաճառք «Լուվր», «Գեղեցիկ ծաղկավաճառուիի», «Գալերեա Լաֆայետ» ունիվերսալ վաճառատներում:

Սիրունիկ կանանց, միղինետուիհիների<sup>7</sup>, թղթատար տղաների, օտարերկրացիների, պիրկ բաճկրնակներով երիտասարդների, կարմիր կտավե լայն գոտիների տակ խոթած քրտնաթաթախ շապիկներով բանվորների աղմկալի, խնդուն մի ամբոխ հրհրոցով մղվում է գնացքի կողմը: Ակնթարթորեն բացվում են ապակեպատ դռները... «Օ՝ օ՝ օ՝ օ՝ — տարածվում է հառաջի նման, և զլիարկների, չոված աչքերի, բաց բերանների, կարմրատակած, զվարք, վրդովված դեմքերի մի հորձանուտ խուժում է ներս: Այսուսագրին կուրտկայով ուղեկցորդները, բռնաձողերից կառչած, փորներով վագոն են մղում բազմությանը: Շրիկոցով փակվում են դռները: Կարձ սուլոց: Գնացքը հրավառ ժապավենի նման սուզվում կորչում է ստորգետնյա ուղու սև կամարների տակ:

Սեմյոնվն ու Տիկլինսկին նստել էին Նորդ-Զյուդ վագոնի կողադիր նատարանին, թիկունքով՝ դռանը: Լեհը բորբոքված էր.

<sup>7</sup> Կարուձելով զբաղվող փարիզյան երիտասարդ կանայք ու աղջիկներ (ծ. թ.):

— Խնդրում եմ, որ պանը նկատի առնի՝ միայն քաղաքավարությունն ինձ ետ պահեց սկանդալից... Հազար անգամ քիչ մնաց պայթեի... Բայց ես նախաձաշում էի միլիարդատերերի՝ մոտ: Թքել եմ այդ նախաձաշերի վրա... Ինքս կարող եմ դրանցից ոչ պակաս լավը պատվիրել «Լապերուզում» ու չլսել փողոցային այդ կնոջ վիրավորանքները: Խուզարկուի դեր առաջարկել, և ո՞ւմ՝ Տիկինսկուն... Շան քած, լիրք-լրբի մեկը...

— Է՛, վերջ տվեք, պան Ստաս, դուք չգիտեք Զոյային: Փառավոր կնիկ է, լավ ընկեր: Ասենք թե մի քիչ տաքացավ...

— Երեսում է՝ պանի Զոյան սովոր է գործ ունենալ ստորին հասարակության, ձեր վտարանդիների հետ... Բայց ես լե՛հ եմ, խնդրում եմ պանը նկատի առնի դա,— Տիկինսկին սարսափելի ցցեց բեղերը:

— Ես թույլ չեմ տա, որ ինձ հետ խոսեն նման ձևով...

— Դե լավ, բեղերդ թափ տվիր՝ սիրտդ հանգատացրիր,— որոշ լրությունից հետո ասաց Սեմյոնովը,— հիմա ուշադիր ինձ լսիր, Ստաս. մեզ լավ փող են տալիս ու, վերջին հաշվով, ոչնչից ոչինչ չեն պահանջում: Գործն անվտանգ է, նույնիսկ՝ հաճելի— քեզ համար թրև արի պանդոկներում ու սրճարաններում... Ես, օրինակ, շատ գոհ եմ այսօրվա խոսակցությունից... Ասում ես՝ խուզարկու.... Հիմարություն: Իսկ ես ասում եմ՝ հակահետախույզների պատվավոր դեր է առաջարկված մեզ:

Այն նստարանի ետևում, որի վրա նստած զրուցում էին Տիկինսկին ու Սեմյոնովը, դռան մոտ, արմունկով պղնձել բռնաձողին հենված, կանգնած էր այն մարդը, որը մի անգամ Պրոֆմիհությունների գրոսարանում, Շելզայի հետ խոսելիս, իրեն Պյանկով-Պիտկեիչ անվանեց: Նա բարձրացրել էր կովերկոտե վերարկուի օձիքը՝ ծածկելով դեմքի ստորին մասը, լայնեզր գլխարկը քաշել էր աչքերին: Անփույթ ու ծույլ-ծույլ կանգնած, բերանին հպած ձեռնափայտի ոսկրե գլխիկը, նա ուշադիր լսեց Սեմյոնովի ու Տիկինսկու ամբողջ զրուցը, քաղաքավարությամբ մի կողմ քաշվեց, եթե նրանք ելան տեղներից, և վագոնից իջավ երկու կանգառ հետո, Մոնմարտրում: Մոտակա փոստի բաժանմունքից հեռագիր տվեց.

«Լենինգրադ: Քրեական հետախուզություն: Չորսմատնանին այստեղ է:  
Իրադարձություններն սպառնալի են»:

## 23

Փոստատնից նա բարձրացավ Կլիշի բուլվարը և քայլեց ստվերոտ կողմով:

Այստեղ ամեն մի դրնից, նկուղային պատուհաններից, լայն մայթերի վրա մարմարե սեղանիկներն ու ծղոտե աթոռները ծածկող շերտավոր արևկալների տակից գիշերային գինետների թթվավուն հոտ էր փշում: Կարճ սմոկինգներով ու սպիտակ գոգնոցներով, մեշտեղից կիսված ու բրիլյանտինով փայլեցրած մազերով կոկոզավիզ մատուցողները

սեղանների միջև թաց թեփ էին շաղ տալիս հախճասալե հատակին ու մայթին, թարմ ծաղկեփնջեր էին դնում, պտտում էին բրոնզե բռնակները՝ արևկալները բարձրացնելով:

Յերեկով Կիշի բուլվարը թվում էր խամրած, ինչպես գեկորացիան կառնավալից հետո: Բարձր, անբարետես, հին շինությունները համատարած դարձրել էին ռեստորաններ, պանդոկներ, սրճարաններ, փողոցային աղջիկների համար զիզի-պիզիի կրպակներ, զիշերային հյուրանոցներ: Ռեկլամների հիմնակմախքներն ու թիթեղյա հորինվածքները, նշանավոր «Մուլեն-Ռուժ» հողմաղացի բզկտված թևերը, կինոյի պլակատները մայթերի վրա, երկշար խղճուկ ծառերը զբոսարանի մեջտեղում, անվայելուչ բառերով գրոտված հասարակական զուգարանները, քարե սալարկուղիները, որոնց վրայով դորդացել անցել էին հարյուրամյակներ, բրեկենտածածկ բալագանների ու կարուսելների շարքերը՝ այս բոլորը սպասում են զիշերվան, երբ անբաններն ու զվարձասերները շարան-շարան կզան ներքեց՝ Փարիզի բուրժուական թաղամասերից:

Այնժամ կրոնկվեն լույսերը, իրար կանցնեն սպասավորները, շոգեշունչ կոկորդներով կսուլեն, կպտտվեն կարուսելները. ոսկեթույր խոզերի, ոսկեեղջուր ցուլերի, նավակների, կաթսաների, պուտուկների վրա նստած,— պտտվելով, պտտվելով, պտտվելով,— արտացոլվելով հազարավոր հայելիների մեջ, շոգենվազարանի հնչյունների տակ կուլանան ծնկահաս զգեստներով աղջիկներ, արմացած բուրժուաներ, հոյակապ բեղերով գողեր, ճապոնական դիմակների պես ժպտացող ուսանողներ, փոքրիկ տղաներ, հոմոսեքսուալիստներ, ոուս մռայլ վտարանդիներ, որ սպասում են բոլշիկների անկմանը:

Կղառնան «Մուլեն-Ռուժ» հողմաղացի լուսազարդ թևերը: Շենքերի ճակատներով կսուրան հրե բեկրեկուն սլաքներ: Կրոցավառվեն աշխարհով մեկ հայտնի պանդոկների ցուցանակները, և թաց պատուհաններից տորթ զբոսարան կհորդեն ջազ-բանդերի վայրի ճարճատյունը, թմբկազարկերն ու շաշ-շառաչը:

Ամբոխի մեջ կպզպզան ստվարաթյոթե պզպզիկները, կճճճրան ճճճթիկները: Գետնի տակից կսկսեն դուրս թափվել մետրոպոլիտենի և Նորդ-Զյուդի վեր նետած նոր խառնամբխներ: Սա Մոնմարտրն է: Սրանք Մարտրի բլուրներն են, որ ողջ զիշեր զվարթ լույսերով շողշողում են Փարիզի վրա,— ամենաանհոգ վայրը աշխարհում: Այստեղ ինչքան ասես փող մսխելու, կչկչան աղջիկների հետ հեշտալի զիշեր անցկացնելու տեղ կա:

Կենսուրախ Մոնմարտրը Կիշի բուլվարն է՝ երկու բոլորակ, արդեն վերջնականապես կենսուրախ հրապարակների — Պիզալի և Բլանշի միջև: Պիզալ հրապարակից ձախ ձգվում է Բատինյոլ լայն ու խաղաղ բուլվարը: Բլանշ հրապարակից աջ սկսվում է Սենտ-Անտուան արվարձանը: Սա մի տեղ է, որտեղ ապրում են բանվորներն ու Փարիզի չքավոր մարդիկ: Այստեղից՝ Բատինյոլից, Մոնմարտրի բարձունքներից, և Սենտ-Անտուանից շատ անգամ են զինված զործավորներ իջել՝ Փարիզը զրավելու: Չորս անգամ նրանց թնդանոթներով ետ են քշել դեպի բարձունքները: Եվ վարի քաղաքը՝ Սենի ափերին սփոռված բանկերը, գրասենյակները, ճոխ վաճառատները, միլիոնատերերի համար նախատեսված հյուրանոցներն ու երեսուն հազար ոստիկանների համար կառուցված

զորանոցները, չորս անգամ անցել է հարձակման, և աշխատավոր քաղաքի սրտում, բարձունքների վրա, համաշխարհային զվարճարան-որջերի հուրիբատող լույսերով վավերացրել է վարի քաղաքի սերսուալ կնիքը՝ Պիգալ հրապարակ, Կիշի բուլվար— Բլանշ հրապարակ:

## 24

Հասնելով բուլվարի կեսին, կովերկոտե վերարկուուվ մարդը թեքվեց կողքի նեղիկ փողոցը, որ ոտնամաշ աստիճաններով տանում էր Մոնմարտրի գագաթը, ուշադիր շուրջը նայեց և մտավ փոքրիկ խավար պանդոկը, որի մշտական հաճախորդներն էին պոռնիկները, վարորդները, կուպլետ հորինող կիսաքաղց երիտասարդներն ու վաղեմի սովորույթով լայն տարատներ հազնող և լայնեզր զիսարկներ դնող անհաջողակները:

Նս թերթ ու մի բաժակ պորտվեյն խնդրեց և սկսեց կարդալ: Ցինկե վաճառասեղանի ետևում պանդոկապանը՝ հարյուր տասը կիլոյանց հաստաբեղ, կարմրերես մի ֆրանսիացի, բրդոտ թերթ մինչև արմունկները քշտած, ծորակի տակ ամանեղեն էր լվանում ու խոսում. կուզես լսիր, կուզես՝ չէ:

— Ինչ էլ ասեք՝ մեկ է, Ռուսաստանը մեզ շատ զիսացավանք պատճառեց (նա գիտեր, որ հաճախորդը ուս է, մայո Պիեռ են ասում): Ռուս վտարանդիներն այլս եկամուտ չեն բերում: Սպառվել են, օ՝ լա-լա... Բայց մենք դեռ բավական հարուստ ենք, կարող ենք մի քանի հազար թշվառների ապաստանելու շոայլություն թույլ տալ մեզ: (Նա համոզված էր, որ իր հաճախորդը Մոնմարտրում մանր-մունք գործերով է զբաղվում): Բայց, իհարկե, ամեն ինչ իր վերջն ունի: Վտարանդիները ստիպված կլինեն իրենց տները դառնալ: Ավա՞ն: Մենք ձեզ կհաշտեցնենք ձեր լայնատարած հայրենիքի հետ, մենք կընդունենք ձեր Սովետները, և Փարիզը նորից հին ու ազնիվ Փարիզը կդառնա: Ինձ զզվեցրել է պատերազմը, ասեմ ձեզ: Տասը տարի է, ինչ շարունակվում է ստամոքսի այդ անմարտողությունը: Սովետները ցանկություն են հայտնում մարել մանր անհատների մոտ եղած ռուսական՝ արժեքորդները: Խելացի, շատ խելացի քայլ է նրանց կողմից: Կեցցե՞ն Սովետները: Նրանք վատ չեն քաղաքականություն վարում: Նրանք բոլշևիկացնում են Գերմանիան: Զիանալի է: Ողջունում եմ: Գերմանիան կդառնա ու կզինաթափվի ինքնարերաբար: Մեր փորի տովետական ցավը չի բռնի նրանց քիմիական արդյունաբերության մասին հիշելիս: Մեր թաղի տիմարներն ինձ բոլշևիկ են համարում: Օ-լա-լա... Ես ճիշտ հաշիվներով եմ կառավարվում: Բոլշևիկացումը մեզ համար սարսափելի չէ: Հապա մի հաշվեք՝ Փարիզում ինչքան ազնիվ բուրժուա կա ու ինչքան բանվոր: Բա՛: Մենք՝ բուրժուաներս, կարող ենք պաշտպանել մեր խնայողությունները... Ես հանգիստ եմ նայում այն բանին, որ մեր բանվորները գոռում են՝ «Կեցցե՞ Լենինը» ու կարմիր դրոշակներ են թափահարում: Բանվորը գիտե՞ս ինչ է՝ եփ եկող գինու տակառ, նրան չի կարելի բերանը փակ պահել: Թող իր համար գոռա՝ «Կեցցե՞ն Սովետները», ինքը էլ եմ անցած շաբաթ գոռացել: Ես ութ հազար ֆրանկի ռուսական տոկոսաբեր թղթեր ունեմ: Չե, դուք պիտի հաշտվեք ձեր կառավարության հետ: Հերիք է հիմարություններ անեք: Ֆրանկի կուրսն ընկնում է: Անիծյալ սպեկուլյանտները, այդ ոչինները, որ վրա են

տալիս ամեն ազգի ու երկրի, ուր սկսում է ընկնել վայուտան,— ինֆյանտների այդ ցեղը նորից Գերմանիայից քոչել է Փարիզ:

Արագ պանդոկ մտավ պարուսինե բալախոնով, անզիստոր, բաց շիկահեր նիհար մի մարդ:

— Բարև, Փարին,— ասաց թերթ կարդացող մարդուն,— կարող ես ինձ շնորհավորել...  
Ամեն ինչ հաջող է...

Գարինը թափով վեր կացավ, պինդ սեղմեց նրա ձեռքը.

— Վիկտոր...

— Այո՛, այո՛: Ես սարսափելի գոհ եմ... Ես պիտի պահանջեմ ու հասնեմ այն բանին, որ  
մենք արտոնազիր ստանանք:

— Ո՛չ մի դեպքում... Գնանք:

Նրանք դուրս եկան պանդոկից, բարձրացան սանդղավոր նեղիկ փողոցով, թեքվեցին աջ և  
երկար գնում էին արվարձանի կեղտոտ տների մոտով, փշալարերով շրջափակված  
պարապուտների մոտով, ուր պարաների վրա խղճուկ սպիտակեղեն էր փոփոռում, գնում  
էին պարզունակ փոքրիկ գործարանների ու արհեստանոցների մոտով:

Օրը վերջանում էր: Հանդիպում էին դիմացից եկող հոգնած բանվորների խմբեր: Այստեղ՝  
բլուրների վրա, ասես մարդկային մի այլ ցեղ էր ապրում. ուրիշ էին նրանց դեմքերը՝  
ամուր, նիհարավուն, ուժեղ: Թվում էր, թե ֆրանսիական ազգը, ձարպակալումից,  
սիֆիլիսից ու դեգրադացիայից ազատվելու համար, եկել էր Փարիզի վրա ծառացող այս  
բարձունքները և այստեղ հանգիստ ու զուսպ սպասում էր այն ժամին, երբ հնարավոր  
կլինի ապականությունից մաքրել ստորին քաղաքը և նորից Լյուտեցիի<sup>8</sup> նավը թեքել  
արևաշող օվկիանոս:

— Այստեղ է,— ասաց Վիկտորը՝ ամերիկյան բանալիով բացելով քարաշեն ցածիկ սարայի  
դուռը:

## 25

Գարինն ու Վիկտորը Լենուարը մոտեցան արյուսաշեն փոքրիկ քուրային, որ ծածկված էր  
կափարիչով: Մոտիկ սեղանին բրգիկներ էին շարված: Քուրայի վրա կողքի դրված էր  
բրոնզե մի հաստ օղ, որի շրջագծով մեկ ձենապակյա տասներկու փոքրիկ գավաթներ էին  
զետեղված: Լենուարը մոմ վառեց և տարօրինակ հեգնախառն ժպիտով նայեց Փարինին:

— Պյոտր Պետրովիչ, մի տասնինգ տարի կլինի. ինչ մենք ծանոթներ ենք, այնպես չէ՞:  
Հարյուր փութ աղ ու հաց կերած կլինենք իրար հետ: Այդ ընթացքում դուք կարողացաք

<sup>8</sup> Փարիզի գերբը կամ, հին իմաստով, Լյուտեցիի՝ ոսկի նավակ (ծանոթ. հեղինակի):

համոզվել, որ ես ազնիվ մարդ եմ: Եթք փախա Սովետական Ռուսաստանից, ինձ օգնեցիք... Դրանից եզրակացնում եմ, որ դուք իմ նկատմամբ վատ չեք: Ասացեք, ուրեմն, ինչի՞ համար եք սարքը թաքցնում ինձնից: Ես գիտեմ, չէ՞ որ առանց ինձ, առանց այս բրգիկների դուք անզոր եք... Եկեք ընկերավարի մոտենանք իրար...

Ուշադիր զննելով ճենապակյա գավաթիկներով բոլորված բրոնզե օղը, Գարինը հարցրեց.

— Ուզում եք բացե՞մ գաղտնիքը:

— Այո:

— Ուզում եք մասնակի՞ց լինել գործին:

— Այո:

— Եթե հարկ լինի, իսկ ես ենթադրում եմ, որ հետագայում հարկ կլինի, դուք պիտի ամեն ինչի պատրաստ լինեք հանուն գործի հաջողության...

Աչքը չկտրելով նրանից, Լենուարը նստեց քուրայի եզրին: Նրա բերանի անկյունները դողդողում էին:

— Այո,— ասաց հաստատուն,— համաձա՞յն եմ:

Նա խալաթի գրպանից լաթի կտոր դուրս քաշեց ու սրբեց ձակատը:

— Ես ձեզ չեմ հարկադրում, Պյոտր Պետրովիչ: Այս խոսակցությունը բացեցի, որովհետև, ինչքան էլ տարօրինակ թվա, դուք ամենամոտ մարդն եք ինձ... Ես առաջին կուրսում էի, դուք՝ երկրորդ: Դեռ այն ժամանակվանից, ոեւ, ինչպես ասեմ, ես մի տեսակ խոնարիկում էի ձեր առաջ, դուք սարսափելի տաղանդավոր եք: Ձեր միտքն անալիտիկ է, հանդուգն, ահավոր: Դուք ահավոր մարդ եք: Դուք դաժան եք, Պյոտր Պետրովիչ, ինչպես բոլոր խոշոր տաղանդները, դուք վատ եք զլուխ հանում մարդկանցից: Դուք հարցրիք՝ արդյոք պատրա՞ստ եմ եմ ես ամեն ինչի, եթե աշխատեմ ձեզ հետ... Ի՞նչ նման հարց կարող է լինել: Ես կորցնելու բան չունեմ: Ձեզ հետ՝ հաղթանակ կամ կործանում... Համաձա՞յն եմ, հարցնում եք, ամեն ինչի... ծիծառելի է... Իսկ ո՞րն է այդ «ամեն ինչ»-ը: Գողանա՞լ, սպանե՞լ:

Լոեց: Գարինն աչքերով ասաց՝ «այո»: Լենուարը քմծիծաղեց:

— Ես գիտեմ ֆրանսիական քրեական օրենքները... Համաձա՞յն եմ արդյոք ինձ ենթարկել դրանց կիրառման վտանգին: Համաձայն եմ: Ի միջի այլոց, ես տեսել եմ գերմանացիների նշանավոր գազային գրոհը տասնհինգ թվի ապրիլի քսաներկուսին: Գետնի տակից թանձր ամպ բարձրացավ և մեզ վրա սողաց դեղնա-կանաչավուն ալիքներով, միրաժի պես. երազումդ էլ չես տեսնի նման բան: Դաշտերով հազարավոր մարդիկ էին փախչում անասելի զարիւրանքի մեջ, զենքերով նետելով: Ամպը հասավ նրանց: Ով կարողացավ դուրս պրծնել՝ դեմքը մութ արնագույն էր, լեզուն՝ կախ ընկած, աչք-ունքը՝ խանձված... Ի՞նչ

անմտություն՝ «քարոյական հասկացություններ»... Հը՞մ, մենք էլ երեխա չենք  
պատերազմից հետո:

— Մի խոսքով,— ասաց Գարինը ծաղրալի,— դուք, վերջապես, հասկացաք, որ  
բուրժուական քարոյականությունն ամենաճարպիկ աճպարարական համարներից է, և  
հիմար են նրանք, ովքեր հանուն այդ քարոյականության կանաչ գագ են կուլ տալիս:  
Ճիշտն ասած, ես քիչ եմ մտածել այդ հարցերի մասին... Այսպես ուրեմն... Ես կամավոր  
գործնկեր եմ ընդունում ձեզ: Դուք անառարկելիորեն պիտի ենթարկվեք իմ  
կարգադրություններին: Բայց՝ մի պայման...

— Լավ, համաձայն եմ ամեն պայմանի:

— Դուք զիտեք, Վիկտոր, որ ես Փարիզ եմ ընկել կեղծ անձնագրով, ամեն զիշեք հյուրանոց  
եմ փոխում: Երբեմն ստիպված եմ լինում փողոցային աղջիկ հետո առնել, որ կասկած  
չառաջացնեմ: Երեկ իմացա, որ հետևում են ինձ: Այդ քանը հանձնարարված է ոռւսների: Երևում է՝ ինձ ընդունում են բոլշևիկյան գործակալի տեղ: Հարկավոր է խուզարկուներին  
սխալ հետքի վրա գցել:

— Ես ի՞նչ պիտի անեմ:

— Պիտի գրիմավորվեք իմ կերպարանքով: Եթե ձեզ բռնեն՝ ներկայացրեք ձեր  
փաստաթղթերը: Ես ուզում եմ երկատվել: Մենք երկուսս էլ նույն հասակին ենք: Կներկեք  
ձեր մազերը, կեղծ մորուք կկպցնեք, և մենք կզնենք ու կհազնենք միանման շորեր: Հետո  
հենց այս երեկո դուք ձեր հյուրանոցից կտեղափոխվեք քաղաքի մի ուրիշ մաս, ուր ձեզ չեն  
ճանաչում, ասենք, Լատինական թաղամաս: Հը՝, տվեք ձեր ձեռքը՝ թե համաձայն եք:

Լենուարը ցած թռավ քուրայից, ամուր սեղմեց Գարինի ձեռքը: Հետո սկսեց բացատրել, թե  
իրեն ինչպես է հաջողվել բրգիկներ պատրաստել այսումինի ու երկաթօքսիդի (թերմիտ) և  
պինդ յուղի ու դեղին ֆոսֆորի խառնուրդից:

Բրոնզե օղի ձենապակյա զավաթիկների մեջ տասներկու բրգիկ դնելով, նա քուղի միջոցով  
վառեց դրանք: Կուրացուցիչ բոցի այուն քարձրացավ քուրայի վրա: Ստիպված էին ետ  
քաշվել սարայի խորքը, այն աստիճան անտանելի էին լույսն ու ջերմությունը:

— Հիանալի է,— ասաց Գարինը:— Հուսամ, որ բոլորովին մուր չի՝ տալիս:

— Այրումն այս ահավոր ջերմության տակ կատարվում է լրիվ: Նյութերը քիմիապես  
մաքուր են:

— Շատ լավ: Այս օրերիս դուք հրաշքներ կտեսնեք, — ասաց Գարինը, — զնանք ճաշելու:  
Իրերը բերելու համար հանձնակատար կուղարկենք հյուրանոց: Կզիշերենք ձախ ափին:  
Իսկ վաղը Փարիզում կհայտնվեն երկու Գարին... Դուք սարայի երկրորդ բանալի ունե՞ք:

Այստեղ չկային ոչ ավտոմոբիլների պերճափայլ հոսք, ոչ վաճառատների պատուհաններից վզները ձկած դուրս նայող պարապ մարդիկ, ոչ գլխապտույտ առաջացնող կանայք, ոչ արդյունաբերական արքաներ:

Այստեղ կային նոր սղոցված տախտակի դարսակներ, գետաքարի բլուրներ, փողոցի մեջտեղում՝ կապույտ կավի կուտակներ, մայթի կողքին ձգվող կոյուղու խողովակաշար, որ կտրատված հսկա որդ էր հիշեցնում:

«Սպարտակ» մարզական ընկերության անդամ Տարաշկինն անշտապ գնում էր կղզի, ակումբ: Նա ամենահաճելի տրամադրության մեջ էր: Կողքից նայողին առաջին հայացքից նա կարող էր նույնիսկ մոայլ թվական, բայց դրա պատճառն այն էր, որ լուրջ, հավասարակշռված մարդ էր Տարաշկինը, և նրա զվարք տրամադրությունը չէր արտահայտվում որևէ արտաքին նշանով, եթե չհաշվենք մեղմ շվշուցն ու հանգիստ քայլվածքը:

Մի հարյուր քայլ էր մնացել մինչև տրամվայի կանգառը, երբ նա փայտասալերի դարսակների միջից քաշկոտուքի աղմուկ ու ծղրտոց լսեց: Ինչ որ կատարվում էր քաղաքում, իհարկե, անմիջականորեն վերաբերում էր Տարաշկինին:

Նա աչք ածեց դարսակների ետևը և տեսավ կյոշ շալվարներով ու հաստ կուրտկաներով երեք տղայի. նրանք, չարացած ֆսֆալով, դնքսում էին մի չորրորդ տղայի, որ կարձ էր նրանցից, ոտարորիկ, գլխաբաց, ապշելու չափ ծվիկ-ծվիկ բաճկոնակով: Նա լուս պաշտպանվում էր: Նրա նիհար երեսը ճանկութված էր, փոքրիկ բերանը՝ ամուր սեղմված, շագանակագույն աչքերն ասես գայլածագի աչքեր լինեին:

Տարաշկինն իսկույն օձիքներից բռնեց ու օդ հանեց տղաներից երկուսին, երրորդին հասցրեց ոտքով, սա վնաստաց ու կորավ դարսակների ետևը:

Մյուս երկուսը, ճոճվելով օդում, սկսեցին սպառնալ զարհուրելի արտահայտություններով: Սակայն Տարաշկինը նրանց թափ տվեց ավելի ուժգին, և նրանք հանդարտվեցին:

— Առաջին անգամ չի՝ տեսնում եմ փողոցում, թե ոնց եք ձեզնից փոքրերին նեղացնում, լակոտներ,— ասաց Տարաշկինը՝ նայելով նրանց ֆսֆացող մոռութներին:— Մեկ էլ էսպիսի բան չլինի: Հասկացա՞ք:

Հարկադրված լինելով դրական պատասխան տալ, տղաներն ասացին նոթոս.

— Հասկացանք:

Տարաշկինը նրանց իջեցրեց գետին, և նրանք, մոթմոթալով՝ էլի կպատահես, չէ՝, հեռացան՝ ձեռքները գրանները խորթած:

Ծեծված փոքրիկ տղան նույնպես ուզում էր ծլկել, բայց միայն պտույտ-պտույտ էր անում տեղում, հետո թույլ տնքաց ու նստեց՝ զլուխը քաշելով բզկտված բաճկոնակի մեջ:

Տարաշկինը կռացավ նրա վրա: Տղան լալիս էր:

— Է՛, չեղավ,— ասաց Տարաշկինը:— Որտե՞՞ն ես ապրում:

— Ոչ մի տեղ,— պատասխանեց տղան բաձկոնակի տակից:

— Այսինքն ո՞նց՝ ոչ մի տեղ: Մայրիկ ունե՞՞ն:

— Չէ

— Ու հայրի՞կ էլ չունես: Հա՛: Անապաստան երեխա ես ուրեմն: Շատ լավ:

Տարաշկինը մի որոշ ժամանակ կանգնեց քիթը կնճռոտելով: Տղան ձանձի պես տզզում էր բաձկոնակի տակ:

— Ուտել ուզո՞ւմ ես,— հարցրեց Տարաշկինը բարկացած:

— Ուզում եմ:

— Լավ, հետո ակումբ արի:

Տղան փորձեց վեր կենալ, բայց ոտքերը չպահեցին: Տարաշկինը նրան գիրկն առավ, — մանջուկը մի փութ էլ չկար, — և տարավ դեպի տրամվայը: Նստեցին, գնացին երկար: Տրամվայը փոխելիս Տարաշկինը բուլկի առավ, տղան ջղածքորեն ատամները խրեց մեջը: Մինչև թիավարության դպրոցը գնացին ոտքով: Դոնակը բացելով ու տղային ներս թողնելով, Տարաշկինն ասաց.

— Մենակ տես՝ բան չզողանաս:

— Չէ, ես մենակ հաց եմ գողանում:

Տղան քնեած նայեց ջրին, որի արևացուլքերը խաղում էին ողորկ նավակների վրա, նայեց արծաթավուն-կանաչ ուռենուն, որ իր գեղեցկությամբ էր հմայվում գետի հայելու մեջ, նայեց երկթի, քառաթի գիշկաներին, որոնց վրա մարզվում էին մկանուտ, արևառ թիավարները: Նրա նիհարիկ դեմքն անտարբեր էր ու հոգնած: Հենց Տարաշկինը շուր եկավ, նա սողաց մտավ ակումբի լայն դարպասը ջրապատվարի հետ միացնող փայտե կամրջակի տակ և, գունդուկծիկ գալով, հավանաբար իսկույն քնեց:

Երեկոյան Տարաշկինը նրան դուրս քաշեց կամրջակի տակից, կարգադրեց գետում լվալ երեսն ու ձեռքերը և տարավ ընթրելու: Տղային սեղան նստեցրին թիավարների հետ: Տարաշկինն ասաց ընկերներին.

— Էս երեխային նույնիսկ կարելի է ակումբում թողնել, մեր հացը չի կտրի, ջրին կսվորեցնենք, աչքաբաց տղա է հարկավոր մեզ:

Ընկերները համաձայնվեցին՝ թող մնա: Տղան այս ամենը լսում էր հանգիստ, ծանր ու լուրջ ուտում: Ընթրելուց հետո լուր իջավ նստարանից: Նրան ոչինչ չէր զարմացնում՝ շատ բան էր գլխովն անցել:

Տարաշկինը նրան տարավ ջրապատվարի վրա, պատվիրեց նստել ու սկսեց հարցուփորձը.

- Անունդ ի՞նչ է:
- Իվան:
- Որտեղացի՞ ես:
- Սիբիրից: Ամուրի վերևներից:
- Վաղո՞ւց ես եկել:
- Երեկ:
- Իսկ ո՞նց կար:
- Տեղ-տեղ՝ ոտով, կամաց-կամաց, տեղ-տեղ Էլ՝ վագոտակ, արկդների մեջ տապ կացած:
- Ի՞նչը քեզ բերեց հասցրեց Լենինգրադ:
- Դա արդեն իմ գործն է, — պատասխանեց տղան ու շուր եկավ, — ուրեմն պետք է, որ եկել եմ:
- Պատմիր, ես քեզ բան չեմ անի:

Տղան չպատասխանեց ու նորից մի թեթև գլուխը քաշեց բաճկոնակի մեջ: Այդ երեկոն Տարաշկինն այլևս ոչինչ չկարողացավ լսել նրանից:

Զութակի նման նրբագեղ կարմրափայտե երկտեղանոց երկթի գիշկան նեղ շերտագծով հազիվ շարժվում էր գետի հայելանման մակերեսով: Զույգ թիերն էլ տափակ կողմով սահում էին ջրի վրայով: Շելզան ու Տարաշկինը՝ սպիտակ կիսավարտիքներով, գոտկատեղից վերև՝ մերկ, արևից՝ թրծված թիկունքներով և ուսերով, նստել էին անշարժ, ծնկները՝ բարձր:

Դեկակալը՝ ծովային կարտուզով ու վզին փաթաթած շարֆով մի լուրջ երիտասարդ, նայում էր վայրկենաշափին:

- Ամպրոպ կլինի, — ասաց Շելզան:

Գետի վրա տոթ էր, ոչ մի տերև չէր շարժվում թափանտառապատ ափին: Ծառերը չափից դուրս վեր ձգված էին թվում: Երկինքն այնպէս էր հազեցած արևով, որ երկնագույն-վճիռ արեգնալույսն ասես թափվում էր շեղշ-շեղշ բյուրեղների նման: Ցավում էին մարդկանց աչքերը, սեղմվում էին քունքերը:

- Թիավարե՛լ, — հրաման արձակեց դեկակալը:

Թիավարները մեկեն թեքվեցին լայն-լայն դրված ծնկների վրա և, թիերը թիկնակողմը նետելով, սուզելով ջրի մեջ, թափով ետ ընկան, համարյա պառկեցին՝ ձգելով ոտքները, ետ սահելով նստարանների վրա:

— Մե՛կերկո՛ւ...

Թիերը ճկվեցին, գիշկան սայրի պես սահեց գետի վրայով:

— Մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, մե՛կերկո՛ւ,— հրաման էր տալիս դեկակալը:

Թիավարների մարմինները համաշափ ու արագ, սրտի զարկերի տակտով, ներշնչելու և արտաշնչելու նման, սեղմվում էին՝ թեքվելով ծնկների վրա, և բացվում-շտկվում զապանակի պես: Համաշափ, արյան շրջանառության ոիթմով, բուռն լարվածությամբ էին գործում մկանները:

Գիշկան սլացավ զբոսանավակների մոտով, որոնց մեջ նստած տարատակալներով մարդիկ թպրտում էին՝ անզոր շփշփանելով թիերը: Շելգան և Տարաշկինը, թիավարելով, ուղիղ նայում էին իրենց առաջ՝ դեկակալի քթարմատին, հայացքով պահելով հավասարակշռության գիծը: Զբոսանավակներից մարդիկ հասցնում էին միայն կանչել նրանց ետևից.

— Տես, Է, սատանեքին... Ա՛յ թե շափ են զցել...

Դուրս եկան ծովեզերք: Նորից մի պահ դադար առան՝ անշարժ մնալով ջրի վրա: Սրբեցին երեսների քրտինքը: «Մե՛կ-երկո՛ւ»... Դարձան, ետ եկան Յախտ-կլուբի<sup>9</sup> մոտով, ուր մեռյալ պաստառների պես պայծառ տապի մեջ կախ էին ընկել Լենինգրադի արհմիությունների մրցարշավային սպորտանավերի լայնածավալ առազատները: Յախտ-կլուբի վերանդայում երաժշտախումբ էր նվազում: Չեին ծածանվում ափի երկայնքով ձգված խորհրդանշ-դրոշակաշարն ու դրոշները: Գետի մեջտեղում լայնանիստ նավակներից ջուրն էին նետվում սրճագույն մարդիկ՝ ցայտեր շաղ տալով:

Սահելով լողացողների արանքով, Գիշկան դուրս եկավ Նևա, սլացավ կամրջի տակով, մի քանի վայրկյան զնաց «Ստրելա» ակումբի քառաթի մարզանավակի հետ կողք-կողքի, հետո առաջ անցավ (դեկակալն ուսի վրայից հարցրեց՝ «Երևի ուզում եք բուքսիր վերցնենք, ի՞ր »), մտավ նեղ Կրեստովկան, որի փարթամ ափերին, արծաթավուն ուռենիների կանաչ ստվերի մեջ հայտնվում ու անհետանում էին ուսումնական խմբի աղջիկների կարմիր գլխաշորերն ու մերկ ծնկները, և կանգ առավ թիավարության դպրոցի ջրապատվարի մոտ:

Շելգան ու Տարաշկինը թռան պատվարի վրա, երկար թիերը զգույշ ու խնամքով դրեցին թեք կամրջակին, կրացան ու դեկակալի հրահանգով գիշկան հանեցին ջրից, բարձրացրին զլսից վեր և լայն դարպասով տարան սարայ: Ապա ցնցուղ ընդունեցին: Սրբիչով մարմինները շփեցին մինչև կարմրելը և, սովորականի պես, մի-մի բաժակ լիմոնով թեյ խմեցին: Դրանից հետո նրանք իրենց զգում էին այնպես, կարծես հենց նոր էին ծնվել այս

<sup>9</sup> Զբամարզական կայան (Ճ. թ.)

հիասքանչ աշխարհում, որ արժանի էր այն բանին, որպեսզի, վերջապես, ձեռք գարկեին նրա բարեկարգմանը:

## 28

Հարկաչափի բարձրությամբ բաց վերանդայում (ուր թեյ էին խմում) Տարաշկինը պատմեց երեկվա տղայի մասին.

— Աչքաբաց է, խելոք, մի խոսքով՝ հրաշք:— Նա կռացավ բազրիքի վրայով ու կանչեց.— Իվան, հապա մի այստեղ արի:

Իսկուսն աստիճանների վրայից բռիկ ոտքերի թփթփոց լսվեց: Վերանդայում հայտնվեց Իվանը: Ծվատված բաճկոնակը հանել էր: (Սանիտարական նկատառումներով, այդ քուրօք վառել էին խոհանոցում): Հիմա թիավարի կիսավարտիքով էր, մերկ մարմնի վրա հագել էր մահուլք ժիշտ՝ անհավատալիորեն հնամաշ, ամբողջովին կապկպված թելերով ու պարաններով:

— Ահա,— ասաց Տարաշկինը՝ մատով ցույց տալով տղային,— ինչքան էլ համոզում եմ, որ հանի ժիշտը, չի ուզում ու չի ուզում: Ո՞նց ես լողանալու, ասա տեսնեմ: Ու գոնե մի ժիշտ էլ լինի, կեղտոտ փալաս է:

— Ես չեմ կարող լողանալ,— ասաց Իվանը:

— Հարկավոր է քեզ բաղնիքում լողացնել, կեղտից սևացել ես լրիվ:

— Ես չեմ կարող բաղնիքում լողանալ: Ա՛յ, մինչև էստեղ կարող եմ,— Իվանը ցույց տվեց պորտը, սկսեց ոտեռու փոխել ու մոտ-մոտ անել դրանը:

Տարաշկինը, եղունգներով քերծելով սրնքամիսը, որի վրա արևայրուկի պատճառով սպիտակ հետքեր մնացին, կռնչաց վրդովմունքից.

— Ինչ կուզես՝ արա:

— Լսիր, չինչ՝ ջրից վախենում ես,— հարցրեց Շելգան:

Տղան նրան նայեց անժպիտ.

— Չե, չեմ վախենում:

— Բա էլ ինչո՞ւ չես ուզում լողանալ:

Տղան գլուխը կախեց, համառորեն հուա տվեց շրթունքները:

— Վախենում ես ժիշտող հանես՝ գողանա՞ն,— հարցրեց Շելգան:

Տղան ցնցեց ուսը, քմծիծաղեց:

— Լավ, տես ինչ եմ ասում, Իվան, չես ուզում լողանալ՝ քո գործն է: Բայց մենք չենք կարող թույլ տալ, որ դա մնա հազիդ: Վերցրու իմ ժիշտը, հանվի՞ր:

Շելգան սկսեց արձակել իր ժիշտի կոճակները: Իվանը ետ-ետ գնաց: Նրա բիբերն անհանգիստ այս ու այն կողմ էին դառնում: Մի աղերսալի հայացք զցեց Տարաշկինի դեմքին և շարունակեց կողքահան շարժվել դեպի ապակեպատ դուռը, որ բացվում էր ներքին մութ սանդուղքի վրա:

— Է՛, մեր խաղի պայմանն այդպես չէ:— Շելգան վեր կացավ, կողպեց դուռը, հանեց բանալին ու նստեց ուղիղ դռան առաջ:— Դե հանիր:

Տղան շուրջն էր նայում փոքրիկ գագանի պես: Հիմա նա կանգնած էր դռան մոտ, թիկունքով ապակիներին դարձած, հոնքերը կիտած: Հանկարծ վճռականորեն հանեց ցնցոտիներն ու մեկնեց Շելգային.

— Առ, քոնք տուր:

Բայց Շելգան հիմա արդեն մեծագույն զարմանքով նայում էր ոչ թե տղային, այլ նրա ուսի կողքով, դռան ապակուն:

— Տվեր,— կրկնեց Իվանը բարկացած,— ինչի՞ եք ծիծառում, ին երեխա չեք:

— Ա՛յ քեզ փորձանք,— Շելգան ծիծառեց բարձր:— Հապա մի թիկունքով շուր արի այս կողմ: (Տղան, կարծես հարվածից, ծոծրակով զարկվեց ապակուն): Շուր արի, մեկ է, տեսնում եմ, որ մեջքիդ գրված բան կա:

Տարաշկինը վեր թռավ տեղից: Տղան, կծիկի նման բացմելով, թեթև թռավ-անցավ վերանդան, զլորվեց բազրիքի վրայով: Տարաշկինն օդում հազիվ հասցրեց քոնել նրան: Իվանը սուր ատամները խրեց նրա ձեռքի մեջ:

— Ա՛յ քեզ խելառ: Վե՛րջ տուր կծելուն:

Տարաշկինը նրան ամուր սեղմեց իրեն: Շոյեց սափրած թխակապույտ զլուխը.

— Լրիվ վայրենի երեխա է: Դողում է մկան պես: Հերիք է, վերջ տուր, չենք նեղացնի:

Տղան հանդարտվեց նրա գրկում, միայն սիրտն էր թպրտում: Հանկարծ նա շշնչաց Տարաշկինի ականջին.

— Չթողնեք դրան, որ մեջքիս գրածը կարդա, չի կարելի: Ոչ ոքի չի կարելի: Ինձ կսպանեն դրա համար:

— Լավ, լավ, չենք կարդա, հետաքրքիր չի, — կրկնում էր Տարաշկինը՝ արտասվելով ծիծառից: Շելգան այդ ամբողջ ժամանակ կանգնած էր պատշգամբի մյուս ծայրին: Կրծոտում էր եղունգները, կկոցում աչքերը՝ հանելով լուծել փորձող մարդու նման: Հանկարծ նա մոտ վագեց և, չնայած Տարաշկինի դիմադրությանը, տղային իր կողմը դարձրեց թիկունքով: Զարմանք, գրեթե զարհուրանք հայտնվեց նրա դեմքին: Տղայի

թիակներից ցած, վտիտ թիկունքին թանաքի մատիտով՝ արդեն քրտինքից կիսաջնջված տառերով, գրված էր.

«... Պյոտր Գար...ին: Արյունքն...ը խիստ միշտար... են... ենթաղրում եմ, որ օլիվինը<sup>10</sup> հինգ կիլոմ... խորութ... վրա է, շարունակ...ենք հետախուզումները, անհրաժ... օգնութ... Քաղ... շտապիր էքսպելից»...

— Գարին... սա Գարի՝ նն է,— բացականչեց Շելգան:

Այդ ժամանակ ձարձատյունով ու տրաքտրաքոցով ակումբի բակն ընկավ քրեական հետախուզության մոտոցիկլետը, և գործակալի ձայնը կանչեց ներքեւից.

— Ըսկեր Շելգա, ձեզ՝ շտապ հեռագիր...

Փարիզից Գարինի տված հեռագիրն էր:

## 29

Ոսկե փոքրիկ մատիտ հպվեց բլոկնոտին.

— Ձեր ազգանո՞ւնը, պարոն:

— Պյանկով-Պիտկիսիչ:

— Ձեր այցելության նպատա՞կը...

— Հաղորդեք միստր Ռոլինզին,— ասաց Գարինը,— որ ինձ հանձնարարված է բանակցություններ վարել ինժեներ Գարինի՝ իրեն հայտնի սարքի մասին:

Քարտուղարը վայրկենապես չքացավ: Մի բոպեից Գարինն ընկուզեփայտ դրոնով մտավ քիմիայի արքայի առանձնասենյակը: Ռոլինզը գրում էր: Առանց աշքերը բարձրացնելու՝ առաջարկեց նստել: Հետո, դարձյալ առանց աշքերը բարձրացնելու, ասաց.

— Դրամական մանր գործողությունները կատարվում են իմ քարտուղարի միջոցով,— վտիտ ձեռքով նա վերցրեց պրես-պապյեն ու թխկացրեց գրածին,— և, այնուամենայնիվ, ես պատրաստ եմ լսել ձեզ: Տախս եմ երկու բոպե: Ի՞նչ նորություն ինժեներ Գարինի մասին:

Ոտքը դնելով ոտքի վրա, խիստ ձգված ձեռքերը՝ ծնկան վրա, Գարինն ասաց.

— Ինժեներ Գարինը ցանկանում է իմանալ՝ ձեզ ստույգ հայտնի՝ է արդյոք, թե ինչ նպատակների է ծառայելու իր սարքը:

— Այո,— պատասխանեց Ռոլինզը,— որքան ինձ հայտնի է, սարքն արդյունաբերական նպատակներով որոշ հետաքրքրություն ներկայացնում է: Ես խոսել եմ մեր կոնցեռնի

<sup>10</sup> Հրաբխային ապարների կազմի մեջ մտնող դեղնականաշավուն հանք (ծ. թ.):

վարչության անդամներից մի քանիսի հետ, նրանք համաձայն են ձեռք բերել արտոնագիրը:

— Սարքը նախատեսված չէ արդյունաբերական նպատակների համար,— պատասխանեց Գարինը կտրուկ:— Այն կործանման համար է: Ճիշտ է, կարող է հաջողությամբ ծառայել նաև մետաղագործական և հանքային արդյունաբերությանը: Սակայն ներկայումս ինժեներ Գարինի դիտավորություններն այլ կարգի են:

— Քաղաքակա՞ն:

— Էհ... Քաղաքականությունը քիչ է հետաքրքրում ինժեներ Գարինին: Նա հույս ունի հաստատել սոցիալական հենց այն հասարակարգը, որ ամենից ավելի է համապատասխանում իր ձաշակին: Քաղաքականությունը մանրուք է, ֆունկցիա:

— Իսկ որտե՞ղ պիտի հաստատի:

— Ամենուրեք, իհարկե, բոլոր հինգ մայրցամաքներում:

— Ohn՝,— ասաց Ռոլինզը:

— Ինժեներ Գարինը կոմունիստ չէ, հանգստացեք: Բայց նա լրիվ ձերն էլ չէ: Կրկնում եմ, նա ընդարձակ ծրագրեր ունի: Սարքն ինժեներ Գարինին հնարավորություն է տալիս գործնականորեն իրականացնել ամենավառ ֆանտազիան: Սարքն արդեն պատրաստ է և կարելի է ցուցադրել հենց թեկուզ այսօր:

— Հը՝ մ,— ասաց Ռոլինզը:

Գարինը հետևել է ձեր գործունեությանը, միատր Ռոլինզ, և այն կարծիքին է, որ դուք վատ քափ չունեք, բայց ձեզ պակասում են մեծ գաղափարները: Զա, ընդունենք՝ քիմիական կոնցեն: Ընդունենք՝ օդային-քիմիական պատերազմ: Ընդունենք՝ Եվրոպան ամերիկյան շուկա դարձնելու ծրագիր... Բայց այդ բոլորը մանր բաներ են, չկա կենտրոնական գաղափար: Ինժեներ Գարինը ձեզ համագործակցություն է առաջարկում:

— Չեզնից ո՞վ է խելազար, նա՞, թե՞ դուք,— հարցրեց Ռոլինզը:

Գարինը ծիծառեց, մատով կողքից ուժեղ տրորեց քիթը:

— Տեսնում եք, լավ է արդեն հենց այն, որ դուք ոչ թե երկու, այլ ինն ու կես րոպե է, ինչ լսում եք ինձ:

— Ես պատրաստ եմ ինժեներ Գարինին հիսուն հազար ֆրանկ առաջարկել իր գյուտի արտոնագրի համար,— ասաց Ռոլինզը՝ նորից անցնելով գրելուն:

— Առաջարկը պետք է հասկանալ այսպէ՞ս՝ ուժով կամ խորամանկությամբ դուք մտադիր եք ձեռք գցել սարքը, իսկ Գարինի հաշիվը տեսնել այնպես, ինչպես վարվեցիք նրա օգնականի հետ՝ Կրեստովսկի կղզում:

Ռուլինգն արագ գրիչը ցած դրեց. այսոս կրերի վրա հայտնված երկու կարմիր բծերն էին միայն մատնում նրա հուզումը: Նա մոխրամանից վերցրեց կիսով չափ ծխած սիզարը, եւ ընկավ թիկնաթռոին և Գարինին նայեց ոչինչ չարտահայտող, պղտոր աշքերով:

- Ենթադրենք, թե մտադիր եմ հենց ձեր ասածի պես վարվել ինժեներ Գարինի հետ, ի՞նչ է հետևում դրանից:
- Հետևում է այն, որ Գարինը, ըստ երևոյթին, սխալվել է:
- Ինչո՞ւ:
- Այն բանում, որ կարծել է, թե դուք ավելի խոշոր մասշտաբի սրիկա եք,— ասաց Գարինը զատ-զատ, վանկ առ վանկ, զվարթ ու հանրուցն նայելով Ռուլինգին: Սա միայն կապույտ ծուխ բաց թողեց և սիզարը թեթևակի թափահարեց քթի մոտ:
- Հիմարություն կլինի ինժեներ Գարինի հետ կիսել շահույթը, երբ ես կարող եմ ամրող հարյուր տոկոսն էլ ինձ վերցնել,— ասաց նա:— Այսպիսով, որպեսզի վերջացնենք ես առաջարկում եմ հարյուր հազար ֆրանկ և ոչ մի սանտիմ ավելի:
- Ճիշտն ասած, միստր Ռուլինգ, դուք մի տեսակ հակասում եք ձեզ: Այսր դուք ոչ մի վտանգի չեք ենթարկվում: Ձեր գործակալներ Սեմյոնովն ու Տիկլինսկին հետևել են, իմացել, թե որտեղ է ապրում Գարինը: Հայտնեք ոստիկանություն, և նրան կձերբակալն իրեն բոլշևիկյան լրտեսի: Սարքն ու ծրագրերը կգողանան նույն Տիկլինսկին ու Սեմյոնովը: Այդ ամենը ձեզ վրա կնստի իինգ հազարից ոչ ավելի: Իսկ որպեսզի Գարինը չփորձի հետազայում վերականգնել գծագրերը, նրան միշտ էլ կարելի է աքսորախմբի հետ Ռուսաստան ուղարկել Լեհաստանով, ուր նրան կթխկացնեն սահմանի վրա: Հեշտ ու էժան: Էլ ի՞նչ կարիք կա հարյուր հազար ֆրանկ ծախսել:
- Ռուլինգը ելավ տեղից, խեթ նայեց Գարինին և սկսեց ետուառաջ անել՝ պսպղուն կոշիկները թաղելով արծաթավուն գորգի մեջ: Հանկարծ նա ձեռքը դուրս քաշեց գրպանից և ճթացրեց մատներով:
- Էժան խաղ է,— ասաց,— դուք ստում եք: Ես իինգ քայլ առաջ բոլոր հնարավոր կոմբինացիաների մասին մտածել եմ: Ոչ մի վտանգ չկա: Դուք պարզապես էժան շաղլատան եք: Գարինի խաղի վերջը մատ է: Նա այդ բանը գիտի և ձեզ ուղարկել է առևտուր անելու: Ես երկու լուիդոր էլ չեմ տա նրա արտոնագրին: Գարինին հետևել են, գտել, և հիմա նա մեր ձեռքում է: (Ռուլինգն աշխուժորեն նայեց ժամացույցին, ժամացույցն աշխուժորեն խոթեց ժիշտի գրպանը): Չքվե՛ք գրողի ծոցը:
- Գարինը ևս այդ ընթացքում վեր էր կացել տեղից և կանգնել սեղանի մոտ, զլուխը կախ: Երբ Ռուլինգը նրան գրողի ծոցն ուղարկեց, նա շփեց մազերն ու խոսեց ընկճված ձայնով, անսպասելիորեն ծուղակն ընկած մարդու պես.
- Լավ, միստր Ռուլինգ, ես համաձայն եմ ձեր բոլոր պայմաններին: Ասում եք՝ հարյուր հազար...

— Ո՞չ մի սանտիմ, — բղավեց Ռոլինզը: — Հեռացեք, այլապէս ձեզ դուրս կշպրտեն: Գարինը մատները տարավ օձիքից ներս, աչքերը թռան ճակատին: Օրորվեց տեղում: Ռոլինզը գոռաց.

— Առանց ֆոկուսների: Դո՞ւր:

Գարինը խոխռաց ու կողքի վրա ընկավ սեղանին: Աչ ձեռքը զարկվեց գրոտված թղթերին ու շղաձիգ սեղմեց դրանք: Ռոլինզը նետվեց դեպի էլեկտրական զանզը: Վայրկենապէս հայտնվեց քարտուղարը...

— Դո՞ւր շպրտեք այս սուրյեկտին...

Քարտուղարը կրվեց հովազի նման, նրբագեղ բեղիկները փշաքաղվեցին, բարակ ալիջակի տակ փքվեցին պողպատե մկանները... Բայց Գարինն արդեն հեռանում էր սեղանից՝ կողքահան, կողքահան, գլուխ տալով Ռոլինզին: Մարմարե սանդուղով վազեց իջավ Մալզերք բուլվար, թռավ թափքածածկով վարձու մեքենան, գոռաց հասցեն, բարձրացրեց զույգ պատուհանները, իջեցրեց կանաչ վարագույրները և կարճ, սուր քրջաց:

Պիջակի գրպանից հանեց ճմրթված թուղթն ու զգույշ հարթեց ծնկների վրա: Ճռձռան թղթի վրա (որ պոկել էր մեծ բլոկնոտից) Ռոլինզի այդ օրվա գործնական գրառումներն էին՝ նրա խոշոր ձեռագրով: Հավանաբար այն պահին, երբ առանձնասենյակ էր մտել Գարինը, Ռոլինզի զգուշավոր ձեռքը շարունակել էր գրել մեքենաբար՝ գաղտնի մտքեր մատնելով: Երեք անգամ իրար տակ գրված էր.

«Գորելենների փողոց, վաթսուներեք, ինժեներ Գարին»: (Դա Վիկտոր Լենուարի նոր հասցեն էր, որ քիչ առաջ Սեմյոնովն էր հայտնել հեռախոսով): Ապա՝ «Հինգ հազար ֆրանկ՝ Սեմյոնովին»...

— Հաջողություն էր... Սատանան տանի... Այ թէ հաջողություն էր,— մրմնջաց Գարինը՝ թերթիկներն զգուշորեն հարդարելով ծնկների վրա:

## 30

Տասը րոպէ հետո Գարինը դուրս թռավ ավտոմոբիլից Սեն-Միշել բուլվարում: «Պանթեոն» սրճարանի հայելավոր պատուհանները բարձրացված էին: Խորքում, սեղանի մոտ նստած էր Վիկտոր Լենուարը: Տեսնելով Գարինին, նա բարձրացրեց ձեռքն ու մատներով ճթացրեց:

Գարինը փութով նստեց նրա սեղանի մոտ, թիկունքով՝ դեպի լույսը: Կարծես նստել էր հայելու դեմ. Վիկտոր Լենուարը նույնպէս երկարավուն փոքրիկ մորուքով էր, փափուկ լայնեզր գլխարկով, թիթեռնիկ-փողկապով, շերտավոր պիջակով:

— Շնորհավորիր, հաջողությո՞ւն... Արտակա՞րգ, — ասաց Գարինը՝ ծիծաղելով միայն աչքերով:— Ռոլինզը համաձայն է ամեն ինչի: Նախնական ծախսերն անում է

միանձնաբար: Երբ սկսվի շահագործումը, ընդհանուր եկամուտի հիսուն տոկոսը՝ նրան, հիսուն տոկոսը՝ մեզ:

— Պայմանագիր կնքեցի՞ք:

— Կկնքենք երկու-երեք օրից: Սարքի ցուցադրումը հարկ կլինի հետաձգել: Ռոլինզը պայման դրեց պայմանագիրն ստորագրել սարքի աշխատանքը սեփական աշխով տեսնելուց հետո միայն:

— Մի շիշ շամպայն կրերէ՞ս սեղանին:

— Երկուս էլ, երեք էլ, մի դյուժին էլ:

— Բայց և այնպես, ափսոս որ այդ շնաձուկը կուլ է տալիս մեր եկամուտների կեսը,— ասաց Լենուարը՝ կանչելով սպասավորին:— Մի շիշ Իռուա, ամենաանխառնը:

— Առանց կապիտալի մենք, միևնույն է, չենք կարող մեր ուզածն անել: Այս Վիկտոր, եթե հաջողվի Կամչատկայի իմ ձեռնարկումը՝ տասը Ռոլինզի գրողի ծոցը կուղարկենք:

— Ի՞նչ Կամչատկայի ձեռնարկում:

Սպասավորը զինի ու գավաթներ բերեց, Գարինը սիգարը վառեց, ետ ընկալ ծղոտահյուս աթոռի թիկնակին և, ճոճվելով, աչքերը կկոցելով, սկսեց պատմել.

— Հիշո՞ւմ ես երկրաբան Նիկոլայ Խրիստոֆորովիշ Մանցլին: Տասնինակ թվին նա եկավ գտավ ինձ Պետրոգրադում: Նոր էր վերադարձել Հեռավոր Արևելքից, զորահավաքից վախեցել փախել էր, ու հիմա իմ օգնությունն էր խնդրում, որ ուզմաձակատ չընկնի:

— Մանցլը ուսկեխույզների անզլիական ընկերությունո՞ւմ էր ծառայում:

— Հետախուզումներ էր կատարում Լենայի, Ալդանի, հետազյում՝ Կոլիմայի ափերին: Հրաշքներ էր պատմում: Ասում էր, թե ուղղակի իրենց ոտքերի տակ տասնինակ կիլոյանց բնակտորներ էին գտել... Ահա հենց այդ ժամանակ էլ գլխումս գաղափար ծնվեց՝ իմ կյանքի գլխավոր գաղափարը... Խիստ հանդուզն, նույնիսկ խելացնոր գաղափար է դա, բայց ես հավատում եմ դրան: Իսկ եթե ես հավատում եմ՝ սատանան ինքն էլ չի կարող ինձ ետ պահել: Գիտես ինչ, սիրելիս, աշխարհում միակ բանը, որին ես ձգտում եմ ամբողջ հոգով, իշխանությունն է: Եվ ոչ թե ինչ-որ թագավորական, կայսերական իշխանություն՝ մանր, ճղճիմ, ձանձրալի... Ոչ, բացարձակ իշխանություն... Օրերից մի օր մանրամասն կպատմեմ քեզ իմ ծրագրերի մասին: Իշխելու համար ոսկի է պետք: Իմ ցանկացածի պես իշխելու համար հարկավոր է ավելի շատ ոսկի, քան արդյունաբերական, բորսային և մյուս արքաներն ունեն՝ միասին վերցրած...

— Իսկապես, համարձակ են քո պլանները,— ասաց Լենուարը զվարթ ծիծաղով:

— Բայց ես ճիշտ ճանապարհի վրա եմ: Ամբողջ աշխարհն իմ բռան մեջ կլինի, ահա այսպես,— Գարինը բռունցք արեց փոքրիկ ձեռքը:— Իմ ուղու նշանաձողերն են հանձարեղ

Նիկոլայ Խրիստոֆորովիչ Մանցեր, ապա՝ Ռոլինգը, ավելի ճիշտ՝ նրա միլիարդները, և երրորդ՝ իմ հիպերբռոլիդը...

— Հա, հետո ի՞նչ եղավ Մանցեր:

— Հենց այդ ժամանակ էլ, տասնինգ թվին, ես հավաքեցի ունեցած-չունեցածս փողը, ավելի շատ պնդերեսությամբ, քան կաշառով Մանցերին ազատեցի զինվորական ծառայությունից և մի փոքր արշավախմբի հետ ուղարկեցի Կամչատկա, աշխարհի ծայրը... Մինչև տասնյոթ թիվը դեռ գրում էր ինձ. աշխատանքը ծանր էր, տաժանելի, շան օր էր քաշում... Տասնութ թվից, հասկանալի է, հետքերը կորան... Նրա հետախուզումներից է կախված ամեն ինչ...

— Ի՞նչ է որոնում այնտեղ:

— Ոչ մի բան էլ չի որոնում... Մանցեր պիտի միայն հաստատի իմ տեղական ենթադրությունները: Խաղաղ օվկիանոսից ափերի՝ ասիական ու ամերիկյան, օվկիանոսից հատակին իշած նախկին մայրցամաքի եզրերն են: Նման վիթխարի ծանրությունը պետք է որ իր ազդեցությունն ունեցած լինի հալված վիճակում գտնվող խոր հանքային ապարների տեղաբաշխման վրա... Հարավային Ամերիկայի գործող հրաբուխների շղթաները՝ Անդերում ու Կորդիլլերներում, Ճապոնիայի և, Վերջապես, Կամչատկայի հրաբուխները հաստատում են, որ Օլիվինյան գոտու հալված ապարները՝ ոսկի, սնդիկ, օլիվին և այլն, Խաղաղ օվկիանոսի եզրերում ավելի մոտ են երկրի մակերեսին, քան երկրագնդի այլ տեղերում<sup>11</sup>... Հասկանալի՞ է:

— Չեմ հասկանում, ինչի՞ դ է պետք այդ Օլիվինյան գոտին:

— Որ տիրե՛մ աշխարհին, սիրելիս... Է՛հ, խմենք: Մեր հաջողության կենացը...

### 31

Զոյա Մոնրով՝ սև մետաքսե կոֆտայով, ինչպիսին հագնում են միդինետուիիները, կարձ շրջազգեստով, պուլպայած երեսով, հարդարած արտևանունքներով,— Սեն-Դենի դարպասների մոտ ցած թռավ ավտոբուսից, վագելով կտրեց անցավ աղմկալի փողոցը և մտավ երկու փողոցի վրա բացվող վիթխարի «Գլոբուս» սրճարանը, որ ապաստանն էր Մոնմարտրի ամեն տեսակ երգիչների և երգուիիների, միջակ դերասանների ու դերասանուիիների, գողերի, պոռնիկների և անարխիստաբար տրամադրված այն երիտասարդների, ովքեր, գրպաններում տասը սու, ետ ու առաջ էին վազվզում բուլվարներում՝ լիգելով տեսդից չորացած իրենց շրթունքները, տենչալով կին, կոշիկ, մետաքսե սպիտակեղեն և ամեն ինչ աշխարհում...

<sup>11</sup> Ենթադրություն կա, թե երկրի կեղևի և երկրագնդի կենտրոնական ամուր միջուկի միջև գոյություն ունի հալված մետաղների շերտ, այսպես կոչված՝ Օլիվինյան գոտի (ծանոթ հեղինակի):

Զոյա Մոնրոզը հայացքով ազատ սեղան որոնեց: Գտավ: Գլանակ վառեց, ոտքը զցեց ոտքին: Իսկույն նրան մոտեցավ վեներական հիվանդությունից ախտահարված ծնկներով մի մարդ և խոպոտ մոթմոթաց. «Ինչի՞ ես եղանակ սրտնեղած, ձատիկս»: Զոյա Մոնրոզը դեմքը շուր տվեց: Մի ուրիշն իր սեղանի մոտից, աչքերը կկոցելով, լեզու ցույց տվեց: Էլի մեկն էլ մոտ թռավ, իբր՝ սխալմամբ. «Կի-կի, վերջապէ՞ս»... Զոյան կարծ ու կտրուկ նրան ուղարկեց գրողի ծոցը:

Երևում է՝ նա այստեղ շատ էր հետաքրքրություն շարժում, թեև աշխատում էր փողոցային աղջկա տեսք ընդունել: «Գլորու» սրճարանի հաճախորդները կանանց հարցում լավ հոտառություն ունեին: Զոյան մատուցողից պահանջեց մի լիտր կարմիր գինի և նստեց՝ դեմք լեցուն բաժակը, ձեռքերը դիմիարած այտերին: «Լավ չի, մանկիկս, դու արդեն քեզ հարբեցողության ես տալիս», — ասաց կողքից անցնող ծերուկ դերասանը՝ թեթևակի խփելով նրա մեջքին:

Արդեն երեք գլանակ էր ծիմել: Վերջապէս անշտապ մոտեցավ նա, ում սպասում էր՝ խոժոռ, ամրակազմ, մազածածկ նեղ ձակասով ու պաղ աչքերով մի մարդ: Բեղերը վեր էին տնկված, գունավոր օձիքը խրվել էր զորեղ պարանոցի մեջ: Նա լավ էր հազնված, առանց ավելորդ պահանքի: Նստեց: Կարծ ողջունեց Զոյային: Նայեց շուրջը, և ոմանք աչքները կախեցին: Գաստոն Բադաքիթն էր՝ անցյալում գող, ապա հոչակավոր Բոնոյի հրոսախմբի բանդիտ: Պատերազմի ժամանակ ծառայել էր, հասել ենթասպայի աստիճանի և զորացրվելուց հետո անցել էր հանգիստ աշխատանքի՝ պոռնիկների հաշվին ապրող մարդու խոշոր մասշտաբի գործունեության:

Հիմա նա ոչ անհայտ Սյուզան Բուրժի տնօրինության տակ էր: Բայց Սյուզան Բուրժը խամրել էր արդեն: Նա իջել էր այն աստիճանին, որ Զոյա Մոնրոզն անցել էր վաղուց: Գաստոն Բադաքիթն ասաց.

— Սյուզանը լավ նյութ ունի, բայց երբեք չի կարող պետք եղածի պէս օգտագործել: Նա ժամանակը չի զգում: Մարդ զարմանում է՝ ժանեկավոր վարտիքներ ու առավոտյան վաննա՝ կաթով: Հին է, զավառական հրշեցներին հարմար: Չե, երդվում եմ Իզերի ափին, լաստապանի տան մոտ թիկունքս վառած մանանեխի գազով, ժամանակակից պոռնիկը, եթե ուզում է շենք ու շուրջով լինել, պիտի ռադիոապարատ դնի ննջարանում, բռնցքամարտ սովորի, դառնա ռազմադաշտի լարափակոցի պէս փշոտ, տասնութ տարեկան տղայի պէս մարզված, կարողանա քայլել ձեռների վրա ու քսան մետրից ջուրը նետվել: Նա պիտի մասնակցի ֆաշիստների ժողովներին, խոսի թունավորող գազերի մասին ու սիրեկաններին փոխի շաբաթը մեկ, որ նրանց չսովորեցնի խոզության: Իսկ իմը, համեցեք խնդրեմ, պառկում է կաթի վաննայում նորվեգական սաղմոնի նման ու երազում է չորս հեկտարանց գյուղատնտեսական ֆերմայի մասին: Էժան ապուշի մեկն է, հասարակաց տան հետքը դեռ մնում է վրան:

Զոյա Մոնրոզին նա մոտենում էր մեծագույն հարգանքով: Հանդիպելով գիշերային ռեստորաններում, նրան ակնածալի առաջարկում էր պարել և համբուրում էր ձեռքը՝ միակ կնոջ ձեռքը ամբողջ Փարիզում: Զոյան հազիվ էր բարեւում ոչ անհայտ Սյուզան

Բուրժին, բայց Գաստոնի հետ բարեկամությունը չէր կտրում, և սա ժամանակ առ ժամանակ կատարում էր նրա առավել փափկանկատ հանձնարարությունները:

Այսօր Զոյան Գաստոնին շտապ կանչել էր «Գլոբուս» սրճարան և հայտնվել էր փողոցային միջինետուիու զայթակղիչ տեսքով: Գաստոնը միայն սեղմում էր ծնոտները, իրեն պահում էր այնպես, ինչպես պետք էր: Ծծելով թթու գինին, աչքերը կկոցելով ծխամորձի ծխից, նա խոժողած ականջ էր դնում Զոյային: Խոսքն ավարտելով, Զոյան ճթճացրեց մատները: Գաստոնն ասաց.

- Բայց դա վտանգավոր է:
- Եթե դա հաջողվի, Գաստոն, դուք մեկընդմիշտ ապահոված մարդ եք:
- Ոչ մի գումարի համար, տիկին, ոչ թաց ու ոչ էլ չոր գործ հանձն չեմ առնի անել. Էլ այն ժամանակները չեն: Այսօր ապաշները<sup>12</sup> գերադասում են ծառայել ոստիկանությունում, իսկ պրոֆեսիոնալ գողերը՝ լրագիր հրատարակել ու գրաղվել քաղաքականությամբ: Սպանում ու թալանում են միայն սկսնակները, զավառացիներն ու վեներական հիվանդությամբ վարակված լակոտները: Եվ իսկույն էլ ընկնում են ոստիկանություն: Ի՞նչ կարող ես անել, չափահաս մարդիկ ստիպված են մնալ խաղաղ նավահանգստում: Եթե դուք ուզում եք ինձ վարձել փողով՝ ես հրաժարվում եմ: Ուրիշ բան, որ դա անեմ ձեզ համար: Այդ դեպքում ես պատրաստ եմ զլուխս էլ վտանգի տակ դնել:

Զոյան մի փոքրիկ ծխաքուլա բաց թողեց ալ կարմիր շուրթերի անկյունից, ժպտաց քնքշորեն և սիրունիկ ձեռքը դրեց Բաղաքթի թևքի վրա:

- Կարծում եմ՝ մենք համաձայնության կզանք:

Գաստոնի ոռւնզները թրթռացին, բեղերը ցնցվեցին: Նա կապտավուն կոպերով քողարկեց դուրս պրծած աչքերի անհամբեր փայլը:

- Դուք ուզում եք ասել, թե ես հենց հիմա Սյուզանին կարող եմ ազատե՞լ իմ ծառայություններից:

— Այո, Գաստոն:

- Գաստոնը թեքվեց սեղանի վրայով, զավաթը սեղմեց բոռնցքի մեջ:
- Ուզում եք ասել, թե իմ բեղերից ձեր մաշկի բո՞ւրը պիտի գա:
- Կարծում եմ՝ դրանից անկարելի է խուսափել, Գաստոն:
- Լավ:— Գաստոնը ետ ընկալ աթոռի թիկնակին:— Շատ լավ: Ամեն ինչ կլինի այնպես, ինչպես դուք եք ուզում:

<sup>12</sup> Սպադասակարգայնացած անձնավորություններ Ֆրանսիայում, խուլիզաններ (Ճ. թ.):

Ճաշն ավարտված է: Հարյուրամյա կոնյակով սուրճը՝ խմված: Երկդոլարանոց «Կորոնա Կորոնա» սիգարը ծիսված է մինչև կեսը, և մոխիրը չի թափվում: Հասել է տանջալի պահը՝ հետո՝ ինչ անել, սատանայական ի՞նչ կնտնտոցով որևէ ուրախ բան նվազել հոգնած նյարդերի վրա:

Ռուլինգի պահանջով բերին փարիզյան բոլոր զվարձավայրերի ազդագիրը:

- Ուզո՞ւմ եք պարել:
- Ոչ— պատասխանեց Զոյան՝ դեմքի կեսը ծածկելով մորթիով:
- Թատրոն, թատրոն, թատրոն, — կարդաց Ռուլինգը: Տաղտկալի էր այդ ամենը՝ երեք արարով երկարաբան կատակերգություն, ուր դերասանները ձանձրութից ու զզվանքից նույնիսկ չեն դիմահարդարվում, դերասանուիները, նշանավոր դերձակների կարած զգեստների մեջ, հանդիսասրահ են նայում դատարկ աչքերով:
- Հանդես: Հանդես: Ահա՝ «Օլիմպիա», հարյուր հիսուն մերկ կին՝ միայն կոշիկներով, և տեխնիկայի հրաշք-փայտե վարագույր՝ բաժանված շախմատի վանդակների, որոնց մեջ, բարձրացնելիս և իջեցնելիս, կանգնած են բոլորովին մերկ կանայք: Ուզո՞ւմ եք՝ զնանք:
- Սիրելի բարեկամս, նրանք բոլորը ծուռոտն են, զբոսայգիներից հավաքած աղջկներ:
- «Ապոլլո»: Այստեղ մենք չենք եղել: Երկու հարյուր մերկ կին՝ միայն... Սա թողնենք: «Գրտնակ»: Նորից կանայք: Այդպես, այսպես: Եվ, այս ամենից բացի, «Աշխարհահոչակ երածշտական ծաղրածուներ Պիմ և Զեկ»:
- Դրանց մասին խոսում են,— ասաց Զոյան,— զնանք: Նրանք զբաղեցրին բեմին կից հատուկ օթյակը: Բեմում էստրադային տեսություն էր ներկայացվում:

Ըստիր ֆրակ հազած, անընդհատ շարժվող մի երիտասարդ և կարմիր զգեստով, լայներից գլխարկով ու գավազանով չափահաս մի կին կծու-բարեհոգի խոսքեր էին նետում կառավարության հասցեին, կծու-անվնաս ռեպլիկներ ուղղում ոստիկանության շեֆին, հրապուրիչ նրբությամբ ծիծաղում էին մեծահարուստ օտարերկրացիների վրա, ընդ որում, ծիծաղում-ծաղրում էին այնպես, որ նրանք այդ տեսությունից հետո անմիջապես վեր չկենային, իսպառ չհեռանային Փարիզից և իրենց բարեկամներին ու ազգականներին ետ չպահեին այդ ուրախ քաղաքն այցելու մտքից:

Քաղաքականության մասին մի քիչ շաղակրատելուց հետո, անընդհատ ոտքերը շարժող երիտասարդն ու գավազանով տիկինն բացականչեցին. «Հո՞ ա, լյա-լյա»: Եվ թեմ վազեցին կարծես բաղնիքից դուրս թռած մորեմերկ, չափից դուրս սպիտակ, պուդրայված աղջկներ: Նրանք, շարվելով, հարձակվող բանակ ներկայացնող կենդանի պատկեր կազմեցին: Նվազախմբում առնականորեն թնդացին շեփորներն ու ազդանշանային եղջերափողերը:

— Երիտասարդների վրա սա պիտի որ ազդի, — ասաց Ռոլինզը:

Զոյան պատասխանեց.

— Երբ կանայք այսքան շատ են՝ չի ազդում:

Հետո՝ վարագույրն իջավ ու նորից բարձրացավ: Բեմեզը մոտ դրված էր բեմի կեսը բռնող բուտաֆորական մի ռոյալ: Կտկտացին ջազբանդի փայտիկները, հայտնվեցին Պիմն ու Զեկը: Պիմը՝ ինչպես կարգն է, անհեթեթ ֆրակով, մինչև ծնկները հասնող ժիլետով, վրայից ընկնող տարատով, արշինանց ոտնամաններով, որոնք իսկույն փախան նրանից (ծափեր), բարեսիրտ ապուշի մոռութով: Զեկը՝ ալրաթարախ, թաղիքե սրածայր գրակով, քամակին՝ չղջիկ: Սկզբում նրանք արեցին հարկ եղած ամեն ինչ, որ մարդիկ ծիծաղից փորները պատռեն. Զեկը հասցնում էր Պիմի դնչին, և սա քամակից փոշու ամպ էր բաց թողնում, հետո Զեկը զարկեց Պիմի զանգին, և զանգի վրա գուտապերչե ուռուցք բանեց:

Զեկն ասաց. «Լսիր, ուզո՞ւմ ես՝ քեզ համար նվազեմ այս ռոյալով»: Պիմը սարսափելի քրքչաց, ասաց՝ «Լավ, նվազիր այս ռոյալով», և նստեց քիչ հեռու Զեկը ամբողջ ուժով զարկեց ստեղներին, ոռյալի պոչը պոկվեց ընկավ: Պիմը նորից երկար-երկար քրքչաց ահավոր: Զեկը երկրորդ անգամ հարվածեց ստեղներին, պոկվեց ռոյալի կողքը: «Ոչինչ»— ասաց Զեկն ու հասցրեց Պիմի դնչին: Սա սահեց բեմի մի ծայրից մյուսը, ընկավ (թմբուկը՝ բո՞ւմմ): Վեր կացավ՝ «Ոչինչ», դուրս թքեց մի բուռ ատամ, գրապանից մի փոքրիկ ավել ու թիակ հանեց, որոնցով փողոցի աղբն են հավաքում, և սկսեց շորերը մաքրել: Այնժամ Զեկը երրորդ անգամ զարկեց ստեղներին, ոռյալը լրիվ փուլ եկավ, և տակից հայտնվեց սովորական համերգային մի ռոյալ. Քթին քաշելով թաղիքե գրակը, Զեկն անհասանելի արվեստով, ներշնչանքով սկսեց նվազել Լիստի «Կամպանելլան»:

Զոյա Մոնրոզի ձեռքերը սառեցին: Ռոլինզի կողմը դառնալով՝ շշնչաց.

— Սա մեծ արտիստ է:

— Ոչինչ,— ասաց Պիմը, երբ Զեկն ավարտեց նվազը,— հիմի դու լսիր, թե ես ինչպես եմ նվազում:

Նա սկսեց այս ու այն գրապանից դուրս քաշել կանացի վարտիքներ, մի հնամաշ մաշիկ, հոգնայի փողակ, կենդանի կատու (ծափեր), հանեց ջութակն ու, բարեսիրտ ապուշի տրտմագին դեմքով հանդիսարահի կողմը դառնալով, սկսեց նվազել Պագանինիի անմահ էտյուտը:

Զոյան ելավ տեղից, վզին զցեց սամույրի մորթին, շողշողացրեց աղամանդները:

— Գնանք, զզվում եմ: Ցավոք սրտի, ես մի ժամանակ արտիստուիի եմ եղել:

— Իսկ ո՞ւր գնանք, ի՞նչ անենք, պստիկս: Տասն անց կես է:

— Գնանք խմելու:

Մի քանի բոպեից նրանց լիմուզինը կանգ առավ Մոնմարտրում, «Արքայի ընթրիք» որջի տասը պատուհաններով լուսավորված նեղլիկ փողոցում: Յածրիկ, վառ կարմիր մետաքսով պաստառված, հայելազարդ առաստաղով և պատերով տոյթ ու ծխախոտի ծխով լի սրահում թռչող սերպանտինների, ցելյուլոիդի գնդիկների և կոնֆետինների մեջ, իրար նեղելով, օրորվում-պարում էին թղթե ժապավեններում խճճված, մինչև գոտկատեղը մերկ կանայք, նրանց գրիմավորված այտերին էին հպվում տղամարդկային բոստը ու դժգույն, հարբած, խոնջացած, տոփոտ երեսներ: Ճարձատում էր դաշնամուրը: Ոռնում, վնասում էին ջութակները, և երեք նեզը, քրտինքի մեջ կորած, տամտամ էին զարկում, ավտոմոբիլի ազդափողեր մոնչացնում, փայտիկներ չխլչխլացնում, զանգեր զնզգնացնում, ծնծղաներ թնդացնում, թակում հա թակում թուրքական թմբուկը: Ինչ-որ տամուկ դեմք կիա մոտեցավ Զոյային: Ինչ-որ կանացի ձեռքեր փաթաթվեցին Ռոլինզի պարանոցի շուրջը:

— Ճանապա՛րհ, մանկիկներս, ճանապա՛րհ տվեք քիմիայի արքային,— իրեն պատռելով՝ կանչեց ավագ մատուցողը, դժվարությամբ տեղ գտավ բոստը պատի երկայնքով ձգվող նեղլիկ սեղանի մոտ և նստեցրեց Զոյային ու Ռոլինզին: Նրանց կողմը թռան ցելյուլոիդե գնդիկներ, կոնֆետիններ, սերպանտիններ:

— Ձեզ վրա ուշադրություն են դարձնում,— ասաց Ռոլինզը:

Զոյան, արտևանունքները կիսով չափ ցած թողած, շամպայն էր խմում: Նա շոգում էր ու քրտնում հազիվ կուրծքը ծածկող մետաքսի մեջ: Ցելյուլոիդե մի գնդիկ դիպավ նրա այտին:

Նա դանդաղ շուր տվեց գլուխը. տղամարդկային երկու մութ, ասես ածխով շրջագծված աչքեր նրան էին նայում մոայլ հիացումով: Նա թեքվեց առաջ, սեղանին դրեց հոլանի ձեռքերը և սկսեց ներծծել այդ հայացքը գինու պես. միևնույնը չէ, թե ինչով են արբում:

Նրան նայող մարդու դեմքն ասես սմբեց այդ մի քանի վայրկյանում: Զոյան կզակն իջեցրեց իրար ազուցած ձեռքերին, աչքի տակով դիմահար ընդունեց նրա հայացքը... Ինչ-որ տեղ ինքը տեսել էր այդ մարդուն: Ո՞վ է, ի՞նչ է՝ ֆրանսիացի՞ թե անգլիացի: Թուխ մորուքի մեջ կոնֆետիններ էին թնջկվել: Սիրուն բերան ունի: «Ճետաքրքիր է, խանդո՞ւ է Ռոլինզը»,— մտածեց Զոյան:

Սպասավորը, անցնելով պարողների հրմշտոցի միջով, նրան մի երկտող տվեց: Նա զարմացավ, ետ ընկավ բազմոցի թիկնակին: Շեղ հայացք զցելով սիգար ծխող Ռոլինզի կողմը, կարդաց.

«Զոյա, նա, ում նայում եք այդպես քնքշորեն, Գարինն է... Համբուրում եմ թաթիկո: Սեմյոնով»:

Նա, ըստ երևույթին, այնպես գունատվեց, որ քիչ հեռվում ինչ-որ ձայն ասաց աղմուկի միջից. «Տեսեք, տիկինն իրեն վատ է զգում»: Այնժամ նա մեկնեց դատարկ գավաթը, և սպասավորը շամպայն լցրեց:

Ոոլինգն ասաց.

— Սեմյոնովն ի՞նչ է զրել ձեզ:

— Հետո կասեմ:

— Նա այն պարոնի մասի՞ն է զրել, որ լկտիաբար տնտղում է քեզ: Դա այն մարդն է, որ երեկ ինձ մոտ էր: Ես նրան դուրս վրնդեցի:

— Մի՞թե դուք նրան չեք ճանաչում, Ոոլինգ... Հիշո՞ւմ եք՝ Էտուալ հրապարակում... Դա Գարինն է:

Ոոլինգը միայն ֆսացրեց: Սիզար հանեց՝ «Հը՝ մ»: Հանկարծ նրա դեմքն ընդունեց այն նույն արտահայտությունը, երբ նա գնում-զալիս էր առանձնասենյակի արծաթավուն գորգի վրա՝ հինգ քայլ առաջ դատելով պայքարի բոլոր հնարավոր կոմբինացիաների մասին: Այն ժամանակ նա Ժիր-Ժիր ճթթացրեց մատներով: Հիմա Զոյայի կողմը դարձավ ծոմոված բերանով:

— Գնա՞նք, հարկավոր է լուրջ խոսել:

Դուան մոտ Զոյան շուտ եկավ: Ծխի և սերպանտինների խառնաշփոթի միջով նա նորից տեսավ Գարինի վառվող աչքերը: Հետո,— զիսապտույտ առաջ բերելու չափ անհասկանալի էր,— Գարինի դեմքը երկվացավ. նրա առջև նստած, թիկունքով պարողների կողմը դարձած ինչ-որ մեկը մոտ շարժվեց նրան, և երկուսն էլ նայեցին Զոյային: Թե՞ դա հայելիների խարկանք էր...

Զոյան մի ակնքարթ աչքերը կկոցեց և պանդոկի մաշված ուղեգորգի վրայով ցած վազեց դեպի ավտոմոբիլը: Ոոլինգն սպասում էր նրան: Դուռը փակելով, նա ձեռքը դիպցրեց Զոյայի ձեռքին.

— Ես ձեզ ամեն ինչ չեմ, որ պատմեցի այդ կարծեցյալ Պյանկով-Պիտկելչի հետ իմ հանդիպման մասին... Ինչ-որ բան ինձ համար անհասկանալի մնաց՝ նրա ինչի՞ն էր պետք հիստերիկա խաղալը: Նա ախր հույս չեր կարող ունենալ, որ մազաշափ անզամ կխողամ իրեն... Նրա ամբողջ վարվելակերպը կասկածելի է: Բայց ինչո՞ւ եկավ ինձ մոտ... Ինչի՞ համար փուլեց սեղանին...

— Ոոլինգ, այդ բանը դուք ինձ չեք պատմել...

— Այո, այո... Ցած զցեց ժամացույցը... Ճմրթեց իմ թղթերը...

— Նա ձեր թղթերը գողանալու փո՞ք արեց:

— Ի՞նչ: Գողանալու փո՞ք արեց...— Ոոլինգը լոեց մի պահ:— Չե, այդպիսի բան չեղավ: Նա կորցրեց հավասարակշռությունը, ընկալ, ու ձեռքը զարկվեց թղթապանակին... Մեջը մի քանի թուրլթ կար...

— Դուք համոզվա՞ծ եք, որ ոչինչ չի կորել:

- Մի առանձին իմաստ չունեցող գրառումներ էին: Ճմբակած: Գցեցի զամբյուղը:
- Աղաջում եմ, ամենայն մանրամասնությամբ մտաբերեք ամբողջ խոսակցությունը...

Լիմուզինը կանգ առավ Սեն փողոցում: Ռոլինզն ու Զոյան գնացին ննջարան: Զոյան շտապով վրայից նետեց շրջազգեստն ու պառկեց լայն, ծեփածո, արծվի ոտքերով մահճակալին՝ Նապոլեոն Առաջին կայսեր իսկական մահճակալներից մեկին, դիպակե ամպիովանու տակ: Ռոլինզը, դանդաղ հանվելով, գնում-գալիս էր գորգի վրայով և, հագուստների առանձին մասերը ուսկեզօծ աթոռների, սեղանիկների, բուխարու դարակի վրա թողնելով, ամենայն մանրամասնությամբ պատմում էր Գարինի նախորդ օրվա այցելության մասին:

Զոյան լսում էր՝ արմունկին հենված: Ռոլինզն սկսեց ցած քաշել տարատը՝ ցատկուտելով մի ոտքի վրա: Այդ պահին նա նման չէր արքայի: Հետո պառկեց, ասաց՝ «Ահա բացարձակապես այն, ինչ եռել ե», և կերպասե վերմակը քաշեց մինչև քիթը: Երկնագույն գիշերալամպը լուսավորում էր պերճաշուր ննջարանը, այստեղ-այնտեղ թափված հագուստները, մահճակալի այունիկների վրայի ոսկե ամուրներն ու Ռոլինզի՝ վերմակին դեմ առած քիթը: Նրա գլուխը խոր թաղվել էր բարձի մեջ, բերանը կիսաբաց էր. քնել էր քիմիայի արքան:

Այդ ֆաֆսացող քիթն էլ հենց հատկապես խանգարում էր Զոյային, չէր թողնում մտածի: Շեղում տանում էր դեպի այլ, անհարկի ոկի հիշողություններ: Զոյան թոթվեց գլուխը, հեռու վանեց դրանք, և Ռոլինզի փոխարեն բարձի վրա պատկերացրեց մի ուրիշ գլուխ: Նա ձանձրարացել, հոգնել էր պայքարից. փակեց աշքերը, քմծիծաղեց: Կոպերի տակ հայտնվեց Գարինի դեմքը՝ հուզումից գունատ... «Գուցե զանգեմ Գաստոն Բադաքին, որ սպասի»: Հանկարծ կարծես սուր ասեղ անցավ նրա մարմնով. «Նրա հետ նստած էր նմանակը... Ճիշտ այնպես, ինչպես Լենինգրադում»...

Նա դուրս սահեց վերմակի տակից, շտապով ոտքերին քաշեց գուլպաները: Ռոլինզը, այն է, պիտի բառաչեր քնի մեջ, բայց միայն շուր եկավ կողքի:

Զոյան վագեց հանդերձարան: Հազար շրջազգեստը, անձրևանցը, ամուր կապեց գոտին: Վերադարձավ ննջարան՝ ձեռնապայուսակը վերցնելու, որի մեջ փող կար...

— Ռոլինզ,— ձայնեց կամացուկ,— Ռոլինզ... Մենք կորած ենք...

Բայց Ռոլինզը նորից բառաչեց: Զոյան իջավ նախասրահ ու դժվարությամբ բացեց մուտքի բարձր դուռը: Սեն փողոցը թափուր էր: Ձեղնահարկերի տանիքների վրա, նեղ լուսաշերտի մեջ դեղնին էր տալիս խամրած լուսինը: Զոյան համակվեց թախծով: Մի պահ նայում էր քնած քաղաքի վրա ծանրացած լուսնազնդին... «Աստված ծ իմ, աստված, ի՞նչ ահավոր է, ի՞նչ մոայլ»... Երկու ձեռքով նա խոր ձակատի վրա քաշեց գլխարկն ու վագեց դեպի առափնյա փողոցը:

Գորելենների փողոցի վաթսուներեք համարի հին եռահարկ տունը մի պատով դուրս էր գալիս պարապուտ: Այդ կողմից պատուհաններ ուներ միայն երրորդ հարկը՝ ձեղնահարկը: Մյուս՝ խոլ պատը հարում էր զբոսայգուն: Ճակատի կողմից, փողոցի վրա, գետնամած առաջին հարկում կառապանների ու վարորդների սրճարանն էր: Երկրորդ հարկն զբաղեցնում էր գիշերային հանդիպումների համար նախատեսված հյուրանոցը: Երրորդ՝ ձեղնահարկի սենյակները վարձով տրվում էին մշտական կենվորների: Այնտեղ հասնելու համար պիտի մտնեիր դարպասով և անցնեիր երկար թունելով:

Գիշերվա ժամը երկուսն էր: Գորելենների փողոցում ոչ մի լուսավորված պատուհան: Սրճարանն արդեն փակ էր՝ բոլոր աթոռները դրված էին սեղաններին: Զոյան կանգ առավ դարպասի մոտ, մի րոպե նայեց վաթսուներեք համարին: Թիկունքը սարսուաց: Համարձակություն առավ: Զանգ տվեց: Պարան շրշաց, դարպասը բացվեց կիսով չափ: Զոյան սպրդեց մութ բակամուտքը: Հեռվից դրնապանուհու ձայնը փնթփնթաց. «Գիշերը քննելու համար է, հարկավոր է ժամանակին տուն գալ»: Բայց չհարցրեց, թե ով է եկողը:

Այստեղ գողառքի կարգ ու բարք էր տիրում: Զոյան համակվեց ահավոր տագնապով: Նրա առջև ցածլիկ, մոայլ թունել էր: Ցուլի արյան գույնի խորդուքորդ պատերի վրա աղոտ լուս էր անում գազալամպը: Սեմյոնովի ցուցումն այս էր՝ թունելի վերջից — ձախ — պտուտակածի սանդուղքով — երրորդ հարկ — ձախ — տասնմեկերրորդ սենյակ:

Թունելի մեջտեղում Զոյան կանգ առավ: Նրան թվաց, թե հեռվում, ձախում, մեկն արագ ծիկրակեց ու թաքնվեց: Ետ չգնա՝ արդյոք: Ականջ դրեց՝ ոչ մի ձայն: Վազելով հասավ գարշահոտ հարթակի ոլորանին: Այստեղից սկսվում էր նեղլիկ, վերից՝ ինչ-որ տեղից հազիվ լուսավորված պտուտակածի սանդուղքը: Զոյան վեր ելավ ոտնամատների ծայրերի վրա՝ վախենալով դիպչել լարձուն բազրիքին:

Ամբողջ տունը քնած էր: Երկրորդ հարկի սանդղահարթակից ձարձքած կամարը տանում էր մութ միջանցք: Բարձրանալով վեր՝ Զոյան ետ նայեց, և նրան նորից թվաց, թե կամարի ետևից մեկը դուրս նայեց ու ելի պահվեց... Միայն թե դա Գաստոն Բադաքիթը չէր... «Ոչ, ոչ, Գաստոնը դեռ չի եկել, չեր կարող այստեղ լինել, չեր հասցնի»....

Երրորդ հարկի հարթակում գազալամպ էր վառվում՝ լուսավորելով չհագեցած ցանկությունների մասին խոսող խզբանքներով ու նկարվածքներով ծածկված պատը: Եթե Գարինը տանը չինի՝ ինքը նրան կսպասի այստեղ մինչև առավոտ: Իսկ եթե տանն է, քնած է, ապա ինքը չի հեռանա, մինչև չստանա այն, ինչ նա վերցրել է Մալզերք բուլվարի առանձնասենյակի սեղանից:

Զոյան հանեց ձեռնոցները, զիսարկի տակ թեթևակի կարգի բերեց մազերն ու ձախ գնաց միջանցքով: Ծնկները ծալվում էին: Հինգերորդ դրան վրա սպիտակ ներկով խոշոր գրված էր՝ 11: Զոյան սեղմեց բռնակը, դուռը հեշտությամբ բացվեց:

Փոքրիկ սենյակը լուսավորված էր բաց պատուհանից ընկնող լուսնի լույսով: Հատակին բացված ձամպրուկ կար: Դես ու դեն շաղ եկած թղթեր էին սուր ձերմակին տալիս: Պատի մոտ, լվացարանի և պահարանի միջև, հատակին նստած էր մեն-մի շապիկով մի մարդ.

մերկ ծնկները վեր էին քաշված, բորբոք ոտնաթաթերը հսկայական էին թվում...Լուսնացոլքով լուսավորված էր դեմքի կեսը, փայլում էր լայն բացված աչքն ու ձերմակին էին տախս ատամները — ժպտում էր: Կիսաբաց բերանով, շունչը պահած՝ Զոյան նայում էր անշարժ, ծիծուն դեմքին. Գարինն էր այդ մարդը:

Այսօր առավոտյան «Գլոբուս» սրճարանում Զոյան Գաստոն Բաղաքթին ասաց. «Գարինից գողացիր գծագրերն ու սարքը և, եթե հնարավոր է, սպանիր նրան»: Այսօր երեկոյան շամպայնի գավաթի վրա շղարշվող մշուշի միջից նա տեսավ Գարինի աչքերն ու զգաց՝ կգայթակղի այդ մարդը, և ինքը կհրաժարվի ամեն ինչից, կմոռանա ամեն ինչ ու կգնա նրա ետևից: Գիշերը, կռահելով վտանգն ու դուրս նետվելով, որ գտնի Գաստոնին ու ետ պահի նրան, Զոյան ինքն էլ դեռ չէր հասկանում, թե ինչն իրեն ստիպեց այդպես տագնապով վազ տալ գիշերային Փարիզով մեկ, պանդոկից պանդոկ, խաղատնից խաղատուն, ամեն տեղ, ուր կարող էր լինել Գաստոնը, և, վերջապես, բերեց հասցրեց Գոբելենների փողոց: Ի՞նչ զգացմունք էր, որ այդ խելացի, պադ, դաժան կնոջը հարկադրեց բացել իր իսկ կամքով մահվան դատապարտված մարդու սենյակի դուռը:

Նա նայում էր Գարինի ատամներին ու դուրս պրծած աչքին: Հետո ցածր, խոպոտ ճիշ արձակեց, մոտեցավ ու խոնարհվեց նրա վրա: Գարինը մեռած էր: Դեմքը՝ կապտած: Վզի վրա՝ ուռած ձանկովածքներ: Վայրկենապես սմբած, հրապուրող, հուզախոռվ աչքերով ու մեջը կոնֆետիններ թնջկված մետաքսե մորուքով այն դեմքն էր դա... Զոյան կառչեց լվացարանի սառցասառն մարմարից, շտկվեց դժվարությամբ: Մոռացել էր, թե ինչու է եկել: Բերանը լցվեց դառն լեղիով: «Այդ էր պակաս՝ իիմա կ ուշաթափ գետին փովեի»: Վերջին ճիգով պոկեց խեղդող օձիքի կոճակը: Գնաց դեպի դուռը: Դուն մեջ կանգնած էր Գարինը:

Նրա ատամները փայլում էին հատակին նստած մարդու ատամների պես՝ բացված պադ ժպիտով: Բարձրացրեց մատն ու թափ տվեց — սպառնաց: Զոյան հասկացավ, սեղմեց բերանը, որ չձաւ: Միրտը բաբախում էր այնպես, կարծես ճիզ էր անում դուրս պրծնել ջրի տակից... «Ո՛ դջ է, ո՛ դջ է»...

— Սպանվածը ես չեմ, — ասաց Գարինը շշուկով՝ շարունակելով սպառնալ, — դուք սպանել եք Վիկտոր Լենուարին՝ իմ օգնականին... Ոռլինզին գիլիոտին է սպասում...

— Ո՛ դջ է, ո՛ դջ է, — կրկնում էր Զոյան խոպաձայն:

Գարինը բռնեց նրա արմունկներից: Նա իսկույն ետ գցեց գլուխը, հանձնվեց ամբողջովին, առանց դիմադրելու: Գարինը նրան իր կողմը քաշեց և զգալով, որ կնոջ ոտքերը ծալվում են, գրկեց ուսերից:

— Ինչո՞ւ եք այստեղ...

— Ես փնտրում էի Գաստոնին...

— Ո՞ւմ, ո՞ւմ...

— Նրան, ում պատվիրել էի սպանել ձեզ...

— Ես դա կանխատեսել էի, — ասաց Գարինը՝ նայելով նրա աչքերի մեջ:

Նա պատասխանեց ինչպես երազում.

— Եթե Գաստոնը սպաներ ձեզ՝ վերջ կտայի կյանքիս...

— Չեմ հասկանում...

Նա, ասես նիրհի մեջ, մեղմ, մարմրող ձայնով կրկնեց Գարինի ետևից.

— Ես ինքս Էլ չեմ հասկանում...

Այս տարօրինակ խոսակցությունը տեղի էր ունենում դրան մեջ: Պատուհանից երևում էր գրաֆիտե տանիքին իջած լուսինը: Պատի մոտ սեպերը բացած ժպտում էր Լենուարը: Գարինն ասաց կամացուկ.

— Դուք եկել եք Ռոլինզի գրառո՞ւմը տանելու:

— Այո: Խնայեք:

— Ո՞ւմ: Ռոլինզի՞ն:

— Ոչ: Ինձ: Խնայեք, — կրկնեց Զոյան:

— Ես զոհաբերեցի բարեկամիս, որպեսզի կործանեմ ձեր Ռոլինզին...: Ես նույնպիսի մարդասպան եմ, ինչպես դուք... Խնայե՞մ... Ո՞չ, ո՞չ...

Հանկարծ նա ձգվեց, ականջ դրեց: Կտրուկ շարժումով Զոյային քաշեց, դուրս տարավ դոնից: Շարունակելով սեղմել նրա թևն արմունկից վեր, կամարի ետևից նայեց սանդուղի կողմը...

— Գնա՞նք: Ես ձեզ այստեղից կհանեմ զբոսայգու միջով: Լսեք, դուք զարմանալի կին եք, — նրա աչքերը փայլատակեցին խենթ ծաղրով, — մեր ճանապարհները խաչվեցին... Դուք զգո՞ւմ եք այդ...

Նա Զոյայի հետ ցած վազեց պտուտակաձև սանդուղքով: Զոյան չէր դիմադրում՝ շշմած այն օտարուտի զգացումից, որ եռում էր նրա մեջ առաջին անգամ եփ եկող պղտոր գինու պես:

Ներքեսի հարթակում Գարինը թեքվեց ինչ-որ մութ տեղ, կանգ առավ, մոմալուցկի վառեց և դժվարությամբ բացեց հավանաբար տարիներով փակ մնացած դրան ժանգոտ կողպեքը:

— Ինչպես տեսնում եք՝ ամեն ինչ նախապես նկատի է առնված:

Նրանք դուրս եկան զբոսայգու մթաստվեր տամկավուն ծառերի տակ: Եվ հենց այդ պահին փողոցից դարպասով թունել մտավ ոստիկանական ջոկատը, որին քառորդ ժամ առաջ Գարինն էր կանչել հեռախոսով:

Շելգան լավ էր հիշում Կրեստովսկի կղզու ամառանոցում «կորցրած զինվորը»: Այն ժամանակ (Պրոֆմիությունների գրոսարանում) նա հասկացավ, որ Պյանկով Պիտկիչչն անպայման մի անգամ էլ կզա ամառանոց՝ նկուղում պահվածը տանելու: Մայրամուտին (նույն օրվա) Շելգան, առանց պահակին անհանգստացնելու, մտավ ամառանոց և գրպանի լապտերով իշավ նկուղ: «Զինվորը» տեղնուտեղը տանուլ էր տրված. խոհանոցում, հատակի դրոնակից երկու քայլ հեռու, կանգնած էր Գարինը, Շելգայի հայտնվելուց մի քանի վայրկյան առաջ նա ճամպրուկը ձեռքին դուրս էր թռել նկուղից և կանգնել դռան ետև՝ կպած պատին: Նա Շելգայի ետևից շրիկոցով փակեց դրոնակն ու սկսեց վրան ածուխով լի պարկեր թափել: Շելգան, լապտերը բարձրացրած, քմծիծաղով նայում էր, թե դրոնակի ձեռքից ինչպես էր աղբ ու փոշի մաղում: Մտածեց խաղաղ բանակցությունների անցնել: Բայց վերևում հանկարծ լրություն տիրեց: Արագ հեռացող ոտնաձայն հասավ նրա ականջին, հետո՝ կրակոցներ, ապա՝ վայրի աղաղակ: Չորսմատնանու հետ տարվող գոտեմարտի աղմուկն էր դա: Մի ժամից հայտնվեց միլիցիան:

Զինվորը կորցնելուց հետո Շելգան լավ քայլ արեց: Ուղղակի ամառանոցից նա միլիցիայի ավտոմոբիլով սլացավ Յախտ-կլուբ, արթնացրեց ակումբի հերթապահին՝ խոպածայն, բրդոտ մի ծովայինի, և հարցրեց առանց դես ու դենի:

— Ի՞նչ քամի է:

Ծովայինն էլ իհարկե, առանց երկար-բարակ մտածելու պատասխանեց.

— Զյուդ-վեստ:

— Քանի՞ քալ է:

— Հինգ:

— Դուք երաշխավորո՞ւմ եք, որ բոլոր մարզանավերն իրենց տեղում են:

— Երաշխավորում եմ:

— Ի՞նչ պահպանություն կա մարզանավերի վրա:

— Պետկան է, պահակը:

— Թույլ տվեք ստուգել ջրապատվարը:

— Լսում եմ, ստուգել ջրապատվարը,— պատասխանեց ծովայինը՝ քունք զիսին մի կերպ ձեռքը մտցնելով նավաստու կուրտկայի թևի մեջ:

— Պե՛տկա,— կանչեց սպիրտից խանձված ձայնով՝ Շելգայի հետ դուրս գալով ակումբի վերանդան: (Պատասխան չեղավ):

— Անպայման վեր ընկած քնած է մի տեղ, ոտից քաշիր զարբնեցրու,— ասաց ծովայինը՝ օձիքը բարձրացնելով քամու դեմ:

Պահակին գտան քիչ հեռու, թփերի մեջ. իր քեֆին խոմփացնում էր՝ բուրքի ոչխարենու օձիքը զլխին քաշած: Ծովայինը նախատական խոսք նետեց: Պահակը քրթմնջաց, վեր կացավ: Բարձրացան ջրապատվար, ուր պողպատավուն, արդեն կապտին տվող ջրերի վրա օրորվում էր կայմերի մի ամբողջ անտառ: Ուժեղ, հանկարծական պոտթկումներով քամի էր փշում:

- Դուք վստա՞ն եք, որ բոլոր նավերը տեղում են,— նորից հարցրեց Շելգան:
- Մենակ «Օրիոնը» չկա, Պետերգոֆում է... Հա, մեկ է՝ Ստրելնա քշեցին երկու նավ:

Շելգան ջուր շիթող տախտակների վրայով հասավ պատվարի ծայրին և այստեղ փայտամածի վրայից կառանապարանի կտոր վերցրեց. մի ծայրը կապված էր օղին, մյուսն ակնհայտորեն կտրված էր: Հերթապահն անշտապ զննում էր պարանը: Քիթն ուղղեց հարավ-արևմտյան քամուն: Ոչինչ չասաց: Քայլեց ջրապատվարի երկայնքով՝ մատով հաշվելով մարզանավերը: Զեռքով ողը թրատեց քամու ուղղությամբ: Եվ քանի որ ակումբի կարգապահությամբ արգելված էր ռազմա-իմպերիալիստական բառեր գործածել, նա սահմանափակվեց միայն խոտորնակի արտահայտություններով.

- Ես դրանց չգիտեմ մոր չգիտեմ ինչը,— բողոքուաց նա անհավատալի եռանդով:— Շկոտը<sup>13</sup> խրվի դրանց կոկորդը: «Բիբիզոնդա՝» են տարել՝ ամենալավ մրցանավը, շան բաժին դառնա դրանց հոգին, շուն-շան տղերք, ձյութած ֆալլ<sup>14</sup> դրանց չգիտեմ ինչտեղը... Երեսուն անգամ խեղդվես նեխած ջրում, Պետկա, ո՞ւր էին աչքերդ, պարազիտ, քսոտ գեղացի: «Բիբիզոնդա՝» են տարել, ես դրանց չգիտեմ մոր չգիտեմ ինչը...

Պահակ Պետկան ախուվախ էր անում, զարմանում, կողքերը ծեծում ոչխարենու թևքերով: Ծովայինը, համընթաց քամուց քշվող առագաստանավի նման, անսանձ սուրում էր վելիկոռուսական լեզվի անհայտ-անծանոթ խորխորատներով: Այստեղ այլևս անելու բան չկար: Շելգան գնաց նավահանգիստ:

Առնվազն երեք ժամ անցավ, մինչև նա արագընթաց պահակային կատերով դուրս թռավ բաց ծով: Ուժեղ ալեկոծություն էր: Կատերը թաղվում էր ալիքների տակ: Ջրափոշին մշուշում էր հեռադիտակի ապակիները: Երբ ծագեց արևը, ֆիննական ջրերում, փարոսից այս կողմ, ափի մոտ առագաստ երևաց. ստորջրյա քարերի մեջ թփրտում էր դժբախտ «Բիբիզոնդան»: Տախտակամածը թափուր էր: Կատերից մի քանի կրակոց արձակեցին՝ կարգը պահպանելու համար և ստիպված եղան վերադառնալ ձեռնունայն:

Այդպես Գարինն անցավ սահմանն ու փախավ՝ այս զիշեր շահելով ևս մի զինվոր: Որ այդ խաղին մասնակցում էր նաև Չորսմատնանին՝ գիտեին միայն Գարինն ու Շելգան: Ելնելով դրանից, նավահանգիստ վերադառնալու ճանապարհին Շելգայի մտքերն այսպիսի ընթացք ստացան.

<sup>13</sup> Առագաստների թոկասարք (ծ. թ.):

<sup>14</sup> Ճոպան՝ ազդադրոշակները բարձրացնելու համար (ծ. թ.):

«Արտասահմանում Գարինը կամ կվաճառի, կամ ինքն ազատ ժամանակ կզբաղվի խորհրդավոր սարքի շահագործմամբ: Այդ գյուտն առաջմ կորած է Միության համար և, ով զիտի, ապագայում ճակատազրական դեր չի՝ խաղա: Բայց արտասահմանում Գարինին սաստող ուժ կա՝ Չորսմատնանին: Քանի դեռ պայքարը նրա հետ չի ավարտվել, Գարինը չի համարձակվի լույս աշխարհ դուրս գալ սարքով: Իսկ եթե այդ պայքարում Գարինի կողմը բոնեմ՝ գուցե և շահեմ ի վերջո: Համենայն դեպս, ամենահիմար բանը, որ կարելի է անել (և որ ամենաշահեկանը կլինի Գարինի համար), Լենինգրադում Չորսմատնանուն անհապաղ ձերբակալելն է»: Հետևությունը պարզ էր ու հասարակ:

Շելգան նավահանգստից ուղիղ եկավ իր բնակարանը, չոր սպիտակեղեն հագավ, զանգեց քրեական հետախուզություն ու հայտնեց, որ «գործն ինքնըստինքյան լիկվիդացված է», անջատեց հեռախոսն ու պառկեց քնելով՝ ծիծառելով այն բանի վրա, թե ինչպես Չորսմատնանին,— գազերից թունավորված և գուցե վիրավոր,— հիմա պուկ եկած փախչում է Լենինգրադից: Այս էր Շելգայի հակահարվածը՝ ի պատասխան «կորսված զինվորի»:

Եվ ահա՝ հեռազիր (Փարիզից). «Չորսմատնանին այստեղ է: Իրադարձություններն սպառնալի են»: Օգնության աղաղակ էր դա:

Ինչքան խորն էր մտածում Շելգան, այնքան պարզ էր դառնում՝ հարկավոր է թռչել Փարիզ: Նա հեռախոսով տեղեկացավ, թե երբ են մեկնում մարդատար աերոպլանները, և ետ եկավ վերանդա, ուր դեռ չմթագնած իրիկնային շամանդադի մեջ նստած էին Տարաշկինն ու Իվանը: Անապաստան տղան, այն բանից հետո, երբ նրա թիկունքին կարդացին թանաքի մատիտով գրվածը, հանդարտվել էր և չէր հեռանում Տարաշկինից:

Ճյուղերի արանքից, նարնջագույն ջրերի վրայից հասնում էին խոսակցության ձայներ, թիերի ճողփյուն, կանացի ծիծառ: Աշխարհի պես հին բաներ էին կատարվում կղզիների մուլթ թափուտներում, ուր տագնապալի ձայն էին տալիս իրար ինչ-որ անքուն թռչնակներ, ճտճտում երգում էին սոխակներ: Ամենայն շնչավոր արարած, դուրս պրծնելով երկարատև ձմռան անձրևների ու ճյունամրրիկների միջից, շտապում էր ապրել, բերկրալի ազահությամբ ըմպում էր այդ զիշերվա արբեցուցիչ թուշանքը: Տարաշկինը մի ձեռքով գրկել էր Իվանի ուսերը, մյուսով կործնել էր բազրիքին ու չէր շարժվում՝ ճյուղերի միջով նայում էր ջրին, որի վրա անլսելի նավակներ էին լողում:

— Հը, Իվան, — ասաց Շելգան՝ աթոռը մոտեցնելով ու թեքվելով դեպի տղայի դեմքը, — որտե՞ղ է քեզ համար ավելի հաճելի, այնտե՞ղ թե այստեղ: Հեռավոր Արևելքում դու երևի կիսաքաղ, վատ էիր ապրում, հը :

Իվանն անթարթ նայեց Շելգային: Նրա աշքերը մթնշաղում թախծոտ թվացին, ծերունական աչքերի նման: Շելգան ժիշտի գրպանից սառնաշաքար հանեց ու չխկչխկացրեց Իվանի ատամներին, մինչև որ ատամներն իրարից հեռացան, և սառնաշաքարը սահեց բերանը:

— Մենք, Իվան, երեխաների հետ լավ ենք վարվում: Չենք ստիպում աշխատել, թիկունքներին նամակ չենք գրում, ոչ մի տեղ չենք ուղարկում՝ հարկադրելով, որ վագոնի տակ մտած յոյժ հազար վերստ ճանապարհ կտրեն: Տեսն՝ ու ես, թե ինչ լավ է մեզ մոտ՝

կղզիներում, և այս ամենը գիտես թե ուսն է: Այս ամենը մենք երեխաներին ենք նվիրել առհավետ: Ե՛վ գետը, և՝ կղզիները, և՝ նավակները, և՝ հաց ու երշիկը,— կեր կուշտուկուտ,— այդ բոլորը քոնն են...

— Էղակս երեխուն ձամփից կհանեք,— ասաց Տարաշկինը:

— Ոչինչ, չեմ հանի, խելոք է: Որտեղացի՞ ես, Իվան:

— Ամուրի կողմերից,— պատասխանեց Իվանը դժկամ:

— Մերս մեռել է, հորս սպանել են պատերազմում:

— Բա ինչպե՞ս էիր ապրում:

— Դոնեղուտ էի գնում, գործ անում:

— Այդքան փոքրիկ, ու՝ զո՞րծ:

— Իսկ ինչ կա որ... Զի էի արածացնում...

— Լավ, իսկ հետո՞ :

— Հետո ինձ տարան:

— Ո՞վ:

— Էնակս, մարդիկ: Նրանց տղա էր պետք, որ ծառերը բարձրանա, սունկ, կաղին հավաքի, սկյուտ բռնի ուտելու համար, վազ տա ուր ուղարկեն...

— Ուրեմն քեզ արշավախո՞ւմբ վերցրին: (Իվանն աշքերը ճպճպացրեց, լոեց): Ու հեռո՞ւ տարան: Պատասխանիր, մի վախենա: Մենք քեզ չենք մատնի: Զիմա դու մեր եղբայրն ես...

— Ութ օր նավով լողացինք... Մտածում էինք՝ կենդանի չենք մնա: Ու էի ութ օր գնացինք ոսով, մինչև որ հասանք կրակ թափող լեռանը...

— Այդպե՞ս, այդպե՞ս,— ասաց Շելզան,— ուրեմն արշավախումբը եղել է Կամչատկայում:

— Հա, էլի, Կամչատկայում... Մենք էստեղ ապրում էինք խրճիթում... Հեղափոխության մասին երկար ժամանակ բան չգիտեինք: Իսկ երբ իմացանք՝ երեքը գնացին, հետո էլի երկուսը գնացին, էլ ուտելու բան չէինք ձարում: Մնացինք նա ու ես...

— Այդպե՞ս, այդպե՞ս, իսկ ո՞վ է «նա»-ն: Ի՞նչ էր անունը:

Իվանը, նորից խոժոռվոց: Շելզան երկար հանգստացնում էր նրան, շոյում կրծքին հակված նրա կնտած գլուխը...

— Ախր կսպանեն ինձ, որ ասեմ: Նա ահ տվեց, որ կսպանի...

— Ո՞վ:

— Մանցեն, կի: Նիկոլայ Խրիստոֆորովիչը... «Այ,— ասեց,— ես քո թիկունքին նամակ եմ գրել, լողանաս, շապիկդ, ժիշտդ չհանես, թեկուզ մի տարի, թեկուզ երկու տարի, կհասնես Պետրոգրադ, կգտնես Պյոտր Պետրովիչ Գարինին ու նրան ցույց կտաս գրվածը, նա քեզ լավ նվեր կանի»...

— Իսկ ինչո՞ւ Մանցեն ինքը չեկավ Պետրոգրադ, եթե նրան պետք էր տեսնել Գարինին:

— Բոլշևիկներից էր վախում... Ասում էր՝ «Նրանք սատանաներից ել վատն են: Նրանք ինձ կսպանեն: Նրանք, ասում էր,— ամբողջ երկիրը վերջին թելն են զցել՝ գնացքները կանգնած են, փոստ չկա, ուտելու բան չկա, քաղաքից փախել են բոլորը»... Որտեղից իմանար, վեցերորդ տարին է՝ լեռան վրա նստած է ու նստած...

— Ի՞նչ է անում այնտեղ, ի՞նչ է փնտրում:

— Է՛, ինքը կասե՞ր որ: Բայց, մեկ է, ես զիտեմ... (Իվանի աշքերն ուրախ, խորամանկ փայլկտացին): Գետնի տակ ոսկի է ման գալիս...

— Ու գտա՞վ:

— Նա՞: Բա ոնց, գտավ...

— Որ պետք լինի՝ կարո՞ղ ես ցույց տալ այն ճանապարհը, որ տանում է լեռ, Մանցենի մոտ:

— Իհարկե, կարող եմ... Մենակ, տեսեք, շմատնեք ինձ, թե չէ նա, զիտես, կատաղածի մեկն է... Շելգան ու Տարաշկինը մեծագույն ուշադրությամբ լսում էին տղային: Շելգան մի անգամ էլ ուշադիր զննեց նրա թիկունքին գրվածը: Հետո լրտանկարեց:

— Հիմա իջիր ներքև, Տարաշկինը քեզ կլողացնի օճառով, կպառկես քնելու, — ասաց Շելգան: — Դու ոչինչ չես ունեցել՝ ոչ հայր, ոչ մայր, ունեցածդ միայն մի դատարկ փոր է եղել: Հիմա ամեն ինչ կա, ինչ ուզես— ապրիր, սովորիր, մեծացիր քեզ համար: Տարաշկինը քեզ խելք կսովորեցնի, դու նրան լսիր: Մնաս բարով: Մի երեք օրից կտեսնեմ Գարինին, քո հանձնարարությունը կհաղորդեմ նրան:

Շելգան ծիծառեց, և քիչ անց նրա հեծանվի լապտերը, ցատկուտելով, սրընթաց հեռացավ ու կորավ մութ թփուտների մեջ:

Այսումինե թները փայլվի եցին կանաչ օդանավակայանի վերևում, բարձր-բարձր, և վեցտեղանի մարդատար ինքնաթիռն անհետացավ ձյունաձերմակ ամպերի ետևում: Ուղեկցողների խոսմբը դեռ մնում էր տեղում կանգնած՝ գլուխները ետ զցած նայելով լուսաշող կապույտին, ուր ծովորեն պտույտներ էր անում մի զիշանգղ և օդն էին մկրատում ծիծեռնակները, սակայն դյուրայումինե թռչունն արդեն թռել էր սատանան զիտի թե ուր:

Վեց ուղևորները, նստած ճռճռացող հյուսկեն թիկնաթռոներում, նայում էին դանդաղ ցած ընկնող մանուշակագույն-կանաչ երկրին: Ներքեսում թելերի նման ճանապարհներ էին ոլորվում: Շինությունները, զանգակատները փոքր-ինչ շեղ դրված խաղալիքներ էին թվում: Աջից, հեռու-հեռվում, տարածվում էր ջրի կապույտը: Ամպերի ստվերներ էին սահում՝ սրողելով երկրագնդի կեղևի մանրամասները: Ահա և ամպն ինքը հայտնվեց ներքեսում, շատ մոտ:

Պատուհաններին կպած, բոլոր վեց ուղևորները ժպտում էին իրենց վրա իշխել կարողացող մարդկանց փոքր-ինչ բռնազբոսիկ ժպիտով: Օդային ուղևորությունը դեռևս նոր բան էր: Չնայած բարեկարգ խցիկին, ի ցույց անվտանգ հարմարավետության՝ ետծալովի սեղանիկների վրա զցված հանդեսներին ու կատալոգներին, այնուհանդերձ ուղևորներն ստիպված էին համոզել իրենք իրենց, որ, վերջին հաշվով, օդային հաղորդակցությունը շատ ավելի անվտանգ է, քան, ասենք, ոտքով փողոցն անցնելը: Բոլորուվին ուրիշ է օդում: Հանդիպում ես ամպի՝ սուզվում ես ու միջով սահում-անցնում, միայն խցիկի պատուհաններն են քրտնում, կարկուտն է կտկտում դյուրայումինին կամ մեքենան է ցնցվում, ինչպես դարուփոսերի վրա. կառչում ես թիկնաթռողի հյուսածող արմնկալիկներից՝ աչքերդ շռած, բայց հարևանդ արդեն աչքով է անում, ծիծաղում՝ այ թե փոս էր, հա՞... Պատահում է՝ հանկարծ այնպիսի փոթորիկ է լինում, որ մի վայրկյանում ծովային առազաստանավի կայմեր է տապալում, դեկը փշրում, նավակները, մարդկանց քշում թափում մոլեգնած ալիքների երախը, այնինչ մետաղե թռչունը ամուր է ու ճապուկ՝ կճուճի թևերը, շարժիչների ոռնոցը կհանի, և տեսար՝ արդեն դուրս է պրծել, հազար մետր վեր է խոյացել փոթորկի օջախից:

Մի խոսքով, ժամ էլ չէր անցել, որ խցիկում ուղևորներն ընտելացան ոտքերի տակի պարապությանն ու ճոճումներին: Շարժիչի գվլոցը խանգարում էր միմյանց հետ խոսելուն: Մեկը գլխին հազցրեց միկրոֆոնային մեմբրաններով ականջնոցները, և զրույց սկսվեց: Շելգայի դիմաց նստել էր մոտ երեսունինգ տարեկան նիհարակազմ, բավական հնամաշ վերարկուով ու, ըստ երևույթին, հատուկ արտասահմանյան ուղևորության համար ձեռք բերված վանդակավոր կեպկայով մի մարդ:

Դեմքը գունատ էր, նրբամաշկ, խելացի, խոժոռ ու վայելչագեղ կիսադեմ ուներ, խարտյաշ փոքրիկ մորուք, հանգիստ ու ամրակամ շրթունքներ: Նստել էր կորացած, ձեռքերը դրած ծնկներին: Շելգան ժպտալով նշան արեց նրան: Անծանոթը դրեց ականջնոցները: Շելգան հարցրեց:

- Դուք Յարուլավլում, ռեալական ուսումնարանում չե՞ք սովորել: (Մարդը գլուխը խոնարհեց): Երկրացիներ ենք, ես ձեզ հիշում եմ: Ալեքսեյ Սեմյոնովիչ Խլինովն եք, չե՞: (Գլխի խոնարհում): Հիմա որտե՞ղ եք աշխատում:
- Պոլիտեխնիկումի ֆիզիկայի լաբորատորիայում,— խոսափողի մեջ ասաց Խլինովի թույլ, շարժիչի աղմուկից խլացած ձայնը:
- Գործուղմա՞ն եք գնում:

— Բեռլին, Ռայխերի մոտ:

— Գաղտնի՞ք է:

— Ոչ: Այս տարվա մարտին մեզ հայտնի դարձավ, որ Ռայխերի լաբորատորիայում կատարվել է սնդիկի ատոմային տրոհում:

Խինովն ամբողջ դեմքով դարձավ Շելգայի կողմը, աչքերը զուսպ հուզումով սևովեցին զրուցակցի աչքերին: Շելգան ասաց.

— Չեմ հասկանում, մասնագետ չեմ:

— Աշխատանքներն առայժմ տարվում են լաբորատորիաներում: Մինչև արդյունաբերության մեջ կիրառելը դեռ շատ կա... Թեև, — Խինովը նայեց ամպերի՝ ձյան նման ալեծելով դաշտերին, որ խորունկ ցածում փուլել-պատել էին երկիրը, — թեև ֆիզիկոսի կարինետից մինչև գործարանի արտադրամասն այնքան էլ հեռու չէ: Ասումի հարկադրական տրոհման սկզբունքը պիտի որ պարզ լինի, չափազանց պարզ: Դուք գիտեք, իհարկե, թե ինչ է ատոմը:

— Այսպես պստիկ-մստիկ մի բան, — Շելգան ցույց տվեց մատներով:

— Ասումը ավագահատիկի համեմատությամբ նույնն է, ինչ որ ավագահատիկը երկրագնդի համեմատությամբ: Եվ, այնուամենայնիվ, մենք չափում ենք ատոմը. հաշվում նրա կեկտրոնների պտույտի արագությունը, որոշում նրա քաշը, զանգվածը, կեկտրական լիցքի մեծությունը: Մենք մոտենում ենք ատոմի բուն սրտին՝ նրա միջուկին: Այդ միջուկի մեջ է նյութի վրա իշխանություն հաստատելու ամբողջ գաղտնիքը: Մարդկության ապագան կախված է այն բանից, թե մենք կկարողանանք արդյոք տիրապետել ատոմի միջուկին՝ նյութական էներգիայի այդ մասնիկին, որ մեկ հարյուր բիլիոն սանտիմետր մեծություն ունի:

Երկրից երկու հազար մետր բարձրության վրա Շելգան այնպիսի զարմանալի բաներ էր լսում, որ Շեհերազարի հերիաթներից էլ հերիաթային էին, բայց հերիաթ չէին: Այն ժամանակներում, երբ պատմության դիալեկտիկան մի դասակարգին հասցրել էր կործանարար պատերազմի, իսկ մյուսին՝ ապստամբության, երբ վառվում էին քաղաքները, և փոշին, մոխիրը, զագի ամպերը քուլա-քուլա իջնում էին դաշտերի ու այգիների վրա, երբ հողն իսկ սասանվում էր խեղդվող հեղափոխությունների ցասկոտ աղաղակներից և, ինչպես հնում, բանտի նկուղներում գործի էին դրվում դահճի գելոցն ու աքցանը, երբ գիշերը զբոսայգիներում ծառերի վրա ահավոր պտուղներ էին աճում՝ դուրս ընկած լեզուներով, երբ մարդու վրայից ընկնում էր այնքան սիրով պճնազարդված իդեալիստական պատմուճանը, — այդ հրեշավոր ու տիտանական տասնամյակում մենավոր ջահերի նման վառվում-լույս էին տալիս գիտնականների զարմանալի մտքերը:

Աերոպլանն սկսեց իջնել Կովնոյի վրա: Անձրևից թրջված կանաչ դաշտն արագ թռչում էր ընդառաջ: Անիվները գլորվեցին դաշտով ու կանգ առան: Օդաչուն ցած թռավ խոտի վրա: Ուղևորները դուրս եկան, որ մի քիչ շարժվեն՝ ոտքերը բացվի: Սկսեցին ծխել: Շելգան քաշվեց մի կողմ, պառկեց խոտին՝ ձեռքերը գլխի տակ դնելով. տարօրինակ էր կապտավուն խորքով հեռավոր ամպերին նայելը: Քիչ առաջ այնտեղ էր ինքը, թռչում էր թեթև, ձյունաձերմակ այդ լեռների միջով, լազուր խորխորատների վրայով:

Նրա երկնային զրուցակիցը՝ Խլինովը, հնամաշ վերարկուով, փորբ-ինչ կորացած կանգնել էր մոխրագույն մակաշերտավոր թռչունի թևի մոտ: Մարդ է՝ բոլոր մարդկանց նման, նույնիսկ կեպկան «Լենինգրադիագուստից» է:

Շելգան ծիծաղեց.

— Այնուամենայնիվ, զարմանալի լավ բան է կյանքը: Սատանան զիտի, թե ինչքա՞ն լավն է:

Եթք թռան Կովնոյի օդանավակայանից, Շելգան նստեց Խլինովի կողքին և, առանց որևէ մեկի անունը տալու, պատմեց ինչ զիտեր Գարինի փորձերի մասին և ավելացրեց, որ երևում է, այդ փորձով իիստ հետաքրքրվում են արտասահմանում:

Խլինովը հարցրեց՝ Շելգան տեսե՞լ է արդյոք Գարինի սարքը:

— Չե: Սարքը դեռ ոչ ոք չի տեսել:

— Ուրեմն այդ ամենը վարկածների, ենթադրությունների ասպարեզի՞ց է, այն էլ՝ զարդարված ֆանտազիայով:

Այնժամ Շելգան պատմեց կիսավեր ամառանցի ներքնատան, պողպատի երկատված կտորների, քարածխի բրգիկներով լի արկղերի մասին: Խլինովը լսում էր, զլխով անում.

— Այդպե՞ս, այդպե՞ս: Բրգիկներ: Հիանալի է: Զասկանում եմ: Ասացեք, եթե իիստ գաղտնիք չեն դա, դուք արդյոք ինժեներ Գարինի մասին չե՞ք պատմում:

Շելգան մի պահ լրեց՝ նայելով Խլինովի աչքերի մեջ:

— Այո,— պատասխանեց,— Գարինի մասին է: Դուք ճանաչո՞ւմ եք նրան:

— Շա՞տ, շա՞տ ընդունակ մարդ է,— Խլինովը երեսը կնճռոտեց, կարծես թթու բան առավ բերանը:— Արտասովոր մարդ է: Բայց զիտությունից դուրս: Փառամոլ է: Բոլորովին կղզիացած անձնավորություն: Բախտախնդիր: Ցինիկ: Հանճարի տվյալներ ունի: Անասելի եռանդ: Ահավոր երևակայության տեր մարդ է: Բայց նրա զարմանալի միտքը միշտ հրահրվում է ցածր ցանկություններից: Նա շատ բանի կիասնի և կյանքը կավարտի անսթափի հարբեցողության նման մի բանով կամ կիրոձի «զարգանդեցնել մարդկությանը»... Հանճարեղ մարդուն ավելի, քան ուրիշ որևէ մեկին, խստագույն կարգապահություն է պետք: Չափից դուրս մեծ է նրա պատասխանատվությունը:

Նորից Խլինովի այտերին, կարմրավուն բծեր բռնկվեցին:

— Պայծառ, կարգապահ բանականությունը մեծագույն սրբություն է, իրաշքների իրաշք: Երկրագնդի վրա, որ ավազահատիկ է տիեզերքում, մարդը մեկ բիլիոներորդական նվազագույն կարգի մեծություն է... Եվ այդ մտահայեցական մասնիկը, որ միջին հաշվով արեգակի շուրջը երկրագնդի վայրուն պտույտ է ապրում, օժտված է բանականությամբ, որն ընդգրկում է ամբողջ տիեզերքը... Դրան հասու լինելու համար մենք պետք է անցնենք բարձրագույն մաթեմատիկայի լեզվին... Այ, օրինակ, ի՞նչ կասեք այն մարդուն, որ ձեր լաբորատորիայից վերցրել է ամենաարժեքավոր մանրադիտակն ու, մուրճ դարձրած, դրանով մեխեր է խփում... Ահա հենց այդպես է Գարինը վարվում իր հանձարի հետ... Ես զիտեմ, նա խոշոր հայտնագործություն է արել տարածության վրա ինֆրակարմիք ճառագայթները հաղորդելու ասպարեզում: Դուք լսել եք, իհարկե, Ռինդել-Մետյուզի մահվան ճառագայթների մասին: Պարզվեց, որ այդ մահվան ճառագայթները կատարյալ անհեթեթություն են: Սակայն սկզբունքը ճիշտ է: Զուգահեռ արձակված հազար աստիճանի ջերմաճառագայթներն ահուելի զենք են կործանման և ռազմական պաշտպանության համար: Չե՞ որ գաղտնիքն այն է, որ արձակվի չցրվող ճառագայթ: Դրան մինչև օրս չեն հասել: Չեր պատմածից երևում է, որ, ըստ երևույթին, Գարինին հաջողվել է նման սարք պատրաստել: Եթե դա այդպես է, ապա զյուտը շատ է նշանակալի:

— Վաղուց արդեն ինձ թվում է,— ասաց Շելգան,— որ այդ զյուտի շուրջ եղած իրարանցումից խոշոր քաղաքականության հոտ է զալիս:

Որոշ ժամանակ Խլինովը լուս էր, հետո նույնիսկ նրա ականջները կարմրատակեցին:

— Գտեք Գարինին, բռնեք օձիքից ու իր սարքի հետ վերադարձեք Սովետական Միություն: Սարքը չպետք է ընկնի մեր թշնամիների ձեռքը: Հարցրեք Գարինին՝ զիտակցո՞ւմ է իր քաղաքացիական պարտքը: Թե՞ նա իսկապես ճշճիմ արարած է... Եթե այդպես է, գրողը նրան տանի, սարքի դիմաց իրեն փող տվեք՝ ինչքան որ կուզի... Թող ձեռք բերի գեղեցիկ կանայք, զբոսանավեր, մրցարշավի մեքենաներ... Կամ սպանեք նրան...

Շելգան վեր քաշեց հոնքերը: Խլինովը խոսափողը դրեց սեղանին, ետ ընկավ, փակեց աչքերը: Աերոպլանը լողում էր դաշտերի կանաչ համաչափ քառակուսիների, ճանապարհների ուղիղ գծիկների վրայով: Հեռվում, բարձրից, լճերի կապտավուն բծերի միջև երևաց Բեռլինի դարչնագույն գծանկարը:

Առավոտյան յոթն անց կեսին, սովորականի պես, Ռոլինգն արթնացավ Սեն փողոցի իր համարում, Նապոլեոն կայսեր մահճակալի վրա: Առանց աչքերը բանալու, բարձի տակից հանեց թաշկինակն ու վճռականորեն խնչեց՝ քնի մնացորդների հետ մեկտեղ իր միջից դուրս հանելով երեկվա զիշերային ժամանցի փշրանքները: Ճիշտ է, որ լրիվ թարմացած, բայց և այնպես լիովին իշխելով մտքերին ու կամքին՝ նա թաշկինակը նետեց գորգի վրա, նստեց մետաքսէ բարձիկների մեջ ու շուրջը նայեց: Մահճակալը դատարկ էր, սենյակը՝ դատարկ: Պաղ էր Զոյայի բարձը:

Ռոլինգը սեղմեց զանգի կոճակը, հայտնվեց Զոյայի աղախինը: Ռոլինգը, նրա կողքից նայելով, հարցրեց. «Մադա՞մը»: Աղախինն ուսերը վեր քաշեց, սկսեց գլուխը պտտեցնել բուի նման: Ռտնամատերի վրա գնաց գուգարան, այնտեղից, արդեն ավելի արագ՝ զգեցարան, շրիկացրեց լողասենյակի դուռն ու նորից հայտնվեց ննջարանում: Նրա մատները դողդողում էին ժանեկավոր գոգնոցի կողքերից. «Մադամը ոչ մի տեղ չկա»:

— Սուրձ,— ասաց Ռոլինգը: Նա ինքն իր ձեռքով ջուր լցրեց վաննան, ինքն իր ձեռքով հագավ շորերը, ինքն իր ձեռքով սուրձ լցրեց իր համար: Տանն այդ ընթացքում անաղմուկ իրարանցում էր՝ ոսքերի ծայրերի վրա, շշուկով: Հյուրանոցից դուրս գալիս Ռոլինգն արմունկով բոթեց բարապանին, և սա զիսապատառ նետվեց դուռը բանալու: Ռոլինգը գրասենյակ հասավ քսան բոպե ուշացած:

Մալզերք բուլվարի պաշտոնատանն այդ առավոտ վառողի հոտ էր փշում: Քարտուղարի դեմքին կատարելապես չարին չհակառակվելու վճիռ էր գրված: Ընկուզափայտե դռնից դուրս էին գալիս այցելուները՝ կուչկուչված: «Միստր Ռոլինգի տրամադրությունն այսօր լավ չէ»,— հաղորդում էին նրանք շշուկով: Ուղիղ ժամը մեկին միստր Ռոլինգը նայեց պատի ժամացույցին ու կոտրեց մատիտը: Պարզ է, Զոյա Մոնքոզն էլ չի գա միասին նախաձաշելու: Նա մլուլ տվեց մինչև մեկն անց տասնհինգ: Այդ ահավոր քառորդ ժամի ընթացքում քարտուղարի փայլուն ու կոկիկ սանրվածքի մեջ երկու սպիտակ մազ հայտնվեց: Ռոլինգը մենակ գնաց «Գրիֆոնի մոտ», ուր նախաձաշում էր սովորաբար:

Փոքրիկ ռեստորանի տերը՝ մայո Գրիֆոնը, բարձրահասակ ու մարմնեղ տղամարդ, նախկին խոհարար ու զարեջրատան տնօրեն, այժմ՝ Համբ Ընկալման և Մարտության Բարձր Արքեստի գծով գերազույն խորհրդատու, Ռոլինգին դիմավորեց ձեռքի հերոսական թափահարումով: Մայո Գրիֆոնը՝ մուգ մոխրագույն այցեզգեստով, ասուրական ինամված մորուքով ու ազնվացեղ ճակատով, կանգնած էր իր ռեստորանի ոչ մեծ սրահի մեջտեղում՝ մի ձեռքով հենված զոհարան հիշեցնող յուրատեսակ կերտվածքի արծաթե պատվանդանին, կերտվածք, որի մեջ, կորնթարդ կափարիչի տակ, մարմանդ եփվում էր հոչակավոր տապակածը՝ բակլայով ոչխարի մեջքամասը:

Չորս պատերի երկայնությամբ դրված կաշեպատ կարմիր բազմոցներին, նեղ ու հոծ սեղանների մոտ նստած էին մշտական հաճախորդներ՝ Մեծ բուլվարների գործարար աշխարհից, հատուկենտ կանայք: Սրահի կենտրոնն ազատ էր, այնտեղ ոչինչ չկար, բացի զոհարանից: Ռեստորանի տերը, գլուխը պտտելով, կարող էր հետևել իր յուրաքանչյուր հաճախորդի համի Ընկալման պրոցեսին: Անբավականության ամենաչնչին ծամածուանքն իսկ չեր վրիպում նրա աչքից: Ավելին, նա կանխագուշակում էր շատ ու շատ բաներ՝ հյութերի արտազատման գաղտնի պրոցեսը, ստամոքսի պտուտակածն զործողությունը և ուտելու ողջ հոգեբանությունը՝ հիմնված ինչ-որ ժամանակ կերածի հիշողությունների, նախազգացումների և դեպի մարմնի տարբեր մասերը կատարվող արյան հոսքի վրա,— այդ ամենը բաց գիրք էր նրա համար:

Մոտենալով դեմքի խիստ և միաժամանակ հայրական արտահայտությամբ, նա ասում էր սրանչելի կոպտավուն գորովանքով. «Ձեր տեմպերամենտը, մայո, այսօր պահանջում է մի ըմպանակ մադերա և բոլորովին անխառն Պուի. ինձ գիլիոտինի էլ ուղարկեք՝ ես ձեզ մի

կաթիլ անգամ կարմիր զինի չեմ տա: Ոստրե, մի քիչ խաշած տափակաձուկ, ճտի մի թևիկ ու ծնեբեկի մի քանի ցողուն: Այդ գամման կվերականգնի ձեր ուժերը»: Նման դեպքում առարկել կարող էր միայն այն ջրառնետներով սնվող պատագոնացին:

Մայո Գրիֆոնը նվաստացուցիչ աճապարանքով, ինչպես կարելի էր ենթադրել վազ չտվեց դեպի քիմիայի արքայի սպասքը: Ոչ Այստեղ՝ մարտողության ակադեմիայում, թե՝ միլիարդատերը, թե՝ խղճուկ հաշվապահը, թե՝ նա, որ թաց հովանոցը խոթեց բարապանի ձեռքը, և թե նա, որ ֆսֆսալով իջավ նավահանգիստների հոտով տոգորված ոռլս-ոռյսից,— վճարում էին նույն հաշիվը: Մայո Գրիֆոնը հանրապետական էր և փիլիսոփա: Նա վեհանձն ժպիտով ճաշացուցակը մատուցեց Ռոլինգին և խորհուրդ տվեց առաջինին վերցնել սեխս, երկրորդին՝ խորոված օմար<sup>15</sup> գետնասունկով և ոչխարի մեջքամասով: Միստր Ռոլինգը ցերեկով զինի չի խմում, դա հայտնի է:

— Մի բաժակ վիսկի-սոդա բերեք և մի շիշ շամպայն սառեցրեք,— ասաց Ռոլինգն ատամների արանքից:

Մայո Գրիֆոնն ընկրկեց, մի վայրկյան նրա աչքերում զարմանք, երկյուղ, զզվանք առկայծեցին. հաճախորդն սկսում է օղուց, որ բթացնում է բերանի խոռոչի համ զգացող բշտիկները, և շարունակում է շամպայնով, որից փրփում է ստամոքսը: Մայո Գրիֆոնի աչքերի փայլը մարեց, և նա հարգանքով խոնարհեց գլուխը. մի հաճախորդ այսօր կորած է՝ հաշտվում եմ փաստի հետ:

Վիսկիի երրորդ բաժակից հետո Ռոլինգն սկսեց ճմրթել անձեռոցիկը: Սոցիալական սանդուղքի մյուս ծայրին կանգնած նման տեմպերամենտով մի ուրիշ մարդ, ասենք, Գաստոն Բադարիթը, այսօր դեռ մայրամուտից էլ առաջ կգտներ Զոյա Մոնրոզին՝ այդ փուչ արարածին, կեղսոս ջրափոսից հանված այդ գարշելի սողունին, և ծալովի դանակի շեղըն ամբողջ կողը կիսրեր: Ռոլինգին պատշաճ էին այլ գործելաձեւեր: Նայելով ափսեին, ուր սառչում էր գետնասունկով օմարը, նա մտածում էր ոչ այն մասին, թե ինչպես զիշերն իր անկողնուց փախած անառակ այդ կնոջ քիթումոութն արյունլվիկ անի... Ռոլինգի ուղեղում, վիսկիի դեղին մշուշի մեջ, ծնվում, խաչավորվում, գալարվում էին վրիժառության չափազանց նրբին, իհվանդագին հղացումներ: Այդ րոպեներին միայն նա հասկացավ, թե ինչ էր իր համար գեղեցկուի Զոյան... Նա տառապում էր՝ եղունգները միրճելով անձեռոցիկի մեջ:

Սպասավորը վերցրեց ձեռք չտված ափսեն: Շամպայն լցրեց: Ռոլինգը խլեց բաժակն ու խմեց ազահորեն. ուսկե ատամները շնչչիկացին՝ դիպչելով ապակուն: Այդ ժամանակ փողոցից թափով ռեստորան ընկալ Սեմյոնովը: Իսկույն նկատեց Ռոլինգին: Գլխից պոկեց լայնեզր գլխարկը թեքվեց սեղանի վրայով ու շշնչաց.

— Թերթերը կարդացէ՞լ եք... Ես հենց նոր դիարանում էի. . . Դա նա է... Մենք այդ գործի հետ կապ չունենք... Երդվում եմ սուրբ ուխտով. . . Մենք ալիբի ունենք... Մենք ամբողջ

<sup>15</sup> Ծովային տասնոտանի խեցգետին (Ծ. Թ.):

գիշերը մնացինք Մոնմարտրում, աղօկների մոտ. . . Հաստատված է՝ սպանությունը կատարվել է առավոտվա երեքի ու չորսի միջև. թերթերն են գրում, թերթե րը...

Ռոլինզի աչքերի առջև ոստոտում էր հողագույն ծոմոված մի դեմք: Հարևանները շուտ եկան նրանց կողմը: Մոտեցավ սպասավորը՝ աթոռ բերելով Սեմյոնովի համար:— Գրողի ծոցը,— ասաց Ռոլինզը վիսկիի վարագույրի միջով,— դուք ինձ խանգարում եք նախաձաշել...

— Լավ, ներեցեք... Ես ձեզ կսպասեմ անկյունում, ավտոմոբիլի մեջ...

### 39

Փարիզի մամուլում բոլոր այդ օրերին լրություն էր տիրում, ինչպես անտառային լճակի վրա: Բուրժուաները հորանջում էին՝ գրականության մասին առաջնորդողներ, թատերական բեմադրությունների մասին ֆելիետոններ, արտիստների կյանքից խրոնիկաներ կարդալով:

Մամուլն այդ անխոռվ հանգստությամբ փոթորկալի գրոհ էր նախապատրաստել միջին բուրժուական քսակների վրա: Ռոլինզի քիմիական կոնցեռնը, ավարտելով իր կազմակերպման ընթացքն ու բնաջնջելով մանր հակառակորդներին, պատրաստվում էր վերելքի մեծ կամպանիայի: Մամուլը կաշառված էր, ժուռնալիստները՝ զինված քիմիական արդյունաբերության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններով: Քաղաքական առաջնորդող հողված գրողների համար նախապատրաստված էին շշմեցուցիչ փաստաթղթեր: Երկու-երեք ապտակը, երկու-երեք մենամարտը մեջտեղից հանել էին այն տխմարներին, ովքեր փորձում էին շաղակրատել կոնցեռնի ընդհանուր պլաններին ոչ համապատասխան: Փարիզում ամեն ինչ հարթ ու հանգիստ էր: Լրագրերի տպաքանակը փոքր-ինչ նվազեց: Ուստի իսկական գյուտ էր Գորելենների փողոցի վաթսուներերորդ տանը կատարված սպանությունը:

Մյուս օրն առավոտյան բոլոր յոթանատւնինք լրագրերը լույս տեսան թավատառ վերնագրերով՝ «Խորիրդավիր և մղձավանջային ոճագործության» մասին: Սպանվածի ով լինելը չէր պարզվել,— փաստաթղթերը հափշտակել էին,— հյուրանոցում նա գրանցված էր եղել ակնհայտորեն կեղծ անունով: Սպանությունը, երևում է, կողոպտելու նպատակով չէր կատարվել. փողն ու ոսկեղենը մնացել էին սպանվածի մոտ: Դժվար էր նաև վրիժառություն ենթադրել. տասնմեկերորդ սենյակում մանրակրկիտ խուզարկության հետքեր կային: Գաղտնիք էր, ամեն ինչ՝ գաղտնիք:

Երկժամյա լրագրերը ցնցող մանրամասն էին հաղորդում՝ չարաբաստիկ սենյակում գտնվել է հինգ խոշոր աղամանդներով կանացի կրեսուլյա հերակալ: Բացի այդ, փոշու հատակին հայտնաբերվել են կանացի կոշիկների հետքեր: Այդ հերակալից Փարիզն

իսկապես ցնցվեց: Պարզվում է, որ մարդասպանը փառաշուր կին է: Արիստոլիքա՝ ու:  
Բուրժուա՝ թե՝ առաջնակարգ կոկետուիի<sup>16</sup>: Գաղտնիք է, գաղտնիք...

Չորսմայսյա լրագրերն իրենց էջերը նվիրեցին Փարիզի ամենանշանավոր կանանց հետ  
ունեցած հարցազրույցներին: Նրանք բոլորը միաձայն բացականչում էին՝ ո՞չ ո՞չ և  
դարձյալ ո՞չ, անկարելի է, որ մարդասպանը ֆրանսուիի լինի, դա գերմանուիու, բոշուիու  
ձեռքի գործ է: Զայներից մի քանիսն ակնարկ էին նետում Մուսկվայի կողմը, բայց ակնարկը  
հաջողություն չունեցավ: Հայտնի Մի-Մին, «Օլիմպիա» թատրոնից, պատմական  
արտահայտություն արեց: «Ես պատրաստ եմ տրվել նրան, ով իմ առջև կպարզի  
գաղտնիքը»: Դա արդեն հաջողություն ունեցավ:

Մի խոսքով, ամբողջ Փարիզում միայն Ռուինզն էր, որ Գրիֆոնի ռեստորանում նստած՝  
ոչինչ չգիտեր Գորելենների փողոցի տանը կատարվածի մասին: Նա խիստ չարացած էր և  
դիտմամբ Մեմյոնովին հարկադրեց սպասել տաքսի մեքենայում: Վերջապես հայտնվեց  
անկյունում, լուր նստեց մեքենա և կարգադրեց իրեն տանել դիարան: Մեմյոնովը,  
խելահեղորեն անդադար տեղում շարժվելով, ճանապարհին նրան պատմեց, թե ինչ են  
գրում թերթերը:

Երբ հիշեց հինգ ադամանդներով հերակալի մասին, Ռուինզի մատները թպրտացին  
ձեռնափայտի գլխիկի վրա: Դիարանի մոտերքում նա հանկարծ թափով թեքվեց վարորդի  
կողմը՝ մեքենան ետ դարձնելու հրամայական շարժումով, բայց վերջին պահին զայեց  
իրեն և միայն կատաղի ֆսֆաց:

Դիարանի մուտքի մոտ հրմշտուր էր: Թանկարժեք մուշտակներով կանայք, կճատաքիթ  
միդինետուիիները, արվարձաններից եկած կասկածելի անձնավորությունները, գործած  
թիկնոցներով հետաքրքրասեր բարապանուիիները, քրտնած քթերով ու ձմոթված  
օձիքներով խրոնիկյորները, մարմնեղ դերասաններից կառչած դերասանուիիները՝ բոլոր-  
բոլորը ձգտում էին գեթ մի վայրկյան տեսնել սպանվածին, պատառութված շապկով ու  
ոտարոբիկ պառկած էր մարմարե թեք տախտակի վրա, զլխով՝ կիսանկուղային  
պատուհանի կողմը:

Առանձնապես ահազդու էին թվում նրա բորիկ ոտքերը՝ մեծ-մեծ, կապտավուն, երկարած  
եղունգներով: Դեղնադալուկ դեմքն «աղավաղված էր սարսափի ջղացնցումից»: Փոքրիկ  
մորուքը տնկված էր վեր: Կանայք մարմաջող մղվում էին դեպի այդ ատամնաբաց դիմակը,  
շրված թիքերով նայում, նայում անհագորեն, ճիշեր արձակում, քչփշում: Ահա՝ նա, ահա՝  
նա՝ ադամանդագարդ հերակալով տիկնոց սիրեկանը...

Մեմյոնովը, Ռուինզի առաջն ընկած, ամբոխի միջից իմի պես զալարվելով սողոսկեց դեպի  
դիակը: Ռուինզը հաստատուն նայեց սպանվածի դեմքին: Զննեց մի պահ: Նրա աչքերը  
կկոցվեցին, մսեղ քիթը կնձռոտվեց, փայլեցին ոսկե ատամները:

— Հը, ի՞նչ կասեր, ի՞նչ կասեր, նա է, չէ՞՝ նա է, — շշնջաց Մեմյոնովը:

<sup>16</sup> Բուրժուական հասարակության մեջ՝ տղամարդկանց հաշվին ապրող կին (Ծ. Թ.):

Եվ Ռոլինգն այս անգամ արդեն պատասխանեց նրան.

— Նորից նմանակ է:

Հազիվ էր ասվել այս խոսքը, եթիւ Ռոլինգի ուսի վրայից հայտնվեց բաց շիկահեր մի զլուխ, նայեց նրա դեմքին, կարծես լուսանկարեց, և անհետացավ ամբոխի մեջ:

Շելգան էր:

## 40

Սեմյոնովին թողնելով՝ դիարանում, Ռոլինգը գնաց Սեն փողոցի իր հյուրանոցը։ Այստեղ ամեն ինչ նախկինի պես էր՝ հուշիկ իրարանցում։ Զոյան չէր երևացել ու չէր զանգել։

Ռոլինգը փակվեց ննշարանում և սկսեց ետուառաջ անել գորգի վրա՝ կոշիկների ծայրերին նայելով։ Կանգ առավ մահճակալի այն կողմում, ուր սովորաբար քնում էր ինքը։ Քորեց կզակը։ Փակեց աչքերը։ Եվ ահա հիշեց այն, ինչ ամբողջ օրը տանջել էր իրեն...

«... Ռոլինգ, Ռոլինգ... Մենք կորա՞ծ ենք»...

Այս խոսքն ասվել էր Զոյայի մեղմ, վիհատ ձայնով։ Ասվել էր գիշերը. ինքը խոսակցության կեսին հանկարծ քնեց։ Զոյայի ձայնը չարթնացրեց իրեն, չհասավ իր գիտակցությանը։ Եվ հիմա նրա հուսակառուր խոսքը հնչում է ու հնչում իր ականջներում։

Ռոլինգն ընդուստնեց, կարծես ինչ-որ զսպանակ վեր նետեց նրան... Այսպես ուրեմն՝ Գարինի տարօրինակ նոպան Մալզերք բուլվարի գրասենյակում, Զոյայի հուզումը «Արքայի ընթրիք» պանդոկում, նրա համառ հարցապնդումները, թե Գարինն առանձնասենյակից հատկապես ի՞նչ թղթեր կարող էր հափշտակել... Ապա՝ «Ռոլինգ, Ռոլինգ, մենք կորա՞ծ ենք»... Զոյայի անհետացումը։ Նմանակի մարմինը դիարանում։ Աղամանդներով հերակալը։ Հենց երեկ էր, այո, Ռոլինգը հիշում էր, որ Զոյայի ձոխ մազերի մեջ փայլփլում էին հինգ քանակարժեք քարեր։

Դեպքերի այս շղթայում պարզ է մի բան. Գարինը դիմել է նմանակի փորձված հնարին՝ հարվածն իրենից շեղելու համար։ Նա հափշտակել է Ռոլինգի թղթերը, որ զցի սպանության վայրում և ոստիկանությանը բերի հասցնի Մալզերք բուլվար։ Իր ողջ սառնարյունությամբ հանդերձ, Ռոլինգն զգաց, թե ինչպես սարսուր անցավ մեջքով։ «Ռոլինգ, Ռոլինգ, մենք կորա՞ծ ենք»... Ուրեմն Զոյան կուհում էր, զիտեր սպանության մասին։ Սպանությունը կատարվել է առավոտյան երեքի և չորսի արանքում։ (Չորսն անց կեսին եկել է ոստիկանությունը)։ Երեկ նիրիի մեջ Ռոլինգը լսեց, որ բուխարու վրայի ժամացույցը զարկեց մեկն անց քառասունինց։ Դա արտաքին ձայների նրա վերջին ընկալումն էր։ Հետո Զոյան անհետացավ։ Ըստ երևույթին, նա շտապել է Գորելենների փողոց՝ Ռոլինցի ձեռագրի հետքերը վերացնելու համար։

Զոյան ինչպե՞ս կարող էր այդպես ստույգ իմանալ պատրաստվող սպանության մասին. դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե հենց ինքն է նախապատրաստել:— Ռոլինզը մոտեցավ բուխարուն արմունկները դրեց մարմարե տախտակին ու դեմքը ծածկեց ակերով:— Բայց այդ դեպքում ինչո՞ւ նա շշնչաց այդպես սարսափով. «Ռոլինզ, Ռոլինզ, մենք կորած ենք»... Երեկ ինչ-որ բան էր կատարվել, որ փոխել էր նրա ծրագրերը: Բայց ի՞նչ: Եվ ո՞ր պահին... Թատրոնո՞ւմ, պանդոկո՞ւմ, տա՞նը...»

Ենթադրենք, թե նա հարկ է ունեցել ուղղելու ինչ-որ սխալ: Հաջողվե՞լ է այդ բանը նրան: Գարինը ողջ է, ձեռագիրը ոչ մի տեղ չի հայտնաբերվել, նմանակն սպանված է: Այդ սպանությունը կիրկի՞՝, թե կկործանի: Ո՞վ է մարդասպանը՝ Զոյայի մեղսակի՞ցը, թե հենց ինքը՝ Գարինը:

Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ չքվեց Զոյան: Հիշողության ծալքերում որոնելով այդ պահը՝ բեկումը Զոյայի տրամադրության մեջ, Ռոլինզը լարեց երևակայությունը, որ սովոր էր բոլորովին ուրիշ աշխատանքի: Ուղեղը պայքում էր: Մտաբերեց Զոյայի երեկվա վարվելակերպը՝ շարժում առ շարժում, բառ առ բառ:

Նա զգաց, որ եթե հենց հիմա, բուխարու մոտ չըմբռնի ամբողջ կատարվածը՝ ամենայն մանրամասնությամբ, ապա դա տանու տալ է, պարտություն, կործանում: Բորսայի վրա ծրագրված մեծ գրոհից երեք օր առաջ սպանության կապակցությամբ նրա անվան ակնարկումն իսկ կնշանակի բորսայական անասելի սկանդալ, տապալում... Ռոլինզին հասցված հարվածը հարված կլինի Ամերիկայում, Չինաստանում, Հնդկաստանում, Եվրոպայում, աֆրիկյան գաղութներում հազարավոր ձեռնարկություններ շարժման մեջ դնող միլիարդներին: Կիսախտվի մեխանիզմի ճշգրիտ աշխատանքը... Երկաթուղիները, օվկիանոսային նավուղիները, հանքերը, գործարանները, բանկերը, հարյուր հազարավոր ծառայողները, միլիոնավոր բանվորները, արժեթղթեր ունեցող տասնյակ միլիոնավոր մարդիկ,— այս ամենը կճռնչա, կխափանվի, պատեպատ կզարկվի խուճապահար...

Ռոլինզն ընկել էր մի մարդու վիճակի մեջ, որ չգիտի, թե որ կողմից իրեն կխփեն դանակով: Վտանգը մահացու էր: Նրա երևակայությունը գործում էր այնպես, կարծես մտքի յուրաքանչյուր վայրկյանում ընթացող հատվածի համար վճարում էին մեկ միլիոն դոլար: Բուխարու մոտ անցած քառորդ ժամը կարող էր մտնել պատմության մեջ՝ Արկողեի կամուրջի վրա Նապոլեոնի ոգու արիության նշանավոր պահին համահավասար:

Սակայն Ռոլինզը՝ միլիարդների այդ կուտակիչը, համարյա արդեն խորհրդանշական այդ այրը, իր համար ամենավճռական պահին (և դարձյալ՝ առաջին անգամ կյանքում) անսպասելիորեն անձնատուր եղավ պարապ զբաղմունքի՝ փրված ոռունգներով կանգնելով հայելու առաջ և չտեսնելով իր արտացոլումը: Զոյայի արարմոնների վերլուծությունն անելու փոխարեն, սկսեց մտովի պատկերացնել ուղղակի նրան՝ նուրբ, դժգույն դեմքը, մոայլորեն պաղ աչքերը, կրքոտ բերանը: Զգաց նրա շագանակագույն մազերի տաք բույրը, նրա ձեռքի հպումն իր ձեռքին: Նրան սկսեց թվական, թե ինքը՝ Ռոլինզը, ամբողջությամբ, — իր բոլոր ցանկություններով, հակումներով, փառասիրությամբ, իշխելու անհագ ծարավով, գեշ տրամադրությամբ (աղիքների ատոնիա) և մահվան մասին կծու խոհերով, — տեղափոխվել է մի նոր գետեղարան՝ խելացի, երիտասարդ, հրապուրիչ կնոջ մեջ: Նա չկա:

Եվ իրեն ասես զիշերային ջրցեխն են նետել: Ինքն իրեն պետք չէ այլսա: Նա չկա: Ինքն անտուն է: Էլ ինչին են պետք համաշխարհային կոնցեռնները. մերկ, փոքրիկ, խղճուկ մարդու անձկություն ու թախիծ...

Քիմիայի արքայի այս արդարև զարմանալի կացությունն ընդհատվեց գույզ ներբանների դոփյունով գորգի վրա:

(Ննջարանն առաջին հարկում էր, և զբոսայգուն նայող պատուհանը բաց էր այդ ժամանակ): Ռոլինգը ցնցվեց ամբողջ մարմնով: Բուխարու վրայի հայելու մեջ հայտնվեց մեծ-մեծ բեղերով և կնճռու ճակատով հաղթանդամ մի մարդու պատկեր: Նա կրեց գլուխն ու անթարթ նայեց Ռոլինգին:

## 41

— Ի՞նչ եք ուզում,— ծղրտաց Ռոլինգը՝ չկարողանալով իսկույն գտնել ու ձեռքը տանել տաքատի ետևի գրպանը, ուր բրաունինգն էր: Հաղթանդամ մարդը, ըստ երևույթին, սպասում էր նման հանդիպման և թռավ մտավ վարագույրի ետևը: Այնտեղից կրկին գլուխը դուրս հանեց:

— Հանգիստ: Պետք չի գոռալ: Ես չեմ պատրաստվում ձեզ սպանել կամ թալանել,— բարձրացրեց ափերը,— ես գործով եմ եկել:

— Այստեղ ի՞նչ գործ կարող է լինել, գործով եկեք Մալզերք բուլվարի իմ գրասենյակը, քառասունութ բիս, տասնմեկից մինչև մեկը... Դուք ներս սողոսկեցիք պատուհանից գողավազակի պես:

— Ներեցեք,— պատասխանեց հաղթանդամ մարդը քաղաքավարությամբ,— իմ ազգանունը Լեկլեր է, անունը՝ Գաստոն: Ես զինվորական շքանշան ունեմ և սերժանտի կոչում: Ես երբեք մանր գործերով չեմ զբաղվում ու գող չեմ եղել: Խորհուրդ եմ տալիս իսկույն ներողություն խնդրել ինձնից, միստր Ռոլինգ, այլապես մեր հետազա խոսակցությունը չի կարող կայանալ...

— Չքվեք գրողի ծոցը,— ասաց Ռոլինգն արդեն հանգիստ:

— Եթե ես չքվեմ ձեր տված հասցեով, ապա ձեզ ոչ անհայտ մադմուազել Մոնրոզը կորած է:

Ռոլինգի այտերը վեր թռան: Անմիջապես մոտեցավ Գաստոնին: Սա հարգանքով, ինչպես պատշաճ է խոսել միլիարդատիրոջ հետ, և միաժամանակ կոպտավուն մտերմավարության երանգով, ինչպես խոսում են իրենց սիրուհու ամուսնու հետ, ասաց.

— Ուրեմն, պարոն, ներողություն խնդրո՞ւմ եք, թե չե՞:

Դուք գիտե՞ք, թե որտեղ է պահվել մադմուազել Մոնրոզը:

- Ուրեմն, պարոն, մեր խոսակցությունը շարունակելու համար ես պե՞տք է հասկանամ, որ դուք ներողություն եք խնդրում ինձնից:
- Ներողություն,— ճշավեց Ռոլինզը:
- Ընդունում եմ:— Գաստոնը հեռացավ պատուհանից, սովոր շարժումով հարդարեց բեղերը, հազարով մաքրեց կոկորդն ու ասաց.— Զոյա Մոնրովն այն մարդասպանի ձեռքին է, որի մասին աղաղակում է ամբողջ Փարիզը:
- Որտե՞ղ է նա (Ռոլինզի շրթունքները դողացին):
- Վիլ Դավրեում, Սեն-Կլու գրոսայգու մոտ, պատահական այցելուների հյուրանոցում, Գամրետայի թանգարանից երկու քայլի վրա: Երեկ գիշերը ես նրանց ավտոմոբիլով հետևեցի մինչև Վիլ Դավրե, իսկ այսօր ձշտեցի հասցեն:
- Զոյան իր կամքո՞վ փախավ նրա հետ:
- Այ հենց դա հատկապես ամենից ավելի կուզեի իմանալ,— պատասխանեց Գաստոնն այնպես շարագուշակ, որ Ռոլինզը զարմանքով ուշադիր նայեց նրան:
- Թույլ տվեք, պարոն Գաստոն, ես այնքան էլ լավ չեմ հասկանում, թե ինչ մասնակցություն ունե՞ք դուք այս ամբողջ պատմության մեջ: Ի՞նչ գործ ունեք դուք մադմուազել Մոնրովի հետ: Ի՞նչ իրավունքով եք գիշերները հետևում նրան, ձշտում, թե որտեղ է, որտեղ չե՞ն:
- Բավակա՞ն է,— Գաստոնն ազնվաշուր շարժումով ձեռքերը պարզեց առաջ:— Ես ձեզ հասկանում եմ: Դուք պետք է տայիք ինձ այդ հարցը: Կապտասխանեմ՝ ես սիրահարված եմ և խանդու եմ ես...

— Ահա՝ թե ինչ— ասաց Ռոլինզը:

— Ձեզ մանրամասե՞ր են պետք՝ խնդրեմ. այսօր գիշերը, մի բաժակ փունջ խմելուց հետո դուրս գալով սրճարանից, ես տեսա մադմուազել Մոնրովին: Նա սլանում էր վարձու ավտոմոբիլով: Նրա դեմքի արտահայտությունն ահավոր էր: Վայրկյանների բան էր տաքսի նստելն ու նրա ետևից գնալը: Նա մեքենան կանգնեցնել տվեց Գոբելենների փողոցում ու մտավ համար վաթսուներեք տան շքամուտքը: (Ռոլինզն աչքերը ձպեց, կարծես նրան ասեղով ծակեցին): Գլուխս կորցրած խանդու նախազգացումներից, ես սկսեցի գնալ-գալ մայթով, վաթսուներեքերորդ տան մոտ: Ուղիղ չորսն անց տասնինզին մադմուազել Մոնրովը դուրս եկավ ոչ թե շքամուտքից, ինչպես սպասում էի, այլ վաթսուներեքերորդ տանը կպած զրոսայգու պատի դարպասից: Նրան ուսերից պահել էր փոքրիկ, սև մորուքով, կովերկոտե վերարկուով ու մոխրագույն լայնեզր գլխարկով մի մարդ: Մնացածն արդեն գիտեք:

Ռոլինզը դանդաղ նստեց աթոռին (խաչակրաց արշավանքների դարաշրջանի) և երկար մնաց լուս՝ մատներով կառչած աթոռի դրվագազարդ արմնկակալներից... Ահա և պակասող տվյալները... Մարդասպանը Գարինն է: Զոյան՝ հանցակիցը... Հանցագործ

ծրագիրը պարզ է: Նրանք Գոբելենների փողոցի տանը սպանել են նմանակին, որպեսզի կեղտոտ պատմության մեջ քաշեն իրեն՝ Ռոլինզին և, շանտաժի ենթարկելով, դրամ շորթեն սարքը պատրաստելու համար: Այս ազնիվ սերժանտն ու կլասիկ հիմարը՝ Գաստոնը, պատահաբար ի հայտ է բերում հանցագործությունը:

Ամեն ինչ պարզ է: Հարկավոր է գործել վճռականորեն և անողոքաբար:

Ռոլինզի աչքերը վառվեցին շարությամբ: Նա ելավ ոտքով դեն հրեց աթոռը:

— Ես հիմա ոստիկանություն կզանգեմ: Դուք կզաք ինձ հետ Վիլ Դավու:

Գաստոնը քմծիծաղեց, նրա երկար բեղերը ծովեց աջ ու ձախ:

— Ինձ թվում է, միստր Ռոլինզ, ավելի խոհեմ բան կլինի ոստիկանությանը չխառնել այս պատմության մեջ: Մենք մեր ուժերով յոլա կզնանք:

— Ես ուզում եմ ձերբակալել մարդասպանին ու նրա մեղսակցին և այդ ստոր մարդկանց հանձնել արդարադատության ձեռքը:— Ռոլինզը շտկվեց, նրա ձայնը հնչեց պողպատի նման:

Գաստոնն անորոշ շարժում արեց:

— Ճիշտ կլիներ, իհարկե... Բայց իմ ձեռքի տակ վեց վստահելի տղերք կան, ընկած-ելած մարդիկ... Մի ժամից երկու ավտոմոբիլով նրանց կարող եմ հասցնել Վիլ Դավու... Իսկ ոստիկանության հետ, հավատացնում եմ ձեզ, շարժի կապվել...

Ռոլինզն ի պատասխան միայն փնչացրեց ու քարե դարակի վրայից վերցրեց հեռախոսի լսափողը: Գաստոնն ավելի մեծ արագությամբ բռնեց նրա ձեռքը:

— Մի՝ զանգեք ոստիկանություն:

— Ինչո՞ւ:

— Որովհետև դրանից հիմար բան դժվար է որոշել... (Ռոլինզը նորից մեկնվեց լսափողի կողմը): Դուք հազվագյուտ խելքի տեր մարդ եք, մայո Ռոլինզ, մի թե չեք հասկանում՝ կան բաներ, որ ուղղակի չեն ասվում... խնդրում եմ ձեզ, մի զանգեք... Թո՛ւ ու, չար սատանա... Այսր որովհետև այդ զանգից հետո երկուսով ել գիլիոտինի տակ կընկնենք... (Ռոլինզը կատաղորեն հրեց նրա կրծքին և խլեց լսափողը: Գաստոնն շտապով շուրջը նայեց ու շշնչաց ուղիղ նրա ականջի մեջ): Ձեր հրահանգով մադմուազել Զոյան ինձ հանձնարարեց թեթևացված արագությամբ հայր Աբրահամի գիրկն ուղարկել Գոբելենների փողոցի համար վաթսուներեք տանն ապրող մի ռուս ինժեների: Այս գիշեր հանձնարարությունը կատարվեց: Հիմա հարկավոր է տասը հազար ֆրանկ՝ որպես կանխավճար իմ մանչուկներին: Փողը ձեզ մո՞ւ տ է...

• •

Քառորդ ժամից Սեն փողոցում Ռոլինգին մոտեցավ ծածկաթափով ճամփորդական մի մեքենա: Ռոլինգը սրբնթաց թռավ նստեց մեջը: Եվ մինչև մեքենան նեղիկ փողոցում պառույտ կկատարեր, տան ելուստի ետևից դուրս եկավ Շելզան ու թափքի ետնակողմից կպավ ավտոմոբիլին:

Մեքենան գնաց առափնյա փողոցով: Մարսան դաշտում, այն տեղում, ուր ժամանակին Ռոբեսպիերը, ձեռքին հասկեր, Գերագույն Գոյի սեղանի առաջ երդվում էր մարդկությանն ստիպել ստորագրելու հավիտենական խաղաղության և հավիտենական արդարության ընդհանրական մեծ պայմանագիրը, այժմ հառնում էր Էյֆելյան աշտարակը. երկուսուկես միլիոն էլեկտրական մոմեր էին առկայծում ու աշքով անում նրա երկարե խաչկապների վրա, սլաքներ դարձած դեսուդեն էին սուրում, պատկերներ էին գծում և ամբողջ գիշեր գրում էին Փարիզի վրա. «Գնեցեք պարոն Սիտրոենի գործնական և էժանագին ավտոմոբիլները»...

## 42

Տամկավուն ու տաք գիշեր էր: Բաց պատուհանից ներս, ցածիկ առաստաղից մինչև հատակը, անտեսանելի տերևներ սոսափեցին ու լուցին: Սենյակում, «Սև կեռնեխ» հյուրանոցի երկրորդ հարկում, մութ էր ու խաղաղ: Զբոսայգու նամահոտը միախառնվում էր օծանելիքի բույրին: Այդ բույրով էին տողորված պատերի պաստառները, ոտնամաշ գորգերն ու փայտե վիթխարի մահճակալը, որ տարիներ շարունակ ապաստան էր տվել շարան-շարան սիրահարների: Հին բարեհարմար տեղ էր դա սիրային առանձնացման համար: Պատուհանի տակ շրջում էին ծառերը, գեփյուռը զբոսայգուց հողի ու տրտմության բույր էր բերում, տաք անկողինն օրոր էր ասում սիրահարների կարձատն երջանկությանը: Պատմում էին նույնիսկ, որ այդ սենյակում է Բերանմեն հորինել իր երգերը: Ժամանակները փոխվել էին, իհարկե: Եռեփփող Փարիզից մի ժամով դուրս թռած, Էյֆելյան աշտարակի հրե ժխորից կուրացած շտապկոտ զույգերը ժամանակ չունեին ոչ տերևների սոսափը լսելու և ոչ էլ սիրո: Այսր իսկապես, մեր օրերում անհնար է անուրջների մեջ ընկած շրջել զբոսայգիներում՝ Մյուսեի հատորյակը ժիշտի գրպանում: Հիմա ամեն ինչ արագության վրա է, բենզինի վրա: «Ալլո, պատլիկս, մեր տրամադրության տակ մի ժամ քան րոպէ կա: Պիտի հասցնենք կինոն գնալ, ճաշել ու մի քիչ պառկել իրար հետ: Ի՞նչ կարող ես անել, Մի-Մի, քաղաքակրթություն է»:

Բայց և այնպես, «Սև կեռնեխ» հյուրանոցի պատուհանի տակ սոսափող լորենիների թավ սաղարթներն ու մեղմ կրկուցող ծառագործերը չեին մասնակցում եվրոպական քաղաքակրթության ընդհանուր ընթացքին: Շուրջն անասելի լուր էր ու անասելի խաղաղ: Սենյակում ճոռաց դուռը, և գորգի վրայից ոտնաձայն լսվեց: Մարդկային մի աղոտ ուրվապատկեր կանգ առավ սենյակի մեջտեղում: Ասաց ցածրածայն (ոռուսերեն):

— Հարկավոր է վճռել: Երեսուն-քառասուն րոպեից մեքենա կլինի: Հը, այո՞ թէ ոչ:

Մահճակալի վրա մեկը շարժվեց, բայց չպատասխանեց: Տղամարդն ավելի մոտեցավ.

— Խոհեմ եղեք, Զոյա:

Ի պատասխան անուրախ ծիծաղ լսվեց:

Գարինը կոացավ, ուշադիր նայեց Զոյայի դեմքին, նստեց ոտքերի կողմը, անկողնու վրա:

— Երեկովա արկածը ջնջենք մեր հիշողությունից: Ամեն ինչ սկսվեց փոքր-ինչ արտասովոր և վերջացավ այս անկողնում. ձեր կարծիքով անհամ է ու տափա՞կ: Համաձայն եմ: Ջնջված է: Լսեք, ես ուրիշ կին չեմ ուզում ձեզնից բացի, ի՞նչ կարող ես անել:

— Բոդի է ու հիմար,— ասաց Զոյան:

— Միանգամայն համաձայն եմ ձեզ հետ: Ես քոի եմ, գռեհիկ, վայրենի արարած: Այսօր ինքս ինձ ասացի՝ հա՛, այ թե ինչի համար է հարկավոր փող, իշխանություն, փառք... ձեզ տիրելու համար: Հետո, երբ արթնացաք, ձեզ հաղորդեցի իմ տեսակետը՝ ձեզնից բաժանվել չեմ ուզում և չեմ բաժանվի:

— Ohn՝,— ասաց Զոյան:

— «Ohn»-ն բոլորովին ոչինչ չի ասում: Ես հասկանում եմ, դուք, իբրև խելացի և ինքնասեր կին, սարսափելի վրդովված եք, որ հարկադրում են ձեզ: Ի՞նչ արած: Մենք կապված ենք արյամբ: Եթե դուք զնաք Ռոլինզի մոտ՝ ես կպայքարեմ: Իսկ քանի որ ես քոի մարդ եմ՝ գիլիոտինի տակ կդնեմ թե Ռոլինզի, թե ձեր և թե իմ գլուխը:

— Արդեն ասել եք դա, կրկնում եք ինքներդ ձեզ:

— Մի՞թե դա ձեզ չի համոզում:

— Ի՞նչ եք ինձ առաջարկում Ռոլինզի տեղ: Ես թանկ կին եմ:

— Օլիվինյան գոտին:

— Ի՞նչ:

— Օլիվինյան գոտին: Հը՝ մ: Այդ բանը խիստ դժվար է բացատրել: Բարդ է: Հարկավոր է ազատ երեկո և զրբեր, ձեռքի տակ: Քսան րոպեից մենք պիտի գնանք: Օլիվինյան գոտի ասվածը նշանակում է իշխել աշխարհի վրա: Ես ձեր Ռոլինզին դրնապան կվարձեմ,— ահա թե ինչ է Օլիվինյան գոտին: Այդ գոտին իմ ձեռքին կլինի երկու տարուց: Դուք կդառնաք ոչ թե պարզապես հարուստ կին, այլ ամենահարուստն ամբողջ աշխարհում: Դա ձանձրալի կլինի: Բայց իշխանություն է վերջին հաշվով: Արբեցում երկրի վրա չտեսնված շնորհական գոտին: Դուք աստվածային մեծարա՞նք եք ուզում: Խնդրեմ: Մենք կիրամայենք ձեր պատվին տաճարներ կառուցել բոլոր հինգ մայրցամաքներում և ձեր պատկերը պատճեն խաղողի որթերով:

— Ի՞նչ քաղընիություն...

— Ես չեմ կատակում հիմա: Ցանկանաք, և կլինեք աստծո կամ սատանայի փոխանորդը՝ որը որ ձեր ճաշակով է: Ձեր մեջ ցանկություն կառաջանա ոչնչացնել մարդկանց,— երբեմն զգացվում է դրա կարիքը, — ձեր իշխանությունն ամբողջ մարդկության վրա է լինելու: Զեզ նման կինը, Զոյա, կարող է գտնել Օլիվինյան գոտու հեքիաթային զանձերի օգտագործման կերպը: Ես առաջարկում եմ շահեկան պարտիա: Երկու տարվա պայքար՝ և ես կրափանցեմ Օլիվինյան գոտու մեջ: Չե՞ք հավատում...

Մի պահ լրելուց հետո Զոյան ասաց կամացուկ.

— Ինչո՞ւ պիտի միայն ես ինքս ինձ վտանգի ենթարկեմ: Դուք էլ խիզախեք:

Գարինը, թվում էր, ջանում է խավարում տեսնել նրա աչքերը, հետո գրեթե տրտմալի, գրեթե քնքշորեն ասաց.

— Եթե ոչ՝ գնացեք: Ես ձեզ չեմ հետևի: Որոշեք ինքնակամ:

Զոյան կարծ հառաջեց: Նստեց անկողնում, բարձրացրեց ձեռքերն ու սկսեց մազերը շտկել (դա լավ նշան էր):

— Ապագայում՝ Օլիվինյան գոտին: Իսկ հիմա ի՞նչ ունեք, — հարցրեց՝ հերակալները ատամներով պահած:

— Հիմա՝ իմ սարքն ու ածխի բրգիկները: Վեր կացեք: Գնանք իմ սենյակը՝ սարքը ցույց տամ:

— Եղածը շատ չէ: Լավ, կտեսնեմ: Գնանք:

## 43

Գարինի սենյակում պատշգամբային վանդակով պատուհանը փակ էր ու վարագուրված: Պատի մոտ երկու ճամպրուկ կար: (Նա «Սև կեռնեխում» ապրում էր արդեն շաբաթից ավելի): Գարինը դուռը կողպեց բանալիով: Զոյան նստեց, կոյժնեց արմունկներին, դեմքը ծածկեց առաստաղի լամպի լույսից: Նրա մետաքսէ կանաչ անձրևանցը ձմրթված էր, մազերն անփութորեն վեր հավաքված, դեմքը՝ հոգնաբեկ. այդպես նա ավելի հրապուրիչ էր: Գարինը, բացելով ճամպրուկներից մեկը, ներսը նայեց կապույտով շրջագծված կայծկլտուն աչքերով:

— Ահա իմ սարքը, — ասաց՝ սեղանին դնելով մետաղյա երկու արկդ, մեկը՝ նեղ, հատած խողովակի տեսքով, մյուսը՝ հարթ, տասներկու նիստով, առաջինից տրամագծով եռապատիկ մեծ:

Նա միակցեց երկու արկդերը, ամրացրեց պահանգային հեղուսներով: Փողքակն անցրով ուղղեց քարե ցանկորմի կողմը, բաց արեց նիստավոր պատյանի կորնթարդ կափարիչը: Պատյանի ներսում կողքի դրված բրոնզե օղ կար՝ ձենապակյա տասներկու գավաթիկներով:

— Սա մոդելն է,— ասաց Գարինը՝ երկրորդ ճամպրուկից բրգիկներով լի արկղը հանելով,— մի ժամվա աշխատանքի էլ չի դիմանա: Բուն սարքը հարկավոր է պատրաստել չափազանց դիմացկուն նյութերից, տասն անգամ ավելի մեծ ու հաստատուն: Բայց դա շատ ծանր կլինի, այնինչ ես ստիպված եմ անընդհատ տեղից տեղ շարժվել: (Նա օրու գավաթիկների մեջ զետեղեց տասներկու բրգիկ): Դրսի կողմից դուք ոչինչ չեք տեսնի ու չեք հասկանա: Ահա զծագիրը, սարքի երկայնական կտրվածքը:— Նա թերվեց Զոյայի թիկնաթոռի վրա (շնչելով նրա մազերի բույրը), բացեց փոքրիկ, գրելու թղթի կեսի չափ գծագիրը:— Դուք ուզում եք, Զոյա, որ ես նույնպես ամեն ինչ վտանգեմ մեր խաղի մեջ... Այստեղ նայեք... Սա հիմնական սիսեման է... Պարզ է երկու անգամ երկուսի պես: Ուղղակի պատահականություն է, որ մինչ հիմա չեն սարքել: Ամբողջ գաղտնիքը սովորական լուսարձակի հայելի հիշեցնող հիպերբոլային հայելին է (Ա) և դարձյալ հիպերբոլային կիսագնդի ձևով արված շամոնիտի կտորը (Բ): Հիպերբոլային հայելիների օրենքն այս է.

Լուսի ճառագայթները, ընկնելով հիպերբոլային հայելու ներքին մակերեսին, բոլորը միանում են մի կետում՝ հիպերբոլի կիզակետում: Դա հայտնի է: Բայց ահա թե ինչն է անհայտ. ես հիպերբոլային հայելու կիզակետում զետեղել եմ երկրորդ հիպերբոլ (որ գծած է, այսպես ասած, թարս դիրքով),— պտույտի հիպերբոլուիդ, որն արված է դժվարահալ, կատարելապես ողորկված հանքանյութից՝ շամոնիտից (Բ). այդ հանքատեսակի պաշարները նուսաստանի հյուսիսում անսպառ են: Իսկ ի՞նչ են լինում ճառագայթները:

Ճառագայթները, հավաքվելով հայելու (Ա) կիզակետում, ընկնում են հիպերբոլուիդի (Բ) մակերեսին և նրանից անդրադառնում են մաթեմատիկորեն զուգահեռ, այլ խոսքով ասած, հիպերբոլուիդը (Բ) բոլոր ճառագայթները կենտրոնացնում է ու դարձնում մի ճառագայթ կամ «ճառագայթաքուղ»,— ցանկացած հաստության: Մանրաչափական պտուտակով հիպերբոլուիդը (Բ) առաջ կամ ետ տանելով, ես ըստ ցանկության մեծացնում կամ փոքրացնում եմ «ճառագայթաքուղ» հաստությունը: Օդի միջով անցնելիս նրա էներգիան խիստ աննշան կորուստ է տալիս: Ընդ որում, ես «քուղը» կարող եմ (գործնականորեն) հասցնել ասեղի հաստության:

Այս խոսքի վրա Զոյան ելավ տեղից, ճթճացրեց մատներն ու նորից նստեց, գրկեց ծունկը:

— Առաջին փորձերի ժամանակ ես որպես լուսի աղբյուր վերցրի մի քանի սովորական ճարպամում: Հիբերպոլուիդի (Բ) կարգավորման միջոցով ես «ճառագայթաքուղը» հասցրի գործելու շուրջի հաստության և նրանով հեշտությամբ կտրեցի դյույմանոց տախտակը: Այնժամ ես հասկացա, որ ամբողջ խնդիրը ճառագայթային էներգիայի կոմպակտ և խիստ զորեղ աղբյուրներ գտնելն է: Երեք տարվա աշխատանքից հետո, որ իմ երկու օգնականների կյանքն արմեցավ, ստեղծվեց ահա այս ածխի բրգիկը: Բրգիկների էներգիան արդեն մեծ է այնքան, որ սարքի մեջ դնելուց,— ինչպես տեսնում եք,— և վառելուց հետո (վառվում են մոտ հինգ րոպե), դրանք տալիս են մի քանի վայրկյանում երկաթուղային կամուրջը երկու կես անելու ունակ «ճառագայթաքուղ»... Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ հնարավորություններ են բացվում: Բնության մեջ չկա այնպիսի բան, որ կարողանա

դիմադրել «Ճառագայթաքուղի» ուժին... Շենքեր, ամրոցներ, զրահանավեր, օդանավեր, ժայռեր, լեռներ, երկրագնդի կեղևը՝ ամեն-ամեն ինչ կարող է ձեղքել, ավերել, կտոր-կտոր անել իմ ճառագայթը:

Գարինը հանկարծ ընդհատեց խոսքն ու գլուխը բարձրացրեց՝ ականջ դնելով: Պատուհանի տակ շրշաց ու խշրտաց մանրախիճը, շարժիչների ձայները մարեցին: Նա թռավ դեպի պատուհանն ու սահեց անցավ ծանր վարագույրի ետևը: Զոյան տեսավ, թե ինչպես մորեզույն փոշոտ թափշի ետևում անշարժացավ Գարինի ուրվապատկերը, ապա ցնցվեց: Գարինը դուրս սահեց վարագույրի ետևից:

— Երեք մեքենա և ութ մարդ,— ասաց նա շշուկով,— մեր ետևից են եկել: Կարծես Ոռլինգի ավտոմոբիլն է: Հյուրանոցում միայն մենք ենք ու դռնապան կինը: (Նա գիշերասեղանիկի դարակից արագ հանեց աստրանակն ու խոթեց պիջակի գրպանը): Ինձ որ, համենայն դեպս, կենդանի դուրս չեն թռողնի... Նա հանկարծ զվարթորեն կողքից քորեց քիթը:— Հը, Զոյա, որոշեք՝ այո՞ թե ոչ: Ուրիշ այսպիսի պահ անհնար է գտնել:

— Խելազարվեցի՞ք, ինչ է,— Զոյայի դեմքը բոցավառվեց, շահելացավ,— փախեք ազատվեք...

Գարինը միայն վեր ցցեց մորուքը:

— Ութ մարդ՝ դատարկ բան է, չարժե անհանգստանալ:

— Նա մի քիչ բարձրացրեց սարքն ու փողաբերանն ուղղեց դեպի դուռը: Թվթփացրեց գրպանին: Դեմքը մեկեն սմբեց:

— Լուցկի, — շշնչաց, — լուցկի չկա...

Գուցե այդ բանը նա ասաց դիտմամբ՝ Զոյային փորձելու համար: Գուցե և իսկապես գրպանում լուցկի չկար. դրանից էր կախված կյանքը: Նայեց Զոյային՝ մահվան սպասող կենդանու նման: Զոյան, ասես երազում, թիկնաթոռի վրայից վերցրեց պայուսակը, մոմալուցկու մի տուփ հանեց Գարինին մեկնեց դանդաղ, դժվարությամբ: Վերցնելիս Գարինը մատներով զգաց նրա նեղլիկ ձեռքի սառնությունը:

Ներքնից պտուտակածն սանդուղքով զգուշորեն մարդիկ էին բարձրանում՝ կամացուկ ճռճռացնելով աստիճանները:

Մի քանի մարդ կանգ առան դռան ետևում: Լսվում էր նրանց հսկողությունը: Գարինը բարձրածայն հարցրեց ֆրանսերեն.

— Ո՞վ է:

— Հեռագիր, — պատասխանեց կոպիտ մի ձայն, — բաց արեք...

Զոյան լուր կառչեց Գարինի ուսերից, թափ տվեց գլուխը, Գարինը նրան տարավ սենյակի անկյունը, ուժով նստեցրեց գորգին: Իսկույն էլ վերադարձավ սարքի մոտ ու բղավեց.

- Հեռազիրը ներս զցեք դուսն տակով:
- Որ ասում են բացեք՝ բացեք,— մոնչաց նույն ձայնը: Մի ուրիշ՝ մեղմ ու զգույշ ձայն հարցրեց:
- Կինը ձեզ մո՞տ է:
- Այո, ինձ մոտ է:
- Տվեք նրան՝ ձեզ հանգիստ կթողնենք:
- Նախազգուշացնում եմ,— ասաց Գարինը մոլեզին,— Եթե չչըսվեք գրողի ծոցը՝ մի բոպեից ձեզնից ոչ մեկը ողջ չի մնա...
  - Օ՛-լա-լա... Օ՛-հն-hn... Հի՛-հի՛...— ոռնացին, խրինջացին ձայները, և դուսն վրա ընկան, պտտվեց ձենապակյա բռնակը, վերնասեմից ծեփի կտորտանք թափվեց: Զոյան աչքը չէր կտրում Գարինի դեմքից: Գարինը գունատ էր, շարժումները՝ արագ ու վստահ: Կքելով, նա սկսեց պտտեցնել սարքի մանրաչափական պտուտակը: Հանեց լուցկու մի քանի հատիկ ու դրեց սեղանին, տուփի մոտ: Վերցրեց ատրճանակն ու շտկվեց՝ սպասելով: Դուռը ճռչաց: Հանկարծ հարվածից փշրվեց թափվեց պատուհանի ապակին, ծածանվեց վարագույրը: Գարինն անմիջապես կրակեց պատուհանին: Պայզեց, վառեց լուցկին, խոթեց սարքի մեջ և շրիւկոցով փակեց գնդաձև կափարիչը:
- Ընդամենը մի վայրկյան լրություն տիրեց նրա կրակոցից հետո: Եվ իսկույն էլ գրոհ սկսվեց միաժամանակ դրան ու պատուհանի վրա: Դուանն սկսեցին խփել ինչ-որ ծանր բանով, միջնատախտակից տաշեղներ թռան: Պատուհանի վարագույրը ծփաց ու ընկավ կառնիզի հետ:
- Գաստո՞ն,— ճշաց Զոյան: Պատուհանի երկարեւ վանդակի վրայով մազլցելով ներս մտավ Բադաքիթը՝ ատամներով պահած խսպանական ծալովի երկար դանակը: Դուռը դեռ դիմանում էր: Գարինը, թղթի պես ձերմակ դեմքով, սկսեց դարձնել մանրաչափական պտուտակը: Զախ ձեռքում ոստոստում էր ատրճանակը: Սարքի մեջ թիրտում, զվում էր բոցը: Լույսի շրջանակը պատի վրա (սարքի փողաքերանի դիմաց) հետզհետեւ փոքրանում էր. պաստառն սկսեց ծխալ: Գաստոնը, շեղակի նայելով ատրճանակին, շարժվում էր պատի կողքով՝ ամբողջ մարմնով պրկված ցատկից առաջ: Դանակն արդեն ձեռքին էր, խսպանական ձևով շեղքն իր կողմը: Լույսի շրջանակը կուրացուցիչ կետ դարձավ: Դուան փշրված միջնատախտակի տեղում բեղավոր մոռութներ հայտնվեցին... Գարինը երկու ձեռքով բռնեց սարքն ու փողաքերանն ուղղեց Բադաքի վրա...

Զոյան տեսավ. Գաստոնը լայն բացեց բերանը ոչ այն է՝ ճշալու, ոչ այն է՝ օդ կուլ տալու համար... Ծիփ շերտ անցավ կրծքով մեկ. նա փորձեց ձեռքերը բարձրացնել, բայց իսկույն էլ ցած ընկան: Մեջքի վրա փուլեց գորգին: Գլուխն ուսերի հետ, հացի կտորի պես, կտրվեց պոկ եկավ մարմնի ներքսի մասից:

Գարինը սարքն ուղղեց դուն կողմը: Ճանապարհին «Ճառագայթաքուղը» հատեց հաղորդալարը, առաստաղից կախված լամպը հանգավ: Սարքի փողաբերանից ելնող կուրացուցիչ, ասեղի պես բարակ և ուղիղ ճառագայթը չխկաց դուն վերևում. փայտի փշուրներ շաղ եկան: Սողաց ցած: Կարճ ձղավոց լսվեց, կարծես կատու տրորեցին: Մթության մեջ մեկը թափով դիպավ մի բանի: Փափուկ ընկավ մարմինը: Ճառագայթը պարում էր հատակից մի երկու ոտնաշափ բարձրության վրա: Այրվող մսի հոտ եկավ: Եվ հանկարծ լոռություն տիրեց, միայն բոցն էր զվում սարքի մեջ:

Գարինը հազար, ասաց վաս ենթարկվող, խոպոտ ձայնով.

— Բոլորի հաշիվը փակված է:

Զարդված ապակիներով պատուհանից այն կողմ սյուքը վրա էր հասնում անտեսանելի լորենիներին, և սրանք սոսափում էին զիշերային հանգով՝ քունը գլխներին: Խավարի միջից, ներքելից, ուր անշարժ կանգնած էին մեքենաները, մեկը կանչեց ոռուսերեն.

— Պյոտր Պետրովիչ, ո՞ղջ եք:— Գարինը հայտնվեց պատուհանի մեջ:— Զգույշ, ես եմ՝ Շելգան: Հիշո՞ւմ եք մեր պայմանը: Ռուլինզի մեքենան իմ ձեռքի տակ է: Հարկավոր է փախչել: Փրկեք սարքը: Ես սպասում եմ...

## 45

Երեկոյան, ինչպես սովորաբար կիրակի օրերին, պրոֆեսոր Ռայխերը շահմատ էր իսաղում իր տանը, չորրորդ հարկի փոքրիկ բաց պատշգամբում: Խաղընկերը Հենրիխ Վոլֆն էր՝ նրա սիրելի աշակերտը: Նրանք ծխում էին՝ աշքները սևեռած շահմատի տախտակին: Վերջալույսը վաղուց մարել էր երկար ու ձիգ փողոցի ծայրում: Մթար օղը խեղդուկ էր: Անշարժ էր պատշգամբի ելուստներին պատատված բաղեղը: Վարը, աստղերի տակ, փոված էր ասֆալտապատ թափուր հրապարակը:

Պրոֆեսորը տնքտնքալով ու ֆսֆսալով մտածում էր քայլի վրա: Բարձրացրեց դեղնավուն եղունգներով ջլուտ ձեռքը, բայց չղիպցրեց ոչ մի ֆիզուրի: Բերանից հանեց սիզարի ծխուկը:

— Այս: Հարկավոր է մտածել:

— Խնդրեմ,— պատասխանեց Հենրիխը: Լայնաձակատ, ցայտուն գծագրված կզակով, կարճ, ուղիղ քթով նրա գեղեցիկ դեմքը զորեղ մեքենայի անխոռվություն էր արտահայտում: Պրոֆեսորն օժտված էր ավելի կրակոտ խառնվածքով (հին սերնդից էր),— զզզզել էր պողպատագույն մորուքը, կնճռոտ ճակատին կարմիր բծեր էին հայտնվել:

Լայն գունավոր լուսամփոփով բարձր լամպը լուսավորում էր նրանց դեմքերը: Մի քանի կանաչ նվազ արարածներ պտտվում էին լամպի շուրջը, նստում նոր արդուկված սփոռցին, բեղիկները ցցած կետ-աչքերով նայում էին և, ըստ երևույթին, չին հասկանում,

որ իրենք պատիվ ունեն ականատես լինելու, թե ինչպես երկու աստված ժամանակ են անցկացնում երկնարնակների խաղով: Սենյակում ժամացույցը զարկեց տասն անգամ:

Պրոֆեսորի մայրը՝ ֆրառ Ռայխերը, մաքրակենցաղ փոքրիկ մի ծեր կին, նստած էր անշարժ: Արհեստական լրոյսի տակ նա այլսա չէր կարողանում կարդալ ու գործել: Հեռվում, ուր սև զիշերվա մեջ վառվում էին բարձրահարկ շենքի պատուհանները, կոակվում էր քարե Բեռլինի վիթխարի տարածքը: Եթե որդին նստած չիներ շախմատի տախտակի առաջ, եթե չինեին լուսամփոփի մեղմ լրոյսն ու կանաչ արարածները սփոռոցի վրա, հոգում վաղուց ի վեր բույն դրած սարսափը գլուխ կբարձրացներ նորից, ինչպես եղել էր մի քանի անգամ այդ տարիներին, և կգոսացներ ֆրառ Ռայխերի արյունագուրկ փոքրիկ երեսը: Դա միլիոնավոր այն մարդկանց առջև զգացած սարսափն էր, որոնք շարժվում էին քաղաքի, այս պատշգամբի վրա: Այդ մարդկանց Ֆրից, Ինհան, Հենրիխ, Օտտո չին ասում, այլ զանգված: Մեկը մեկի պես վատ սափրված, թղթե կրծքակալներով, երկարի, կապարի փոշով պատված, նրանք ժամանակ առ ժամանակ հեղեղում էին փողոցները: Նրանք մեծ պահանջներ էին դնում՝ ծանր ծնոտները դուրս ցցած:

Ֆրառ Ռայխերը հիշում էր այն երանելի ժամանակները, երբ իր ամուսինը՝ Օտտո Ռայխերը, վերադարձավ Սեղանի մոտերքից իբրև ֆրանսիական կայսեր հայթող: Նա ամբողջովին տողորված էր զինվորական կաշեհոտով, մորուքով էր ու որոտածայն: Ֆրառ Ռայխերն ամուսնուն դիմավորեց քաղաքից դուրս: Նա երկնագույն զգեստով էր, ժապավեններով և ծաղիկներով: Գերմանիան պանում էր դեպի հաղթանակներ, դեպի երջանկություն՝ Օտտոյի բերկրուն մորուքի հետ, հպարտության և հույսերի հետ: Շուտով կնվաճեն ողջ աշխարհը...

Անցավ ֆրառ Ռայխերի կյանքը: Եկավ ու անցավ երկրորդ պատերազմը: Մի կերպ ոտքները դուրս քաշեցին այն ճահճից, ուր նեխում էին մարդկային միլիոնավոր դիեր: Եվ ահա երևան եկան զանգվածները: Նայիր սաղավարտի տակից հառված ուզածդ աչքերին: Դրանք գերմանական աչքեր չեն: Դրանց արտահայտությունը համառ է, անուրախ, անիմանալի: Այդ աչքերի մեջ անհնար է թափանցել: Ֆրառ Ռայխերին համակում էր սարսափը:

Պատշգամբում հայտնվեց Ալեքսեյ Սեմյոնովիչ Խլինովը: Նա կիրակի օրվան պատշաճ մոխրագույն կոլիկ կոստյումով էր:

Խլինովը գլուխ տվեց ֆրառ Ռայխերին, բարի երեկո ասաց և նստեց պրոֆեսորի կողքին, որը բարեսրտորեն կնճռոտեց դեմքն ու հումորով աչքով արեց շախմատի տախտակի կողմը: Սեղանի վրա հանդեսներ ու արտասահմանյան լրազեր կային: Պրոֆեսորը, ինչպես բոլոր մտավորական մարդիկ Գերմանիայում, ընչագուրկ էր: Նրա հյուրախությունը սահմանափակվում էր նոր արդուկված սփոռոցի վրա ընկնող լամպի մեղմ լույսով, առաջարկած քսան պիտինինգ սիզարով և մի զրույցով, որ թերևս շատ ավելի թանկ արժեր, քան շամպայնով և այլ շրայլություններով ճոխացկած ընթրիքը:

Աշխատանքային օրերին, առավոտյան յոթից մինչև երեկոյան յոթը, պրոֆեսորը լռակյաց էր, գործնական ու խիստ: Կիրակի օրերին «բարեկամների հետ հաճույքով զբոսանքի էր մեկնում երևակայության երկիրը»: Նա սիրում էր խոսել «սիզարի մի ծայրից մինչև մյուսը»:

- Այո, հարկավոր է մտածել,— կրկին ասաց պրոֆեսորը՝ ծխով պարուրելով ինքն իրեն:
- Խնդրեմ,— սառնավուն-քաղաքավարի պատասխանեց Վոլֆը:

Խլինովը բաց արեց փարիզյան «Լ'Էնտրանսիժան»-ը և առաջին էջում, «Խորհրդավոր ոճագործություն Վիլ Դավրեում» խորագրի տակ տեսալ մի լուսանկար, որ պատկերում էր կտոր-կտոր արված յոթ մարդու: «Կտոր-կտոր են արել՝ պատահում է»,— մտածեց Խլինովը: Բայց այն, ինչ նա կարդաց, ստիպեց մտքերի մեջ ընկնել.

«... Պետք է ենթադրել, որ ոճագործությունը կատարված է մինչ այժմ անհայտ որևէ գենքով, կամ շիկացած լարով, կամ վիթխարի լարվածության ջերմածառագայթով: Մեզ հաջողվեց բացահայտել ոճագործի ազգանունն ու արտաքինը, նա, ինչպես և պետք էր սպասել, ուստի է (հետևում էր արտաքինի նկարազրությունը, որ հաղորդել էր հյուրանոցի տիրուհին): Ոճագործության գիշերը նրա հետ կին է եղել: Բայց այնուհետև ամեն ինչ հանելուկային է: Թերևս գաղտնիքի վրայից փոքր-ինչ վարագույրը բարձրացնում է Ֆոնտենելոյի անտառում գտնված արնաշաղախ մարմինը: Այնտեղ, ճանապարհից մոտ երեսուն մետրի վրա, անզգա վիճակում գտել են մի անհայտ անձնավորության: Պարզվել է, որ նրա մարմնի վրա հրազենի չորս վերք կա: Նրա ինքնությունը հաստատող փաստաթղթերն ու մնացած ամեն ինչ հափշտակված են: Ըստ երևույթին, զոհը ցած է նետվել ավտոմոբիլից: Մինչև այժմ չի հաջողվել նրան ուշի բերել»...

## 46

— Շա՝ իւ, — բացականչեց պրոֆեսորը՝ թափահարելով վերցրած ձին: — Շախ և մա՝ տ: Դուք շախշախսված եք, Վոլֆ, դուք օկուպացված եք, դուք ծունկի եք բերված, վաթսունվեց տարի դուք ռազմատուզանք պետք է վճարեք: Այդպիսին է իմպերիալիստական բարձր քաղաքականության օրենքը:

- Իսկ ուսա՞նց, — հարցրեց Վոլֆը:
- Օ՛, ոչ, մենք կվայելենք հաղթողի բոլոր առավելությունների պատճառած հաճույքը:

Պրոֆեսորը թփթփացրեց Խլինովի ծնկանը:

— Ի՞նչ կարդացիք թերթում, իմ ջահել ու անհաշտ բոլշևիկ: Կտոր-կտոր արված յոթ ֆրանսիացիների մասի՞ն: Ի՞նչ կարող ես անել, հաղթողները միշտ հակված են անշափավորության: Պատմությունը հավասարակշռության է ձգտում: Հոռետեսություն՝ ահա թե հաղթողներն ինչ են քարշ տալիս տանում իրենց տները կողոպուտի հետ մեկտեղ: Նրանք սկսում են չափից ավելի յուղալի բաներ ուտել: Նրանց ստամբուր չի կարողանում ինչպես հարկն է մարսել յուղերն ու արյունը տողորում է գարշելի թույներով: Նրանք

կտոր-կտոր են անում մարդկանց, կախվում են տաքատակալներով, ցած են նետվում կամուրջներից: Նրանց մեջ մեռնում է կյանքի սերը: Լավատեսություն՝ ահա թե ինչ է մնում պարտվածներին իրենց կորստի փոխարեն: Մարդկային կամքի հոյակապ հատկությունն է՝ հավատալ, որ ամեն ինչ լավ կլինի աշխարհների մեջ լավագույն այս աշխարհում: Հոռետեսությունը պետք է արմատախիլ արվի: Արևելքի մոայլ ու արյունալի միստիկան, հելենական քաղաքակրթության անհույս տրտմությունը, Հոռմի անսանձ կրքերը քաղաքների ծխացող ավերակների մեջ, ամեն տարի աշխարհի վերջին և ահեղ դատաստանին սպասող միջնադարի մոլեռանդությունը և մեր դարը, որ բարօրության ստվարաթղթե տնակներ է շինում և կլանում կինեմատոգրաֆի անտանելի անհեթեռությունը,— ի՞նչ հիմքի վրա է կառուցված, ձեզ եմ հարցնում, բնության արքայի այս տկար հոգեբանությունը: Հոռետեսության հիմքի վրա... Անիջա՝ լ հոռետեսություն... Ես կարդացել եմ ձեր Լենինին, սիրելիս... Նա մեծ լավատես է: Ես հարգում եմ նրան...»

— Դուք այսօր հիանալի տրամադրության մեջ եք, պրոֆեսոր,— ասաց Վոլֆը մոայլ:

— Գիտե՞ք ինչու:— Պրոֆեսորը ետ ընկավ հյուսկեն թիկնաթոռին, նրա կզակը կծկվեց՝ խորշումվելով, աչքերը զվարթ, ջահելավարի նայեցին հոնքերի տակից:— Ես չտեսնված հետաքրքիր հայտնագործություն եմ արել... Ես ստացա որոշ ամփոփագրեր, համեմատեցի որոշ տվյալներ և անսպասելիորեն հանգեցի զարմանալի եզրակացության... Եթե գերմանական կառավարությունը ավանտյուրիստների հրոսակախումբ չլիներ, եթե ես վստահ լինեի, որ իմ հայտնագործությունը չի ընկնի խարդախ, ավագակ մարդկանց ձեռքը, թերևս հրապարակեի... Բայց ոչ, ավելի լավ է լոեմ...

— Սակայն մեզ, հուսով եմ, կարող եք հաղորդակից դարձնել,— ասաց Վոլֆը:

Պրոֆեսորը խորամանկորեն աչքով արեց նրան.

— Դուք, օրինակ, ի՞նչ կասեիք, բարեկամս, եթե ես առաջարկեի գերմանական ազնիվ կառավարությանը... ուշադրություն դարձրեք, ես ընդգծում եմ՝ «ազնիվ». Դրա մեջ հատուկ իմաստ դնելով... առաջարկեի ոսկու անսպառ պաշարներ:

— Որտեղի՞ց,— հարցրեց Վոլֆը:

— Հողի տակից, իհարկե...

— Որտեղի է այդ հողը:

— Որտեղ ասես: Երկրագնդի ցանկացած կետը... Թեկուզ հենց Բեռլինի կենտրոնում: Բայց ես չեմ առաջարկի: Ես չեմ հավատում, որ ոսկին կհարստացնի մեզ, ինձ, բոլոր Ֆրիցներին, Միխելներին... Հականաբար մենք ավելի աղքատ դառնանք... Միայն մի մարդ,— նա Խլինովի կողմը դարձրեց ալեզարդ, առյուծաբաշ գլուխը,— ձեր հայրենակիցն էր, որ ճիշտ առաջարկեց, թե ինչի վրա կարելի է օգտագործել ոսկին... Դուք հասկանո՞ւմ եք:

Խլինովը քմծիծաղեց, զլխով արեց:

— Պրոֆեսոր, ես սովոր եմ ձեզ լսել լրօրեն, — ասաց Վոլֆը:

— Կփորձեմ լրջանալ: Այ, սրանց մոտ՝ Մոսկվայում, ձմեռվա սառնամանիքները հասնում են մինչև զրոյից ցածր երեսուն աստիճանի, երբորդ հարկից թափված ջուրը մայթին է հասնում սառցագնդիկների փոխված: Երկրագունդն արդեն տասը-տասնինգ միլիարդ տարի է, ինչ պտտվում է միջմոլորակային տարածության մեջ: Այդ ընթացքում պիտի որ սառած լիներ, չէ՝, գրողը տանի: Ես պնդում եմ՝ երկրագունդը վաղուց-վաղուց արդեն սառել է, իր ամբողջ ջերմությունը ձառագայթումով տվել միջմոլորակային տարածությանը: Կհարցնեք՝ իսկ հրարուինե՞՞րը, հալված լավա՞ն, տաք ջերմուկնե՞՞րը: Ամուր, արևից վատ տաքացվող երկրակեղեկի և երկրագնդի ամբողջ զանգվածի միջև հալված մետաղների գոտի կա, այսպես կոչված՝ Օլիվինյան գոտին: Դա առաջ է գալիս երկրագնդի հիմնական զանգվածի անընդմեջ ատոմային տրոհումից: Հիմնական այդ զանգվածն իրենից ներկայացնում է միջմոլորակային տարածության ջերմության գունդը, այսինքն՝ դրա ջերմությունը զրոյից ցածր երկու հարյուր յոթանասուներեք աստիճան է: Տրոհման արգասիքը՝ Օլիվինյան գոտին, այլ բան չէ, բան հեղուկ վիճակում գտնվող մետաղների՝ օլիվինի, սնդիկի և ոսկու շերտ: Եվ այդ շերտը, ըստ բազմաթիվ տվյալների, այնքան էլ խոր չէ՝ տասնինգից երեք հազար մետր: Կարելի է Բեռլինի կենտրոնում հանքահոր փորել, և հալված ոսկին Օլիվինյան գոտու խորքերից դուրս կհորդի ինքնիրեն՝ նաևթի պես...

— Տրամաբանական է, գայթակղիչ, բայց անհավատալի, — որոշ լոռությունից հետո ասաց Վոլֆը: — Ժամանակակից գործիքներով նման խորության հանքահոր անհնար է փորել...

## 47

Խլինովը ձեռքը դրեց «Լ'Էնտրանսիժան»-ի բացված էջի վրա:

— Պրոֆեսոր, այս լուսանկարն ինձ հիշեցրեց Բեռլին թռչելիս աերոպլանում տեղի ունեցած մի խոսակցություն: Երկրագնդի կենտրոնի տրոհվող տարրերին հասնելու խնդրի լուծումն արդեն այնքան էլ անհավանական չէ:

— Այդ խնդիրն ի՞նչ կապ ունի կտոր-կտոր արված ֆրանսիացիների հետ, — հարցրեց պրոֆեսորը՝ մի նոր սիզար վառելով:

— Վիլ Շավրեի սպանությունը կատարված է ջերմաճառագայթով:

Այդ խոսքի վրա Վոլֆն աթոռը մոտ շարժեց սեղանին, և նրա պատ դեմքը լարվեց:

— Ա՛խ, նորից այդ ձառագայթները, — պրոֆեսորը կնճռոտվեց, ասես թթու բան դրեց բերանը: — Զառանցանք է, փշոց, անզլիական ռազմական մինիստրության բաց թողած քամի:

— Սարքը ուս է պատրաստել, ես գիտեմ այդ մարդուն, — պատասխանեց Խլինովը, — տաղանդավոր գյուտարար է և խոշոր հանցագործ:

Խլինովը պատմեց այն ամենը, ինչ գիտեր ինժեներ Գարինի մասին՝ Պոլիտեխնիկական ինստիտուտում նրա աշխատանքների, Կրեստովսկի կղզում նրա հանցագործության, ամառանցի նկուղում հայտնաբերված արտասովոր բաների, Շելգային Փարիզ կանչելու և այն մասին, որ, հավանաբար, հիմա կատաղի շանքեր են գործադրվում Գարինի սարքը ձեռք զցելու համար:

— Ահա ապացույցը,— Խլինովը ցույց տվեց լուսանկարը,— սա Գարինի ձեռքի գործն է:  
Վոլֆը խոժողադեմ դիտեց լուսանկարը: Պրոֆեսորն ասաց ցրված:

— Դուք ենթադրում եք, որ ջերմածառագայթների միջոցով կարելի է փորե՞լ գետինը: Թեև երեք հազար աստիճան ջերմության տակ հալչում են և՛ կավը, և՛ գրանիտը: Շատ, շատ հետաքրքի է... Իսկ չի՞ կարելի որևէ տեղ հեռազրել այդ Գարինին: Հըմ... Եթե հորատման հետ արհեստական սառեցում կիրառվի և էլեկտրական էլեատորներ դրվեն ապարը վեր հանելու համար, ապա կարելի է շատ խոր թափանցել... Բարեկամս, դուք խիստ շարժեցիք իմ հետաքրքրությունը...

Մինչև գիշերվա երկուսը, հակառակ իր սովորության, պրոֆեսորը ետուառաջ էր անում պատշգամբում, ծխում էր ու մտովի ծրագրեր մշակում՝ մեկը մյուսից անսպասելի ու զարմանալի:

## 48

Պրոֆեսորի մոտից դուրս գալուց հետո Վոլֆը սովորաբար Խլինովին հրաժեշտ էր տալիս հրապարակում: Բայց այս անգամ նա շարունակեց քայլել Խլինովի հետ՝ թխվածկացնելով ձեռնափայտը, խոժող հայացքը՝ գետնին:

— Դուք կարծում եք, որ ինժեներ Գարինն իր սարքն առած թաքնվե՞լ է Վիլ Դավրեի պատմությունից հետո,— հարցրեց նա:

— Այո:

— Իսկ չի՞ կարող պատահել, որ «Ֆոնտենեբլոյի անտառում գտնված արնաշաղախ մարմինը» Գարինը լինի:

— Ուզում եք ասել՝ Շելգան հափշտակե՞լ է սարքը...

— Ճիշտ այդպես...

— Դա մտրովս չի անցել... Այո, շատ լավ կլիներ, եթե ձեր ասածի պես եղած լիներ:

— Ես ենթադրում եմ,— զլուխը բարձրացնելով՝ ասաց

Վոլֆը հեգնությամբ:

Խլինովն արագ հայացք զցեց զրուցակցի վրա: Երկուսն էլ կանգ առան: Լապտերը հեռվից լուսավորում էր Վոլֆի դեմքը՝ հեղնախառն չար ժայիտ, պաղ աչքեր, հաստատակամ կզակ: Խլինովն ասաց.

— Համենայն դեպս, այդ բոլորը միայն ենթադրություններ են, մենք առայժմ պատճառ չունենք գժտվելու:

— Հասկանում եմ, հասկանում եմ:

— Ես ձեր հանդեպ խորամանկություն չեմ բանեցնում, Վոլֆ, այլ ասում եմ հաստատ՝ անհրաժեշտ է, որ Գարինի սարքն ընկնի ՍՍՀՄ: Հենց միայն իմ այդ ցանկությամբ ես ձեզ թշնամի եմ դարձնում ինձ: Ազնիվ խոսք, թանկագին Վոլֆ, դուք շատ աղոտ պատկերացում ունեք այն մասին, թե ինչն է վնասակար և ինչը՝ շահավետ ձեր հայրենիքի համար:

— Դուք փորձում եք ինձ վիրավորե՞լ:

— Թո՛ւ, չար սատանա: Թեև, իսկապես...— Խլինովը զուտ ոռւսավարի, որ իսկույն նկատեց Վոլֆը, զիսարկը մի կողմ ծոեց, քորեց ականջի ետևը:— Այսր մի՞թե այն բանից հետո, որ մենք իրարից յոթ-յոթ միլիոն մարդ ջարդեցինք, կարելի է վիրավորվել խոսքից... Դուք ոտքից գլուխ գերմանացի եք, զրահավորված հետևազորը, մեքենաներ արտադրող, ձեր նյարդերն էլ, ինձ թվում ե, ուրիշ կառուցվածք ունեն: Լսեք, Վոլֆ, թե որ Գարինի սարքն ընկնի ձեզնմանների ձեռքը՝ ինչե՞ր ասես չեք անի...

— Գերմանիան երբեք չի հաշտվի նվաստացման հետ: Նրանք մոտեցան այն տանը, ուր, առաջին հարկում, Խլինովը սենյակ էր վարձել: Լուս իրաժեշտ տվին իրար: Խլինովը մտավ դարպասով: Վոլֆը մնաց կանգնած՝ ատամների արանքում զլորելով հանգած սիզարը: Հանկարծ լայն բացվեց առաջին հարկի պատուհանը, և այլայլված դուրս կախվեց Խլինովը.

— Հա... Դուք դեռ այստե՞ղ եք: Փա՛ռք աստծու: Հեռագիր Փարիզից, Վոլֆ, Շելգայից... Լսեք. «Հանցագործ փախավ: Ես վիրավոր եմ, շուտ ոտքի չեմ կանգնի: Անսաելի, անշափ մեծ վտանգ է սպառնում աշխարհին: Անհրաժեշտ է, որ այստեղ լինեք»:

— Ես կզամ ձեզ հետ,— ասաց Վոլֆը:

Պատուհանի տարուքերվող սպիտակ գալարավարագույրի վրա խաղում էին ծառի սաղարթից ընկած ստվերները: Վարագույրի ետևից անլոելի կարկաչ էր լսվում. հիվանդանոցի այգու սիզամարգում շարժական խողովակներից ցայտում էր ջուրը փոշեցրիվ՝ ծիածաններ կապելով, կաթկթում էր պատուհանի առջևի սոսու տերևներից:

Շելգան ննջում էր գալարավարագույրի միջով լուսավորված ձերմակապատ բարձր սենյակում:

Հեռվից հասնում էր Փարիզի աղմուկը: Մոտակա ձայներն էին ծառերի սոսափյունը, թռչունների ճռվողյունն ու ջրի միալար կարկաշը:

Քիչ հեռու ավտոմոբիլ կրնչաց կամ ոտնաձայն հնչեց միջանցքում: Շելգան արագ բացեց աչքերը, սուր, տագնապալի դռան կողմը նայեց: Շարժվել չէր կարողանում: Չույզ ձեռքերն էլ կաշկանդված էին զիպսի մեջ, կուրծքն ու գլուխը փաթաթված էին բինտով: Պաշտպանվելու համար ազատ էին միայն աչքերը: Եվ նորից այգուց հասնող ախորժալուր ձայները նինջ բերին:

Արթնացրեց ոտքից գլուխ ձերմակ հազած կարմելիտուիի<sup>17</sup> քույրը, գիրզ ձեռքերով զգուշորեն Շելգայի շրթունքներին մոտեցրեց թեյով լի ճենապակյա փոքրիկ սոուսամանը: Նրա հեռանալուց հետո նարդոսի քույրը մնաց սենյակում:

Օրն անցավ քնի ու տագնապի մեջ: Յոթերորդ օրն էր այն բանից հետո, որ Շելգային՝ ուշագնաց, արյունաթաթախ, վերցրին ու այստեղ բերին Ֆոնտենեֆլոյի անտառից: Քննիչը երկու անգամ արդեն հարցաքննել էր նրան: Շելգան տվել էր հետևյալ ցուցմունքները.

— Գիշերվա ժամը տասներկուսին վրաս հարձակվեցին երկու մարդ: Ես պաշտպանվում էի ձեռնափայտով ու բռունցքներով: Չորս գնդակ խրվեց մարմինս, ուրիշ բան չեմ հիշում:

- Դուք լա՞վ տեսաք հարձակվողների դեմքերը:
- Նրանց դեմքերը՝ ամբողջ ներքսի մասը, ծածկված էին թաշկինակներով:
- Դուք նաև ձեռնափայտո՞վ էիք պաշտպանվում:
- Պարզապես բարակ ճյուղ էր, անտառում գտա:
- Ինչո՞ւ էիք այդ ուշ ժամին գնացել Ֆոնտենեֆլոյի անտառ:
- Զբոսնում էի, դիտեցի պալատը, ետ եկա անտառով, մոլորվեցի:
- Ինչո՞վ կրացատրեք այն հանգամանքը, որ ձեզ վրա կատարված մահափորձի վայրից քիչ հեռու հայտնաբերվել են ավտոմոբիլի թարմ հետքեր:
- Նշանակում է՝ հանցագործները եկել էին ավտոմոբիլով:
- Որ կողոպտեի՞ն ձեզ: Կամ սպանեի՞ն:
- Կարծում եմ՝ ոչ մեկը, ոչ մյուսը: Ինձ ոչ ոք չգիտի Փարիզում: Դեսպանությունում չեմ ծառայում: Քաղաքական առաջադրանք չեմ կատարում: Մոտս փող քիչ ունեմ:
- Հետևաբար հանցագործները ձե՞զ չեին սպասում երկրուն կադնու մոտ կանգնած, բացատում, ուր մեկը ծխել է, իսկ մյուսը՝ կորցրել թանկարժեք մարզարտով ճարմանդը:

<sup>17</sup> Կարմելիտներ — վանական ուսիար (ծանոթ. հեղինակի):

— Ամենայն հավանականությամբ, դրանք ձիարշավում կամ խաղատանը տանուլ տված աշխարհիկ երիտասարդներ են եղել: Նրանք առիթ են որոնել իրենց գործերը կարգի բերելու համար: Ֆոնտենեբլոյի անտառում հազարֆրանկանոց թղթադրամներով գրանն ուղղրած մարդ կարող է հանդիպել:

Երկրորդ հարցաքննության ժամանակ, երբ քննիչը ցույց տվեց Բեռլին՝ Խլինովին ուղարկված հեռագրի պատճենը (հեռագիրը կարմելիտուիհի քույրն էր ներկայացրել քննիչին), Շելգան պատասխանեց.

— Դա ծածկագիր է: Գործը վերաբերում է Ռուսաստանից ճողովրած մի լուրջ հանցագործի բոնելուն:

— Դուք կարո՞՞ն եք հետս ավելի անկեղծ խոսել:

— Ոչ դա իմ գաղտնիքը չէ:

Հարցերին Շելգան պատասխանում էր պարզ ու ստույգ, քննիչի աշքերի մեջ էր նայում ազնիվ ու նույնիսկ հիմարավուն հայացքով: Քննիչին մնում էր միայն հավատալ նրա անկեղծությանը:

Բայց վտանգը չէր անցել: Վտանգով էին ներծծված «Վիլ Դավրեի մղձավանշային գործի» մանրամասերով լի լրագրային պյունակները, վտանգը դուան ետևն էր, քամուց տարութերվող սպիտակ գալարավարագույրի ետևը, ձենապակյա փոքրիկ սոսուսամանում, որ նրա շրթունքներին էին մոտեցնում կարմելիտուիհի քույրերի գիրգ ձեռքերը:

Մի փրկություն կա՝ հնարավորին չափ շուտ ազատվել գիպսից ու վիրակապերից: Եվ Շելգան քարացավ ամբողջ մարմնով, մնաց անշարժ՝ կիսանիրիի մեջ:

50

... Կիսանիրիի մեջ վերհիշեց.

Լապտերները մարած էին: Ավտոմոբիլը դանդաղեցրեց ընթացքը... Մեքենայի պատուհանից դուրս կախվեց Գարինն ու բարձր շշունչով ասաց.

— Թեքվեք, Շելգա: Հիմա բացատ է լինելու այնտեղ...

Ծանր դիմկալով ճամփեզրի առվի մեջ, ավտոմոբիլը զնաց ծառերի արանքով, պտտվեց ու կանգնեց:

Աստղերի տակ փուլած էր ոլորուն փոքրիկ մի բացատ: Ծառերի ստվերների մեջ աղոտ նշարվում էին վեր ցցված քարակարկառներ:

Շարժիչն անջատված էր: Սուր բուրում էր խոտը: Քնեած խոխոջում էր առուն, որի վրա թեթև մշուշ էր բարձրանում՝ շղարշի պես տարածվելով բացատի խորքերը:

Գարինը դուրս թռավ թաց խոտին: Պարզեց ձեռքը: Ավատոմոբիլից ելավ Զոյա Մոնրով՝ ճակատին խոր, քաշած զիսարկով, բարձրացրեց գլուխն ու նայեց աստղերին: Թեթևակի ցնցեց ուսերը:

— Հը՝, դե դուրս եկեք,— ասաց Գարինը խիստ:

Ավտոմոբիլից դուրս ստղաց Ռոլինզը՝ գլուխն առաջ: Նրա կոտելովի ստվերի միջից փայլվլում էին ոսկե ատամները:

Ծփում, քրթմնջում էր ջուրը՝ զարկվելով քարերին: Ռոլինզը գրպանից հանեց ձեռքը, որ, ըստ երևոյթին, բոնցքվել էր վաղուց, և ասաց խուլ ձայնով.

— Եթե այստեղ մահվան դատավճիռ է պատրաստվում՝ ես բողոքում եմ: Հանուն օրենքի: Հանուն մարդկայնության... Ես բողոքում եմ իբրև ամերիկացի... Իբրև քրիստոնյա... Առաջարկում եմ ցանկացած փրկագինը կյանքիս դիմաց:

Զոյան կանգնել էր թիկունքը դարձրած նրան. Գարինն ասաց նողկանքով.

— Ես ձեզ այնտեղ էլ կարող էի սպանել...

— Փրկա՞նք,— հարցրեց Ռոլինզն արագ:

— Ո՞չ:

— Ուրեմն մասնակցություն ձեր... — Ռոլինզի այտերը թրթռացին, — ձեր տարօրինակ ձեռնարկումների՞ն:

— Այո: Դուք պետք է որ հիշեք այդ բանը... Մալզերք բուլվարում... Ես ասացի ձեզ...

— Լավ, — պատասխանեց Ռոլինզը, — վաղը ձեզ կընդունեմ... Ես նորից պիտի մտածեմ ձեր առաջարկների մասին:

Զոյան ասաց ցածրածայն...

— Հիմարություններ դուրս մի տվեք, Ռոլինզ:

— Մադմուազե՞լ... — Ռոլինզը վեր ցատկեց, կոտելով իշավ քթին, — մադմուազել... Ձեր վարքն անօրինակ է... Դավաճանություն. անառակություն...

Զոյան պատասխանեց նույն ցածր ձայնով.

— Էհ, կորեք դուք էլ... Խոսեք Գարինի հետ:

Այնժամ Ռոլինզն ու Գարինը քաշվեցին գնացին երկրուն կաղնու տակ: Այնտեղ էլեկտրական լապտերի լույս բռնկվեց: Խոնարհվեցին երկու գլուխ: Մի քանի վայրկյան միայն քարերին զարկվող առվի ծփյունն էր լսվում:

— ... Բայց մենք երեքը չենք, չո՞րս ենք... այստեղ վկա կա, — Շելգայի ականջին հասավ Ռոլինզի սուր ձայնը:

— Ո՞վ կա այստեղ, ո՞վ է, — զնցվելով, նիրհի մեջ փնթփնթաց Շելգան: Նրա բիբերն աչքերով մեկ լայնացան:

Առջևը, սպիտակ աթոռակի վրա, լայնեզր զիսարկը ծնկներին, նստած էր Խլինովը:

## 51

Չկուհեցի քայլը... Մտածելու ժամանակ չկար,— պատմում էր նրան Շելգան, — այնպես հիմար խաղացի, որ էլ ասելու չի:

— Ձեր սխալն այն է եղել, որ դուք ձեզ հետ ավտոմոբիլ եք վերցրել Ռոլինզին, — ասաց Խլինովը:

— Ի՞նչ վերցնել... Երբ հյուրանոցում սկսվեց տրաքտրաքոցն ու կոտորածը, Ռոլինզն առնետի պես ծվարել էր ավտոմոբիլում՝ երկու ձեռքին պատրաստ պահած երկու ատրճանակը... Ինձ մոտ գենք չկար: Մազլցեցի պատշաճմբ ու տեսա, թէ Գարինն ինչպես բանդիտների հաշիվը մաքրեց... Այդ բանը պատմեցի Ռոլինզին... Նա վախեցավ, ֆշացրեց, կտրականապես հրաժարվեց դուրս գալ մեքենայից... Հետո փորձեց կրակել Զոյա Մոնրոզի վրա: Բայց ես ու Գարինը ոլորեցինք նրա ձեռքերը... Ռոլինզով երկար զբաղվելու ժամանակ չկար, ես թուա դեկի մոտ ու քշեցի...

— Երբ դուք արդեն բացատում էիք, և նրանք խորհրդակցում էին կաղնու մոտ, մի՞թէ դուք շհասկացաք...

— Հասկացա, որ բանս բուրդ է: Բայց ի՞նչ կարող էի անել: Փախչե՞լ: Ախր, զիտեք, ես, այնուամենայնիվ, մարզիկ եմ... Բացի այդ, մի ամբողջ պլան էի մշակել... Գրպանումս կեղծ անձնազիր կար Գարինի համար՝ տասը վիզայով... Նրա սարքը կողքին էր՝ ավտոմոբիլում... Նման հանգամանքներում ես շա՞տ կարող էի սեփական կաշվիս մասին մտածել...

— Հա, լավ... Ուրեմն նրանք համաձայնության եկան...

— Ռոլինզն ինչ-որ թուղթ ստորագրեց հենց այնտեղ, ծառի տակ. Ես լավ տեսա: Դրանից հետո լսեցի նրա խոսքը չորրորդ վկայի, այսինքն՝ իմ մասին: Ես կիսաձայն ասացի Զոյային. «Լսեք հապա, քիչ առաջ մենք անցանք ոստիկանի մտտով, նա տեսավ մեքենայի համարը: Հիմա եթե ինձ սպանեն՝ առավոտը բոլոր երեքիդ ձեռքերին պողպատե կապանքներ կլինեն»: Գիտե՞ք ինչ պատասխանեց: Այ կին... Ուսի վրայից, առանց նայելու թե՝ «Լավ, դա կընդունեմ ի գիտություն»: Իսկ ի՞նչ գեղեցիկ էր... Դիվային... Լավ, ուրեմն՝ Գարինն ու Ռոլինզը ետ եկան մեքենայի մոտ: Ես ցույց եմ տալիս, թե՝ ոչ բան եմ տեսել, ոչ լսել... Առաջինը նստեց Զոյան: Պատուհանից դուրս հանեց զլուխն ու ինչ-որ բան ասաց անզերեն: Գարինն ինձ թե՝ «Հիմա քշեք, ընկեր Շելգա, լրիվ արագությամբ՝ խճուղով արևմուտք»: Ես նստեցի ռադիատորի առաջ... Այ թե որն էր իմ սխալը: Նրանք միայն այդ մի բոպեն ունեին... Եթե մեքենան իսկույն պոկվեր տեղից, ընթացքի ժամանակ նրանք ինձ ոչինչ չեին կարող անել, կվախենային... Լավ, մի խոսքով՝ սկսեցի գործի զցել մեքենան...

Մեկ կ՝ հարված գագաթիս, ուղեղիս. ասես զլիսիս տուն փուլ եկավ, ճթճացին ոսկորներս, լույս զարկեց աչքերիս, դադեց, ետ ընկա մեջքի... Միայն տեսա, թե ինչպէս երևաց ու կորավ Ռոլինզի ծամածոված մռութը: Շա՝ ն զավակ... Չորս գնդակ մեխեց մարմնիս մեջ... Հետո աչքերս բացեցի՝ այս սենյակում էի:

Շելգան հոգնեց պատմելուց: Երկար ժամանակ լուր էր: Խլինովը հարցրեց.

— Հիմա Ռոլինզը որտե՞՞ղ կարող է լինել:

— Ինչպէ՞ս թե՝ որտեղ: Իհարկե, Փարիզում: Մամուլն է կառավարում: Նա հիմա մեծ հարձակում է ծավալել քիմիայի ճակատում: Փող է որ դիզում է: Իսկ ես բոպէ առ բոպէ գնդակի եմ սպասում պատուհանից, կամ թույնի՝ սոուսամանում: Նա վերջը գլուխս կուտի, իհարկե...

— Իսկ ինչո՞ւ եք լուրում... Հարկավոր է իսկույն հայտնել ոստիկանության շեֆին:

— Խենթ եք, ինչ է, սիրելի ընկեր: Ես մինչև հիմա ողջ եմ հենց այն բանի շնորհիվ միայն, որ լուրում եմ:

## 52

— Ուրեմն, Շելգա, դուք ձեր աչքով տեսա՞ք սարքի աշխատանքը:

— Տեսա ու հիմա զիտեմ՝ թնդանոթները, գագերը, աերոպլաններն ու նման բանները մանկական խաղալիքներ են դրա դեմ: Չմոռանաք, որ այդտեղ Գարինը չէ միայն... Նրա հետ է Ռոլինզը: Մահաբեր մեքենա և միջիարդներ: Ամեն ինչ կարելի է սպասել: Խլինովը բարձրացրեց գալարավարագույրը և երկար կանգնած մնաց պատուհանի մոտ՝ նայելով զմրուխտյա կանաչին, ծեր պարտիզանին, որ մետաղէ հոդավոր խողովակները դժվարությամբ քարշ էր տալիս այգու ստվերու կողմը, նայում էր սև կեռնեխներին, որ գործնական ու մտահոգ վազվզում էին աղավնիձի թփերի տակ, հողից անձրևորդեր դուրս քաշում: Կապույտ թովիչ երկինքը այգու վերևում փուլել էր հավերժ անդորրով:

— Որ Ռոլինզին ու Գարինին իրենց կամքին թողնեն, ասեն՝ թող ազատ անեն իրենց սրտի ուզածը, վերջը շուտ կզա, — խոսեց Խլինովը: — Այս աշխարհը կկործանվի անխուսափելիորեն. . . Այստեղ միայն կեռնեխներն են ապրում բանական ու խելամիտ: — Խլինովը շուր եկավ պատուհանից: — Քարե դարի մարդն ավելի մեծ էր անշուշտ. . . Անվճար, միայն ներքին պահանջից դրդված, նկարազարդում էր քարանձավի պատերը, խարույկի մոտ նստած մտածում է մամոնտների, ամպրոպի, կյանքի ու մահվան տարօրինակ շրջապտույտի և ինքն իր մասին: Սատանան զիտի, թե դա ոքքան հարգարժան բան էր. . . Ուղեղը դեռ փոքր էր, գանգը՝ հաստ, բայց հոգևոր էներգիան փայլակի պէս ճառագում էր նրա զլիսից. . . Իսկ սրանք՝ հիմիկվանները. . . ինչների՞ն են պետք, ասենք, թոշող մեքենաները: Բուլվարի մի ինչ-որ ֆրանտի նստեցնեիր քարանձավում, պակեռլիթյան մարդու դեմ: Ու բրդոտ քերին նրան հարցներ. «Պատմիր, հիվանդոտ շան որդի, միտքդ ուր է հասել էս հարյուր հազար տարվա մեջ» . . . «Ա՛յս,

ա՛խ,— տեղում իրար կգա ֆրանտը,— զիտեք ինչ, ես ոչ այնքան մտածում եմ, որքան վայելում քաղաքակրթության պտուղները, պարոն նախահայր... Եթե ամբոխի հեղափոխության վտանգը չլիներ, ապա հիրավի հիասքանչ կլիներ մեր աշխարհը: Կանայք, ուստորաններ, մի քիչ հուզում թղթախաղի սեղանի մոտ, մի քիչ սպորտ... Բայց, դժբախտաբար, այդ մշտական ձգնաժամերն ու հեղափոխությունները սկսում են հոգնեցնել մարդու»... «Տես, Է՝— կասեր նախահայրը՝ բոցաշող աշքերը հառելով ֆրանտին,— իսկ այս, ես սիրում եմ մտածե-ե-լ, այս, ես նստում եմ ու պատիվ տալիս իմ հանձարեղ ուղեղին... Նրանով կուզեի տիեզերքի խորքերը թափանցել»...

Խլինովը լրեց, նրա հայացքը քմծիծաղով հածում էր պալեոլիթյան քարանձավի կիսամութի մեջ: Գլուխը թափ տվեց.

— Ինչի՞ են ուզում հասնել Գարինն ու Ռոլինզը: Խուտուտի: Թող նրանք այդ քանն անվանեն իշխանություն աշխարհի վրա: Միևնույն է, ավելին չէ դա, քան խուտուտը: Անցյալ պատերազմին զոհվեց երեսուն միլիոն մարդ: Նրանք կաշխատեն երեք հարյուր միլիոն սպանել: Հոգևոր էներգիան խոր ուշագնացության մեջ է: Պրոֆեսոր Ռայխերը ճաշում է միայն կիրակի օրերին: Մնացած օրերին ուսում է պովիլուոյվ ու մարգարինով երկու բուտերբրոդ՝ նախաճաշին և աղով խաշած կարտոֆիլ՝ ճաշին: Դա է ուղեղի աշխատանքի վարձը... Եվ այդպես կլինի, քանի դեռ մենք չենք պայթեցրել նրանց այդ ողջ «քաղաքակրթությունը»: Գարինին գժանոց կրնենք, իսկ Ռոլինզին կուղարկենք Վրանգելի կղզում որևէ տեղ տնտեսվար աշխատելու... Դուք իրավացի եք, հարկավոր է պայքարել... Ինչ կա որ, ես պատրաստ եմ: Գարինի սարքին պիտի տիրանա ՍՍՀՄ-ը...

— Սարքը մեզ մոտ կլինի,— ասաց Շելզան՝ աշքերը փակելով:

— Ո՞ր ծայրից պետք է մոտենալ գործին:

— Հետախուզությունից, ինչպես կարգն է:

— Ո՞ր ուղղությամբ:

— Գարինը հիմա, ամենայն հավանականությամբ, կատաղի թափով սարքեր է պատրաստում: Վիլ Դավրեում նա մոդելն ուներ միայն: Եթե կարողանա ռազմական սարք պատրաստել՝ նրան որսալն արդեն շատ դժվար կլինի: Առաջինը՝ հարկավոր է իմանալ, թե որտեղ է նա սարքեր պատրաստում:

— Փողի կարիք կզգացվի:

— Հենց այսօր գնա Գրենել փողոց, խոսիր մեր դեսպանի հետ, ես որոշ տեղեկություններ տվել եմ նրան: Փող կլինի: Հիմա երկրորդը՝ հարկավոր է գտնել Զոյա Մոնրոզին: Դա շատ կարևոր է: Խելացի, դաժան կին է նա՝ մեծ երևակայությամբ: Նա Գարինին ու Ռոլինզին իրար հետ կապել է ցմահ: Զոյայի մեջ է նրանց մեքենայությունների ողջ զսպանակը:

— Ներեցեք, հրաժարվում եմ կանանց դեմ պայքարել:

— Այդ կինը մեր երկուսից էլ զորեղ է, Ալեքսեյ Սեմյոնովիչ. . . Նա դեռ շատ արյուն կթափի:

### 53

Զոյան ելավ բոլորակ ու ցածիկ վաննայից, թիկունքը դեմ արեց, և աղախինը նրա վրա զցեց խավոտ խալաթը: Դեռ ամբողջովին պատված ծովաջրի պղպջակներով, Զոյան նստեց մարմարե նստարանին:

Լուսանցույցներից ներս էին ընկնում արևի հոսուն ցոլքերը, կանաչավուն լուս էր խաղում մարմարե պատերին, լողասենյակը թեթևակի ճռվում էր: Աղախինը Զոյայի ոտքերը սրբեց այնպես զգույշ ու խնամքով, կարծես թանկագին զարդ էր մաքրում, հետո հազցրեց գուլպաներն ու սպիտակ կոշիկները:

— Սպիտակեղենը, մաղամ:

Զոյան ծուլորեն ելավ տեղից, նրան համարյա աներևույթ սպիտակեղեն հազցրին: Նա նայեց հայելու կողքով՝ հոնքերը կորացնելով: Նրան հազցրին ճերմակ շրջազգեստ և ծովային տարազի ճերմակ բաձկոնակ՝ ոսկեգույն կոճակներով, ինչպես պատշաճ է Միջերկրական ծովում լողացող երեք հարյուր տոննա տարողությամբ զբոսանավի տիրուհուն:

— Գրի՞մ, մաղամ:

— Գժվել եք, ինչ է,— պատասխանեց Զոյան, հուլորեն նայեց աղախինին և բարձրացավ վեր՝ տախտակամած, ուր ստվերուտ կողմում, եղեգնյա ցածիկ սեղանի վրա նախաձաշն էր:

Զոյան նստեց սեղանի մոտ: Մի փոքրիկ պատառ հաց պոկեց ու սկսեց տարված շուրջը նայել: Շարժիչավոր զբոսանավի սպիտակ նեղ կորպուսը սահում էր ջրերի հայելու վրայով. ծովը ջինջ երկնագույն էր, փոքր-ինչ մուգ անամպ երկնքից: Մաքուր լվացված տախտակամածից թարմություն էր բուրում: Տաք սյուք էր փշում՝ զգեստի տակ շոյելով ոտքերը:

Նեղ տախտակներից կազմված փոքր-ինչ կորնթարդ, ասես զամշե տախտակամածի վրա, նավակողերի մոտ հյուսկեն թիկնաթռոներ էին դրված, մեջտեղում փոված էր անատոլիական արծաթավուն զորգ՝ այստեղ-այնտեղ զցված դիպակե բարձիկներով: Նավապետի կամրջակից մինչև նավախելը կապույտ մետաքսից ծովերից ծածկ էր ձգվում:

Զոյան հառաչեց ու սկսեց նախաձաշել:

Փափուկ քայլերով, ժպտադեմ մոտեցավ նավապետ Յանսենը՝ մաքուր սափրված, կարմրերես մի նորվեգացի, իսկական մեծ երեխա: Երկու մատն անշտապ տարավ մի ականջի վրա խոր թեքած զլխարկին:

— Բարի լուս, մադամ Լամոլ: (Զոյան նավարկում էր այդ անվան և ֆրանսիական դրոշի ներքո):

Նավապետը ոտքից գլուխ ձյունաձերմակ, կոկիկ հազուստով էր, բոլոր ծովայինների պես ծուռթաթ-անձարտար, բայց և նրբագեղ: Զոյան նրան զննեց հովհարի ոսկեգույն կաղնետերներից մինչև պարանահյուս ներբաններով սպիտակ կոշիկները: Գոհ մնաց.

— Բարի լուս, Յանսեն:

— Պատիվ ունեմ գեկուցելու, ուղղությունը՝ նորդ վեստ-վեստ, լայնությունն ու երկարությունը (այս-այս), հորիզոնում ծխում է Վեզուվը: Մի ժամ էլ չի քաշի՝ կհայտնվի Նեապոլը:

— Նստեք, Յանսեն:

Զեռքի շարժումով նրան հրավիրեց մասնակցելու նախաճաշին: Յանսենը նստեց եղեգնա աթոռին, որ ձռոց նրա զորեկ մարմնի տակ: Նախաճաշից հրաժարվեց՝ ժամը իննին կերել էր արդեն: Քաղաքավարությունից մի գավաթ սուրճ վերցրեց:

Զոյան դիտում էր բաց գույնի արտևանունքներով նրա արևատ դեմքը, որ դրանից փոքր-ինչ շառագունեց: Առանց խմելու, Յանսենը գավաթը դրեց սփոռցին:

— Հարկավոր է փոխել խմելու ջուրը և բենզին վերցնել շարժիչների համար,— ասաց նա՝ աչքերը շբարձրացնելով:

— Ինչպես, Նեապո՞լ մտնենք: Ինչպիսի՝ ձանձրույթ: Մենք կկանգնենք արտաքին խարսխակայանում, եթե ձեզ այդքան անհրաժեշտ են ջուրն ու բենզինը:

— Լսում եմ, կանգնել արտաքին խարսխակայանում,— ասաց նավապետը կամացուկ:

— Յանսեն, ձեր նախնիները ծովահեննե՞ր են եղել:

— Այո, մադամ:

— Ի՞նչ հետաքրքիր է: Արկածներ, վտանգներ, խենթ խրախճանքներ, գեղեցիկ կանանց առևանգում... Դուք ափսոսո՞ւմ եք, որ ծովահեն չեք:

Յանսենը լուր էր: Շիկակարմիր արտևանունքներն արագ քթթում էին: Ճակատը կնձռոտվեց:

— Հը՞:

— Ես լավ դաստիարակություն եմ ստացել, մադամ:

— Հավատում եմ:

— Մի՞թե իմ մեջ որևէ բան առիթ է տալիս մտածելու, թե ես ընդունակ եմ անօրինական և անօրինապահ արարքների:

— Փո՛ւհ, — ասաց Զոյան, — այսպիսի ուժեղ, համարձակ, հիանալի մարդ, ծովահենների ժառանգ, և այդ բոլորը՝ մի տիմար կնկա այս տաք, ձանձրալի ջրափոսում ման տալու համար: Փո՛ւհ:

— Բայց, մադամ. . .

— Մի որևէ հիմարություն արեք, Յանսեն: Ես ձանձրանում եմ. . .

— Լսում եմ, հիմարություն անել:

— Երբ ահավոր փոթորիկ կլինի, նավը նստեցրեք քարերի վրա:

— Լսում եմ, նավը նստեցնել քարերի վրա. . .

— Դուք լո՞րջ մտադիր եք անել այդ բանը:

— Եթե դուք հրամայեք. . .

Նա նայեց Զոյային: Նրա աչքերում վիրավորանք և զուսպ հիացմունք կար: Զոյան ձգվեց ու ձեռքը դրեց նրա սպիտակ թիքի վրա:

— Ես ձեզ հետ կատակ չեմ անում, Յանսեն: Ընդամենը երեք շաբաթ է, ինչ գիտեմ ձեզ, բայց ինձ թվում է, թե դուք այն մարդկանցից եք, ովքեր կարող են անձնվեր լինել (Յանսենի ծնուտները սեղմվեցին): Կարծում եմ՝ դուք ընդունակ եք այնպիսի արարքների, որ դուրս են գալիս օրինապահության սահմաններից, եթե. . .

Այդ պահին նավապետի կամրջակի ողորկ, բրոնզափայլ սանդուղքի վրա ցած վազող ոսրեր երևացին: Յանսենն ասաց հապճեպով.

— Ժամանակն է, մադամ. . .

Ցած իջավ նավապետի օգնականը: Պատվի առավ.

— Մարդամ Լամոլ, տասներկուսից երեք բոպե է պակաս, հիմա ձեզ կկանչեն ռադիոյով. . .

## 54

Քամին առագաստի պես ուղցնում էր սպիտակ շրջազգեստը: Զոյան բարձրացավ վերին տախտակամած, մոտեցավ ռադիոհեռագրի խցիկին: Աչքերը կկոցելով, ներշնչեց աղի օդը: Վերևից, նավապետի կամրջակի վրայից, անընդգրկելի էր թվում ապակեփայլ-խայտախարիկ ծովի վրա ընկնող արեգնալույսը:

Զոյան, բռնած բազրիքից, նայում էր հափշտակված: Զբոսանավի նեղ կորպուսը՝ վեր ցցված քթակայմով, բարակ քամով պարուրված սուրում էր այդ ջրաթույր լույսի միջով:

Սիրտն ուժգին բարախում էր երջանկությունից: Թվում էր՝ ձեռքը բազրիքից պոկելուն պես կճախրի օդում: Հրաշք արարած է մարդը: Ի՞նչ թվերով կարելի է չափել նրա

փոխակերպումների անսպասելիությունները: Կամքի չար ճառագումները, տենչանքների հոսանուտ թույնը, ասես փշուր-փշուր եղած հոգին,— Զոյայի ամբողջ տանջալի մութ անցյալը ետ էր քաշվել, լուծվել այդ արեգնալույսի մեջ. . .

«Ես ջահել եմ, ջահել,— այսպես էր թվում նրան արևին միտված քթակայմով նավի տախտակամածի վրա,— ես գեղեցիկ եմ, ես բարի եմ»:

Քամին շոյում էր նրա պարանոցը, դեմքը: Զոյան ներշնչանքով իրեն երջանկություն էր մաղթում: Դեռևս ուժ չունենալով կտրվելու լույսից, երկնքից, ծովից, նա պտտեց դռան պար բռնակը, մտավ ապակեպատ խցիկը, ուր արևահայաց կողմից իջեցված էր գալարավարագույրը, վերցրեց լսափողերը: Արմունկները դրեց սեղանին, աչքերը ծածկեց մատներով. սիրտը դեռ տաք էր: Ասաց նավապետի օգնականին:

— Գնացեք:

Օգնականը դուրս գնաց՝ ծուռ-ծուռ նայելով մադամ Լամոլին: Բացի այն, որ այդ կինը դիվայնորեն գեղեցիկ էր, բարեկազմ, նրբին, «փառահեղ», նրա ներկայությունը նաև անբացատրելի հուզում էր:

## 55

Ժամանակաշափի կրկնակ հարվածներն ազդարարեցին տասներկուսը: Զոյան ժպտաց. ընդամենը երեք րոպէ էր անցել, ինչ նա ելել էր ծածկոցի տակի թիկնաթոռից:

«Հարկավոր է վարժվել այն բանին, որ զգաս, յուրաքանչյուր րոպէն հավերժություն դարձնես,— մտածեց նա,— հարկավոր է իմանալ՝ առջևում միլիոնավոր րոպեներ կան, միլիոնավոր հավերժություններ»:

Նա մատները դրեց փոքրիկ լծակին և, ձախ շարժելով ռադիոսարքը սարեց հարյուր երեսունյոթ ու կես մետր ալիքի վրա: Փողակի սև դատարկության միջից լսվեց Ռոլինզի ծանր ու կոշտ ձայնը.

— . . . Մադամ Լամոլ, մադամ Լամոլ, մադամ Լամոլ. . . Լսեցեք, լսեցեք, լսեցեք. . .

— Այո, ես լսում եմ, հանգստացիր,— շշնչաց Զոյան:

— . . . Ամեն ինչ բարեհաջո՞ղ է: Աղետի չե՞ք ենթարկվել: Որևէ բանի կարիք չե՞ք զգում: Այսօր նույն ժամին, սովորականի պես, երջանիկ կլինիմ լսել ձեր ձայնը.. Ալիքն ուղարկեք նույն երկարությամբ սովորականի պես. . . Մադամ Լամոլ, շատ մի հեռացեք արևելյան երկայնության տասնմեկ և հյուսիսային լայնության քառասուն աստիճանից: Բացառված չե՞մոտալուտ հանդիպման հնարավորությունը: Մեզ մոտ ամեն ինչ կարգին է: Գործերը փայլուն են գնում: Ով պետք է լրի՝ լրում է: Եղեք հանգիստ, երջանիկ. . . Ցանկանում եմ անփորձանք ուղևորություն. . .

Զոյան հանեց ականջնոցները: Մի կնճիռ ակոսեց նրա ճակատը: Նայելով ժամանակաշափի պաքին, ատամների արանքից նետեց. «Զզվելի՝ Ե»... Սիրո այդ ամենօրյա ռադիոխոստովանությունները սարսափելի բարկացնում էին նրան: Ռոլինզը չի կարողանում, չի ցանկանում հանգիստ թողնել... Ի վերջո նույնիսկ պատրաստ է դիմելու ամեն տիպի հանցագործության, միայն թե իրեն թույլ տան ամեն օր խոխոցնել միկրոֆոնի մեջ. «... Եղեք հանգիստ, երջանիկ... Ցանկանում եմ անփորձանք ուղևորություն»:

## 56

Վիլ Դավրեի և Ֆոնտենեբլոյի սպանություններից և ապա լուսնի լույսով ողողված ամայի խճուղիներով Գարինի հետ կատաղի արագությամբ Հավը հասնելուց հետո Զոյան այլևս չէր հանդիպել Ռոլինզին: Այն գիշեր Ռոլինզը կրակեց նրա վրա, փորձեց վիրավորել ու սսկվեց: Թվում է, այն ժամանակ նա նույնիսկ լուր արտասվեց՝ կուշ եկած ավտոմոբիլում:

Հավրում Զոյան նստեց նրա «Արիզոնա» գրոսանավը և արշալույսին դրուս եկավ Բիսկայան ծոց: Լիսարոնում փաստաթղթեր ստացավ մադամ Լամոլ անունով և դարձավ Արևմուտքում ամենաշքեղ գրոսանավերից մեկի տերը: Լիսարոնից գնացին Միջերկրական ծով, և այնտեղ «Արիզոնան» սկսեց լողալ Խոտալիայի ափերի մոտով, ընթանալով արևելյան երկայնության տասը և հյուսիսային լայնության քառասուն աստիճանների սահմաններում:

Անհապաղ կապ հաստատվեց գրոսանավի և Ռոլինզի մասնավոր ռադիոկայանի միջև, որ Փարիզի մերձակայքում էր, Մելրնում: Նավապետ Յանսենը Ռոլինզին գեկուցում էր ճանապարհորդության բոլոր մանրամասերի մասին: Ռոլինզն ամեն օր ռադիոսարքի մոտ էր կանչում Զոյային: Զոյան ամեն երեկո գեկուցում էր իր «տրամադրության» մասին: Այդ միօրինակության մեջ անցավ տասն օր, և ահա «Արիզոնայի» ռադիոսարքերը, տարածքը շոշափելով, կարծ ալիքներ բռնեցին անհասկանալի լեզվով: Իմաց տվին Զոյային, և նա լսեց մի ձայն, որից սիրտը կանգ առավ:

— ... Զոյա, Զոյա, Զոյա, Զոյա...

Ապակուն զարկվող վիթխարի ճանճի պես, ականջնոցներում բզզում էր Գարինի ձայնը: Նա կրկնեց, կրկնեց Զոյայի անունը և որոշ միջոցից հետո՝

— ... Պատասխանիր գիշերվա մեկից երեքը...

Եվ նորից՝

— Զոյա, Զոյա, Զոյա... Եղիր զգույշ, եղիր զգույշ...

Հենց նույն գիշերը մութ ծովի վրայով, քնած Եվրոպայի վրայով, Փոքր Ասիայի դարավոր ավերակների վրայով, չորացած բույսերի փուշ ու փոշով ծածկված աֆրիկյան հարթավայրերի վրայով կանացի ձայնի ալիքներ էին թռչում.

— . . . Նրան, ով պատվիրել է պատասխանել մեկից երեքը . . .

Զոյան այդ կանչը կրկնեց մի քանի անգամ: Հետո ասաց.

— . . . Ուզում եմ տեսնել քեզ: Թեկուզի անխոհեմ քայլ է դա: Հանդիպման վայր նշանակիր խտալական ցանկացած նավահանգիստը: Ինձ անունով մի կանչի, ես քեզ կճանաչեմ ձայնից . . .

Հենց նույն գիշերը, հենց նույն պահին, երբ Զոյան համառորեն կրկնում էր կանչը՝ հուսալով, որ Գարինը որևէ տեղ՝ Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում, կորսա «Արիզոնայի» էլեկտրամագնիսների ալիքները,— երկու հազար կիլոմետրի վրա, Փարիզում, գիշերասեղանին, որի կողքին, երկտեղ մահճակալում, վերմակը մինչև քիթը քաշած միայնակ քնած էր Ռուլինզը, հեռախոսի զանգ ծղրտաց:

Ռուլինզը, վեր թռչելով, ճանկեց լսափողը: Սեմյոնովի ձայնն արագ-արագ ասաց.

— Ռուլինզ, նա խոսում է:

— Ո՞ւմ հետ:

— Վատ է լսվում, անունը չի տալիս:

— Լավ, շարունակեք լսել: Հաշվետվությունը՝ վաղը:

Ռուլինզը դրեց լսափողը, նորից պառկեց, բայց քունն արդեն փախել էր աչքերից:

Հեշտ խնդիր չէր մրրկի նման Եվրոպայի վրա տարածվող ֆոքստրոտների, ռեկլամային գորում-գրյունների, եկեղեցական խորալների, միջազգային քաղաքականությանը նվիրված հաղորդումների, օպերաների, սիմֆոնիաների, բորսայական տեղեկագրությունների, նշանավոր զավեշտարանների զվարճախոսությունների մեջ որսալ Զոյայի թույլ ձայնը:

Սեմյոնովը դրա համար օր ու գիշեր նստած էր Մեղոնում: Նրան հաջողվեց բռնել Զոյայի ձայնով ասված մի քանի կցկոտուր խոսք: Բայց այդքանն էլ բավական էր Ռուլինզի խանդոտ երևակայությունը բորբոքելու համար: Ռուլինզն իրեն նողկալի էր զգում Ֆոնտենեբլոյի գիշերից հետո: Շելգան ողջ մնաց. զլիին ահավոր սպառնալիք էր կախված: Գարինի հետ, որին Ռուլինզը հաճույքով նեզրի պես կկախեր ծառից, պայմանագիր էր կնքված: Գուցե և Ռուլինզը համառեր այն ժամանակ՝ մահը, կառավինարանը գերադասելի էր այդ դաշինքից, բայց նրա կամքը կոտրել էր Զոյան: Համաձայնության գալով Գարինի հետ, Ռուլինզը ժամանակ շահեց. թերևս այդ խելազար կինն ուշքի գա, զղա, վերադառնա... Ռուլինզն իսկապես լաց եղավ ավտոմոբիլում՝ աչքերը ճպճպացնելով, անձայն... Սատանան զիտի, թե ինչ բան էր դա՝ մի անառակ, ծախու կնկա համար... Սակայն արցունքներն աղի էին ու տառապալի... Պայմանագրի պայմաններից մեկը, ըստ նրա առաջարկի, այն էր, որ Զոյան երկարատև ճանապարհորդություն կատարի զբոսանավով: (Դա անհրաժեշտ էր հետքերը կորցնելու համար): Ռուլինզը հույս ուներ ամենօրյա ռադիոգրույցներով համոզել, զղման

հասցնել, գրավել նրան: Այդ հույսը թերևս ավելի մեծ հիմարություն էր, քան արցունքներն ավտոմոբիլում:

Ըստ Գարինի հետ պայմանավորվածության, Ռոլինզն անհապաղ սկսեց «համընդհանուր գրոհը քիմիայի ճակատում»: Այն օրը, երբ Զոյան Հավում նստեց «Արիզոնա» գրոսանավը, Ռոլինզը գնացրով ետ եկավ Փարիզ: Նա ոստիկանությանը տեղեկացրեց, որ ինքը եղել է Հավում և վերադարձի ճանապարհին, զիշերը ենթարկվել է բանդիտների հարձակման (երեք մարդ՝ թաշկինակներով ծածկված երեսներով): Նրանք խլել են իր մոտի փողն ու ավտոմոբիլը: (Գարինն այդ ընթացքում, ինչպես պայմանավորվել էին, արևմուտքից արևելք կտրել էր Ֆրանսիան, Լյուքսեմբուրգում անցել սահմանն ու առաջին պատահած ջրանցքում սուզել Ռոլինզի ավտոմոբիլը):

Սկսվեց «գրոհը քիմիայի ճակատում»: Փարիզի լրագրերը հսկայական իրարանցում առաջ բերին: «Առեղծվածային ողբերգություն Վիլլ Դավրեում», «Խորհրդավոր հարձակում ոռուսի վրա Ֆնոնտեներլոյի գրոսայգում», «Քիմիայի արքայի լւսի կողոպատրը», «Ամերիկյան միլիարդները Եվրոպայում», «Գերմանական ազգային արդյունաբերության կործանումը», «Ռոլինզը կամ Մուսկվան»,— այս ամենը խելացիորեն ու ձարպկորեն պատասխած էր մի կծիկի մեջ, որը, իհարկե, դեմ առավ քաղքենու՝ արժեթղթեր ունեցողի կոկորդին: Բորսան սասանվում էր հիմքից: Նրա գորշ այուների միջև, սև գրատախտակների մոտ, որոնց վրա հիստերիկ ձեռքերը կավճով գրում էին, ջնջում, գրում ընկնող արժեթղթերի հաշվարկը, ոռնում էին պայթելու պատրաստ աշքերով, դարչնագույն փրփուրը բերաններին խելագարված մարդիկ:

Բայց առայժմ ոչնչացողները մանր ձկներ էին՝ այդ ամենը դեռ հանաք բան էր: Խոշոր արյունաբերողներն ու բանկերը, ատամները սեղմած, կաշշել էին բաժնետոմսերի փաթեթներից և մնում էին ոտքի վրա: Նրանց հեշտ չեր գետին տապալել նույնիսկ Ռոլինզի եղջյուրներով: Այդ առավել լուրջ գործողության համար էր հենց պատրաստվում Գարինի հարվածը:

Գարինը «կատաղի թափով», ինչպես ճիշտ գուշակել էր Շելգան, Գերմանիայում սարք էր պատրաստում ըստ իր մոդելի: Նա գնում էր քաղաքից քաղաք՝ տարբեր գործարանների տարբեր մասեր պատվիրելով: Փարիզի հետ հաղորդակցություն պահպանելու համար օգտվում էր Քյոլնի մի լրագրի մասնավոր հայտարարությունների բաժից: Ռոլինզը, իր հերթին, Փարիզի բուլվարային թերթերի մեկում մեջտեղում էր երկու-երեք տողը. «Ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել անիլինի վրա...», «Թանկ է յուրաքանչյուր օրը, դրամ մի խնայեք...» և նման բաներ:

Գարինը պատասխանում էր. «Ավելի շուտ կավարտեմ, քան ենթադրում էի...», «Տեղը գտնված է...», «Անցնում եմ զործի...», «Չնախատեսված հապաղում...»:

Ռոլինզը՝ «Անհանգստանում եմ, նշանակեք օրը...»:

Գարինը պատասխանեց. «Հաշվեք երեսունինգ՝ պայմանագիրն ստորագրելու օրվանից...»:

Մոտավորապես հաղորդագրությանը համընկավ Սեմյոնովի գիշերային հեռախոսագիրը Ռոլինզին: Ռոլինզը մոլեգնեց՝ իրեն խաղացնում էին մատների վրա: Գաղտնի հաղորդակցությունը՝ «Արիզոնայի» հետ, ամեն ինչից բացի, վտանգավոր էր: Սակայն Ռոլինզը ոչ մի բառով շմատնեց իրեն, երբ մյուս օրը խոսում էր մադամ Լամոլի հետ:

Հիմա, անքնության ժամերին, Ռոլինզն սկսեց վերստին «քննել» մահացու թշնամու հետ խաղացվող իր «պարտիան»: Սխալներ գտավ: Պարզվեց, որ Գարինն այնքան էլ լավ պաշտպանված չէ: Նրա սխալն այն էր, որ համաձայնեց Զոյայի ճանապարհորդությանը. պարտիայի ավարտը նրա համար կանխորոշված է: Մատ կհայտարարվի «Արիզոնայի» վրա:

## 57

Բայց «Արիզոնայի» վրա կատարվում էր ամենևին էլ ոչ այն, ինչի մասին մտածում էր Ռոլինզը: Նա Զոյային հիշում էր իբրև խելացի, հանգիստ, շրջահայաց, պաղ, նվիրված կին: Նա զիտեր, թե Զոյան ինչ քարշանքով էր նայում կանացի թուլություններին: Նա չէր կարող թույլ տալ, որ շատ երկարեր Զոյայի հափշտակվածությունն այդ աղքատ թափառաշրջիկ, ավագակ Գարինով: Լավ զրոսանքը Միջերկրական ծովում պետք է որ պայծառացներ նրա միտքը:

Զոյան, իրոք որ, կարծես մղձավանջային երազի մեջ լիներ, երբ Հավրում զրոսանավ նստեց: Օվկիանոսում միայնության մի քանի օրը հանգիստ բերեց նրան: Նա արթնանում էր, ապրում ու քնում կապույտ լուսի, ջրի ցոլքերի մեջ, հավերժության պես հանդարտ ալեծիանքի տակ: Ցնցվելով խորշանքից, նա մտաբերում էր կեղտոտ սենյակն ու Լենուարի սեպերը բաց, ապակեփայլ աչքերով դին, եռացող ծխաշերտը Բաղաքթի կրծքի լայնքով, խոնավ՝ բացատը Ֆոնտենեֆլոյում և Ռոլինզի անսպասելի կրակոցները. կարծես կատաղած շուն էր սպանում...

Բայց, այնուհանդերձ, նրա միտքը չպարզվեց, չպայծառացավ, ինչպես ակնկալում էր Ռոլինզը: Հարթմնի թե քնի մեջ նրա աչքին երևում էին հրաշք կողիներ, մարմարե պալատներ՝ օվկիանոս իջնող սանդուղքներով... Գեղեցիկ մարդկանց բազմություններ, ծածանվող դրոշներ... Եվ ինքը՝ որպես այդ հեքիաթային աշխարհի տիրուիի...

Երազներն ու տեսիլքները՝ կապույտ մետաքսէ ծածկի ներքո, թիկնայիսոում ընկողմանած պահերին, Վիլ Դավրեռում Գարինի հետ նրա զրույցի (սպանությունից մեկ ժամ առաջ) շարունակությունն էին: Աշխարհիս երեսին միայն մի մարդ՝ Գարինը նրան կհասկանար հիմա: Բայց նրա հետ էին կապված նաև Լենուարի ապակեփայլ աչքերն ու Գաստոն Բաղաքթի ահավոր բացված բերանը: Սիա թե ինչու Զոյայի սիրտը կանգ առավ, երբ անսպասելիորեն ռադիոյի փողակի մեջ մոթմոթաց Գարինի ձայնը... Այն ժամանակվանից Զոյան ամեն օր կանչում էր նրան, թախանձում, սպառնում: Ուզում էր տեսնել նրան ու վախենում էր դրանից: Գարինը նրան թվում էր սև բիծ ծովի ու երկնքի լազուր մաքրության վրա... Զոյան ուզում էր պատմել նրան իր երբեմնի երազների մասին: Ուզում էր հարցնել,

թե ուր է հապա նրա Օլիվինյան գոտին: Զոյան դեսուդեն էր ընկնում զբոսանավի վրա՝ նավապետ Յանսենին ու նրա օգնականին զրկելով հոգու արփությունից: Գարինը պատասխանեց. «... Սպասիր: Կյինի այն ամենը, ինչ դու ուզում ես: Միայն կարողացիր ցանկալ: Յանկա, խենթացիր՝ դա լավ է: Դու ինձ այդպես ես պետք: Առանց քեզ իմ գործը մեռած է»:

Այս էր նրա վերջին ռադիոխոսքը, որ ճիշտ ու անկորուստ որսացել էր Ռուլինզը: Այսօր Զոյան սպասում էր իր այն հարցի պատասխանին, թե ստույգ ո՞ր օրը պետք է դիմավորել նրան նավի վրա: Նա ելավ տախտակամած և արմունկներով կործնեց բազրիքին: Զրոսանավը հազիվ էր շարժվում: Քամին դադարել էր: Արևելքում շղարշվում էր դեռևս անտեսանելի ցամաքի գոլորշին, և ծիսի մոխրագույն այուն էր բարձրանում Վեզուվի երախից:

Կամրջակի վրա նավապետ Յանսենն աչքերից իջեցրեց հեռադիտակը, և Զոյան զգաց, թե ինչպես է նա կախարդվածի պես նայում իրեն: Ասենք, ինչպես կարող էր չնայել, երբ երկնքի ու ջրի բոլոր հրաշքներն արարված էին միայն այն բանի համար, որ դրանցով զմայվեր մադամ Լամոլը՝ բազրիքի մոտ, կաթնավուն-լազուր անհունության վրա կանգնած:

Անհավատալի, ծիծառելի էին թվում այն ժամանակները, երբ Զոյան մի դյուժին մետաքս գուլպաների, հազուստեղենի մեծ տան մի զգեստի, պարզապես հազար ֆրանկի համար թույլ էր տալիս, որ փակուստեին իրեն կարծիք մատներով մատներով ու թխակապույտ այտերով այն ճապուկ տղաները... Թո՛ւ...

Փարիզ, պանդոկներ, թեթևսույիկ աղջիկներ, զազրելի տղամարդիկ, փողոցային գարշահոտություն, փող, փող, փող՝ ի՞նչ ձղձիմ կյանք... Ժանտահոտ աղբափոսում վխտացող որդերի կյանք...

Գարինը նրան ասաց այն զիշեր. «Յանկանաք, և կյինեք աստծոն կամ սատանայի փոխանորդը՝ որը որ ձեր ճաշակով է: Ձեր մեջ ցանկություն կառաջանա ոչնչացնել մարդկանց.— Երբեմն զգացվում է որա կարիքը,— ձեր իշխանությունն ամբողջ մարդկության վրա է լինելու... Ձեզ նման կինք, Զոյա, կարող է գտնել Օլիվինյան գոտու հերիաթային գանձերի օգտագործման կերպը»...

Զոյան մտածեց.

«Հոռմեական կայսրերն աստվածացնում էին իրենք իրենց: Հավանաբար այդ բանը նրանց բավականություն էր պատճառում: Մեր ժամանակներում ևս դա վատ զվարձալիք չէ: Մի որևէ բանի համար պետք է պիտանի լինեն, չէ, մարդուկները: Աստծու մարմնավորում, կենդանի աստվածուիկ՝ հերիաթային պերճանքի մեջ... Ինչու չէ, մամուլն իմ աստվածառումը կարող է նախապատրաստել հեշտ ու արագ: Աշխարհը կառավարում է հերիաթայնորեն գեղեցիկ մի կին: Դա անկասկած հաջողություն կունենա: Կարելի է որևէ կղզում հոյակապ քաղաք կառուցել ընտրյալ պարմանիների՝ աստվածուիու ենթադրյալ

սիրեկանների համար: Աստվածուհու երևոյթով այդ սիրաքաղց տղաների մեջ հայտնվելը վաստ հույզեր ու ապրումներ առաջ չի բերի»:

Զոյան թոթվեց ուսն ու նորից նայեց նավապետին.

— Եկեք այստեղ, Յանսեն:

Յանսենը մոտեցավ՝ ոտքերը փափուկ ու լայն դնելով տաք տախտակամածի վրա:

— Չեզ չի<sup>18</sup> թվում, Յանսեն, որ ես խելազար եմ:

— Այդպիսի բան չի թվում ինձ, մադամ Լամոլ, և չի թվա՝ ինչ ել որ ինձ հրամայեք:

— Շնորհակալություն: Ես ձեզ նշանակում եմ աստվածային Զոյայի ուխտի կոմանդոր<sup>18</sup>:

Յանսենն արագ թարթեց շիկակարմիր արտևանունքները: Հետո երկու մատը տարավ հովարին: Ցած թողեց ձեռքն ու նորից ճպճպացրեց աչքերը: Զոյան ծիծաղեց, և նրա շուրթերը հավաքվեցին ժայիտի մեջ:

— Ամենաանիրազործելի ցանկություններն իրականացնելու հնարավորություն կա, Յանսեն... Այն ամենը, ինչ կարող է երևակայել կինը այսպիսի տոք կեսօրին... Բայց հարկ կլինի պայքարել...

— Լսում եմ, պայքարել— կարձ պատասխանեց Յանսենը:

— Քանի<sup>19</sup> հանգույց է անում «Արիզոնան»:

— Մինչև քառասուն:

— Ի՞նչ նավեր կարող են հասնել նրան բաց ծովում:

— Շատ քիչ նավեր...

— Թերևս ստիպված լինենք երկարատև հետապնդման ենթարկվել:

— Հրամայում եք հեղուկ վառելանյութի լրիվ պաշա՝ ու վերցնել:

— Այո: Պահածո, խմելու ջուր, շամպայն... Մենք շատ վտանգավոր ձեռնարկման ենք գնում, նավապետ Յանսեն:

— Լսում եմ, զնալ վտանգավոր ձեռնարկման:

— Բայց, իմացած լինեք, ես հավատացած եմ, որ կհաղթենք...

Ծովային ժամանակաշափը զարկեց տասներկուսն անց կես... Զոյան մտավ ռադիոհեռախոսային խցիկը: Նստեց սարքի դեմ: Շարժեց ռադիոընդունիչի լծակը: Չզիտես որտեղից մեջ ընկավ ֆոքստրոտի մի քանի տակտ:

<sup>18</sup> Կրոնասասպետական ուխտի բարձրագույն կոչում միջնադարում (ծ. թ.):

Հոնքերը կիտելով՝ նայեց ժամանակաշափին: Գարինը լոռում էր: Զոյան նորից սկսեց շարժել լծակը՝ մատների դողը հազիվ պահելով:

... Անծանոթ, անշտապ մի ձայն ոռւսերեն ասաց ուղղակի նրա ականջի մեջ.

«... Եթե ձեզ համար թանկ է ձեր կյանքը... ուրբաթ օրն իջեք Նեապոլ... «Սպլենդիդ» հյուրանոցում տեղեկությունների սպասեք մինչև շաբաթ կեսօր»:

Դա ինչ-որ նախադասության ավարտ էր՝ ուղարկված չորս հարյուր քանամեկ մետր երկարությամբ ալիքով, այսինքն այն կայանի ալիքով, որից այդ ողջ ժամանակամիջոցում օգտվում էր Գարինը:

## 58

Երեք գիշեր անընդհատ մոռանում էին փակել այն սենյակի պատուհանի փեղկերը, ուր պառկած էր Շելգան: Ամեն անգամ նա այդ մասին հիշեցնում էր կարմելիտուիի քրոջը: Ուշադիր հետևում էր, որ փեղկերի երկու մասերը միացնող սողնակը փակվի ինչպես պետք է:

Այդ երեք շաբաթվա ընթացքում Շելգան կազդուրվել էր այնքան, որ ելնում էր մահճակալից առաջ, հնարավորին չափ մոտ սոսու փարթամ սաղարթին, սև կեռնեխներին և սիզամարգի մեջ տարածվող ջրափոշու ծիածաններին:

Այստեղից երևում էր հիվանդանոցի ամբողջ պարտեզը՝ շրջափակված քարե խուլ պատով: Տասնութերորդ դարում այս վայրը պատկանել էր վանքի, որի գոյությանը վերջ էր տվել հեղափոխությունը:

Վանականները չեն սիրում հետաքրքրվող աչքեր: Պատը բարձր էր, և վրան, ամբողջ երկարությամբ, ջարդված ապակու կտորներ էին պսպղում:

Պատի վրայով կարելի էր անցնել միայն մյուս կողմից սանդուղք դնելով: Հիվանդանոցին հարող նեղլիկ փողոցները խաղաղ էին ու թափուր, բայց և այնպես լապտերներն այնտեղ այնքան վատ էին լուսավորում, և այնքան հաճախ էր լոռության մեջ պատի ետևից ոստիկանների ոտնաձայն լսվում, որ սանդուղքի հարցը շարքից դուրս էր գալիս:

Իհարկե, եթե պատի վրայի ապակու կտորտանքը չլիներ, ճարպիկ մարդը կարող էր մազլցել անցնել նաև առանց սանդուղքի: Ամեն առավոտ Շելգան գալարավարագույրի ետևից զննում էր ամբողջ պատը՝ մինչև վերջին քարը: Վտանգն սպառնում էր միայն այս կողմից: Ռոլինզի ուղարկած մարդը դժվար թե հանդիներ հայտնվել շենքի ներսից: Բայց որ մարդասպանն այսպես թե այնպես հայտնվելու էր՝ Շելգան չէր կասկածում:

Նա հիմա սպասում էր բժշկի բուժազննմանը, որ դուրս գրվի: Դա հիվանդանոցում բոլորն էլ գիտեին: Բայց այս անգամ պարզվեց, որ բժիշկը հիվանդացել է: Շելգային ասացին, որ առանց ավագ բժշկի քննության նրան դուրս չեն գրի: Նա նույնիսկ չփորձեց բողոքել: Իմաց

տվեց սովետական դեսպանություն, որ իր ուտելիքն այնտեղից բերեն: Հիվանդանոցի ապուրը թափում էր լվացարանը, հացը գցում էր կեռնեխներին:

Շելգան գիտեր, որ Ռուինզը պիտի ազատվեր միակ վկայից: Նա հիմա գրեթե չէր քնում, այնքան մեծ էր հուզումը: Կարմելիտուի քույրը նրա համար լրազրեր էր բերում. ամբողջ օրը Շելգան գործի էր դնում մկրատը և ուսումնասիրում կտրած հողվածները: Խլինովին արգելել էր հիվանդանոց գալ (Վոլֆը Գերմանիայում էր, Ռայնում, ուր տեղեկություններ էր հավաքում Գերմանական անիլինային ընկերության դեմ Ռուինզի պայքարի մասին):

Առավոտյան սովորականի պես մոտենալով պատուհանին, Շելգան նայեց դեպի պարտեզն ու իսկույն էլ քաշվեց վարագույրի ետևը: Նա նույնիսկ ուրախացավ: Վերջապես... Պարտեզում, հյուսիսային կողմից, լրենիով կիսածածկված պատին հենված էր պարտիզանի սանդուղքը, որի վերևի ծայրը մի կես արշինի չափ բարձրանում էր ապակու փշրանքներից:

Շելգան ասաց.

— Հիանալի՝ է, սղիկաներ:

Մնում էր միայն սպասել: Ամեն ինչ մտածված էր արդեն: Աջ ձեռքը թեև ազատված էր վիրակապից, բայց դեռ թույլ էր: Զախը՝ փայտաձողիկների ու գիպսի մեջ, քույրը բինտերով ամուր կապել էր կրծքին: Միակ գենքն էր դա, որով Շելգան կարող էր պաշտպանվել:

Չորրորդ գիշերն էլ քույրը մոռացավ փեղկերը փակել: Շելգան այս անգամ չըողոքեց և ժամը իննից քնած ձևացավ: Լսեց, թե ինչպես զույգ հարկերում չխկացին փեղկերը: Նրա պատուհանը նորից լրիվ բաց էր: Երբ լույսը հանգավ, նա վեր թռավ մահճակալից և աջ թույլ ձեռքով ու ատամներով սկսեց քանդել ձախ ձեռքը պահող կապը:

Կանգ առավ ու շունչը պահած ականջ դրեց: Վերջապես ձեռքն ազատ կախված էր: Կարող էր ծալել կիսով չափ: Դուրս նայեց դեպի փողոցի լապտերով լուսավորված պարտեզը. սանդուղքը նախկին տեղում էր, լորենու ետևում: Նա կոլուեց ծածկոցը, մտցրեց սավանի տակ: Կիսախավարում թվում էր, թե մարդ է պառկած մահճակալին:

Պատուհանից այն կողմ լուս էր, միայն կաթկթոց էր լսվում: Փարիզի վրա, ամպերի մեջ թրթռում էր մայրամուտի բաց մանուշակագույն հրացուղը: Զբոսարանների աղմուկն այստեղ չէր հասնում: Անշարժ կախվել էր սոսու սև ձյուղը:

Ինչ-որ տեղ ավտոմոբիլ գոմոաց: Շելգան լարվեց. նրան թվաց այդ պահին, թե լսում է սոսու ձյուղին քնած թռչունի սրտի տրոփյունը: Երևի երկար ժամանակ անցավ: Պարտեզից կրծտոց ու շրջուն հասավ, կարծես փայտ էին շփում կրաքարին:

Շելգան ետ-ետ գնաց դեպի պատն ու մտավ վարագույրի ետևը: Իջեցրեց գիպսե ձեռքը: «Ո՞վ է: Տեսնես ո՞վ է,— մտածեց:— Մի՞թե Ռուինզն ինքը»:

Խշխացին տերենները, կեռնեխն անհանգստացավ: Շելգան նայում էր պատուհանից աղոտ լուսավորված հատակին, ուր հայտնվելու էր մարդու ստվերը:

«Զի կրակի,— մտածեց,— պետք է սպասել կեղտոտ մի բանի, ասենք՝ ֆուզենի»...

Պարկետի վրա սկսեց բարձրանալ ձակատին խոր քաշված լայնեզր գլխարկով մի զլսի ստվեր: Շելգան սկսեց կողմ տանել ձեռքը, որ հարվածն ուժեղ լինի: Ստվերն առաջ եկավ մինչև ուսերը, բարձրացրեց շոված մատները...

— Շելգա, ընկեր Շելգա, — շշնջաց ստվերը ոռուսերեն, — ես եմ, չվախենաք...

Շելգան սպասում էր ամեն ինչի, բացի այդ խոսքերից, այդ ձայնից: Ակամա ճիշ արձակեց: Մատնեց իրեն, և մարդն իսկույննեթ մի ցատկով թռավ անցավ լուսամուտագողի վրայով: Պաշտպանվելու համար առաջ պարզեց ձեռքերը: Գարինն էր:

— Դուք հարձակման էիք սպասում, այդպես էլ կարծում էի, — ասաց նա շտապով, — այսօր զիշերը ձեզ սպանելու են: Դա ձեռնտու չէ ինձ: Սատանան գիտի, թե ինչ վտանգի եմ ենթարկվում, բայց ձեզ պիտի փրկեմ: Գնանք, ես ավտոմոբիլով եմ:

Շելգան պոկվեց պատից:

Գարինը զվարթ փայլեցնում էր ատամները՝ դեռ կողմ տարված գիպսի ձեռքը տեսնելով:

— Լսեք, Շելգա, վկա է աստված, ես մեղավոր չեմ: Հիշո՞ւմ եք մեր պայմանը Լենինգրադում: Ես ազնիվ եմ խաղում: Ֆոնտենեբլոյի անախորժության համար դուք պարտական եք բացառապես այդ սրիկա Ռոլինգին: Կարող եք հավատալ ինձ, գնանք, ամեն վայրկյանը թանկ է:

Շելգան խոսեց վերջապես.

— Լավ, ասենք թե ինձ տարաք, հետո՞:

— Ես ձեզ կթաքցնեմ... Մի կարծ ժամանակով, չվախենաք: Մինչև Ռոլինգի ստանամ կեսը... Դուք թերթ կարդո՞ւմ եք: Ռոլինգը ձախլիկ բախտ ունի, բայց չի կարող ազնիվ խաղալ: Ինչքա՞ն է ձեզ պետք, Շելգա: Ասեք առաջին թիվը: Տա՞սը, քսա՞ն, հիսո՞ւն միլիոն: Ստացական կտամ...

Գարինը խոսում էր ցածրաձայն, փութով, զառանցելու պես, դողդողում էր նրա ամբողջ դեմքը:

— Հիմարություն մի արեք, Շելգա: Ձեր սկզբունքայնությո՞ւնը բռնեց, ինչ է... Առաջարկում եմ միասին գործել ընդդեմ Ռոլինգի... Հը... Գնացինք...

Շելգան համառորեն տարութերեց գլուխը.

— Չեմ ուզում: Չեմ զա:

— Միևնույն է, ձեզ կսպանեն:

— Տեսնենք:

— Ոոլինզը կաշառել է բոլորին՝ հիվանդապահուհուն, պահակին, վարչությանը: Չեզ կիսեղեն: Գիտեմ... Այս գիշերը չեք անցկացնի... Նախազգուշացրե՞լ եք ձեր դեսպանությանը: Լավ, լավ... Դեսպանը բացատրություն կպահանջի: Ֆրանսիական կառավարությունը ծայրահեղ դեպքում ներողություն կինդրի... Բայց դուք դրանից ձեզ լավ չեք զգա: Ոոլինզին պետք է, որ մեջտեղից վերացնի վկային...

Նա թույլ չի տա, որ դուք ոտք դնեք սովետական դեսպանության շեմից ներս...

— Ասի՝ չեմ զա... Չեմ ուզում...

Գարինը շունչ առավ: Մի հայացք նետեց պատուհանի կողմը:

— Լավ: Որ այդպես է՝ կտանեմ առանց ձեր ցանկության:

— Նա մի քայլ ետ գնաց, ձեռքը խոթեց վերարկուի գրպանը:

— Այսինքն ինչպե՞ս՝ առանց իմ ցանկության:

— Այնպես...

Գարինը կտրուկ շարժումով գրպանից հակագազի կարճ գլանով դիմակ դուրս քաշեց, արագ դրեց բերանին, և Շելգան չհասցրեց նույնիսկ ձշալ՝ նրա դեմքին յուղանման ինչ-որ հեղուկի շիթ զարկեց... Երևաց ու անհետացավ միայն Գարինի ձեռքը՝ ուստինե տանձ սեղմելիս... Շելգան շնչահեղձ եղավ բուրավետ, անուշ թմրանյութից...

## 59

— Նորություններ կա՞ն:

— Այո: Բարև ձեզ, Վոլֆ:

— Ես ուղիղ կայարանից եմ զալիս, քաղցած եմ, ինչպես տասնութ թվին:

— Ուրախ եք երևում, Վոլֆ: Շա՞տ բան իմացաք:

— Որոշ բաներ... Այստե՞ղ ի խոսենք:

— Այո, բայց միայն արագ:

Վոլֆը նստեց Խլինովի կողքին, հեծյալ Հենրիի Չորրորդի հուշարձանի պատվանդանի մերձ գրանիտե նստարանին, թիկունքով Կոնսիերժերիի սև աշտարակներին դարձած: Ներքևում, այստեղ, ուր Սիտե կղզին ավարտվում էր սուր հրվանդանով, ջրի վրա թեքված լացող մի ուրի կար: Այստեղ ժամանակով խարույկների վրա ջղածզվում էին Տամպիերների ուխտի ասպետները: Հեռու-հեռվում, գետի ջրերում անդրադառն տասնյակ կամուրջներից այն կողմ, մայր էր մտնում արևը մոխրանարնջագույն ճաճանչների մեջ: Գետի ափերին, ավագ լցրած բեռնանավերում կարթերը ձեռքերին

նստած էին ֆրանսիացիներ՝ ինֆլյացիայի, Ռուինգի և համաշխարհային պատերազմի պատճառով սնանկացած ազնիվ բուրժուաներ: Զախ ափին, գրանիտե ցածրիկ եզրապատի վրա, երկար, մինչև արտաքին գործերի մինհատրություն հասնող շարանով իրիկնային արևի տակ ձանձրանում էին հնագրավաճառները՝ այդ քաղաքում այլևս ոչ ոքի պետք չեկող գրքերի կողքին:

Այստեղ իր դարն էր ապրում հին Փարիզը: Առավինյա փողոցի հին գրքերի մոտ, թռչունների վանդակների մոտ, մոայլադեմ ձկնորսների մոտ դեռ թափառում էին սկլերոտիկ աչքերով, բերանները ծածկող բեղերով, քղանցքաբաց թիկնոցներով, ծղոտե հնամաշ զլիարկներով տարեց մարդիկ... Մի ժամանակ դա իրենց քաղաքն էր... Ահա այնտեղ, սատանան տանի, Կոնսիերժերիում բառաշում էր Դանտոնը՝ քարշեքարշ սպանդանոց տարփող ցուլի նման: Ահա այնտեղ, աջում, Լուվրի գրաֆիտե տանիքներից այն կողմ, ուր մշուշաքողի մեջ թյուիլրիի այզիներն են, այնտեղ թեծ մարտի էին գնում, երբ Ռիվոլի փողոցով մեկ կաղկանձում էր գեներալ Գալիֆեի հրետառումբը: Ախ, ինչքան ուսկի ուներ Ֆրանսիան: Այստեղ ամեն քար, թե լսել գիտես, թեզ կպատմի մեծ անցյալի մասին: Եվ ահա,— թե ինչո՞ւ սատանան էլ գլուխ չի հանի,— այս քաղաքում տեր ու տնօրեն դարձավ անդրծովյան հրեշը՝ Ռուինգը, և հիմա բարեմիտ բուրժուային մի բան է մնում՝ ջուրը զցել կարիք ու նստել գլուխը կախ... Է՝ հե-հե... Օ՝ լա-լա...

Թունդ ծխախոտով լցված ծխամորձը վառելով, Վոլֆն ասաց.

— Վիճակն այսպիսին է: Գերմանական անիլինային ընկերությունը միակն է, որ ոչ մի բանում համաձայնության չի գալիս ամերիկացիների հետ: Ընկերությունը քսանութ միլիոն մարկ պետական նպաստ է ստացել: Այժմ Ռուինգի բոլոր ջանքերն ուղղված են այն բանին, որ տապալի գերմանական անիլինը:

— Նա խաղում է անկմա՞ն վրա,— հարցրեց Խլինովը:

— Այս ամսի քսանութին վաճառելու է հսկայական գումարի անիլինյան բաժնետոմսեր:

— Բայց դա շատ կարևոր տեղեկություն է, Վոլֆ:

— Այո, մենք ընկել ենք հետքի վրա: Ռուինգը, ըստ երևույթին, համոզված է, որ իր խաղը լավ ավարտ կունենա, թեև բաժնետոմսերի արժեքը չի ընկել մի պֆենինգ անգամ, իսկ այսօր արդեն քսանն է... Դուք հասկան՞ւմ եք, թե ինչն է այն միակ բանը, որի վրա նա կարող է հույս դնել:

— Ուրեմն պատրաստե՞լ են ամեն ինչ:

— Կարծում եմ՝ սարքն արդեն տեղադրված է:

— Այնտեղ, ուր անիլինային ընկերության գործարաննե՞րն են:

— Ռայնում, Ն.-ի մոտ: Եթե Ռուինգը կործանի անիլինը՝ եվրոպական ամբողջ արդյունաբերության տերը կդառնա: Մենք չպետք է թույլ տանք, որ բանը հասնի աղետի: Մեր պարտքն է՝ փրկել գերմանական անիլինը: (Խլինովն ուսերը թոթվեց, բայց լուր մնաց):

Ես հասկանում եմ, ինչ լինելու է՝ կլինի: Միայն երկուսով՝ ես ու դու, չենք կարող կասեցնել Ամերիկայի գրոհը: Բայց, սատանան զիտի, պատմությունը երբեմն անսպասելի ֆոկուսներ է անում:

— Հեղափոխությունների նմա՞ն:

— Հենց թեկուզ այդպես:

Խլինովը նրան նայեց նույնիսկ որոշ զարմանքով: Վոլֆի աչքերը կլոր էին, դեղին, չար:

— Բուրժուաները չեն փրկի Եվրոպան, Վոլֆ:

— Գիտեմ:

— Այո՞ :

— Այս ուղևորության ժամանակ մի լավ շուրջս նայեցի... Բուրժուան՝ ֆրանսիացի, գերմանացի, անգլիացի, իտալացի, հանցավոր կերպով, կուրորեն, լկտիաբար ծախծնում է հին աշխարհը: Սա թե ինչով ավարտվեց կուլտուրան՝ աճուրդով... Ով ավելին կտա...

Վոլֆը կաս-կարմիր կտրեց.

— Ես դիմեցի իշխանություններին, ակնարկեցի վտանգը, խնդրեցի օգնել Գարինին գտնելու... Ես նրանց ահավոր խոսքեր ասացի... Ծիծաղեցին վրաս... Հե՛րն անիծած... Ես ետ կանգնողներից չեմ:

— Ի՞նչ իմացաք Ռայնում, Վոլֆ:

— Իմացա, որ... որ անիլինային ընկերությունը գերմանական կառավարությունից ուսազմական խոշոր պատվերներ է ստացել: Անիլինային ընկերության գործարաններում արտադրության ընթացքն այժմ առավել վտանգավոր փուլում է: Համարյա հինգ հարյուր տոննա տետրիլ կա գործադրության մեջ:

Խլինովն արագ ելավ տեղից: Զեռնափայտը, որի վրա կորնել էր, ձկվեց: Նստեց նորից:

— Թերթերում հողված երևաց բանվորական թաղամասերն այդ անիծյալ գործարաններից հնարավորին չափ հեռացնելու անհրաժեշտության մասին: Անիլինային ընկերությունում զբաղված է ավելի քան հիսուն հազար մարդ... Հոդվածին տեղ տված թերթը տուգանված է... Ռոլինգի ձեռքի գործն է անշուշտ...

— Մենք չենք կարող ոչ մի օր կորցնել, Վոլֆ:

— Ես տոմսեր եմ պատվիրել ժամը տասնմեկի համար, այսօր:

— Գնալու ենք Ն.:

— Կարծում եմ՝ միայն այնտեղ կարելի է գտնել Գարինի հետքերը:

— Հիմա տեսեք, թե ինձ ինչ է հաջողվել ձեռք զցել:— Խլինովը գրանից լրագրի կտրածոներ հանեց:— Ցերեկվա երեքին եղա Շելգայի մոտ... Նա ինձ հաղորդակից դարձեց իր դատողությունների ընթացքին՝ Ռոլինզն ու Գարինը պիտի որ կապ պահպանեն իրար հետ...

— Իհարկե: Ամեն օր:

— Փոստո՞վ: Հեռազբո՞վ: Ի՞նչ եք կարծում, Վոլֆ:

— Ոչ մի դեպքում: Ոչ մի գրավոր հետք:

— Ուրեմն՝ ռադիոյո՞վ:

— Որ ձայները զցեն Եվրոպայով մե՞ն...

— Չե...

— Երրորդ անձնավորության միջոցո՞վ:

— Ոչ... Հասկացա,— ասաց Վոլֆը,— կեցցե ձեր Շելգան: Տվեք տեսնեմ...

Նա կտրածոները փորեց ծկներին ու սկսեց ուշադիր կարդալ կարմիր մատիտով ընդգծված տողերը.

«Ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեք անիլինի վրա»: «Անցնում եմ գործի», «Տեղը գտնված է»:

— «Տեղը գտնված է»,— մրմնջաց Վոլֆը,— սա Ք.-ի թերթ է, իսկ Ք.-ն փոքրիկ քաղաք է Ն.-ի մոտ... «Անհանգստանում եմ, նշանակեք օրը»: «Հաշվեք երեսունհինգ՝ պայմանագիրն ստորագրելու օրվանից»... Այսպիսի բաներ գրողները նրանք միայն կարող են լինել: Ֆոնտեներլոյում պայմանագիրն ստորագրվել է անցած ամսվա քսաներեքի գիշերը: Ավելացրեք երեսունհինգ՝ կլինի՝ քսանութ — անիլինի բաժնետոմսերի վաճառման ժամկետը...

— Շարունակեք, շարունակեք, Վոլֆ... «Ի՞նչ միջոցներ

եք ձեռք առել»,— սա Ք.-ից է, հարցնում է Գարինը: Հաջորդ օրվա փարիզյան թերթում՝ Ռոլինզի պատասխանը. «Զբոսանավը կազմ ու պատրաստ է: Կժամանի երեք օրից: Կհաղորդվի ռադիոյով»: Խսկ ահա, չորս օր առաջ, Ռոլինզը հարցնում է, «Լույսը չի՝ երևա», Գարինը պատասխանում է. «Շուրջն ամայի է: Հեռավորությունը՝ հինգ կիլոմետր»:

— Այլ խոսքով ասած, սարքը տեղադրված է լեռներում. հինգ կիլոմետրի վրա ճառագայթով կարելի է խիել միայն բարձր տեղից: Լսեք, Խլինով, մենք սարսափելի քիչ ժամանակ ունենք: Եթե հինգ կիլոմետրն ընդունենք շառավիղ, կենտրոնում՝ գործարանները, ապա հարկ կլինի երեսունհինգ կիլոմետրից ոչ պակաս շրջագծով տեղանք զննել: Ուրիշ տվյալներ կա՞ն:

— Ոչ: Ես հենց նոր պատրաստվում էի զանգել Շելգային: Նրա մոտ պիտի որ երեկով ու այսօրվա թերթերից բաներ լինեն:

Վոլֆը վեր կացավ: Երևում էր, թե ինչպես նրա հազուստի տակ փքվել էին մկանները:

Խլինովն առաջարկեց զանգել ձախ ափի մոտակա սրճարանից: Վոլֆը կամուրջն անցավ այնպես սրբնթաց, որ ձտի վզով, թերևս պատերազմի նահատակ հարազատի վրա հեղված մենավոր արցունքներով տոգորուն կեղտակուր պիշակով մի ծերուկ տարութերեց զլուխն ու փոշոտ լայնեզր գլխարկի տակից երկար նայեց վազող օտարերկրացու ետևից.

— Օ-օ՛... Արտասահմանցիներ... Որ փող կա գրպաններում՝ ուրեմն պիտի հրմշտեն ու վազ տան, ասես իրենց սեփական տանն են... Օ-օ՛... Վայրենիներ...

Սրճարանում, ցինկե վաճառասեղանի առջև կանգնած, Վոլֆը սողայաջուր էր խմում: Նա հեռախոսախցիկի ապակու միջով տեսնում էր խոսող Խլինովի թիկունքը. ահա վեր քաշվեցին նրա ուսերը, ասես ամբողջովին մտավ խոսափողի մեջ, հետո շտկվեց, դուրս եկավ խցիկից: Դեմքը խաղաղ էր, բայց դիմակի պես ձերմակ:

— Հիվանդանոցից պատասխանեցին, որ այսօր Շելգան անհետացել է: Զեռք են առնված բոլոր միջոցները՝ նրան գտնելու համար... Կարծում եմ, սպանված է:

## 60

Ճթճթում էին փայտերը կրակարանում, որ ծխահարվել էր երկու հարյուրամյակի ընթացքում, որ երկու ահազին կերեր ուներ երշիկ ու ազդրամիս ապխտելու համար և կողքերից՝ քարե երկու սուրբ. մեկից կախված էր Գարինի բաց գույնի լայնեզր գլխարկը, մյուսից՝ սպայական մի ճարպոտ կարտուզ: Կրակարանի բոցերով միայն լուսավորված սեղանի մոտ նստած էին չորս մարդ: Նրանց առջև հյուսվածապատ շիշ կար և գինով լի բաժակներ:

Տղամարդկանցից երկուսը քաղաքի հազուստով էին. մեկը՝ խոշոր այսոսկրերով, ամրակազմ, կարճ ու ցից մազերով, մյուսը՝ երկայն, չար դեմքով: Երրորդը՝ ֆերմայի տերը, որի խոհանոցում էր տեղի ունենում այդ խորհրդակցությունը, գեներալ Սուլբրուտինն էր՝ թևքերը քշտած մեն-մի կտակե կեղտոտ շապկով: Մաքուր սափրված նրա գլխամաշը շարժվում էր անընդհատ, խճճված բեղերով պարարտ դեմքը կաս կարմիր էր կտրել գինուց:

Չորրորդը՝ Գարինը, տուրիստական զգեստով էր: Նա, մատն անփութորեն տանելով բաժակի եզրով, ասաց.

— Այդ ամենը շատ լավ է... Բայց ես պնդում եմ, որ իմ գերուն, թեև նա բոլշևիկ է, մազաշափ անզամ վնաս չպետք է հասցվի: Ուտելիք՝ օրը երեք անգամ, գինի, բանջարեղեն, մրգեր... Մի շաբաթից կտանեմ նրան... Բելգիական սահմա՞ն...

- Ավտոմոբիլով երեք քառորդ ժամի վրա է,— փութաջանորեն առաջ թեքվելով ասաց երկայն դեմքով մարդը:
- Ամեն ինչ կլինի սուսուփուս... Ես հասկանում եմ, պարոն գեներալ և պարոնայք սպաներ (Գարինը քմծիծաղեց), որ դուք, իբրև ազնվականներ, իբրև տանջամահ արված կայսեր հիշատակին անձնուրացորեն նվիրված մարդիկ, այժմ գործում եք՝ ելնելով բացառապես ամենաբարձր, զուտ գաղափարական նկատառումներից... Այլապես չէի էլ դիմի ձեր օգնությանը...
- Մենք այստեղ բոլորս հասարակության մարդիկ ենք, ինչի՝ մասին է խոսքը,— խոխոաց գեներալը՝ գանգամաշկն առաջ շարժելով:
- Պայմանը, կրկնում եմ, սա է՝ զերու լրիվ պարենավորման համար վճարում եմ օրական հազար ֆրանկ: Համաձա՞յն եք:
- Գեներալը կարմրած աչքերը շրջեց ընկերների կողմը: Այտոսկրոտը ցույց տվեց սպիտակ ատամները, երկայնադեմն աչքերը ցած զցեց:
- Ախ, հա՛,— ասաց Գարինը,— ներեցեք, պարոնայք... կանխավճար...
- Նա ատրճանակի գրպանից հանեց հազարֆրանկանոց թղթադրամների մի կապ ու նետեց սեղանին, զինու լճակի մեջ:
- Խնդրե՛մ...
- Գեներալը կոնչաց, իր կողմը քաշեց կապը, զննեց, սրբեց՝ փորին քսելով, և սկսեց համրել՝ ֆսֆացնելով մազմզու ռունգներով: Նրա ընկերներն սկսեցին քիչ-քիչ մոտ շարժվել, նրանց աչքերը փայլվում էին:
- Գարինը, տեղից ելնելով, ասաց.
- Նե՛րս բերեք զերուն:

## 61

Շելգայի աչքերը կապված էին թաշկինակով: Ուսերին ավտոմոբիլային կաշվե վերարկու էր զցված: Զգաց կրակարանից եկող տաքությունը, ոտքերն սկսեցին դռղալ: Գարինն աթռուակ մատուցեց: Շելգան նստեց իսկույն՝ ծնկներին զցելով զիպսապատ ձեռքը:

Գեներալն ու երկու սպաները նրան էին նայում այնպես, որ, թվում եր, նշան տային՝ մի ակնթարթում այդ մարդու մեծ կտորը ականջը կմնար: Բայց Գարինը նշան չտվեց: Շելգայի ծնկանը թփթփացնելով՝ ասաց զվարթաձայն:

— Այստեղ դուք ոչ մի բանի պակասություն չեք քաշի: Դուք օրինավոր մարդկանց մոտ եք՝ նրանց լավ է վճարված: Մի բանի օրից ես ձեզ կազատեմ: Ազնիվ խոսք տվեք, ընկեր Շելգա, որ չեք փորձի փախչել, սկանդալ սարքել, ոստիկանության ուշադրությունը գրավել:

- Շելգան բացասարար շարժեց խոնարհած գլուխը: Գարինը թեքվեց նրա կողմը.
- Այլապէս դժվար կլինի երաշխավորել այստեղ լինելու օրերին ձեր հարմարությունների համար... Հը, խոսք տալի՞ս եք:

Շելգան դանդաղ, ցածրաձայն ասաց.

- Կոմունիստի խոսք եմ տալիս... (Գեներալի գանգամաշկն խսկույննեթ սողաց դեպի ականջները, սպաներն արագ իրար նայեցին, զեշ քմծիծաղեցին): Կոմունիստի խոսք եմ տալիս՝ սպանել ձեզ, Գարին, հենց առաջին հնարավորության դեպքում... Խոսք եմ տալիս ձեզնից խլել սարքն ու տանել Մոսկվա... Խոսք եմ տալիս, որ քանութին...

Գարինը թույլ չտվեց, որ ավարտի: Բոնեց նրա կոկորդից...

- Լոի՞ր... Ապուշ... Խելագար...

Շուտ եկավ ու հրամայաբար՝

- Պարոնայք սպաներ, ձեզ նախազգուշացնում եմ՝ այս մարդը խիստ վտանգավոր է, նրան սևոռուն գաղափար է հետապնդում...

- Ես ասում եմ, չէ, ամենալավը կլինի սրան պահենք գինու մառանում,— բորբաց գեներալը:— Տանե՛լ գերուն...

Գարինը թափով վեր ցցեց մորուքը: Սպաները բարձրացրին Շելգային, հրեցին կողքի դռնից դուրս ու քարշ տվին նկուղ: Գարինը հազար ավտոմոբիլային ձեռնոցները:

- Քսանիննի գիշերը կլինեմ այստեղ: Երեսունին, ձերդ գերազանցություն, դուք կարող եք դադարեցնել փորձերը ճագարաբուծության ուղղությամբ, առաջին կարգի նավախցի տոմս գնել անդրատլանտյան շոգենավում ու աղայափարի ապրել հենց, ասենք, Նյու Յորքի հինգերորդ ավենյուում:

- Հարկավոր է որևէ փաստաթուղթ թողնել այդ շան ցնկնածի համար,— ասաց գեներալը:

- Խնդրեմ, ընտրիր որ անձնագիրը կուգես: Գարինը գրանցած հանեց հաստ թելերով կապկապված մի փաթեթ: Ֆոնտենեբլյում Շելգայից հափշտակված փաստաթղթերն էին: Զբաղվածության պատճառով մինչ այժմ չէր բացել նայել:

- Այստեղ, ըստ երևույթին, ինձ համար պատրաստված անձնագրերն են: Հեռատես քայլ է... Ահա, ստացեք, ձերդ գերազանցություն...

Գարինը սեղանին զցեց անձնագրերից մեկն ու, շարունակելով պրայտել թղթապանակը,— ինչ-որ բան հետաքրքրեց նրան,— մոտեցավ լամպին: Խոժոռվեց:

- Տես, սատանա... — Եվ նետվեց դեպի կողքի դուռը, որտեղից քարշ տվին տարան Շելգային:

Շելգան պառկած էր քարե հատակին, ներքնակի վրա: Նավթի ճրագը լուսավորում էր կամարակապ մառանը, դատարկ տակառները, սարդոստայնի թափուտները: Գարինը որոշ ժամանակ հայացքով փնտրում էր Շելգային: Հետո, նրա առջև կանգնած, շրթունքներն էր կծոտում:

— Տաքաց, կլի, մի նեղացեք, Շելգա: Կարծում եմ, այնուամենայնիվ, իրար հետ լեզու կգտնենք: Համաձայնության կզանք: Ուզո՞ւմ եք:

— Փորձեք:

Գարինը խոսում էր շողոմաձայն, բոլորովին այլ կերպ, քան մի տասը րոպէ առաջ: Շելգան լարվեց: Բայց այդ գիշերվա ընթացքում ապրած հուզումը, դեռ ամբողջ մարմնում դժմացող գազի մնացորդներն ու ձեռքի ցավը բռվացրել էին նրա ուշադրությունը: Գարինը նստեց ներքնակին: Ծխախոտ վառեց: Նրա հայացքը մտախոհ էր թվում, և ինքն ամբողջովին՝ բարյացակամ, վայելուչ...

«Ո՞ր կողմն է ծոռում սրիկան: Մտքինն ի՞նչ է», — մտածում էր Շելգան՝ դեմքը կնձռոտելով գլխացավից:

Գարինը զրկեց ծունկը, սկսեց ծխել, աչքերը բարձրացրեց կամարակապ առաստաղին:

— Գիտեք ինչ, Շելգա, ամենից առաջ դուք պիտի մեկընդմիշտ իմանաք, որ ես երբեք չեմ ստում... Գուցե մեկ-մեկ՝ մարդկանց հանդեպ արհամարհանքից, բայց դա կարևոր չէ: Այսպես ուրեմն, Ռոլինգն իր միլիարդներով պետք է ինձ միառժամանակ, այդքան բան... Այնպես, ինչպես ես՝ Ռոլինգին... Դա կարծես հասկացել է նա արդեն, չնայած իր բթությանը... Ռոլինգն այստեղ է եկել Եվրոպան գաղութացնելու:

Եթե դա չանի՝ կպայթի հայրենի Ամերիկայում իր միլիարդների հետ: Ռոլինգն անասուն է, նրա ամբողջ խնդիրն է առաջ քշել, պոզահարել, տրորել: Նա մի քոռ գրոշի էլ երևակայություն չունի... Միակ պատը, որին զարկելով կարող է ձակատը փշրել, Սովետական Ռուսաստանն է: Նա հասկանում է դա, և նրա ամբողջ ցասումն ուղղված է ձեր թանկագին հայրենիքի դեմ... Ես ինձ ոռւս չեմ համարում (ավելացրեց նա շտապով), ես ինտերնացիոնալիստ եմ...

— Հասկանալի է, — քամահրական քմծիծաղով ասաց Շելգան:

— Մեր փոխհարաբերությունները կլինեն այսպես՝ որոշ ժամանակ կաշխատենք միասին...

— Մինչև քսանութը...

Գարինն արագ, փայլկտուն աչքերով, հումորով նայեց Շելգային:

— Հաշվել գտե՞լ եք: Ըստ թերթերի՞:

— Միզուցե...

— Լավ... Թող ձեր ասածը լինի՝ մինչև քսանութը: Հետո անխուսափելիորեն իրար կոկորդ պիտի կրծենք... Եթե հաղթի Ռոլինզը՝ դա կրկնակի սարսափելի կինի Սովետական Ռուսաստանի համար. իմ սարքը կընկնի նրա ձեռքը, և այն ժամ չափազանց կդժվարանա ձեր պայքարը նրա դեմ... Այնպէս որ, ընկեր Շելզա, մի շաբաթ սարդերի հարևանությամբ այստեղ մնալով, դուք անասելի, անշափ կմեծացնեք իմ հաղթանակի հնարավորությունը:

Շելզան փակեց աչքերը: Գարինը, նրա ոտքերի մոտ նստած, ծխում էր կարճ ներքաշումներով: Շելզան ասաց.

— Ինչներիդ է պետք իմ համաձայնությունը, դուք առանց համաձայնության էլ ինձ կարող եք այստեղ պահել այնքան, ինչքան ուզեք: Ուրեմն ասեք ուղղակի, թէ ինչ է ձեզ պետք:

— Վաղուց էր հարկավոր այսպէս... Թե չէ՝ կոմունիստի խոսք... Աստված վկա, քիչ առաջ դուք այնպիսի ցավ պատճառեցիք ինձ, այնպէս նեղացրիք... Հիմա կարծես թե սկսում եք արդեն հասկանալ: Մենք թշնամինեք ենք, ճիշտ է... Բայց մենք միասին պիտի գործենք... Ձեր տեսակետից ես այլասերված անձնավորություն եմ, մեծագույն անհատապաշտ. . . Ես՝ Պյոտր Պետրովիչ Գարինս, ինձ արարող գորությունների բարեհաճությամբ, իմ հանձարեղ,— մի ծիծառեք, Շելզա,— այո՞ , այո՞ , հանձարեղ ուղեղով, անսպառ կրքերով, որոնցից ինքս էլ եմ նեղվում ու սարսափում, իմ անհագությամբ ու անսկզբունքայնությամբ ես ինձ հակադրում եմ, տառացիորեն հակադրում եմ ինձ ողջ մարդկությանը:

— Պա-hn՝,— ասաց Շելզան,— ա՞յ քեզ սրիկա....

— Հենց այդպէս՝ «այ քեզ սրիկա», դուք հասկացաք ինձ: Ես ցանկասեր եմ, իմ կյանքի բոլոր վայրկյանները ձգտում եմ նվիրել հաճույքին: Ես կատաղորեն շտապում եմ Ռոլինզի հաշիվը փակել, որովհետև կորցնում եմ այդ թանկ վայրկյանները: Դուք այնտեղ՝ Ռուսաստանում, մարտնչող, նյութականացված գաղափար եք: Իսկ ես ոչ մի գաղափար չունեմ, գիտակցորեն, դավանաբանորեն ատում եմ ամենայն գաղափար: Ես իմ առջև նպատակ եմ դրել՝ ստեղծել այնպիսի պայմաններ (մանրամասն չեմ պատմի, կհոգնեք), ինձ շրջապատել այնպիսի ճոխությամբ, որ Շամիրամի այզիներն ու արևելյան մյուս հիմարությունները խղճուկ ֆանտազիա թվան իմ դրախտի առաջ: Ես ամբողջ գիտությունը, ամբողջ արդյունաբերությունը, ամբողջ արվեստը կզորակոչեմ ծառայելու ինձ: Դուք հասկան՝ մ եք, Շելզա, թե ես ինչ եմ ձեզ համար՝ հեռավոր և միանգամայն ֆանտաստիկ վտանգ: Ռոլինզը կոնկրետ, մոտակա, ահավոր վտանգ է: Դրա համար էլ մի որոշ տեղ ես ու դուք պիտի գնանք միասին, այնքան ժամանակ, մինչև Ռոլինզը ոտնատակ արվի: Ավելին չեմ խնդրում ձեզնից:

— Ինչո՞ւմն եք ուզում, որ արտահայտվի իմ օգնությունը,— ասաց Շելզան ատամների արանքից:

— Հարկավոր է, որ դուք մի փոքրիկ զբոսանք կատարեք ծովով:

— Այլ կերպ ասած, ուզում եք շարունակե՞լ իմ գերությունը:

— Այո:

— Ի՞նչ կտաք, որ ես օգնության չկանչեմ առաջին պատահած ոստիկանին, երբ ինձ ծով տանեք:

— Չեր ուզած գումարը:

— Ես ոչ մի գումար չեմ ուզում:

— Լա՛վ է,— ասաց Գարինն ու կողքից կողք շարժվեց:

և ներքնակի վրա:— Իսկ եթե իմ սարքի մողելը տամ՝ կիամաձայնվե՞ք: (Շելգան ֆսֆսացրեց): Չե՞ք հավատում: Կարծում եք կիսարե՞մ, չե՞մ տա: Հապա մտածեք՝ կիսարե՞մ, թե չէ, (Շելգան թռթվեց ուսը): Տեսեք, թե ինչու... Սարքի հղացումը պարզ է հիմարության աստիճան... Ոչ մի ուժով չեմ կարող դա գաղտնի պահել: Այդպես է հանձարեղ զյուտերի ճակատագիրը: Քսանութից հետո բոլոր թերթերում կնկարագրվի ինֆրակարմիք ճառագայթների գործողությունը, գերմանացիները, ենց հատկապե՞ս գերմանացիները, ուղիղ կես տարի անց կպատրաստեն ճիշտ այդպիսի սարք: Ես ոչինչ չեմ վտանգում: Վերցրեք մողելը, տարեք Ռուսաստան: Հա, ի միջի այլոց, ինձ մոտ են ձեր անձնազրերն ու թղթերը... Խնդրեմ, այլևս պետք չեն... Ներեցեք, որ հանել եմ, նայել: Ես սարսափելի հետաքրքրասեր եմ... Դաշված տղայի ի՞նչ լուսանկար է սա, որ պահում եք ձեզ մոտ:

— Հենց այնպես, անապաստան մի տղա է,— իսկույն պատասխանեց Շելգան՝ զլիացավի միջից հասկանալով, որ Գարինը մոտ-մոտ է անում ամենազլիավորին, ինչի համար էլ եկել է նկուղ:

— Լուսանկարի հակառակ կողմում նշված է անցած ամսվա քսանը, ուրեմն դուք տղային այստեղ գալու նախօրյակի ն եք լուսանկարել... Եվ վերցրել եք ձեզ հետ, որ ցույց տաք ինձ: Լենինգրադում այդ լուսանկարը ոչ ոքի ցույց չե՞ք տվել:

— Չե,— ատամների արանքից պատասխանեց Շելգան:

— Իսկ տղային ի՞նչ եք արել: Ահա՛, ահա՛, չի կ նկատել, այստեղ նույնիսկ անունը կա՝ Իվան Գուսև: Թիավարության ակումբո՞ւմ եք երեխ լուսանկարել, պատշգամբո՞ւմ: Գիտեմ, ծանոթ տեղեր են... Իսկ տղան ձեզ ի՞նչ պատմեց: Մանցելը ո՞ղջ է:

— Ողջ է:

— Գտե՞լ է այն, ինչ որոնում էին այնտեղ:

— Կարծես թե գտել է:

— Այ, տեսնում եք, ես միշտ հավատացել եմ Մանցելին:

Գարինը ճիշտ էր իր հաշիվներն արել: Շելգայի ուղեղը կառուցված էր այնպես, որ ամենսին չեր կարողանում ստել՝ թե կեղծիքի հանդեպ ունեցած զզվանքից և թե այն

պատճառով, որ ստելն էժան բան էր համարում խաղի մեջ ու պայքարում: Մի րոպէ անց Գարինն իմացավ թիավարության ակումբում Իվանի հայտնվելու ամրող պատմությունը և այն ամենը, ինչ տղան պատմել էր Մանցկի աշխատանքների մասին:

— Ուրեմն այսպես,— Գարինը ելավ տեղից, ուրախ շփեց ձեռքերը, — քսանիննի զիշերը երբ գնանք ավտոմոբիլով, սարքի մոդելը հետներս կլինի, դուք ցույց կտաք ձեր ուզած տեղը, ուր սարքը կպահենք միառժամանակ... Հը, բավականա՞ն է ձեզ նման երաշվիքը: Համաձա՞ն եք:

— Համաձայն եմ:

— Չե՞ք սպանի ինձ:

— Մոտ ժամանակներս՝ ոչ:

— Կկարգադրեմ ձեզ վերև տեղափոխեն, այստեղ իսոնավ է. լավացեք, կերեք-խմեք ձեր քեֆին:

Գարինն աչքով արեց ու դուրս գնաց:

63

— Զեր անո՞ւնը, ազգանո՞ւնը:

— Կունսակյան գնդի ոռտմիստր Ալեքսանդր Իվանովիչ Վոլշին, — պատասխանեց լայն այտուկրավոր սպան՝ ձգվելով Գարինի առաջ:

— Ապրուստի ի՞նչ միջոցներ ունեք:

— Օրավարձու աշխատանք գեներալ Սուբբոտինի մոտ՝ ճազարաբուծության գծով, օրական քսան սու, ուտեստը՝ իրենից: Վարորդ էմ եղել, վաս չեի վաստակում, մեր նախկին գնդի տրերքը համոզեցին, որ միապետականների համագումարի պատգամավոր գնամ: Հենց առաջին նիստին տաքացած տեղու հասցրի կիրիլովական գնդապետ Շերստոբիտովի քիթումութին: Զրկվեցի լիազորությունից, կորցրի գործ:

— Առաջարկում եմ վտանգավոր աշխատանք: Խոշոր հոնորար: Համաձայն եք:

— Ճիշտ այդպես:

— Կգնաք Փարիզ: Հանձնարարություն կստանաք: Կզրանցվեք ծառայության: Փաստաթղթերով ու մանդատով կմեկնեք Լենինգրադ... Այնտեղ, ահա այս լրտանկարով, կգտնեք մի տղայի...

Անցավ հինգ օր: Ոչ մի բան չէր խախտում Ռայնին մերձակա Ք. քաղաքի անդորրը, փոքրիկ մի քաղաք, որ փոված էր Անդինային ընկերության հոչակավոր գործարաններին հարող կանաչ ու խոնավ հովտում:

Նեղիկ մայթերով ոլոր-մոլոր փողոցներում առավոտից զվարթ կտկտում էին դպրոցականների կոշիկների փայտե ներբանները, թնդում էր բանվորների ծանր ոտնաձայնը, կանայք մանկասայլակները քշում տանում էին գետակի կողմը, ստվերոտ լորենիների տակ. . . Վարասվիրանոցից դուրս եկավ պարուսինե ժիշետով վարսավիրն ու մայթին ձեռնասանդուղք դրեց: Աշակերտը ելավ սանդուղքի վրա՝ մաքրելու երկարաձողից կախված առանց այն էլ փայլիլուն ցուցանակը, որ պատկերում էր պղնձե փոքրիկ կոնք և ձիու սպիտակ պոչ: Սրճարանում սրբում էին հայելապակիները: Դորրալով անցավ վիթխարի անիվներով մի սայլ՝ վրան զարեջրի դատարկ տակառներ:

Հին, մաքրեմաքուր, կոկ ու հարդարուն փոքրիկ քաղաք էր դա, որ խաղաղ էր ցերեկվա ժամերին, երբ արևը տաքացնում էր սալարկված սապատավոր կամուրջը, և անշտապ ձայներով աշխուժանում էր մայրամուտին, երբ գործարաններից տուն էին դառնում բանվորներն ու բանվորուիները, վառվում էին լույսերը սրճարաններում, և աստված զիտի՝ քանի-քանի տարվա հնություն ունեցող կարծ թիկնոցով ծեր լապտերավառը, փայտաներբան կոշիկները քստքստացնելով, գնում էր լապտերները վառելու:

Շուկայի դարպասից ելնում էին գործավորների ու բյուրգերների<sup>19</sup> կանայք՝ զամբյուղներով: Մի ժամանակ այդ զամբյուղներում հավուճիվ էր լինում, բանջարեղեն ու մրգեր՝ արժանի Սնայգերսի նատյուրմորտներին: Հիմա՝ մի բանի կարտոֆիլ, սոխի մի կապուկ, շաղզամ ու մի քիչ հաց:

Տարօրինակ է: Չորս հարյուրամյակի ընթացքում սատանան զիտի, թե ինչպես հարստացավ Գերմանիան: Թե ինչ փառքի հասան նրա որդիները: Ինչ հույսերով շողշողացին գերմանական երկնագույն աչքերը: Որքան զարեջուր հոսեց ետ զցված խարտյաշ մորուքների վրայով: Քանի բիլիոն կիլովատ մարզկային էներգիա պարպվեց...

Եվ ահա այդ բոլորն՝ ապարդյուն: Խոհանոցներում՝ հախճայուսե տախտակի վրա սոխի բարակի կապուկ, և կանանց սովահար աչքերում՝ վաղեմի թախիծ: Վոլֆն ու Խլինովը, փոշեթաթախ ոտնամաններով, պիշակները թևներին զցած, ճակատները քրտինքից թրջված, անցան սապատավոր փոքրիկ կամուրջն ու խճուղով, լորենիների տակով սկսեցին բարձրանալ դեպի Ք. քաղաքը:

Արևն անցել էր ցածրիկ լեռների ետևը: Իրիկնային ոսկեհուր լույսի մեջ դեռ ծխում էին Անդինային ընկերության գործարանների ծխնելույզները: Մասնաշենքերը, խողովակները, երկարուղային ճանապարհները, կղմինդրածածկ ամբարները բլուրների լանջերով ընդիուպ մոտենում էին քաղաքին:

<sup>19</sup> Քաղաքի բնակիչներ, քաղաքացիներ՝ Գերմանիայում և մի բանի այլ երկրներում (Ժ. թ.):

— Այնտեղ է, հավատացած եմ,— ասաց Վոլֆն ու ձեռքով ցույց տվեց արևմուտքում վերջալույսից շառագունած ժայռերը,— եթե գործարանները հրակոծելու համար լավագույն կետն ընտրելու խնդիր լիներ, ես կընտրեի միայն այդ տեղը:

— Լավ, լավ, բայց ընդամենը երեք օր է մնացել, Վոլֆ...

— Էհ, ոչինչ: Հարավից ոչ մի վտանգ չի կարող լինել, շատ հեռու է: Հյուսիսային և արևելյան հատվածները տնտղել ենք մինչև վերջին քարը: Երեք օրը բավական է մեզ:

Խլինովը դարձավ հյուսիսում կապտին տվող անտառածածկ բլուրների կողմը. խոր ստվերներ էին ընկած դրանց միջև: Այդ կողմում Վոլֆն ու Խլինովը հինգ օր ու գիշեր՝ պրայտել էին ամեն խորշ ու խոռոշ, ուր կարող էր աչքից պահված որևէ շինություն՝ ամառանոց կամ բարաք լինել գործարաններին նայող պատուհաններով: Հինգ օր ու գիշեր նրանք չեն հանվել, քնում էին գիշերվա խուլ ժամերին, որտեղ պատահեր: Ոտքերը նույնիսկ դարձարել էին ցավելուց: Նրանք լեռնային քարքարոտ ճանապարհներով, արահետներով, ուղղակի ձորակների միջով ու ցանկապատերի վրայով համարյա հարյուր կիլոմետր էին արել քաղաքի շուրջը: Բայց ոչ մի տեղ Գարինի ներկայությունը մատնող հետք անզամ չկար: Պատահած ցուլացիները, ֆերմերները, ամառանցների սպասավորները, անտառապահները, պահակները միայն ձեռքներն էին տարածում.

— Ամբողջ շրջակայքում ոչ մի եկվոր չկա, բոլոր տեղացիներին գիտենք:

## 65

Մնացել էր արևմտյան հատվածը՝ ամենաղժվարինը: Ըստ քարտեզի, այնտեղ արահետ կար, որ տանում էր դեպի ժայռոտ սարահարթը, ուր «Շղթայակապ կմախքի» նշանավոր ամրոցն էր, կողքին, ինչպես պատշաճ է նման դեպքերում, «Առ կմախքն շղթայակապ» գարեջրատուն-ռեստորանը:

Ավերակներում իսկապես ցույց էին տալիս ստորերկյա ներքնատան մնացորդները և երկաթե վանդակի ետևում՝ ժանգոտ շղթաներով կապկապված-նստած վիթխարի մի կմախք: Սրա նկարները վաճառվում էին ամենուր՝ բացիկների, թղթահատ դանակների ու գարեջրի գավաթների վրա: Քսան պֆենինգով կարող էիր նույնիսկ լուսանկարվել կմախքի կողքին և լուսանկարն ուղարկել ծանոթիդ կամ սիրած աղջկան: Կիրակի օրերին ավերակները լցվում էին հանգստացող տեղաբնակներով, ռեստորանը լավ առևտուր էր անում: Լինում էին նաև օտարերկրացիներ:

Սակայն պատերազմից հետո հոշակավոր կմախքի հանդեպ հետաքրքրությունը նվազեց: Տեղաբնակները հայից ընկել էին և ծուլանում էին տոն օրերին մազլցել լեռը, գերադասում էին բուտերբրողներով ու գարեջրի կիսաշշերով տեղ գրադեցնել պատմական հիշողություններից դուրս՝ գետակի ափին, լորենիների տակ: «Առ կմախքն շղթայակապ» ռեստորանի տերը, իր ողջ ջանքերով հանդերձ, այլս չէր կարողանում հին կարգը պահպանել ավերակներում: Եվ պատահում էր որ շաբաթներով, չանհանգստանալով որևէ

մեկի ներկայությունից, միջնադարյան կմախքը զանգի պարապ խոռոչներով նայում էր կանաչ հովտին, ուր ժամանակով, ճակատագրական մի օր, ամրոցի տերը թամբից ցած գլորեց իրեն,— նայում էր աքաղաղներով ու աշտարակների սրածողերով կիրկաներին<sup>20</sup>, գործարանների ծխնելույզներին, գործարաններ, ուր համաշխարհային մասշտաբով պատրաստում էին թարախապալարային զազ, տետրիլ և դժոխային ուրիշ արտադրանքներ, որ բնակչության մեջ սպանում էին հետաքրքրությունը պատմական հիշողությունների, կմախքի պատկերով բացիկների ու, թերևս, հենց կյանքի հանդեպ:

Ահա այդ կողմերն ել ուղղվեցին հիմա Վոլֆն ու Խլինովը: Նրանք մտան քաղաքային հրապարակի սրճարանը՝ ուժերը մի քիչ տեղը բերելու, և երկար ուսումնասիրեցին տեղանքի քարտեզը, հարցուփորձ արին մատուցողին: Պարզվեց, որ հովտի արևմտյան մասում, բացի ավերակներից ու ռեստորանից, տեսարժան շինություն է նաև վերջին տարիներս սնանկացած՝ գրամեքենաների գործարանատիրոջ վիլլան: Վերջինս արևմտյան լանջերին էր և քաղաքի կողմից չէր երևում: Գործարանատերը վիլլայում ապրում էր միայնակ, առանց ոտքը դուրս դնելու այնտեղից:

## 66

Հիալուսինը դուրս եկավ լուսաբացից առաջ: Այն, ինչ քարերի ու ապառաժների անձև կուտակ էր թվում, պարզորոշ դարձավ լուսնի լույսի տակ, փովեցին կանգուն մնացած կամարների թավշե ստվերները, դեպի ցած՝ ձորակը ձգվեցին ծուռումուու կարճիկ ծառերով ու մոշի թնջուկով պատված բերդապարհսպների մնացորդները, վերակենդանացավ քառանկյուն աշտարակը՝ ամրոցի հնագույն մասը, որ նորմաններն էին կառուցել, կամ, ինչպես գրում էին բացիկների վրա՝ «Չարչարանաց աշտարակը»:

Արևելյան կողմից աշտարակին էին հարում աղյուսե կամարներ, այստեղ, հավանաբար, մի ժամանակ իինավուրց աշտարակը բնակելի ամրոցին միացնող սյունասրահ էր եղել: Այդ ամենից մնացել էին հիմքը, մանրախիճ և դեսուդեն ընկած ավազաքարե խոյակներ: Աշտարակի հենամասի մոտ, խոռոչ կազմող խաչկամարի տակ է հենց նստած էր «Շղթայակապ կմախքը»:

Վոլֆը, արմունկներով ցանկապատի վրա ընկած, երկար նայում էր կմախքին, հետո դարձավ Խլինովի կողմն ու ասաց.

— Հիմա այս կողմը նայեք:

Խոր ցածում, լուսնի լույսի ներքո փոված էր թեթև մշուշով շղարշված հովիտը: Գետի վրա արծաթավուն թեփուկներ էին խարում այն տեղերում, ուր ջուրը թափանց երևում էր թփուտների միջից: Փոքրիկ քաղաքն ասես խաղալիք-տնակներից կազմված լիներ: Ոչ մի պատուհանում լույս չկար: Քաղաքից այն կողմ, ձախում վառվում էին Անիլինային ընկերության գործարանների հարյուրավոր լույսերը: Ծխի ձերմակ քուլաներ էին

<sup>20</sup> Կիրկա — լութերական եկեղեցի (Ճ. թ.):

բարձրանում, վարդագույն հուր կը ժայթքում ծխնելույզներից: Լսվում էին շոգեքարշերի սուլոցներ, ինչ-որ դղրդյուն:

- Ես իրավացի եմ,— ասաց Վոլֆը,— այս սարահարթից միայն կարելի է հարվածել ճառագայթով: Նայեք, ահա սրանք հումքի պահեստներն են, հողապատնեշից այն կողմ՝ կիսաֆարբիկատների պահեստները, այն երկար շինությունները ոռւսական եղանակով՝ ծծմբաքարից ծծմբաթթվի արտադրության մասնաշենքերն են: Իսկ ահա այնտեղ, քիչ հեռու, կլոր տանիքներովը անիլինի և բոլոր մյուս դժոխային նյութերի գործարաններն են. այդ նյութերը երբեմն պայթում են սեփական քմահաճույքով:
- Այո, Վոլֆ, բայց եթե նույնիսկ ենթադրենք, որ Գարինն իր սարքը կտեղադրի միայն քանութի գիշերը, այնուամենայնիվ, նախնական տեղակայման ինչ-որ նշաններ պիտի լինեն:
- Հարկավոր է նայել ավերակները: Ես կբարձրանամ, կզննեմ աշտարակը, դուք՝ պատերն ու կամարները... Ըստ կության, այս կմախքի նստած տեղից լավ տեղ չես գտնի:
- Ժամը յոթին կհանդիպենք ռեստորանում:
- Բարի:

## 67

Առավոտյան ուրին Վոլֆն ու Խլինովը կաթ էին խմում «Առ կմախքն շղթայակապ» ռեստորանի փայտաշեն վերանդայում: Գիշերվա որոնումներն ապարդյուն էին անցել: Նստել էին լուս, ձեռքերն այտերին հենած: Այդ օրերին այնպես էին ուսումնասիրել իրար, որ կարդում էին միմյանց մտքերը: Խլինովը, լինելով ավելի տպավորվող և պակաս ինքնավստահ, նորից ու նորից սկսում էր վերանայել այն դատողությունների ամբողջ ընթացքը, որ իրեն ու Վոլֆին Փարիզից բերել էին միանգամայն անվտանգ ու ապահով թվացող այս տեղերը: Ինչի՞ վրա էր հիմնված այդ համոզումը: Լրագրային երկու-երեք տողի վրա:

- Հիմար վիճակի մեջ չե՞նք ընկնի, Վոլֆ:

Այս հարցին Վոլֆը պատասխանեց.

- Մարդկային միտքը սահմանափակ է: Բայց գործի համար միշտ ավելի բնական է ապավինել նրան, քան կասկածել: Բացի այդ, եթե մենք ոչինչ չգտնենք, և պարզվի, որ Գարինի դիվային ձեռնարկն ընդամենը մեր երևակայության արդյունքն է՝ էլի փառք աստծո: Մենք կատարած կլինենք մեր պարտքը:

Մատուցողը ձվածեղ ու երկու գավաթ գարեջուր բերեց: Հայտնվեց ռեստորանի տերը՝ կաս-կարմիր երեսով հաստիկ մի մարդ.

- Բարի լուս, պարոնայք:— Եվ, շնչարգելությունից սվավացնելով, մտահոգ արտահայտությամբ սկսեց սպասել, մինչև հյուրերն իրենց քաղցը կհագեցնեին: Հետո

ձեռքը մեկնեց հովտի կողմը, որ դեռ բաց երկնազույն էր և փայլվում էր շաղից.— Քսան տարի է նայում եմ... Վերջը մոտենում է՝ ահա թե ինչ կասեմ, թանկագին իմ պարոնայք... Ես տեսել եմ զորահավաքը: Այս, այն ճանապարհով զորքեր էին գնում: Դրանք գերմանական ընտիր զորայուներն էին: (Ռեստորանի տերը, զապանակի նման, գլխից վեր նետեց շաղլիկ ցուցամատը): Դրանք զիգֆրիդներն էին՝ հենց նրանք, որոնց մասին Տակիտոսը գրել է՝ հզոր են, սարսափազդու, թևավոր սաղավարտներով: Ավագ մատուցող, Էլի երկու զավար գարեջուր պարոններին... Տասնչորս թվին զիգֆրիդները գնացին աշխարհը նվաճելու: Նրանք վահաններ չունեին միայն. հիշո՞ւմ եք գերմանական հին սովորույթը — ռազմաշունչ ճիշեր էին արձակում՝ վահանը բերանի կողքին պահած, որ ձայնն ավելի սարսափազդու հնչեր: Այս, ես տեսել եմ հեծելակների քամակներ՝ ամուր նստած ձիերի վրա... Ի՞նչ պատահեց՝ կուզեի հարցնել: Թե՞ մենք մոռացել ենք արյունահեղ մարտում մեռնելը: Ես տեսել եմ, թե ինչպես էին զորքերը ետ դառնում: Հեծելակներն ամենքը, սատանան տանի, դեռ ամուր նստած էին թամբերին... Գերմանացիները զախցախվեցին ռազմադաշտում: Նրանց սրերով խողխողեցին անկողիններում, իրենց օցախների մոտ...

Ռեստորանի տերը շոված աչքերով նայեց հյուրերին, շուր եկավ ավերակների կողմը, և նրա դեմքն աղյուսազույն դարձավ: Գրպանից անշտապ բացիկների մի կապուկ հանեց ու շրմիացրեց ափին.

— Դուք եղել եք քաղաքում: Հարցնում եմ՝ տեսա՞ք գոնե մի գերմանացու, որ հինգը ու կես ֆուտից ավելի հասակ ունենար: Իսկ երբ այդ պրոլետարները վերադառնում են գործարաններից, լսեցի՞ք, որ նրանցից գոնե մեկնումեկը համարձակվեր բարձրածայն ասել՝ «Դոյչլանդ»<sup>21</sup>: Բայց, այ, նույն պրոլետարները, գարեջրի զավաթները դեմները դրած, մի գլուխ բորբում են սոցիալիզմի մասին:

Նա ճարպկորեն սեղանին նետեց բացիկների կապուկը, որ ցրիվ եկավ հովհարածն... Դրանք կմախքի պատկերներն էին՝ ուղղակի կմախքն ու թևիկներով գերմանացի, կմախքն ու տասնչորս թվականի ռազմիկ զինվորական լրիվ հանդերձանքով:

— Հատը քսանինգ պֆենինգ, դյուժինը՝ երկու մարկ հիտուն պֆենինգ, — ասաց ռեստորանի տերն արհամարհական հպարտությամբ, — ավելի էժան ոչ ոք չի վաճառի, սա նախապատերազմյան բարձրորակ աշխատանք՝ գունավոր լուսանկար, աչքերի տեղ փայլաթիթեղ է դրված, որ անջնջելի տպավորություն է թողնում... Եվ դուք կարծում եք, թե այդ երկշոտ բուրժուաները, հինգ ու կես ֆուտ հասակ ունեցող այդ պրոլետարները կզնե՞ն իմ բացիկները:

Փու-ո՞ւ...

Հարցը դրված է այնպես, որ ես լուսանկարեմ Կարլ Լիբկնեխտին կմախքի հետ...

Նա նորից կարմրատակեց ու հանկարծ քրքջաց.

<sup>21</sup> Գերմանիա (Ճ. թ.):

— Դեռ շա՛տ կսպասեն... Ավագ մատուցող, մեր հատուկ ծրարների մեջ մի-մի դյուժին բացիկ դրեք պարոնների համար... Այո՛, այո՛, ստիպված ենք ելք գտնել դժվար կացությունից... Ես ձեզ ցույց կտամ իմ արտոնագիրը... «Առ կմախքն շղթայակապ» ռեստորանը դրանցից կվաճառի հարյուրներով... Այստեղ ես քայլում եմ մեր ժամանակի հետ ու չեմ շեղվում սկզբունքներից:

Նա գնաց և խսկույն էլ վերադարձավ՝ ձեռքին սիգարի տուփի չափ փայտե արկդիկ: Կափարիչի վրա խարանումով դրվագված էր նույն կմախքի պատկերը:

— Ուզում եք փորձե՞լ: Կատողային լամպերով աշխատողներից վատ չի աշխատում:— Նա արագ կարգի բերեց հաղորդալարն ու լսափողակները, ոադիորնդունիչը միացրեց սեղանի տակ հարմարեցրած խրոցին:— Արժե երեք մարկ յոթանսասունհինգ պֆենինգ, առանց լսափողակների, իհարկե:— Նա ականջնոցները մեկնեց Խլինովին,— կարելի է լսել Բեռլինը, Համբուրգը, Փարիզը, եթե դա ձեզ հաճույք կպատճառի: Ես ձեզ կմիացնեմ Քյոլնի տաճարին, հիմա այնտեղ պատարագ է, երգեհոն կլսեք՝ հրա՛շը... Լծակը ձախ դարձրեք... Ի՞նչ պատահեց: Երևի նորից անիծյալ Շտուֆե՞րն է խանգարում: Ո՞չ:

— Ով է խանգարո՞ւմ,— հարցրեց Վոլֆը՝ ոադիորնդունիչի վրա թեքվելով:

— Գրամեքենաների սնանկացած գործարանատեր Շտուֆերը, հարբեցողի ու ցնդածի մեկը... Երկու տարի առաջ իր վիլայում ոադիոկայան սարքեց: Հետո սնանկացավ: Եվ ահա վերջերս կայանը նորից սկսեց աշխատել...

Խլինովը, աչքերի տարօրինակ փայլով, իջեցրեց լսափողակները:

— Վճարեք ու գնանք, Վոլֆ:

Մի քանի րոպեից, ռեստորանի շաղակրատ տիրոջից գլուխներն ազատելուց հետո, երբ նրանք դուրս եկան, Խլինովն ամբողջ ուժով սեղմեց Վոլֆի ձեռքը.

— Ես լսեցի, ես ճանաչեցի Գարինի ձայնը... .

## 68

Նույն առավոտյան, մեկ ժամ առաջ Շտուֆերի վիլայում, որ նույն բլուրների արևմտյան լանջին էր, կիսամութ ճաշասենյակում նստել էր Շտուֆերը և խոսում էր անտեսանելի զրուցակցի հետ: Ավելի ճիշտ, դրանք ինչ-ինչ արտահայտությունների և հայհոյանքների պատառիկներ էին: Մոխրաշաղ սեղանի վրա թափված էին դատարկ շշեր, սիգարի ծխուկներ, Շտուֆերի օձիքն ու փողկապը: Նա մեն-միայն ներքնաշորով էր, քորում էր լիսկած կուրծքը, աչքերը պլշում երկարյա վիթխարի ջահի մեջ վառվող միակ լամպի վրա և, զկոտոցը պահելով, վերջին խոսքերով կիսաձայն հայհոյում էր հարբած ուղեղում հայտնվող մարդկային կերպարանքներին:

Սեղանի ժամացույցն աշտարակային հանդիսավոր զարկերով խփեց յոթը: Գրեթե նույն պահին մոտեցող ավտոմոբիլի ձայն լսվեց: Ճաշասենյակ մտավ Գարինը՝ ամրողովին ներթափանցված վաղորդյան քամով, հեգնուտ, սեպերը բաց, կաշվե կարտուզը՝ ծոճրակին.

— Էլի՝ ամբողջ զիշերը հարբեցողությամբ եք զբաղվել:

Շտուֆերը խեթ նայեց նրան արյունակալած աչքերով: Գարինը նրան դուր էր գալիս: Նա շռայլորեն վճարել էր ամեն ինչի համար: Առանց առևտուր անելու, ամառվա ամիսներին վարձել էր վիլան զինու մառանի հետ՝ թույլ տալով, որ Շտուֆերն ինքը Ռայնի հին զինիների, ֆրանսիական շամպայնի և լիկյորների հաշիվը տեսնի: Ինչով էր զբաղվում՝ սատանան զիտի, ըստ երևույթին՝ սպեկուլյացիայով, բայց նա ուզածիդ պէս հայհոյում էր ամերիկացիներին, որ երկու տարի առաջ սնննկացրել էին Շտուֆերին, արհամարհում էր կառավարությանը և ընդհանրապես մարդկանց տականք համարում. դա նույնպես լավ էր: Նա ավտոմոբիլով այնպիսի ուտեստեղեն էր բերում, որ նույնիսկ իր լավ ժամանակներում Շտուֆերն իրեն թույլ չէր տա մտածել անգամ, թե կարող է ճաշի գդալով հացին քսել ստրասբուրգյան թանկարժեք պաշտետ, ռուսական խավիար, սիրողական կամամբերներ, որոնց երեսին սպիտակ որդեր էին վիստում: Կարող էր

նույնիսկ թվալ, թե նրա հաշիվների մեջ էր մտնում Շտուֆերին անընդհատ մահու չափ հարբած վիճակում պահելը:

— Այնպես եք խոսում, կարծես դուք զիշերը մինչև լույս աստծուն եք աղոթել, — խոխոաց Շտուֆերը:

— Քյոլնում շատ անուշիկ ժամանակ եմ անցկացրել աղջկների հետ և, տեսնում եք, բարմ եմ ու նստած չեմ ուտաշորով: Դուք անկում եք ապրում, Շտուֆեր: Ի միջի այլոց, ինձ նախազգուշացրին մի ոչ այնքան հաճելի բանի մասին... Պարզվում է, որ ձեր վիլլան չափից դուրս մոտ է քիմիական գործարանին... Մի տեսակ կարծես վառողի նկուղի վրա լինի...

— Վայրահաչությո՞ւն է, — բղավեց Շտուֆերը, — այդ սրիկաներից մեկնումեկը էլի փորում է տակս... Իմ վիլլայում դուք կատարյալ ապահովության մեջ եք...

— Ավելի լավ: Հապա տվեք սարայի բանալին:

Շղթայիկով բանալին մատի վրա պտտեցնելով, Գարինը դուրս եկավ այզի, ուր ապակեշեն սարայն էր, վրան՝ անտենայի կայմաձողեր: Անխնամ մնացած ծաղկաթմբերում, այստեղ-այնտեղ գաճաճների խեցե արձանիկներ կային՝ ծածկված թռչնածերտով: Գարինը բացեց ապակեպատ դուրը, ներս մտավ, լայն բաց արեց պատուհանը: Արմունկներով կոթնեց լուսամուտագողին և այդպես մնաց որոշ ժամանակ՝ շնչելով վաղորդյան թարմ օդը: Համարյա տասներկու ժամ նա անց էր կացրել ավտոմոբիլում՝ ավարտելով գործերը բանկերի ու գործարանների հետ: Հիմա ամեն ինչ կարգին էր ամսի քանութից առաջ:

Ինքն էլ չիմացավ, թե ինչքան այդպես կանգնած մնաց պատուհանի մոտ: Հետո ձմլկոտաց, սիզար վառեց, միացրեց դինամոն, զննեց ու կարգավորեց ռադիոսարքերը: Ապա կանգնեց միկրոֆոնի առաջ և ասաց բարձր, հատ-հատ.

— Զոյա, Զոյա, Զոյա... Լսեք, լսեք, լսեք... Ամեն ինչ կլինի այնպես, ինչպես դու ես ցանկանում: Միայն ցանկալ կարողացիր: Դու պետք ես ինձ: Առանց քեզ իմ գործը մեռած է: Մոտ օրերս կլինեմ Նեապոլում: Ստույգ օրը կհայտնեմ վաղը: Ոչ մի բանի համար մի անհանգստանա: Ամեն ինչ բարենպաստ է...

Լոեց, խոր ներս քաշեց սիզարի ծուխն ու սկսեց նորից.

«Զոյա, Զոյա, Զոյա»... Փակեց աչքերը: Մեղմ զվուում էր դինամոն, և անտեսանելի շանթերն անտենայից պոկվում-թռչում էին անընդմեջ:

Հիմա եթե նույնիսկ հրետանային գումակ անցներ կողքով, Գարինը հավանաբար չէր լսի աղմուկը: Եվ նա չլսեց, թե ինչպես բացատի ծայրին քարեր գլորվեցին դարնիվայր: Հետո տաղարից հինգ քայլ այն կողմ իրարից հեռացան թփերը, և արանքում, մարդու աչքի մակարդակի վրա, բարձրացավ ատրճանակի սև փայլուն փողը:

## 69

Ռոլինգը վերցրեց հեռախոսի ընկալուչը.

— Այո:

— Մեմյոնովն է խոսում: Հենց նոր որսացի Գարինի ռադիոգիրը: Թույլ կտա՞ ք կարդալ...

— Այո:

— «Ամեն ինչ կլինի այնպես, ինչպես դու ես ցանկանում, միայն ցանկալ կարողացիր»,— սկսեց կարդալ Մեմյոնովը՝ մի կերպ ոուսերենից ֆրանսերեն թարգմանելով: Ռոլինգը լսում էր անծպտուն:

— Վե՞ թշ:

— Ճիշտ այդպես, վերջ:

— Գրեք,— Ռոլինգն սկսեց թելադրել.— Հաղորդակայանն անհապաղ սարել չորս հարյուր քանսմեկ երկարության ալիքի վրա: Վաղը տասը րոպե ավելի շուտ այն պահից, երբ որսացիք այսօրվա հեռագիրը, սկսեք հաղորդել ռադիոյով. «Զոյա, Զոյա, Զոյա...

Անսպասելի դժբախտություն է պատահել: Անհրաժեշտ է գործել: Եթե ձեզ համար թանկ է ձեր բարեկամի կյանքը, ուրբաթ օրը իջեք Նեապոլ, մնացեք «Սպլենդիդ» հյուրանոցում, սպասեք տեղեկությունների մինչև շաբաթ կեսօր»: Սա կրկնեք անընդհատ, լսո՞ւմ եք, անընդհատ՝ բարձր ու համոզիչ ձայնով: Այսքանը:

Ռոլինգը զանգ տվեց:

— Անհապաղ գտնել և ինձ մոտ բերել Տիկլինսկուն,— ասաց առանձնասենյակ թռած քարտուղարուհուն:— Անհապաղ գնացեք օդանավակայան: Վարձակալեք կամ գնեք, միևնույն է, մարդատար փակ աերոպլան: Վարձեք օդաչու և բորտմեխանիկ: Քսանութին ամեն ինչ պատրաստ լինի թռիչքի համար:

## 70

Մնացած ամբողջ օրը Վոլֆն ու Խլինովն անցկացրին Ք.-ում: Շրջեցին փողոցներում, տեղացիների հետ շաղակրատեցին դեսից-դենից՝ ցույց տալով, թե տուրիստներ են: Երբ քաղաքը հանդարտվեց, Վոլֆն ու Խլինովը գնացին լեռները: Կեսզիշերվա մոտ նրանք արդեն դարիվերով բարձրանում էին Շտուֆերի այգին: Որոշել էին՝ եթե ոստիկանությունն ուշադրություն դարձնի իրենց վրա, ասեն, թե մոլորված տուրիստներ են: Եթե բռնեն էլ չեն կալանավորի իրենց ալիրին կարող է հաստատել ամբողջ քաղաքը: Թփերի միջից կրակելուց հետո, երբ պարզ տեսան, թե ինչպես ցրիվ եկան Գարինի գանգի բեկորները, Վոլֆն ու Խլինովը մի քառասուն բռպեից արդեն քաղաքում էին:

Նրանք անցան ցածիկ ցանկապատի վրայով, թփերի ետևից զգույշ շրջանցեցին բացատը և դուրս եկան Շտուֆերի տան առաջ: Կանգ առան, իրար նայեցին՝ ոչինչ չհասկանալով: Այզին և տունը խաղաղ էին ու լուր: Պատուհաններից մի քանիսը լուսավորված էին: Ուղիղ այզի դուրս բերող մեծ դուրը բաց էր: Հանդարտիկ լուս էր ընկնում քարե աստիճաններին և խիստ խոտերի միջից դուրս պրծած գաճաճների զիլներին: Սանդղամուտքում, վերևի աստիճանի վրա նստած էր հաստլիկ մի մարդ և մեղմորեն ֆլեյտա էր նվազում: Կողքին հյուսվածապատ շիշ կար: Տեսաց այն մարդն էր դա, որ առավոտն անսպասելիորեն հայտնվեց ուղիղուաղավարի մոտի շավուում և, կրակոց լսելով, շուր եկավ ու երերուն վարգով վազ տվեց դեպի տուն: Հիմա նա իր համար լավ ժամանակ էր անցկացնում, կարծես ոչինչ չէր եղել:

— Մոտենանք,— շնչաց Խլինովը,— հարկավոր է պարզել:

Վոլֆը փնտինքաց.

— Անկարելի էր, որ վրիպեի:

Նրանք գնացին դեպի սանդղամուտքը: Ճանապարհի կեսին Խլինովն ասաց ցածրածայն.

— Ներեցեք անհանգստացնելու համար... Այստեղ հո շուն չկա՞ :

Շտուֆերն իշեցրեց ֆլեյտան, շուր եկավ աստիճանի վրա, երկարացրեց վիզը՝ երկու աղոտ կերպարանքները լավ տեսնելու համար:

— Չէ՛ է՛,— ձգեց նա,— այստեղի շները կատաղած են:

Խլինովը բացատրեց.

— Մենք ճամփան կորցրել ենք, ուզում էինք «Շղթայակապ կմախքի» ավերակները տեսնել... Թույլ տվեք մի քիչ հանգստանալ:

Շտուֆերը պատասխանեց անորոշ մոռոցով: Վոլֆն ու Խլինովը գուշա տվին, նստեցին վարի աստիճանների վրա, երկուսն էլ՝ լարված, հուզված: Շտուֆերը զննեց նրանց վերևից:

— Ի միջի այլոց,— ասաց նա,— երբ ես հարուստ էի, այգում կապովի շներ էի պահում: Ես չի սիրում աներես մարդկանց ու գիշերային այցելուներին: (Խլինովն արագ սեղմեց Վոլֆի ձեռքը, իբր չպատասխանեք, լոեք): Ամերիկացիներն ինձ սնանկացրին, իմ այգին ոտքի ճամփա դարձավ ավարաների համար, թեև ամեն տեղ տախտակներ են փակցված, որ զգուշացնում են, թե կարգ խախտողները հազար մարկ տուզանք կվճարեն: Բայց Գերմանիան դադարել է այնպիսի երկիր լինելուց, ուր հարգում են օրենքն ու սեփականությունը: Ես ասացի իմ վիլլան վարձակալած մարդուն՝ այգին շրջափակեք փշալարով ու պահակ դրեք: Նա չլսեց ինձ ու ինքն է մեղավոր...

Մի փոքր քար վերցնելով ու նետելով մթության մեջ, Վոլֆը հարցրեց.

— Որևէ անախործ քա՞ն է պատահել այստեղ այդ այցելուների պատճառով:

— «Անախորժ» ասելը շատ խիստ կլինի, բայց ծիծառելի՝ պատահել է: Հեռու չգնանք, հենց այսօր առավոտը: Համենայն դեպս, իմ տնտեսական շահերին չեն դիպել, ու ես կարող եմ տրվել իմ հաճույքներին:

Նա ֆլեյտան դրեց շրթունքներին ու մի քանի սուր հնչուն արձակեց:

— Վերջին հաշվով ինձ ինչ՝ այստեղ է նա մնում թե,

Քյոլնում քեֆ է քաշում աղջկների հետ: Նա վճարել է մինչև վերջին պֆենինզը... Ոչ ոք նրան չի կարող բան ասել: Բայց, զիտեք ինչ, նյարդերից թույլ պարոն դուրս եկավ: Պատերազմի ընթացքում կարող էր, չէ՞ վարժվել ատրճանակի կրակոցներին, գրողը տանի: Հավաքեց ինչ ուներ-չուներ՝ ցտեսությոն ուն, ցտեսությոն ուն... Է՞ հ, բարի ճամփա...

— Ընդմի շտ զնաց,— հանկարծ բարձրածայն հարցրեց Խլինովը:

Շտուֆերը մի քիչ բարձրացավ տեղից, բայց նորից նստեց: Նկատվեց, թե ինչպես նրա ճարպակալած այտը, որի վրա լույս էր ընկնում սենյակից, հալվեց-լայնացավ քմծիծաղի մեջ: Լիլիլկաց հաստ փորը:

— Այդպես է որ կա, նա ինձ նախազգուշացրեց՝ իր գնալ-մնալու մասին ինձնից կհետաքրքրվեն երկու շենտլմեն: Գնացել է, գնացել է, թանկագին շենտլմեններ: Թե չեք հավատում՝ եկեք ցույց տամ նրա սենյակները: Եթե դուք նրա բարեկամներն եք՝ խնդրեմ, համոզվեք... Ձեր իրավունքն է դա՝ վճարված է սենյակների համար...

Շտուֆերը նորից ուզում էր ելնել, բայց ոտքերը ոչ մի կերպ չեն պահում նրան: Այլևս խելքը գլխին որևէ բան հնարավոր չեղավ դուրս քաշել նրանից: Վոլֆն ու Խլինովը վերադարձան քաղաք: Ամբողջ ճանապարհին մի բառ անգամ չասացին իրար: Միայն

կամուրջի վրա, մութ ջրերից վեր, որոնց մեջ անդրադառնում էր լապտերի լույսը, Վոլֆը հանկարծ կանգ առավ, սեղմեց բռունցքները.

— Սա ի՞նչ սատանայական բան է, մարդ չի հասկանում. . . Այսր ես տեսա, թե ինչպես ցրիվ եկավ նրա զանգը...

## 71

Փոքրամարմին ու ամրակազմ մի մարդ՝ կիսով չափ ձերմակած, կողաբաժան սղալած հարթ մազերով, ցավոտ աչքերը պաշտպանող երկնազույն ակնոցով, կանգնել էր հախճայուսե վառարանի մոտ և, գլուխը կախ, լսում էր Խլինովին:

Սկզբում Խլինովը բազմոցին էր նստած, հետո ելավ ու նստեց պատուհանի գոգին, ապա սկսեց փութելու ետուառաջ անել սովետական դեսպանության փոքրիկ ընդունարանում:

Պատմում էր Գարինի և Ռոլինգի մասին: Պատմությունն ստույգ ու հետևողական էր, բայց Խլինովն ինքն էլ էր զգում իրար վրա կուտակված այդ բոլոր դեպքերի անհավանականությունը:

— Ենթադրենք, թե ես ու Վոլֆը սխալվում ենք... Շատ լավ, մենք մեզ երջանիկ կզանք, որ ճիշտ լինեն մեր եզրակացությունները: Բայց, այնուամենայնիվ, հիսուն տոկոսը խոսում է այն մասին, որ աղետ կլինի: Մեզ պետք է հետաքրքրի այդ հիսուն տոկոսը: Դուք, որպես դեսպան, կարող եք համոզել, ներգործել, բացել մարդկանց աչքերը... Այս ամենը սարսափելի լուրջ է: Սարքը գոյություն ունի: Շելգան տեսել է, ձեռք տվել: Հարկավոր է գործել անմիջապես, հենց այս րոպեին: Մեր տրամադրության տակ ընդամենը մեկ օր կա: Վաղը զիշերը կպայթի այդ ամենը: Վոլֆը մնացել է Ք.-ում: Նա ձեռքից եկածը կանի բանվորներին, արհմիություններին, քաղաքի բնակչությանը, գործարանների վարչությանը նախազգուշացնելու համար: Ինչ խոսք, հասկանալի է, ոչ ոք չի հավատում... Այ, նույնիսկ դուքս...

Դեսպանը, առանց աչքերը բարձրացնելու, լուս էր:

— Տեղական թերթի խմբագրատանը փորները բռնած ծիծաղեցին վրաներս... Մեզ առնվազն ցնդածի տեղ են դնում:

Խլինովը սեղմեց գլուխը. չսանրվելուց թաղկած մազերի ծվիկները դուրս ցցվեցին կեղտոտ մատների արանքից: Դեմքը սմբած էր, փոշոտ: Դժգունած աչքերը կարկամել էին, ինչպես սահմոկեցուցիչ տեսիլքի առաջ: Դեսպանը զգույշ, ակնոցի եզրից նայեց նրան.

— Ինչո՞ւ ավելի շուտ չդիմեցիք ինձ:

— Փաստեր չունեինք... Ենթադրություններ, եզրահանգումներ՝ այդ ամենը ֆանտաստիկայի, ցնորքի սահմանագծում էին... Ինձ հիմա էլ երբեմն թվում եմ, թե

կարթնանամ մղձավանջային քնից ու թեթևացած շունչ կրաշեմ... Բայց, հավատացեք, իւելս տեղն է: Ութ օր ու գիշեր ես ու Վոլֆը շոր չենք հանել, չենք պառկել քնելու:

Որոշ լուսաբանությունից հետո դեսպանն ասաց լրջորեն.

— Ես համոզված եմ, որ դուք միստիֆիկատոր չեք, ընկեր Խլինով: Ավելի շուտ դուք անձնատուր եք եղել սևեռուն գաղափարի, — նա արագ ձեռքը բարձրացրեց՝ կասեցնելով Խլինովի հուսահատ շարժումը, — բայց ինձ համար համոզիչ հնչեց ձեր խոսքը հիսուն տոկոսի մասին: Ես կգնամ ու կանեմ այն ամենը, ինչ կարող եմ...

## 72

Քսանութին, առավոտից Ք. քաղաքի հրապարակում բնակիչները հավաքվել են խումբ-խումբ, և ոմանք՝ տարակուսանքով, ոմանք էլ՝ որոշ երկյուղով քննարկում էն խաչմերուկներում, տների պատերին ծամած հացով փակցված տարօրինակ թռուցիկները:

«Ոչ իշխանությունը, ոչ գործարանային վարչությունը, ոչ բանվորական միությունները՝ ոչ ոք չցանկացավ անսալ մեր հուսահատ կոչին: Այսօր, — մենք համոզված ենք, — գործարաններին, քաղաքին, ամբողջ բնակչությանը կործանում է սպասում: Մենք աշխատեցինք կանխել աղետը, սակայն ամերիկյան բանկիրներից կաշառված սրիկաններին անհնար եղավ որսալ: Փրկվեք, փախեք քաղաքից դաշտերը: Հավատացեք մեզ ի սեր ձեր կյանքի, ի սեր ձեր երեխանների, ի սեր աստծո»:

Ուստիկանությունը գլխի ընկավ, թե ով է գրել թռուցիկը, և սկսեց որոնել Վոլֆին: Բայց նա անհետացել էր: Կեսօրին քաղաքային իշխանությունները ազդ-նախազգուշացում հրապարակեցին՝ ոչ մի դեպքում չհեռանալ քաղաքից և խուճապ չստեղծել, քանի որ, ըստ երևույթին, խարեւա գող-ավազակների խումբը միտք ունի այս գիշեր տեր ու տնօրինություն անել լրված տներում:

«Քաղաքացիներ, ձեզ հիմարի տեղ են դնում: Դիմեք առողջ դատողությանը: Խարեւա սրիկաններն այսօր ևեթ կհայտնաբերվեն, կձերբակալվեն, և նրանց հետ կվարվենք ըստ օրենքի»:

Իշխանությունները ճիշտ նշանակետին են խփել. ահազդու զաղտնիքը լույս օրվա պես պարզ ու հասկանալի դարձավ: Բնակիչներն անմիջապես հանգստացան և արդեն սկսեցին ծիծաղել. «Այ թե լավ էին մտածել, հա՛, ձարպիկ սրիկանները՝ հանգիստ տեր ու տնօրինություն կանեին մեր խանութներում, բնակարաններում, հա-հա՛, իսկ մենք՝ հիմարներս, ամբողջ գիշերը դաշտում պիտի դողդողայինք վախից»:

Իջավ երեկոն հազար-հազարավոր երեկոնների նման՝ քաղաքի պատուհանները հրդեհելով վերջալույսի հրով: Հանդարտվեցին թռչունները ծառերի վրա: Գետի խոնավ ափերին կոկոսին գորտերը: Աղյուսաշեն կիրկայի ժամացույցը «Վախտ ամ Ռայն» նվազեց՝ ի սարսափ քննձոտ ֆրանսիացիների, և զարկեց ութը: Փոքրիկ զինետների պատուհաններից խաղաղ ծորում էր լույսը, մշտական հաճախորդներն անշտապ բեղերն էին թրջում փրփուրով: Հանդարտվեց նաև քաղաքից դուրս գտնվող «Առ կմախքն շղթայակապ»

ուստորանի տերը. զնաց-եկավ թափուր սանդղավանդում, հայիոյեց կառավարությանը, սոցիալիստներին ու հրեաներին, կարգադրեց փակել ծածկոցափեղկերն ու հեծանիվով զնաց քաղաք՝ սիրուհու մոտ:

Այդ ժամին բլուրների արևմտյան լանջով, սակավաբանուկ ձանապարհով, համարյա անաղմուկ ու առանց լուսերը վառելու, սլանում էր մի ավտոմոբիլ: Վերջալույսն արդեն մարել էր, աստղերը դեռ վառ չէին, լեռների թիկունքից սառնավուն շառայլ էր ծավալվում. ելնում էր լուսինը: Հարթավայրում այստեղ-այնտեղ ճրագներ էին դեղնին տալիս: Եվ միայն գործարանների կողմում էր, որ չէր հանդարտվում կյանքը:

Զառիթափի վրա, այնտեղ, ուր ավարտվում էին ամրոցի ավերակները, նստած էին Վոլֆն ու Խլինովը: Նրանք մի անգամ էլ էին տնտղել բոլոր ծակուծուկերը, բարձրացել քառակուսի աշտարակը և ոչ մի տեղ Գարինի նախապատրաստության նշույն անգամ չէին նկատել: Մի պահ նրանց թվաց, թե հեռվում ավտոմոբիլ է ալանում: Ականջ դրեցին, լարեցին աչքերը: Երեկոն խաղաղ էր ու լուռ, հողի դարավոր անդորրության բույր կար օդում: Երբեմն օդաշխթերի հոսքն իր հետ ներքեսից ծաղիկների տամկահոտ էր բերում:

— Նայեցի քարտեզով,— ասաց Խլինովը,— եթե իջնենք արևմտյան ուղղությամբ, կկտրենք երկաթուղին կիսակայարանում, ուր կանգնում է փոստատար զնացքը հինգն անց կեսին: Չեմ կարծում, թե այնտեղ էլ հերթապահ ոստիկաններ դրած լինեն:

Վոլֆը պատասխանեց.

— Ծիծաղելի ու տիմար վերջ ունեցավ այս ամենը: Մարդը դեռ նոր-նոր է դադարել չորեքթաթ անելուց ու բարձրացել ետևի վերջավորությունների վրա, դեռ նրան չափից դուրս ճնշում են բիրտ վայրագության միջոնավոր դարերը: Ահավոր բան է մեծ գաղափարով դեկավարվող մարդկային զանգվածը: Մարդկանց չի կարելի թողնել առանց առաջնորդների: Նրանք հակված են նորից չորեքթաթ անելու:

— Լավ, ինչո՞ւ եք այդպիսի բաներ ասում, Վոլֆ...

— Հոգնել եմ:— Վոլֆը նստած էր քարակույտի վրա՝ բռունցքները դիմիար տված ամուր կզակին:— Մի վայրկյան նույնիսկ ձեր մտքով կանցնե՞ր, որ քասանութին մեզ կաշխատեն որսալ որպես խաբերաների ու թալանչիների: Թե տեսնեիք՝ ինչպես էին իշխանության այդ ներկայացուցիչներն իրար նայում, երբ ինձ կոտորում էի նրանց առաջ... Ախ, ի՞նչ հիմարն եմ ես: Ու նրանք իրավացի են՝ ահա թե բանն ինչ է: Նրանք երեք չեն իմանա, թե ինչ էր իրենց սպառնում...

— Եթե ձեր կրակոցը չլիներ, Վոլֆ...

— Էհ... Եթե չվրիպեի... Ես պատրաստ եմ տասը տարի նստել տաժանքային բանտում, միայն թե ապացուցեմ այդ ապուշներին...

Վոլֆի ձայնը հիմա խուլ արձագանքում էր ավերակներում: Զրուցողներից երեսուն քայլ այն կողմում, իսկ և իսկ իլահավի կտկտոցի վրա գաղտագողի զնացող որսորդի նման, Գարինը սպրդեց կիսավեր պատի ստվերի մեջ: Նա պարզ տեսնում էր զառիթափի

վերևում նատած մարդկանց ուրվապատկերը, լսում էր յուրաքանչյուր բառը: Պատի ծայրի և աշտարակի միջև ընկած բաց տարածությունը նա անցավ սողալով: Այնտեղ, ուր աշտարակի ստորոտին էր հարում «Շղթայակապ կմախքի» կամարակապ անձավը, ավազաքարե այսն մի բեկոր էր ընկած: Գարինը պահվեց դրա ետևը: Քարի կճրտոց և ժանգոտած երկարի ճռոց լսվեց: Վոլֆը վեր թռավ.

— Լսեցի՞ք:

Խլինովը նայեց քարակույտի կողմը, ուր գետնի տակ չքացավ Գարինը: Նրանք վազեցին այնտեղ: Պտույտ արեցին աշտարակի շուրջը:

— Այստեղ աղվես է լինում,— ասաց Վոլֆը:

— Չե, ավելի շուտ՝ զիշերահավը կանչեց:

— Հարկավոր է զնալ: Երկուս էլ սկսում ենք հայուցինացիայի մեջ ընկնել...

Երբ նրանք հասան զառիվայր արահետին, որ ավերակներից դեպի լեռնային ձանապարհն էր տանում, նորից աղմուկ լսվեց. կարծես ինչ-որ բան ընկավ ու զլորվեց: Վոլֆը ցնցվեց ամբողջ մարմնով: Նրանք ահազին ժամանակ ականջ էին դնում շունչները պահած: Լոռությունն իսկ ասես զրնգում էր նրանց ականջներում: «Պլյու-պլյու, պլյու-պլյու», — կարծ ու քնքուշ, մերթ հեռվից և մերթ բոլորովին մոտիկ, թռչելով կանչում էր անտեսանելի այծկիթը:

— Գնանք:

— Այս, հիմարություն է:

Այս անգամ նրանք վճռականորեն ու առանց ետ նայելու քայլեցին ցած: Դա փրկեց նրանցից մեկի լյանքը:

## 73

Վոլֆն այնքան էլ չէր սխալվում, երբ հավատացնում էր, թե ցրիվ եկան Գարինի գանգի բեկորները: Երբ Գարինը, միկրոֆոնի առաջ մի վայրկյան լրելով, ձեռքը մեկնեց սեղանի ծայրին ծխացող սիզարը վերցնելու, էրոնիտէ թասանման ընկալուչը, որ նա սեղմել էր ականջին՝ իր ձայնը հաղորդման ժամանակ կարգավորելու համար, հանկարծ փշուր-փշուր ցրիվ եկավ: Միաժամանակ նա սուր կրակոց լսեց և հարվածի կարճաւու ցավ զգաց գանգի ձախ կողմում: Իսկույն ընկավ կողքի, շուր եկավ, փովեց բերանքսիվայր ու անշարժացավ: Նա լսեց, թե ինչպես ոռնաց Շտուֆերը, ինչպես խշրտացին փախչող մարդկանց ոտնաձայները:

«Ո՞վ էր, Ռուլի՞նգը, թե Շելգան», — նա աշխատում էր այս հանելուկի լուծումը գտնել, երբ մի երկու ժամ հետո ավտոմոբիլով Քյոլն էր գնում: Բայց հիմա միայն, զարիբափի եզրին

նստած մարդկանց խոսակցությունը լսելուց հետո, գլխի ընկավ: Կեզցե՞ս, Շելգա... Բայց, այնուամենայնիվ, այս յայս դիմում ես անթույլատրելի հնարանքների...

Նա մի կողմ քաշեց գետնանցքի ժանգոտ կափարիչը ծածկող պան բեկորը, սողոսկեց գետնի տակ և, էլեկտրական լապտերով խարխլված աստիճանները լուսավորելով, բարձրացավ ու մտավ «քարե պարկը» — նորմանդական աշտարակի հաստաբեստ պարսպի մեջ արված մենախուցը: Երկուսուկես քայլ երկարությամբ ու լայնությամբ խոլ զնդան էր դա: Մի պատից դեռ կախված բրոնզե օղեր ու շղթաներ էին մնում: Հանդիպակաց պատի մոտ կոպիտ կցմցված իշոտնուկի վրա սարքն էր: Տակը՝ դինամիտով չորս թիթեղատուի: Սարքի փողաբերանի դիմաց պատը ծակված էր. դրսի կողմից անցքը ծածկում էր շղթայակապ կմախքը:

Գարինը մարեց լապտերը, մի կողմ տարավ սարքի փողաբերանն ու, ձեռքը խոթելով անցքի մեջ, ետ հրեց կմախքը: Գանզը պոկվեց ու գլորվեց ցած: Անցքից երևում էին գործարանների լույսերը: Գարինը սուր աչք ուներ: Նա նշմարում էր նույնիսկ շինությունների միջև դեսուդեն շարժվող մարդկանց մանրիկ կերպարանքները: Դողում էր ամբողջ մարմնով: Ատամները սեղմած էին: Չէր կարծում, թէ այդքան դժվար կլինի այդ պահին պատրաստվելը: Նա սարքի փողաբերանը նորից ուղղեց անցքի մեջ, սարեց: Ետ զցեց ետևի կափարիչը, ստուգեց բրգիկները: Այդ ամենը նախապատրաստված էր դեռ մեկ շաբաթ առաջ: Նրա երկրորդ սարքն ու հին մողելը ներքնում էին, անտառակում, ավտոմոբիլի մեջ:

Նա փակեց կափարիչն ու ձեռքը դրեց մագնետոյի լծակին, որով ավտոմատորեն վառվում էին բրգիկները: Դողում էր ոտքից գլուխ: Խիղճը չէր (համաշխարհային պատերազմից հետո էլ ի նշ խիղճ...), վախը չէր (նա թեթևամիտ էր չափից դուրս), դատապարտվածների հանդեպ կարեկցանքը չէր (նրանք շատ հեռու էին), որ նրան զցում էր դողի ու տենդի մեջ: Նա սահմոկեցուցիչ պարզությամբ հասկանում էր, որ այս բռնակի մի պտույտով ինքը դառնալու է մարդկության թշնամի: Պահի կարևորությունից ծնված զուտ էսթետիկական ապրում էր դա:

Նա նույնիսկ ձեռքը հեռացրեց լծակից և տարավ գրպանը գլանակ հանելու: Բայց նրա խոռված ուղեղն իսկույններ արձագանքեց ձեռքի շարժմանը. «Դու դանդաղում ես, դու վայելք ես ապրում, դա խելագարություն ե»...

Գարինը պտտեց մագնետոն: Սարքի մեջ բռնկվեց ու ֆունգը: Նա սկսեց դանդաղ դարձնել մանրաշափական պտուտակը:

Խլինովն առաջինը ուշադրություն դարձեց բարձր երկնքում բռնկված լույսի կծիկի վրա:

— Ահա մեկն էլ,— ասաց նա կամացուկ: Նրանք կանգ առան ճամփի կեսին, զարդարակի վրա և, գլուխները բարձրացնելով, սկսեցին նայել: Առաջինից ցած, ծառերի

ուրվապատկերի վերևում, բռնկվեց երկրորդ հրե կծիկը, կայծեր շաղ տալով, հետզհետե  
մարմրող հրթիռի նման սկսեց ընկնել...

— Թոշուննե՞րն են այրվում, — շշնջաց Վոլֆը, — նայե՛ք: Անտառի վերևում, լուսավոր  
շերտի մեջ շտապկոտ, անհավասար ձախրանքով թոշում էր թերևս այն այծկիթը, որ քիչ  
առաջ կանչում էր «պլյու-պլյու»: Թոշունը բոցավառվեց ու ընկավ գլուխկոնծի տալով:

— Դիպչում են հաղորդալարին:

— Ի՞նչ հաղորդալար:

— Ահա, չե՞ք տեսնում, Վոլֆ:

Խլինովը ցույց տվեց փայլուն, ասեղի պես ուղիղ թելը, որ վերևում ավերակներից ձգվում էր  
Անիլինային ընկերության գործարանների կողմը: Թելի ուղղությունը նկատելի էր բռնկվող  
տերևների, վառվող թոշունների միջոցով: Հետո թելն սկսեց փայլել ավելի վառ, նրա մեծ  
մասը հատեց սոճիների սև պատը:

— Իջնո՞ւմ է, — ձաց Վոլֆը: Եվ ձիչը բերանում մնաց: Երկուսն էլ հասկացան, թե դա ինչ  
թել էր: Նրանք, քար կտրած, կարող էին հետևել միայն դրա ուղղությանը: Ճառագայթի  
առաջին հարվածը հասավ գործարանի ծխնելույզին. ծխնելույզն օրորվեց, կոտրվեց կեսից  
ու ընկավ: Բայց շատ հեռու էր, և անկման ձայնը չսպեց:

Համարյա նույն պահին էլ ծխնելույզից ձախ գոլորշու պյուն բարձրացավ երկար շինության  
տանիքի վրա, վարդագունեց ու խառնվեց սև ծխին: Ավելի ձախ հինգ հարկանի  
մասնաշենք էր: Հանկարծ այդ շենքի բոլոր պատուհանների լուսերը մարեցին: Վերից  
վար, ճակատով մեկ, հրե զիզզագներ անցան, որ կրկնվեցին էլի ու էլի...

Խլինովը ծղրտաց նապաստակի պես... Շենքը նստեց, փուլ եկավ, և նրա հիմնակմախքը  
պարուրվեց ծխի ամպերով:

Այդ ժամանակ միայն Վոլֆն ու Խլինովը ետ սլացան դեպի լեռը, դեպի ամրոցի  
ավերակները: Ուղիղ կտրելով ոլորտն ձանապարհը, նրանք թփակաղնուտով ու  
մանրանտառով մազլցեցին զարիթափն ի վեր: Ընկնում էին, սահում ցած: Փնչփնչում էին,  
հայիոյում՝ մեկը ոռւսերեն, մյուսը՝ գերմաներեն: Եվ ահա նրանց ականջին հասավ խոռ մի  
ձայն, ասես հողն էր տնքում: Նրանք շուր եկան: Հիմա երևում էր ամրող գործարանը՝  
ձգված կիլոմետրերով: Գործարանի շենքերի կեսը բոցավառվում էր ստվարաթղթե  
տնակների պես: Ներքևում, ուղիղ քաղաքի մոտ, գորշ-դեղնավուն ծուխ էր բարձրանում  
սնկաձեւ: Հիպերբոլիդի ճառագայթը խելահեղ պարում էր այդ ավերմունքի մեջ, որոնելով  
ամենազլիափորը՝ պայթուցիկ կիսաֆարբիկատների պահեստները: Հրացոլքը բռնել էր  
երկնքի կեսը: Ծիփ ամպերը, դեղին, թխաթույր, արծաթավուն-ձերմակ կայծախրձերը վեր  
էին խոյանում լեռներից բարձր:

— Ախ, ո՞ւշ է արդեն, — աղաղակեց Վոլֆը:

Երևում էր, թե ինչպես ճանապարհների կավճագույն ժապավեններով քաղաքից ինչ-որ կենդանի շիլաշփոր է դուրս հոսում: Ողջ վիթխարի հրդեհն արտացոլող գետի շերտը պուտպուտիկ էր թվում սև կետերից: Քաղաքի բնակչությունն էր փորձում ազատվել՝ մարդիկ փախչում էին դաշտերը:

— Ու՞շ է, ու՞շ է,— գոռում էր Վոլֆը: Փրփուր ու արյուն էին ծորում նրա կզակով:

Ուշ էր արդեն փրկվելու համար: Քաղաքի և գործարանի միջև ընկած խոտառատ դաշտը, որ ծածկված էր կղմինդրե տանիքների երկար շարքերով, հանկարծ վեր բարձրացավ: Գետինն ուղեց: Վոլֆն ու Խլինովը նախ այդ բանը տեսան: Հետո անմիջապես գետնի տակից, ճեղքածքների միջից բոցի կատաղի լեզուներ ժայթքեցին: Եվ իսկույն էլ բոցի միջից վեր խոյացավ կրակի ու շիկացած զազի կուրացուցիչ, մինչ այդ չտեսնված պայծառության մի այուն: Երկինքն ասես վեր թռավ ամբողջ հովտի վրայից: Տարածքները ողողվեցին կանաչավարդագույն լույսով: Այդ լույսի մեջ, ինչպես արևի խավարման ժամանակ, ցայտուն ուրվագծվեցին ծառի յուրաքանչյուր ոստը, խոտի յուրաքանչյուր փունջը, յուրաքանչյուր քարն ու երկու քարացած ճերմակ մարդկային դեմքեր:

Օդի ալիք զարկեց: Որոտ թնդաց: Պատառոտված հողի ոռնոցը բարձրացավ: Ցնցվեցին լեռները: Մրրիկը տարուքերեց ու ձկեց ծառերը: Քարեր, խանձողներ թռան դեսուդեն: Ծխի ամպերը պատեցին նաև հովիտը:

Խավար տիրեց, և խավարում թնդաց երկրորդ, ավելի ահավոր պայթյունը: Ծխամշուշ օդն ամբողջովին հագեցավ մոայլ-ժանզագույն շարավային լույսով:

Հողմը, քարերի ու ձյուղերի կտորները ցած զլորեցին Խլինովին ու Վոլֆին և քշեցին, տարան զարիթափն ի վար:

## 75

— Նավապետ Յանսեն, ես ուզում եմ ափ դուրս գալ:

— Լսո՞ւմ եմ:

— Ես ուզում եմ, որ դուք էլ գաք ինձ հետ:

Յանսենը շիկնեց բավականությունից: Մի բոպեից վեց թի լայն, կոկ փայլուն նավակը «Արիզոնայի» կողից թեթև իջավ վճիռ ջրերին: Երեք թուխ-կարմրերես նավաստիներ ճոպանով սահեցին նստարանների վրա, բարձրացրին թիերը, քարացան:

Յանսենն սպասում էր նավասանդուղքի մոտ: Զոյան դանդաղում էր. դեռ ցրված հայացքով նայում էր սանդղափուլերով վեր ելնող Նեապոլի՝ տապից աղոտ ու երերուն ուրավապատկերին, քաղաքի վրա բարձրացող հինավորց ամրոցի թրծակավե պարիսպներին ու աշտարակներին, Վեզուվի հովորեն ծխացող կատարին: Քամի չկար, և ծովը հարթ էր հայելու նման:

Բազմաթիվ նավակներ էին ծույլ-ծույլ շարժվում ծովածոցում: Դրանցից մեկի մեջ կանգնած, նավախելի թիով թիավարում էր բարձրահասակ մի ծերունի, որ ասես Միքելանջելոյի գծանկարներից էր դուրս եկել: Ալեքարդ մորուքը փովել էր մուգ գույնի ծվատված, կարկատանածածկ թիկնոցի վրա, զիսի շուրջը լուսապսակի պես զգուզավել էին ձերմակ մազերը: Ուսն ի վար՝ քաթանե մախաղ:

Ամենքին հայտնի մուրացկան Պեպպոն էր:

Նա սեփական նավակով դուրս էր եկել ողորմություն խնդրելու: Նախորդ օրը Զոյան նավակողից նրան հարյուր դոլլարանոց թղթադրամ էր նետել: Այսօր Պեպպոն նորից նավակն ուղղեց դեպի «Արիզոնան»: Նա աստվածներից ու մուսաներից սիրված հին Իտալիայի վերջին ռոմանտիկն էր: Այդ ամենն անցել էր անդարձ: Ոչ ոք այլս չէր արտասվում՝ երջանկալի աչքերով նայելով հազարամյա քարերին: Պատերազմի դաշտերում փոտել էին այն նկարիչները, ովքեր, պատահում էր, զնզուն ոսկի էին վճարում Պոմպեյում, Ցեցիլիա Ցուկունդուսի տան փլատակների մեջ Պեպպոյին նկարելու համար: Աշխարհը տիսուր ու տաղտկալի էր դարձել:

Դանդաղ շարժելով թին, Պեպպոն նավակը քշեց «Արիզոնայի» երկայնությամբ, որի կողերը ջրացոլքերից կանաչավուն երանգ էին առել, բարձրացրեց խորշոմապատ, զգուզ հնոքերով, մեղալի նման հոյակապ դեմքն ու ձեռքը վեր պարզեց: Նա զոհաբերություն էր պահանջում: Զոյան, կռանալով, հարցրեց իտալերեն.

— Պեպպո, գուշակիր, զո՞յգ է, թե կենտ:

— Զոյյգ է, սինյորա:

Զոյան նրա նավակի մեջ զցեց նոփ-նոր թղթադրամների մի կապուկ:

— Շնորհակալություն, գեղանի սինյորա,— ասաց Պեպպոն վեհորեն:

Այլս դանդաղելու հարկ չկար: Զոյան արդեն գուշակություն էր արել Պեպպոյի վրա. նավակով մոտեցող մուրացկանը եթե իր հարցին պատասխաներ՝ «զոյյգ», ամեն ինչ լավ կլիներ:

Բայց և այնպես, նրան վատ նախազգացումներ էին տանջում. իսկ եթե հանկարծ «Սպլենդիդ» հյուրանոցում ոստիկանական ծուղակ սարքված լինի՞: Սակայն ականջին հնչում էր տիրական ձայնը. «... Եթե ձեզ համար թանկ է ձեր բարեկամի կյանքը»... Ըստրություն չկար:

Զոյան իջավ վեցթի նավակի մեջ: Յանսենը նստեց դեկի մոտ, թիերը շարժվեցին թափով, և ընդառաջ սուրաց Սանտա Լյուչիա առավիր՝ արտաքին սանդուղքներով, պարաններին փոված սպիտակեղենով ու լաթեղենով տները, զարթափն ի վեր աստիճաններով նեղիկ փողոցները, կիսամերկ երեխաները, դրների մոտ կանգնած կանայք, շեկիկ այծերը, ոստրեի կրպակները հենց ջրի կողքին և գրանիտի վրա փոված ուռկանները:

Նավակը հազիվ էր դիպել առափնյա կանաչ կառանացքերին, երբ աստիճաններով ցած խուժեց գջոտ ավարաների, մարջան ու ոսկրազարդեր վաճառողների, հյուրանոցային գործակալների մի ամբողջ խառնամբոխ: Մտրակները թափահարելով գոռում-կանչում էին կառապանները, կիսամերկ փոքրիկ տղաները վնաստալով թափալվում էին ոտքերի տակ՝ մի տղի խնդրելով օտարերկրացի գեղեցկուհուց:

— «Սպիտակ Զոյան՝ Յանսենի հետ կառք նստելով:

## 76

Հյուրանոցի բարապանին Զոյան հարցրեց՝ գրություն չկա՝ արդյոք մադամ Լամոլի անունով: Նրան ուղիղի եռախոսազիր տվեցին, որի տակ ստորագրություն չկար. «Սպասեք մինչև շաբաթ երեկո»: Զոյան թորվեց ուսերը, սենյակներ պատվիրեց և Յանսենի հետ գնաց քաղաքը դիտելու: Յանսենն առաջարկեց՝ թանգարան:

Զոյան ձանձրացող հայացքով արագ անցավ Վերածնության հավերժ քարացած գեղեցկուհիների առջևով. Նրանք իրենց ծանրաբեռնում էին չալվող դիպակով, մազերը չին կտրում, ըստ երևույթին ամեն օր չէր, որ վաննա էին ընդունում, և հպարտանում էին այնպիսի գորեղ ուսերով ու ազդրերով, որոնցից կամաչեր Փարիզի շուկայի ամենաետին առևտրական կինն անզամ: Ավելի տաղտկալի էր կայսրերի մարմարե գլուխներին, կանաչած բրոնզե դեմքերին նայելը՝ պիտի մնային հողի տակ ու մնային. . . Ծիծաղելի էր Պոմպեյի որմնանկարների մանկամիտ պոռնոգրաֆիան: Չէ, իին Հռոմն ու Վերածնությունը հոռի ճաշակ են ունեցել: Նրանց հասու չի եղել ցինիզմի սրությունը: Բավարարվել են ջուր խառնած զինխով, անշտապ համբուրվել են փարթամ ու առաքինի կանանց հետ, հպարտացել են մկաններով ու քաջությամբ: Նրանք հարզանքով իրենց ետևից քարշ են տվել ապրած դարերը: Նրանք չեն իմացել, թե ինչ ասել է ժամում երկու հարյուր կիլոմետր կտրել մրցարշավի մերենայով: Կամ ավտոմոբիլների, աերոպլանների, էլեկտրականության, հեռախոսի, ռադիոյի, վերելակների, մոդայական դերձակների և չեկի գրքույկի միջոցով (տասնինգ բռպեռում չեկով դուք կստանաք այնքան ոսկի, որքան չի արժեցել ամբողջ հին Հռոմը) կյանքի յուրաքանչյուր բռպեց բռլոր հաճույքները քամել մինչև վերջին կաթիլը:

— Յանսեն,— ասաց Զոյան (նավապետը գալիս էր կես քայլ ետ մնալով՝ շիփ-շիտակ, պղնձակարմիր, ոտքից գլուխ սպիտակ զգեստի մեջ, կոկիկ ու պատրաստ ամեն հիմարության):— Յանսեն, մենք իզուր ժամանակ ենք կորցնում, ես ձանձրանում եմ:

Նրանք գնացին ռեստորան: Մինչ կրերեն հաջորդ կերակրատեսակը, Զոյան վեր կացավ, Յանսենի ուսին դրեց հոլանի սիրունիկ ձեռքն ու սկսեց պարել ոչինչ չարտահայտող դեմքով, կոպերը կիսափակ: Նրա վրա «կատաղի» ուշադրություն էին դարձնում: Պարը գրգրեց ախորժակն ու ծարավը: Նավապետի ոռունգերը դրդում էին, նա ափսեին էր նայում՝ վախենալով մատնել աշքերի փայլը: Հիմա նա գիտեր, թե ինչպիսիք են լինում միլիարդատերերի սիրուհիները: Մինչ այդ, պարելիս նրա ձեռքը երբեք չէր զգացել այդքան

քնքուշ, ձիգ, նյարդային մեջք, նրա ոռւնզերը երբեք չին ներշնչել մաշկի ու օծանելիքի այդպիսի բուրմունք:

Հապա ձայնը՝ երգեցիկ ու հեզնոտ. . . Եվ ի՞նչ խելացի է. . . ի՞նչ փառահեղ է. . .

Երբ դուրս եկան ռեստորանից, Յանսենը հարցրեց.

— Ինձ որտե՞՞ դ կիրամայեիք լինել այս զիշեր, նավի վրա՞՝, թե հյուրանոցում:

Զոյան նրան նայեց արագ ու տարօրինակ և խսկույն էլ շուր տվեց գլուխը, չպատասխանեց:

## 77

Զոյան արբել էր զինուց ու պարերից: «Օ-լա-լա, կարծես թե պիտի հաշիվ տամ»:

Հյուրանոցի շքամուտքով մտնելիս նա հենվեց Յանսենի քարե թևին: Բարապանը, բանալին հանձնելով, գեշ քմծիծաղեց նեապոլցու թուխ մոռութով: Զոյան մեկեն լարվեց.

— Որևէ նորությո՞ն նն կա:

— Օ՛, ոչ մի նորություն, սինյորա:

Զոյան ասաց Յանսենին.

— Գնացեք ծխարան, մի գլանակ ծխեք, եթե չեք ձանձրացել ինձ հետ խոսելուց՝ կզանզեմ. . .

Նա թեթևաքայլ բարձրացավ աստիճանների կարմիր գորգի վրայով: Յանսենը կանգնած մնաց ներքեւում: Սանդուղքով թեքվելիս Զոյան ետ նայեց, քմծիծաղեց: Յանսենը հարբածի նման գնաց ծխարան և նստեց հեռախոսի մոտ: Սկսեց ծխել՝ այդպես էր կարգադրել Զոյան: Ետ ընկնելով բազկաթոռի մեջ՝ պատկերացրեց.

... Զոյան մտավ իր համարը. . . Հանեց գլխարկը, մահուղե սպիտակ թիկնոցը. . .

Անշտապ, ծուլորեն, դեռահաս աղջկա անվարժ շարժումներով սկսեց հանվել. . .

Շրջազգեստն ընկավ հատակին, նա անցավ վրայով: Կանգնեց հայելու առաջ. . . Խոշոր բիբերով սկսեց դիտել իր արտացոլումը՝ այնքան գայթակղիչ. . . Այո, այո, նա չի շտապում, կանայք այդպես են. . . Օ՛, նավապետ Յանսենը զիտե սպասել. . . Զոյայի հեռախոսը զիշերասեղանի վրա է. . . Ուրեմն ինքը նրան կտեսնի անկողնում. . . Ահա Զոյան կոթնեց արմունկին, ձեռքը մեկնեց դեպի հեռախոսը. . .

Բայց հեռախոսը չզանզեց: Յանսենը փակեց աչքերը, որ անիծյալ ապարատը չտեսնի. . .

Թո՛ւհ, իսկապես, սիրահարված լակոտի պես է պահում իրեն. . . Իսկ եթե հանկարծ Զոյան միտքը փոխած՝ լինի: Յանսենը վեր թռավ տեղից: Նրա առջև կանգնած էր Ռոլինզը:

Նավապետի արյունն ուժգին գլուխը խփեց:

— Նավապետ Յանսեն,— ասաց Ռոլինզը ճռճռան ձայնով,— շնորհակալ եմ ձեզնից մադամ Լամոլի հանդեպ ցուցաբերած ձեր հոգատարության համար, բայց այդքանը

բավական է այսօր, նա այլևս դրա կարիքը չունի: Առաջարկում եմ ձեզ՝ վերադառնալ ձեր պարտականություններին... .

— Լսում եմ,— արտասանեց Յանսենը միայն շրթունքներով:

Ռոլինզը խիստ փոխվել էր այդ մեկ ամսվա մեջ՝ դեմքը մթնղել էր, աչքերը փոս էին ընկել, մորուքը սև-շիկակարմագուն ստուգ տարածվել էր այտերի վրա: Նա տաք պիջակով էր, որի գրապանները կրծքի վրա տողել էին՝ փողով ու չեկի գրքույկներով ճխտված... «Զախով՝ քունքին, աջո՞ւ շեղակի այսուկրին, և շունչը կփչի այս դոդոշը»... Նավապետ Յանսենի երկարէ բռունցքները լցվեցին չարությամբ: Չոյան հիմա այստեղ լիներ, նշանացի նայեր նավապետին՝ Ռոլինզից մի տոպրակ ոսկոր կմնար:

— Ես մի ժամից «Արիզոնայի» վրա կլինեմ,— խոժոռվելով, հրամայաբար ասաց Ռոլինզը:

Յանսենը սեղանի վրայից վերցրեց գլխարկը, խոր քաշեց գլխին, դուրս եկավ: Թռավ կառքը: «Ծովա՝ փի»: Նրան թվում էր՝ բոլոր անցորդները քմծիծաղում էին՝ նայելով իրեն. «Հը, կերա՞ր»... Յանսենը կառապանի ձեռքը մի բուռ մանր դրամ խորեց ու նետվեց նավակի մեջ. «Քշե՛ք, շան զավակներ»: Նավասանորութքով վեր վազելով, զրոաց օգնականի վրա. «Տախտակամածն ախո՞ն եք սարքել»... Բանալիով կողղպեց իր խցիկի դուռը և, առանց գլխարկը հանելու, ընկավ մահճակալին: Կամացուկ մոնչում էր միայն:

Ուղիղ մեկ ժամից լսվեց հերթապահի կանչը, և թույլ մի ձայն պատասխանեց նրան ջրերի վրայից: Ճռճոաց նավասանդուդքը: Նավապետի օգնականը գոչեց զվարք, զրնգուն.

— Բոլորին վե՛ր կանչել:

Եկել էր նավի տերը: Ինքնասիրության մնացորդները կարելի էր փրկել միայն Ռոլինզին հանդիպելով այնպես, իբր ոչ մի բան չէր պատահել ափին: Յանսենը կամրջակի վրա ելավ արժանապատվորեն ու հանգիստ: Ռոլինզը բարձրացավ նրա մոտ, զեկույց ընդունեց նավի հիանալի վիճակի մասին և սեղմեց նրա ձեռքը: Պաշտոնական մասն ավարտված էր:

Ռոլինզը սիզար վառեց ու սկսեց ծիւել՝ փոքրամարմին, ցամաքաբնակ, մուգ գույնի տաք պիջակով, որ ստվեր էր զցում «Արիզոնայի» նրբագեղության և նեապոլյան երկնքի վրա:

Արդեն կեսպիշեր էր: Կայմերի և առազատափայտերի միջև առկայծում էին համաստեղությունները: Քաղաքի ու նավերի լուսերն անդրադառնում էին ծովածոցի բազալտի պէս սև ջրերում: Ոռնաց ու մարեց բուքսիրային փոքրիկ շոգենավի շշակը:

Հեռվում յուղափայլ-հրագույն սյուներ օրորվեցին:

Ռոլինզն ասես ամբողջովին տարված էր սիզարով՝ հոտոտում էր, ծիսի քուլաներ բաց թողնում նավապետի կողմը: Յանսենը, ձեռքերը կախ զցած, պաշտոնական կեցվածքով կանգնած էր նրա դեմ:

— Մադամ Լամոլը ցանկություն հայտնեց մնալ ափին,— ասաց Ռոլինզը, — քմահաճույք է, բայց մենք՝ ամերիկացիներս, միշտ հարգում ենք կնոջ կամքը, եթե դա նույնիսկ բացահայտ խենթություն է:

Նավապետն ստիպված էր խոնարհել գլուխը, համաձայնել նավի տիրոջ հետ: Ոոլինզը շրթունքներին տարավ ձախ ձեռքը, ծծեց ափի վերին կողմի մաշկը:

— Ես նավի վրա կմնամ մինչև առավոտ, գուցե և վաղն ամբողջ օրը... Իմ այստեղ մնալը թող հանկարծ այնպես՝ ձախ ու ծուռ շմեկնաբանվի... (Ափի մաշկը ծծելուց հետո նա ձեռքը մոտեցրեց խցիկի բաց դռնից ներս ընկնող լուսին): Է՛, այդպես ուրեմն... ձախ ու ծուռ... (Յանսենը հիմա նրա ձեռքին էր նայում. Վրան եղունզների հետքեր կային): Բավարարում եմ ձեր հետաքրքրասիրությունը. Ես նավի վրա սպասում եմ մեկին: Բայց նա չի սպասում, թե ինձ կտեսնի այստեղ: Նա ամեն րոպե կարող է հայտնվել: Կարգադրեք անմիջապես տեղեկացնել ինձ, եթե նավ կբարձրանա: Բարի գիշեր:

Յանսենի գլխում ամեն ինչ խառնվել էր իրար: Նա աշխատում էր որևէ բան հասկանալ... Մադամ Լամոլը մնաց ափին: Ինչո՞ւ: Քմահաճույք... Թե՞ սպասում է իրեն՝ Յանսենին: Չէ, հապա Ոոլինզի ձեռքի ճանկովածքնե՞րը... Սի բան պատահել է... Գուցե հիմա նա ընկած է մահճակալին՝ կտրած կոկորդով... Կամ ջրի տակ է՝ պարկի մեջ... Միլիարդատերերը չեն քաշվում նման բաներից:

Ընդհանուր նավասենյակում ընթրիքի ժամանակ Յանսենը պահանջեց մի բաժակ վիսկի՝ առաց սոդայաջրի, մի կերպ ուղեղը թարմացնելու համար: Նավապետի օգնականը պատմեց լրագրային սենսացիայի՝ Անիլինային ընկերության գերմանական գործարաններում տեղի ունեցած ահավոր պայթյունի, մոտակա քաղաքի կործանման և ավելի քան երկու հազար մարդու բնաջնջման մասին:

Նավապետի օգնականն ասաց... .

— Մեր նավատիրոջ բախսոր շան պես բերում է: Անիլինի գործարանների ոչնչացումից նա կշահի այնքան, որ Գերմանիան կառնի ոտով գլխով, Հոհենցոլերներով ու սոցիալ-դեմոկրատներով: Խմում եմ մեր նավատիրոջ կենացը:

Յանսենը լրագրերն իր խցիկը տարավ: Ուշադիր կարդաց պայթյունի նկարագրությունը և տարբեր, մեկը մյուսից անհեթեթ ենթադրությունները պատճառների մասին: Ամեն տեղ աչքի էր զարնում Ոոլինզի անունը: Նորաձևությունների բաժնում ասվում էր, որ զալիք սեղոնում մոդայում կլինեն այտերը ծածկող մորուքն ու բարձր չոր կոտելովը՝ լայնեցր փափուկ գլխարկի փոխարեն: «Էկզելսիորում», առաջին էջում «Արիզոնայի» լուսանկարն էր և ձվածիր շրջանակի մեջ՝ մադամ Լամոլի հմայիչ գլուխը: Նայելով նրան՝ Յանսենը կորցրեց հոգու արիությունը: Ներքին տագնապն աճում էր ու աճում:

Գիշերվա ժամը երկուսին նա ելավ խցիկից և վերին տախտակամածում, թիկնաթոռի մեջ տեսավ Ոոլինզին: Յանսենը ետ եկավ խցիկ: Արագ հանեց համազգեստը,

մերկ մարմնի վրա հազար նրբագույն բրդե կտորից կարված թեթև կոստյումը, կոշիկները, դրեց գլխարկն ու դրամապանակը խորեց ուտինե քանկի մեջ, կապեց: Ժամացույցը զարկեց երեքը: Ոոլինզը դեռ նստած էր թիկնաթոռում: Չորսին էլ դեռ նստած էր նույն տեղը, բայց նրա ուրվապատկերը, ուսերի մեջ քաշված գլխով, թվում էր անկենդան քնել էր: Մի րոպեից Յանսենը խարսխաշղթայով անաղմուկ իջավ ջուրն ու լողաց դեպի ափ:

— Մադամ Զոյա, զուր նեղություն մի տվեք ձեզ, հեռախոսն ու զանգը կտրված անջատված են:

Զոյան նորից նստեց անկողնու եզրին: Նրա շուրթերը ցնցվում էին չար քմծիծաղից: Ստաս Տիկլինսկին փովել էր սենյակի մեջտեղում դրված թիկնաթոռում, ոլորում էր բեղերը՝ աչքն իր լաքած կիսակոշիկներին: Ծխել, այնուամենայնիվ, չէր համարձակվում. Զոյան կտրականապես արգելել էր, իսկ Ռուխնզը խստորեն կարգադրել էր քաղաքավարի լինել դամայի հետ:

Տիկլինսկին փորձեց պատմել Վարշավայում ու Փարիզում ունեցած իր սիրային արկածներից, բայց Զոյան այնպիսի արհամարհանքով նայեց նրա աչքերի մեջ, որ լեզուն չորացավ: Ստիպված էր լոել: Առավոտյան հինգի մոտ էր արդեն: Ազատվելու, խաբելու, գայթակղելու կանացի բոլոր փորձերն ի դերև անցան:

— Միևնույն է,— ասաց Զոյան,— ինչ կերպ էլ լինի՝ ես ոստիկանությանն իմաց կտամ:

— Հյուրանոցի սպասավորուիին կաշառված է խիստ մեծ գումարով:

— Կշարդեմ պատուհանի ապակին ու կգոռամ, հենց որ փողոցում շատ մարդ լինի:

— Դա նույնապես նախատեսված է: Եվ նույնիսկ բժիշկ է վարձված, որ հաստատի ձեր նյարդային նոպաները: Դուք, մադամ, այսպես ասած, արտաքին աշխարհի աչքում այնպիսի կին եք, որ փորձել է խարել ամուսնուն: Դուք

օրենքից դուրս եք: Ոչ ոք չի օգնի և չի հավատա: Այնպես որ, նստեք հանգիստ:

Զոյան ճթճթացրեց մատներն ու ասաց ոռուերեն:

— Մրիկա՛: Քնառո՞ւ լեհուկ: Սողո՛ւն: Վայրենի՛:

Տիկլինսկու այտերը փրկեցին, բեղերը կանգնեցին բիզ-բիզ: Բայց չէր կարող հայինյանքին պատասխանել հայինյանքով, հրամայված չէր: Մոթմոթաց.

— Է՛, զիտենք, զիտենք, կանայք սկսում են հայինյել, հենց որ տեսնում են՝ իրենց գովարանված գեղեցկությունը չի ազդում դիմացինի վրա: Ես խղճում եմ ձեզ, մադամ: Բայց մի ամբողջ օր, գուցեն՝ երկու, ստիպված ենք այստեղ նստել տես-ա-տես<sup>22</sup>: Ավելի լավ է պառկեք, հանգստացնեք ձեր նյարդերը... Բայ-բայ, մադամ:

Ի զարմանս նրա, Զոյան այս անգամ ենթարկվեց: Ոտքերից զցեց կոշիկները, պառկեց, գլուխը դրեց բարձին, փակեց աչքերը:

<sup>22</sup> Դեմ առ դեմ — ֆրանսերեն (ծ.թ.):

Արտևանունքների արանքով նա տեսնում էր Տիկլինսկու պարարտ, զայրալի, ուշադիր իրեն հետևող դեմքը: Զոյան հորանջեց մեկ-երկու անգամ, ձեռքը դրեց այտի տակ:

— Հոգնել եմ, ինչ լինելու է՝ լինի,— ասաց կամացուկ ու նորից հորանջեց:

Տիկլինսկին ավելի հարմար տեղավորվեց թիկնաթոռի մեջ: Զոյան շնչում էր համաշափ: Որոշ ժամանակից Տիկլինսկին սկսեց տրորել աչքերը: Ելավ տեղից, ետուառաջ արեց, հենվեց դռան կողափայտին: Երևում է՝ որոշել էր արթուն մնալ կանգնած:

Տիկլինսկին անխելք մարդ էր: Զոյան նրա բերանից դուրս էր քաշել այն ամենը, ինչ պետք էր իրեն, և իհմա սպասում էր, թե երբ կքնի նա: Տիկլինսկին մի անգամ էլ զննեց դռան փակն ու ետ եկավ, փլվեց թիկնաթոռի մեջ:

Մի բոպեից կախ ընկավ նրա մսեղ կզակը: Այնժամ Զոյան ցած սահեց անկողնուց: Արագ շարժումով նրա ժիշտի գրպանից դուրս քաշեց բանալին: Վերցրեց կոշիկները: Բանալին մտցրեց անցքը. պիրկ փականքը ճռնշաց մեկեն:

Տիկլինսկին, ասես մղձավանջի մեջ, ճշաց՝ «Ո՞վ է, ի՞նչ է»... Պոկվեց թիկնաթոռից: Զոյան քաշեց, լայն բացեց դուռը: Բայց Տիկլինսկին ճանկեց ուսերից: Զոյան խսկույն ատամները իրեց նրա ձեռքի մեջ՝ բավականությամբ կծոտելով մաշկը:

— Շա՝ ն քած, պոռնի՝ կ,— որնաց Տիկլինսկին լեհերեն: Ծնկով զարկեց Զոյայի մեջքին: Ցած տապալեց: Ոտքով հրելով նրան սենյակ, ջանում էր դուռը փակել: Բայց խանգարում էր ինչ-որ բան: Զոյան տեսավ, թե ինչպես կարմրատակեց նրա վիզը:

— Ո՞վ է, ո՞վ է այդտեղ,— հարցրեց նա խոպոտ՝ ուսով ընկնելով դռան վրա:

Բայց նրա ոտնաթաթերը շարունակում էին սահել պարկետի վրայով. դուռը դանդաղ բացվում էր: Տիկլինսկին շտապ ետևի գրպանից դուրս քաշեց ատրճանակը, բայց հանկարծ ինքը սենյակի մեջտեղը թռավ:

Դռան մեջ կանգնած էր նավապետ Յանսենը: Թաց հագուստը կիա կպել էր մկանուտ մարմնին: Մի վայրկյան նայեց Տիկլինսկու աչքերի մեջ: Սրբնթաց, ասես ընկնելով, նետվեց առաջ: Ուղինգի համար նախատեսված հարվածները բաժին հասան լեհին, կրկնակի հարված— մարմնի ծանրությունն իր վրա առած ձգված ձախով՝ գոտկատեղին, և, ուսի ողջ թափառքով, աջով ներքեւից՝ ծնոտին: Տիկլինսկին անծպտուն ետ փռվեց գորգի վրա: Դեմքը զախչախված էր ու արնաշաղախ:

Երրորդ շարժումով Յանսենը դարձավ մադամ Լամոլի կողմը: Նրա բոլոր մկանները պարում էին:

— Վերջ, մադամ Լամոլ:

— Յանսեն, հնարավորին չափ շուտ նավ հասնենք:

— Լսում եմ, նավ հասնել:

Զոյան, ինչպես մի քանի ժամ առաջ ուստորանում, ձեռքը զցեց նրա վզովը: Բերանը համարյա կիա մոտեցրեց նրա շրթունքներին՝ առանց համբուրելու.

- Պայքարն սկսվել է միայն, Յանսեն: Ամենավտանգավորն առջևում է:
- Լսում եմ, ամենավտանգավորն առջևում է:

## 79

- Քշի՛ր, կառապան, քշիր՝ ինչքան ուժ ու տեղ կա... Ես լսում եմ ձեզ, մադամ Լամոլ. . . Ուրեմն. . . Մինչ ես սպասում էի ծխարանում. . .
- Բարձրացա համարս: Հանեցի զիսարկս ու թիկնոցս. . .

— Գիտեմ:

— Որտեղի՞ց:

Յանսենի ձեռքը դոդում էր նրա մեջքին: Զոյան պատասխանեց փաղաքուշ շարժումով:

— Ես չնկատեցի, որ հարևան համարի դուռը ծածկող պահարանը մի կողմ է քաշված: Չեի հասցել մոտենալ հայելուն, եթի բացվեց այդ դուռը, և իմ առջև հայտնվեց Ռոյինզը. . . Բայց ես զիտեի, չէ՞ որ դեռ երեկ նա Փարիզում էր: Գիտեի, որ նա սարսափելի վախենում է օղով ճանապարհ զնալուց. . . Բայց եթե նա այստեղ է, ուրեմն դա իսկապես կյանքի ու մահու հարց է նրա համար. . . Հիմա եմ ես հասկանում նրա մտադրությունը. . . Բայց այն ժամանակ ուղղակի կատաղեցի: Ի՞նչ բան է դա՝ խաբում է, ծուղակ սարքում ինձ համար. . . Ես նրան սատանան զիտի թե ինչեր ասի. . . Նա փակեց ականջներն ու դուրս գնաց. . .

— Իջավ ծխարան ու ինձ ուղարկեց նավ. . .

— Բանն էլ հենց դա է. . . Ի՞նչ ապուշն եմ ես. . . Հապա բոլոր այդ պարերը, զինին, հիմարությունները. . . Այո՛, այո՛, սիրելի բարեկամս, եթե ուզում ես պայքարել՝ պիտի վերջ տաս հիմարություններին. . . Երկու-երեք բոպեցի նա վերադարձավ: Ասում եմ՝ արի բացատրվենք. . . Բայց նա այնպիսի լկտի տոնով, որով երբեք չէր խոսել ինձ հետ, թե՝ «Ես բացատրելու ոչինչ չունեմ, դուք կնստեք այս սենյակում մինչև կազատեմ»... Էլ շիամբերեցի, սկսեցի ապտակել նրան. . .

— Դուք իսկակա՞ն կին եք,— ասաց Յանսենը հիացմունքով:

— Է, բարեկամս, դա իմ երկրորդ հիմարությունն էր: Բայց ի՞նչ վախկոտն է. . . Չորս ապտակ կերպավ. . . Կանգնել ու շրթունքներն էր դողդողացնում. . . Միայն փորձում էր բռնել ձեռքս, բայց դա թանկ նստեց նրա վրա: Եվ, վերջապես, երրորդ հիմարությունը՝ զոռոցս դրի. . .

— Օ՛, սրիկա, սրիկա. . .

— Սպասեք, Յանսեն . . . Ռոլինգն իդիոսինկրազիա<sup>23</sup> ունի արցունքների նկատմամբ, նրան խեղդում են արցունքները՝ ջղածության հասցնելու աստիճան . . . Նա կգերադասեր էլի մի քառասուն ապտակ ստանալ . . . Այդ ժամանակ կանչեց լեհին, որ դրան ետևում էր:

Պայմանավորված էին ամեն ինչում: Լեհը նստեց թիկնաթոռին: Ռոլինգն ինձ ասաց.

«Որպես ծայրահեղ միջոցառում՝ սրան հրամայված է կրակել»: Ու գնաց: Ես անցա լեհին:

Մի ժամից արդեն ինձ համար ամենայն մանրամասնությամբ պարզ էր Ռոլինգի դավաճանական պլանը: Յանսեն, սիրելիս, հարցն իմ երջանկությանն է վերաբերում. . . Եթե դուք ինձ չօգնեք՝ ամեն ինչ կորած է. . . Քշե՞ք, քշե՞ք արագ. . .

Կառքը սլացավ առափնյա փողոցով, որ թափուր էր այդ ժամին՝ լուսաբացից առաջ, և կանգ առավ գրանիտե սանդուղքի մոտ, որի ներքեւ, սև-յուղափայլ ջրում մեղմ ճռչում էին մի քանի նավակներ:

Քիչ անց Յանսենը, ձեռքերի վրա առած թանկագին մաղամ Լամոլին, նավախելից զցված պարանասանդուղքով անլսելի բարձրանում էր «Արիզոնայի» տախտակամածը:

## 80

Ռոլինգն արթնացավ վաղորդյան պատից: Տախտակամածը թաց էր: Դժգունել էին կայսերի լույսերը: Ծովածոցն ու քաղաքը դեռ ստվերի մեջ էին, սակայն ծուխը Վեզուվի կատարին վարդագունել էր արդեն:

Ռոլինգն ուշադիր դիտեց ազդանշանային լույսերը, նավերի ուրվապատկերները:

Մոտեցավ հերթապահին, կանգնեց նրա մոտ: Փնչացրեց քթով: Բարձրացավ նավապետի կամրջակի վրա: Նույն պահին իր խցիկից ելավ Յանսենը՝ թարմ, լվացված-մաքրված, կոկիկ հագնված: Բարի լույս մաղթեց: Ռոլինգը փնչացրեց քթով՝ փոքր-ինչ ավելի քաղաքավարի, քան հերթապահին պատասխանելիս: Հետո նա երկար լրում էր՝ ոլորելով պիջակի կոճակը: Վատ սովորույթ էր դա, որից ժամանակին նրան ետ էր կանգնեցրել Զոյան: Բայց իհմա նրա համար միևնույն էր ամեն ինչ: Բացի այդ, հավանաբար, եկող սեղոնում Փարիզում մողա կլինի կոճակ ոլորելը: Դերձակները նույնիսկ հատուկ կոճակներ կինարեն ոլորելու համար:

Նա հարցրեց ընդհատուն ձայնով.

— Զրահեղձները դուրս գալի՞ս են ջրի երես:

— Որ վրաները ծանրություն կապված չլինի՝ դուրս կգան,— պատասխանեց Յանսենը հանգիստ:

— Իմ հարցն այն է, որ եթե ծովում մարդը խեղդվեց, ուրեմն խեղդվեց ու վե՞րջ:

<sup>23</sup> Հիվանդագին գերզայնություն, հակում (ծ. թ.):

— Պատահում է, ասենք, խեղդվում են մի անզգույշ շարժումից, կամ ալիքն է քշում տանում, կամ ուրիշ որևէ պատահականությունից՝ այս ամենը վերաբերում է խեղդվողների տարակարգին: Իշխանությունները սովորաբար չեն խառնվում դրան: Ուղինգը ցնցեց ուսը:

— Այդքանը կուզեի իմանալ ջրահեղձների մասին: Ես գնում եմ իմ սենյակը: Եթե նավակ մոտենա, կրկնում եմ, հայտնեք, որ ես նավի վրա եմ: Ընդունեք՝ եկողին ու զեկուցեք ինձ: Գնաց: Յանսենը վերադարձավ իր խցիկը, ուր փոքրիկ, կապույտ վարագույրների ետևում, նավապետի մահճակալին քնած էր Զոյան:

## 81

Ժամը իննին «Արիզոնային» մոտեցավ մի նավակ: Մեջն աշխայժ-ծիծաղկոտ գջլոտի մեկն էր, որ թիերը բարձրացնելով, կանչեց.

— Ալլո... «Արիզոնա» զբոսանա՞վն է:

— Ասենք թե հա,— պատասխանեց դանիացի նավաստին՝ կոանալով նավակողի ելուստի վրայով:

— Չեր նավում Ուղինգ անունով մարդ կա՞:

— Ասենք թե:

Գջլոտը ժպտաց՝ երևան հանելով հոյակապ ատամները.

— Բոնի՛ ր:

Նա ճարպկորեն նամակ նետեց տախտակամած, նավաստին որսաց օդում, գջլոտը չպացըց լեզվով.

— Նավազ, նավազ, աչքերիդ՝ ավազ, մի հատ սիզար տա՞ս:

Եվ մինչ դանիացին մտածում էր, թե վերսից ինչ տա նրա զլիսին, գջլոտն արդեն հեռանում էր և, պար գալով նավակի մեջ ու ծամածովելով նման՝ տաք առավոտին ներսը խլրտող կյանքի անզուսպ բերկրանքից, սկսեց երգել կոկորդով մեկ:

Նավաստին նամակը տարավ նավապետին: (Այդպես էր հրամայված): Յանսենը մի կողմ քաշեց վարագույրը, թերվեց քնած Զոյայի վրա: Սա բացեց աչքերը, որ դեռ լի էին քնով:

— Նա այստե՞ղ է:

Յանսենը նրան տվեց նամակը: Զոյան կարդաց.

«Ես չարաշար վիրավոր եմ: Եղեք գթասիրտ: Ես առյուծի պես մաքառեցի հանուն ձեր շահերի, բայց կատարվեց անհնարինը՝ մադամ Զոյան ազատության մեջ է: Ընկնում եմ ձեր»...

Առանց մինչև վերջ կարդալու, Զոյան պատառոտեց նամակը:

— Հիմա հանգիստ կարող ենք նրան սպասել: (Զոյան նայեց Յանսենին, ձեռքը մեկնեց նրան): Յանսեն, սիրելիս, հարկավոր է, որ մենք պայմանավորվենք իրար հետ: Դուք ինձ դուր եք զալիս: Դուք պետք եք ինձ: Ուրեմն պիտի կատարվի անխուսափելին... .

Նս կարձ հառաչեց.

— Ես զգում եմ, որ շատ դժվար կլինի ձեզ հետ: Սիրելի բարեկամս, այդ բոլորը՝ սեր, խանդ, հավատարմություն, ավելորդ են կյանքում... Ես ընդունում եմ տենչանքը: Դա տարեքը է: Ես նույնքան ազատ կարող եմ տրվել, որքան դուք՝ վերցնել, հիշեք սա, Յանսեն: Պայման դնենք՝ կամ ես կկործանվեմ, կամ կիշխեմ աշխարհի վրա: (Յանսենի շրթունքները սեղմվեցին. Զոյային դուր էր զալիս այդ շարժումը): Դուք իմ կամքի գործիքը կլինեք: Մոռացեք հիմա, որ կին եմ ես: Ես ֆանտաստ եմ: Ես ավանտուրիստ եմ, հասկանո՞ւմ եք դա: Ես ուզում եմ, որ իմը լինի ամեն ինչ: (Նա ձեռքերով շրջան գծեց շուրջը): Եվ այն մարդը, միա՞կը, որ կարող է այդ ամենն ինձ տալ, հիմա ուր որ է պետք է հայտնվի «Արիզոնայի» վրա: Ես սպասում եմ նրան, Ռոլինզն էլ է սպասում... .

Յանսենը բարձրացրեց մատը, ետ նայեց: Զոյան քաշեց ծածկեց վարագույրները: Յանսենը ելավ կամրջակի վրա: Այնտեղ, բազրիքից կառչած, կանգնել էր Ռոլինզը: Նրա դեմքը՝ պինդ հուած ծուռ քերանով, աղավաղվել էր չարությունից: Անքթիթ հայացը ծովածոցի դեռևս մշուշապատ հեռուներին էր:

— Ահա նա,— դժվարությամբ արտասանեց Ռոլինզը՝ ձեռքը պարզելով, և նրա մատը կեռի պես կախվեց լազուր ծովի վրա,— ահա այն նավակում է:

Եվ նա արագորեն, ահ զցելով նավաստիների մեջ, ծովախեցգետնի պես ծուռուսն, սանդուղքով ցած վազեց նավապետի կամրջակից և թաքնվեց ներքևի իր սենյակում: Այնտեղից հեռախոսով Յանսենին հիշեցրեց քիչ առաջվա իր հրամանը՝ նավ առնել վեցթի նավակով մոտեցող մարդուն:

## 82

Երբեք չէր պատահել, որ Ռոլինզը կտրեր պիշտակի կոճակը: Բայց հիմա երեք կոճակն էլ պոկեց ոլորելով: Նա կանգնած էր պերճաշուրք, հատակին Շիրազի գորգեր փռած, թանկարժեք փայտով հարդարված նավասենյակում և նայում էր պատի ժամացույցին:

Կոճակները պոկելուց հետո սկսեց եղունգները կրծուել: Սարսափելի արագությամբ նա վերադարձավ նախնական վայրի վիճակին: Նրա ականջին հասան հերթապահի կանչն ու Գարինկի պատասխանը՝ նավակից: Այդ ձայնից քրտնեցին նրա ձեռքերը:

Ծանր նավակը զարկվեց նավակողին: Հնչեց նավագների միահամուռ հայիոյանքը: Ճռձաց նավասանդուղքը, ոտքերի թփթփոց լսվեց: «Առ, բարձրացրու... Կամաց...»

Եղավ... Ո՞ւր տանենք»,— հիպերբոլիդների արկղերն էին բառնում: Հետո լրություն տիրեց:

Գարինը ծուղակն էր ընկել: Վերջապե՞ս: Ռոլինզը սառը խոնավ մատներով բռնեց քիթն ու ֆշոցի, հազի պես հնչյուններ արձակեց: Նրան ճանաչող մարդիկ պնդում էին, թե նա կյանքում երբեք չի ծիծաղել: Ճիշտ չէ: Ռոլինզը սիրում էր ծիծաղել, բայց առանց վկաների, մենակ՝ հաջողությունից հետո, և հենց այսպես՝ անձայն:

Հետո հեռախոսով կանչեց Յանսենին.

— Ըստունեցի՞ք:

— Այո:

— Տարեք նրան ներքսի խցիկն ու դուռը փակեք բանալիով: Աշխատեք այդ բոլորն անել մաքուր, անաղմուկ:

— Լսում եմ,— պատասխանեց Յանսենը կայտառ: Մի տեսակ չափից դուրս կայտառ, որ դուր չեկավ Ռոլինզին:

— Հելլո՞՝ Յանսեն:

— Այո:

— Մի ժամկց նավը բաց ծովում պիստի լինի:

— Լսում եմ:

Նավի վրա վազվուք սկսվեց: Դղրդաց խարսխի շղթան: Գործի ընկան շարժիչները: Լուսանցույցների ետևում հոսեցին կանաչավուն ջրի շիթերը: Սկսեց պտտվել ափը: Թաց քամի ներխուժեց նավասենյակ: Եվ արագության բերկրալի զգացումով համակվեց «Արիզոնայի» ամբողջ բարեկազմ մարմինը:

— Ինչ խոսք,— Ռոլինզը հասկանում էր, որ մեծ հիմարություն է անում: Բայց ել չկար նախկին Ռոլինզը՝ սառնարյուն խաղացողը, աննկուն գոմշացուլը, կիրակնօրյա քարոզների մշտական հաճախորդը: Նա հիմա այսպես կամ այնպես էր շարժվում ոչ այն պատճառով, որ շահեկան էր դա, այլ որովհետև անքուն գիշերների տառապանքը, ատելությունը Գարինի հանդեպ, խանդը ելք էին փնտրում՝ ոտնատակ տալ Գարինին ու վերադարձնել Զոյային:

Նոյնիսկ անհավատալի հաջողությունը՝ Անիլինային ընկերության գործարանների կործանումը, անցավ հանց երազում: Ռոլինզը չհետաքրքրվեց անզամ, թե ողջ աշխարհի բորսաները քսանիննին քանի հարյուր միլիոն դոլար ավելացրին իր հաշվի մեջ:

Այդ օրը նա Գարինին սպասում էր Փարիզում, ինչպես պայմանավորվել էին: Գարինը չեկավ: Ռոլինգը կանխատեսել էր այդ բանը և երեսունին աերոպլանով իրեն գցեց Նեապոլ:

Հիմա Զոյան հանված էր խաղից: Իր և Գարինի միջև ոչ ոք չկար: Դատաստանի ծրագիրը մշակված էր ամենայն մանրամասնությամբ: Ռոլինգը սիգար վառեց, սկսեց ծխել: Նա դիտմամբ փոքր-ինչ դանդաղում էր: Նավասենյակից դուրս եկավ միջանցք: Բացեց վարի տախտակամած տանող դուռը: Այնտեղ էին սարքերի արկղերը: Դրանց վրա նստած երկու նավաստիները ոտքի թռան: Ռոլինգը նրանց ուղարկեց նավակազմի ընդհանուր սենյակը:

Վարի տախտակամածի դուռը փակելով, նա անշտապ գնաց դեպի հանդիպակաց դուռը՝ նավապետի խցիկը: Զեռքը բռնակին տանելիս նկատեց, որ սիգարի մոխիրը պոկվեց ընկավ: Ռոլինգը ժպտաց ինքնազնի, մտքերը պարզ էին, վաղուց նա այդպիսի բավականություն չէր զգացել:

Լայն բացեց դուռը: Խցիկում, վերևի լույսի կափույրի տակ նստած էին Զոյան, Գարինն ու Շելզան և նայում էին ներս մտնողին: Ռոլինգը ետ-ետ գնաց միջանցք: Զգաց, որ շունչը կտրվում է, ուղեղն ասես սկսեցին խառնել գրալով: Քիթը քրտնեց: Եվ, որ արդեն ամենասարսափելին էր, ժպտում էր խղճալիորեն ու հիմարավարի, ճիշտ և ճիշտ հաշվապահական մատյանում թվեր ջնջելիս բռնված ծառայողի պես (քսանիին գ տարի առաջ նրան պատահել էր մի այդպիսի բան):

— Բարի օր, Ռոլինգ, — ասաց Գարինը ոտքի ելնելով, — ահա և ես, բարեկամս:

### 83

Կատարվեց ամենաահավորը՝ Ռոլինգն ընկավ ծիծաղելի դրության մեջ:

Ի՞նչ կարելի է անել: Կրծտացնել ատամները, զազագել կրակել: Ավելի վատ կլիներ, ավելի հիմար... Պարզ

Է, նավապետ Յանսենը դավաճանել է նրան: Անձնակազմը վստահելի չէ... Նավը բաց ծովում է: Կամքի ուժով (նրա ներսում նույնիսկ ինչ-որ բան ձոթձոթաց) Ռոլինգը երեսից վանեց անիծյալ ժպիտը:

— Ա-ա՝, — նա բարձրացրեց ձեռքն ու թափահարեց ի նշան ողջույնի: — Ա՝, Գարին... Ուզեցիք մի քիչ օդափոխվել, հա՞: Խնդրե՛մ, ուրախ եմ... Կզվարձանանք...

Զոյան ասաց կտրուկ.

— Դուք վատ դերասան եք, Ռոլինգ: Վե՛րջ տվեք խեղկատակություններին: Ներս եկեք ու նստեք: Այստեղ բոլորը մերոնք են՝ մահացու թշնամիներ: Ինքներդ եք մեղավոր, որ ձեզ

համար այսպիսի ուրախ շրջապատ ստեղծեցիք Միջերկրական ծովում զբոսնելու համար:

Ռոլինգը նրան նայեց սառած աչքերով.

— Մեծ գործերում, մադամ Լամոլ, չկա անձնական թշնամություն կամ բարեկամություն:

Եվ նա նստեց սեղանի մոտ այնպես, ինչպես արքայական գահին կրազմեր՝ Զոյայի ու Գարինի միջև: Չեռքը դրեց սեղանին: Մի բոպէ լուսություն տիրեց: Հետո ասաց .

— Լավ, ես տանուլ եմ տվել խաղը: Ինչքա՞ն պիտի վճարեմ:

Գարինը պատասխանեց աչքերը շողշողացնելով, ժպիտով, որ ասես պատրաստ էր ամենաբարեսիրտ ծիծաղի փոխվել.

— Ուղիղ կեսը, իմ հին բարեկամ, կե՞սը, ինչպես պայմանավորվել ենք Ֆոնտեներլոյում: Ահա և վկան,— նա մոայլադեմ, մորուքը թափ տվեց Շելգայի կողմը, որը եղունգներով թմբկահարում էր սեղանին:— Չեր հաշվապահական մատյանների մեջ քիթս չեմ խոթի: Բայց աչքաշափով՝ մոտ մեկ միլիարդ դոլար, իհարկե, վերջնահաշվով: Չեզ համար այդ վիրահատությունն առանց ցավի կանցնի: Այսր դուք սարի չափ փող դիզեցիք Եվրոպայում:

— Դժվար կլինի միանգամից մեկ միլիարդ վճարել,— այսօր պատասխանեց Ռոլինգը:— Կմտածեմ: Լավ: Հենց այսօր կմեկնեմ Փարիզ: Հուսով եմ, որ ուրբաթ օրը, ասենք, Մարտելում, կկարողանամ վճարել այդ գումարի մեծ մասը. . .

— Ա՛յ-յ-ա՛յ,— ասաց Գարինը,— բայց բանն այն է, բարեկամս, որ դուք ազատություն կստանաք միայն վճարելուց հետո:

Շելգան արագ նայեց նրան, լուր մնաց: Ռոլինգը դեմքը կնձռոտեց, ինչպես հիմար անտակտությունից.

— Ես այնպէ՞ս պետք է հասկանամ, որ դուք մտադիր եք ինձ պահել այս նավում:

— Այո:

— Հիշեցնեմ, որ ես, իբրև Միացյալ Նահանգների քաղաքացի, անձեռնմխելի եմ: Իմ ազատությունն ու իմ շահերը կպաշտպանի Ամերիկայի ռազմական ամբողջ նավատորմիդը:

— Ավելի՝ լավ,— ճշաց Զոյան ցաւկոտ ու կորոտ:— Ինչքան շուտ՝ այնքան լավ. . .

Նա ելավ տեղից, պարզեց ձեռքերը, սեղմեց բռունցքներն այնպես, որ հոդերը սպիտակեցին:

— Թող ձեր ամբողջ նավատորմիդը զա մեր դեմ, թող ամբողջ աշխա՛րհը ելնի մեր դեմ: Ավելի՝ լավ:

Նրա շրջազգեստի կարծ փեշը վեր թռավ, բացմեց պոռթկուն շարժումից: Զոյայի ծովային սպիտակ ոսկեկոճակ կուրտկան, տղայավարի կտրած մազերով փոքրիկ գլուխն ու փոքրիկ բուռնցքները, որոնց մեջ նա պատրաստվում էր ձգմել աշխարհի բախտը, հուզումից մթագնած մողոշիկ աչքերը, խոռված դեմքը,— այս ամենը թե զվարձալի էր և թե ահավոր:

— Երևի ձեզ վատ լսեցի, տիկին,— Ռոլինգն ամբողջ մարմնով շուր եկավ նրա կողմը,— դուք պատրաստվում եք կորիկ մղել Միացյալ Նահանգների ռազմական նավասորմիղի դեմ: Այդպէ՞ ս բարեհաճեցիք արտահայտվել:

Շելգան դադարեց եղունգներով թմբկահարելուց: Այդ վերջին ամսվա ընթացքում առաջին անգամ տրամադրությունը բացվեց: Նա նույնիսկ մեկնեց ոտքերն ու ետ փլվեց, ինչպես թատրոնում:

Զոյան նայեց Գարինին. նրա հայացքը մթագնում էր ավելի ու ավելի:

— Ես ասացի, Պյոտր Պետրովիչ... հիմա խոսքը ձերն է... Գարինը ձեռքերը դրեց գրպաները, ձգվեց, բարձրացավ կրունկների վրա, ճոճվեց ու ժպտաց կարմիր, ասես ներկված շրթունքներով: Իր ամբողջ կերպարանքով սեթեթ, անլուրջ էր թվում: Միայն Զոյան էր զգում նրա պողպատե, գերառատությունից խայտացող, հանցալից կամքը:

— Նախ,— ասաց Գարինն ու բարձրացավ ոտնաթաթերի վրա,— մենք առանձին թշնամանք չենք տածում հատկապես Ամերիկայի նկատմամբ: Մենք կաշխատենք մի թեթև ջարդ տալ ցանկացած նավասորմիղին, որ կփորձի ազրեսիվ գործողություններով ելնել իմ դեմ: Եվ ապա, Գարինը ոտնաթաթերից փոխադրվեց կրունկների վրա,— մենք ամենին էլ չենք պնդում, որ կրիվ լինի: Եթե Ամերիկայի ու Եվրոպայի ռազմական ուժերն ընդունեն հրաժեշտ այս կամ այն տերիտորիան զավթելու մեր սուրբ իրավունքը, սուվերենության մեր իրավունքը և այլն, և այլն, ապա մենք նրանց հանգիստ կթողնենք, համենայն դեպս ռազմական տեսակետից: Հակառակ դեպքում վերաբերմունքն Ամերիկայի ու Եվրոպայի ծովային ու ցամաքային ուժերի, ամրոցների, բազաների, զինապահեստների, զինավոր շտաբների և այլնի, և այլնի հանդեպ կլինի անողոք: Անիլինի գործարանների ճակատագիրը, հուտով եմ, համոզում է ձեզ, որ ես խոսքերս քամուն չեմ տալիս:

Նա թփթփացրեց Ռոլինգի ուսին:

— Ալլո, ծերուկ, բայց ախր կար ժամանակ, որ ձեզ խնդրում էի ընկերակից դառնաք իմ ձեռնարկի մեջ... Զեր երևակայությունը չբավականացրեց, և ամբողջ պատճառն այն է, որ դուք բարձր կուտուրա չունեք: Զեր արածն ի նշ է՝ բորսային գործարաններին շորահան անեք ու մեկ էլ գործարաններ գնեք: Տե՛ր աստված... Այնինչ իսկական մարդուն ձեռքից բաց թողիք: Զեր տիմար միլիարդների իսկական կազմակերպչին:

Ռոլինգն սկսեց նմանվել նեխող ննջեցյալի: Բառերը դժվարությամբ արտաբերելով՝ ֆշացրեց.

— Դուք անարխիստ եք...

Այստեղ Շելգան, առողջ ձեռքով մազերը բռնած, սկսեց քրջալ այնպէս, որ ապակյա առաստաղի վերևում հայտնվեց նավապէտ Յանսենի վախեցած դեմքը: Գարինը պտտվեց կրունկների վրա ու նորից՝ Ռոլինզին:

— Չե, ձերուկ, ձեր գլուխն սկսել է վատ աշխատել: Ես անարիստ չեմ. . . Ես հենց այն մեծ կազմակերպիչն եմ, որին դուք ամենամոտ ժամանակներս կակսեք լույս օրին ձրագով ման գալ. . . Այդ մասին կխոսենք ազատ ժամանակ: Չեկ գրեք. . . Ու լրիվ ընթացքով՝ Մարսել:

## 84

Մոտակա օրերին տեղի ունեցավ հետևյալը. «Արիզոնան» խարիսխ նետեց Մարսելի արտաքին նավակայանում: Գարինը Լիոնի վարկային բանկ ներկայացրեց Ռոլինզի չեկը՝ քան միլիոն ֆունտ ստեղլինգ գումարով: Բանկի տնօրենը խուճապահը մեկնեց Փարիզ:

«Արիզոնայի» վրա հայտարարվեց, թե Ռոլինզը հիվանդ է: Նա փակի տակ մնում էր իր խցիկում, և Զոյան անխոնջ հսկում էր նրա մեկուսացմանը: Երեք օրում «Արիզոնան» բեռնվեց հեղուկ վառելանյութով, ջրով, պահածոներով, գինիով և ուրիշ բաներով: Նավաստիներն ու ավարաները շատ զարմացան, երբ «պերճաշուր կոկոտկային» մոտեցավ ավազով լի պարկերով բեռնված շալանդան<sup>24</sup>: Ասում էին՝ իբր «Արիզոնան» գնում է Սոլոմոնյան կղզիներ, ուր մարդակերներ են վխտում: Նավապէտ Յանսենը գենք գնեց՝ քան կարաբին, ատրճանակներ, հակազգեր:

Նշանակված օրը Գարինն ու Յանսենը նորից գնացին բանկ: Նրանց դիմավորեց ֆինանսների մինիստրի ընկերը, որ ճեպով եկել էր Փարիզից: Սիրալիր խոսքեր շռայլելով և չկասկածելով չեկի իսկությանը, նա, այնուհանդերձ, ցանկացավ տեսնել իրեն՝ Ռոլինզին: Նրան տարան նավ:

Ռոլինզը նրան դիմավորեց միանգամայն հիվանդ վիճակում, փոս ընկած աչքերով: Հազիվ կարողացավ ելնել թիկնաթոռից: Նա հաստատեց, որ չեկն ինքն է տվել, որ զբոսանավով մեկնում է հեռավոր ճանապարհորդության և խնդրում է շուտ վերջացնել բոլոր ձևականությունները:

Ֆինանսների մինիստրի ընկերը, աթոռի թիկնակը բռնած և ձեռքը շարժելով իսկ և իսկ Կամիլ Դեմուլենի պէս, ճառ արտասանեց ժողովուրդների մեծ եղբայրության, Ֆրանսիայի մշակութային գանձարանի մասին և խնդրեց հետաձգել վճարումը:

Ռոլինզը, աչքերը հոգնած փակելով, տարուքերեց գլուխը: Վերջը համաձայնության եկան, որ Լիոնի վարկային բանկը գումարի մի երրորդը կվճարի ֆունտ ստեղլինգով, մնացածը՝ ֆրանկով, ըստ կուրսի:

<sup>24</sup> Բեռնելու՝ սպասարկու նավ (Ճ. թ.):

Փողը բերեցին իրիկնադեմին, ռազմական կատերով: Հետո, երբ կողմնակի մարդիկ հեռացան, նավապետի կամրջակի վրա հայտնվեցին Գարինն ու Յանսենը:

— Բոլորին վե՛ր կանչել:

Անձնակազմը շարվեց շքատախտակամածում, և Յանսենն ասաց հաստատուն ու խստահունչ ձայնով.

— Նավաստիներ, «Արիզոնա» կոչվող զբոսանավը դուրս է գալիս չափազանց դժվարին ու վտանգավոր նավարկության: Նզովյա լ լինեմ ես, եթե երաշխավորեմ ձեզնից որևէ մեկի կյանքի, նավատերերի կյանքի և հենց իր՝ նավի ապահովության համար: Դուք ինձ գիտեք, շնաձկա՞ն զավակներ. . . Ռոճիկն ավելացնում եմ կրկնակի, ինչպես կրկնապատկում են սովորական պարզեցումները: Բոլոր նրանց, ովքեր հայրենիք կվերադառնան, ցմահ կենսաթոշակ կտրվի: Մտածելու համար ժամանակ եմ տալիս մինչև մայրամուտ: Իրենց կյանքը վտանգել ցանկացողները կարող են պոչները քաշել:

Երեկոյան անձնակազմից ութ մարդ ափ իջան, գլուխներն առան գնացին: Եվ նույն գիշերն անձնակազմը համարվեց զիսներից ձեռք քաշած ութ ստահակներով, որոնց նավապետ Յանսենն ինքը գտավ բերեց նավահանգստի գինետներից:

Հինգ օր հետո զբոսանավը խարիսխ նետեց Սոուտհեմպտոնի նավակայանում, և Գարինն ու Յանսենը անզիխական թագավորական բանկ ներկայացրին Ռոլինզի չեկը՝ քսան միլիոն ֆունտ գումարով: (Պալատում այդ կապակցությամբ բանվորական կուսակցության լիդերը մի թեթև հարցապնդում արեց): Փողը տվեցին: Թերթերը ռոնց բարձրացրին: Շատ քաղաքներում բանվորական ցույցեր եղան: Ժուրնալիստները խուժեցին Սոուտհեմպտոն: Ռոլինզը չեր

ընդունում ոչ ոքի: «Արիզոնան» հեղուկ վառելանյութ վերցրեց և դուրս եկավ օվկիանոս:

Տասներկու օրից զբոսանավը կանգ առավ Պանամայի ջրանցքում և ռադիոգիր հղեց՝ ապարատի մոտ կանչելով «Անիլին Ռոլինզ» ընկերության զիսավոր տնօրեն Մակ Լիննեյին: Նշանակված ժամին Ռոլինզը, ռադիոխցիկում նստած, ատրանակի փողի տակ, Մակ Լիննեյին կարգադրեց չեկը ներկայացնող միստր Գարինին վճարել հարյուր միլիոն դոլլար: Գարինը գնաց Նյու Յորք և վերադարձ բերելով փողն ու իրեն՝ Մակ Լիննեյին: Սխալմունք էր դա: Ռոլինզը Զոյայի, Գարինի ու Յանսենի ներկայությամբ տնօրենի հետ խոսեց ուղիղ հինգ րոպե, և Մակ Լիննեյը հեռացավ խորապես համոզված, որ այդտեղ ինչ-որ անմաքուր բան կա:

Հետո «Արիզոնան» սկսեց լողալ ամայի Կարիբյան ծովում: Գարինը շրջեց Ամերիկայով մեկ՝ անցնելով գործարանից գործարան, շոգենավեր վարձեց, գնեց մեծաքանակ մեքենաներ, սարքեր, գործիքներ, պողպատ, ցեմենտ, ապակի: Բեռնեցին Սան Ֆրանցիսկոյում: Գարինի հավատարմատարը պայմանագրեր կնքեց ինժեներների, տեխնիկների, բանվորների հետ: Մյուս հավատարմատարը գնաց Եվրոպա և ոռուսական սպիտակ բանակի մնացորդների միջից հավաքագրեց հինգ հարյուր մարդ՝ ոստիկանական ծառայություն կատարելու համար:

Այդպես անցավ մոտ երկու ամիս: Ռոլինգն ամեն օր ռադիոյով խոսում էր Նյու Յորքի, Փարիզի, Բեռլինի հետ: Նրա հրամանները խիստ էին և անողոք: Անիլինի գործարանների ոչնչացումից հետո Եվրոպական քիմիական արդյունաբերությունը դադարել էր դիմադրություն ցույց տալուց: «Անիլին Ռոլինգ» — գրվում էր բոլոր ֆաբրիկատների վրա: Խարան-դրոշմ էր դա՝ երեք սև շերտով դեղին շրջան և երկու մակագիր, վերը՝ «Աշխարհ», վարը՝ «Անիլին Ռոլինգ Կոմպանի»: Արդեն կարելի էր մտածել, թե ամեն մի Եվրոպացի պիտի դրոշմվեր-խարանվեր այդ դեղին շրջանով: Այդպես «Անիլին Ռոլինգ» գրոհի էր գնում Անիլինային ընկերության գործարանների ծխացող փլատակների միջով:

Գաղութային սահմուկուն հոտ էր փշում ամբողջ Եվրոպայից: Մարել էին հույսերը: Ետ չին գալիս խինդն ու

բերկրանքը: Հոգևոր անհամար գանձեր էին փտում փոշեթաթավ գրադարաններում: Երեք սև շերտով դեղին արևն իր անկենդան լույսն էր սփոել քաղաքների հսկա զանգվածների վրա, ծխնելովզների, ու տանիքների վրա, մարդկանց արյունը ծծող ուկալամների, ռեկլամների, ռեկլամների վրա և, աղյուսաշեն պատերով եզերված թքոտ փողոցներում ու նրբանցքներում, ցուցափեղկերի, ռեկլամների, դեղին շրջանների ու շրջանակների միջև՝ մարդկանց դեմքերի վրա, որ աղավաղված էին քաղցի, տաղտուկի և հուսահատության ծամածոանքով:

Արժույթներն ընկնում էին: Հարկերը բարձրանում էին: Պարտքերն աճում էին: Եվ պարտքն ու իրավունքը հարգել պարտադրող սրբազն օրինականությամբ մարդկանց ձակատներին էր զարկվում-դրոշմվում դեղին խարանը: Վճարի՞:

Փողը վտակներ, առուներ, գետեր դարձած հոսում էր «Անիլին Ռոլինգ»-ի դրամարկղները: «Անիլին Ռոլինգ»-ի տնօրենները խառնվում էին պետությունների ներքին գործերին, միջազգային քաղաքականությանը: Նրանք ասես գաղտնի կառավարիչների միաբանություն էին:

Գարինը երկու քարտուղարի, ինժեներների, մեքենագրող օրիորդների և թղթատարների մի ամբողջ ոհմակի հետ սուրում էր Միացյալ Նահանգների մի ծայրից մյուսը: Աշխատում էր օրը քանչորս ժամ: Երբեք չէր հարցնում գներն ու չէր սակարկում:

Մակ Լիննեյը նրան հետևում էր տագնապով ու զարմանքով: Նա չէր հասկանում, թե ինչի համար է այդ ամենը գնվում ու բեռնվում, և թե ինչու են այդպես անմտորեն քամուն տրվում Ռոլինգի միլիոնները: Գարինի քարտուղարը, մեքենագրող օրիորդներից մեկն ու երկու թղթատար Մակ Լիննեյի գործակալներն էին: Նրանք ամեն օր Լիննեյին մանրամասն հաշվետվություն էին ուղարկում Նյու Յորք: Բայց և այնպես դժվար էր որևէ քան հասկանալ գնումների, պատվերների ու պայմանագրերի այդ հողմապտույտում:

Սեպտեմբերի սկզբին «Արիզոնան» նորից հայտնվեց Պանամայի ջրանցքում, վերցրեց Գարինին և, դուրս գալով

Խաղաղ օվկիանոս, անհետացավ հարավ-արևմտյան ուղղությամբ:

Նույն ուղղությամբ, երկու շաբաթ անց, շարժվեցին տասը քեռնված նավեր՝ ծրարված-կնքված հրամաններով:

## 85

Օվկիանոսն անհանգիստ էր. «Արիզոնան» լողում էր առազաստներով: Դրել էին գրոտներն<sup>25</sup> ու կլիվերները<sup>26</sup>, բոլոր առազաստները, բացի կայմահարթակի առազաստից: Զրոսանավի նեղլիկ կորպուսը, որ ասես նրբապատճա էր՝ քամով լցված առազաստներով, դողանջող-երգող կայմապարաններով, մերժ մինչև կայմերի ծայրը կորում էր ալիքների մեջ, մերթ հայտնվում ալիքի կատարին՝ փրփուր թռչափելով կողերից:

Տախտակամածի ծածկոցը հանված էր: Լուսանցույցները՝ ամուր փակված: Զույգ նավակողերի երկայնքով շարված ավազով լի պարկերը մետաղալարով կապկպված էին իրար: Նավաքթի և նավախելի տախտակամածներում տեղադրված էին երկու վանդակավոր աշտարակներ՝ վերևի հարթակներում կաթսայի նման բոլորակ խցիկներով: Բոեզենտածածկ այդ աշտարակները «Արիզոնային» կիսառազմական նավի տարօրինակ կերպարանք էին տալիս:

Նավապետի կամրջակի վրա, ուր ալիքների ցայտերն էին միայն հասնում, կանգնել էին Գարինն ու Շելգան: Երկուսն էլ կաշվե թիկնոցներով էին ու լայնեզր գլխարկներով: Շելգայի ձեռքն արդեն ազատ էր գիպսից, բայց առայժմ պիտանի էր միայն լուցկու տուփ վերցնելու կամ սեղանի մոտ պատառաքաղ բռնելու:

— Ահա օվկիանոսը,— ասաց Գարինը,— և նավ կոչվող չնշին ու խղճուկ մի բան՝ մարդկային հանձարի ու կամքի փոքրիկ մի բյուրեղ. . . Թոշո՞ւմ ենք, ընկեր Շելգա, ինչ էլ ասես-չասես. . . Պայքարո՞ւմ ենք. . . Իսկ ի՞նչ ալիքներ են. . . Նայեք հապա, լեռներ են, լեռներ:

Մի վիթխարի ալիք էր անցնում աջ նավակողից: Եռեփող կատարը բարձրացավ ու փրփրեց: Նրա տակ ավելի կորացավ փրփուրե ժանյակներով ապակեփայլ-կանաչ գողավոր մակերևույթը: Կատարը ոլորվեց: «Արիզոնան» թերվեց ձախ կողի վրա: Առազաստների միջև երգում-ոռնում էր վայրենի քամին՝ նավը հանելով խորխորատից: Եվ «Արիզոնան», բոլորովին կողքի պառկած, մինչև ողնափայտը ցուցահանելով կարմիր հատակը, շեղակի, գողավոր մակերևույթի վրայով թռավ ալիքի կատարն ու կորավ թշշացող փրփուրի մեջ: Անհետացան տախտակամածը, նսվակները, նավաքիթը և նավաքթի տախտակամածի վանդակավոր կայմապյունը՝ մինչև զմբեթը: Զուրը եռում էր նավապետի կամրջակի շուրջը:

— Հիանալի՝ է,— կանչեց Գարինը:

<sup>25</sup> Գրոտ — միջնակայմի մեծ առազաստ (ծ. թ.):

<sup>26</sup> Կլիվեր — եռանկյունի թեք առազաստ (ծ. թ.):

«Արիզոնան» ուղղվեց, ջուրը ետ հորդեց տախտակամածից, առազաստները ծփացին, և նավն ալիքի թեքությամբ ցած սահեց:

— Ճիշտ այսպես էլ մարդն է, ընկեր Շելգա, այսպես էլ մարդն է մարդկային օվկիանոսում... Այ, ես չտեսնված սիրեցի այս նավը... Մի՞թե մենք նման չենք իրար... Երկուսիս կուրծքն էլ լեցուն է հողմով... Հը...

Շելգան թորպեց ուսերը, չպատասխանեց: Հո չէ՞ ր վիճելու սքանչացման աստիճան ինքն իրեն սիրահարված այդ արարածի հետ... Թող հրձվի՝ գերմարդ է, ոչ ավել-ոչ պակաս: Պատահական չէ, որ երկրիս երեսին նա ու Ռոլինզը գտել են իրար. կատաղի թշնամիներ են, բայց մեկը կյանք չունի առանց մյուսի: Քիմիայի արքան իր էությունից ծնունդ է տվել հանցավոր գաղափարներով բռնված այս մարդուն, և սա էլ, իր հերթին, հրեշավոր երևակայությամբ արգասավորում է ոռոլինզան անապատը: Երկուսի հերն էլ անիծած:

Իսկապես, դժվար է հասկանալ, թե ինչու մինչև այժմ շնաձեները չեն խժուել Ռոլինզին: Նա իր գործն արել էր՝ եթե ոչ մեկ միլիարդ, ապա երեք հարյուր միլիոն դոլար Գարինն ստացել էր արդեն: Հիմա հարկավոր էր հետքերը կորցնել: Բայց չէ, ինչ-որ ավելի ամուր մի բան էր այդ մարդկանց կապում իրար հետ:

Շելգան չէր հասկանում նաև, թե ինչու իրեն ևս նավակողից ցած չնետեցին Խաղաղ օվկիանոսում: Մինչ այդ Նեապոլում ինքը պետք էր Գարինին որպես երրորդ դեմք ու վկա: Եթե Գարինը Նեապոլում մենակ հայտնվեր «Արիզոնայի» վրա, անսպասելի անախորժություններ կարող էին պատահել: Այնինչ, միաժամանակ երկուսին մեջտեղից վերացնելը շատ ավելի դժվար կլիներ Ռոլինզի համար: Այս ամենը պարզ է: Գարինը շահեց պարտիան:

Իսկ հիմա՝ նրա ինչին է պետք Շելգան: Կարիբյան ծովում նավելու ժամանակ դեռ, ասենք, խստություններ կային: Իսկ այստեղ՝ օվկիանոսում, Շելգային ոչ ոք չէր հետևում, և նա անում էր ուզածը: Նայում էր շուրջը: Ականջ դնում: Եվ նրան սկսում էր թվալ, թե կարող է ինչ-որ ելք գտնել այդ գարշելի վիճակից:

Երթն օվկիանոսով նման էր խրախճալից գրոսանքի: Նախաճաշերը, ճաշերն ու ընթրիքները ճոխ էին ու շոայլ: Միասին սեղան էին նստում Գարինը, մադամ Լամոլը, Ռոլինզը, նավապետ Յանսենը, նավապետի օգնականը, Շելգան, ինժեներ Շերմակը (Գարինի օգնականը), որ չեխ էր, վտիտ, հիվանդու, զզուզ մազերով, դժգույն, անքթիթ աչքերով ու ցանցառ մորուքով մի մարդ, և երկրորդ օգնականը՝ գերմանացի քիմիկոս Շեֆերը՝ ոսկրոտ, ամաշկոտ մի երիտասարդ, որ դեռ վերջերս քաղցից մեռնում էր Սան Ֆրանցիսկոյում:

Ֆրակավոր, լամբակներին ծաղկեփնչիկներ ամրացրած այդ մարդկանց՝ մահացու թշնամիների, մարդասպանների, կողոպտիչների, արկածախնդիրների և քաղցած գլխոնականների տարօրինակ ընկերակցության մեջ Շելգան, ինքն էլ բոլորի նման ֆրակով, ծաղկեփնչիկով, հանգիստ լուր էր մնում և ուտում-խմում ախորժակով:

Ազ կողքին նստածը ժամանակին չորս գնդակ էր արձակել նրա վրա, ձախ կողքինը՝ երեք հազար մարդ էր սպանել, դիմացինը գեղեցկուհի էր, մի այնպիսի դեմ, որի նմանը չէր տեսել աշխարհը:

Ընթրիքից հետո Շեֆերը նստում էր դաշնամուրի առաջ, մաղամ Լամոլը պարում էր Յանսենի հետ: Ռոլինզը սովորաբար մնում էր սեղանի մոտ և նայում էր պարողներին: Մյուսները բարձրանում էին ծխասրահ: Շելգան գնում էր

ծխամորձ ծխելու տախտակամածին: Նրան ոչ ոք չէր պահում, ոչ ոք չէր նկատում: Օրերն անցնում էին միօրինակ: Դաժան օվկիանոսը տուտ ու տակ չուներ: Ալիքները թափալվում էին այնպես, ինչպես միլիոնավոր տարիներ առաջ:

Այսօր Գարինը, սովորականին հակառակ, Շելգայի ետևից կամրջակ ելավ և սկսեց նրա հետ խոսել բարեկամաբար, կարծես ոչինչ էլ չէր պատահել այն ժամանակվանից, ինչ իրենք նստել էին Լենինգրադի Պրոֆմիությունների գրոսարանում: Շելգան զգուշացավ, լարվեց: Գարինը հիանում էր գրոսանավով, ինքն իրենով, օվկիանոսով, բայց, երևում էր, մտքում ուրիշ բան կա:

Մորուքից թափի տվեց ցայտերը, ասաց ծիծաղով.

— Ես ձեզ առաջարկ ունեմ, Շելգա:

— Հապա՞ :

— Հիշո՞ւմ եք, մենք պայմանավորվեցինք ազնվորեն խաղալ մեր պարտիան:

— Այո:

— Ի միջի այլոց... ԱՇ-ՅԱՇ-Յ... Ձեր մա՞րդն էր դա, որ ինձ ատրանակի գնդակով հյուրասիրեց թվերի ետևից: Մի մազ վերև լիներ՝ ու կիշրվեր գանգս:

— Ոչինչ չգիտեմ...

Գարինը պատմեց Շտուֆերի ամառանցում իր վրա կրակելու մասին: Շելգան տարուքերեց գլուխը:

— Ես կապ չունեմ: Բայց ափսոս որ վրիպել է...

— Ուրեմն բախտի բերմո՞ւնք է:

— Այո, բախտի բերմունք:

— Շելգա, ես ձեզ առաջարկում եմ ընտրություն կատարել,— Գարինի աշքերը՝ անողոք ու ծակող, մոտեցան, դեմքը մեկեն չար արտահայտություն ստացավ,— կամ թողեք սկզբունքային մարդ ձևանալը... Կամ ես ձեզ նաևից ցած կշպրտեմ: Հասկացա՞ք:

— Հասկացա՞ք:

— Դուք ինձ պետք եք: Դուք պետք եք ինձ մեծ գործերի համար... Մենք կարող ենք լեզու գտնել իրար հետ: Միակ մարդը, որին հավատում եմ, դուք եք:

Նա խոսքը չավարտեց, հսկա ալիքի կատարը՝ նախորդներից էլ բարձր, փուլ եկավ նավի վրա: Եռուն փրփուրով ծածկվեց նավապետի կամրջակը: Ալիքը Շելգային շպրտեց բազրիքի վրա, նրա դուրս արծած աչքերը, լայն բացված բերանը, չոփած մատներով ձեռքը երևացին մի ակնթարթ ու չքացան ջրի տակ: Գարինը նետվեց ջրապտույտի մեջ:

## 86

Շելգան հետո շատ անգամներ մտաբերեց այդ պատահարը:

Կյանքը վտանգելով, Գարինը ճանկեց նրա թիկնոցի ծայրից ու մաքարեց ալիքների դեմ, մինչև որ դրանք անցան նավի վրայով: Շելգան կախված էր կամրջակի բազրիքի մյուս կողմից: Թոքերը լցվել էին ջրով: Նա ծանր ընկավ տախտակամածին: Նավաստիները դժվարությամբ թոքերից ջուրը հանեցին, ուշքի բերին ու տարան խցիկ:

Շուտով այնտեղ եկավ նաև Գարինը՝ շորերը փոխած ու զվարթ: Կարգադրեց երկու բաժակ փունջ բերել և, ծխամորձը վառելով, շարունակեց ընդհատված խոսակցությունը:

Շելգան ուշադիր նայում էր նրա հեգնալի-ծիծաղկոտ դեմքին, կաշեպատ թիկնաթռոռում փոված նրա ճապուկ մարմնին: Տարօրինակ, հակասական անձնավորություն: Բանդիտ, սրիկա, մութ ավանտյուրիստ... Սակայն խմած փունջից էր արդյոք, թե ապրած ցնցումից՝ Շելգայի համար հաճելի էր, որ Գարինն ահա այդպես նստած է իր դեմ՝ ոտքը ոտքին զցած, և ծխում ու խորհում-խոսում է տարբեր բաների մասին, կարծես այդ պահին ալիքների հարվածներից չեն ճռչում «Արիզոնայի» կողերը, փրփրուն ջրաշիթերը չեն թռչում լուսանցույցի ապակու ետևում, իրենք չեն օրորվում ասես ճռագերանի վրա՝ վերպար, վեր-վար, մերթ Շելգան՝ մահճակալին, մերթ Գարինը՝ թիկնաթռողի մեջ... .

Գարինը խիստ փոխվել էր Լենինգրադից հետո՝ դարձել էր կատարելապես ինքնավստահ, ծիծաղկոտ, ամբողջապես բարեհած ու բարեհողի, ինչպիսին լինում են չափից դուրս խելացի, սկզբունքային եսամոլները միայն:

— Ինչո՞ւ բաց թողիք հարմար առիթը,— հարցրեց նրան Շելգան:— Թե՞ ձեզ օդ ու ջրի պես պետք է իմ կյանքը: Բան չեմ հասկանում:

Գարինը ես զցեց զլուխն ու ծիծաղեց ուրախ.

— Տարօրինակ մարդ եք դուք, Շելգա... Այսր ինչո՞ւ ես պիտի տրամաբանորեն անեմ այս կամ այն բանը... Ես մաթեմատիկայի ուսուցիչ չեմ... Տես թե ո՞ւր ենք հասել... .

Մարդկայնության պարզ ու հասարակ մի դրսեւրում՝ և հասկանալի չէ: Ի՞նչ մի շահ կարող էի ունենալ խեղդվողի մազերից բռնած ջրից դուրս քաշելով: Բացարձակապես ոչ մի... Զեր հանդեպ ունեցած համակրանքից էր... Մարդկայնությունից... .

— Երբ պայթեցնում էիք անիլինի գործարանները, կարծեմ չէիք մտածում մարդկայնության մասին:

— Ո՞՛, — ճշաց Գարինը: — Ո՞՛, չէի մտածում: Դուք դեռ ոչ մի կերպ չեք կարողանում դուրս պրծնել բարոյականության վլատակների տակից... Է՛, Շելգա, Շելգա... Ի՞նչ դարակներ են դրանք — այս դարակի վրա՝ լավը, մյուսի վրա՝ վատը... Ես հասկանում եմ, ասենք, դեզուստատորին՝ համտես է անում, թքում, հացի չորուկ ծամում ու՝ այս գինին, ասում է, լավն է, այն գինին՝ վատը: Բայց չէ՞ որ նա դեկավարվում է ճաշակելիքով, լեզվի բշտիկներով: Դա ռեալություն է: Իսկ ո՞ւր է բարոյական որակավորման ձեր դեզուստատորը: Ի՞նչ բշտիկներով կարող է փորձել ու որոշել:

— Այն ամենը, ինչ տանում է երկրագնդի վրա սովետական իշխանության հաստատման՝ լավ է, — ասաց Շելգան, — իսկ ինչ խանգարում է դրան՝ վատ է:

— Հրաշալի՛ է, աննման, գիտեմ... Լավ, բայց դո՞ւք ինչ գործ ունեք դրա հետ: Ինչո՞վ եք կապված Սովետական հանրապետությանը: Տնտեսապէ՞ս: Դատարկ բան է... Ես ձեզ հիսուն հազար դոլլարի ռոճիկ եմ առաջարկում... Միանգամայն լուրջ: Չեոք տալի՞ս է:

— Չէ, — ասաց Շելգան հանգիստ:

— Բանն կ այդ է, որ չէ... Ուրեմն դուք կապված եք ոչ թե տնտեսապես, այլ զաղափարով, ազնվությամբ, մի խոսքով՝ բարձրագույն կարգի նյութով: Եվ դուք անուղղելի բարոյախոս եք, որն էլ ուզում՝ ի ապացուցել ձեզ... Ուզում եք շուր տալ աշխարհը... Հազարամյա աղբ ու կեղտից մաքրում եք տնտեսական օրենքները, պայթեցնում եք իմպերիալիստական ամրոցները: Լավ: Ես էլ եմ ուզում աշխարհը շուր տալ, սակայն ի՞մ ձևով: Եվ շուր կտամ հենց մեն-միայն իմ հանձարի գորությամբ:

— Ohn՛:

— Հակառակ ամեն ինչի և ամենքի, նկատի առեք, Շելգա: Լսեք, ախր մարդն ի՞նչ է վերջիվերջո: Ամենաշնչին մի միկրորգանի՞ցմ, որ մահվան անսաելի սարսափից կաել է երկրի կավե գնդիկին ու լանում է նրա հետ ցուրտ խավարում: Թե՞ դա ուղեղ է՝ աստվածային սարք, առանձնահատուկ, զաղտնախորհուրդ նյութի՝ մտքի մշակման համար, մի նյութ, որի մեկ միկրոնն իր մեջ ամփոփում է ամբողջ տիեզերքը... Հը: Այ թե բանն ինչ է... .

Գարինն ավելի խոր նստեց, տակը քաշեց ոսքերը: Նրա այտերը, որ դժգույն էին միշտ, շառագունել էին:

— Ես առաջարկում եմ մի ուրիշ բան: Լսեք, իմ թշնամի... Ես կզրավեմ իշխանությունը երկրի վրա՝ լրիվ ու ամբողջովին: Ոչ մի ծխնելույզ ծուխ չի արձակի, ոչ մի նավ դուրս չի գա նավահանգստի, ոչ մի մուրճ չի թիսկա առանց իմ հրամանի: Ամեն բան, ընդհուպ մինչև շնչելու իրավունքը, կենթարկվի կենտրոնին: Իսկ կենտրոնում ես եմ: Ինձ է պատկանում ամեն ինչ: Ես ուզեղբամների վրա դրոշմ կտամ իմ կիսադեմը՝ մորուքով, դափնեպսակով, իսկ հակառակ կողմում՝ մաղամ Լամոլի պատկերը: Հետո կընտրեմ «առաջնագունդը»—

ասենք, մոտ երկու-երեք միլիոն զույգ: Նրանք կլինեն պատրիկները: Կտրվեն նրանք բարձրագույն հաճույքներին և կստեղծագործեն: Մենք նրանց համար, իին Սպարտայի օրինակով, հատուկ ռեժիմ կսահմանենք, որ չայլասերվեն ու չվերածվեն հարբեցողների և իմպուտենտների: Հետո մենք հարկ եղած քանակով բանող ձեռքեր կկարգենք մշակույթին կատարելապես սպասարկելու համար: Այստեղ նույնպես ընտրություն կկատարվի: Սրանց, քաղաքավարության համար, գործավոր կանվանենք:

— Հա, իհարկե...

— Կրմծիծաղեք, բարեկամս, խոսակցությունն ավարտվելուց հետո... Նրանք խոռվություն չեն բարձրացնի, չէ՝, սիրելի ընկեր: Հեղափոխությունների հնարավորությունը կվերացվի, կոչնչացվի հենց արմատից: Յուրաքանչյուր գործավոր, որակավորումից հետո և աշխատանքային գրքույկ ստանալուց առաջ, մի թեթև վիրահատման կենթարկվի: Բոլորովին աննկատ, հանկարծահաս նարկողի տակ... Մի փոքրիկ ներարկում զանգոսկրի միջով: Էհ, պարզապես զլսապտույտ կզգա, կսթափվի՝ արդեն ստրուկ է: Եվ, վերջապես, առանձին մի խումբ կմեկուսացնենք գեղեցիկ կղզիներից մեկում՝ բացառապես բազմացման համար: Մնացած ամեն ինչ հարկ կլինի վերացնել անպետք ու ավելորդ լինելու պատճառով: Ահա ձեզ ապագա մարդկության կառուցվածքն ըստ Պյոտր Գարինի: Այդ գործավորներն անտրտունց կաշխատեն ու կծառայեն իրենց կերի համար, ձիերի նման: Նրանք իրենց երջանիկ կզգան սնունդը մարսելով: Իսկ ընտրյալ պատրիկներն արդեն կիսաստվածներ են: Թեև ես, ընդհանուր առմամբ, արհամարիում եմ մարդկանց, բայց հաճելի է լինել լավ հասարակության մեջ: Հավատացնում եմ ձեզ, բարեկամս, դա ել կլինի հենց այն ամենախսկական ոսկեդարը, որ բանաստեղծներն են երազել: Երկիրն ավելորդ բնակչությունից մաքրելու սարսափների տպավորությունը շատ շուտ կանցնի, իսկ փոխարենը ի՞նչ հեռանկարներ կբացվեն հանձարի համար: Երկիրը կվերածվի դրախտային այգու: Ծնունդը կկարգավորվի: Լավագույնների ընտրություն կկատարվի: Գոյության կրիվ չկա՝ մնացել է բարբարոս անցյալի մշուշներում: Մշակվում է գեղեցիկ նրբին ռասա՝ մտածողության և զգացմունքների նոր օրգաններ: Մինչ կոմունիզմն ամբողջ մարդկությանն իր շալակն առած քարշ կտա կուլտուրայի գագաթները, ես այդ բանը կանեմ տասը տարում... Ի՞նչ եմ ասում, տասը տարուց իլ շուտ... Քչերի համար... Բայց հարցը քանակը չի...

— Ֆաշիստական ուսուպիզմ, բավական հետաքրքիր է,— ասաց Շելգան:— Ոոլինգին պատմե՞լ եք այդ մասին:

— Ուսուպիա չէ՝ ահա թե որն է ամբողջ կուրյոզը: Ես վստահում եմ միայն տրամաբանությանը... Ոոլինգին, իհարկե, ոչինչ չեմ ասել, որովհետև նա պարզապես անասուն է...

Թեև Ոոլինգն ու բոլոր Ոոլինգներն աշխարհում կուրորեն անում են այն, ինչ ես մշակում, դարձնում եմ ավարտուն և հստակ ծրագիր: Բայց նրանք այդ բանն անում են բարբարոսաբար, ծանրաշարժ ու դանդաղ: Վաղը, հուսով եմ, մենք արդեն կղզում կլինենք... Կտեսնեք, որ ես կատակ չեմ անում...

- Ինչի՞ց եք սկսելու: Մորուքով ոսկեդրամներ կտրելո՞ւց:
- Տես, է՛, ինչպես է այդ մորուքն ազդել ձեզ վրա: Ոչ: Ես կսկսեմ պաշտպանությունից: Կողում ամրություններ ստեղծելուց: Եվ միաժամանակ կատաղի տեմպով կսկսեմ ձեղքել թափանցել Օլիվինյան գոտու մեջ: Առաջին սպառնալիքն աշխարհին կլինի այն, որ ես կզցեմ ոսկու պարիտետը<sup>27</sup>: Ես կարող եմ ցանկացած քանակությամբ ոսկի արդյունահանել: Հետո կանցնեմ հարձակման: Պատերազմ կլինի՝ ավելի ահավոր, քան տասնչորս թվինը: Իմ հաղթանակն ապահովված է: Ապա՝ պատերազմից ու իմ հաղթությունից հետո մնացած բնակչության տեսակավորում, ոչ պիտանի տարրերի ոչնչացում, և իմ ընտրած ոսասան կսկսի ապրել աստվածների նման, իսկ «գործավորները» կսկսեն աշխատել խելոք-խելոք, այնպես գոհ, ինչպես առաջին մարդիկ՝ դրախտում: Հիանալի է, չէ՞: Չե՞ ք հավանում:
- Գարինը նորից քահ-քահ ծիծաղեց: Շելգան փակեց աչքերը, որ չնայի նրան: Պրոֆմիհությունների գրոսարանում սկսված խաղը ծավալվել ու դարձել էր լուրջ պարտիա: Մտածում էր պարկած: Մնացել էր վտանգավոր, բայց միակ մի քայլ, որ կարող էր հասցնել հաղթանակի: Համենայն դեպս, ամենասխալ բանն այն կլիներ, որ հիմա Գարինին մերժողական պատասխան տար: Շելգան ձեռքը մեկնեց զլանակ վերցնելու, Գարինը հեգնական ժպիտով հետևում էր նրան:
- Չը, որոշեցի՞ք:
- Այո, որոշեցի:
- Հիանալի է: Ես բացում եմ խաղաթղթերս՝ դուք ինձ պետք եք այնպես, ինչպես կայծքարը հրահանին: Ես բթամիտ գազաններով եմ շրջապատված, Շելգա: Մենք կվիճենք իրար հետ, բայց ես կհասնեմ այն բանին, որ դուք կաշխատեք ինձ հետ: Գոնե առաջին կետում, երբ մենք կխփենք Ռոլինգներին... Ի միջի այլոց, նախազգուշացնում եմ, վախեցեք Ռոլինգից, նա համառ է, և եթե որոշել է ձեզ սպանել՝ կսպանի:
- Ինձ վաղուց զարմացնում է, թե ինչու դուք նրանով չեք կերակրել շնաձկներին:
- Ինձ պատանդ է պետք... Բայց բոլոր դեպքերում նա չի մտնի «առաջնազնդի» ցուցակը...
- Շելգան լուս մնաց մի պահ: Հետո հարցրեց հանգիստ.
- Դուք սիֆիլիսով չե՞ք հիվանդացել, Գարին:
- Պատկերացրեք՝ չեմ հիվանդացել: Ես ել եմ մեկ-մեկ մտածում՝ ամեն ինչ կարգի՞ն է վերնատանս... Նույնիսկ բժշկի եմ գնացել: Միայն ոեֆլեքսներս են սրված: Լավ, հագնվեք, գնանք ընթրելու:

<sup>27</sup> Ոսկու կայուն արժեքն ամբողջ աշխարհում: Գարինի խնդիրն է արժեզրկել ոսկին, որպեսզի քառս մտցնի բուրժուական աշխարհի դրամական մագնատների շրջանում և գրավի իշխանությունը (ծանոթ. հեղինակի):

Ամպրոպաբեր ամպերը քաշվեցին կորան հյուսիս-արևելքում: Կապուտակ օվկիանոսն անսահման քնքուշ էր ու փայող: Ալիքների նուրբ կատարները շողշողում էին ապակու բեկորների պես: Դելֆիններ էին սլանում զրոսանավի ջրահետքերով, առաջ ընկնում, գլուխկոնծի տալիս՝ յուղափայլ ու բերկրալի: Կոկորդային ձայնով ճշում էին խոշոր ձայերը՝ սալամնելով առագաստների վերևում: Հեռվում օվկիանոսից բարձրանում էր ժայռոտ մի կղզու միրաժի նման երկնագույն-եթերային ուրվապատկերը:

Վերևից՝ դիտանոցից, նավաստին գոռաց՝ «Ճամա՛ք»: Եվ տախտակամածում կանգնածները ցնցվեցին: Անհայտ ապագայի եզերքն էր դա: Կղզին նման էր հորիզոնում փոփած երկարավուն ամպի: Եվ «Արիզոնային» նրա կողմն էին տանում քամուց փքված առագաստները:

Նավաստիները, բոբիկ ոտքները չլմիչլմիացնելով, լվանում էին տախտակամածը: Խավարծի արևը հուրիրում էր երկնքի և օվկիանոսի անհուն տարածքներում: Գարինը, մորուքը քաշքաշելով, ջանում էր թափանցել կղզին պարուրած ապագայի քողից ներս: Այս, եթե մարդ կարողանար իմանալ ինչ է լինելու... .

Վասիլյան կղզու հեռապատկերի վրա վառվում էր աշնանային վերջալույսը: Բոսոր ու մոայլ լույսով էին ողողված փայտով լի բեռնանավերը, բուրսիրային շոգենավերը, ձկնորսական նավակները, հանգարների վանդակավոր ամբարձիչների միջև խճճած ծխաքուլաները: Հրդեհվել էին թափուր ապարանքների ապակիները:

Արևմուտքից, ծխաշղարշի ետևից, մանուշակագույն-սև Նևայով մոտենում էր մի շոգենավ: Շշում էր՝ ողջունելով Լենինգրադին և ազդարարելով ուղերթի ավարտը: Շոգենավի լուսանցույցներից ցայտող լույսերն անցան Հանքագիտական ինստիտուտի, Ծովագնացության ուսումնարանի սյուների վրայով, զրոսնողների դեմքերի վրայով, և նավը կառանեց փոքրիկ սպիտակ սյուներով, կարմիր, ջրանիստ մաքսատան մոտ: Սկսվեց մաքսային գննության սովորական եռուգեռը:

Նավակողի մոտ կանգնած էր առաջին կարգի ուղևորներից մեկը՝ թխաղեմ, լայն այտոսկրերով մի մարդ, ըստ անձնագրի՝ Ֆրանսիական աշխարհազրական ընկերության գիտական աշխատակից: Կանգնել նայում էր իրիկնային աղջամուղջով պարուրված քաղաքին: Դեռ լույս էր մնացել Իսակեյան տաճարի գմբեթին, Ծովակալության շենքի Պետրոպավլովյան տաճարի ոսկեհուր սուրայր ձորերի վրա: Թվում էր՝ երկինք միսրածված այդ սայրաձողը Պետրոս Առաջինը հղացել էր իբրև Ռուսաստանի ծովային սահմանը պաշտպանող ահեղ մի սուր:

Լայն այտոսկրերով մարդը, վիզը ձգելով, սկսեց դիտել տաճարի սայրաձողը: Ասես հուզված էր ու ցնցված՝ երկարամյա բաժանումից հետո հայրենի հարկը տեսնող

պանդուխտի նման: Եվ ահա Նևայի մութ ջրերի վրայով ամրոցից հանդիսավոր դողանջ թռավ հասավ. Պետրոպավլովյան տաճարի վրա, ուր վերջալույսն էր մարմրում սուր ձողի սայրին, կայսրերի շիրիմների վրա կուրսանտներն «Հնտերնացիոնալ» էին նվազում:

Անծանոթը մատներով պինդ սեղմեց բազրիքը, կոկորդից մոնչոցի պես ձայն դուրս պրծավ, և նա թիկունքը դարձրեց ամրոցի կողմը:

Մաքսատանը նա անձնագիր ներկայացրեց Արթուր Լիի անունով և զննության ողջ ընթացքում խոժող հայացքով կանգնեց մնաց զլուխը կախ՝ աշքերի չար փայլը թաքցնելու համար:

Հետո, վանդակավոր պլեդն ուսին զցելով, փոքրիկ ճամպրուկը ձեռքին, դուրս եկավ Վասիլեյան կղզու առափը: Շողում էին աշնանային աստղերը: Նա շտկվեց երկար ժամանակ զսպված հառաշանքով: Նայեց քնած տներին, շոգենավին, որի կայմի վրա երկու լույս էր վառվում ու կամացուկ տկտկում էր դինամոյի շարժիչը, և քայլեց դեպի կամուրջը:

Դիմացից զալիս էր պարուսինե թլուզով բարձրահասակ մի մարդ: Կողքից անցնելիս սա նայեց եկվորի երեսին, մրմնօց՝ «Տե՛ր աստված», և հանկարծ ետևից հարցրեց.

— Վոլշի՞ն, Ալեքսանդր Իվանո՞վիս:

Մաքսատանն Արթուր Լիի անունով ներկայացած մարդը զայթեց, բայց առանց ետ նայելու, ավելի արագ քայլեց կամուրջով:

## 89

Իվան Գուսևն ապրում էր Տարաշկինի մոտ, ոչ այն է՝ որդի, ոչ այն է՝ կրտսեր եղբայր էր նրա համար: Տարաշկինը նրան գրածանաշություն ու խելք էր սովորեցնում:

Իվանն այնքան շուտ հասկացող, հաստատակամ տղա դուրս եկավ, որ մարդու սիրտ էր ինդում: Իրիկունները թեյ կիսմեին գերմակահացով ու երշիկով, Տարաշկինը ձեռքը գրպանը կտաներ զլանակ հանելու, կհիշեր, որ ակումբի կոլեկտիվին խոսք է տվել չծխել, կկոնչար, կխառներ մազերն ու կսկսեր գրույցը.

— Գիտե՞ս, թե ինչ ասել է կապիտալիզմ:

— Չե, Վասիլի Իվանովիչ, չեմ իմանում:

— Հիմի բացատրեմ քեզ ամենահասարակ ձևով: Ինը մարդ աշխատում են, տասներորդն ամեն ինչ խլում է նրանցից, սոված են մնում, տասներորդը տրաքվում է ձարպից: Դա ել հենց կապիտալիզմն է: Հասկացա՞ր:

— Չե, Վասիլի Իվանովիչ, չհասկացա:

— Ի՞նչը չհասկացաք:

- Ինչի՞ են ինք մեկին տալիս իրենց աշխատածը:
- Էդ մեկն ստիպում է, նա շահագործող է...
- Ո՞նց է ստիպում: Իրենք ինն են, նա՝ մեկը...
- Նա զինված է, նրանք՝ անզեն...
- Զենքը միշտ էլ կարելի է խլել, Վասիլի Իվանովիչ: Ուրեմն, կնշանակի՝ նրանք ձարպիկ չեն...

Տարաշկինը հիացմունքով, բերանքաց նայում էր Իվանին:

- Ճիշտ է, ախաղերս... Բոլշևիկավարի ես դատում... Մենք Սովետական Ռուսաստանում եղաքս էլ արինք՝ զենքը խլեցինք, շահագործողներին քշեցինք, ու հիմի մեզ մոտ բոլոր տասը մարդն էլ աշխատում են ու բոլորն էլ կուշտ են... Բոլորս էլ տրաքվում ենք ձարպից...
- Չե, ախաղերս, ձարպից տրաքվել պետք չի, մենք խոզ չենք, մարդ ենք: Մենք պիտի ձարպից մտավոր էներգիա քամենք:
- Դա՞ ինչ բան է:
- Են է, որ մենք կարծ ժամանակամիջոցում պիտի դառնանք ամենախելոք, ամենակրթված ժողովուրդն աշխարհիս երեսին... Հասկանալի՞ է: Հիմի արի անցնենք թվաբանության...
- Լսում եմ, անցնել թվաբանության,— ասաց Իվանը՝ հանելով տեսրն ու մատիտը:
- Թանաքի մատիտը չի կարելի թքոտել, դա անկուլտուրականություն է... Հասկացա՞ր:

Այդպես նրանք պարապում էին ամեն երեկո, մինչև կեսգիշեր ու դրանից էլ ուշ, մինչև որ երկուսի աշքերն էլ սկսում էին խփվել:

## 90

Թիավարության ակումբի դրոնակի մոտ կանգնած էր լայն այտուկրերով, լավ հագնված մի մարդ և ձեռնափայտով քշիրում էր հողը: Նա գլուխը բարձրացրեց և այնպէս տարօրինակ նայեց մոտեցող Տարաշկինին ու Իվանին, որ Տարաշկինը լարվեց: Իվանը սեղմվեց նրան: Անձանոթն ասաց.

- Ես այստեղ սպասում եմ առավոտից: Այս տղան էլ հենց Իվան Գուսև՝ ն է:
- Իսկ ձե՞զ ինչ, — հարցրեց Տարաշկինը ֆսֆացնելով:
- Կներեք, ամենից առաջ քաղաքավարություն է հարկավոր, ընկեր: Իմ անունն Արթուր Լսի է:

Նա հանեց վկայականը, բացեց Տարաշկինի քթի դեմ:

— Ես Փարիզի սովետական լիազոր ներկայացուցության աշխատակից եմ: Այսքանը քեզ բավարար է մենք է, ընկեր:

Տարաշկինն անորոշ քրթմնջաց: Արթուր Լիին գրանի թղթապանակից հանեց այն լուսանկարը, որ Գարինն էր վերցրել Շելգայից:

— Դուք կարո՞՞ն եք հաստատել, որ լուսանկարում հենց այս տղան է:

Տարաշկինն ստիպված էր հանձն առնել: Իվանն ուզում էր ծլկել, բայց Արթուր Լիին կոպտորեն ճանկեց նրա ուսը:

— Այս լուսանկարն ինձ տվել է Շելգան: Ինձ գաղտնի հանձնարարություն է տրված տղային տանել նշված հասցեով: Դիմադրության դեպքում կարող եմ նրան ձերբակալել: Դուք մտադի՞՞ր եք ենթարկվել:

— Իսկ մանդատ կա՞՞— հարցրեց Տարաշկինը:

Արթուր Լիին ցույց տվեց մանդատը՝ Փարիզում սովետական դեսպանության բլանկով, անհրաժեշտ բոլոր ստորագրություններով ու կնիքներով: Տարաշկինը կարդում էր երկար: Հետո, հոգոց հանելով, թուղթը ծալեց չորս տակ:

— Սատանան էլ գլուխ չի հանի, կարծես թե ամեն ինչ

ձիշտ է: Բայց գուցե մի ուրի՞շը նրա տեղը գա: Երեխան պիտի սովորի...

Արթուր Լիին թունոտ քմծիծաղեց.

— Մի վախեցեք: Տղան ինձ հետ իրեն վատ չի զգա. . .

## 91

Տարաշկինն Իվանին պատվիրեց իր մասին լուր տալ ճանապարհից: Նրա տագնապը փոքր-ինչ մեղմվեց, երբ Չելյաբինսկից բացիկ ստացավ.

«Թանկագին ընկեր Տարաշկին, փառք աշխատանքին, ոչինչ, գնում ենք կամաց-կամաց, առաջին կարգի վագոնով: Ուտելիքը լավն է, վերաբերմունքը՝ նմանապէս: Մուսկվայում Արթուր Արթուրովիչն ինձ համար գրակ, բամբակէ աստառով նոր պիջակ ու սապոգներ առավ: Մենակ թե ձանձրույթից քիչ է մնում մեռնեմ. Արթուր Արթուրովիչն ամբողջ օրը լուր է մնում: Հա, շմոռանամ ասեմ՝ Սամարայի կայարանում հանդիպեցի մի անապաստան տղայի, իմ նախկին ընկերոջը: Նրան, շատ կներեք, տվի ձեր հասցեն, հավանաբար կզա, սպասեք»:

## 92

Ալեքսանդր Իվանովիչ Վոլշինը ՍՍՀՄ էր եկել Արթուր Լսի անուն-ազգանուն կրող անձնագրով ու Ֆրանսիական աշխարհագրական ընկերության տված վկայագրերով։ Բոլոր փաստաթյուրն օրինավոր էին (ժամանակին Գարինը բավականին չարչարվել էր դրա համար), կեղծված-սարքված էին միայն մանդատն ու լիազոր ներկայացուցության վկայականը։ Բայց այդ թղթերը Վոլշինը ցույց տվեց միայն Տարաշկինին։ Իսկ պաշտոնապես Արթուր Լսին եկել էր հետազոտելու Կամչատկայի հուր ժայթքող հսկա լեռների, — որոնց տեղացիները սովոր են ասում, — հրաբխային գործունեությունը։

Սեպտեմբերի կեսերին նա Իվանի հետ ճանապարհվեց Վլադիվոստոկ։ Գիտարշավի համար անհրաժեշտ գործիքների ու իրերի արկղերն այնտեղ էին հասել մինչ այդ՝ ծովով, Սան Ֆրանցիսկոյից։ Արթուր Լսին շտապում էր։ Մի քանի օրում արշավախումբ կազմեց, և սեպտեմբերի քառութին նրանք Վլադիվոստոկից սովետական շոգենավով ճանապարհ ընկան դեպի Պետրոպավլովսկ։ Նավարկությունը դժվարին էր։ Հյուսիսային քամին ամպեր էր քշում բերում, որ ձյունահատիկ էին շաղ տալիս Օխոտի ծովի կապարագույն ալիքների մեջ։ Շոգենավը ծանր ճռչում-տնքում էր՝ վերուվարելով ահավոր ջրանապատում։ Պետրոպավլովսկ հասան միայն տասնմեկերորդ օրը։ Բեռնաթափեցին արկղերը, ձիերը և հաջորդ օրերին արդեն գնում էին անտառներով ու բլուրներով, արահետներով, գետակների հուներով, ճահիճների միջով ու անտառաթավուտներով։

Արշավախմբին առաջնորդում էր Իվանը. տղան լավ հիշողություն ուներ և շան հոտառություն։ Արթուր Լսին շտապում էր՝ ճամփա էին ընկնում լուսածեզին և քայլում էին մինչև մուրճ ընկնելը, առանց դադարների։ Զիերը հալից ընկնում էին, տրտնջում էին մարդիկ։ Արթուր Լսին անողոք էր, չէր խնայում ոչ մեկին, բայց լավ էր վճարում։

Եղանակը փշացավ։ Մոայլ խշողում էին մայրիների կատարները, երբեմն տապալվող դարավոր ծառի ծանր ճարճատյուն կամ ցած գլորվող քարակույտերի դդիրդ էր լսվում։ Զիերից երկուսը քարչարդ եղան, երկուսն էլ բեռներով թաղվեցին կորան ճահճում։

Իվանը սովորաբար գնում էր առջևից՝ մազլցելով բլուրները, ելնելով ծառերի կատարները՝ միայն իրեն ծանոթ բաներով ճանապարհը գտնելու համար։ Մի անգամ, մայրու ճյուղին ճռվելով, նա կանչեց։

— Ահա՝, Արթուր Արթուրովիչ, ահա՝ . . .

Լեռնային գետակի վրա կախված ուղղաբերձ ժայռի ճակատին նշմարվում էր քարի մեջ փորաքանդակված կոնաձև գլխարկով, նետ ու աղեղով զորականի մի պատկեր, որ կիսով չափ մաշվել-ջնջվել էր ժամանակի ձեռքի տակ. . .

— Էստեղից հիմի պիտի արևելք թեքվենք, նետի ցույց տված կողմով ուղիղ պիտի գնանք մինչև Շայթան-քարը, իսկ այնտեղից ճամբարն արդեն հեռու չի, — բղավում էր Իվանը։

Հենց տեղնուտեղը դադարք արին։ Իշեցրին հակերը։ Մեծ խարույկ վառեցին։ Քուն մտան հոգնատանց մարդիկ։ Խավարում, մայրիների խշողի միջից, հասնում էին հեռավոր խուլ պայթյունների ձայներ, ցնցվում էր գետինը։ Եվ երբ խարույկի կրակն սկսեց մարմրել, արևելքում, ամպերի տակ սկսեց արծարծվել հրացոլքը, ասես հեքիաթային հսկան լեռների

միջև խանձողներ էր փշում-բորբոքում, և շիկացող ածուխների աղոտ ցոլքն առկայօնում էր ամպերի փեշերին...

Հազիվ լույսը բացված՝ Արթուր Լևին, ձեռքը չկտրելով մառլեռի պատյանից, արդեն աքացիով վեր էր կացնում մարդկանց: Թույլ չտվեց խարույկ անել, թեյ դնել: «Առա՞ջ, առա՞ջ»... Տանջահար մարդիկ շարունակեցին քարշ զալ անանցանելի անտառով, քարաբեկորների կույտերի միջով: Ծառերն այստեղ արտակարգ բարձր էին: Զարխտութերի մեջ ձիերը կորչում էին զլուխնիկետ: Բոլորի ոտքերն արյունաթաթավ էին: Ստիպված էին երկու ձիուց էլ ձեռք քաշել: Արթուր Լևին զալիս էր ետևից, ձեռքը մառլեռի վրա: Թվում էր՝ էլի մի քանի քայլ, և ոչ ոք, թեկուզ սպանեին է, այլևս չէր կարող շարժվել տեղից...

Քամին բերեց Իվանի զրնգուն ձայնը.

— Էստե՛ դ եկեք, Էստե՛ դ, ընկերներ, ահա Շայթան քարը...

Վիթսարի քարազանգված էր դա մարդու զիսի ձևով, շոգու քուլաներով պարուրված: Տակից, գետնի ճեղքից, բաբախելով, տաք ջրի շիթ էր ցայտում: Անհիշելի ժամանակներից այն մարդիկ, որ ձանապարհանշաններ էին թողել ժայռերի վրա, լողացել էին ուժերը վերականգնող այդ ջերմուկում: Դա հենց այն «անմահական ջուրն» էր, որ հեքիաթներում բերում է ազուրը,— ուղիղակտիվ աղերով հարուստ ջուրը:

### 93

Այդ ամբողջ օրը հյուսիսային քամի էր փշում, ամպերը ցածրացել ու սահում էին անտառի վրայով: Թախծու խշշում էին բարձր սոճիները, ձկվում էին մայրիների սևաթույր կատարները, վերուվարում էին փիճները: Ամպերը ձյունահատիկ էին թափում, պաղ անձրև շաղ տալիս: Տայգան ամայի էր: Հազար վերստ տարածքով խշշում էին փշատերև անտառները ճահիճների վրա, քարքարոտ բլուրների վրա: Օր-օրի ավելի պաղ, ավելի ահավոր էր դառնում միզապատ երկնքից հասնող հյուսիսի շունչը:

Թվում էր՝ ծառերի կատարների ծանր խշշոցից և քամու սուլոցից բացի անկարելի էր ուրիշ ձայն լսել այս անապատում: Թոշունները չվել էին, կենդանի ու զազան՝ հեռացել, պահվել: Մարդը մեռնելու համար միայն կզար կհասներ այս տեղերը:

Բայց մարդը հայտնվեց: Նա պարանով գոտեկապված, մորթեպատ կարմրագորշ պատառոտուն քուրքով էր, անձրևից ուռած մորթե ձտքավոր կոշիկներով: Երեսը բռնել էր արդեն մի քանի տարի չհարդարված փշոտ մորուքը, մազերը թափվում էին ուսերին: Քայլում էր դժվարությամբ՝ հրացանին հենվելով, շրջանցեց բլրալանջը՝ տեղ-տեղ պահվելով կոճղարմատների ետևում: Կանգ առավ կռացած և սկսեց շվացնել-կանչել.

— Ֆըշտ, Մաշկա, Մաշկա... Փըշտ...

Հաստացողուն մոլախուտերի միջից բարձրացավ անտառային այծի զլուխը՝ մազաթափ վզին թուկի կտոր: Մարդը բարձրացրեց հրացանը, բայց այծը նորից թաքնվեց խոտերում:

Մարդը մոլտաց, նատեց քարին: Հրացանը դողողում էր ծնկների արանքում: Գլուխը գցեց կրծքին: Այդպես երկար մնալուց հետո նորից սկսեց կանչել.

— Մաշկա, Մաշկա...

Նրա պղտոր աչքերը խոտի մեջ որոնում էին այդ միակ հույսը՝ ձեռնասուն այծին. կխփի մնացած միակ փամփուշտով, կշորացնի միսն ու գոյությունը քարշ կտա ևս մի քանի ամիս, գուցե նույնիսկ մինչև զարուն:

Յոթ տարի առաջ նա իր հանճարեղ հրացումներն իրագործելու միջոց էր որոնում: Երիտասարդ էր, ուժեղ ու աղքատ: Ճակատագրական մի օր հանդիպեց Գարինին, և սա այնպիսի վիթխարի ծրագրեր բացեց նրա առջև, որ նա, թողնելով ամեն ինչ, հայտնվեց այստեղ՝ հրաբխի ստորոտում: Յոթ տարի առաջ այստեղ հատեցին անտառը, ձմեռոց, լաբարատորիաներ սարքեցին, ռադիոսարքավորում տեղադրեցին, որ սնվում էր փոքրիկ հիդրոկայանից: Ավանի հողե կտորները, որ արդեն նստել ու փուլ էին եկել, սկին էին տալիս ինչ-որ ժամանակ հրաբխի նետած հսկա քարերի մեջ, դժմացող կատարներով ռադիոկայամերի անտառի կողքին:

Ում հետ եկել էր այստեղ՝ ոմանք մեռան, մյուսները փախան: Շինությունները դուրս եկան շարքից, փոքրիկ հիդրոկայանի ամբարտակը գարնան հեղեղները քշեցին տարան: Եվ հիմա յոթ տարվա ամբողջ աշխատանքը, երկրի խորունկ շերտերի՝ Օլիվինյան գոտու հետազոտության բոլոր ապշեցուցիչ եզրահանգումները պիտի ոչնչանային նրա հետ այնպիսի հիմարության պատճառով, ինչպիսին Մաշկա այծն էր, որ չի ուզում մոտենալ մի հրացանազարկի տարածության վրա՝ ինչքան էլ այդ նզովյալին կանչես-շկանչես:

Առաջ հանաք բան էր տայգայով մի երեք հարյուր կիլոմետր կտրելն ու մարդաբնակ տեղ հասնելը: Հիմա ոտքերն ու ձեռքերը փայտացել էին հողացավից, ատամները թափվել էին լնդախտից: Վերջին հույսը ձեռնասուն այծն էր, որ ծերունին պահել էր ձմեռվա համար: Անիծյալ կենդանին հարել, կտրել էր թռկն ու ծլկել վանդակից:

Ծերունին վերցրեց վերջին փամփուշտով հրացանն ու քայլեց՝ կանչելով Մաշկային: Մոտենում էր երեկոն, մթագնում էին ամպերի շղթաները, ավելի չար էր ոռնում քամին՝ ձնձելով հսկա սոճիները: Մոտենում էր ձմեռը՝ մահը: Ծերունու սիրտը սեղմվեց... Մի՞թե էլ երբեք ինքը մարդու երես չի տեսնելու, չի նստելու վառարանի կրակի դեմ՝ շնչելով հացի բույրը, կյանքի բույրը: Ծերունին լաց եղավ անձայն:

Երկար ժամանակ անց կանչեց նորից.

— Մաշկա, Մաշկա...

Չէ, այսօր չի հաջողվի խփել... Ծերունին տնքտնքալով ելավ ու ոտքերը քարշ տվեց գնաց դեպի ձմեռոց: Կանգ առավ: Բարձրացրեց գլուխը. ձյունահատիկները զարկեցին դեմքին, քամին զզզեց մորուքը... Նրան թվաց... Ոչ, ոչ, քամին էր

երսի, որ սոճու ծառերը քսեց իրար և ձոինչ հանեց. . . Ծերունին, այնուհանդերձ, կանգնեց մնաց երկար, ճիգ գործադրելով, որ սիրտը չբարձախ այդքան ուժգին... . .

— Հե-ե-ե-ե՛յ, — մարդու թույլ ձայն հասավ Շեյթան-քարի կողմից:

Ծերունին ախ արեց: Աչքերը մշուշվեցին արցունքով: Լայն բացված բերանի մեջ ձյունահատիկներ էին կտկտում: Թանձրացած մթնշաղում այլևս անկարելի էր որևէ բան նշմարել բացատի վրա. . .

— Հե-ե-ե-ե՛յ, Մանցե, — նորից նրա ականջին հասավ քամուց բեկրեկվող տղայական զրնգուն մի ձայն: Հաստացողուն մոլախոտերի միջից բարձրացավ այծի գլուխը, Մաշկան մոտեցավ ծերունուն և, ականջները սրելով, նույնպես սկսեց ունկնդրել այս անապատի միօրինակությունը խախտող անսովոր ձայներին. . . Աջից, ձախից մոտենում էին, կանչում.

— Հե-ե՛յ. . . Որտե՞ղ եք, Մանցե: Ո՞ղջ եք. . .

Ցնցվում էր ծերունու մորուքը, ցնցվում էին շրթունքները, նա ձեռքերը տարածեց ու կրկնեց անձայն.

— Այո, այո, ողջ եմ. . . Ես եմ, ես, Մանցեր. . .

· ·

Զմեռանոցի ծխահարված գերանները դեռ երեք չէին տեսել նման ճոխություն:

Հրաբխաքարերից սարքած վառարանում բոցկլտում էր կրակը, փոքրիկ կաթսաներում եռում էր ջուրը: Մանցեն ազահորեն ներշնչում էր թեյի, հացի, ճարպի վաղուց մոռացված բույրերը:

Մտնում-կենում էին բարձրաբարբառ մարդիկ՝ ներս բերելով ու քանդել-բացելով հակերը: Լայն այտուկրերով մեկը նրան գոլորշի արձակող թեյով լի գավաթ ու մի կտոր հաց տվեց. . . Հաց: Մանցեր, դողալով, սկսեց լնդերով ծամծմել արագ-արագ: Ինչ-որ փոքրիկ տղա, նրա առաջ պայզած, կարեկցանքով նայում էր, թե ինչպես է Մանցեր մեկ կծում հացը, մեկ հացի կտորը սեղմում փոշոտ մորուքին՝ ասես վախենալով, որ իր կիսավեր ձմեռանոցը ներխուժած այդ ամբողջ կյանքը երազ կարող է լինել:

— Նիկոլայ Խրիստոֆորովիչ, դուք ինձ չե՞ք ճանաչում, ի՞ք:

— Ոչ, ես մոռացել եմ մարդկանց, — մոթմոթում էր Մանցեր, — ես վաղուց, շատ վաղուց հաց չեմ կերել:

— Այսր ես Իվան Գուսևն եմ... Նիկոլայ Խրիստոֆորովիչ, այսր ես ամեն ինչ արեցի էնպես, ոնց որ դուք պատվիրել էիք: Հիշո՞ւմ եք, հլա դեռ պահ էլ տվիք, որ գլուխս կպոկեք:

Մանցեր ոշինչ չէր հիշում, միայն աչքերը շոած նայում էր բոցով լուսավորված անձանոյթ դեմքերին: Իվանն սկսեց պատմել նրան, թե ինչպես այն ժամանակ տայգայով գնաց Պետրովավլովսկ, թե ինչպես էր ճամփին խուսափում արջերից, ինչպես հորթի շափ մի շիկարմիք կատու տեսավ, շատ վախեցավ, բայց այդ կատուն ու նրանից հետո էլի երեք կատուներ մոտով անցան գնացին: Պատմեց, որ սկյուռների բներից մայրի ծառի

ընկույզներ էր գտնում ուստում: Պետրոպավլովսկում վարձվեց շոգենավի վրա կարտոֆիլ կճպելու: Նավով հասավ Վլադիվոստոկ ու դեռ էլ յոթ հազար կիլոմետր ճամփա կտրեց՝ կողերը ջարդելով վագոնների տակ, ածխի արկղերի մեջ:

— Ես իմ խոսքը կատարեցի, Նիկոլայ Խրիստոֆորովիչ, մարդիկ բերի ձեր ետևից: Մենակ թե էն ժամանակ դուք իզուր տեղը մեջքիս թանաքի մատիտով բան գրեցիք: Հարկավոր էր ուղղակի ասել՝ «Խոսք տալի՞ ս ես, Իվան»: Ես էլ կասեի՝ «Տալիս եմ», ու վերջ: Թե չէ մեջքիս գրածը սովետական իշխանության դեմ էր երևի: Բա դա սիրո՞ւն բան է: Հիմի էլ ինձ վրա հույս չդնեք, ես պիոներ եմ:

Թեքվելով նրա կողմը, շրթունքները ծոմոելով, խոպոտ շշունջով Մանցեր հարցրեց.

— Ովքե՞ր են այս մարդիկ:

— Ֆրանսիական զիտական էքսպեդիցիա է, ասի, չէ՞: Հատուկ եկան գտան ինձ Լենինգրադում, որ իրենց բերեմ էստեղ, ձեր ետևից...

Մանցեր, ցավեցնելով, ճանկեց նրա ուսը.

— Դու տեսա՞ր Գարինին:

— Ահ տալը թողեք, Նիկոլայ Խրիստոֆորովիչ, իմի իմ թիկունքում սովետական իշխանություն կա... Կուզիս վրա ձեր գրածը հուսալի ձեռք ընկավ... Գարինը հեշ պետք էլ չի:

— Ինչո՞ւ են սրանք եկել այստեղ: Ի՞նչ են ուզում ինձնից... Ես սրանց ոչ մի բան չեմ ասի: Ես սրանց ոչ մի բան ցույց չեմ տա:

Մանցեր դեմքը կարմրատակել էր. շուրջը նայեց գրգռված: Նրա կողքին, տախտակամածի վրա, նստեց Արթուր Լսին:

— Հարկավոր է հանգստանալ, Նիկոլայ Խրիստոֆորովիչ: Կերեք, քնեք... Մենք դեռ շատ ժամանակ կունենանք, նոյեմբերից շուտ ձեզ չենք տանի այստեղից...

Մանցեն իշավ տախտամածից, նրա ձեռքերը դողում էին...

— Ես ուզում եմ ձեզ հետ խոսել երես առ երես:

Նա կաղին տալով գնաց դեպի դուռը, որ կցմցված էր չտաշված, կիսով չափ փտած փուշտաներից: Հրեց դուռը: Գիշերվա քամին խառնշորեց նրա ալեզարդ մազերը: Արթուր Լսին նրա ետևից դուրս եկավ մթան մեջ, ուր գալարվում էր թաց ձյունը:

— Իմ հրացանում վերջին փամփուշտն է... Ես ձեզ կսպանե՞մ: Դուք եկել եք ինձ կողոպտելու,— աղաղակեց Մանցեր՝ դողալով զայրութից:

— Գնանք, կանգնենք քամուց պաշտպանված մի տեղ:— Արթուր Լսին քարշ տվեց նրան, հենեց գերանակապ պատին:— Հերիք է փրփրեք: Ինձ ձեր հետևից է ուղարկել Պյոտր Պետրովիչ Գարինը:

Մանցեր ջղաձգորեն բռնեց Լսիի ձեռքը: Շրջված կոպերով նրա ուռած դեմքը դողում-ցնցվում էր, անատամ բերանը հեծեծաց.

— Գարինը ո՞ղ է... Նա չի՝ մոռացել ինձ: Միասին ենք սով տարել, միասին ենք մեծ պլաններ կազմել... Բայց այդ բոլորը դատարկ բաներ են, զառանցանքներ... Ես ի՞նչ հայտնագործեցի այստեղ... Պրայտեցի երկրի կեղևը... Հաստատեցի իմ բոլոր տեսական ենթադրությունները... Ես չեմ սպասում այդպիսի փայլուն եզրահանգումների... Օլիվինն այստեղ է,— Մանցեր դոփեց տեղում թաց ոտնամաններով,— սնդիկն ու ոսկին կարելի է հանել անսահմանափակ քանակությամբ... Լսեր, կարձ ալիքներով ես տնտղեցի երկրագնդի միջուկը... Այնտեղ սատանան գիտի թե ինչ է կատարվում...

Ես հիմնիվեր շրջեցի համաշխարհային գիտությունը... Եթե Գարինը կարողանար հարյուր հազար դոլլար ձեռք գցել՝ ինչե՛ք կանեինք...

— Գարինի տրամադրության տակ հիմա միիհարոներ կան, Գարինի մասին աղաղակում են ամբողջ աշխարհի թերթերը,— ասաց Լսին,— նրան հաջողվեց հիպերբոլոիդ պատրաստել, նա կղզի է ձեռք բերել Խաղաղ օվկիանոսում և պատրաստվում է մեծ գործերի: Նա սպասում է միայն երկրագնդի կեղևի ձեր հետազոտություններին: Ձեր ետևից դիրիժարլ կուղարկեն: Եթե եղանակը չխանգարի՝ մի ամսից մենք կարող ենք կառանակայալ կանգնեցնել:

Մանցեր դեմ ընկավ պատին և, գլուխը կրծքին զցած, լուռ մնաց երկար:

— Գարին, Գարին,— կրկնում էր նա աղեկտուր կշտամբանքով:— Ե՛ս տվի նրան հիպերբոլոիդի գաղափարը: Ե՛ս հանգեցրի նրան Օլիվինյան գոտու վերաբերյալ մտքին: Խաղաղ օվկիանոսում կղզի ձեռք բերելու ծրագիրը ե՛ս հուշեցի նրան: Նա կորոպտեց իմ ուղեղը, փտեցրեց ինձ այս անիծյալ տայզայում... Ի՞նչ կարող եմ հիմա ստանալ կյանքից՝ անկողին, բժիշկ, ձավարի շիլա... Գարին, Գարին... Ուրիշների գաղափարները խժող գիշատիչ...

Մանցեր դեմքը բարձրացրեց՝ տալով մոլեգնած տարերքին.

— Լնդախտը կերավ ատամներս, թրմաքոսը քրքրեց մաշկս, ես համարյա կույր եմ, ուղեղս բթացել եմ... Ուշ, շա՛տ ուշ հիշեց ինձ Գարինը...

## 94

Գարինը Հին և Նոր Աշխարհի լրագրերին ռադիոհաղորդագիր ուղարկեց, որ ինքը՝ Պիեռ Հարրին, Խաղաղ օվկիանոսում, արևմտյան երկայնության հարյուր երեսուն և հարավային լայնության քսանչորս աստիճանների տակ զբաղեցրել է հիսունհինգ քառակուսի կիլոմետր տարածությամբ կղզի՝ նրան հարող կղզյակներով ու ծանծաղուտներով, որ այդ կղզին ինքը համարում է իր տիրապետությունը և պատրաստ է իր սուվերեն իրավունքները պաշտպանել մինչև արյան վերջին կաթիլը:

Ծիծաղելի տպավորություն ստացվեց: Խաղաղ օվկիանոսի հարավային լայնություններում գտնվող փոքրիկ կղզին անմարդաբնակ էր և, բացի գեղատեսիլ համայնապատկերից, ուրիշ ոչ մի բանով աչքի չէր ընկնում: Նույնիսկ խառնաշփոթություն ստեղծվեց այն հարցում, թե ում է պատկանում կղզին՝ Ամերիկայի՞ն, Հոլանդիայի՞ն, թե Խապանիային: Բայց ամերիկացիների հետ երկար վիճելու հարկ չեղավ, փնթվնթացին ու ետ քաշվեցին:

Կղզին չարժեր նույնիսկ այն ածուխը, որ պիտի ծախսեին՝ նավով այնտեղ հասնելու համար, բայց սկզբունքը՝ ամենից առաջ, և Սան Ֆրանցիսկոյից մի թերթ հածանավ դուրս եկավ այսպիսի հանձնարարությամբ — ձերբակալել այդ Պիեռ Հարրիին և կղզում մշտնջենապես երկաթակուտ կայմ կանգնեցնել՝ Միացյալ Նահանգների կոփածո աստղագարդ դրոշով:

Հածանավը ճանապարհ ընկավ: Գարինի ծիծաղելի պատմության կապակցությամբ հորինվեց «Թշվառ Հարրի» ֆոքստրոտը, ուր ասվում էր, թե ինչպես փոքրիկ, խեղճ ու աղքատ Պիեռ Հարրին սիրահարվում է մի կրեոլուհու<sup>28</sup> և այնպես է սիրում, որ ուզում է նրան թագուհի դարձնել: Կրեոլուհուն տանում է մի փոքրիկ կղզի, և այնտեղ նրանք՝ թագավորն ու թագուհին, ֆոքստրոտ են պարում: Եվ թագուհին խնդրում է. «Թշվառ Հարրի, ես ուզում եմ նախաճաշել, ես քաղցած եմ»: Ի պատասխան Հարրին հառաչում է միայն և շարունակում պարել ավաղ, խեցիներից ծաղիկներից բացի ոչինչ չուներ նա: Բայց ահա նավ է կանգնում կղզու մոտ: Գեղեցկատես նախապետը թնն առաջարկում է թագուհուն և տանում նախաճաշի ճոխ սեղանի մոտ: Թագուհին խնդրում է և ուտում: Իսկ թշվառ Հարրիին ոչինչ չի մնում, քան պարել մենակ. . . Եվ այն, և այլն. . . Մի խոսքով, կատակ էր, ուրիշ ոչինչ: Մի տասն օր հետո հածանավից ռադիոգիր եկավ:

«Կանգնած եմ կղզու դիմաց: Այս իջնել չհաջողվեց, քանի որ նախազգուշացում ստացա, թե կղզին պաշտպանված է ամրություններով: Ուլտիմատում ուղարկեցի Պիեռ Հարրիին, որն իրեն կղզու տերն է համարում: Պատասխանի ժամկետը՝ մինչև վաղն առավոտյան յոթը: Այնուհետև դեսանտ կիշեցնեմ»:

Դա արդեն զվարճալի էր՝ թշվառ Հարրին իր պստիկ բոռնցրով սպառնում է վեցյույնանոց թնդանորթներին. . . Բայց ոչ առավոտյան և ոչ էլ հաջորդ օրերին հածանավից այլս ոչ մի լուր չստացվեց:

Վերջին հարցումին Հարրին չպատասխանեց: Ohn՝ Ռազմական մինիստրությունում ոմանք հոնքերը կիտեցին:

Հետո լրագրերում հայտնվեց սենացիոն մի հարցագրույց Մակ Լիննեյի հետ: Նա պնդում էր, որ Պիեռ Հարրին ոչ այլ ոք է, քան ուս հայտնի ավանտուրիստ ինժեներ Գարինը, որի հետ լուրեր են կապված մի ամբողջ շարք հանցագրծությունների, այդ թվում՝ Փարիզի մոտ, Վիլլ Դավրեռում կատարված առեղծվածային սպանության վերաբերյալ: Կղզին զավթելու պատմությունը Մակ Լիննեյին զարմացնում է մանավանդ այն պատճառով, որ

<sup>28</sup> Կրեոլներ — առաջին զաղութարար իսպանացիների և պորտուգալացիների սերունդներ, հետնորդներ Հարավային Ամերիկայում (ծ. թ. )

Գարինին կղզի հասցրած զբոսանավում եղել է ոչ այլ ոք, քան հենց ինքը՝ Ռոլինզը, «Անելին Ռոլինզ» տրեստի դեկավարն ու կարգադրիչը: Նրա միջոցներով էին հսկայական գնումներ կատարվել Ամերիկայում և Եվրոպայում, նավեր վարձվել բեռները կղզի տեղափոխելու համար: Քանի դեռ ամեն ինչ կատարվում էր օրինական կարգով, Մակ Լիննեյը լրում էր, բայց այժմ հիշեցնում է նա, որ թիմիայի արքա Ռոլինզի բնորոշ հատկանիշը բացառիկ հարգանքն է օրենքի հանդեպ: Ուստի կասկած չկա, որ կղզու լկտի բոնագրավումը կատարվել է Ռոլինզի կամքից անկախ և ապացուցում է միայն, որ Ռոլինզը կղզում գերության մեջ է, և որ միլիարդատիրոջից օգտվում են չտեսնված-չլսված շանտաժի նպատակներով:

Այստեղ արդեն կատակները վերջացան: Ոտնահարված էր սուրբ սրբոցը: Ոստիկանության գործակալները տեղեկություններ հավաքեցին օգոստոսի ընթացքում Գարինի կատարած գնումների մասին: Շշմեցուցիչ թվեր ստացվեցին:

Նույն ժամանակամիջոցում ռազմական մինիստրությունը փնտրում էր հածանավը, բայց ապարդյուն՝ նավը չքվել էր: Եվ, այս ամենի հետ մեկտեղ, լրագրերում հրապարակվեց անինինի գործարանների կործանման նկարագրությունը, որ արել էր աղետի վկա, ոուս գիտնական Խլինովը:

Սկանդալ ծայր առավ: Իսկապես, կառավարության քթի տակ ինչ-ոք ավանտյուրիստ ռազմական վիթխարի գնումներ էր կատարել, կղզի զավթել, ազատությունից զրկել Ամերիկայի մեծագույն քաղաքացուն և, հետն էլ, անբարոյական սրիկա էր, մասսայական մարդասպան, զարդելի ճիվադ:

Հեռագիրը մի շշմեցուցիչ լուր էլ բերեց. նորագույն տիպի անհայտ մի դիրիժարլ թոփչը է կատարել Հավայան կղզիների վրա, իջել Գիլոյի նավահանգստում, բենզին ու ջուր վերցրել, թռել անցել Կուրիյյան կղզիների վրայով, վայրէջք կատարել Սախալինում, Ալեքսանդրովսկի նավահանգստում բենզին ու ջուր վերցրել, որից հետո անհետացել է հյուսիսարևմտյան ուղղությամբ: Դիրիժարլի մետաղե կողին նկատելի են եղել Պ և Գ տառերը:

Այնժամ ամենքի համար պարզ դարձավ՝ Գարինը մոսկովյան գործակալ է: Ահա և քեզ «թշվառ Հարրի»... Պալատը քվեարկեց հօգուտ ամենավճռական միջոցառումների: Ուր գծային հածանավերից կազմված տորմիդ ուղղություն վերցրեց դեպի «Սրիկաների կղզին», ինչպես այդ կղզին անվանում էին հիմա ամերիկյան լրագրերում:

Նույն օրն ամբողջ աշխարհի ռադիոկայաններն ընդունեցին կարձալիք մի ռադիոգիր, որ հրեշավոր էր իր լկտի բովանդակությամբ ու հոռի ոճով.

«Ալլո՛: Ալլո՛: Խոսում է Օսկե կղզու ռադիոկայանը, Օսկե կղզու, որ անիրազեկության պատճառով Սրիկաների կղզի է հորչորջվում: Ալլո՛: Պիեռ Հարրին բոլոր երկրների կառավարություններին անկերծորեն խորհուրդ է տալիս քթները չխորթել իր ներքին գործերի մեջ: Պիեռ Հարրին կպաշտպանվի, և Օսկե կղզու ջրերը մտած ռազմական ամեն մի նավ կամ նավատորմիդ կարժանանա ամերիկյան թեթև հածանավի բախտին, որ

զրասույզ արվեց տասնինս վայրկյանից պակաս ժամանակում: Դիեռ Հարրին երկրագնդի ողջ բնակչությանն անկեղծորեն խորհուրդ է տալիս ձեռք քաշել քաղաքականությունից և անհոգ պարել իր անվամբ կոչվող ֆոքստրոտը»:

## 95

Զմեռոցին մերձ ձորակի ամբարտակը վերակառուցվեց: Էլեկտրակայանն սկսեց աշխատել: Արթուր Լիին ամեն օր անհամբեր հարցումներ էր ընդունում Ոսկե կղզուց՝ պատրա՞ստ է արդյոք կառանակայմը:

Էլեկտրամագնիսական ալիքները, անտարբեր այն բանին, թե ինչն է իրենց դուրս բերել տիեզերական անդրբից, պահում էին եթեր, որ նետվեն ռադիոլուսիչների մեջ և այնտեղ, միկրոֆոններում Գարինի մոլեզին ձայնով խոխոացնեն՝ «Եթե մի շաբաթից կառանակայմը պատրաստ չլինի, ես դիրիժարլ կուղարկեմ ու կհրամայեմ գնդակահարել ձեզ, լսո՞ւմ եք, Վոլշին», — խոխոացնեն այս բառերն ու հողանցման լարերով վերադառնան իրենց նախասկզբնական հանգիստ վիճակին:

Զմեռոցում, հրաբխի ստորոտում հապճեպ աշխատանք էր գնում՝ մաքրում էին մացառուտները լայն հրապարակի համար, կայմացու սոճիներ էին կտրում, վերևի մասում նեղացող, երեք ոտքերը գետնի մեջ խոր թաղված քանինս մետրանոց աշտարակ էին կանգնեցնում:

Աշխատում էին բոլորը՝ ինչքան ուժ ունեին, բայց ամենից ավելի ձեռ ու ոտ էր ընկնում և հուզվում էր Մանցեր: Նա այդ ընթացքում կուշտ ուտելուց բավական լցվել էր, բավական կազդուրվել, բայց նրա բանականությունը, ըստ երևույթին, վնասվել էր, և խելացնորության նշանները դեռ մնում էին: Լինում էին օրեր, երբ նա ասես մոռանում էր ամեն ինչ, անտարբեր նստում էր տախտամածին՝ փոշոտ գլուխը ձեռքերի մեջ առած: Կամ, այծի կապն արձակելով, ասում էր Իվանին.

— Ուզո՞ւմ ես՝ քեզ այնպիսի բան ցույց տամ, որ դեռ աշխարհում ոչ մի մարդ չի տեսել:

Մաշկա այծի թուկը բռնած (այծն այդպես օգնում էր նրան քարափներ բարձրանալիս), Մանցեր և նրան հետևող Իվանն սկսեցին վերելքը դեպի հրաբխի խառնարանը:

Վերջացավ կայմերի անտառը, դրանից հետո, խոշոր քարաբեկորների միջև, խառնիխուռն թփուտ էր, իսկ ավելի վերը միայն սև քարեր էին՝ քարաքոսով ինչ-որ տեղ ձյունով ծածկված:

Խառնարանի եզրերն ուղղաբերձ էին և ատամնավոր, ասես հսկայական կրկեսի կիսքանդ պատեր լինեին: Սակայն Մանցերն այստեղ ծանոթ էր յուրաքանչյուր ծերպը, և նա, տնքտնքալով, հաճախակի նստելով ու կարճ դադար առնելով, ոլոր-մոլոր բարձրանում էր սանդղավանդից սանդղավանդ: Բայց և այնպես մի անգամ միայն, մի արևոտ խաղաղ օր, նրանց հաջողվեց հասնել խառնարանի բուն եզրին: Ներքևում՝ արտառոց ատամնասայրերի բոլորակի մեջ, սառած լավայի շիկակարմիր-պղնձագույն լիճն էր: Ցածլիկ արևն ատամնասայրերից ցայտուն ստվերներ էր գցում լավայի մետաղ

Բիթների վրա: Արևմտյան եզրին մոտ, լավայի մակերեսին կոն էր բարձրանում, որի գագաթը ծխում էր ձերմակավուն ծխով:

— Այնտեղ,— ասաց Մանցեր՝ կեռումեռ մատներով ցույց տալով ծուխ արձակող կոնը,— այնտեղ խորշ է կամ, թե կուզես, խորխորատ՝ երկրի ընդերքը տանող, որ մարդու աչք չի տեսել... Ես պիրոքսիլինե գլանիկ զցեցի մեջը, և երբ պայթեց հատակին՝ վայրկենաչափով հաշվեցի խորությունն ըստ ձայնի արագության: Ես հետազոտեցի դուրս ժայթքող գագերը, հավաքեցի դրանք ապակյա թորանոթում, միջով կլեկտրալամպի լույս բաց թողի և գագի միջով անցած ճառագայթները տարրալուծեցի սպեկտրոսկոպի պրիզմայով... Հրաբխային գագի սպեկտրում հայտնաբերեցի ծարիրի, սնդիկի, ոսկու և էլի շատ ուրիշ ծանր մետաղների գծեր...

Այս բաները քեզ հասկանալի<sup>9</sup> են, Իվան:

— Հասկանալի են, շարունակե՛ք, շարունակե՛ք...

— Կարծում եմ, որ դու, այնուամենայնիվ, ավելի ես հասկանում, քան Մաշկա այծը... Մի անգամ, երբ առանձնապես բուռն էր գործում հրաբուխը՝ սարսափելի խոր ընդերքից թրում էր ու խորխում, ինձ հաջողվեց, կյանքս վտանգելով, մի քիչ գազ հավաքել թորանոթի մեջ... Երբ ցած՝ ձմեռոց էի իջնում, հրաբուխն սկսեց մինչև ամպերը մոխիր ու տակառաչափ քարեր շպրտել: Գետինը դողում-ցնցվում էր արթնացող հրեշի մեջքի պես: Ուշը չդարձնելով այդ մանրուքների վրա, ինձ լաբորատորիա զցեցի ու գազը դրեցի սպեկտրոսկոպի տակ... Իվան, ու դու էլ, Մաշկա, լա՛վ լսեք...

Մանցեր աչքերը փայլում էին, անատամ բերանը՝ ծոմոատվում.

— Ես հայտնաբերեցի ծանր մի մետաղի հետքեր, որ Մենդելեևի այյուսակում չկա: Մի քանի րոպեից փորձանոթում սկսվեց նրա տրոհումը՝ փորձանոթն սկսեց դեղին լույս արձակել, հետո՝ երկնազույն և, վերջապես, շլացուցիչ կարմիր... Զգուշության համար ետ քաշվեցի. պայթյուն լսվեց, փորձանոթն ու իմ լաբորատորիայի կեսը ցրիվ եկան-թռան գրողի ծոցը... Ես այդ խորհրդավոր մետաղը նշանակեցի Մ տառով, որովհետև իմ ազգանունն սկսվում է Մ-ով և այս այծի անունն էլ է սկսվում Մ-ով: Հայտնագործության պատիվը պատկանում է երկուսին՝ Մաշկա այծին և ինձ... Դու որևէ բան հասկանո՞ւմ ես, թե...

— Շարունակե՛ք, շարունակե՛ք, Նիկոլայ Խրիստոֆորովիչ...

— Մ մետաղը գտնվում է Օլիվինյան գոտու ամենախոր շերտերում: Այդ մետաղը տրոհվում է ու ջերմության ահոելի պաշարներ արտազատում... Ես պնդում եմ այնուհետև՝ երկրագնդի միջուկը կազմված է Մ մետաղից: Բայց քանի որ երկրագնդի միջուկի միջին խտությունն ընդամենը ութ միավոր է, այսինքն՝ մոտավորապես երկայի խտությամբ, իսկ Մ մետաղը երկու անգամ ծանր է նրանից, ապա, հետևաբար, երկրագնդի բուն կենտրոնում դատարկություն է:

Մանցեր բարձրացրեց մատը և նայելով Իվանին ու այծին՝ ծիծաղեց ապուշավարի:

- Գնանք նայենք... Նրանք երեքով ժայռոտ կատարից իջան մետաղափայլ լիճը և, մետաղե բլիթների վրայով սահելով, գնացին դեպի ծխացող կոնը: Ճեղքերից տաք օդ էր դուրս ժայթքում: Ոտքերի տակ, այստեղ-այնտեղ, անհատակ խոռոչներ էին սևին տալիս:
- Մաշկային հարկավոր է թողնել ներքեսում,— ասաց Մանցել՝ կտտացնելով այծի քթին, և Իվանի հետ մազլցեց, բարձրացավ կոնի վրա՝ կառչելով պոկ եկող տաք խճաքարերից:
- Պառկիր փորի վրա ու նայիր:

Նրանք պառկեցին կոնի եզրին, այն կողմից, որտեղից քշվում-տարվում էին ծխի քուլաները, և զլուխներն իշեցրին: Կոնի ներսում փոստրակ էր և կենտրոնում մոտ յոթ մետր տրամագծով ձվածիր անցք կար: Այնտեղից ծանր հառաջ էր լսվում, խուլ դղիրդ, ասես սատանան զիտի թե ինչ խորության վրա քարեր էին զլորվում:

Երբ աչքերը վարժվեցին, Իվանը կարմրավուն լուս նշամարեց, որ բխում էր անհաս խորքերից: Լույսը, մեկ աղոտանալով, մեկ նորից բռնկվելով, հուրիբում էր ավելի ու ավելի վառ՝ դառնալով մորեգույն, կուրացուցիչ... Ծանր հառաջում-տնքում էր գետինը, առավել ահազդու էին դրդում քարերը:

— Մակընթացություն է սկսվում, հարկավոր է հեռանալ,— ասաց Մանցել:— Այդ լույսը գալիս է յոթ հազար մետր խորությունից: Այնտեղ տրոհվում է մետաղը, այնտեղ եռում և գոլորշանում են ոսկին ու սնդիկը:

Բոնեց Իվանի գոտուց, ցած քաշեց նրան: Կոնը դողդողում էր, կողերից սորում էր խիճը, թանձր ծխաքուլաները հիմա ժայթքում էին այնպես, ինչպես գոլորշին՝ պայթած շոգեկաթսայից, կուրացուցիչ ալ կարմիր լույսը դուրս էր ցայտում խորխորատներից՝ ցածրասահ ամպերն արնաներկելով...

Մանցել ձանկեց Մաշկայի վզի թուկը:

— Վազրով, արա՛ գ, երեխաներ... Հիմա քարեր կթռչեն...

Ծանր դղիրդ թնդաց, որ արձագանքեց ժայռապատ ամֆիթատրոնով մեկ. հրաբուխը քարագնդակներ արձակեց... Մանցելն ու Իվանը վազում էին՝ ձեռքերով զլուխները պահած, առջևից ցատկուում էր այծը՝ թուկը քարշ տալով...

## 96

Կառանակայմը պատրաստ էր: Ոսկե կղզուց հաղորդեցին, որ դիրիժաֆլը ձամփա է ընկել՝ չնայած ծանրաչափի սպառնալի ցուցումներին:

Բոլոր այդ վերջին օրերին Արթուրը Մանցելին անկեղծ խոսակցության էր դրդում նրա զարմանահրաշ հայտնագործությունների շուրջ: Տեղավորվելով տախտամածի վրա, բանվորներից հեռու, նա հանում էր տափաշիշն ու սպիրտ լցնում Մանցելի թեյի մեջ:

Բանվորները պառկում էին հատակին, փշատերև փողոցի վրա: Երբեմն նրանցից մեկնումեկը ելնում էր ու մայրի ծառի կոճղարմատ զցում կրակարանը: Բոցերից լուսավորվում էին մրոտ պատերը, հոգնատանջ, մազակալած դեմքերը: Քամին մոլեզնում էր տանիքի վրա:

Արթուր Լսին աշխատում էր խոսել կամացուկ, փաղաքուշ, հանգստացնող տոնով: Բայց Մանցն ասես խելքը զցել էր բոլորովին:

— Լսեք, Արթուր Արթուրովիչ, կամ ձեզ ինչպես էին ասում... Վե՛րջ տվեք խորամանկություն բանեցնելուն: Իմ թղթերը, իմ բանաձեռքը, խոր հորատման իմ նախագծերը, իմ օրագրերը ամուր փակված են թիթեղյա տուփում ու պահված ապահով... Ես կթռչեմ, դրանք կմնան այստեղ՝ ոչ ոք չի ստանա, նույնիսկ Գարինը: Սպանեն էլ՝ չեմ տա...

— Հանգստացեք, Նիկոլայ Խրիստոֆորովիչ, այսր դուք կարգին մարդկանց հետ գործ ունեք:

— Ես այդքան էլ հիմար չեմ: Գարինին պետք են իմ բանաձեռքը... Իսկ ինձ պետք է իմ կյանքը... Ես ուզում եմ ամեն օր լողանալ անուշահոտ վաննայում, թանկարժեք ծխախոտ ծխել, լավ զինի խմել... Ես ատամներ կդնեմ ու գետնասունկ կծամեմ... Ես էլ եմ փառք ուզում... Ես արժանի՝ եմ դրան... Գրողի ծոցը բոլորդ՝ Գարին-մարինով...

— Նիկոլայ Խրիստոֆորովիչ, Ոսկե կղզում դուք կապրեք թագավորի պես...

— Լա՛վ, վերջ տվեք: Ես զիտեմ Գարինին... Նա ատում է ինձ, որովհետև Գարինին ոտքից գլուխ ես եմ հորինել... Առանց ինձ նրանից պարզապես մանր ժուլիկ կստացվեր... Դուք դիրիժաֆլով կտանեք իմ կենդանի ուղեղը և ոչ թե տետրերը՝ իմ բանաձեռով:

Իվան Գուսևը, ականջը սրած, բեկորներ էր որսում այդ խոսակցությունից: Այն զիշերը, երբ կառանակայմը պատրաստ էր, նա տախտամածի վրայով սողաց բաց աչքերով պառկած Մանցնի մոտ ու շշնչաց ուղիղ նրա ականջի մեջ.

— Թքի՛ ր դրանց վրա, Նիկոլայ Խրիստոֆորովիչ: Ավելի լավ է՝ զնանք Լենինգրադ... Ես ու Տարաշկինը ձեզ կիսնամենք պստլիկ երեխու պես... Ատամներ կդնենք... Լավ բնակտարածություն կձարենք, ի՛նչ կարիք ունեք կապվելու բուրժույների հետ... .

— Ոչ, Վանկա, ես կորած մարդ եմ, ես չափից դուրս անսանձ ցանկություններ ունեմ,— պատասխանեց Մանցը՝ նայելով առաստաղին, որի գերանների արանքից մրոտ մամուռի ծվեններ էին կախված:— Յոթ տարի այս անիծյալ տանիքի տակ փոթորկվել է իմ երեակայությունը... Ես այլս չեմ ուզում սպասել և ոչ մի օր...

Իվան Գուսևը վաղուց էր գլխի ընկել, թե իրենից ինչ է ներկայացնում այդ «Փրանսիական եքսպերիցիան». Նա ուշադիր լսում էր, նայում ու իր եզրահանգումներն անում:

Նա հիմա Մանցեսի ետևից գնում էր թոկով կապվածի պես, և այդ վերջին գիշերը չէր քնել. Երբ սկսում էին խփվել աչքերը, քիթը թռչունի փետուր էր խոթում կամ կսմթում էր մարմսի ցավոտ տեղերը:

Լույսը բացվելուն պես Արթուր Լսին, արագ-արագ կիսամուշտակը հագնելով վիզը շարֆով փաթաթելով, գնաց ռադիոկայան, որ կողքի գետնահյուղում էր: Իվանն աչքը չէր կտրում Մանցեսից: Արթուր Լսին հազիվ էր դուրս եկել՝ Մանցեսը շուրջը նայեց ստուգելու համար, թէ քնա՞ծ են բոլորը, հետո զգույշ իջավ տախտամածից, անաղմուկ հասավ ձմեռոցի մութ անկյունը, բարձրացրեց գլուխը: Բայց, ըստ երևույթին, աչքերը վատ էին տեսնում, ետ եկավ, կրակարանը խեժախոհիվ զցեց: Երբ բոնկվեց կրակը, նորից անկյունը գնաց:

Իվանը գլխի ընկավ, թէ նա ինչի է նայում. անկյունում, այնտեղ, ուր խաչվում էին փայտե շինույթյան հեծանները, առաստաղում ծերպ էր սևին տալիս մարդակածածկի գերանների միջն. մամուռը մաքրված էր այդտեղ: Դա էլ հենց անհանգստացնում էր Մանցեսին... Բարձրանալով ոտնամատների վրա, ցածլիկ առաստաղից սև մամուռի ծվեններ պոկոտեց և, տնքտնքալով, փակեց ծերպը:

Իվանը դեն նետեց փետուրը, որով քիթն էր խուտուտ տալիս, շուր եկավ կողքի, ծածկոցը քաշեց գլխին ու իսկույն քնեց:

Զյունամրրիկը չէր դադարում: Երկրորդ օրն էր, ինչ վիթխարի դիրիժարլը կախված էր բացատի վրա՝ քթով կապված կառանակային: Կայմը ճկվում էր: Օրորվում էր դիրիժարլի սիգարածն մարմինը, և ներքսից թվում էր, թէ օդում երկարէ բեռնանավի հատակ է կախված: Անձնակազմը հազիվ էր հասցնում ձյունից մաքրել դիրիժարլի կողերը:

Կապիտանը, ցած թեքված գոնդոլից, ձայնում էր ներքեսում կանգնած Արթուր Լսին:

— Ալլո, Արթուր Արթուրովիշ, սա ի՞նչ բան է... Հարկավոր է թոշել... Մարդկանց վրա էլ հալ չմնաց:

Լսին պատասխանում էր ատամների արանքից.

— Ես մի անգամ էլ խոսեցի կղզու հետ: Հրամայված է տղային տանել՝ ինչ էլ որ լինի:

— Կայմը չի պահի...

Լսին միայն վեր քաշեց ուսերը: Բանը, իհարկե, տղան չէր: Իվանը կորել էր այդ գիշեր: Ու ոչ ոք էլ գլխի ըընկավ՝ նրան հիշելու ժամանակ չկար: Կառանում էին դիրիժարլը, որ հայտնվել էր լուսաբացին և երկար պտտվում էր բացատի վրա, ձյունաբեր ամպերի մեջ: Պարենամբերը էին բեռնաթափում: (Արթուր Լսին արշավախմբի բանվորները հայտարարեցին, որ եթե լիուլի պարեն ու պարզեցրամ չստանան, պիրոքսիլինե պայթագլանիկով կթափին դիրիժարլի փորը): Իմանալով, որ տղան կորել է, Արթուր Լսին թափ տվեց ձեռքը.

— Կարևոր չի:

Բայց պարզվեց, որ բանը շատ ավելի լուրջ է:

Մանցեն առաջինը բարձրացավ գոնդոլ: Սակայն մի րոպե անց, անհանգստացած ինչ-ոք բանից, այլումին սանդուղքով իջավ գետին ու կաղին տալով գնաց ձմեռոց: Եվ անմիջապես լսվեց նրա հուսակտուր աղաղակը: Մանցեն դիվահարի պես դուրս թռավ ձյան քուլաների ետևից՝ ձեռքերը թափահարելով.

— Ո՞ւր է իմ թիթեղյա տուփը... Ո՞վ է վերցրել իմ թղթերը... Դո՛ւ, դո՛ւ ես գողացել, սրիկա՛:

Ճանկեց Լսի օձիքը, թափ տվեց նրան այնպես ուժգին, որ գլխարկը թռավ նրա գլխից...

Պարզ էր՝ անգնահատելի բանաձևերը, որոնց համար էլ հենց դիրիժաֆլը եկել հասել էր այստեղ, տարել էր այն անիծյալ տղան: Մանցեն խենթացել էր կատարելապես.

— Իմ թղթե՞րը... Իմ բանաձևե՞րը... Մարդկային ուղեղն ի վիճակի չէ նորից ստեղծելու այդ ամենը... Ես ի՞նչ պիտի տամ Գարինին: Ես մոռացե՞լ եմ ամեն ինչ...

Լսին սկսեց անհապաղ հետապնդողների խումբ կազմել՝ տղայի ետևից ուղարկելու համար: Մարդիկ վնասվածքացին դժկամ: Բայց և այնպես մի քանիսը համաձայնեցին: Մանցեն նրանց տարավ Շայթան-քարի կողմը: Լսին մնաց գոնդոլի մոտ՝ եղունգները կրծոտելով: Ահազին ժամանակ անցավ: Հետապնդման գնացածներից երկուսը վերադարձան:

— Էնտեղ էնպիսի բքախեղոց է, որ ոտ ոտի առաջ դնել չի լինում...

— Որտե՞ղ թողեցիք Մանցենին,— բղավեց Լսին:

— Ինչ իմանաս... Կորավ աչքներիցս...

— Գտե՞ք Մանցենին: Գտե՞ք տղային... Մեկի և մյուսի համար տասը-տասը հազար՝ ոսկո՞վ:

Ամպերը մթագնեցին: Մոտենում էր զիշերը: Քամին սաստկացավ: Կապիտանը նորից սկսեց սպառնալ, որ կկտրի ձռպաններն ու կթռչի գրողի ծոցը:

Վերջապես, Շայթան-քարի կողմից երևաց ձյունածեփի քուրքով բարձրահասակ մի մարդ: Նա զրկած բերում էր Իվան Գուսևին: Լսին նետվեց նրա կողմը, պոկեց ձեռնոցն ու ձեռքը տարավ տղայի մուշտակի տակ: Իվանն ասես քնած էր, նրա սառած ձեռքերն ամուր կրծքին էին սեղմել մի փոքրիկ թիթեղյա տուփ, որի մեջ Մանցենի թանկարժեք բանաձևերն էին:

— Ողջ է, ողջ է, մենակ ցրտահարվել է մի քիչ,— ասաց բարձրահասակ մարդը՝ լայն ժպիտով երկձեռքելով ձյունախոփիվ մորուքը:— Տարանա՝ ետ կզա: Վերև տանեմ, չէ՞— Եվ, պատասխանի չսպասելով, Իվանին բարձրացրեց գոնդոլ:

— Հը՝,— վերևից գոռաց կապիտանը,— թռա՞նք:

Արթուր Լսին անվճռական նայեց նրան:

- Դուք պատրա՞ստ եք թոխքի:
- Ճիշտ այդպես,— պատասխանեց կապիտանը:

Լևին մի անգամ էլ շուտ եկավ Շայթան-քարի կողմը, ուր մոայլ ամպերից հոծ վարագույրի նման պտույտ-պտույտ իշնում էր ձյունը: Վերջիվերջո զիսավորն այն էր, որ բանաձևերը դիրիժաֆլի գոնոդում էին:

- Թռա՞նք,— ասաց նա՝ ցատկելով այումինե սանդուղքի աստիճանին:— Տղերք,  
արձակե՞ք ձոպանները...

Նա բացեց սապատավոր դուռն ու մտավ գոնդոլ: Կառանակայմի վերևից սկսեցին կտրել դիրիժաֆլ պահող կանեփաճոպանը: Ճայթուններով բարախեցին շարժիչները:  
Պտտվեցին պտուտակները:

Այդ պահին ձյունամրիկի միջից հայտնվեց հողմահալած Մանցել: Քամին ցից-ցից բարձրացրել-դեզ էր արել նրա մազերը: Առաջ պարզված նրա ձեռքերը փորձում էին բռնել դիրիժաֆլի թռչող ուրվապատկերը...

— Կանգնե՞ք... Կանգնե՞ք...— աղաղակում էր խոպոտ: Երբ գոնդոլի այումինե սանդուղքը գետնից արդեն մոտ մեկ մետրի վրա էր, նա կառչեց ներքեւի աստիճանից: Մի քանի մարդ քուրքից բռնեցին, որ պոկեն նրան, բայց Մանցելն աքացելով հեռու քշեց բոլորին: Ճոճվում էր դիրիժաֆլի մետաղե հատակը: Ճարճատում էին շարժիչները: Զայրացկուտ ոռնում էին պտուտակները: Դիրիժաֆլ բարձրանում էր վեր, դեպի գալարվող ձյունաշաղ ամպերը:

Մանցել վարի աստիճանից կառչել էր աքցանի նման: Նա արագ վեր էր սլանում...  
Ներքեց երևում էր, թե ինչպես էին նրա չոված ոտքերը, քուրքի ծածանվող փեշերը  
համբառնում երկինք:

Թե ինչքան թռավ, ինչ բարձրությունից պոկվեց ու ընկավ՝ դա արդեն չտեսան ներքեւում կանգնած մարդիկ:

Այումինե գոնդոլի պատուհանից դուրս թեքված, մադամ Լամոլը ցած էր նայում հեռադիտակով: Դիրիժաֆլ հազիվ էր շարժվում՝ շրջան գծելով լուսաշող երկնքում: Ներքել, մոտ հազար մետր խորության վրա, անընդգրկելի լայնքով փռված էր կապտականաչ ջինջ օվկիանոսը: Այդ տարածքի կենտրոնում անկանոն ձևի կղզի կար: Վերևից կղզին հիշեցնում էր Աֆրիկայի ուրվապատկերը՝ պստլիկ չափերով: Հարավից, արևելքից և հյուսիսից, նրա շուրջը սփռված ցայտերի նման, սևին էին տալիս փրփուրով եզրապատված քարքարոտ կղզյակներ ու ծանծաղուտներ: Արևմուտքից օվկիանոսը մաքուր էր:

Այստեղ, իսր ծովածոցում, առափնյա ավազաշերտից ոչ հեռու, բեռնանավեր էին կանգնած: Զոյան հաշվեց՝ քսանչորսն էին, նման ջրի վրա քնած բգեզների:

Կողին ծածկված էր ճանապարհների թելիկներով, որոնք միանում էին հյուսիսարևելյան ժայռոտ մասում, ուր ապակեպատ տանիքներ էին փայլկտում: Կառուցման ավարտին հասած պալատն էր դա, որ երեք սանդղափուլով իջնում էր դեպի փոքրիկ ավազածածկ ծովախորշի ալիքները:

Կողու հարավային կողմում երևում էր վերսից մանկական խառնակախաղ հիշեցնող շինությունների համալիր՝ ֆերմաներ, ռազմական ամրություններ, վանդակավոր ամբարձիչներ, երկաթզօներ, շարժվող վագոնիկներ: Տասնյակ հողմաշարժիչներ էին պտտվում: Փայլվում էին էլեկտրակայանների ու ջրհան կայանների խողովակները:

Այդ շինությունների կենտրոնում սևին էր տալիս հանքահորի կլոր երախը: Այնտեղից դեպի ափ էին շարժվում երկաթե լայն փոխակրիչներ՝ տանելով հանված ապարը, այնուհետև թթուրների նման ծովն էին մտնում հողահան մեքենաների կարմիր պոնտոնները: Անընդհատ գոլորշու ամպ էր կանգնած հանքահորի վրա:

Օր ու գիշեր,— վեց հերթափոխով,— աշխատանքներ էին գնում հանքահորում. Գարինը ծակում էր երկրագնդի կեղևի գրանիտե զրահը: Այդ մարդու հանդգնությունը մոտենում էր խելազարության: Մադամ Լամոլը նայում էր հանքահորի վրա կանգնած ամպին, հեռադիտակը դողդողում էր արևայրուքից ոսկեգունած նրա ձեռքում:

Ծովածոցի ցածրադիր ափին ուղիղ շարքերով ձգվում էին պահեստների և բնակելի շինությունների տանիքները: Մրջունների նման մարդիկ էին շարժվում ճանապարհներով: Սլանում էին ավտոմեքենաներ ու մոտոցիկլետներ: Կողու կենտրոնում լիձ էր կապտին տալիս, որից ելնում էր զալարուն մի գետակ ու հոսում հարավ: Գետակի ափերին դաշտերի ու բանջարանոցների շերտեր էին տարածվում: Արևելյան լանջն ամբողջ պատված էր զմրուխտ կանաչով. այստեղ, ցանկապատերից դուրս, անասունների հոտեր ու նախիրներ էին արածում: Հյուսիս-արևելքում, պալատի առջև, ժայռերի մեջ երփներանգում էին արտասովոր ձևի ծաղկանոցներ ու ծառապուրակներ:

Դեռ կես տարի առաջ այստեղ անապատ էր՝ տատասկ ու ծովի աղից գորշագունած քարեր, և մեկ է՝ նվազ մի թփուտ: Նավերը կողի թափեցին հազարավոր տոննաներով քիմիական պարարտանյութեր, արտեզյան ջրհորներ փորվեցին, բույսեր ու ամբողջ ծառեր բերվեցին:

Գոնդոլի բարձունքից Զոյան նայում էր օվկիանոսում լրված այդ հողակտորին, որ հիմա պերծ էր ու փայլուն՝ ալեբախության ձյունաձերմակ փրփուրով պարուրված, և զմայլվում էր նրանով, ինչպես կինը կզմայլվի ափի մեջ պահած թանկագին զարդով:

Աշխարհում յոթ հրաշալիք է եղել: Ժողովրդի հիշողությունը պահպանելու մեջ է հասցրել միայն երեքը՝ Դիանայի տաճարը Եփեսոսում<sup>29</sup>, Շամիրամի այգիները<sup>30</sup> և Հռոդոսի պղնձաձույլ հսկայական արձանը<sup>31</sup>: Հիշողությունը մնացած հրաշալիքների մասին թաղվել կորել է Ատլանտյան օվկիանոսի խորքերում:

Ութերորդ հրաշալիքը, ինչպես կրկնում էր մադամ Լամոլն ամեն օր, Ուկե կղզու հանքահորը պիտի համարվեր: Պալատի նոր-նոր հարդարված դահլիճում, որի վիթխարի պատուհանները լայն բացվում էին օվկիանոսի շնչի դեմ, ընթրիքի սեղանի առաջ մադամ Լամոլը բաժակ բարձրացրեց.

— Հրաշքի՝ կենացը, հանձարի՝ կենացը, հանդգնության կենացը:

Կղզու ողջ ընտիր հասարակությունը ոտքի ելավ և ողջունեց մադամ Լամոլին ու Գարինին: Ամենքը համակված էին աշխատանքի տենդով և ֆանտաստիկ ծրագրերով: Ի՞նչ փույթ, թե այստեղ՝ մայր ցամաքներում, աղաղակում են իրավունքների ոտնահարման մասին: Թքա՛ծ: Այստեղ օր ու գիշեր ստորերկրյա դոլիրդով զվում է հանքահորը, զրնգում են Էլսատորների շերեփները՝ մտնելով ավելի ու ավելի խոր, դեպի ուկու անսպառ պաշարները: Սիբիրի ուսկեբեր հանքաշերտերը, Կալիֆորնիայի հեղեղատները, Քլոնդայկի ձյունածածկ անապատները դատարկ բան են սրա դեմ, տնայնագործություն: Ուկին այստեղ ոտքերի տակ է, ուզածդ տեղում, հարկավոր է միայն թափանցել գրանիտի և եռացող օլիվինի միջով:

Տարաբախտ Մանցսի օրագրում Գարինն այսպիսի գրառում գտավ.

«Ներկայումս, այսինքն՝ այն ժամանակ, երբ ավարտվել է չորրորդ սառցային շրջանը և չափազանց մեծ արագությամբ սկսել է զարգանալ կենդանիների մի ցեղատեսակ, որ գուրկ է մազածածկույթից, ունակ է քայլելու ետևի վերջավորությունների վրա և օժտված է բերանի խոռոչի հարմար կառուցվածքով՝ զանազան հնյուններ արտաքերելու համար,— երկրագունդը ներկայացնում է հետևյալ պատկերը:

Նրա վերին ծածկույթը կազմված է սառած գրանիտներից և դիորիտներից՝ հինգից քանիներու հաստությամբ: Այդ կեղևն արտաքին կողմից ծածկված է ծովային նստվածքներով և ոչնչացած բույսերի (քարածուխ) ու ոչնչացած կենդանիների (նավթ) շերտերով: Կեղևն լնկած է երկրագնդի երկրորդ թաղանթի վրա, որ կազմված է հալված մետաղներից, այսինքն՝ Օլիվինյան գոտու վրա:

Հալած Օլիվինյան գոտին տեղ-տեղ, ինչպես, օրինակ, Խաղաղ օվկիանոսի որոշ շրջաններում, մոտենում է երկրի մակերևույթին, մինչև հինգ կիլոմետր խորությամբ:

<sup>29</sup> Որսորդության և լուսնի հին հունական աստվածուի Դիանայի (Արտեմիսի) հոչակավոր տաճարը Եփեսոսում, որ հրդեհվել ու ոչնչացվել է մ. թ. ա. 356 թվականին (ծանոթ. հեղինակի):

<sup>30</sup> Շամիրամ — առասպելական թագուհի, որ իբր Բարելոնի հիմնադիրն է (ծանոթ. հեղինակի):

<sup>31</sup> Արևի հին հունական աստված Հելոսի հսկա արձանը Հռոդոս կղզու նավահանգստի մուտքի մոտ (ծանոթ. հեղինակի):

Այդ երկրորդ հալած թաղանթի հաստությունը ներկայումս հարյուր կիլոմետրից ավելի է և յուրաքանչյուր հարյուր հազար տարում մեծանում է մեկ կիլոմետրով:

Հալած Օլիվինյան գոտում պետք է տարբերել երեք շերտ. երկրի կեղկին ամենամոտ շերտը կազմված է խարամներից, լավայից, որ դուրս են ժայթքում հրաբուխները. միջին շերտը օլիվինն է, երկաթը, նիկելը, այսինքն այն մետաղները, որոնցից բաղկացած են աշնան երեկոներին աստղի ձևով երկրի վրա ընկնող երկնաքարերը և, վերջապես, երրորդ՝ վարի շերտը, ոսկի է, պլատին, ցիրկոնիում, կապար, սնդիկ: Օլիվինյան գոտու այս երեք շերտերը հանգչում են, ինչպես բարձի վրա կհանգչեին, մինչև հեղուկ վիճակը թանձրացած հելիում գազի վրա, որ ստացվում է իբրև ատոմային տրոհման արգասիք:

Եվ, վերջապես, հեղուկ գազի թաղանթի տակ գտնվում է երկրագնդի միջուկը: Սա կարծր է, մետաղյա, նրա ջերմաստիճանը մոտ երկու հարյուր յոթանասուներեք է՝ զրոյից ցածր, այսինքն՝ տիեզերական տարածության ջերմաստիճանին հավասար:

Երկրագնդի միջուկը կազմված է ռադիոակտիվ ծանր մետաղներից: Մեզ հայտնի են դրանցից երկուսը, որ տեղ են գրավում Մենդելեևի արյուսակի վերջում՝ ուրանն ու թորիումը: Բայց դրանք իրենք ևս հիմնական, մինչև օրս բնության մեջ անհայտ գերծանը մետաղների տրոհման արգասիք են:


Ես հայտնաբերեցի դրա հետքերը հրաբխային գագերում: Դա M մետաղն է: Այն տասնմեկ անգամ ծանր է պլատինից: Օժտված է ահավոր ուժի ռադիոակտիվությամբ: Եթե մեկ կիլոգրամ այդ մետաղից հանվի երկրի երես, շրջակայքում մի քանի կիլոմետր շառավիղ վրա ամենայն կենդանի էակ կոչնչանա, նրա էմանացիայով<sup>32</sup> պատված բոլոր առարկաները լույս կարձակեն:

Քանի որ երկրագնդի միջուկի տեսակարար կշիռը կազմում է ընդամենն ութ միավոր (երկաթի տեսակարար կշիռը), որ միշտ հանգեցրել է այն սխալ մտքին, թե իբր միջուկը երկաթից է, և քանի որ չի կարելի ենթադրել, թե M մետաղը երկրագնդի միջուկում գտնվում է մեկ միլիոն մթնոլորտ ձնշման տակ, ծակոտկեն վիճակում, ապա պետք է անել միակ եզրահանգումը.

Երկրագնդի միջուկն իրենից ներկայացնում է M մետաղից մի սնամեջ գունդ կամ ոռում՝ լցված հելիումով, որ անասելի ձնշման հետևանքով գտնվում է բյուրեղային վիճակում:

Տրամատով երկրագունդն այսպիսին է.

<sup>32</sup> Ճառագայթում (ծանոթ հեղինակի):



Երկրագնդի միջուկը կազմող Մ մետառը, անընդմեջ տրոհվելով ու փոխարկվելով ուրիշ թեթև մետաղների, ահավոր քանակությամբ զերմություն է արտազատում: Երկրագնդի միջուկը լավ տաքանում է: Մի քանի միլիարդ տարի հետո երկրագունդը կտաքանա ամբողջովին, կպայի ռումբի նման, կրոցավառվի, կվերածվի գագի գնդի՝ երկրի շուրջը լուսնի գծած ուղեծրին հավասար տրամագծով, կշռա փոքրիկ աստղի նման, իսկ հետո կսկսի սառչել և նորից սեղմվել՝ հասնելով երկրագնդի չափերին: Այնժամ նորից կյանք կառաջանա երկրի վրա, միլիարդավոր տարիներ անց կհայտնվի մարդ, կսկսվի մարդկության բուռն զարգացումը, պայքարը՝ հանուն աշխարհի սոցիալական բարձր կառուցվածքի:

Երկրագունդը կրկին անընդմեջ կսկսի տաքանալ ատոմային տրոհման հետևանքով, որպեսզի նորից բրնձվի փոքրիկ աստղի նման:

Սա երկրային կյանքի շրջապտույտն է: Այդ շրջապտույտները եղել են անթիվ-անհամար անգամներ և անթիվ-անհամար անգամներ կլինեն: Մաս չկա: Կա մշտնշենական նորացում»...

Ահա թե ինչ կարդաց Գարինը Մանցի օրագրում:

## 99

Հանքահորի վերին եզրերին պողպատե զրահապահպանակ էր հազգված: Դժվարահալ պողպատից զանգվածեղ գլաններ էին իշնում հանքահոր՝ խորությանը համապատասխան: Գլանները հասել էին արդեն մի տեղ, ուր զերմությունը հանքահորում բարձրացավ մինչև երեք հարյուր աստիճան: Դա կատարվեց անսպասելի, թոխքով, մակերևույթից հինգ կիլոմետր խորության վրա: Այդ հերթափոխի բանվորներն ու երկու հիպերբոլոիդ ոչնչացան հանքահորի հատակին:

Գարինը դժոնի էր: Նոր գլաններ իջեցնելու և դուրգամելու պատճառով դանդաղում էր աշխատանքը: Հիմա, եթե հանքահորի պատերը շիկացած էին, սառեցնում էին խտացված օդով, և պատերը, սառելով, իրենք էին հենց ամուր զրահ գոյացնում: Դրանց շեղակի վանդակավոր ձողակառույցներ էին դիմիարում:

Հանքահորի տրամագիծը մեծ չէ՝ քսան մետր: Ներսը մի ամբողջ բարդ համակարգ է՝ օդամուղ և բացատար խողովակներ, ամրակապեր, հաղորդալարերի ցանցեր, դյուրայումինե հորաններ, որոնց մեջ աշխատում էին էլեկտրո-հոլովակների շերեփները, հարթակներ էլեատորների հաղորդակի համար և հարթակներ, որոնց վրա հեղուկ օդի մեքենաներն էին ու հիպերբոլիդները:

Ամեն ինչ՝ վերելակներ, փոխադրիչներ, մեքենաներ, շարժման մեջ էր դրվում էլեկտրականությամբ: Հանքահորի կողերին անձավներ էին փորվում մեքենաների պահեստների և բանվորների հանգստյան համար: Գլխավոր հանքահորի բեռնվածքը թեթևացնելու նպատակով Գարինը դրան զուգահեռ անցկացրել էր երկրորդ հորան՝ վեց մետր տրամագծով, որ անձավները միացնում էր օդաճնշական գնդակի արագությամբ շարժվող էլեկտրական վերելակներով:

Աշխատանքների կարևորագույն մասը՝ հորատումը, կատարվում էր հիպերբոլիդների ձառագայթների, հեղուկ օդով սառեցնելու և ապարը էլեատորներով դուրս հանելու համաձայնեցված գործողությամբ: Հատուկ կառուցվածքի տասներկու հիպերբոլիդ, որ էներգիա էին ստանում շամոտինե ածուխների վոլտյան աղեղից, ձառագայթներով թափանց ծակում ու հալում էին ապարը, հեղուկ օդի շիթը սառեցնում էր վայրկենապես, և ապարը, քայլայվելով-տրոհվելով մանրագույն մասերի, ընկնում էր էլեատորների շերեփների մեջ: Այրման արգասիքներն ու գագերը հեռացվում էին օդափոխիչներով:

## 100

Ուկե կղզու հյուսիս-արևելյան մասում պալատը կառուցվեց մադամ Լամոլի ֆանտաստիկ նախագծերով:

Վիթսարի կառույց էր դա ապակուց, պողպատից, մուգ կարմիր քարից ու մարմարից: Հինգ հարյուր արահ ու սենյակ ուներ: Գլխավոր ճակատը ծովահայաց էր, և այնտեղից մարմարե երկու լայն աստիճաններ իջնում հասնում էին ջրին: Ալիքները ողողում էին աստիճանները, փշրվում զարկվելով սանդուղքների երկու կողմերում բարձրացող պատվանդաններին, որոնց վրա, սովորական արձանների կամ թաղարների փոխարեն, հառնում էին բրոնզաձույլ վանդակավոր չորս փոքրիկ աշտարակներ, ծայրերին՝ ոսկեզօծ գնդեր, որոնց մեջ լիցքավորված հիպերբոլիդներ էին — օվկիանոսի կողմից կղզու մատուցները պաշտպանելու համար:

Սանդուղքները բարձրանում էին մինչև բաց պատշգամբը, որտեղից քառակուսի սյուներով ամրապնդված երկու խոր մուտք տանում էին ներս: Պալատի քարե ողջ ճակատը, որ փոքր-ինչ թեք էր՝ եզիպտական կառույցների նման, զուսպ զարդարանքով, բարձր ու նեղ պատուհաններով և հարթ տանիքով, խստաշունչ ու մոայլ երևույթ ուներ: Բայց, փոխարենը, ներքին բակ՝ գետնատարած վարդամարգերին, աղավնիձներին, խոլորձների թփերին, ծաղկուն եղբանիներին, նշենիներին նայող ճակատները պերճաշուր էին, նույնիսկ՝ պշրուն:

Բրոնզե երկու դարպաս տանում էին կղզու խորքը: Այդտեղ տուն-ամրոցն էր: Կողքից, ժայռի վրա վեր էր խոյանում հարյուր հիսուն մետր բարձրությամբ վանդակավոր աշտարակը, որ ստորգետնյա անցքով միանում էր Գարինի ննջարանին: Աշտարակի վերին հարթակում տեղադրված էին հզոր հիպերբոլիդներ: Զրահապատ վերելակը գետնից այստեղ էր հասնում ընդամենը մի քանի վայրկյանում: Բոլոր-բոլորին, նույնիսկ մադամ Լամոլին, մահվան սպառնալիքով արգելված էր մոտենալ աշտարակի ստորոտին անզամ: Դա Ոսկե կղզու առաջին օրենքն էր:

Տան ձախ թևում մադամ Լամոլի, աջ թևում՝ Գարինի ու Ռոլինզի սենյակներն էին: Այստեղ այլևս ուրիշ ոչ ոք չէր ապրում: Տունը նախասահմանված էր այն ժամանակների համար, երբ երկրավորը, իրքի մահկանացուին շնորհված մեծագույն երջանկություն, հրավեր կստանար Ոսկե կղզի գալու և աշխարհի տիրուհու երկնային դեմքը տեսնելու:

Մադամ Լամոլը պատրաստվում էր այդ դերին: Մինչև կոկորդը թաղված էր գործի մեջ: Ստեղծվել էր առավոտյան ոտքի ելնելու, զբոսանքի դուրս գալու, մեծ ու փոքր ընդունելությունների, ճաշելու, ընթրելու, դիմակահանդեսների և զվարձալիքների մի ամբողջ վարվելակարգ: Մադամ Լամոլի դերասանական տեմպերամենտը լայնորեն ծավալվելու ասպարեզ էր գտել: Նա սիրում էր կրկնել, որ ինքը ծնված է համաշխարհային բեմի համար: Վարվելակարգի պահապան էր նշանակված հոչակավոր մի բալետմեյստր՝ ոուս վտարանդի: Նրա հետ պայմանագիր կնքեցին Եվրոպայում, շնորհեցին «Աստվածային Զոյայի» ոսկե շքանշան՝ աղամանդաշար ձերմակ ժապավենով, և արժանացրին անկողնապետի (Chevalier de lit) հին ոուսական բարձր տիտղոսի:

Բացի այդ ներքին՝ պալատական օրենքներից, մադամ Լամոլը, Գարինի հետ մեկտեղ, ստեղծեց «Ոսկերարի պատվիրաններ»՝ պագա մարդկության օրենքները: Բայց դրանք ավելի շուտ ընդհանուր նախագծերն էին և հիմնական գաղափարները, որ հետազոտվ պետք է մշակման ենթարկվեին իրավաբանների ձեռքով: Գարինն անասելի զբաղված էր. մադամ Լամոլն ստիպված էր խնայել ժամանակը: Օր ու գիշեր նրա առանձնասենյակում հերթապահում էին երկու սղագրուիիներ:

Գարինը եկավ ուղիղ հանքահորից՝ տանջահար, կեղտոտ, հողի ու մեքենայի յուղի հոսով տոգորված: Կերավ շտապով, վեր ընկավ, ոտքերը մեկնեց կերպասէ բազմոցին ու պարուրվեց ծխամորդի ծխով (նա վարվելակարգից վեր էր հայտարարված, նրա սովորությունները սրբազն էին և ընդօրինակման ոչ ենթակա): Զոյան գնում-գալիս է գորգի վրա՝ նիհարիկ մատներով քաշքելով մանյակի խոշոր աղամանդները, և ուզում էր Գարինի հետ խոսակցություն բացել: Սակայն Գարինին մի քանի րոպէ մեռյալ հանգիստ էր պետք, որ ուղեղը կարողանար նորից սկսել տենդագին աշխատանքը: Իր ծրագրերում նա ոչ չար էր, ոչ բարի, ոչ դաժան, ոչ գթառատ: Նրան զբաղեցնում ու զբավում էր միայն հնարամտությունը հարցի լուծման մեջ: Այդ «պաղությունը» վրդովում էր Զոյային: Հիմա էլ դրանից նրա մեծ-մեծ աչքերը մթագնեցին, ոյուրագրգիռ մեջքով սարսուտ անցավ, և ցածր, ատելությամբ լի ձայնով ասաց (ոուսերեն, որ սղագրուիիները չհասկանային).

— Դուք եսամոլ եք: Դուք ահավոր մարդ եք, Գարին: Ես զգում եմ, թե ինչպես կուզեի ողջ-ողջ քերթել ձեր կաշին ու նայել, թե ինչպես եք կյանքում առաջին անգամ տանջվում: Մի՞ թե դուք ոչ ոքի չեք ատում, ոչ ոքի չեք սիրում:

— Բացի ձեզնից,— պատասխանեց Գարինը՝ սեպերը բանալով,— բայց ձեր պստիկ գլուխը լցված է խենթ ցնդաբանություններով... Իսկ ես հաշված վայրկյաններ ունեմ: Ես կսպասեմ, մինչև ձեր փառասիրությունը հագենա կուշտ ու կուռ: Բայց, այնուամենայնիվ, մի բանում իրավացի եք դուք, սեր իմ. ես չափից դուրս ակադեմիական եմ: Կյանքի հյութերով չհազեցած զաղափարները ցրիվ են զալիս տարածության մեջ: Կյանքի հյութը կիրքն է: Դրանից դուք ունեք գերհավելում:

Գարինը շեղ նայեց Զոյային. սա կանգնած էր նրա առաջ՝ գունատ, անշարժ:

— Կիրք և արյուն: Հին դեղատումս է: Միայն թե ինչո՞ւ եք ուզում հատկապես ի՞մ կաշին քերթել: Կարելի է քերթել ուրիշ մեկինը: Բացի այդ, ըստ երևույթին, առողջության համար ձեզ շատ է անհրաժեշտ, որ թաշկինակը թրջեք այդ հեղուկի մեջ:

— Ես շատ բան չեմ կարողանում ներել մարդկանց:

— Օրինակ, մազմզոտ մատներով, կարճիկ տղերքի՞ն:

— Այո: Ինչո՞ւ հիշեցիք:

— Ձեք կարողանում ներել ինքներդ ձեզ... Մի հինգ հարյուր ֆրանկով երևի կանչում էին հեռախոսով: Հասկանալի է: Արագ-արագ լցնում էիք մետաքսե գուլպաների ծակերը, թելը կտրում ահա այս աստվածային ատամիկներով, երբ շտապում էիք ռեստորան: Հապա անքուն գիշերները, երբ պայուսակում ընդամենը երկու սու կար, և այն սարսափը, թե ինչ է լինելու վաղը, և այն սարսափը, որ հնարավոր է ավելի ցած ընկնել... Իսկ Ռուխնզի շնական մոռութը որ ամեն ինչ արժի:

Երկարատև քմծիծաղով նայելով նրա աշքերի մեջ, Զոյան ասաց.

— Այս խոսակցությունը նույնպես չեմ մոռանա մինչև մահ. . .

— Աստված իմ, հենց նոր չէ՞ր, որ ինձ մեղադրում էիք ակադեմիականության մեջ...

— Իմ իշխանությունը եղավ՝ կկախեմ ձեզ հիպերբոլիդի աշտարակից...

Գարինն արագ ելավ տեղից, բռնեց Զոյայի արմունկներից, ուժով քաշեց նատեցրեց ծնկներին ու սկսեց համբուրել նրա ետ թեքված դեմքը, սեղմված շուրթերը: Երկու սղագրուիիներն էլ՝ բաց շիկահեր, սարքած խոպոպներով, տիկնիկների նման անտարբեր հայացքներով, շուր եկան:

— Հասկացիր, հիմա՝ թիծադելի՝ կին, քեզ սիրում եմ այսպես, ինչպես կաս... Աշխարհում միակ էակին... Եթե դու հարյուր անգամ չմեռնեիր ոջլոտ վագոններում, եթե քեզ չգնեին փողոցային աղջկա պես, մի՞ թե դու կհասկանայիր մարդկային հանդգնության ողջ

սրությունը... Մի՞թե դու այսպես կձեմեիր գորգերի վրա թագուհու նման... Մի՞թե ես ինք ինձ կղնեի քո ոտքերի տակ...

Զոյան լուս ազատվեց նրա գրկից, ուսերի շարժումով ուղղեց զգեստը, ետ քաշվեց սենյակի կենտրոնը և այնտեղից շարունակեց վայրի հայացքով նայել նրան: Գարինն ասաց.

— Այսպես ուրեմն, ինչի՞ վրա կանգ առանք:

Սղագրուիիներն սկսեցին գրառել նրա մտքերը: Գիշերվա ընթացքում մեքենագրեցին և առավոտյան մատուցեցին մաղամ Լամոլին անկողնում:

Որոշ հարցերում փորձաքննության համար հրավիրում էին Ռոլինգին: Նա ապրում էր հոյակապ, դեռ ոչ լիովին ավարտված հարկաբաժնում: Դուրս էր գալիս միայն սեղան նստելու: Նրա կամքն ու հպարտությունը կոտրված էին: Շատ էր խեղճացել այդ կես տարվա ընթացքում: Վախենում էր Գարինից: Խուսափում էր Զոյայի հետ երես առ երես մնալուց: Ոչ ոք չգիտեր (և չեր հետաքրքրվում), թե ինչ է անում նա ամբողջ օրերով: Ի ծնե չեր սիրում գիրք կարդալ: Օրագիր կարծես թե չեր պահում: Ասում էին, թե իբր տարվել է ծխամորձերի հավաքածու կազմելով: Մի անգամ երեկոյան Զոյան պատուհանից տեսավ, թե ինչպես Ռոլինգը ջրի մոտ, մարմարե սանդուղքի նախավերջին աստիճանին նստած, տիսուր-տրտում նայում էր օվկիանոսին, որտեղից հարյուր միլիոն տարի առաջ դուրս էր եկել իր նախահայրը մարդանման մողեսի կերպարանքով: Դա էր այն ամենը, ինչ մնացել էր քիմիայի մեջ արքայից:

Նրան չեին կոտրի ոչ երեք հարյուր միլիոն դոլարի կորուստը, ոչ գերությունը Ռուկե կղզում, ոչ ել նույնիսկ Զոյայի դավաճանությունը: Քսանինգ տարի առաջ նա վաքս էր ծախել փողոցում: Նա գիտեր, նա սիրում էր պայքարել: Ինչքա՞ն ջանք, տաղանդ ու կամք էր գործադրել՝ մարդկանց ստիպելու համար, որ դեղին կլորակներ վճարեն իրեն՝ Ռոլինգին: Եվրոպական պատերազմը, Եվրոպայի քայլայումն ու սնանկացումը,— ահա ինչպիսի ուժեր հրահրվեցին այն բանի համար, որ ուզին հոսի «Անիլին Ռոլինգ»-ի գանձարկդերը:

Եվ հանկարծ այդ ոսկին՝ ուժի և երջանկության այդ համարժեքը, էլեատորների շերեփներով պիտի դուրս քաշեն կավի նման, ցեսի նման՝ **ուզած քանակությամբ**:

Ահա այստեղ էր, որ գետինը փախչում էր Ռոլինգի ոտքերի տակից,

և նա դադարում էր իրեն բնության արքա՝ «հոմո սապիենս» զգալ: Մնում էր միայն ծխամորձեր հավաքել:

Բայց նա դեռ, Գարինի խստագույն պահանջով, շարունակում էր ամեն օր ռադիոյով իր կամքը թելադրել «Անիլին Ռոլինգ»-ի տնօրեններին: Անորոշ էին նրանց պատասխանները: Պարզ էր, որ տնօրենները չեին հավատում Ռոլինգի ինքնակամ մենակեցությանը Ռուկե կղզում: Նրան հարցնում էին.

«Ի՞նչ ձեռնարկենք, որ դուք վերադառնաք մայր ցամաք»:

Ռուինգը պատասխանում էր.

«Նյարդերիս բուժման կուրսն անցնում է բարեհաջող»: Նրա կարգադրությամբ ստացան ևս հինգ միլիոն ֆունտ ստեղնինգ: Խսկ երկու շաբաթ անց, երբ նա նորից կարգադրեց նույնքան գումար տալ, Ռուինգի չեկը ներկայացնող Գարինի գործակալները ձերբակալվեցին: Դա Ուսկե կղզու վրա մայր ցամաքի հարձակման առաջին ազդանշանն էր: Ութ գծանավերից կազմված տորմիղը, որ հածանավում էր Խոտաղ օվկիանոսում, հարավային լայնության քաներկու աստիճանի և արևմտյան երկայնության հարյուր երեսուն աստիճանի մոտերքում, սպասում էր միայն մարտական հրամանի, որ գրոհի Սրիկաների կղզու վրա:

## 101

Ուսկե կղզու վեց հազար բանվորներն ու ծառայողները հավաքված էին աշխարհի բոլոր կողմերից: Գարինի առաջին օգնականը՝ ինժեներ Չերմակը, որ նահանգապետի պաշտոն էր վարում, բանվորական ուժն ըստ ազգությունների բաշխել էր իրարից փշալարերով բաժանված տասնհինգ տեղամասերի վրա:

Յուրաքանչյուր տեղամասում կառուցված էին ըստ հնարավորության ազգային ճաշակի բարաքներ ու աղոթատներ: Պահածոները, բիսկվիտը, մարմելադը, տակառներով կաղամբը, բրինձը, աղ դրած մեղուզաները, ծովատառեխը, նրբերշիկը և մնացած ուտեստեղենն էլ պատվիրվում էին (ամերիկյան գործարաններին) ազգային պիտակներով:

Ամիսը երկու անգամ տրվում էր ազգային ոգով կարված արտահագուստ և կես տարին մեկ՝ ազգային տոնական զգեստներ. սլավոններին՝ անթե բաձկոն ու սվիտա, չինացիներին՝ խամաթել կոֆտա, գերմանացիներին՝ սերթուկներ ու ցիլինդրներ, իտալացիներին՝ մետաքս սպիտակեղեն և լաքած կոշիկներ, նեգրերին՝ կոկորդիլոսի ատամներով, ուլունքներով զարդարված ագրաշոր և այլն:

Բնակչության աշքում այդ փշե սահմաններն արդարացնելու համար ինժեներ Չերմակը կազմակերպեց պրովոկատորների հաստիքային խումբ՝ տասնհինգ մարդուց: Նրանք ազգամիջյան թշնամանք էին բորբոքում. աշխատանքային օրերին՝ շափակոր, տոն օրերին՝ ընդհուպ մինչև տուրուղմբոցը:

Կղզու ոստիկանությունը, որ կազմված էր նախկին վրանգելյան սպաներից և հազնում էր Զոյայի ուխտի համազգեստ՝ ոսկեթել բանվածքով սպիտակ մահուդե կարծ կուրտկա և վառ դեղին պրկաձիգ տաքատ, կարգ էր պահպանում, թույլ չտալով, որ ազգությունները հասնեին փոխադարձ բնաջնջման:

Բանվորները, մայր ցամաքի բանվորների համեմատ շատ մեծ ոռձիկ էին ստանում: Ումանք փողը պատահած շոգենավով ուղարկում էին տուն, ումանք էլ տալիս էին ի պահ: Ծախսելու տեղ չկար, քանի որ տոն օրերին էին միայն կղզու հարավ-արևելյան ափի խուլ

կիրճում բացվում գինետներն ու զվարձապարտեզը: Այդտեղ էլ գործում էին տասնհինգ հասարակաց տներ՝ կարգավորված դարձյալ ազգային ճաշակով:

Բանվորները գիտեին, թե ինչ նպատակով էր փորվում վիթխարի հանքահորը: Գարինը հայտարարել էր բոլորին, որ վերջնահաշվի ժամանակ յուրաքանչյուրին թույլ կտա հետք վերցնել այնքան ոսկի, որքան կարող է շալակել: Եվ կղզում չկար մի մարդ, որ առանց հուզումի նայեր հողի ընդերքից ապարը օվկիանոս տանող պողպատէ ժապավեններին, չկար մի մարդ, որին չարբեցներ հանքահորի երախից ելնող դեղնավուն ծուխը:

## 102

— Պարոնայք, հասել է ամենատագնապալի պահը մեր աշխատանքում: Ես սպասում էի դրան ու նախապատրաստվում, բայց դա, իհարկե, չի փոքրացնում վտանգը: Մենք պաշարված ենք: Հենց նոր ռադիոյով լուր ստացանք՝ ամերիկյան հածանավը բռնագրավել է հանքային ամրակման երկաթկապերով, պահածոյով ու սառեցրած ոչխարի մսով բեռնված մեր երկու նավերը և հայտարարել, որ դրանք յուրացնում է որպես ռազմավար: Իսկ դա նշանակում է, որ սկսվել է պատերազմը: Ամեն րոպէ կարող է պատերազմ հայտարարվել պաշտոնապես: Իմ առաջնահերթ նպատակներից մեկը պատերազմն է: Բայց այն սկսում է ավելի շուտ, քան պետք է ինձ: Մայր ցամաքում նյարդայնանում են չափից ավելի: Ես կոահում եմ նրանց պլանը՝ վախենում են մեզնից և կաշխատեն սովորական անել մեզ: Տեղեկացնեմ՝ կղզում եղած պարենամթերքը կրավականացնի երկու շաբաթ, չհաշված կենդանի անասունը: Այդ տասնչորս օրվա մեջ մենք պիտի ձեղքենք պաշարումը և պահածո բերենք: Դժվար խնդիր է, բայց՝ իրագործելի: Ասեմ նաև, որ Ռուլինզի չեկը ներկայացրած իմ գործակալները ձերբակալված են: Մեր գանձարկղում փող չկա: Երեք հարյուր հիսուն միլիոն դոլարը ծախսված է մինչև վերջին ցենտը: Մի շաբաթից պիտի ոռնչիկ տանք և եթե վճարենք չեկերով՝ բանվորները խոռվություն կրարձացնեն ու կդադարեցնեն հիպերբոլիդների աշխատանքը: Ուրեմն յոթ օրվա մեջ մենք պարտավոր ենք փող ճարել:

Նիստը տեղի էր ունենում մթնաշաղին, Գարինի՝ դեռ մինչև վերջ չհարդարված առանձնասենյակում: Ներկա էին Չերմակը, ինժեներ Շեֆերը, Զոյան, Շելգան և Ռուլինզը: Գարինը խոսում էր թերև քմծիծաղով, ձոճվելով կրունկների վրա, ձեռքերը գրպանները խոթած, ինչպես սովորաբար անում էր վտանգավոր պահերին, լարված մտածելիս: Զոյան նախազահում էր՝ մուրճիկը ձեռքին: Չերմակը՝ փոքրիկ, նյարդային, բորբոքված աշքերով, հազար, մաքրեց կոկորդն ու ասաց.

— Ոսկե կղզու երկրորդ օրենքն ասում է՝ ոչ ոք չպետք է փորձի թափանցել հիպերբոլիդի կառուցվածքի գաղտնիքի մեջ: Ամեն ոք, ով մատ կղիպցնի թեկուզ հիպերբոլիդի պատյանին, մահապատժի կենթարկվի:

— Այո,— հաստատեց Գարինը,— օրենքն այդ է:

— Ձեր հիշատակած ձեռնարկումները հաջողությամբ ի կատար ածելու համար կպահանջվի առնվազն երեք հիպերբոլիդի համաժամանակյա աշխատանք. մեկը՝ փող ձեռք բերելու, մյուսը՝ պաշարումը ձեղբելու, երրորդը՝ կղզու պաշտպանության համար: Հարկ կլինի, որ դուք, օրենքից շեղվելով, բացառություն անեք ձեր երկու օգնականների համար:

Լոռություն տիրեց: Տղամարդիկ հետևում էին իրենց սիզարների ծխին: Ոոյլինզը կենտրոնացած հոսոտում էր ծխամորձը: Զոյան դեմքը դարձրեց Գարինի կողմը: Գարինն ասաց.

— Լավ: (Թեթևսոլիկ շարժում): Հրապարակեք: Կղզում երկրորդ օրենքից բացառություն է արվում երկու մարդու համար՝ մադամ Լամոլի և . . .

Նա զվարթ թերվեց սեղանի վրայով Շելգայի ուսին.

— Ահա, Շելգան երկրորդ մարդն է, որին վստահում եմ սարքի գաղտնիքը. . .

— Սխալվեցիք, ընկեր,— պատասխանեց Շելգան՝ նրա ձեռքը հեռացնելով ուսից,— հրաժարվում եմ:

— Պատճա՞ռը:

— Պարտավոր չեմ բացատրել: Որ լավ մտածեք՝ ինքներդ գլխի կընկնեք:

— Ես ձեզ հանձնարարում եմ ոչնչացնել ամերիկյան նավատորմիդը:

— Լա՞վ գործ է, բան չունեմ ասելու: Չե՞մ կարող:

— Ինչո՞ւ, գրողը տանի:

— Ոնց թե ինչու. . . Որովհետև սայթաքուն ճանապարհ է. . .

— Տեսեք, Շելգա. . .

— Տեսնում եմ. . .

Գարինի մորուքը վեր ցցվեց, ատամները փայլեցին: Բայց նա զսպեց իրեն: Հարցրեց ցածրածայն.

— Հո մտքներումդ ուրիշ բան չկա՞:

— Իմ զիծը պարզ ու շիտակ է, Պյոտր Պետրովիչ: Ես թաքցնելու բան չունեմ:

Այս կարճ խոսակցությունն ընթացավ ոուսերեն: Ոչ ոք, բացի Զոյայից, ոչինչ չհասկացավ: Շելգան նորից անցավ թուղթը խազմզելուն: Գարինն ասաց.

— Ուրեմն այսպես, հիպերբոլիդների գծով օգնական եմ նշանակում մի մարդու՝ մադամ Լամոլին: Եթե համաձայն եք, տիկին, «Արիզոնան» պատրաստ է նավարկելու, առավոտյան դուրս կգաք օվկիանոս...

- Ես ի՞նչ պիտի անեմ օվկիանոսում,— հարցրեց Զոյան:
- Պիտի կողոպտեք Տրանսպասիֆիկ ջրուղիների վրա հանդիպող բոլոր նավերը: Մի շաբաթից մենք պետք է ոռջիկ տանք բանվորներին:

## 103

Հյուսիսամերիկյան տորմիդի Էսկադրայի հրամանատարական գծանավից ժամը քաններեքին մի օտար մարմին նկատվեց Հարավային Խաչի համաստեղության վերևում:

Լուսարձակների՝ զիսաստղի պոչի պես երկնագույն ճառագայթախրձերը, աստղագարդ երկինքը խառնելով, նետվեցին դեպի օտար մարմինն ու կառչեցին նրանից: Մարմինը լուսավորվեց: Հարյուրավոր հեռադիտակներ պարզ տեսան դիրիժաֆի մետաղէ գոնդոլը, պատուտակների թափանցիկ շրջաններն ու կողին՝ Դ և Գ տառերը:

Վառվեցին լուսագրանշանները նավերի վրա: Հրամանատարական նավից պոկվեցին չորս հիդրոպլան և, մոնչալով, սկսեցին շեշտակի բարձրանալ դեպի աստղերը: Էսկադրան, արագությունը մեծացնելով, ընթացավ շարապյուն կազմած:

Ինքնաթիռների աղմուկը դարձավ ավելի ու ավելի հստակ, ավելի ու ավելի թույլ: Եվ հանկարծ դիրիժաֆը, որի կողմն էին գալարապտույտ վեր խոյանում դրանք, չքացավ տեսադաշտից: Շատերն իրենց հեռադիտակները մաքրեցին թաշկինակով: Դիրիժաֆը կորավ գիշերային երկնքում, որքան էլ լուսարձակները շոշափում-փնտրում էին:

Բայց ահա լսվեց գնդացրի թույլ տկտկոց. գտան: Տկտկոցն ընդհատվեց: Երկնքում, գլխիվայր պտույտ-պտույտ գալով, ուղղաբերձ ցած էր պանում փայլվիլուն մի «Ճանձ»: Հեռադիտակով նայողներն ախ քաշեցին. ընկնողը հիդրոպլան էր, որ ինչ-որ տեղ շրմփաց սև ալիքների մեջ: Ի՞նչ էր պատահել:

Եվ նորից՝ տըկ-տըկ-տըկ-տըկ, երկնքում կրակեցին գնդացիրները, հետո դրանց ձայնն էլ ընդհատվեց նույն ձևով, և մեկը մյուսի ետևից երեք ինքնաթիռն էլ գլուխկոնծի տալով անցան լուսարձակների շողերի միջով ու շրմփացին օվկիանոսը: Սկսեցին պարել հրամանատարական նավի լուսագրանշանները: Մինչև հորիզոն լույսեր թարթեցին՝ ի՞նչ պատահեց:

Հետո բոլորը շատ մոտիկ տեսան քամուն հակառակ, շարապյան դեմ եկող ծվեն-ծվեն մի սև ամպ. դիրիժաֆն էր ցածրանում՝ պարուրված ծխաքողով: Հրամանատարական նավի վրայից ազդանշան տվին՝ «Զգուշացիր, զազ է: Զգուշացիր, զազ է»: Որոտացին զենիթային հրանորները: Եվ իսկույն էլ տախտակամածի, կամքակների, զրահապատ աշտարակների վրա գազառումբեր ընկան ու պայթեցին:

Առաջինը զոհվեց ադմիրալը՝ քանութամյա գեղեցիկ մի տղամարդ, որ հպարտությունից հակագագ չէր հագել. ձեռքը տարավ կոկորդին և մեջքի վրա փուլեց ուռած, կապտած դեմքով: Մի քանի վայրկյանում թունավորվեցին տախտակամածի վրա եղած բոլոր

մարդիկ. հակազագները սակավագոր դուրս եկան: Հրամանատարական նավի վրա գրոհել էին անծանոթ զազով:

Հրամանատարությունն անցավ վիցե-ադմիրալին: Հածանավերը բռնեցին աջ հալսը<sup>33</sup> և զենիթային կրակ բացեցին: Գիշերը սասանվեց երեք համազարկից: Հրանոթներից դուրս ժայթքած երեք փայլակ արյունեցին օվկիանոսը: Պողպատե դևերի երեք պարս, բզզալով կույր գլխիկներով, թռան սատանան գիտե թե ուր և, պայթելով, հրավառեցին աստղազարդ երկինքը:

Համազարկերից հետո հածանավերից պոկվեցին վեց հիդրոպլան, բոլորի անձնակազմերն էլ՝ հակազագերով: Ակներև էր, որ առաջին չորս հիդրոպլանները կործանվել էին դիմիտրի թունավոր ծխածածկույթի միջով անցնելիս: Հիմա հարցը վերաբերում էր ամերիկյան նավատորմի պատվին: Նավերի վրա մարեցին լույսերը: Մնացին միայն աստղերը: Խավարում լսվում էր, թե ինչպես էին ալիքները բախվում պողպատե նավակողերին և բարձր երկնքում երգում ինքնաթիռները:

Վերջապէ՝ ս. . . Տրկ-տրկ-տրկ,— Ծիր Կաթնի արծաթավուն մշուշից հասավ գնդացիրների տկտկոցք. . . Հետո այնտեղ կարծես շշեր խցանահանեցին: Սկսվել էր հարձակումը նոնակներով: Զենիթում գորշ սևաթույր լույսով բռնվեց քուլա-քուլա բարձրացող ծխի մի ամպ, որի միջից, բութ քիթը ներք թեքած, դուրս սահեց մետաղե սիգարը: Կատարին հրե լեզվակներ էին պարում: Դիրիժաֆլ շեղակի ցած ալացավ՝ ետևից լուսավոր պոչ թռղնելով և, ամբողջովին բոցով պարուրված, ընկավ ու կորավ հորիզոնից այն կողմ: Կես ժամ հետո հիդրոպլաններից մեկը հաղորդեց, որ իշել է վառվող դիրիժաֆլի մոտ և գնդացրով ոչնչացրել այն ամենը, ինչ կենդանի է մնացած եղել նրա մեջ ու շուրջը:

Հաղթանակը թանկ նստեց ամերիկյան էսկադրային՝ կործանվել էին չորս ինքնաթիռներ իրենց ողջ անձնակազմով: Գազից թունավորվելով մեռել էին ութ սպաներ, այդ թվում՝ էսկադրայի ադմիրալը, և հարյուր երեսուներկու նավաստի: Նման կորուստներով հանդերձ, ամենավիրավորականն այն էր, որ հզոր հրետանի ունեցող հոյակապ գծային հածանավերն ընկել էին անթև պինգվինների վիճակի մեջ. հակառակորդը վերևից ինչ-որ անհայտ զազով խփել էր նրանց իր ուզածի պես: Անհրաժեշտ էր ուսանց վերցնել, ցույց տալ ծովային հրետանու իսկական ուժը:

Այդ ոգով կոնտր-ադմիրալը հենց նույն գիշերը զեկույց ուղարկեց Վաշինգտոն ծովային ճակատամարտի բոլոր իրադարձությունների մասին: Առաջարկեց ոմբակոծել Մրիկաների կողին:

Մեկ օրից եկավ ծովային մինիստրի պատասխանը՝ շարժվել դեպի նշված կղզին և այն օվկիանոսի ալիքներին հավասարեցնել:

<sup>33</sup> Նավընթաց՝ քամու համեմատ, (Ճ. թ.):

— Հը, ի՞նչ կասեք,— մարտականորեն հարցրեց Գարինը՝ գրասեղանին դնելով  
ռադիոնորունիշի ականջնոցները: (Նիստը տեղի էր ունենում նույն կազմով, չկար միայն  
մադամ Լամոլը):— Հը, ի՞նչ կասեք, ողորմած պարոններ... Կարող եմ շնորհավորել...  
Պաշտում այլևս գոյություն չունի... Ամերիկյան նավատորմիդին հրաման է տրված  
ոմբակոծել կղզին:

Ռուլինգը, ցնցվելով, ելավ թիկնաթոռից, ծխամորձն ընկավ բերանից, բաց մանուշակագույն  
շրթունքները ծովովեցին, կարծես ինչ-որ բան էր ուզում ասել, բայց ոչ մի կերպ չէր  
կարողանում:

— Ի՞նչ պատահեց, ծերուկ,— հարցրեց Գարինը:— Ձեզ այդքան հուզո՞ւմ է հարազատ  
նավատորմիդի մոտենալը: Ել չէ՞ք համբերում, ուզում եք վայրկյան առաջ կախե՞լ ինձ  
կայմից: Թէ՞ ոմբակոծությունից վախեցաք... Հիմար բան կլինի, իհարկե, ձեզ համար, որ  
կտոր-կտոր ցաքուցրիվ զաք ամերիկյան արկից: Թէ՞ ձեր խիդճը տանջեց, գրողը տանի...  
Չէ՞ որ, ինչքան չլինի, կովում ենք ձեր փողով:

Գարինը ծիծառեց, շուրջ եկավ ծերունուց: Ռուլինգը, այդպես էլ ոչինչ չասելով, նստեց տեղը,  
հողագույն դեմքը ծածկեց դողացող ձեռքերով:

— Ոչ, պարոնայք... Առանց ոիսկի կարելի է ընդամենը դոլլարից երեք ցենտ շահույթ  
ստանալ: Մենք հիմա անսաելի մեծ ոիսկի ենք գնում: Մեր հետախուզական դիրիժարլ  
հիանալի կատարեց իր խնդիրը: Խնդրում եմ հոտնկայս հարգել տասներկու զոհվածների,  
այդ թվում՝ դիրիժարի հրամանատար Ալեքսանդր Իվանովիչ Վոլշինի հիշատակը:  
Դիրիժարլ կարողացավ մանրամասն հաղորդել Էսկադրայի կազմի մասին: Նորագույն  
տիպի ութ գծային հածանավ՝ զինված չորսական զրահապատ աշտարակներով,  
յուրաքանչյուրում՝ երեքական հրանոթ: Մարտից հետո նրանց պիտի որ մնացած լինի  
առնվազն տասներկու հիդրոպլան: Դրանից բացի՝ թեթև հածանավեր, Էսկադրոնային  
ականակիրներ և սուզանավեր: Եթե ընդունենք, որ ամեն մի արկի հարվածը հավասար է  
յոթանասունհինգ միլիոն կիլոգրամ կենդանի ուժի, ապա ամբողջ Էսկադրայի համազարկը  
կղզուն հավասար կլինի մոտավորապես մեկ միլիարդ կիլոգրամ կենդանի ուժի:

— Ավելի՝ լավ, ավելի՝ լավ,— մրմնջաց Ռուլինգը վերջապես:

— Հերիք է նվնվաք, պապիկ, ամոթ է... Հա, քիչ էր մնում մոռանայի, պարոնայք, մենք պետք  
է շնորհակալություն հայտնենք միստր Ռուլինգին այն բանի համար, որ նա սիրով մեզ  
տրամադրեց նորագույն և դեռ գաղտնի մի հայտնագործություն՝ «Սև խաչ» կոչվող գաղը:  
Դրա շնորհիվ մեր օդանավորդները ջուրը գցեցին չորս հիդրոպլան և շարքից դուրս բերին  
հրամանատարական նավը...

— Ոչ, ես սիրով չտրամադրեցի ձեզ «Սև խաչ», միստր Գարին, ձղավեց Ռուլինգը  
խոպածայն:— Ասրանակը վրաս պահած ինձ ստիպեցիք կարգադրել, որ «Սև խաչ»  
բալոններ ուղարկեն կղզի:

Նազարաց, որ շնչահեղձ է լինում և, օրորվելով, դուրս գնաց: Գարինն սկսեց մանրամասն շարադրել կղզու պաշտպանության պլանը: Էսկադրայի հարձակումը հնարավոր էր երեք օրից:

## 105

«Արիզոնան» ծովահենային դրոշ բարձրացրեց:

Սա ամենին չի նշանակում, թե նավի կայմին ծածանվում էր ծովային ավազակների սև, վրան գանգ ու ոսկորներ նկարված ռոմանտիկական դրոշը: Այժմ թերևս սուլեմայի շնորհի վրա են միայն պատկերվում նման սարսափելի բաներ:

Ըստ էռության, ոչ մի դրոշ էլ բարձրացված չէր «Արիզոնայի» վրա: Հիպերբոլիդներ կրող երկու վանդակավոր աշտարակների շնորհիվ այդ նավն իր տեսքով առանց այն

Էլ խիստ տարբերվում էր աշխարհի մյուս բոլոր նավերից: Հրամանատարը Յանսենն էր՝ մարտամ Լամոլին ենթակա:

Զոյայի հոյակապ առանձնաբաժինը՝ ննջարանը, լոգարանը, հարդարասենյակը, ընդունարանը, կողպված-փակված էր: Զոյան մնում էր վերևում, նավապետի խցիկում, Յանսենի հետ: Նախկին պերճանքը՝ մետաքսե կապույտ ծածկերը, գորգերը, բարձերը, թիկնաթոռները — ամեն ինչ հավաքված էր: Դեռ Մարսելից բերված անձնակազմը զինված էր կոլտերով ու կարճափող հրացաններով: Անձնակազմին հայտնված էր նավարկության նպատակը և սահմանված էր ավարապարզ յուրաքանչյուր բռնագրավաված նավի համար:

Զրոսանավի բոլոր ազատ տեղերը զբաղեցված էին բենզինի և խմելու ջրի բիդոններով: Կողքից փշող քամու տակ, բոլոր առազատները պարզած, ողու-ողոյի զարմանահրաշ շարժիչների լրիվ ծանրաբեռնվածությամբ «Արիզոնան» թռչում էր ալբատրոսի նման՝ մրրկածուփ օվկիանոսի մի ալիքի կատարից մյուսը:

## 106

— Քամին հասնում է յոթ բալլի, նավապետ:

— Իջեցնել մարսելները:

— Լսում եմ, նավապետ:

— Ժամը մեկ փոխել հերթապահությունը: Դիտապահակ՝ զրոտի վրա:

— Լսում եմ, նավապետ:

— Լույսեր նկատելուն պես արթնացնել ինձ:

Յանսենն աշքերը կկոցած նայեց օվկիանոսի մութ անապատին: Լուսինը դեռ դուրս չէր եկել: Աստղերը շղարշված էին մշուշով: Հյուսիս-արևմուտք նավարկելու այդ հինգ օրվա ընթացքում Յանսենը շարունակ խանդավառության թեթև դող էր զգում ամբողջ մարմնում: Ինչ կա որ, ծովահենությամբ են ապրել իր նախնիները: Նա գլխի շարժումով հրաժեշտ տվեց օգնականին և մտավ խցիկ:

Երբ մտավ՝ նրա մկանները ծանոթ ցնցումն զգացին. ասես ուժասպառող թույն հոսեց մեջները: Նա անշարժ կանգնեց առաստաղի լամպի կաթնավուն կիսագնդի տակ: Նավապետի ցածրիկ, հարմարավետ, կաշվով ու ողորկ փայտով հարդարված խցիկը՝ միայնակ ծովայինի այդ խստապարզ կացարանը, հագեցած էր երիտասարդ կնոջ ներկայությամբ:

Ամենից առաջ՝ այստեղ օծանելիքի բույր կար: Անե՛ ծք քեզ, չար սատանա... Ծովահենների պարագլուխն այնպես էր օծվում անուշահոտություններով, որ մեռած մարդու գլուխն էլ կպտտվեր: Աթոռի թիկնակին անփութորեն զցված էին ֆլանելե շրջազգեստն ու ոսկեթույր սվիտերը: Հատակին, ուղղակի գորգի վրա, գուլպաներն էին՝ կապիչներով. մի գուլպան ասես դեռ պահպանում էր ոտքի ձևը:

Մադամ Լամոլը քնած էր նավապետի մահճակալին: (Յանսենը բոլոր այդ հինգ օրերին պարկում էր կաշեպատ փոքրիկ բազմոցի վրա): Զոյան քնած էր կողքի դարձած: Շուրթերը կիսաբաց էին: Ծովահողմից թխացած դեմքը թվում էր խաղաղ, անմեղ: Հոլանի ձեռքը զցել էր գլխի ետևը: Չընա՛ դավագակ...

Յանսենի համար ծանր փորձություն էր մադամ Լամոլի այդ ռազմաշունչ որոշումը՝ մնալ նրա հետ նավապետի խցիկում: Մարտական տեսանկյունից ճիշտ վճիռ էր դա. գնում էին ելուզակության, գուցե և մեռնելու: Համենայն դեպս, եթե նրանց բռնեին, երկուսին էլ կկախեին կողք կողքի, նույն կայմից: Դա չէր վախեցնում Յանսենին, նույնիսկ ոգևորում էր: Նա մադամ Լամոլի՝ Ուսկե կղզու թագուհու, հպատակն էր: Նա սիրում էր մադամ Լամոլին:

Ինչ էլ ասես-չասես՝ սերը մութ բան է: Յանսենը տեսել էր թէ՛ նավահանգստային պանդոկներում քարշ եկող աղջիկների, թէ՛ շոգենավերով ձանապարհորդող փառահետ լեղիների, որոնք ձանձրություն ու հետաքրքրասիրությունից ընկնում էին նրա ծով գիրկը: Ումանց մոռացել էր՝ դատարկ մի գրքի դատարկ էջի պես, ումանց էլ հաճելի էր հիշել խաղաղ հերթապահությունների ժամանակ, հանգիստ ետուառաջ անելով կամրջակի վրա, տաք աստղերի ներքո:

Այդպես էլ Նեապոլում, երբ Յանսենը ծխարանում նստած սպասում էր մադամ Լամոլի զանգին, դեռ ինչ-որ բան հիշեցնում էր նախկին արկածները: Բայց այն, ինչ պիտի

լիներ այդ ժամանակ՝ ընթրիքից ու պարերից հետո, չեղավ: Անցել էր կես տարի, և հիմա Յանսենը վայրենություն էր համարում նույնիսկ մտարերելը. մի՞ թէ ահա այս ձեռքով ինքը երբիցե, սթափ ուղեղով, բռնել է պարող մարտամ Լամոլի մեջքը: Մի՞ թէ ընդամենը մի բանի բռպե, գլանակի կեսը ծխել-վերջացնելու չափ ժամանակ էր իրեն բաժանում անհավատալի երջանկությունից: Հիմա, նավի մյուս ծայրից լսելով նրա ձայնը, Յանսենը

դանդաղ ցնցվում էր, ասես ներսում հուշիկ ամպրոպ էր պայթում: Երբ տախտակամածին, հյուսածո թիկնաթոռի մեջ տեսնում էր Ոսկե կղզու թագուհուն՝ երկնքի ու ջրի եզրագծում ածող հայացքով, նրա ներսում ինչ-որ տեղ, բանականության սահմանից այն կողմ, ամեն ինչ երգում էր ու անձկում՝ նվիրվածությունից, սիրուց:

Թերևս այդ ամենի պատճառը վիկինգներն էին, ծովային ավազակները, Յանսենի նախնիները, որոնք հայրենի ափից լողում էին շատ ու շատ հեռու, ծովեր կտրում կարմիր նավերով, որ բարձր խել ունեին և աքաղաղի կատարի պես նավաքիթ, կողերից կախված վահաններ, հացենափայտ կայմին՝ ուղիղ առազատ: Նման կայմի մոտ էլ Յանսեն-նախահայրը երգել էր կապույտ ալիքների, ամպրոպաբեր ամպերի, շիկահեր կույսի՝ այն հեռու-հեռավոր աղջկա մասին, որ սպասում է ծովափին՝ աչքը հեռուներին. կանցնեն տարիները, և հայացքը նրա, ինչպես ծովը կապույտ, ինչպես ամպերն ամպրոպաբեր: Ահա թե ինչ հին-հին ժամանակներից էր երազկոտությունը եկել հասել ու համակել խեղճ Յանսենին:

Կանգնած կաշվի և օծանելիքի բույրերով տողորված խցիկում, նա հուսահատությամբ ու հիացմունքով նայում էր սիրելի դեմքին, իր սիրույն: Վախենում էր, որ հանկարծ կարթնանա: Վամացուկ մոտեցավ բազմոցին, պառկեց: Փակեց աչքերը: Ծփում էին ալիքները՝ զարկվելով նավակողին: Ծփում էր օվկիանոսը: Նախահայրը երգում էր իր հինավորց երգը չքնաղ կույսի մասին: Յանսենը ձեռքերը դրեց զլսի տակ, և քունն ու երջանկությունը ծածկեցին նրան:

## 107

— Նավապե՞տ... (Դոան թակոց): Նավապե՞տ:

— Յանսեն,— մադամ Լամոլի տագնապալի ձայնը ասեղի նման անցավ նրա ուղեղի միջով: Նավապետ Յանսենը վեր թռավ, ապշահար աչքերով դուրս լողաց երազներից: Մադամ Լամոլն շտապով ոտքերին էր քաշում գուլպաները: Շապիկը ցած էր սահել՝ մերկացնելով ուսը:

— Տագնապ է,— ասաց մադամ Լամոլը,— իսկ դուք քնած եք...

Նորից դուռը թակեցին, և՝ օգնականի ձայնը.

— Նավապե՞տ, լույսեր ձախ կողմից:

Յանսենը բացեց դուռը: Թաց քամին ներխուժեց նրա թոքերը: Նա հազար, դուրս եկավ կամրջակի վրա: Ակնակիր զիշեր էր: Զախ կողմում, հեռվում, ալիքների վրա օրորվում էին լույսի երկու բժեր:

Աչքը չկտրելով լույսերից, Յանսենը կրծքի վրա ափլիքեց, գտավ սուլիչը: Սուլեց: Բոցմանները պատասխանեցին: Յանսենը հրամայեց պարզորոշ:

— Ավրա՛լ: Բոլորին վեր կանչել: Իջեցնե՛ լ առազաստները:

Հնչեցին սուլոցներ, հրամանի կանչեր: Բաքից, յուտից դուրս թափվեցին նավաստիները: Նրանք կատվի նման մազլցեցին կայմերի վրա, ճոճվեցին առազաստափայտերից կախված: Ճլվատացին ճախարակները: Գլուխը վեր քաշած, բոցմանը նզովում էր ինչ սրբություն կար աշխարհիս երեսին: Առազաստներն ընկան: Յանսենը հրամայեց.

— Ղեկը դեպի ա՛ջ: Առա՛ջ լրիվ ընթացքով: Հանգցնե՛ լ լույսերը:

Հիմա ընթանալով միայն շարժիչների օգնությամբ, «Արիզոնան» կտրուկ շրջադարձ կատարեց: Աջ նավակողից վեր խոյացավ ալիքի կատարն ու թափալվեց տախտակամածի վրայով: Լույսերը մարեցին: Լիակատար մթության մեջ դողաց նավի կորպուսը՝ առավելագույն արագություն զարգացնելով:

Նշմարված լուսաբժերն սկսեցին արագորեն մեծանալ ու բարձրանալ հորիզոնի ետևից: Շուտով միին ուրվապատկերներով երևաց նաև ուժեղ ծուխ արձակող նավը, որ երկծխնելով մարդատար շոգենավ էր:

Մադամ Լամոլը դուրս եկավ նավապետի կամրջակի վրա: Գլխին գործած թասակ էր՝ փոքրիկ փուփուլով, վզին՝ խավոտ շարֆ, որ ծածանվում էր թիկունքին: Յանսենը հեռադիտակը տվեց նրան: Մադամ Լամոլը մոտեցրեց աչքերին, բայց քանի որ նավը սաստիկ ճոճվում էր, ստիպված ձեռքը հեռադիտակի հետ դրեց Յանսենի ուսին: Յանսենը լսում էր, թե ինչպես է բարախում նրա սիրտը թավ ավիտերի տակ:

— Հարձակվե՛նք,— ասաց Զոյան և շատ մոտիկից, հաստատուն նայեց նրա աչքերի մեջ:

Մի հիսուն մետրի վրա շոգենավից նկատեցին «Արիզոնան»: Ղեկանիվի կամրջակի վրայից սկսեցին լապտեր թափահարել, հետո ցածր ոռնաց շշակը: «Արիզոնան» առանց լույսերի, չպատասխանելով ազդանշաններին, ուղիղ անկյունով պլանում էր դեպի լուսավորված շոգենավը: Հետո դանդաղեցրեց ընթացքը, սկսեց պտույտ տալ՝ աշխատելով խուսափել ընդհարումից...

Մեկ շաբաթ անց «Նյու Յորք-Հերալդ» թոլքակիցն ահա թե ինչպես նկարագրեց այդ անօրինակ իրողությունը.

«... Հինգից քառորդ պակաս էր, երբ մեզ արթնացրեց շշակի տագնապակի ոռնոցը: Ուղևորները թափվեցին տախտակամած: Խցիկների լույսերից հետո զիշերն ասես սև թանաք լիներ: Մենք իրարանցում նկատեցինք նավապետի կամրջակի վրա և հեռադիտակներով սկսեցինք պրատել խավարում: Ոչ ոք կարգին չզիտեր, թե ինչ է պատահել: Մեր նավը դանդաղեցրեց ընթացքը: Եվ հանկարծ տեսանք... մեզ վրա էր սլանում արտասովոր մի նավ՝ նեղ ու երկար, երեք բարձր կայմերով, ուրվապատկերով արագընթաց կլիպեր հիշեցնող, խելին և ցոռուկին՝ վանդակավոր տարօրինակ աշտարականեր: Մեկ կատակով գոչեց, թե դա «Թռչող հոլանդացին» է... Մի բոպե բոլորը

խուճապի մեջ ընկան: Խորհրդավոր նավը կանգ առավ մեզնից մի հարյուր մետր հեռու, և այնտեղից մի զիլ ձայն մեզաֆոնով բղավեց անզլերեն.

«Կանգնեցնե՛ լ մեքենաները: Հանգցնե՛ լ հնոցները»:

Մեր նավապետը պատասխանեց.

«Հրամանը կատարելուց առաջ կուզեինք իմանալ, թե ով է հրամայողը»:

Նավից բղավեցին.

«Հրամայում է Ոսկե կղզու թագուհին»:

Շշմեցինք՝ ի՞նչ է դա, կատա՞կ: Պիեռ Հարրիի նոր լկտիությո՞ւնը:

Նավապետը պատասխանեց.

«Թագուհուն առաջարկում եմ ազատ նավախցիկ և Ճոխ մի ընթրիք՝ թե քաղցած է նա»:

Սրանք «Թշվառ Հարրի» ֆորստրոտի տոռերից էին: Տախտակամածի վրա միահամուռ քրքիջ բարձրացավ: Եվ հենց այդ պահին խորհրդավոր նավի առջևի աշտարակից ճառագայթ հայտնվեց: Գործելու ասեղի պես բարակ, կուրացուցիչ սպիտակ էր այդ ճառագայթը և աշտարակի գմբեթից ձգվում էր առանց հաստանալու: Այդ պահին ոչ մեկի մտքով չէր անցնում, թե մեր առջև ամենաահավոր զենքն էր, որ երբնէ ստեղծել է մարդկությունը: Մենք ուրախ տրամադրության մեջ էինք:

Ճառագայթը շրջան գծեց օդում և ընկավ մեր շոգենավի քթամասի վրա: Սոսկալի թշշոց լսվեց, և հատվող պողպատի կանաչավուն բոց բարձրացավ: Վայրի ճիշ արձակեց մի նավաստի, որ կանգնած էր նավախելի վերին տախտակամածին: Շոգենավի վերջրյա քթամասը պոկվեց ընկավ ծովը: Ճառագայթը բարձրացավ, դողաց վերևում և, նորից իջնելով, հորիզոնական գծով անցավ մեր գլխավերևով: Դորոյունով տախտակամածի վրա տապալվեցին զույգ կայմերի կատարները: Ուղևորները խուճապահար նետվեցին դեպի սանրությները: Նավապետը վիրավորվեց փայտի բեկորից:

Մնացած հայտնի է: Ծովահենները մոտեցան նավակով, կարճափող հրացաններով զինված, բարձրացան շոգենավ ու փող պահանջեցին: Նրանք տարան տասը միլիոն դոլլար՝ այն ամենը, ինչ կար փոստային առաքումներում և ուղևորների գրպաններում:

Երբ նավակն ավարով վերադարձավ ծովահենային նավի մոտ, վերջինիս տախտակամածը վառ լուսավորվեց: Մենք տեսանք, թե ինչպես վանդակավոր աշտարակից իջավ գործած թասակով բարձրահասակ, նիհարավուն մի կին, սրբնթաց ելավ նավապետի կամրջակի վրա և բերանին դրեց մեզաֆոնը: Թափով ետ թեքվելով, նա ձայնեց մեզ.

«Կարող եք ազատ շարունակել ձեր ճանապարհը»:

Ծովահենների նավը պտույտ արեց և արտասովոր արագությամբ հեռացավ, կորավ հորիզոնի ետևը»:

## 108

Վերջին օրերի դեպքերը՝ «Պ. Գ.» դիրիժարլի հարձակումն ամերիկյան էսկադրայի վրա և ոմբակոծելու հրամանը նավատորմիղին, խոռվվել էին Ռուս կղզու ողջ բնակչությանը:

Գրասենյակ անընդհատ դիմումներ էին ստացվում վերջնահաշվի պահանջով։ Խնայդրամարկղից վերցնում էին ավանդները։ Բանվորները խորհրդակցում էին փշալարերի ետևում, ուշադրություն չդարձնելով դեղնա-սպիտակ զվարովիականների վրա, որ դեմքի մոայ ու վճռական արտահայտությամբ գնում-գալիս էին ոստիկանական արահետներով։ Ավանը նման էր հանգիստը վրդոված մեղվափեթակի։ Զուր էին ոռնում պղնձյա շեփորներն ու դմրդմբում թուրքական թմբուկները ձորակում, հասարակաց տների առաջ։ Զվարձապարտեզն ու բարերը թափուր էին։ Զուր էին տասնհինգ պյունկատորներն անմարդկային ջանքեր գործադրում վատ տրամադրությունը ազգամիջյան տուրուդմբոցի միջոցով լիցքաթափելու համար։ Այդ օրերին ոչ ոք չէր ուզում ոչ մեկի քիթումոութք ջարդել միայն այն պատճառով, որ այդ մյուսն ապրում էր մի ուրիշ լարափակոցի ետևում։

Ինժեներ Չերմակը կղզիով մեկ կառավարական հաղորդագրություն փակցրեց։ Հայտարարվում էր պատերազմական դրություն, արգելվում էին հավաքույթներն ու միտինգները, մինչև հատուկ կարգադրությունը ոչ ոք իրավունք չուներ վերջնահաշվի պահանջել։ Բնակչությունը նախազգուշացկում էր կառավարությանը քննադատելուց։ Աշխատանքները հանքահորում պետք է շարունակվեին անընդհատ, օր ու գիշեր։ «Ովեր այս օրերին կրծքով կպաշտպանեն Գարինին, — ասվում էր հաղորդագրության մեջ, — նրանց հերիաթային հարստություն է սպասում։ Փոքրոգիներին մենք ինքներս դուրս կշարտենք կղզուց։ Հիշեք, մենք պայքարում ենք նրանց դեմ, ովքեր մեզ խանգարում են աշխատել։»

Չնայած այս հաղորդագրության վճռական ոգուն, առավոտը, այն օրվա նախօրյակին, երբ սպասվում էր նավատորմիղի հարձակումը, հանքահորի բանվորները հայտարարեցին, թե իրենք կդադարեցնեն հիպերբոլոիդների և հեղուկ օղի մեքենաների աշխատանքը, եթե մինչև կեսօր ոռմիկ չստանան (աշխատավարձի օրն էր դա), և եթե դարձյալ մինչև կեսօր ամերիկյան կառավարությանը հայտարարություն չուղարկվի խաղաղասիրության և ամեն տեսակ ռազմական գործողություն դադարեցնելու մասին։

Հեղուկ օղի մեքենաները կանգնեցնելը՝ կնշանակեր պայթեցնել հանքահորը, գուցելու հրահեղուկ մազմայի ժայթքում առաջ բերել։ Սպառնալիքը շատ էր մեծ։ Ինժեներ Չերմակը, տաքանալով, սպառնաց գնդակահարությամբ։ Հանքահորի մոտ սպիտակ-դեղիններ կենտրոնացվեցին։ Այնժամ հարյուր բանվոր իշան հանքահոր, կողմնային անձավները և հեռախոսով հաղորդեցին գրասենյակ։

«Մեզ ուրիշ ելք չեն թողնում, բացի մեռնելուց, ժամը 4-ին հօդս կցնդենք կղզու հետ»:

Այնուամենայնիվ, ժամկետը երկարաձգվում էր չորս ժամով: Ինժեներ Չերմակը հանքահորի շրջանից հեռացրեց զվարդիան և մոտոցիկլետով սլացավ պալատ: Ներս մտավ այն պահին, երբ Գարինն ու Շելգան խոսում էին իրար հետ: Երկուսն էլ՝ կարմրատակած դեմքերով ու զզզված մազերով. Գարինը, տեսնելով Չերմակին, վեր թռավ տեղից դիվուտածի պես:

— Ումի՞ց եք սովորել վարչական այդ ապուշությունները:

— Բայց . . .

— Լոե՛լ . . . Դուք պաշտոնազրկված եք: Գնացեք լաբորատորիա, գրողի ծոցը կամ ուր կուզեք. . . Դուք է՛շ եք . . .

Գարինը թափով բացեց դուռն ու հրելով դուրս զցեց Չերմակին: Վերադարձավ սեղանի մոտ, որի անկյունին նստած էր Շելգան՝ սիզարն ատամների արանքում:

— Հասել է ժամը, Շելգա, ես դա կանխատեսել էի. միայն դո՛ք կարող եք տիրապետել շարժմանը, փրկել գործը... Այն, ինչ սկսվել է կղզում, ավելի վտանգավոր է, քան ամերիկյան տասը նավատորմիդ:

— Այո-ո՛,— ասաց Շելգան,— վաղուց պիտի հասկացած լինեիք...

— Գրողի ծոցը ձեր քաղքագիտությունը... Ես ձեզ նշանակում եմ կղզու նահանգապետ՝ արտակարգ լիազորություններով... Հապա փորձեք հրաժարվել,— շտապով, հասնելով ամենաբարձր նոտաներին, ճշաց Գարինը, նետվեց դեպի սեղանն ու դուրս քաշեց ատրճանակը:— Կա՛րձ, եթե ոչ՝ կրակում եմ... Այո՞՛, թե ոչ:

— Ոչ— ասաց Շելգան՝ ծուռ-ծուռ նայելով ատրճանակին:

Գարինը կրակեց: Շելգան սիզար բռնած ձեռքը տարավ քունքին.

— Շան կեղտ, տակա՛նք...

— Ըստ՝, ուրեմն համաձա՞յն եք:

— Ցած դրեք այդ բանը:

— Լավ: (Գարինն ատրճանակը նետեց արկղի մեջ):

— Ի՞նչ եք ուզում: Որ բանվորները չպայթեցնե՞ն հանքահորը: Լավ: Չեն պայթեցնի: Բայց՝ մի պայման...

— Նախօրոր համաձայն եմ:

- Ես կղզում ինչպես մասնավոր անձ եմ եղել, այնպես էլ կմնամ: Ես ձեր ծառան կամ վարձկանը չեմ: Սա՝ առաջին: Հենց այսօր վերացնել ազգային բոլոր սահմանները, այնպես, որ ոչ մի լարափակոց չմնա: Սա՝ երկրորդ... .
- Համաձայն եմ:
- Ձեր պլովոկատորների շայկան...
- Ես պլովոկատոր չունեմ,— ասաց Գարինն արագ:
- Ստում եք...
- Լավ, ստում եմ: Ի՞նչ անեմ դրանց: Թափեմ ջուրը խեղդէ՞մ:
- Հենց այս գիշեր:
- Կլինի: Հաշվեք, որ խեղդված են: (Գարինը մատիտով արագ նշում արեց ծոցատերում):
- Վերջինը,— ասաց Շելգան,— բացարձակապես չմիջամտել բանվորների հետ իմ հարաբերություններին:
- Շատ չեղա՞վ... (Շելգան կնճռոտվեց, ուզում էր իջնել սեղանից, Գարինը բռնեց նրա ձեռքը): Համաձայն եմ: Ժամանակ կզա, մեկ է, ես ձեր կողերը կշարդեմ: Է՞լ ինչ:
- Շելգան, աչքերը կկոցած, շարունակեց ծխել, այնպես որ ծխաքողի ետևից այդ պահին չէր երևում նրա հողմահար, կարծ շիկավուն բեղիկներով ու վեր ցցված քթով դեմքը՝ խորամանկ արտահայտությամբ: Զնզաց հեռախոսը: Գարինը վերցրեց լսափողը:
- Ես եմ: Ի՞նչ: Ռադիո՞:
- Գարինը նետեց լսափողն ու հազար ականջնոցները: Ակսեց լսել՝ եղունգը կրծոտելով:
- Բերանը ծովեց քմծիծաղից:
- Կարող եք հանգստացնել բանվորներին: Վաղը ոռմիկ կտանք: Մադամ Լամոլը տասը միլիոն դոլլար է ձեռք զցել: Հենց հիմա զբոսանքի դիրիժարլը կուղարկեմ փողը բերելու: «Արիզոնան» հյուսիս-արևմուտքում ընդամենը չորս հարյուր մղոնի վրա է:
- Էհ, որ այդպես է՝ հեշտանում է գործը,— ասաց Շելգան և, ձեռքերը գրպանները խոթելով, դուրս գնաց:

Առաստաղի փոկերից կախվելով այնպես, որ ոտքերը չդիպչեն հատակին, աչքերը կկոցելով և մի վայրկյան շունչը պահելով, Շելգան տապալվեց ցած՝ վերելակի պողպատե տուփի մեջ:

Զուգահեռ հորան պաղեցումն անհամաշափ էր, և անձավից անձավ ստիպված էին անցնել տաք գոտիների միջով. փրկում էր անկման արագությունը միայն:

Ութ կիլոմետր խորության վրա, նայելով ցուցիչի կարմիր սլաքին, Շելգան միացրեց ռեռստատներն ու կանգնեցրեց վերելակը: Համար երեսունյոթ անձավն էր: Դրանից երեք հարյուր մետր խոր, հանքահորի հատակին զվարում էին հիպերբոլիդներն ու թնդում էին սեղմված օդով, սառեցվող շիկացած ապարի կարճ, անընդմեջ պայթյունները:

Զրնգում, խշրտում էին ապարը երկրի մակերես հանող էլեատորների շերեփները:

Համար երեսունյոթ անձավը, գլխավոր հանքահորի կողմնային բոլոր անձավների նման, երկաթե դուրգամած խորանարդի ընդերք էր ներկայացնում: Այդ խորանարդի պատերից այն կողմ գոլորշիանում էր հեղուկ օդը՝ պաղեցնելով գրանիտի զանգվածեղ շերտը: Եռացող մազմայի գրտին, ըստ երևույթին, խոր չէր, ավելի մոտ էր, քան ենթադրվում էր եկեղեցամագնիսական և սեյսմոգրաֆիկ հետախուզությունների արդյունքներով: Գրանիտը շիկացած էր մինչև հինգ հարյուր աստիճան: Եթե հեղուկ օդի պաղեցնող սարքերը կանգ առնեին թեկուց մի քանի րոպե, ամեն մի կենդանի բան անմիջապես մոխիր կդառնար:

Երկաթե խորանարդի ներսում մահճակալներ, նստարաններ, ջրով լի դույլեր կային: Չորսժամյա հերթափոխի ընթացքում բանվորները հասնում էին այնպիսի վիճակի, որ նրանց կիսակենդան պարկեցնում էին մահճակալներին՝ նախքան դուրս կրերեին երկրի երես: Դժժում էին հովհարիչներն ու օդամուղ խողովակները: Դուրգամած առաստաղի տակ կախված լամպը ցայտուն լուսավորում էր քանի մոայլ, հիվանդու, ուռուցվորած դեմքեր: Ցոթանասունինգ բանվորներ էլ վերին անձավներում էին, որոնք իրար հետ կապ էին պահպանում հեռախոսով:

Շելգան դուրս եկավ վերելակից: Բանվորներից մի քանիսը գլուխները դարձրին նրա կողմը, բայց չբարեեցին, մնացին լուս: Ըստ երևույթին, հանքահորը պայթեցնելու նրանց վճիռը հաստատ էր:

— Թարգմանի՛ չ: Ես ռուսերեն եմ խոսելու, — ասաց Շելգան՝ նստելով սեղանի մոտ և արմունկով ետ քշելով մարմելադի, անզիական աղի բանկաները, կիսատ խմած զինու բաժակները: (Կղզու կառավարությունը հանքափորներին շոայլորեն ապահովում էր նման բաներով):

Սեղանին մոտեցավ մորուքի ստուի տակ կապտավուն-գունատ դեմքով, կորաքամակ, չորչորուկ մի հրեա:

— Ես կարող եմ թարգմանել:

Շելգան սկսեց խոսել . . .

— Գարինն ու նրա ձեռնարկը ոչ այլ ինչ են, քան կապիտալիստական գիտակցության ծայրակետը: Գարինից այն կողմ գնալու տեղ չկա. նրա նպատակն է ուղեղի վիրահատման միջոցով մարդկության աշխատավոր մասին բռնի կերպով անասուններ դարձնել, առանձնացնել ընտրյալներին՝ «կյանքի արքաներին», դադարեցնել քաղաքակրթության

ընթացքը: Բուրժուաները դեռ չեն հասկանում Գարինին, ասենք, ինքն էլ չի շտապում, որ հասկանան իրեն: Նրան համարում են բանդիտ ու զավթիչ: Բայց բուրժուաներն ի վերջո կհասկանան, որ իմպերիալիզմը հենվում է Գարինի սիստեմի վրա... Ընկերներ, մենք պետք է կանխենք ամենավտանգավոր բանը, այն, որ Գարինը լեզու զգունի նրանց հետ: Այդ ժամանակ ձեր վիճակը շատ կծանրանա, ընկերներ: Իսկ դուք ահա այս տուփի մեջ որոշել եք մեռնել այն բանի համար, որ Գարինը զգտովի ամերիկյան կառավարության հետ: Հիմա ի՞նչ կարելի է անել, մտածեք: Հաղթի Գարինը՝ վատ է, հաղթեն կապիտալիստները՝ էլի վատ է: Գարինը նրանց հետ համաձայնության գա՝ վատ է ու վատ: Դուք դեռ զգիտեք ձեր գինը, ընկերներ, ուժը ձեր կողմն է: Ու մի ամսից, երբ էլսատորների շերեփները ոսկին դուրս կթափեն գետնի երես, այդ բանը ձեռնուու կլինի ոչ թե Գարինին, այլ ձեզ, այն գործին, որ մենք պիտի կատարենք աշխարհում: Եթե դուք հավատում եք ինձ,— բայց ինչպես՝ մինչև վե՛րջ, մոլեզի՛ն,— այդ ժամանակ՝ ես ձեզ առաջնորդ... Ընտրեք միաձայն... Իսկ եթե չեք հավատում... .

Շելգան լոեց, հերթով նայեց անքթիթ իրեն ուղղված բանվորների մոայլ դեմքերին, ամուր քորեց ծոճրակը... .

— Եթե չեք հավատում՝ էլի կիսուեմ:

Սեղանին մոտեցավ մինչև գոտկատեղը մերկ, մրի մեջ կորած, թիկնեղ մի պատանի: Կուանալով, նայեց Շելգային կապույտ աշքերով: Վեր քաշեց շալվարը, շուր եկավ ընկերների կողմը.

— Ես հավատում եմ:

— Հավատում ենք,— ասացին մյուսները: Գրանիտի բազմավերստ զանգվածի միջով հեռախոսները սփոնցին. «Հավատո՞ւմ ենք, հավատո՞ւմ ենք»:

— Լավ, որ հավատում եք՝ ամեն ինչ կարգին է,— ասաց Շելգան:— Հիմա՝ ըստ կետերի, իրիկնադեմին կվերացնեն ազգային սահմանները: Վաղը ոռձիկ կստանաք: Գվարդիականները թող պալատը պաշտպանեն, մենք առանց նրանց յոլա կզնանք: Տասնինզ պրովոկատորներին ջրախեղդ կանենք՝ սա ես դրեցի որպես առաջին պայման: Հիմա խնդիրը՝ հնարավորին չափ շուտ ձերել հասնել ոսկուն: Ճի՞շտ է, ընկերներ:

Գիշերը հյուսիս-արևմուտքում լուսարձակների հածող լույս երևաց: Նավահանգստում տագնապով ոռնացին շշակները: Լուսադեմին, երբ ծովը դեռ ստվերում էր, հայտնվեցին մոտեցող էսկադրայի առաջին համբավաբերները. կղզու վրա, բարձրում ինքնաթիռներ էին պտտվում՝ փայլվելով արշալույսի վարդագույն ցոլքերի մեջ:

Գվարդիականները կարաբիններով կրակ բացեցին ինքնաթիռների վրա, բայց շուտով ձեռք քաշեցին: Խումբ-խումբ հավաքվեցին կղզու բնակիչները: Հանքահորից առաջվա պես ծխաքուլաներ էին բարձրանում: Նավերի վրա զարկեցին ծովային ժամացույցները: Խոշոր

տրանսպորտը կանգնած էր բեռնաթափման. ցամաքային ամբարձիչն ափ էր նետում խաչաձև կապված հակեր:

Օվկիանոսը խաղաղ էր վաղորդյան մշուշի մեջ: Երկնքում երգում էին օդային պտուտակները:

Ծագեց արևը միզամած գնդով: Եվ այդ ժամանակ բոլորը հորիզոնում ծուխ տեսան, որ ձգվում էր հարավ-արևելք երկար ու հարթ ամպի նման: Մոտեցող մահն էր դա:

Կողու վրա ամեն ինչ լրեց, կարծես մայր ցամաքից բերված թռչուններն անզամ դադարեցին երգել: Մի տեղից մի խումբ մարդիկ վազեցին դեպի նավահանգստում կանգնած նավակները, և սրանք, մարդկանցով լեփ-լեցուն, շտապով դուրս եկան բաց ծով: Սակայն նավակները քիչ էին, կղզին կարծես ափի մեջ լիներ, պահվելու տեղ չկար: Եվ բնակիչները կանգնել մնացել էին քար կտրած, անխոս: Ումանք պառկել էին՝ երեսներն ավազի մեջ թաղած:

Պալատում շարժում չեր նկատվում: Բրոնզե դարպասները փակ էին: Կարմրավուն թեք պատերի երկայնքով գնում-զալիս էին զվարդիականները՝ կարաբինները թիկունքներին զցած, լաներից, բարձր գլխարկներով, ոսկեթել բանվածքով զարդարված սպիտակ կուրտկաներով: Մի կողմում վեր էր հառնում մեծ հիպերբոլիդի աշտարակը՝ ժանյակի նման ցանցկեն-թափանցիկ: Բարձրացող մշուշաքողն աչքից ծածկում էր աշտարակի կատարը: Բայց քչերն էին հավատում պաշտպանության այդ միջոցին. հորիզոնի գորշ-սևաթույր ամպը չափից դուրս նյութեղեն էր և սպառնալի:

Շատերը վախով շուր եկան հանքահորի կողմը: Այնտեղ ոռնում էր երրորդ հերթափոխի շակը: Ժամանակ գտան աշխատելու. . . Անիծվի՝ այր ոսկին. . . Հետո ապարանքի տանիքի ժամացույցը զարկեց ութը: Եվ այդ ժամանակ օվկիանոսի վրա թնդյուն տարածվեց՝ ծանր, հետզհետեւ ուժգնացող ամպրոպային որոտի նման: Էսկադրայի առաջին համազարկն էր: Սպասումի վայրկյաններն ասես ձգվեցին-ծավալվեցին տարածության մեջ, թռչող եկող արկերի աղմուկի մեջ:

Երբ հնչեց էսկադրայի համազարկը, Ռոլինզը կանգնած էր սանդղավանդակում, դեպի ջուրն իջնող սանդուղքի վերևում: Նա բերանից հանեց ծխամորձն ու սկսեց ականջ դնել մոտեցող արկերի ոռնոցին. մելինիտով և թարախապալարային զազով լցված իննառունից ոչ պակաս պողպատէ դևեր սուրում էին դեպի կղզին, ուղիղ Ռոլինզի ուղեղի մեջ: Ոռնում էին հաղթական: Միրտն ասես կլչեր կարող դիմանալ այդ ձայնին: Ռոլինզը ետ-ետ գնաց դեպի գրանիտե պատի մեջ արված դուռը: (Նա վաղուց իր համար ապաստարան էր սարքել ներքնահարկում, որ պատսպարվեր ոմբակոծության դեպքում): Արկերը պայթեցին ծովում՝ ջրի այուներ վեր հանելով: Որոտացին ջրում: Տեղ չհասան:

Այնժամ Ռոլինգն սկսեց նայել վանդակավոր թափանցիկ աշտարակի կատարին: Այնտեղ նախորդ օրվանից նստած էր Գարինը: Աշտարակի կլոր զմբեթը պտտվում էր, այդ բանը նկատելի էր միջօրեական ձեղքերի շարժումից: Ռոլինգը դրեց պենսնեն և, գլուխը վեր տնկած, սկսեց դիտել ուշադիր: Գմբեթը պտտվում էր խիստ արագ՝ ազ ու ձախ: Աշ շարժվելիս երևում էր, թե միջօրեական ձեղքով ինչպես էր վեր ու վար անում հիպերբոլիդի փայլուն փողաբերանը:

Ամենաահավորն այն աճապարանքն էր, որով Գարինը գործում էր սարքով: Եվ՝ լռություն: Ոչ մի ձայն կղզու վրա Բայց ահա օվկիանոսից լայնատարած ու խուլ ձայն հասավ, ասես երկնքում պղպջակ պայթեց: Ռոլինգն ուղղեց պենսնեն քրտինքից խոնավացած քթի վրա և հիմա էլ սկսեց նայել էսկադրայի կողմը: Այնտեղ սնկած ծավալվում էին սպիտակադեղնավուն ծխի երեք կուտակներ: Դրանցից ձախ փքվեցին զգուզ քուլաներ, վառ արնագունեցին, բարձրացան, և աճեց, ծավալվեց չորրորդ սունկը: Լսվեց չորրորդ ամպրոպագոս որոտը:

Պենսնեն անընդհատ ցած էր ընկնում Ռոլինգի քթից: Բայց նա արիաբար կանգնել ու նայում էր, թե ինչպես էին հորիզոնից այն կողմ աճում-ավելանում ծխի սունկերը, թե ինչպես ամերիկյան էսկադրայի բոլոր ութ զծանավերը հօդս ցնդեցին:

Նորից լռություն տիրեց կղզու վրա, ծովում ու երկնքում: Թափանցիկ աշտարակում վերից վար առկայծեց վերելակը: Շրխկոցով բացվեց տան դուռը, և Գարինը, ֆոքստրոտի եղանակը ծուռ ու շիտակ շվշպացնելով, դուրս վազեց սանդղափուլ: Նրա դեմքը հոգնատանց էր, գունատ, մազերը՝ ցից-ցից:

Չնկատելով Ռոլինգին, նա սկսեց հանվել: Սանդուղքով իջավ մինչև ջուրը, վրայից զցեց սաղմոնի գույնի վարտիքը, մետաքս շապիկը: Նայելով ծովին, ուր դեռ հալչում էր ծուխը խորտակված էսկադրայի տեղում, քորեց թևատակերը: Նրա մարմինը կնոջ մարմնի պես սպիտակ էր, գիրուկ, նրա մերկության մեջ ինչ-որ ամոթալի ու զզվելի բան կար:

Նա ոտքով փորձեց ջրի տաքությունը, կնկա պես պազեց ալիքին ընդառաջ, լող տվեց, բայց իսկովն էլ դուրս եկավ ու այդ ժամանակ միայն տեսավ Ռոլինգին:

— Ա-ա՝, — ձգեց, — դուք է՞լ եք երևի պատրաստվում լողանալ, հը՞ : Սառն է, գրողը տանի:

Նա հանկարծ ծիծաղեց կերկերահնչուն մանր ծիծաղով,

վերցրեց շորերը և, թափահարելով վարտիքն ու առանց ծածկվելու, իր ողջ ամոթանքով գնաց դեպի տուն: Ռոլինգն այդպիսի նվաստացում դեռ չէր ապրել: Ատելությունից, նողկանքից սիրտը սառույց կտրեց: Նա անզեն էր, անպաշտպան: Թուլության այդ պահին նա զզաց, թե ինչպես իր վրա ծանրացավ անցյալը՝ ծախսած ուժերի, կյանքում առաջին տեղի համար եզան համառությամբ մղած պայքարի ողջ բեռը... Եվ այդ բոլորը՝ այն բանի համար, որ իր կողքով հաղթականորեն քայլի անցնի այս մերկանդամ լիրբը՝ իրեն հաղթողը:

Բացելով բրոնզե վիթխարի դուռը, Գարինը ետ նայեց.

— Գնանք նախաձաշելու, քեզի: Մի շիշ շամպայն կոնծենք:

## 112

Ռոլինգի հետագա վարվելակերպի մեջ ամենատարօրինակն այն էր, որ նա հնազանդորեն գնաց նախաձաշելու: Աեղանի մոտ, նրանից և Գարինից բացի, նստած էր միայն մադամ Լամոլը՝ գունատ ու լուր ապրած հուզումից: Երբ Զոյան բաժակը մոտեցրեց շուրթերին, ապակին գնդնգաց՝ դիպչելով նրա հավասար, շլացուցիչ ճերմակ ատամներին:

Ռոլինգը, ասես վախենալով, որ կարող է հանկարծ կորցնել հավասարակշռությունը, լարված նայում էր մի կետի՝ շշի ուսկեզույն խցանին. սա արված էր հենց այն նգովյալ սարքի ձևով, որի միջոցով մի քանի բովենամ ոչնչացվեցին Ռոլինգի նախկին բոլոր պատկերացումներն ուժի և հզորության վերաբերյալ:

Գարինը, որ չսանրված թաց մազերով, առանց օձիքի, ճմոթված ու այրվելուց ծակված պիջակով, շաղակրատում էր ինչ-որ դատարկ բաների մասին՝ ոստրե ծամելով, մի շնչով մի քանի բաժակ գինի խմեց.

— Այ հիմա եմ միայն հասկանում, թե ինչքան էի սովածացել:

— Դուք լավ աշխատեցիք, բարեկամս,— ասաց Զոյան կամացուկ:

— Այո: Ճիշտն ասած, մի պահ վախեցա, երբ հորիզոնը ծածկվեց թնդանոթների ծխով. . . Նրանք, այնուամենայնիվ, ինձ կանխեցին. . . Սատանի՝ ծնունդներ. . . Մի կարելտով հեռու նշան բռնեին՝ այս տնից, ի՞նչ տուն, ամբողջ կղզուց հետք էլ չէր մնա. . .

Նա մի բաժակ էլ գինի խմեց ու թեև ասել էր, որ քաղցած է, արմունկով դեն հրեց ուտելիք բերող լիվրեով սպասավորին:

— Հը, քեզի,— նա անսպասելիորեն դարձավ Ռոլինգի կողմն ու, արդեն առանց ծիծաղի, սեւուն նայեց նրան,— ժամանակն է, որ մենք լրջորեն խոսենք: Թե՝ սպասում եք ավելի ցնցող էֆեկտների:

Ռոլինգն առանց չխկոցի պատառաքաղն ու օմարի համար գործածվող արծաթե կեռիկը դրեց ափսեի վրա, աչքերը խոնարհեց.

— Խոսեք, ես լսում եմ ձեզ:

— Վաղուց պիտի այդպես անեիք. . . Ես ձեզ արդեն երկու անգամ համագործակցություն եմ առաջարկել: Հուսով եմ՝ հիշում եք: Ի միջի այլոց, ես ձեզ չեմ մեղադրում, դուք մտածող չեք, դուք գոմշացուլերի ցեղի ներկայացուցիչ եք: Հիմա մի անգամ էլ եմ առաջարկում: Զարմանո՞ւմ եք: Բացատրեմ: Ես կազմակերպիչ եմ: Ես վերակառուցում եմ ձեր ծանրաշարժ, հիմարագույն նախապաշարումներով լի կապիտալիստական ամբողջ հասարակարգը: Հասկանալի՞ է: Եթե ես չանեմ այդ բանը, կոմունիստները ձեզ կուտեն ոսով-զլսով ու դեռ կճեպ-մճեպն էլ դուրս կթքն հաձույքով: Կոմունիզմը կյանքումս միակ

բանն է, որ ատում եմ... Ինչո՞ւ: Որովհետև նա ոչնչացնում է ինձ՝ Պյոտր Գարինիս, ոչնչացնում է իմ ուղեղում ծնվող հղացումների ամբողջ տիեզերքը... Դուք իրավունք ունեք հարցնելու, թե իմ ինչի՞ն եք պետք դուք՝ Ռոլինզը, երբ իմ ոտքերի տակ անսպառ ուկի կա:

— Այո, հարցնում եմ,— ասաց Ռոլինզը խոպաձայն:

— Մի բաժակ կայենյան պղպեղով ջին խմեք, քեոի, դա կաշխուժացնի ձեր երևակայությունը: Մի՞ թե գեր մի վայրկյան ձեր մտքով կարող էր անցնել, թե ես մտադիր եմ ուկին աղք դարձնել: Այո, իրոք, ես մի քանի տաք օք կստեղծեմ մարդկության համար: Ես մարդկանց կհասցնեմ ահավոր անդունդի եզրին, այնպիսի վիճակի, երբ նրանք իրենց ձեռքում կունենան կիլոգրամը հինգ ցենտ արժեցող ոսկու հսկայական կտորներ:

Ռոլինզը հանկարծ բարձրացրեց գլուխը, խամրած աչքերը փայլեցին շահելավարի, բերանը բացվեց ծուռ քմծիծաղով...

— Հա՞,— կռավեց:

— Այ՝ հա՛... Հասկաց՞ք վերջապես... Եվ այդ ժամանակ, մեծագույն խուճապի այդ օրերին մենք, այսինքն՝ ես, դուք և ելի մի երեք հարյուր նման գոմշացուլեր, կամ համաշխարհային սրիկաներ, կամ ֆինանսային արքաներ,— անունն ինքներդ ընտրեք ձեր ձաշակով,— կրոնենք աշխարհի կոկորդից... Մենք կգնենք բոլոր ձեռնարկությունները, բոլոր գործարանները, բոլոր երկաթուղիները, օդային ու ծովային ամբողջ նավատորմիդը... Այն ամենը, ինչ պետք է ու պետք կգա մեզ՝ մե՛րը կլինի: Այնժամ մենք կպայթեցնենք այս կղզին հանքահորի հետ ու կհայտարարենք, որ ոսկու համաշխարհային պաշարը սահմանափակ է, ոսկին մեր ձեռքին է և ոսկուն վերադարձված է իր նախկին նշանակությունը՝ արժեքի միասնական չափ լինելու պայմանը:

Ռոլինզը լսում էր՝ ետ ընկած աթոռի թիկնակին, ոսկեատամ նրա բերանը բացվել էր շնաձկան բերանի նման, երեսը կաս-կարմիր էր կտրել:

Այդպես նստել էր նա անշարժ՝ մանրիկ աչքերը պսպղացնելով, Մադամ Լամոլը նույնիսկ մի վայրկյան մտածեց՝ ծերուկը հանկարծ կաթված չստանա:

— Հա՞,— նորից կռավեց Ռոլինզը:— Համարձակ զաղափար է... Կարող եք հույս ունենալ, որ հաջողության կհասնեք... Բայց դուք հաշվի չեք առնում զանազան գործադուների, խոռվությունների վտանգը...

— Դա հաշվի եմ առնում ամենից առաջ,— ասաց Գարինը կտրուկ:— Որպես սկիզբ մենք կկառուցենք համակենտրոնացման հսկա ճամբարներ: Մեր վարչակարգից դժգոհ բոլոր մարդկանց կզցենք լարափակոցի ետևը: Հետո գործի կղնենք ուղեղի ամորձատման օրենքը: Այսպես ուրեմն, սիրելի բարեկամս, ինձ ընտրո՞ւմ եք առաջնորդ... Հա՛... (Գարինն անսպասելիորեն աչքով արեց, և դա համարյա սարսափելի էր): Ռոլինզն իշեցրեց ճակատը, խոժողովոց: Իրեն հարց էին տալիս, և ինքը պարտավոր էր մտածել:

- Դուք ինձ ստիպո՞ւմ եք այդ բանն անել, միստր Գարին:
- Հապա ի՞նչ էիք կարծում, քեզի: Ծնկաշոք ինդրո՞ւմ եմ, ինչ է: Ստիպո՞ւմ եմ, եթե ինքներդ դեռ չեք հասկացել, որ վաղուց արդեն սպասում եք ինձ՝ որպես փրկչի:
- Շատ լավ,— ասաց Ռոլինգն ատամների արանքից և սեղանի վրայով Գարինին մեկնեց մանուշակագույն, խորդուբորդ ձեռքը:
- Շատ լավ,— կրկնեց Գարինը:— Դեպքերը զարգանում են սրբնթաց: Հարկավոր է, որ մայր ցամաքում նախապատրաստվի երեք հարյուր արքաների կարծիքը: Դուք նրանց նամակ կգրեք իմ կղզին գնդակոծելու համար նավատորմի ուղարկած կառավարության ողջ խելազրկության մասին: Դուք կաշխատեք նրանց նախապատրաստել «ոսկե խուճապին»: (Նա ճթացրեց մատները, մոտ թռավ լիվրեով սպասավորը): Էլի շամպայն լցրու: Այսպես ուրեմն, Ռոլինգ, խմենք պատմական մեծ հեղաշրջման կենացը... Այո, եղբայրս, Մուսոլինին իմ դեմ եղած-չեղածը լակոտի մեկն է...

Պյոտր Գարինը համաձայնության եկավ Ռոլինգի հետ... Պատմությունը խթանվեց, պատմությունը սլացավ քառատրոփ՝ ոսկե պայտերը զնզգնզացնելով հիմարների գանգերին:

Խաղաղօվկիանոսյան էսկադրայի կործանման թողած տպավորությունն Ամերիկայում ու Եվրոպայում ցնցող էր, աննախադեպ: Հյուսիսամերիկյան Միացյալ Նահանգներն այնպիսի հարված ստացան, որ արձագանքեց աշխարհով մեկ: Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի կառավարություններն անսպասելիորեն անառողջ նյարդայնությամբ ոգեշնչվեցին, մտածեցին՝ իսկ գուցե այս տարի (իսկ գուցե և ընդիհանրապես) հարկ չի լինի տոկոսներ վճարել ոսկուց ուռճացած Ամերիկային: «Պարզվեց, որ հսկայի ոտքերը կավից են,— գրեցին թերթերը,— այնքան էլ հեշտ չէ նվաճել աշխարհը»...

Բացի այդ, «Արիզոնայի» ավագակային արկածների վերաբերյալ լուրերն անկանոնություն մտցրին ծովային առևտրի մեջ: Շոգենավերի տերերը հրաժարվում էին բեռնելուց, նավապետները վախենում էին անցնել օվկիանոսով, ապահովագրական ընկերությունները բարձրացրին գները, բանկային փոխադրություններում իսկական քառ էր, մուրիհակների բողոքարկումներ ծայր առան, սնանկացան մի քանի առևտրական տներ, ձապոնիան շտապեց ամերիկյան գաղութային շուկաները խցկել իր ցածրարժեք ու վատորակ ապրանքները:

Ողբալի ծովամարտը շատ թանկ նստեց Ամերիկայի վրա: Դրամական մեծ վնասից բացի, տուժեց նրա վարկը կամ, ինչպես ասում էին, «ազգային հպարտությունը»: Արդյունաբերողները պահանջում էին մորֆիլիզացնել ծովային և օդային բոլոր նավատորմիղները, պատերազմ սկսել ու ամեն զնով հասցնել հաղթական ավարտի: Ամերիկյան լրագրերն սպառնում էին «չհանել սգո ժապավենները» (թերթերի անուններն առնված էին սև շրջանակի մեջ. դա շատերի վրա մեծ տպավորություն էր թողնում, թեև տպագրական տեսակետից թանկ չէր), մինչև Պիեռ Հարրին երկաթե վանդակի մեջ չբերվեր

Նյու Յորք և մահապատժի չենթարկվեր էլեկտրական աթոռի վրա: Քաղաքներում, բնակչության լայն զանգվածներում սահմոկեցուցիչ լուրեր էին պտտվում Գարինի գործակալների մասին, որոնք իբր զինված էին զրպանի ինֆրակարմիր ճառագայթներով: Անհայտ անձնավորությունների զանակոծման և կարձատների խումանափառ դեպքեր եղան փողոցներում, կինոթատրոններում, ռեստորաններում: Վաշինգտոնի կառավարությունը որոտալի խոսքեր էր ասում, բայց ըստ էության սարսափելի շվարած էր: Ամբողջ էսկադրայի նավերի մեջ Ուսկե կղզու մոտ կործանումից փրկված միակ նավը՝ մի ականակիր, ռազմական մինհստրին տեղեկություն բերեց ծովամարտի մասին՝ այնպիսի ահավոր մանրամասնություններ, որ վախեցան հրապարակել դրանք: Տասնյոթ դյույմանոց հրանոթներն անզոր էին Սրիկաների կղզու ճառագայթող աշտարակի դեմ:

Այս բոլոր անախորժությունները Միացյալ Նահանգների կառավարությանն ստիպեցին կոնֆերանս հրավիրել Վաշինգտոնում: Կոնֆերանսի նշանաբանն էր՝ «Բոլոր մարդիկ զավակներն են մեկ աստծո, մտածենք մարդկության խաղաղ բարգավաճման մասին»:

Երբ հայտարարվեց կոնֆերանսի օրը, թերթերի խմբագրությունները, ամբողջ աշխարհի ռադիոկայանները ծանուցում ստացան, որ բացմանն անձամբ ներկա է լինելու ինքը՝ ինժեներ Գարինը:

## 114

Գարինը, Զերմակն ու ինժեներ Շեֆերը վերելակով իջան գլխավոր հանքահորի խորքերը: Փայլարե պատուհանների ետևից անցնում էին խողովակների, հաղորդալարերի, ամրակապերի, էլեատորների, հարթակների, երկաթե դրների անվերջանալի շարքեր:

Ետևում մնացին երկրի կեղևի տասնութ գոտիներ՝ տասնութ շերտեր, որոնցով, ինչպես ծառաբնի օղակների միջոցով, կարելի էր որոշել մոլորակի կյանքի շրջանները: Օրգանական կյանքն սկսվում էր «կրակից» հաշված ջորրորդ շերտից, որ պալեոզոյան օվկիանոսն էր: Նրա կուսական ջրերը հագեցած էին մեզ անհայտ կենսական ուժով: Այդ ջրերը պարունակում էին ռադիոակտիվ աղեր ու մեծ քանակությամբ ածխաթթու: «Անմահական ջուրն» էր դա:

Հաջորդ՝ մեզողյան դարաշրջանի արշալուսին նրա ջրերից դուրս էին եկել վիթխարի հրեշներ: Միլիոնավոր տարիներ դրանք ցնցել են երկիրը ազահության և տոփանքի մոնցուններով: Ավելի վեր հանքահորի շերտերում գտել էին թոշունների, իսկ դրանից ել վեր՝ կաթնասունների մնացորդներ: Իսկ այդտեղից արդեն մոտենում էր սառցային շրջանը՝ մարդկության խստաշունչ ձյունալիր առավոտը:

Վերելակի խցիկն իջնում էր վերջին՝ տասներկուերորդ շերտի միջով, որ գոյացել էր ժայթքումների հրից ու քառսից: Դա երկրի հնագույն պատմական շրջանի շերտն էր՝ կազմված սևաթույր-բոստ, մանրահատիկ հոծ գրանիտից:

Գարինն անհամբերությունից կծոտում էր եղունգը:

Երեքն էլլու էին: Դժվար էր շնչելը: Բոլորի թիկունքին թթվածնի սարք կար: Լսվում էին հիպերբոլիդների ոռնոցն ու պայթյուններ:

Վերելակի խցիկը մտավ Էլեկտրական լամպերի վառ լուսի գոտու մեջ ու կանգ առավ գազեր հավաքող վիթխարի ձագարի վերևում: Գարինն ու Շեֆերը հագան ջրասուզակի սաղավարտի նման կլոր ռետինե սաղավարտներն ու ձագարի բացվածքներից մեկով մտան՝ հասնելով երկարե նեղ աստիճանին, որ ուղղաձիգ ցած էր տանում հինգհարկանի շենքի բարձրությամբ: Սկսեցին իջնել: Սանդուղքն ավարտվում էր օղակաձև հարթակով: Հարթակի վրա մինչև գոտևատեղը մերկ, կլոր սաղավարտներով, թիկունքներին թթվածնի սարքերով մի քանի բանվոր ծնկաչոք խոնարհվել էին հիպերբոլիդների վրա: Նայելով ցած, գվացող խորխորատը, նրանք կարգավորում և ուղղություն էին տալիս ճառագայթներին:

Նման ուղղաբերձ, կլոր երկաթաձողիկ-աստիճաններով սանդուղքներն այդ հարթակը միացնում էին ներքին օղակին: Այնտեղ հեղուկ օդով սառեցնող սարքերն էին: Ոտքից գլուխ ռետինով տողորված թաղիքե զգեստ հագած, թթվածնի սաղավարտներով բանվորները վարի հարթակից դեկավարում էին սառուցիչների և Էլեատորների շերեփների աշխատանքը: Սա հանքահորի ամենավտանգավոր տեղն էր: Մի փոքրիկ անզգույշ շարժում, և մարդ կարող էր ընկնել հիպերբոլիդի հատող ճառագայթի տակ: Ներքնում շիկացած ապարը ճաքում ու տրաքտրաքվում էր հեղուկ օդի շիթերի մեջ: Վարից ապարի բեկորներ էին թռչում ու գագերի քուլաներ բարձրանում:

Էլեատորները հանում էին ժամում մոտ հիսուն տոննա ապար: Գործն արագ էր առաջ գնում: Շերեփների խորացման հետ իջնում էր նաև ամբողջ սիստեմը՝ Մանցեի գծագրերով պատրաստված «երկաթե խլուրդը», վերին օղակը՝ հիպերբոլիդներով, և վերևից՝ զագի ձագարը: Հանքահորի ամրակումն սկսվում էր արդեն «խլուրդային» սիստեմից վեր:

Շեֆերը կողքից սլացող շերեփի միջից վերցրեց մի բուռ գորշավուն մոխիր: Գարինն այդ փոշուց մի պտղունց տրորեց մատների մեջ: Անհամբեր շարժումով մատիտ պահանջեց: Գրեց ծխախտի տուփի վրա.

«Ծանր խարամներ: Լավա»:

Շեֆերը տմբտմբացրեց ակնոցավոր կլոր սաղավարտը: Զգույշ շարժվելով օղակաձև հարթակի եզրով, նրանք կանգ առան հանքահորի միակտուր պատից պողպատե ճոպաններով կախված և «երկաթե խլուրդի» ամբողջ սիստեմի հետ իջնող սարքերի առաջ: Դրանք ծանրաչափեր էին, սեյսմոզրաֆներ, կողմնացույցներ, տվյալ խորության վրա ծանրության ուժի արագացման մեծությունը գրառող ճոճանակներ, Էլեկտրամագնիսական չափիչներ:

Շեֆերը ցույց տվեց ճոճանակը, Գարինի ձեռքից վերցրեց ծխախտի տուփն ու անշտապ, գերմանական վայելչագեղ ձեռագրով գրեց.

«Ծանրության ուժի արագացումը երեկ առավոտից մեծացել է ինը հարյուրերորդականով։ Այս խորության վրա արագացումը պետք է նվազեր մինչև 0,98, այնինչ մենք 1,07-ի ավելացում ենք ստանում»...

«Մագնիսաքարե՞ր»,— զրեց Գարինը:

Շեֆերը պատասխանեց.

«Այսօր առավոտից մագնիսային սարքերը կանգնած են զրոյի վրա։ Մենք իշել ենք մագնիսական դաշտից ցած»։

Զեռքերը ծնկներին հենելով, Գարինը երկար նայում էր ներքեւ, հազիվ նկատելի կետի չափ նեղացող մութ հորանի մեջ, ուր «երկաթե խլուրդն» էր մոլտում՝ ավելի ու ավելի միարձվելով երկրի խորքերը։ Այդ օրվա առավոտից հանքահորն սկսել էր անցնել Օլիվինյան գոտու միջով։

## 115

— Հը, քեֆո՞ ո՞նց է, Իվան։

Շելգան շոյեց տղայի գլուխը, Իվանը նստել էր նրա առափնյա փոքրիկ տնակում, պատուհանի մոտ ու նայում էր օվկիանոսին։ Տնակը կառուցված էր ափի քարերից, սվաղված բաց դեղին կավով։ Պատուհանից երևում էր, թե ինչպես էին կապույտ օվկիանոսի վրա զլորվում ճերմակափրփուր ալիքները, փշրվում խութերի, ծովախորշի ավագի վրա, խուլ մի ծովախորշ, ուր Շելգայի տնակն էր։

Իվանին դիրիժաֆլով բերին կիսամեռ վիճակում։ Շելգան մեծ դժվարությամբ ոտքի կանգնեցրեց նրան։ Եթե հարազատ մարդ չլիներ կղզում, Իվանը հազիվ թե ողջ մնար։ Լրիվ ցրտահարվել էր, սառել ու, դրանից բացի, ընկճված էր հոգեպես՝ հավատաց մարդկանց, արեց ինչ ուժը պատում էր, և ի՞նչ ստացվեց։

— Հիմի ես, ընկեր Շելգա, մուտք չունեմ Սովետական Ռուսաստան, ինձ կդատեն։

— Վերջ տուր, հիմար տղա։ Դու ոչ մի մեղք չունես։

Ինչ էլ աներ Իվանը՝ ափի քարին նստած նայեր օվկիանոսին, խեցգետին բռներ թե քափառեր կղզում՝ նրա հրաշալիքների, եռուն բան ու գործի, օտար մարդկանց իրարանցման մեջ, աշքերն ակամա թախիծով դառնում էին դեպի արևմուտք, ուր օվկիանոսի խորքն էր իջնում արևի պերճաշուք գունդը, ուր, արևից էլ այն կողմ, սովետական հայրենիքն էր։

— Էստեղ զիշեր է,— ասում էր նա կամացուկ,— իսկ մեզ մոտ, Լենինգրադում՝ առավոտ։ Հիմի ընկեր Տարաշկինը թեյ խմեց, գնաց գործի։ Կրեստովսկի ակումբում նավակներն են խծուծակալում, երկու շաբաթից դրոշը պիտի բարձրացնեն։

Երբ տղան լավացավ, Շելգան սկսեց զգուշորեն նրան բացատրել իրավիճակը և տեսավ, որ նա էլ, ինչպես Տարաշկինը ժամանակին, կարողանում է հասկանալ կես խոսքից և տրամադրված է անհաշտ, սովետականորեն: Թե չնվնվար Լենինգրադը հիշելով, ոսկի տղա կլիներ:

- Դեհ, Իվան,— մի անգամ Շելգան ասաց ուրախ,— դեհ, Վանյուշկա, պատրաստվիր, շուտով քեզ տուն եմ ուղարկելու:
- Շնորհակալություն, Վասիլի Վիտալիչ:
- Միայն թե պետք կլինի, որ նախ մի բան անես:
- Պատրաստ եմ:
- Լա՞վ ես մազցում:
- Սիբիրում, Վասիլի Վիտալիչ, հիսուն մետրանոց մայրիներ էի մազցում կոն հավաքելու, բարձրանում էի Էնքան, որ վերևից գետինը չէր երևում:
- Երբ պետք լինի՝ կասեմ, թե ինչ անես: Ու հետո՝ իգուր մի թափառի կղզում: Ավելի լավ է կարթ վերցրու, ծովողնի որսա:

## 116

Գարինը հիմա վստահորեն առաջ էր շարժվում իր աշխատանքներում ըստ այն պլանի, որ գտել էր Մանցեի նոթերում ու օրագրերում:

Էլեատորների շերեփները ծակեցին անցան մազմայի հոծ շերտը: Հանքահորի հատակից լսվում էր ստորերկրյա եռացող օվկիանոսի շառաչը: Երեսուն մետր հաստությամբ սառեցված հորապատերն անխորտակ զլան էին գոյացել, բայց և այնպես հանքահորն այնպիսի ցնցումների ու տատանումների էր ենթարկվում, որ հարկադրված էին բոլոր ուժերը կենտրոնացնել հետագա սառեցման վրա: Էլեատորները հիմա գետներես էին հանում բյուրեղավոր երկար, նիկել ու օլիվին:

Արտասովոր երևույթներ առաջ եկան: Ծովում, ուր պողպատե ժապավեններով ու պոնտոններով հեռացվում էր հանված ապարը, ճառագայթում սկսվեց: Մի քանի օրվա մեջ ճառագայթումն ավելի ու ավելի ուժեղացավ: Վերջապես ջրի, քարերի, ավազի վիթխարի զանգվածները, պոնտոնների մի մասի հետ, որ թռան: Պայթյունն այնքան ուժեղ էր, որ փոթորկի պես քշեց տարավ բանվորների բարաքները, և մի հսկա ալիք, հորդելով կղզու վրա, քիչ էր մնում լցներ հանքահորը:

Ստիպված էին ապարն ուղղակի լցնել բեռնանավերն ու տանել թափել հեռու օվկիանոսում, ուր չին դադարում ճառագայթումն ու պայթյունները: Դա բացատրվում էր Մ տարրի ատոմային տրոհման դեռևս անհայտ երևույթներով:

Ոչ պակաս տարօրինակ երևոյթ ի հայտ եկավ նաև հանքահորի հատակին: Մկանեց այն բանից, որ դեռ վերջերս զրո աստիճանագիծը ցույց տվող մազնիսային սարքերը հանկարծ ահավոր լարվածության մազնիսական դաշտ հայտնաբերեցին: Ալաքները բարձրացան մինչև վերջ: Հանքահորի հատակից բաց մանուշակագույն, դողոջուն լույս սկսեց ծաթել: Օդն իսկ կարծես վերափոխվել էր: Ալֆա մասնիկների բույլերով ոմբակոծվող ազդունու ու թթվածինն օդում տրոհվում էին հելիումի և ջրածնի:

Ազատ ջրածնի մի մասն այրվում էր հիպերբոլիդների ձառագայթներից. հանքահորով մեկ հրե լեզվակներ էին թռչում, թնդում էին ատրանակի կրակոց հիշեցնող պայթյուններ: Բռնկվում էին բանվորների հագուստները: Հանքահորը տատանվում էր մազմայի օվկիանոսի մակրնթացություններից ու տեղատվություններից, որոնց ծագումն անբացատրելի էր: Շուտով նկատեցին, որ պողպատէ շերեփներն ու գործիքների երկարե մասերը պատվում են հողագույն-կարմիր փառով: Մեքենաների երկարե մասերում ատոմների բուռն տրոհում սկսվեց: Բանվորներից շատերն այրվածքներ ստացան անտեսանելի ձառագայթներից: Բայց և այնպես, «երկարե խլուրդը» նախկին համառությամբ շարունակում էր ծակել-ներթափանցել Օլիվինյան գոտու միջով:

Գարինը համարյա դուրս չէր գալիս հանքահորից: Նա այժմ միայն սկսեց հասկանալ իր ձեռնարկի ողջ ցնորամտությունը: Ոչ ոք չէր կարող ասել, թե ինչ խորություն ուներ ստորերկրյա եռացող օվկիանոսը: Թե դեռ քանի կիլոմետր պիտի անցնեին հալված օլիվինի միջով: Մի քան էր միայն կասկածից վեր՝ սարքերը ցույց էին տալիս չափազանց ցածր ջերմաստիճան ունեցող մազնիսական ամուր միջուկի առկայությունը երկրագնդի կենտրոնում:

Այն վտանգը կար, որ հանքահորի սառեցված, իր հալված շրջապատից ավելի ամուր գլանը կարող է երկրի ձգողական ուժի հետևանքով պոկվել ու տարվել դեպի կենտրոն: Եվ իսկապես, հանքահորի պատերի վրա սկսեցին վտանգավոր ձեղքեր հայտնվել, որոնց միջից Փշուցով գագեր էին ելնում: Ստիպված էին կրկնապատիկ փոքրացնել հանքահորի տրամագիծը և ուղղահայաց գորեղ ամրակապեր դնել:

Շատ ժամանակ իմեց նոր, տրամագծով կրկնակի փոքր «երկարե խլուրդի» տեղակայումը: Միմիթարական էին «Արիզոնայից» հասնող լուրերը միայն: Նորից ծովահենային դրոշի տակ օվկիանոս ելած զբոսանավը գիշերը ներխուժեց

Մելքուրնի նավահանգիստը, հրդեհեց կոպրայի<sup>34</sup> պահեստները՝ իր գալստյան մասին տեղեկացնելու համար, և պահանջեց հինգ միլիոն ֆունտ: (Որպեսզի աշքները վախեցնի՝ ձառագայթի մի շարժումով հողին հավասարեցրեց ծովակնյա զբոսայգին): Մի քանի ժամում քաղաքը դատարկվեց, փողը տվեցին բանկերը: Նավահանգստից ելնելիս «Արիզոնայի» դեմ դուրս եկավ անզիլական մի պահականավ ու կրակ բացեց: Վեցյույնանոց արկը թափանց ծակեց զբոսանավը ջրագծից վեր, բայց, իր հերթին, «Արիզոնան» անցավ հարձակման և կտոր-կտոր արեց ռազմանավը: Մարտը դեկավարում էր մադամ Լամոլը հիպերբոլիդի աշտարակի կատարից:

<sup>34</sup> Կոկոսյան ընկույզի միջուկը (ծ. թ.):

Այս լուրը զվարթացրեց Գարինին: Վերջին ժամանակներս նրան մոայլ մտքեր էին պաշարում: Իսկ եթե հանկարծ Մանցեր սխալված լինի իր հաշիվներո՞ւմ: Ճիշտ այնպես, ինչպես մեկ տարի առաջ Պետրոգրադյան կողմի իր մեկուսի տանը, նրա հոգնատանց ուղեղը փրկության հնարավորություններ էր որոնում, եթե հանքահորի գործն անհաջող ավարտ ունենար:

Ապրիլի քանինգին, «խլուրդային» սխատեմի ներսում, օդակաձև հարթակին կանգնած, Գարինն ականատես եղավ մի անսովոր երևույթի: Վերսից, զագերը հավաքող ձագարից, սնդիկի անձրև էր տեղում: Ստիպված էին ընդհատել հիպերբոլիդների աշխատանքը: Նվազեցրին պաղեցումը հանքահորի հատակին: Էլսատորների շերեփները հիմա անցնում էին օլիվինի միջով և մաքուր սնդիկ հանում: Հաջորդ՝ ութառունմեկ համարի տակ, ըստ Մենդելեևի աղյուսակի սնդիկին հետևելու էր թալիումը: Ուսկին (ատոմային կշիռ՝ 197,2, համարը՝ 79), ըստ աղյուսակի, սնդիկից բարձր պիտի լիներ:

Այն, որ աղետ էր տեղի ունեցել և ոսկի չէր հայտնաբերվել ըստ տեսակարար կշռի դասավորված մետաղների շերտի միջով անցնելիս, հասկանում էին միայն Գարինն ու ինժեներ Շեֆերը: Խսկական աղետ էր դա: Անիջալ Մանցեր սխալվել էր . . .

Գարինը կախեց գլուխը: Նա սպասում էր ինչի ասես, բայց ոչ նման թշվառ վախճանի... Շեֆերը մտացրիվ ձեռքերը պարզեց առաջ, ափերը՝ վեր, որսալով ձագարի տակից թափվող սնդիկի կաթիլները: Հանկարծ նա բռնեց Գարինի արմունկն ու նրան քաշեց տարավ դեպի ուղղաձիգ սանդուղքը: Երբ նրանք վեր բարձրացան, նստեցին վերելակ հանեցին ունեցին սաղավարտները, Շեֆերն սկսեց տեղում դոփել ծանր ոտնամաններով: Նրա նիհար, մանկայնորեն պարզամիտ դեմքը փայլում էր ուրախությունից:

— Այս սա ոսկի՝ է,— գոչեց նա քրքաջով:— Մենք պարզապես ոչխարի գլուխ ենք, ուրիշ ոչինչ... Ուսկին ու սնդիկը եռում են կողք կողքի: Ի՞նչ է ստացվում: Սնդիկախառն ոսկի... Հապա նայեք:— Նա բացեց ափը, որի վրա հեղուկ կոտորակներ կային:— Սնդիկը ոսկեփայլ երանգ ունի: Այստեղ իննառուն տոկոս գուտ ոսկի կա:

Ուսկին նավթի նման ինքն էր բխում երկրի ընդերքից: Հանքահորի խորացման աշխատանքները դադարեցվեցին: «Երկարեւ խլուրդը» քանդվեց ու դուրս բերվեց: Հանքահորի ժամանակավոր ձողակառուց ամրակները հանվեցին: Դրանց փոխարեն ամբողջ խորությամբ պողպատե զանգվածեղ գլաններ իջեցրին, որոնց պատերի միջով էր անցնում սառեցնող խողովակների սխատեմը:

Հարկավոր էր միայն կարգավորել շերմաստիճանը՝ հանքահորում, ցանկացած բարձրության վրա, ներքեցից ելնող շիկացած գոլորշիներից սնդիկախառն ոսկի ստանալու համար: Գարինի հաշվումներով, պողպատե գլաններն ուղիղ հատակն իջեցնելուց հետո կարելի էր ստիպել, որ սնդիկախառն ոսկին ինքը բարձրանար մինչև վերջ և դուրս գար գետներես:

Հանքահորից հյուսիս-արևելք շտապով սնդիկամուդ կառուցվեց: Ապարանքի աջ թևում, որ հարում էր մեծ հիպերբոլիդի աշտարակի ստորոտին, վառարաններ դրեցին և հալքանոթներ պատրաստեցին, ուր պետք է ստացվեր մաքուր ոսկին:

Գարինը ենթադրում էր սկզբնական շրջանում ոսկու օրական արտադրանքը հասցնել տասը հազար փթի, այսինքն՝ օրում հարյուր միլիոն դոլարի:

«Արիզոնային» կարգադրվեց վերադառնալ կղզի: Մադամ Լամոլը պատասխանեց շնորհավորանքով և ռադիոյով հայտարարեց բոլորին, բոլորին, որ դադարեցնում է ծովահենային հարձակումները Խաղաղ օվկիանոսում:

## 118

Վաշինգտոնի կոնֆերանսի բացումից քիչ առաջ Սան Ֆրանցիսկոյի նավահանգիստը մտան օվկիանոսային հինգ նավեր: Դրանք խաղաղորեն հոլանդական դրոշ բարձրացրին և կառանեցին ափին, հազարավոր նման առևտրանավերի մեջ, ամառային արևով ողողված լայն ու ծխալի ծովածոցում:

Նավապետերն ափ իջան: Ամեն ինչ սովորականի պես էր: Նավերի վրա չորանում էին նավաստիների ոտաշորերը: Նավաստիները տախտակամածն էին լվանում: Մաքսատան պաշտոնյաների մեջ որոշ զարմանք առաջ բերեց հոլանդական դրոշի տակ հայտնված նավերի բեռլ: Սակայն նրանց բացատրեցին, որ հինգ կիլոգրամանոց չորսուածն ձուլածո դեղին մետաղակտորներն այլ բան չեն, քան ոսկի, որ բերել են վաճառելու:

Պաշտոնյաները ծիծաղեցին այդ անհեթեթ կատակի վրա:

— Իսկ քանիսո՞վ եք ոսկին ծախում... Հե-հե՛...

— Ըստ ինքնարժեքի, — պատասխանեցին նավապետերի օգնականները: (Բոլոր հինգ նավերի վրա էլ նույն խոսակցությունն էր գնում՝ բառ առ բառ):

— Այսի՞նքն:

— Կիլոն երկուսուկես դոլլար:

— Էժան զին եք դրել ձեր ոսկուն:

— Հա, էժան ենք տալիս, ապրանքը շատ է, — պատասխանում էին նավապետերի օգնականները՝ ծխամորձ փստացնելով:

Պաշտոնյաներն այդպես էլ գրեցին մատյաններում՝

«Բեռլ — դեղին մետաղակտորներ՝ ոսկի անվան տակ»: Ծիծաղեցին ու գնացին: Այնինչ ծիծաղելու իսկի բան չկար:

Երկու օրից Սան Ֆրանցիսկոյի առավոտյան լրագրերում, հայտարարությունների բաժնում, ռեկամայուներին փակցված ճերմակա-դեղնավուն ազդագրերում և պարզապես մայթերի վրա, կավճով գրված ծանուցում հայտնվեց.

«Ինձեներ Պյոտր Գարինը, Ոսկե կղզու անկախության համար մղվող պատերազմն ավարտված համարելով և խորապես ցավելով հակառակորդի տված զոհերի համար, Միայնալ Նահանգների բնակչությանը, իբրև առևտրական խաղաղ հարաբերությունների սկիզբ, հարգանոք առաջարկում է հինգ նավարեռ ազնիվ ոսկի: Հինգ կիլոգրամանոց ոսկեկտորները վաճառվում են կիլոգրամը երկուսուկես դոլարով: Ցանկացողները կարող են ոսկեկտորներ գնել ծխախոտի, ներկաքիմիական ապրանքների, կաթնեղենի խանութներում, լրագրակրպակներում, կոշիկ մաքրողների մոտ և այլուր: Խնդրում եմ ստուգել ու հավաստիանալ ոսկու խսկության մեջ, որ նրանց կտրամադրվի անսահմանափակ քանակությամբ: Հարգանքներով՝ Գարին»:

Իհարկե, ոչ մի մարդ չհավատաց այդ անհեթեթ ռեկլամներին: Կոնտրագենտների մեծ մասը թաքցրեց ոսկու ձուլակտորները: Բայց և այնպես քաղաքն սկսեց խոսել Պյոտր Գարինի՝ այդ ծովահենի և առասպելական սրիկայի մասին, որ նորից խանգարել էր ազնիվ մարդկանց հանգիստը:

Երեկոյան թերթերը պահանջեցին լինչի ենթարկել Պիեռ Հարրիին: Երեկոյան վեցին պարապ ամբոխները շարժվեցին դեպի նավահանգիստ և թռուցիկ միտինգներում բանաձև ընդունեցին՝ շրասույզ անել Գարինի նավերն ու անձնակազմի բոլոր մարդկանց կախել լապտերասյուներից: Ոստիկանները հազիվ զսպեցին ամբոխին:

Նույն միջոցին նավահանգստի իշխանությունները հետաքննություն կատարեցին: Հինգ նավերում էլ փաստաթղթերը օրինավոր էին, նավերն իրենք ենթակա չէին արգելակալանքի, քանի որ պատկանում էին տրանսպորտային հայտնի կոմպանիային: Այսուհանդեռձ իշխանությունները պահանջեցին արգելել բնակչությանը խռովող ոսկու ձուլակտորների վաճառքը: Սակայն պաշտոնյաներից և ոչ մեկը չդիմացավ գայթակղությանը, եթե նրա տարատի գրպանները սահեցրին երկուական ձուլակտոր: Աստամին տալուց, գույնից, ծանրությունից երևում էր, որ ամենախսկական ոսկի է դա, հաստա՝ ու: Վաճառքի հարցը առկախ թողեցին, ետ զցեցին ժամանակավորապես:

Ինչ-որ սակավախոս ծովայիններ առեղծվածային ձուլակտորներով լի մեկական պարկ տարան երեսուներկու օրաթերթերի խմբագրատուն: Ասացին միայն՝ «Որպես նվեր»: Խմբագիրները վրդովվեցին: Երեսուներկու խմբագրատան մեջ ահավոր աղմուկ-աղաղակ բարձրացավ: Ոսկերիչների կանչեցին: Արյունալի միջոցներ առաջարկվեցին ընդդեմ Պիեռ Հարրիի անպատկառության: Բայց ձուլակտորները հայտնի չեն, թե ուր չքվեցին երեսուներկու օրաթերթերի խմբագրատներից:

Գիշերը ոսկու ձուլակտորներ շաղ տվին քաղաքով մեկ, ուղղակի մայթերի վրա: Ժամը իննի մոտ վարսավիրանոցներում ու ծխախոտի կրապակներում հայտարարություն փակցրին: «Այստեղ վաճառվում է անխառն ոսկի՝ կիլոն երկուսուկես դոլարով»:

Բնակչությունը խոռվեց:

Ամենավատն այն էր, որ ոչ ոք չէր հասկանում, թե ինչի համար էր ոսկին վաճառվում կիլոգրամը երկուտակես դոլարով: Բայց չզնելն էլ նշանակում էր մեծ ապուշություն անել: Քաղաքում իրարանցում ու անկարգություններ ծայր առան: Բազմահազար ամբոխը նավահանգստում, նավերի առջև խոնված աղաղակում էր՝ «Ոսկի», ոսկի, ոսկի»... Ոսկին վաճառում էին ուղղակի կամրջակների վրա: Այդ օրը կանգ էին առել տրամվայներն ու ստորերկրյա երկաթուղու գնացքները: Գրասենյակներում ու պետական հիմնարկություններում քառու էր տիրում. պաշտոնյաները, իրենց գործով զբաղվելու փոխարեն, ծխախոտի մի կրպակից մյուսն էին վազ տալիս՝ խնդրելով ձուլակտորներ վաճառել իրենց: Պահեստներն ու խանութները առևտուր չէին անում, գործակատարները դեսուդեն էին կորել, քաղաքում տեր ու տնօրինություն էին անում գողերն ու թալանչիները: Լուր տարածվեց, թե ոսկին վաճառվելու է սահմանափակ քանակով և այլս ձուլակտորներ բերող նավեր չեն գալու:

Երրորդ օրն Ամերիկան ծայրեծայր բռնվեց ոսկետենդով: Խաղաղօվկիանոսյան երկաթուղագծերն արևմուտք էին բերում հուզված, տարակուսած, շվարած, ոգեորված բախտորոնողների: Գնացքները ձեռք էին բերվում կենաց-մահու կռվով: Մեծ շփոթմունք կար մարդկային հիմարության այդ հորձանքի մեջ:

Ուշացումով, ինչպես լինում է միշտ նման դեպքերում, Վաշինգտոնից կառավարական կարգադրություն եկավ. «Ոստիկանական զորքերով փակել դեպի, այսպես կոչված, ոսկով բեռնված նավերը տանող ձանապարհները, ձերբակալել հրամանատարներին ու անձնակազմին, իսկ նավերը կալանքի տակ առնել»: Հրամանն ի կատար ածվեց:

Գազազած ամբոխը՝ մարդիկ, որ բախտ գտնելու էին եկել երկրի ամենահեռավոր ծայրերից, որ թողել էին գործ, ծառայություն՝ Սան Ֆրանցիսկոյի արևախարկ առափները ողողելու համար, մորեխի պես ճարակելով ամեն մի ուտելու բան,— այդ վայրենսացած մարդիկ ճեղքեցին ոստիկանների շղթան, ատրճանակներով, դանակներով, ատամներով, մարտնչեցին կատաղի, ոստիկաններից շատերին ջուրը նետեցին, ազատեցին Գարինի նավերի անձնակազմերին և զինված երթ կարգեցին ոսկու համար:

Էլի երեք նավ եկավ Ոսկե կղզուց: Սկսեցին ամբարձիչներով ձուլակտորների կապուկներն իջեցնել ուղղակի առափ, թափել դարսակույտերով: Դրա մեջ ինչ-որ անտանելիորեն սարսափելի բան կար: Մարդիկ սարսում-դողում էին՝ երթերի միջից նայելով ուղղակի սալահատակի վրա շողշողացող գանձերին:

Այդ ընթացքում Գարինի գործակալներն ավարտեցին բարձրախոսների տեղադրումը մեծ քաղաքների փողոցներում: Շաբաթ օրը, երբ քաղաքների բնակչությունն աշխատանք ու ծառայություն վերջացնելուց հետո փողոց դուրս եկավ, Ամերիկայով մեկ հնչեց բարձր, բարբարս առողանությամբ, սակայն արտակարգ ինքնավստահ մի ձայն.

«Ամերիկացինե՞ր: Չեզ հետ խոսում է ինժեներ Գարինը, այն մարդը, որ օրենքից դուրս է հայտարարված, և որի անունով վախեցնում են երեխաներին: Ամերիկացինե՞ր, ես շատ ու շատ հանցանքներ եմ գործել, սակայն այդ ամենն ինձ համար ծառայել է սոսկ մի

նպատակի՝ մարդկության երջանկությանը: Ես յուրաքրի հողի մի պատառիկ, աննշան մի կղզի, որ նրա վրա ավարտին հասցնեմ վիթխարի ու աննախաղեա մի ձեռնարկ: Ես որոշեցի թափանցել երկրի ընդերքը և հասնել ոսկու կուսական շերտերին: Ութ կիլոմետր խորության վրա հանքահորը միշրճվեց եռացող ոսկու ստվար շերտի մեջ: Ամերիկացինե՛ր, ամեն մարդ վաճառում է իր ունեցածը: Ես ձեզ առաջարկում եմ իմ ապրանքը՝ ոսկի: Ես դրանից շահում եմ դոլարին տասը ցենտ՝ կիլոգրամը երկուսուկես դոլարով վաճառելու դեպքում: Դա համեստ շահույթ է: Բայց ինչո՞ւ են ինձ արգելում, որ վաճառեմ իմ ապրանքը: Ո՞ւր է առևտրի ձեր ազատությունը: Ձեր կառավարությունը ոտնահարում է ազատության և առաջադիմության սուրբ հիմունքները: Ես պատրաստ եմ փոխհատուցել պատերազմական վնասները: Ես պետությանը, կոմպանիաներին և մասնավոր անձանց վերադարձնում եմ բոլոր այն գումարները, որ «Արիզոնան» բռնազրավել է նավերից ու բանկերից պատերազմական ժամանակներում ընդունված կարգով: Եվ միայն մի քան եմ ինդրում՝ թույլ տվեք, որ ազատ վաճառեմ իմ ոսկին: Ձեր կառավարությունն այդ քանն արգելում է ինձ, կալանք է դնում իմ նավերի վրա: Ես հանձնվում եմ Միացյալ Նահանգների ողջ բնակչության պաշտպանությանը»:

Ոստիկանները բարձրախոսները ոչնչացրին հենց նույն գիշերը: Կառավարությունը դիմեց բնակչության ողջամտությանը.

«... Թերևս ձիշտ է այն, ինչ հաղորդեց տիրահոչակ բանդիտ, Սովետական Ռուսաստանից ձողոպրած ինժեներ Գարինը: Բայց այդ դեպքում առավել ես հնարավորին չափ շուտ պետք է լցնել, փակել Ոսկե կղզու հանքահորը, վերացնել ոսկու անսպառ պաշարներ ունենալու հնարավորությունն իսկ: Ի՞նչը կինի աշխատանքի, երջանկության, կյանքի համարժեքը, եթե սկսեն ոսկին փորել հանել կավի,

նման: Մարդկությունն անխուսափելիորեն կվերադառնա նախնադարյան ժամանակներին, փոխանակային առևտրին, վայրենությանն ու քառսին: Կկործանվի տնտեսական ողջ սիստեմը, կմեռնեն արյունաբերությունն ու առևտուրը: Մարդիկ հարկ չեն ունենա լարելու իրենց հոգեկան բարձրագույն ուժերը: Հողին կհավասարվեն մեծ քաղաքները: Խոտ ու թփով կծածկվեն երկարուղիները: Կմարեն լույսերը կինոթատրոններում ու զվարճապարտեզներում: Մարդը կսկսի նորից քարասայր նիզակով իր ապրուստը հայթայթել: Ինժեներ Գարինը մեծագույն պրովոկատորն է, սատանայի սպասավորը: Նրա խնդիրն է՝ արժեզրկել դոլարը: Բայց նրան չի հաջողվի դա»...

Կառավարությունը ոսկու պարիտետի ոչնչացման արտաճմլիկ պատկերը ներկայացրեց: Սակայն ողջամիտներ քիչ գտնվեցին: Ամբողջ երկիրը բռնվել էր խելազար մոլուցքով: Սան Ֆրանցիսկոյի օրինակով մյուս քաղաքներում էլ կանգ առավ կյանքը: Գնացքներն ու միլիոնավոր ավտոմոբիլներ սլանում էին արևմուտք: Քանի մոտենում էին Խաղաղ օվկիանոսին, այնքան թանկանում էին սննդամթերքների գները: Մթերքներ բերելու փոխադրամիջոց չկար: Սովահար բախտորոնողները ջարդում-սրբում էին ուտելեղենի կրպակները: Խոզապուխտի մեկ ֆունտի գինը հասավ հարյուր դոլարի: Սան

Ֆրանցիսկոյում մարդիկ մեռնում էին փողոցներում: Շատերն էլ ցնորվում էին քաղցից, ծարավից, այրող տապից:

Հանգուցային կայարաններում երկաթգծերի վրա թափված էին վագոնները խուժելիս ոտնատակ եղած մարդկանց դիակներ: Խճուղիներով, սայլուղիներով, լեռներով, անտառներով, դաշտերով ետ՝ դեպի արևելք էին քարշ գալիս հաջողակ մարդկանց մանր-մունք խմբեր, ուկու ձուլակորոններով լի պարկեր շալակած: Ետ մնացողներին սպանում-կողոպտում էին տեղի բնակիչներն ու բանդիտների հրոսախմբերը:

Սկսվեց ոսկի տանողների որար, նրանց վրա հարձակվում էին նույնիսկ աերոպլաններից:

Կառավարությունը վերջապես դիմեց ծայրահեռ միջոցառումների: Պալատն օրենք ընդունեց տասնյոթից քառասունինգ տարեկանների ընդհանուր զորահավաքի մասին. խուսափողները հանձնվում էին ռազմադաշտային դատարանին: Նյու Յորքի աղքատ թաղամասերում գնդակահարեցին մի քանի հարյուր մարդու: Կայարաններում զինվորներ հայտնվեցին: Սկսեցին բռնել սրան-նրան, ցած քաշել վագոնների հարթակներից, կրակել օդում ու մարդկանց վրա: Բայց և այնպես գնացքները մեկնում էին Ճիտուն: Մասնավոր ընկերությունների պատկանող երկաթուղիները առավել շահեկան էին համարում ուշք շդարձնել կառավարության որոշման վրա:

Սան Ֆրանցիսկո եկան Գարինի շոգենավերից ևս հինգը, և բաց խարսխակայանում, ի տես ամբողջ ծովածոցի, կանգնեց «Արիզոնան»՝ «ծովերի սարսափը»: Նրա երկու հիպերբոլիդների պաշտպանության տակ նավերը բեռնաթափեցին ոսկին:

Ահա թե ինչպիսի պայմաններում բացվեց Վաշինգտոնի կոնֆերանսը: Մի ամիս առաջ Ամերիկայի ձեռքին էր ամբողջ հողագնդի ոսկու պաշարի կեսը: Իսկ հիմա, ինչ ասես-չասես, Ամերիկայի ոսկու ֆոնդը գնահատվում էր ուղիղ երկու հարյուր հիսուն անգամ էժան: Դժվարությամբ, ահավոր կորուստներով, շատ արյուն հեղեղով այդ բանը դեռ մի կերպ կարելի է տանել: Բայց մեկ էլ տեսար այդ խենչուխելան սրիկա Գարինի խելքին փչեց ոսկին վաճառել կիլոգրամը մեկ դոլարով կամ տասը ցենտով. . . Հին սենատորներն ու պալատի անդամները գնում գալիս էին կուլուարներում սարսափից սպիտակած աչքերով: Արդյունաբերական և ֆինանսական արքաները ձեռքերն էին տարածում.

«Համաշխարհային աղե՛տ է սա, ավելի վատթար, քան զիսաստղի բախվելը»:

«Ո՞վ է այդ ինժեներ Գարինը,— հարցնում էին:— Ի՞նչ է ուզում նա վերջին հաշվով: Քայքայե՞լ երկիրը: Հիմարություն է: Անհասկանալի բան. . . Ինչի՞ է ձգտում: Ուզում է դիկտատոր լինել: Խնդրեմ, եթե դու աշխարհի ամենահարուստ մարդն ես: Ի վերջո հենց մեզ էլ այս դեմոկրատական կարգը զզվեցրել է մարգարինից ավելի. . . Երկրում քառու է, անկարգություն, ալվազակություն, այլանդակություն. իսկապես, ավելի լավ է երկրի զիսին դիկտատոր կանգնի՝ խիստ ու պողպատակամ առաջնորդ»:

Երբ հայտնի դարձավ, որ նիստին մասնակցելու է ինքը՝ Գարինը, կոնֆերենց-դահլիճում այնքան մարդ հավաքվեց, որ շատերը կախվել էին այուներից, թառել պատուհանների գոգերին: Հայտնվեց նախազահությունը: Նստեցին: Լուր էին: Սպասում էին: Վերջապես

նախազահը բացեց բերանը, և դահլիճում գտնվող բոլոր մարդիկ շուր եկան բարձր, ոսկեզարդ սպիտակ դռան կողմը: Դուռը բացվեց: Ներս մտավ միջահասակ, արտակարգ գունատ, սուր ու փոքրիկ, մուգ մորուքով, ստվերազգված սևաթույր աչքերով մի մարդ: Սովորական մոխրագույն կոստյումով էր, կարմիր թիթեռնիկ-փողկապով, հաստաներքան դարչնագույն կոշիկներով, ձախ ձեռքում նոփ-նոր ձեռնոցներ բռնած:

Կանգ առավ, խոր ներշնչեց լայնացած ոռւնգներով: Կարճ գլուխ տվեց և ապա ժիր-ժիր բարձրացավ ամբիոնի աստիճաններով: Զգվեց: Մորուքը վեր ցցվեց: Մի կողմ հրեց ջրամանը: (Դահլիճի ամենավերջին շարքում անգամ լսվեց, թե ինչպես ծփաց ջուրը, այնպիսի լուրջուն էր տիրում): Եվ նա բարձրաբարբառ, բարբարոս առողանությամբ ասաց.

— Զենտլմեններ. . . Ես Գարինն եմ. . . Ես աշխարհին ոսկի եմ բերել. . .

Դահլիճը թնդաց ծափերից: Բոլորը մի մարդու նման ոտքի ելան և աղաղակեցին միաբերան.

— Կե՛ ցցե միստր Գարինը. . . Կե՛ ցցե ռիկտատորը. . .

Պատուհանների տակ միլիոնանոց ամբոխը, համաշափ դոփելով, ոռնում էր.

— Ոս-սկի՛. . . Ոս-սկի՛. . . Ոս-սկի՛. . .

## 119

«Արիզոնան» նոր էր վերադարձել Ուսկե կղզու նավահանգիստը: Յանսենը մադամ Լամոլին զեկուցեց մայր ցամաքում տիրող իրավիճակի մասին, Զոյան դեռ անկողնում էր, ժանեկավոր բարձիկների մեջ հանգչած (առավոտյան փոքր ընդունելություն): Կիսամութ ննջարանը լի էր պարտեզի

ծաղիկների սուր բույրով: Զոյայի աջ ձեռքի վրա աշխատում էր մանիկյուր անող կինը: Մյուս ձեռքին նա բռնել էր փոքրիկ հայելին և խոսելու ընթացքում դժգոհ ռիտում էր իրեն:

— Բայց, բարեկամս, Գարինն անմիտ բան է անում,— ասաց Յանսենին,— նա արժեզրկում է ոսկին. . . Նա ուզում է մուրացկանների ռիկտատորը լինել:

Յանսենն աշքի տակով դիտեց նոր-նոր հարդարված պերճաշուք ննջարանը:

Պատասխանեց՝ գլխարկը ծնկներին պահած.

— Գարինը մեր տեսակցության ժամանակ ասաց ինձ, որ դուք չանհանգստանաք, մարդամ Լամոլ: Նա ոչ մի քայլ չի շեղվում իր ծրագրից: Ուսկին տապալելով՝ նա շահեց ճակատամարտը: Եկող շաբաթ սենատը նրան ռիկտատոր կհոչակի: Այնժամ նա կբարձրացնի ոսկու գինը:

— Ինչպէ՞ս, չեմ հասկանում:

— Օրենք կիրապարակի ոսկու ներմուծումն ու վաճառքը արգելելու վերաբերյալ: Մի ամսից ոսկու գինը կբարձրանա, կհասնի նախկին գնին: Այնքան էլ շատ չի վաճառվել: Աղմուկն է միայն շատ:

— Իսկ հանքահո՞րը:

— Հանքահորը կվերացվի:

Մադամ Լամոլը խոժողովեց: Սկսեց ծխել:

— Ոչինչ չեմ հասկանում:

— Անհրաժեշտ է, որ ոսկու քանակը սահմանափակվի, այլապես կկորցնի մարդկային քրտինքի հոտը: Իհարկե, հանքահորը ոչնչացնելուց առաջ պաշար կվերցվի այն հաշվով, որ Գարինի ձեռքին լինի ոսկու համաշխարհային քանակության հիտուն տոկոսից ավելին: Այսպիսով, եթե նույնիսկ պարիտետն ընկնի էլ, ապա՝ դոլարին ընդամենը մի քանի ցեստ:

— Հիանալի է... բայց, այդ դեպքում, ինչքա՞ն կհատկացնեն իմ պալատի, իմ ֆանտազիայի համար: Ինձ սարսափելի մեծ միջոցներ են պետք:

— Գարինը խնդրել է, որ դուք նախահաշիվ կազմեք: Ըստ օրենսդրության, ձեզ կտրամադրվի այնքան, ինչքան կպահանջեք...

— Բայց ես գիտե՞մ որ, թե ինչքան է ինձ պետք... Ի՞նչ հիմարություն... Նախ՝ բանվորական ավանի, արհեստանոցների, պահեստների տեղում կկառուցվեն թատրոններ, հյուրանոցներ, կրկեսներ: Դա հրաշքների քաղաք կլինի... Կամուրջները, ինչպես չինական հին նկարներում, կղզին կմիացնեն ծանծաղուտներին ու խութերին: Այստեղ ես կկառուցեմ լողարաններ, խաղաքահներ, նավահանգիստներ՝ գրոսանավերի և օդանավերի համար: Կղզու հարավում կբարձրանա վիթխարի մի շենք, որ կերևա տասնյակ մղոնների վրա՝ «Տուն, ուր հանզչում է հանձարը»: Ես կկողոպտեմ Եվրոպայի բոլոր թանգարանները: Ես այստեղ կհավաքեմ այն ամենը, ինչ մարդկությունն է ստեղծել: Գլուխս տրաքվում է բոլոր այդ պլաններից, սիրելիս: Ես երազում էլ եմ դեպի ամպերը ձգվող մարմարե ինչ-որ աստիճաններ տեսնում, և տոնահանդեսներ, և կառնավալներ...

Յանսենը ձգվեց ոսկեզօծ աթոռակի վրա.

— Մադամ Լամոլ...

— Սպասեք,— անհամբեր ընդհատեց Զոյան,— երեք շաբաթից այստեղ կժամանի իմ արքունիքը: Այդ ամբողջ ամբոխին հարկավոր է կերակրել, զրադեցնել ու կարգի բերել: Ես ուզում եմ Եվրոպայից հրավիրել երկու-երեք իսկական թագավորների և մի դյուժին զտարյուն արքայազնների: Մենք դիրիժաբլով Հռոմից կրերենք պապին: Ես ուզում եմ օծվել ու թագադրվել բոլոր կանոններով, որ վերջ տան իմ մասին փողոցային ֆոքստրոտներ հորինելուն...

— Մադամ Լամոլ,— ասաց Յանսենն աղերսագին,— ձեզ չեմ տեսել մի ամբողջ ամիս: Առայժմ դուք դեռ ազատ եք: Գնանք ծով: «Արիզոնան» վերանորոգված, հարդարված է նորից: Ուզում եմ առաջվա նման ձեզ հետ կանգնել կամրջակի վրա, աստղերի ներքո:

Զոյան նայեց նրան, հայացը քնքշացավ: Քմծիծաղելով պարզեց ձեռքը: Յանսենը շրթունքները հպեց այդ ձեռքին ու երկար մնաց խոնարհված:

— Չգիտեմ, Յանսեն, չգիտեմ,— ասաց Զոյան՝ մյուս ձեռքը տանելով նրա ծոծրակին,— երբեմն ինձ սկսում է թվալ, թե երջանկությունը միայն երջանկության ձգտելու մեջ է... ու նաև հիշողությունների մեջ... Բայց դա՝ հոգնության պահերին: Երբսիցե ես կվերադառնամ ձեզ մոտ Յանսեն... Գիտեմ, դուք ինձ կսպասեք համբերությամբ... . Հիշեք... Միջերկրական ծովը, այն լազուր օրը, երբ ես «Աստվածային Զոյայի» ուխտի կոմանդոր ձեռնադրեցի ձեզ... (Նա ծիծաղեց ու մատներով սեղմեց Յանսենի ծոծրակը): Իսկ երեւ չվերադառնամ, Յանսեն, մի՞թե ինձ երազելն ու տենչալն արդեն երջանկություն չէ: Այս, բարեկամս, ոչ ոք չգիտի, որ Ոսկե կղզին երազ է... Այդ երազը տեսա մի անզամ Միջերկրական ծովում, երբ ննջում էի տախտակամածին... տեսա ծովից հառնող մարմարե աստիճաններ, ապարանքներ, ապարանքներ՝ մեկը մյուսի վրա, սանդղափուլերով, մեկը մյուսից շքեղ ու գեղեցիկ... Եվ գեղեցիկ մարդկանց մի բազմություն՝ ի մ մարդկանց, ի մ, հասկանո՞ւմ եք: Ոչ, ես չեմ հանգստանա, մինչև չկառուցեմ երազումս տեսած քաղաքը: Գիտեմ, հավատարիմ իմ բարեկամ, դուք ձեզ, նավապետի ձեր կամրջակը և ծովային անապատն եք առաջարկում ինձ՝ իմ խելազար ցնորսների տեղ: Դուք չգիտեք կանանց, Յանսեն... Մենք թերևնամիտ ենք, շռայլող... Ես կեղտոտ ձեռնոցների պես դեն նետեցի Ռոլինզի միլիարդները, որովհետև դրանք, միևնույն է, ինձ չին փրկի ծերանալուց, թռչնելուց... Ես փախա աղքատ Գարինի մոտ: Իմ գլուխը պստովում եր խելահեղ երազանքից: Բայց ես նրան սիրեցի մի գիշեր միայն: Այդ գիշերից հետո ես այլևս չեմ կարող սիրել, ինչպես դուք ուզում: Սիրելի՝ սիրելի՝ Յանսեն, ի՞նչ անեմ, անզոր եմ ինքս իմ հանդեպ... Ես պիտի թռչեմ, սուրամ այդ գլխապտույտ ֆանտազիայի մեջ, քանի դեռ կանգ չի առել սիրտս. . . (Յանսենը ելավ աթոռից, Զոյան հանկարծ բռնեց նրա ձեռքը): Գիտեմ, աշխարհում մի մարդ կա միայն, որ սիրում է ինձ: Դուք եք, դուք, Յանսեն: Ու ինչ իմանամ, մի օր հանկարծ չե՞մ վազի ձեզ մոտ ու չեմ ասի՝ «Յանսեն, փրկե՛ք ինձ ինձնից... »:

Ոսկե կղզու խուլ ծովախորշի ափի սպիտակ տնակում ամբողջ գիշեր վիճաբանում էին տաք-տաք: Շելգան կարդաց շտապով գրած իր կոչը.

«Աշխարհի բոլոր աշխատավորնե՛ր: Ձեզ հայտնի են այն խուճապի շափերն ու հետևանքները, որ տիրեց Միացյալ Նահանգներում, երբ Սան Ֆրանցիսկոյի նավահանգիստը մտան Գարինի նավերը՝ բեռնված ուկով:

Կապիտալիզմը երեքաց ուսկին արժեգորկվում է, բոլոր վայրուտաները տակնուվրա են լինում, կապիտալիստները ոչինչ չունեն իրենց վարձկաններին՝ ոստիկանությանը, պատժից զորքերին, պրովոկատորներին ու ժողովրդական ծախու տրիբուններին վճարելու համար: Ամբողջ հասակով հառնել է պրոլետարական հեղափոխության ուրվականը:

Սակայն կապիտալիզմին նման հարված հասցրած ինժեներ Գարինը ամենսին էլ չի ցանկանում, որ իր ավանտյուրաների հետևանքը հեղափոխությունը լինի:

Գարինը գնում է դեպի իշխանություն: Գարինն իր ճանապարհին խորտակում է կապիտալիստների դիմադրությունը, որոնք դեռ այնքան էլ պարզ չեն գիտակցում, որ Գարինը պայքարի նոր զենք է պրոլետարական հեղափոխության դեմ:

Գարինը շատ շուտով համաձայնության կգա կապիտալիստներից խոշորագույնների հետ:

Այդ կապիտալիստները նրան կիրշակեն դիկտատոր առաջնորդ: Նա կունենա ոսկու համաշխարհային պաշարի կեսն ու այնուհետև կիրամայի լցնել ծածկել Ոսկե կղզու հանքահորը, որպեսզի սահմանափակվի ոսկու քանակը:

Նա խոշորագույն կապիտալիստների հրոսակախմբի հետ կկողոպտի ամբողջ մարդկությանը և մարդկանց ստրուկներ կդարձնի:

Աշխարհի բոլոր աշխատավորներ: Հասել է վճռական պայքարի ժամը: Այդ մասին հայտարարում է Ոսկե կղզու հեղափոխական կոմիտեն: Եվ հայտարարում է, որ Ոսկե կղզին՝ հանքահորով ու բոլոր հիպերբոլոիդներով, անցնում է ամբողջ աշխարհի ապստամբած աշխատավորների տրամադրության տակ: Ոսկու անսպառ պաշարներն այսուհետ աշխատավորության ձեռքին են:

Գարինն իր հրոսակախմբի հետ կպաշտպանվի կատաղորեն: Եվ որքան շուտ անցնենք հարձակման, այնքան ապահով կլինի մեր հաղթանակը»:

Հեղափոխական կոմիտեի ոչ բոլոր անդամներն էին, որ հավանություն տվին այդ կոչին: Նրանց մի մասը տատանվում էր՝ վախեցած նման համարձակությունից. կհաջողվի՝ արդյոք այդքան արագ ոտքի հանել բանվորներին: Կհաջողվի՝ արդյոք զենք ձեռք բերել: Կապիտալիստները և նավատորմիդ ունեն, և հզոր բանակ, և մարտական զագերով ու գնդացիրներով զինված ոստիկանություն... Ավելի լավ չի լինի սպասել մի որոշ ժամանակ կամ գոնե սկսել ընդհանուր գործադրությունը... .

Շելքան, հազիվ կատաղությունը պահելով, ասաց տատանվողներին.

— Հեղափոխությունը բարձրագույն ստրատեգիա է: Իսկ սարատեգիան՝ հաղթելու գիտություն: Հաղթում է նա, ով իր ձեռքն է վերցնում նախաձեռնությունը, ով համարձակ է: Հանգիստ ծանրութեթև կանեք հաղթելուց հետո, եթք մտքներովդ կանցնի մեր հաղթանակի պատմությունը գրել ապագա սերունդների համար... Մեզ կհաջողվի ապստամբություն բարձրացնել, եթե լարենք մեր ողջ ուժերը: Իսկ զենք ձեռք կբերենք մարտում: Հաղթանակն ապահովված է այն պատճառով, որ հաղթել է ուզում աշխատավոր ողջ մարդկությունը,

իսկ մենք նրա առաջավոր ջոկատն ենք: Այդպէս են ասում բոլշևիկները: Իսկ բոլշևիկները պարտություն ասված բանը չգիտեն:

Այդ խոսքի հետ հանքափորներից մեկը՝ կապուտաչ մի երիտասարդ, որ ամբողջ վիճաբանության ընթացքում նստած էր լուռ, բերանից հանեց ծխամորձն ու՝

— Վե՛րջ, — ասաց թավաձայն, — հերիք է ինչքան խոսեցինք: Գործի՛, տղերք. . .

## 121

Լիվրեավոր ֆրակով ու երկար գուլպաներով ալեհեր, պարթևահասակ անձնական սպասավորն անսաղմուկ մտավ ննջարան, շոկոլադի գավաթն ու բիսկվիտ դրեց զիշերասեղանիկի վրա և մեղմ շրջունով բարձրացրեց պատուհանների գալարավարագույրները: Գարինը բացեց աշքերը.

— Ծխախոտ:

Ռուսական այդ սովորութից՝ անորի ծխելուց, նա չէր կարողանում հրաժարվել, թեև գիտեր, որ իր ամեն մի քայլով, շարժումով, խոսքով հետաքրքրվող ամերիկյան բարձր հասարակությունն անսվաղ ծխելու մեջ անբարոյականության ինչ-ինչ նշան է տեսնում:

Ամենօրյա ֆելիետոններում ամերիկյան ողջ մամուլը կատարելապես չքմեղացնում էր Պյոտր Գարինի անցյալը: Եթե նա առաջներում առիթ է ունեցել խմիչք գործածելու, ապա՝ սուսկ հարկադրված, իսկ իրականում նա թշնամի է եղել ակողուխն: Մադամ Լամոլի հանդեպ նրա հարաբերությունները եղել են զուտ եղբայրական՝ հիմնված հոգևոր կապերի վրա: Նույնիսկ պարզվեց, որ նրա և մադամ Լամոլի սիրած զբաղմունքը հանգստի ժամերին Աստվածաշնչի նախապատիկ գլուխների բարձրածայն ընթերցանությունն է եղել: Նրա որոշ սուր արարքները (Վիլ Դավիթի պատմությունը, քիմիական գործարանների պայթեցումը, ամերիկյան էսկադրայի խորտակումը և այլն) ոմանք բացատրում էին ճակատագրական պատահականությամբ, մյուսները՝ հիպերբոլիդի հետ անզգույշ վարվելու պարագայով. համենայն դեպս, մեծ մարդն անկեղծորեն ու խորապես զղում է դրանց համար և պատրաստ է եկեղեցու գիրկը գնալ՝ ակամա մեղքերն իր վրայից վերջնականապես սրբելու նպատակով (բողոքական և կաթոլիկ եկեղեցիների միջև արդեն պայքար էր սկսվել Պյոտր Գարինի համար): Եվ, վերջապես, նրա մասին գրում էին, թե իբր մանուկ հասակից հրապուրվել է սպորտի առնվազն տասը ձևով:

Հաստ գլանակը ծխելուց հետո Գարինը խեթ-խեթ նայեց շոկոլադի գավաթին: Եթե առաջներում լիներ, երբ նրան սրիկա-ավազակ էին համարում, կպահանջեր դրա փոխարեն սողայաջուր ու կոնյակ բերել նյարդերը մի լավ ձգելու համար, բայց կես աշխարհի դիկտատորը առավոտից կոնյակ խմի՛ . . . Նման անբարոյականությունը նրանից կվանի ծանրաբար բուրժուազիային, որ նապոլեոնյան զվարդիայի նման համախմբվել է նրա զահի շուրջը: Դեմքը կնճռոտելով, նա կում արեց շոկոլադից: Հանդիսավոր տրտմությամբ դրան մոտ կանգնած սպասավորը հարցրեց կիսաձայն.

— Պարոն դիկտատորը թույլ կտա՝ ներս գալ անձնական քարտուղարին:

Գարինը ծուլորեն նստեց մահճակալի վրա, ծուլորեն հազար մետաքսե պիժաման.

— Ներս խնդրեք:

Մտավ քարտուղարը, երեք անգամ՝ դուան առաջ, սենյակի մեջտեղում և մահճակալի մոտ արժանավայել գլուխ տվեց դիկտատորին: Բարի լույս մաղթեց: Մի թեթև շեղակի նայեց աթոռի կողմը:

— Նստեք,— ասաց Գարինը՝ հորանջելով այնպէս, որ ատամները չխկչխկացին:

Անձնական քարտուղարը նստեց: Լրիվ մուգ հագուստներով, միջին տարիքի չորչորուկ տղամարդ էր նա՝ խորշումապատ ճակատով ու փոս ընկած այտերով: Կոպերը միշտ կիսակախ էին: Նա համարվում էր ամենանրբակիրթ մարդը Նոր Աշխարհում և, Պյոտր Պետրովիչի կարծիքով, խոշոր ֆինանսիստների կողմից կցված էր իրեն որպէս գաղտնի գործակալ:

— Ի՞նչ կա-չկա,— հարցրեց Գարինը:— Ի՞նչ վիճակում է ոսկու կուրաք:

— Բարձրանում է:

— Այնուամենայնիվ, մի քիչ ծանր-ծանր: Հը՞:

Քարտուղարը մելամաղձոտ բարձրացրեց կոպերը.

— Այո, դանդաղորեն: Առայժմ՝ դանդաղորեն:

— Սրիկանե՞ր:

Գարինը բորիկ ոտքերը խոթեց դիպակե հողաթափերի մեջ և սկսեց գնալ-գալ ննջարանի սպիտակ գորգի վրա.

— Սրիկանե՞ր, շուն-շանորդինե՞ր, էշե՞ր:

Զախ ձեռքն ակամա տարել դրել էր մեջքին, աջ ձեռքի բութ մատը իրել էր պիժամայի վարտիքի ժապավենագոտու տակ և ետուառաջ էր անում այդպէս՝ մազափունջը ճակատին զցած: Հավանաբար քարտուղարին էլ այդ պահը պատմական թվաց. նա ձգվեց աթոռի վրա, ձգեց երկարացրեց վիզը օսլայած օձիքի միջից՝ ասես ականջ էր դնում պատմության ոտնաձայնին:

— Սրիկանե՞ր,— վերջին անգամ կրկնեց Գարինը:— Կուրսի դանդաղ բարձրացումը ես ընդունում եմ որպէս անվստահություն իմ հանդեպ, հասկան՝ ու եք: Ես դեկրետ կիրապարակեմ ոսկու ձուլակտորների ազատ վաճառքը մահապատժի սպառնալիքով արգելելու մասին. . . Գրե՞ք:

Կանգ առավ և, խստահայաց նայելով առաստաղին պատկերված ամպերի ու ամուրների մեջ ճախրող Ավրորայի<sup>35</sup> վարդագույն թմբլիկ հետույքին, սկսեց թելադրել.

«Սույն օրաթվից սենատի որոշմամբ... .

Վերջացնելով այդ գործը, նա երկրորդ զլանակը ծխեց: Քնքուկը նետեց կիսատ խմած շոկոլադի գավաթի մեջ: Հարցրեց:

— Է՞ լինչ նորություն կա: Իմ դեմ մահափորձ-բան չի հայտնաբերվել:

Քարտուղարի կոկված երկար եղունգներով երկար մատերը պայուսակից մի թերթիկ հանեցին. նա կարդաց մտքում, շուր տվեց թերթիկը, նորից շուր տվեց.

— Ոստիկանությունը երեկ երեկոյան և այսօր առավոտյան վեցն անց կեսին ձեր դեմ ծրագրված երկու նոր մահափորձ է բացահայտել, սը՝ թ:

— Ընդ՛: Շատ լավ է: Հրապարակել մամուլում: Իսկ ո՞վ են, ի՞նչ մարդիկ են: Հուսով եմ, որ ամբոխն ինքն իր ձեռքով այդ անպիտանների դատաստանը տեսավ: Հը՞:

— Երեկ երեկոյան պալատի առջևի զբոսայգում հայտնաբերվել է մի երիտասարդ, արտաքինից՝ բանվոր, զրաբաններում գտել են երկաթե երկու պնդողակներ, ամեն մեկը հինգ հարյուր զրամ քաշով: Ցավոք սրտի, արդեն ուշ է եղել, զբոսայգում քիչ են եղել մարդիկ, և միայն մի քանի անցորդներ, զլիս ընկնելով, որ մահափորձ է պատրաստվում պաշտելի դիկտատորի դեմ, հաջողեցնում են մի քանի հարված հասցնել ստոր արարածին: Նա ձերբակալված է:

— Այդ անցորդները, այնուամենայնիվ, մասնավոր անձե՞ր են եղել, թե գործակալներ:

Թրթուացին քարտուղարի կոպերը, նա բերանի անկյունով թեթև քմծիծաղեց՝ ժպտաց ամբողջ Հյուսիսային Ամերիկայում եղակի, անկրկնելի ժպիտով.

— Իհարկե, սըր, մասնավոր անձեր են, ձեզ նվիրված ազնիվ առևտրականներ, սըր:

— Իմանալ առևտրականների անունները,— թելադրեց Գարինը,— մամուլում իմ ջերմ երախտագիտությունը հայտնել նրանց: Մահափորձ նյութողին դատել օրենքի ամբողջ խատությամբ: Դատապարտելուց հետո ես նրան ներում կշնորհեմ:

— Երկրորդ մահափորձը ևս զբոսայգում է եղել,— շարունակեց քարտուղարը:— Ի հայտ է բերվել մի տիկին, որը նայելիս է եղել ձեր ննջարանի պատուհանին, սըր: Տիկնոց մոտ գտնվել է փոքրիկ մի ատրճանակ:

— Զահե՞ լ է:

— Հիսուներեք տարեկան: Կույս:

— Իսկ ամբո՞խն ինչ է արել:

<sup>35</sup> Արշալույսի աստվածուհի (ծ. թ.):

— Ամբոխը սահմանափակվել է այն քանով, որ նրա գլխից պոկել է գլխարկը, ջարդել հովանոցն ու կոխկրտել պայուսակը: Նման համեմատաբար նվազ էնտուզիազմը բացատրվում է առավոտվա վաղ ժամով և իր՝ տիկնոց խղճալի տեսքով. նա, ամբոխի կատաղությունը տեսնելուն պես, ուշագնաց է եղել:

— Այդ պառավ ազրավին արտասահմանյան անձնագիր տալ և անմիջապես դուրս քշել Միացյալ Նահանգների սահմաններից: Մամուլում այդ միջադեպի մասին խոսել այնպես, անորոշ: Է՞լ ինչ կա:

• • • • • • • • • • •

Իննից հինգ պակաս Գարինը ցնցուղ ընդունեց, իետո իրեն հանձնեց վարսավիրի և նրա չորս օգնականների տնօրինությանը: Նա նստեց ատամնաբույժի թիկնաթոռ հիշեցնող, կտավե սավանով ծածկված հատուկ թիկնաթոռի մեջ, երկու հայելու առաջ: Նույն ժամանակում նրա երեսը ենթարկվում էր շոգեհարման, երկու շիկահեր կանայք փոքրիկ սղոցներով, խարտոցներով, թավշակաշվե բարձիկներով հղկում-կոկում էին նրա ձեռքերի եղունգները, երկու ճարտար մուլատուիիներ էլ ոտքերի եղունգների վրա էին աշխատում:

Գլխի մազերը թարմացվեցին տուալետային մի քանի ջրերով ու էսենցիաներով, հարդարվեցին ունելիներով ու սանրվեցին այնպես, որ աննկատ դարձավ ճաղատը: Սափրիչը, որ բարոննետի տիտղոս էր ստացել իր զարմանալի արվեստի համար, սափրեց Պյոտր Պետրովիչին, դիմափոշի քսեց և երեսն ու զլուխը ցողեց տարբեր օծանելիքներով — վիզը՝ վարդաշրով, ականջների ետև՝ շիպրով, քունքերը՝ Վերնեի փունջով, շրթունքների շուրջը՝ «խնձորենու ոստով» (գրեթ Էպլ), մորուքը՝ նրբագոյն բույր արձակող «Մթնշաղով»:

Այս բոլոր ձեռնածություններից հետո դիկտատորին կարելի էր փաթաթել փայլաթորով, դնել տուփի մեջ և ուղարկել ցուցահանդես: Գարինը հազիվ դիմացավ մինչև վերջ. նա այդ արարողություններին էր ենթարկվում ամեն առավոտ, և թերթերը գրում էին «լոգանքին հաջորդող նրա քառորդ ժամի» մասին: Ճար չկար, պիտի հնագանդվեր:

Հետո նա գնաց զգեցարան, ուր նրան սպասում էին երկու լակեյ և քիչ առաջվա անձնական սպասավորը՝ գուլպաներով, շապիկներով, կոշիկներով ու մնացած բաներով: Այդ օրվա համար նա ընտրել էր պեծպեծիկ պուտերով դարչնագույն կոստյումը: Սրիկա ունարտյորները գրում էին, թե դիկտատորի ամենազարմանալի ձիրերից մեկը փողկապ ընտրելու հմտությունն է: Ստիպված էր ենթարկվել և ուշքը վրան պահել: Գարինն ընտրեց սիրամարգի փետուրների պես գունազեղ մի փողկապ: Ռուսերեն կիսաձայն հայհոյելով, ինքն իր ձեռքով կապեց փողկապը:

Միջնադարյան ոճով հարդարված սեղանատան կողմը գնալիս Գարինը մտածում էր.

«Այսպես երկար չեմ դիմանա. . . այ քեզ պատիժ, ո՞նց ռեժիմի տակ դրին»:

Նախաձաշի ընթացքում (ու դարձյալ առանց մի կաթիլ ալկոհոլի) դիկտատորը պետք է նայեր փոստը: Սկզբան մատուցարանի վրա մի երեք հարյուր նամակ կա: Ապիստած ձկան տապակա, անհամ խողապուխտ և միայն ջրով եփած վարսակածավարի անաղ շիլա

(մարզիկների և բարոյական մարդկանց առավոտյան ուտելիք) ծամելով, Գարինը վերցնում էր խշխշան ծրաբներից պատահածը, բացում յուղոտ պատառաքաղով, կարդում այստեղից-այնտեղից.

«Իմ սիրտը բարախում է ուժգին, իմ ձեռքը հուզմունքից հազիվ է գրում այս տողերը. . . Ի՞նչ կմտածեք դուք իմ մասին: Աստված իմ: Ես սիրում եմ ձեզ: Ես ձեզ սիրեցի այն վայրկյանից, եթե ձեր դիմանկարը տեսա (այսինչ) թերթում: Ես երիտասարդ եմ, դուստրն արժանավոր ծնողների: Ես լի եմ կին և մայր դառնալու խանդավառությամբ» . . .

Սովորաբար ծրաբում նաև լուսանկար էր լինում: Դրանք բոլորը սիրային նամակներ էին Ամերիկայի բոլոր ծայրերից: Ճոխ մազերով, չքմեղ աչքերով ու տխմար քթիկներով այդ սիրունիկ մոռութիկների լուսանկարներից (մի ամսվա մեջ՝ արդեն մի քանի տասնյակ հազար) Գարինը սահմոկում էր, ահավոր ձանձրույթ զգում: Գլխապտույտ ուղի կտրես Կրեստովակի կղզուց մինչև Վաշինգտոն, Պետրոգրադսկի ամայի տան ցուրտ սենյակից, ուր ինքն անկյունից անկյուն էր քայլում՝ մատները կոտրատելով ու փրկության գրեթե անհնարին ելք փնտրելով (փախուստ «Բիբիգոնդայով»),— այդ խղճուկ սենյակից մինչև նախազահի ոսկեզօծ թիկնաթռող սենատում, ուր ինքը գնալու է քան բոպեից. . .  
Սիարեկես աշխարհը, տիրանաս ոսկու ստորերկրյա օվկիանոսին, հասնես  
համաշխարհային իշխանության, և այդ բոլորը նրա համար միայն, որ ֆիլիստերական  
տաղտկալի կյանքի ծուղակն ընկնես. . .

— Թո՛ւ, չար սատանա. . .

Գարինը դեն նետեց անձեռոցիկը, սկսեց մատներով տկտկացնել սեղանին: Է՞ լ ինչ մտածի գտնի: Զգտելու բան չկա: Հասել է ամենաբարձրին: Դիկտատոր է: Գուցե կայսեր տիտղո՞ս պահանջի: Այդ ժամանակ արդեն լրիվ հոգին կհանեն: Փախչի՞: Բայց ո՞ւր: Եվ ինչո՞ւ: Զոյայի մո՞տ: Ա՛խ, Զոյա. . . Նրա հետ իր հարաբերություններում խզել է ինչ-որ բան՝ ամենազլավորը, որ ծնվել էր տամուկ ու տաք այն գիշերին, Վիլ Շավրեի հինավորց հյուրանցում: Այն ժամանակ, պատուհանի ետևում սրափացող սաղարթների սոսափի տակ, տանջալի զգվանքների մեջ ծնունդ առավ Գարինի ավանտյուրայի ամբողջ ֆանտաստիկան: Այն ժամանակ վերահս պայքարի հրճվանքը կար: Այն ժամանակ հեշտ էր ասել՝ ոտքերիդ տակ կնետեմ աշխարհը. . . Եվ ահա Գարինը հաղթել է: Աշխարհը ոտքերի տակ է: Բայց Զոյան հեռու է, օտար, մադամ Լամոլ է նա՝ Ոսկե կղզու թագուհին: Հիմա ինչ-որ մի ուրիշի գլուխն է պտտվում նրա մազերի բույրից, նրա պաղ, երազկոտ աչքերի սևեռուն հայացքից: Իսկ ինքը՝ Գարինը, աշխարհի տիրակալը, անալի շիլա է ուտում, հիմար մոռւթների լուսանկարներ է դիտում հորանջելով: Վիլ Շավրեում տեսած ֆանտաստիկ երազը թռել հեռացել է իրենից. . . Հիմա դեկրետներ հրապարակիր, կոտրատվիր՝ մեծ մարդ ձևանալով, բարեկիրթ եղիր ամեն ինչում. . . Անե՛ ծք ու պատիժ. . . Հնար չկա, պիտի կոնյակ պահանջի. . .

Նս շուր եկավ սպասավորների կողմը, որոնք կանգնած էին հեռու դրան մոտ, ինչպես խրտվիլակները հնությունների թանգարանում: Իսկույնեթ երկուսն առաջ եկան, մեկը խոնարհվեց հարցականորեն, մյուսն ասաց անսեռ ձայնով.

— Պարոն դիկտատորի ավտոմոբիլն սպասում է նրան:

Դիկտատորը սենատ մտավ՝ լկտիաբար քայլելով կրունկների վրա: Նստելով ոսկեզօծ թիկնաթոռին, մետաղաձայն արտասանեց նիստը բացելու բանաձևը: Հոնքերը կիտված էին, դեմքը կորով ու վճռականություն էր արտահայտում: Այդ պահին տասնյակ լուսանկարչական ապարատներ և կինոխցիկներ էին նկարահանում նրան:

Հասարակական օրյակներից հարյուրավոր սիրունիկ կանայք էին խանդավառ հայացքներով տրվում նրան:

Սենատը պատիվ ուներ այդ օրը նրան մատուցելու մի շարք տիտղոսներ՝ Հարավ-Ուելսյան լորդի, Նեապոլյան դուքսի, Շառլեռուայի կոմսի, Սյուլիհաոււզենի բարոնի և Համառուսական համակայսեր: Հյուսիս-ամերիկյան Միացյալ Նահանգներից, որտեղ, ցավոք սրտի, տիտղոսներն ընդունված չէին՝ դեմոկրատական երկիր լինելու պատճառով, մատուցեցին «Բիզմեն օֆ գոր»-ի կոչում, որ թարգմանաբար նշանակում էր՝ «Վաճառական ողորմածությամբ աստծո»:

Գարինը շնորհակալություն հայտնեց: Նա հաճույքով կթքեր իր առջև, երկլուսավոր դահլիճում կիսաբոլորակ նստած այդ յուղափայլ ու հարգարժան ճաղատների վրա, բայց զիտեր, որ չի թքի, այլ ոտքի կենի հիմա և շնորհակալություն կհայտնի:

«Լա՝ վ, սպասեք, սրիկանե՝ ր,— մտածեց նա՝ ոտքի ելած (գունատ, փոքրամարմին, փոքրիկ սուր մորուքով) իրեն ծափողունող ամֆիթատրոնի առաջ,— շուտով ուսայական զտման և ընտրյալ հազարյակի նախազիծը կներկայացնեմ ձեզ, այն ժամանակ». . . Բայց ինքն էլ էր զգում, որ կապված են ձեռք ու ոտքը, և որ լորդի, դուքսի, կոմսի, աստվածաշնորհ վաճառականի տիտղոսների ու կոչումների մեջ ինքը ոչ մի այդպիսի վճռական բան չի կարող ներկայացնել. . . Իսկ բանկետի կզնա հիմա սենատի դահլիճից. . .

Փողոցում դիկտատորի ավտոմոբիլը դիմավորում էին աղաղակներով: Բայց որ լավ նայեիր՝ գոռացողները բոլորն էլ ինչ-որ հայթամարմին տղաներ էին, նման շորերը փոխած ոստիկանների: Գարինը զլուխ էր տալիս ու թափահարում կիտրոնագույն ձեռնոցով ձեռքը: Է՝, Ուսւաստանում ծնված չիներ, հեղափոխություն տարած չիներ՝ հավանաբար այս երթը քաղաքով, ցնծացող ամրոխի միջով, որ հավատարիմ հպատակի իր զգացումներն արտահայտում էր «հիպ, հիպ» գոռալով ու ծաղկեփնջեր նետելով,— հավանաբար այս ամենը կենսաթրթիո հաճույք կպատճառեր նրան: Բայց Գարինը թունավորված մարդ էր: Չարանում էր նա. «Էժան, էժան բաներ են դրանք, ձեններդ կտրեք, անասուններ, ի՞նչ կա հրձվելու»: Մեքենայից ելավ քաղաքային դումայի շքամուտքի առաջ, ուր կանացի տասնյակ ձեռքեր (նավթի, երկաթուղու, պահածոների և նման բաների արքաների դստերաց ձեռքեր) ծաղկեցին նրան:

Սանդուղքով վեր վազելով, նա օդային համբույրներ էր հղում աջ ու ձախ: Սրահում թնդում էր երաժշտությունն ի պատիվ աստվածաշնորհ վաճառականի: Նա նստեց, և նստեցին

ամենքը: Չյունաձերմակ սփոռոցով ծածկված, «Պ»-ածև սեղանի վրա ծաղիկներ էին երփներանգում, բյուրեղապակյա ամանեղենն էր շողում-կայծկլտում: Յուրաքանչյուր ծաշասպասքի մոտ տասնմեկական արծաթ գդալ և տարբեր չափի տասնմեկական պատառաքաղ էր դրված (չհաշված գդալները, գդալիկները, նրբունելիները՝ օմարի և փոքրիկ բոնիչները՝ ծներեկի համար): Հարկավոր էր չսխալվել, իմանալ, թե որ դանակով ու պատառաքաղով ինչ էր պետք ուտել:

Գարինն ատամները կրծտացրեց չարությունից. պա՛հ, արիստոկրատների՝ ս տես, սեղանի մոտ նստած երկու հարյուր մարդուց առնվազն հարյուր հիսունը տառեխ էր ծախում փողոցներում, իսկ հիմա, խնդրեմ, անվայելուշ բան են համարում տասնմեկից պակաս պատառաքաղների օգնությամբ ճաշելը: Բայց բոլոր աչքերը հառված էին դիկտատորին, և նա այս անզամ էլ ենթարկվեց հասարակական ճնշմանը՝ սեղանի մոտ իրեն օրինակելի պահեց:

Կրիայի ապուրից հետո սկսվեցին ճառերը: Գարինը լսում էր ոտքի կանգնած, շամպայնի բաժակը ձեռքին: «Խմեմ հարբեմ», — կայծակեց մտքում: Ապարդյուն փորձ. . .

Իր հարևանուհիներին՝ երկու չաշանակ գեղեցկուհու, նա նույնիսկ ասաց, հաստատեց, որ ինքն իսկապես երեկոները աստվածաշունչ է կարդում:

Երրորդ անուշեղենի և սուրճի արանքում նա պատասխանեց ճառերին:

«Պարոնայք, այն իշխանությունը, որով ինձ օժտեցիք, ես ընդունում եմ իբրև աստվածային նախասահմանում, և իմ խղճի սրբազն պարտքը թելադրում է ինձ պատմության մեջ աննախադեպ այդ իշխանությունը գործադրել մեր շուկաներն ընդարձակելու համար, մեր արդյունաբերության և առևտության ձոփակում համար և գոյություն ունեցող կարգը տապալելու՝ ամբոխի անբարոյական փորձերը ճնշելու համար. . . »: Եվ այլն, և այլն. . .

Ճառը բերկրայի տպավորություն թողեց: Ճիշտ է, վերջում դիկտատորը, ասես իրեն ու իրեն, ավելացրեց ինչ-որ երեք կրքոտ բառ, բայց դրանք ասվեցին անհասկանալի լեզվով, ըստ երևույթին՝ ռուսերեն, և անուշադրության մատնվեցին: Այնուհետև Գարինը գլուխ տվեց երեք ուղղությամբ և դուրս եկավ շեփորների ոռնոցի, թմբուկների թնդյունի և հրձվագին աղաղակների ուղեկցությամբ: Նատեղ ավտոմոբիլ ու գնաց տուն:

Պալատի նախարարում հատակին նետեց ձեռնափայտն ու գլխարկը (խուճապ՝ վերցնելու սլացող սպասավորների մեջ), ձեռքերը խոր խորեց տարբատի գրպաններն ու, չարությամբ վեր տնկելով մորուքը, բարձրացավ շքեղ գորգի վրայով: Առանձնասենյակում նրան էր սպասում անձնական քարտուղարը:

— Երեկոյան ժամը յոթին «Պասիֆիկ» ակումբում պարոն դիկտատորի պատվին ընթրիք է տրվելու սիմֆոնիկ երաժշտախմբի նվազակցությամբ:

— Հա-հա՝, — ասաց Գարինը (նորից ավելացնելով ռուսերեն երեք անհասկանալի բառ): Ուրի՞շ:

- Այնուհետև ժամը տասնմեկին «Բնդիանա» հյուրանոցի սպիտակ դահլիճում պարահանդես է լինելու ի պատիվ. . .
- Հեռախոսով հաղորդեք երկու տեղն էլ, որ ես հիվանդացել եմ՝ քաղաքապետարանում շափից շատ խեցետին ուտելուց:
- Հանդգնում եմ երկյուղ հայտնել, որ երևակայական հիվանդությունն ավելի մեծ իրարանցում առաջ կրերի. անմիջապես ձեզ մոտ կզա ամբողջ քաղաքը՝ իր վշտակցությունը հայտնելու: Բացի այդ՝ լրագրային խրոնիկյորները. . . Նրանք կփորձեն ներս սպրդել նույնիսկ քարե ծխնելույզների միջով. . .
- Իրավացի եք: Կզնամ:— Գարինը զանգեց:— Վաննա: Պատրաստել իրիկնային հազուստներս, տարբերանշանս ու շքանշաններս:— Որոշ ժամանակ գնում-զալիս, ավելի ճիշտ՝ վազ էր տալիս գորգի վրա:— Է՞ լ ինչ կա:
- Ընդունարանում մի քանի տիկին սպասում են ունկնդրության:
- Չե՛մ ընդունում:
- Սպասում են կեսօրից:
- Չեմ ուզում: Մերժե՛լ:
- Նրանց շատ դժվար է դիմագրավել: Համարձակվում եմ նկատել, որ այդ տիկնայք պատկանում են բարձր հասարակության: Երեք հոչակավոր կին գրողներ, երկու կինոաստղեր, համաշխարհային ստաժ ունեցող ավտոմոբիլային մի ձանապարհորդուհի և մի նշանավոր բարեգործուհի:
- Լավ. . . Խնդրեք ներս. . . Որևէ մեկին, միևնույն է. . .
- Գարինը նատեց սեղանի մոտ (ձախում՝ ռադիոընդունիչ, աջում՝ հեռախոսներ, դիմացը՝ դիկտոֆոնի փող): Մոտ քաշեց մաքուր թղթի մի կտոր, թաթախեց գրչածայրն ու հանկարծ մտածմունքի մեջ ընկավ. . .
- «Զոյա,— սկսեց գրել ոուսերեն, հաստատուն ու խոշոր ձեռագրով,— բարեկամս, միայն դուք եք ի վիճակի հասկանալու, թե ինչ հիմար դրության մեջ եմ ես».. .
- Ս-ս-սս՝,— լսվեց թիկունքից:
- Գարինն ամբողջ մարմնով կտրուկ շուռ եկավ թիկնաթոռի մեջ: Քարտուղարն արդեն դուրս էր սահել կողքի դրնից. առանձնասենյակի մեջտեղում կանգնած էր բաց կանաչ շրջազգեստով մի տիկին: Նա թույլ ձիչ արձակեց՝ ձեռներն իրար սեղմելով: Դեմքին արտահայտվում էր հենց այն, որ ինքը կանգնած է պատմության մեջ մեծագույն մարդու առաջ: Գարինը մի վայրկյան դիտեց նրան: Թոթվեց ուսերը:
- Հանվե՛ք,— հրամայեց նա կտրուկ և, շուռ զալով թիկնաթոռի մեջ, շարունակեց գրել. . .

Ութից քառորդ պակաս Գարինն շտապով մոտեցավ սեղանին: Նա ֆրակով էր, կրծքին՝ աստղեր, տարբերանշաններ և ժիշտի վրայից՝ ժապավեն: Հնչում էին մշտապես Ոսկե կղզու կայանի ալիքի վրա սարված ռադիոընդունիչի սուր ազդանշանները: Գարինը դրեց ականջնոցները: Զոյայի պարզորոշ, բայց անկենդան, ասես ուրիշ մոլորակից հասնող ձայնը կրկնում էր ռուսերեն:

— Գարին, մենք կորած ենք... Գարին, մենք կորած ենք... Կողում ապստամբություն է: Մեծ հիպերբոլիդը նրանց ձեռքին է... Ինձ հետ է Յանսենը... Եթե հաջողվի՝ փախչենք «Արիզոնայով»:

Չայնն ընդհատվեց: Գարինը կանգնել մնացել էր սեղանի մոտ՝ առանց ականջնոցները հանելու: Անձնական քարտուղարը, Գարինի ցիլինդրն ու ձեռնափայտը ձեռքին, սպասում էր դրան մոտ: Եվ ահա ռադիոընդունիչը նորից սկսեց ազդանշաններ տալ: Բայց այս անզամ արդեն մի ուրիշ՝ տղամարդու կոշտ ձայն ասաց անզերեն.

«Աշխարհի բոլոր աշխատավորներ: Ձեզ հայտնի են Միացյալ  
Նահանգները համակած խուճապի չափերն ու հետևանքները»...

Շելգայի կոչը մինչև վերջ լսելուց հետո Գարինը հանեց ականջնոցները: Անշտապ, հեղնախառն ծուռ ժպիտով սկսեց սիզար ծխել: Սեղանի արկդից հանեց հարյուրդոլլարանոց թղթադրամների մի կապուկ և ատրճանակի նմանվող, հաստ փողաքերանով նիկելապատ մի սարք, որ նրա վերջին հայտնագործությունն էր՝ գրպանի հիպերբոլիդ: Հոնքերի շարժումով մոտ կանչեց անձնական քարտուղարին.

— Կարգադրեք ճանապարհ գնալու համար իսկույն մեքենա նախապատրաստել:

Այդ ամբողջ ժամանակամիջոցում առաջին անզամ քարտուղարի կոպերը բարձրացան, և նրա կարմրագորշ աչքերը ծակող հայցքով նայեցին Գարինին.

— Բայց, պարոն դիկտատոր...

— Լոե՛լ: Անհապաղ հայտնել զորքերի հրամանատարին, քաղաքավետին ու քաղաքացիական իշխանություններին, որ ժամը յոթից պատերազմական դրություն է սահմանվում: Քաղաքում տիրող անկարգությունների խափանման միակ միջոցը՝ գնդակահարություն:

Քարտուղարը վայրկենապես անհետացավ դրան ետևում: Գարինը մոտեցավ եռակի հայելուն: Նա տարբերանշաններով էր ու աստղերով, գունատ, նման մոմարձանների թանգարանի մոմե տիկնիկի: Երկար նայեց իր կերպարանքին և հանկարծ ակամա աչքով արեց ծաղրանքով... «Կծիկը դիր, Դիեռ Հարրի, գլուխդ պրծացրու քանի ուշ չե», — շշուկով ասաց նա ինքն իրեն:

Իրադարձությունները Ոսկե կղզում ծայր առան հունիսի քաներեքի իրիկնադեմին: Ամբողջ օրն ալեկոծվում էր օվկիանոսը: Ամպրոպաքեր ամպեր էին լողում գալիս հարավ-արևմուտքից: Երկինքը ճայթում էր հրե զիզզազներից: Զրափոշին մոլեգնած մշուշի նման թռչում անցնում էր ամբողջ կղզու վրայով:

Օրվա վերջին ամպրոպը դադարեց, կայծակները բռնկվում էին հեռվում, օվկիանոսի հորիզոնագծից այն կողմ, բայց քամին չթուլացող ուժով թեքում էր ծառերը դեպի գետին, ձկում լապտերասյուները, կտրատում հաղորդալարերը, պոկում տանում բարաքների տանիքներն անձև պաստառների նման և կղզիով մեկ ոռնում ու սուլում այնպիսի դիվային շարությամբ, որ ամենայն շնչավոր արարած պահվել էր տներում ու բներում:

Նավահանգստում Ճռչում էին կառանված նավերը, քամին մի քանի բեռնանավ պոկեց խարսխաշղթայից ու քեց տարավ բաց օվկիանոս: Պալատի առջևի փոքրիկ նավամատուցում լողանի նման ալիքների վրա թռչկոտում էր միայնակ «Արիզոնան»:

Կղզու բնակչությունը վերջին ժամանակներս խիստ նվազել էր: Հանքահորում աշխատանքները դադարեցվել էին: Մաղամ Լամոլի հսկայական շինությունների կառուցումը դեռ չին սկսել: Վեց հազար բանվորներից մնացել էր մոտ հինգ հարյուրը: Մնացածները, բեռնված ոսկով, հեռացել էին կղզուց: Բանվորական ավանի թափուր բարաքները, զվարճապարտեզր, հասարակաց տները քանդել էին, տեղ բացել ապագա շինարարության համար:

Գվարդիականները վերջնականապես ոչինչ չունեին անելու այդ խաղաղ հողակտորի վրա: Անցել էին այն ժամանակները, երբ դեղնա-սպիտակները, պահապան շների պես, հրացաններով տնկվում էին ժայռերի վրա, գնում-զալիս էին լարափակոցների երկայնքով՝ բազմանշանակ չիկացնելով փակաղակները: Գվարդիականներն սկսել էին իրենց հարբեցողության տալ: Մեծ քաղաքների, շքեղ ուստորանների, շենշող կանանց կարոտն էին զգում: Խնդրում էին արձակուրդ տալ իրենց, սպառնում էին խոռվություն բարձրացնել: Սակայն Գարինի անզիջում կարգադրությունը կար՝ ոչ մի արձակուրդ, ոչ մի ազատում: Գվարդիական զորանոցները մեծ հիպերբոլոիդի մշտական նշանառության տակ էին:

Զորանոցներում կատաղի թղթախաղ էր գնում: Հաշիվները փակում էին անվանական գրություններով, քանի որ զորանոցների մոտ դարսակույտերով թափված ոսկին մահու շափ ձանձրացրել, զզկեցրել էր բոլորին: Խաղում էին հին սիրուհիների, զենքի, գործածված ծխամորձի, մի շիշ հին կոնյակի կամ պարզապես խաղաթղթերով իրար քթի խփելու վրա: Իրիկնամուտին սովորաբար ամբողջ զորանոցը հարբած, հալից ընկած էր լինում:

Գեներալ Սուբբուտինն արդեն հազիվ էր կարողանում պահպանել ոչ թե կարգապահությունը, — ի՞նչ կարգապահություն, ի՞նչ բան, — այլ պարզապես պատշաճությունը:

— Ամոթ է, պարոնայք սպաներ, ամոթ է, — ամեն երեկո թնդում էր նրա ձայնը սպայական ճաշարանում, — շատ եք ընկել, պարոնայք սպաներ, սիրտ եք ետ տվել, ապականել եք հատակը, օդը կարծես բարդակի օդ լինի: Բարեհաճում եք վարտիքով շրջել տանուլ եք տվել շալվարներդ: Տիսուր եմ չափազանց, որ փուչ սրիկաների հրոսակախմբի պետը լինելու դժբախտությունն ունեմ:

Ներգործության ոչ մի միջոց չէր օգնում: Բայց դեռ երբեք զինանոցներում չէին հարթել այնպես, ինչպես հունիսի քաներեքին՝ այդ ահավոր փոթորիկի օրը: Քամու ոռնոցը գվարդիականների վրա մի տեսակ վայրի թախիծ էր բերում, վաղեմի հուշեր արթնացնում նրանց մեջ, և մղկտում էր իին վերքը: Զրափոշին անձրև դարձած ծեծում էր պատուհանների ապակիները: Մրրկային համազարկով թնդում-դրդում էր երկնային հրետանին: Դողդողում էին պատերը, զնզգնզում էին բաժակները սեղանների վրա: Գվարդիականները երկար սեղանների շուրջը նստած, արմունկներով կոթնած և անվեհեր գլուխները ձեռքներին հենած, խորվ մազերով, անլվա, երգում էին թշնամական երգը՝ «Էҳ, յանուկո, կудայ կոտisce... . . .»: Եվ այդ երգը, որ սատանան զիտի թե ինչ հեռու-հեռավոր կյանքից էր բերվել ալիքների մեջ կորած այդ փոքրիկ կղզին, ասես հայրենի աղի մի պտղունց լիներ: Արցունքոտ աչք ու այտերով տարութերվում էին հարբած զլուխները: Գեներալ Սուլբատինը խոպոտեց՝ փորձելով բան հասկացնել նրանց, բայց վերջը գրողի ծոցն ուղարկեց բոլորին ու ինքն էլ խմեց հարթեց:

Հեղկումի հետախուզությունը (հանձին Իվան Գուսևի) տեղեկություն բերեց, թե ինչ ծանր վիճակում է հակառակորդը զորանոցներում: Երեկոյան ժամը յոթին Շելզան հինգ պարթև հանքափորների հետ մոտեցավ պահականոցին (որ զորանոցների դեմն էր) և հայիոյանքով խոսքակոիվ սկսեց կատարները տաքացրած երկու ժամապահների հետ, որ կանգնած էին հենարանի վրա շարված հրացանների մոտ: Հափշտակված ոուսերեն խոսքի դարձվածքներով, ժամապահները կորցրին իրենց զգոնությունը և անսպասելիորեն գետին գլորվեցին, զինաթափվեցին և կապկապվեցին: Շելզան հարյուր հրացան յուրացրեց: Հրացաններն անմիջապես բաժանեցին բանվորներին, որ մոտենում էին՝ վազ տալով լապտերայունից լապտերայուն, պահվելով ծառերի ու թփերի ետևում, սողալով փոքրիկ բացատով:

Հարյուր մարդ ներխուժեց զորանոցները: Սարսափելի իրարանցում սկսվեց, գվարդիականները հարձակվողներին դիմավորեցին շշերով ու աթոռակներով, նահանջեցին, համախմբվեցին ու ատրանակներից կրակ բացեցին: Կովում էին սանդուղքների վրա, միջանցքներում, ննջասրահներում: Լուրջ և հարբած մարդիկ ձեռնամարտի էին բռնվել: Փշրված պատուհաններից վայրենի աղաղակներ էին դուրս թռչում: Հարձակվողները քիչ էին, մեկը՝ հինգի դեմ, բայց նրանք կոշտուկապատ բռունցքներով փափկասուն դեղնա-սպիտակներին շմփացնում էին այնպես, ինչպես ծանր շղթաներով կշմփացնեին: Օգնության հասան նոր ուժեր: Գվարդիականներն սկսեցին դուրս նետվել պատուհաններից: Մի քանի տեղ հրդեհ բռնվեց, զորանոցները պարուրվեցին ծխով:

Յանսենը վազում էր պալատի թափուր, անլույս սենյակներով: Ալիքն ալիքի ետևից թնդյունով ու ֆշտոցով փլչում էր վերանդայի վրա: Սուլում էր քամին՝ ցնցելով պատուհանների շրջանակները: Յանսենը ձայն տվեց մադամ Լամոլին, ականջ դրեց ահավոր տագնապով:

Վազեց ցած՝ Գարինի հարկաբաժինը, սաժենանոց ցատկերով թոշելով աստիճանների վրայով: Ներքևից լսվում էին կրակոցներ, մերթ ընդ մերթ՝ ճիշեր: Դուրս նայեց դեպի ներքին այգին: Թափուր էր, ոչ մի մարդ: Հակառակ կողմում Ճռչում էր բաղեպատ կամարով դարպասը. դրսից փորձում էին ջարդել ներս ընկնել: Ինչպես կարելի էր այդքան պինդ քնել, որ գնդակից փշրվող ապակու ձայնը միայն արքնացրեց Յանսենին: Մադամ Լամոլը փախե՞լ է: Խսկ գուցե սպանվա՞ծ է:

Յանսենը բացեց պատահած մի դուռ: Մտավ: Չորս երկնագույն գնդեր և խճանկարազարդ առաստաղի տակ կախված հինգերորդ մի գունդ լուսավորում էին սարքերով ծանրաբեռնված սեղանները, չափիչների մարմարե տախտակները, կատողային լամպերով կոկ արկղիկներն ու պահարանները, դինամոյի հաղորդալարերը, գծագրերով ծածկված գրասեղանը: Գարինի աշխատասենյակն էր: Գորգի վրա ընկած էր ճմորթված մի թաշկինակ: Յանսենը վերցրեց. թաշկինակից մադամ Լամոլի օծանելիքների բույրն էր գալիս: Նա հիշեց, որ աշխատասենյակից ստորգետնյա ելք կա դեպի մեծ հիպերբոլիդի վերելակը, և որ սենյակում ինչ-որ տեղ գաղտնի դուռ պիտի լինի: Մադամ Լամոլը, իհարկե, առաջին խսկ կրակոցները լսելուն պես բարձրացել է աշտարակ,— ինչպե՞ս խսկույն գլխի չընկավ:

Յանսենն այս ու այն կողմ նայեց՝ փնտրելով գաղտնի դուռը: Բայց ահա լսվեց փշրվող ապակիների զրնզոց, ոտքերի դոփյուն, պատի ետևում իրար կանչեցին շտապկոտ ձայններ: Ներխուժել էին պալատ: Ուրեմն ինչո՞ւ է դանդաղում մադամ Լամոլը: Յանսենը ոստնեց դեպի երկփեղի դրվագազարդ դուռն ու կողացեց բանալիով: Հանեց ատրանակը: Թվում էր՝ ամբողջ ապարանքը լցվել էր դոփյունով, ձայներով, գոռում-գոչումով:

— Յանսե՞ն:

Առջևը կանգնած էր մադամ Լամոլը: Նրա դժգույն շրթունքներն սկսեցին շարժվել, բայց Յանսենը չլսեց, թե ինչ ասաց նա: Յանսենը նրան էր նայում ծանր շնչելով:

— Մենք կորա՞ծ ենք, Յանսեն, մենք կորա՞ծ ենք,— կրկնեց մադամ Լամոլը:

Նա սև զգեստով էր: Նեղիկ ձեռքերը, իրար ամուր հպած, սեղմել էր կրծքին: Աչքերի արտահայտությունը հուզախոռով էր՝ կապույտ ալեկոծության պես: Մադամ Լամոլն ասաց.

— Մեծ հիպերբոլիդի վերելակը չի աշխատում, կանգնեցված է ամենավերևում: Աշտարակի վրա ինչ-որ մեկը կա: Բարձրացել է դրսից, ձողերի վրայով. . . Համոզված եմ, որ այն տղան է՝ Գուսենը. . .

Մատները ձորձորթացնելով՝ նայեց դրվագազարդ դռանը: Հոնքերը կիտվեցին: Դռան ետևում կատաղի դոփդոփում էին տասնյակ ոտքեր: Վայրենի աղաղակ լսվեց: Բաշքշուկի ձայն: Հապճեպ կրակոցներ: Մադամ Լամոլը նետվեց դեպի սեղանը, նստեց, միացրեց հոսանահատիչը. մեղմ վնասց դինամոն, մանուշակագույն լույսով վառվեցին տանձաձև լամպերը: Բարխիեց բանալին՝ ազդանշաններ ուղարկելով:

— Գարին, մենք կորած ենք... Գարին, մենք կորած ենք... — ասաց նա՝ թերվելով միկրոֆոնի ցանցի վրա:

Մի բոպեից դրվագազարդ դուռն սկսեց ձաթճաթել բռունցըների և ոտքերի հարվածների տակ:

— Բացե՛ք դուռը: Բացե՛ք... — ձայներ հնչեցին:

Մադամ Լամոլը բռնեց Յանսենի ձեռքից, քարշ տվեց նրան պատի կողմն ու ոտքով սեղմեց հատակի մոտ ամրացված փորաքանդակի ոլորազարդը: Կիսայուների միջև ծանրապաստառ պանելն անաղմուկ էտ ընկալ: Մադամ Լամոլն ու Յանսենը գաղտնի մուտքից սպրդեցին ստորգետնյա անցուղին: Պանելը բարձրացավ ու բռնեց իր նախկին տեղը:

Ամպրոպից հետո վառ առկայծում ու վարվում էին աստղերը ալեկոծ օվկիանոսի վրա: Քամին մարդկանց գետին էր գլորում: Ալիքները թռչում էին բարձր-բարձր: Դողդում էին քարերը: Օվկիանոսի շառաչի միջից կրակոցներ էին լսվում: Մադամ Լամոլն ու Յանսենը, պահելով թփերի ժայռերի ետևում, վազում էին հյուսիսային ծովախորշի կողմը, ուր միշտ շարժիչավոր կատեր էր կանգնում: Աջում սև պարսպի նման հառնում էր պալատը, ձախում ալիքներն էին՝ փրփուրե ձերմակ բաշերով, և հեռվում՝ ալիքների վրա պար եկող «Արիզոնայի» լույսերը: Ետևում վանդակավոր ուրվապատկերով երկինք էր միտում մեծ հիպերբոլիդի աշտարակը: Կատարին լույս կար:

— Նայե՛ք, — վազելու ընթացքում շուր գալով ու ձեռքն աշտարակի կողմը թափահարելով ճաց մադամ Լամոլը, — այնտեղ լույս կա: Դա մա՛ հն է:

Նա գիրթ դարձանցով իջավ ծովախորշ, որ պաշտպանված էր ալիքներից: Այստեղ, պալատի վերանդան տանող սանդուղքի ստորոտին, ոչ մեծ ջրապատվարի մոտ օրորվում էր փոքրիկ կատերը: Մադամ Լամոլը թռավ կատերի մեջ, արագ հասավ ետնամասն ու դողացող ձեռքերով միացրեց ստարտերը:

— Շո՛ տ, Յանսեն, շո՛ տ, շո՛ տ:

Կատերը կառանված էր շղթայով: Ատրճանակի փողը մտցնելով օղակի մեջ, Յանսենը շարդեց փականքը: Վերը՝ վերանդայում, շրիկոցով բացվեցին դռները, և հայտնվեցին զինված մարդիկ: Յանսենը նետեց ատրճանակն ու բռնեց շղթան բնի մոտ: Մկանները ձորածոթացին, պարանցը փրվեց, կտրվեց կուրտկայի օձիքի ձարմանդը: Հանկարծ ձարձատեց միացված շարժիչը: Սանդղավանդի վրայի մարդիկ ցած վազեցին սանդուղքով՝ թափահարելով գենքերն ու գոռալով՝ «կանգնե՛ք, կանգնե՛ք»...

Վերջին ճիգով Յանսենը պոկեց շղթան, իրելով փնչփնչացող կատերը քշեց ալիքների վրա և նավակի եզրով չորեքթայք նետվեց դեկի կողմը:

Կտրուկ աղեղ գծելով, կատերը սլացավ դեպի ծովախորշի նեղլիկ ելքը: Ետևից կրակոցներ փայլատակեցին:

— Սանդո՞ւղքը, սատանի ծնունդներ,— գոռաց Յանսենը կատերից, որ պարում էր «Արիզոնայի» կողի տակ:— Որտե՞ղ է ավագ օգնականը: Քնած է: Կկախե՞մ:

— Այստեղ եմ, այստեղ, նավապետ: Լսում եմ, նավապետ:

— Կտրե՞լ ճոպանները: Միացնե՞լ շարժիչները: Լրիվ գագ: Հանգնե՞լ լույսերը:

— Լսում եմ, լսում եմ, նավապետ:

Մադամ Լամոլն առաջինը բարձրացավ մրրիկից ճոճվող նավասանդուղքով: Կոանալով նավակողից, նա տեսավ, թե ինչպես Յանսենը ջանում է ոտքի ելնել, բայց մի տեսակ ընկնում է կողքի և ջղաձգորեն փորձում է որսալ նետված ճոպանի ծայրը: Ալիքը ծածկեց նրան կատերի հետ մեկտեղ,

և նա կրկին դուրս լողաց՝ ջուր դուրս թքելով, ցավի ծամածոանքից աղավաղված դեմքով:

— Ի՞նչ է պատահել ձեզ, Յանսեն:

— Վիրավորված եմ:

Չորս նավաստի թռան կատերի մեջ, վերցրին Յանսենին, բարձրացրին նավ:

Տախտակամածի վրա նա ընկավ կողքը բռնած և ուշաթափվեց: Տարան նավախցիկ:

Լրիվ ընթացքով, ճեղքելով ալիքները, թաղվելով ջրախորխորատների մեջ, «Արիզոնան» հեռանում էր կրզուց: Նավը դեկավարում էր ավագ օգնականը: Մադամ Լամոլը կանգնած էր նրա կողքին, կամրջակի վրա, բազրիքից կառչած: Վրայից ջուր էր հոսում, զգեստը կպել էր մարմնին: Նայում էր, թե ինչպես է բորբոքվում հրացոլքը (վառվում էին զինանոցները), և սև ծուխը, պտույտ-պտույտ գալով հրացայտ գալարներով, պարուրում էր կղզին: Բայց ահա նա, ըստ երևույթին, ինչ-որ բան նկատեց, բռնեց նավի հրամանատարի թևքից.

— Թեքվեք հարավ-արևմուտք. . .

— Այնտեղ խութեր են, մադամ:

— Լոե՞ք, ձեր գործը չէ. . . գնացեք՝ ձախ կողմում պահելով կղզին:

Նա վագեց դեպի հիպերբոլիդի վանդակավոր փոքրիկ աշտարակը: Նավաքթից տախտակամածով տարածվող ջրաքողը ծածկեց մադամ Լամոլին, ցած գլորեց:

Նավաստիներից մեկը բարձրացրեց նրան, և նա ոտքի կանգնեց՝ ջրակոլով ու դիվուտած: Նա պոկվեց նավաստու ձեռքից, սկսեց մազլցել աշտարակն ի վեր:

Կղզու վրա, հրդեհի ծխից բարձր, շողում էր կուրացուցիչ մի աստղ. մեծ հիպերբոլիդն էր, որ փորձում էր գտնել «Արիզոնան»:

Մադամ Լամոլը որոշեց մարտնչել. միևնույն է, անհնար էր խույս տալ այդ ձառագայթից, որ աշտարակի կատարից ընդգրկում էր շուրջը հարյուրավոր մղոններով: Ճառագայթն սկզբում նետվեց դեպի աստղերը, շարժվեց հորիզոնով՝ մի քանի վայրկյանում մոտ չորս հարյուր կիլոմետրանոց շրջան գծելով: Իսկ այժմ արդեն համառոքեն շոշափում էր օվկիանոսի արևմտյան հատվածը, սուրում ալիքների կատարների վրայով՝ ետևից թանձը շոգեքուլաներ թռինելով: «Արիզոնան» լողում էր լրիվ ընթացքով, կղզուց յոթ մղոն հեռավորության վրա: Մինչև կայսերը ֆշացող ջրի մեջ թաղվելով, նորից կճեպի պես թռչում էր ալիքի կատարը, և այդ ժամանակ նավախելի աշտարակից մադամ Լամոլ պատասխան ձառագայթով զարկում էր կղզուն: Արդեն կղզու վրա, ինչ-որ տեղ սկսեցին բոցավառվել փայտե շինույթունները: Կայծախրձերը թռչում հասնում էին երկինք, ասես տակից հսկա փուրսեր էին փչում: Հրացոլի արնավառ անդրադարձումը խաղում էր օվկիանոսի ողջ սև ալեհույզ տարածքի վրա: Եվ ահա այն պահին, երբ «Արիզոնան» ալիքի կատարը ելավ, կղզուց նկատեցին զբոսանավի ուրվապատկերը, և կիզիչ-սպիտակ ձառագայթն սկսեց պարել նրա շուրջը՝ հարվածելով վերից վար, զիզազներով, և հարվածները, որ շատ մոտ էին, ավելի մոտենալով՝ իշխում էին մերթ նավախելի, մերթ ցոռուկի առաջ:

Զոյային թվում էր, թե կուրացուցիչ աստղն ուղղակի մեխավում է իր աչքերի մեջ, և ինքն էլ աշխատում էր սարքի ձառագայթը միրճել հեռավոր աշտարակի վրա հուրիբատող այդ աստղի սիրտը: Կատաղի զվում էին «Արիզոնայի» պտուտակները, նավախելը մերկացել էր, և նավն արդեն քթով թեքվել էր ցած՝ սահելով ալիքի վրայից: Այդ ժամանակ ձառագայթը, նշանակետը գտնելով, վեր պլացավ, տատանվեց, ասես չափուած անելով, և սկսեց անվարան լայնակի իշխել նավի վրա: Զոյան փակեց աչքերը: Հավանաբար այդ պահին կանգ առան բոլոր նրանց սրտերը, ովքեր նավի վրայից հետևում էին այդ մենամարտին:

Երբ Զոյան աչքերը բացեց, նրա առջև ջրի պատն էր, այն վիհը, ուր սահել էր «Արիզոնան»: «Սա դեռ մահը չէ»,— անցավ Զոյայի մտքով: Զեռքերը պոկվեցին սարքից ու կախվեցին անզոր:

Երբ նավը նորից սկսեց բարձրանալ ալիքի կատարը, հասկանալի դարձավ, թե ինչպես փրկվեցին մահից: Ամբողջ կղզին ու աշտարակը ծածկվել էին ծխի վիթխարի ամպերով. ըստ երևույթին, պայթել էին նավթի ցիստեռները:

Ծխաքողի ետևում «Արիզոնան» կարող էր հանգիստ հեռանալ:

Զոյան չգիտեր՝ իրեն հաջողվե՞ց արդյոք տապալել մեծ հիպերբոլիդը, թե՞ աստղը չէր երևում ծխի պատճառով միայն: Բայց այսպես թե այնպես՝ միևնույն էր հիմա. . . Զոյան դժվարությամբ իջավ աշտարակից: Նավասարքի պարաններից բռնելով հասավ խցիկ, ուր, կապույտ վարագույրների ետևում, ծանր շնչում էր Յանսենը: Ընկավ թիկնաթոռին, մոմալուցկի վառեց, սկսեց ծխել:

«Արիզոնան» լողում էր հյուսիս-արևմուտք: Քամին թուլացել էր, բայց դեռ անհանգիստ էր օվկիանոսը: Նավն օրվա մեջ բազմիցս պայմանական ազդանշաններ էր արձակում՝

փորձելով կապվել Գարինի հետ, և աշխարհով մեկ հարյուր հազարավոր ռադիոընդունիչներից հնչում էր Զոյայի ձայնը. «Ի՞նչ անենք, ո՞ւր գնանք: Մենք այս-այս լայնության և երկարության վրա ենք: Սպասում ենք կարգադրությունների»:

Օվկիանոսային շոգենավերը, այդ ռադիոհաղորդագրությունները բռնելով, շտապում էին հեռանալ ահավոր այն տեղից, ուր կրկին հայտնվել էր «Արիզոնան»՝ «ծովերի սարսափը»:

## 124

Ոսկե կղզին պարուրվել էր վառվող նավթի ամպերով: Փոթորկից հետո լիակատար հանդարտություն տիրեց, և սև ծուխը բարձրացավ ամսամպ երկինք՝ օվկիանոսի ջրերի վրա վիթխարի, մի քանի կիլոմետրանոց ստվեր զցելով:

Կոզին մոռայլ էր թվում, և հանքահորի կողմում միայն, սովորականի պես, անդադար շիկրտում էին էլեատորների շերեփները:

Հետո լուսայն մեջ երաժշտություն հնչեց՝ հանդիսավոր, դանդաղ մի քայլերգ: Ծխամշուշի միջից կարելի էր նշմարել մի երկու հարյուր մարդու. քայլում էին՝ գլուխները բարձր, և նրանց հայացքները խոժող էին ու վճռական: Առջևից չորս մարդ ուսամբարձ տանում էին կարմիր դրոշի մեջ փաթաթած ինչ-ոք բան: Նրանք բարձրացան այն ժայռը, որի վրա հառնում էր մեծ հիպերբոլոիդի վանդակավոր աշտարակը, և վերջինիս ստորոտի մոտ ցած դրին երկարավուն փաթերը:

Իվան Գուսևի մարմինն էր: Նա զոհվել էր նախորդ օրը, «Արիզոնայի» դեմ մարտ մղելիս: Արտաքին վանդակաձողերով կատվի նման աշտարակի կատարը մագլելով, նա միացրեց մեծ հիպերբոլոիդն ու գտավ «Արիզոնան» հսկա ալիքների մեջ:

«Արիզոնայից» ձգվող հրե քուղը պարում էր կղզու վրա՝ հրդեհելով շինությունները, հատելով լապտերայուններն ու ծառերը: «Սողո՛ն»,— շշնչաց Իվանը՝ սարքի փողաբերանը նավի կողմը դարձնելով, և այդ պահին, ինչպես գրավոր դասի ժամանակ, երբ Տարաշկինը նրան գրաճանաչություն էր սովորեցնում, նա ինքն իրեն օգնում էր լեզվով:

Իվանը գտավ «Արիզոնան», առավ ֆոկուսի մեջ և ձառագայթով հարվածեց ջրին նավախելի և ցոռուկի առաջ՝ նեղացնելով անկյունը: Բոնկված ցիստեռներից բարձրացող ծխի ամպերը խանգարում էին: Հանկարծ «Արիզոնայից», ձգվող ձառագայթը կուրացուցիչ աստղ դառավ և, փայլատակելով, շանթեց Իվանի աշքերը: Ճառագայթից միջաթափանց խոցված, նա ընկավ մեծ հիպերբոլոիդի պատյանի վրա... .

— Ննջիր խաղաղ, Վանյուշա, դու ընկար հերոսի մահով,— ասաց Շելզան: Նա ծունկի իշավ Իվանի աճյունի առաջ, ետ տարավ դրոշի ծայրն ու համբուրեց տղայի ձակատը:

Հնչեցին շեփորները, և երկու հարյուր մարդ սկսեցին «Ինտերնացիոնալ» երգել.

Կարձ ժամանակ անց սև ծխաքուլաների միջից օդ ելավ երկշարժիչ հզոր մի աերոպլան: Բարձրություն վերցնելով՝ թեքվեց արևմուտք. . .

## 125

— Զեր բոլոր կարգադրությունները կատարված են, պարոն դիկտատոր. . .

Գարինը բանալիով կողպեց ելքի դուռը, մոտեցավ հարթ

գրապահարանին և ձեռքը տարավ պահարանի աջ կողմը:

Քարտուղարն ասաց քմծիծաղով.

— Գաղտնի դռան կոճակը ձախ կողմում է, պարոն դիկտատոր. . .

Գարինն արագ, տարօրինակ հայացքով նայեց նրան: Սեղմեց կոճակը, գրապահարանն անաղմուկ ետ քաշվեց՝ բացելով պալատի գաղտնի սենյակները տանող նեղ մուտքը:

— Խնդրեմ, — ասաց Գարինը՝ առաջարկելով, որ քարտուղարն առաջինը մտնի:

Քարտուղարը գունատվեց, Գարինը պաղ քաղաքավարությամբ ճառագայթային ատրճանակի փողը բարձրացրեց նրա ճակատին հավասար: — Ավելի խոհեմ կլինեք, եթե ենթարկվեք, պարոն քարտուղար:

## 126

Նավապետի խցիկի դուռը բաց էր կրնկի վրա: Մահճակալին պառկած էր Յանսենը:

Զրոսանավը հազիվ էր շարժվում: Լոռվայան մեջ լսվում էր, թե ինչպես էին ալիքները զարկվում նավակողին:

Կատարվել էր Յանսենի ցանկությունը. նա նորից օվկիանոսում էր, մենակ՝ մադամ Լամոլի հետ: Գիտեր, որ մեռնում է: Մի քանի օր պայքարեց ապրելու համար, միջաթափանց գնդակի վերքը փորում, և վերջապես հանդարտվեց: Աստղերին էր նայում բաց դռնից, որտեղից ներս էր հոսում հավերժության օդը: Ոչ ցանկություն կար, ոչ վախ. միայն հավիտենական հանգստի անցնելու պահի կարևորության գիտակցությունն ուներ:

Հայտնվելով աստղերի վրա ընկած ստվերի նման, ներս մտավ մադամ Լամոլը:

Խոնարհվեց նրա վրա: Հարցրեց շշուկով՝ ինչպէ՞ս է իրեն զգում: Յանսենը պատասխանեց կոպերի շարժումով, և Զոյան հասկացավ, թե նա ինչ էր ուզում ասել. «Ես երջանիկ եմ, դու ինձ հետ եմ»: Երբ մի քանի անգամ, դժվարությամբ օդը կլանելով, ջղաձիգ ելավ-իջավ Յանսենի կուրծքը, Զոյան նստեց մահճակալի մոտ և մնաց անշարժ: Հավանաբար տիսուր մտքեր էին հածում նրա գլխում:

— Բարեկա՞մս, միա՞կ իմ բարեկամ,— ասաց նա մեղմ վհատությամբ,— աշխարհում դուք էիք միայն, որ սիրում էիք ինձ: Ձեզ համար էր միայն, որ թանկ էի ես: Եվ դուք չեք լինելու... Ի՞նչ ցուրտ է շուրջը, ինչ պատ... .

Յանսենը չպատասխանեց, կոպերի շարժումով միայն ասես հաստատեց, որ ցուրտ ու պատ է լինելու: Զոյան տեսավ, թե ինչպես նրա քիթը սրվեց, շրթունքները թրթռացին թույլ ժպիտից: Ընդամենը մի քանի օր առաջ նրա երեսը վառվում էր տաք շառագույնով, իսկ հիմա կարծես մոմից լիներ: Զոյան սպասեց ևս մի քանի րոպե, հետո շուրթերը թեթևակի հպեց նրա ձեռքին: Բայց նա դեռ չէր մեռել: Դանդաղ կիսաբաց արեց աչքերը, իրարից պոկեց շրթունքները: Զոյային թվաց, թե նա ասաց՝ «Լավ է»...

Հետո այլափոխվեց Յանսենի դեմքը: Զոյան երեսը շուրտ տվեց և հուշիկ քաշեց ծածկեց կապույտ վարագույրը:

## 127

Քարտուղարը՝ այդ ամենանրբակիրթ մարդը Միացյալ Նահանգներում, փոված էր բերանքսիվայր՝ փայտացած մատներով կպած գորգին. նա մեռավ վայրկենապես, անծպուն, Գարինը, կծուելով դորացող շրթունքները, ճառագայթային ատրճանակը դանդաղ գրպանը խոթեց: Հետո մոտեցավ պողպատե ցածիկ դրանը: Պղնձե սկավառակի վրա հավաքեց տառերի միայն իրեն հայտնի կոմբինացիան, դուռը բացվեց: Նա մտավ երկաթբետոնե անպատուհան մի սենյակ:

Դիկտատորի անձնական գանձապահոցն էր դա: Սակայն այստեղ, ոսկու կամ թղթերի փոխարեն, կար մի քան, որ շատ ավելի արժեքավոր էր Գարինի համար՝ նրա երրորդ նմանակը՝ իրեն վիթխարի գումարով վաճառած ոուս վտարանդի բարոն Կորֆը, որին բերել էին Եվրոպայից և սկզբում զաղտնի պահում էին Ուկե կղզում, ապա՝ այստեղ, պալատի թաքստոցներում:

Բարոն Կորֆը նստած էր կաշեպատ, փափուկ բազկաթոռի մեջ, ոտքերը դրած ոսկեզօծ սեղանիկին, որի վրա, սկահակներում մրգեր ու քաղցրեղեններ կային (ոգելից խմիչք չեր թույլատրվում նրան): Հատակին գրքեր էին թափված՝ անզլիական քրեական վեպեր: Բարոն Կորֆը ձանձրույթից բախ կորիզները թքում էր իր բազկաթոռից երեք մետրի վրա գտնվող հեռուստատեսային ապարատի կլոր էկրանին:

— Վերջապե՞ս,— ասաց նա՝ ծովորեն շուրտ գալով ներս մտած Գարինի կողմը:— Ո՞ւր եք չըվել, գրողը ձեզ տանի... Լսեք, դուք միտք ունեք դեռ երկա՞ր ինձ թթու դնել այս տակառում: Աստված վկա, ես գերադասում եմ Փարիզում սովոր սատկել, քան...

Պատասխանելու փոխարեն Գարինը կրծքից պոկեց ժապավենը, վրայից դեն նետեց շքանշաններով ու տարբերանշաններով ֆրակը:

— Հանվեք:

— Ինչո՞ւ, — հարցրեց բարոն Կորֆը որոշ հետաքրքրությամբ:

— Դեսը տվեք ձեր շորերը:

— Ի՞նչ է պատահել:

— Եվ անձնագիրը, բոլոր փաստաթղթերը... Որտե՞ղ է ձեր ածելին:

Գարինը նստեց զարդասեղանի առաջ: Առանց երեսն օճառելու, կնճռոտվելով ցավից, սկսեց արագ-արագ սափրել բեղերն ու մորուքը:

— Ի միջի այլոց, կողքի սենյակում մի մարդ է ընկած: Հիշեք, դա ձեր անձնական քարտուղարն է: Երբ հարցնեն՝ ուր է, կարող եք ասել, թե նրան ուղարկել եք գաղտնի հանձնարարություն կատարելու... Հասկանալի՞ է:

— Ի՞նչ է պատահել, հարցնում եմ, — ճշավեց բարոն Կորֆը՝ օղում բռնելով Գարինի տարատը:

— Ես այստեղից գաղտնի ելքով կանցնեմ այզի, կհեռանամ իմ մեքենայով: Դուք քարտուղարի մարմինը կպահեք բուխարիում ու կգնաք իմ առանձնասենյակը: Խսկույն հեռախոսով կզանգեք Ռոլինգին: Հուսով եմ՝ լա՞վ եք հիշում իմ դիկտատուրայի ամբողջ մեխանիզմը: Ես եմ, հետո՝ իմ առաջին տեղակալը՝ գաղտնի ոստիկանության պետը, հետո՝ իմ երկրորդ տեղակալը՝ պրոպագանդայի բաժնի պետը, հետո՝ իմ երրորդ տեղակալը՝ պրովոկացիայի բաժնի պետը: Հետո՝ երեք հարյուրի գաղտնի խորհուրդը Ռոլինգի գլխավորությամբ: Եթե դուք դեռ լրիվ չեք ապուշացել, պիտի որ այս բոլորն անզիր անեիք... Դե հանեք ձեր շավարը, զրողը ձեզ տանի... Ռոլինգին կասեք հեռախոսով, որ դուք, այսինքն՝ Պիեռ Գարինը, անցնում եք զորքի և ոստիկանության գլուխը: Ստիպված կլինեք լուրջ կոհիվ տալ, սիրելիս:

— Ներեցեք, իսկ եթե հանկարծ Ռոլինգը ձայնից գլխի ընկնի, որ խոսողը դուք չեք, այլ ես...

— Էհ, վերջին հաշվով դրանք թքած ունեն. . . Միայն դիկտատոր լինի...

— Ներեցեք, ներեցեք... ուրեմն այս բռպեից ես Պյոտր Պետրովիչ Գարինն եմ...

— Հաջողություն եմ ցանկանում: Վայելեք լիակատար իշխանության հաճույքը: Բոլոր հրահանգները գրասեղանի դարակում են. . . Ես չքացած...

Գարինն այնպես, ինչպես քիչ առաջ հայելու մեջ, աչքով արեց իր նմանակին և անհետացավ դրան ետևում:

բանվորները խժիքում էին հարյուր հազարանոց բազմություններով. . . Տեղ-տեղ արդեն հեղափոխական դրոշներ էին փողփողում: Փողոցների լայնքով հապճեապ բարիկադներ էին սարքում շուր տված ավտոբուսներով, պատուհաններից, դռներից դուրս նետված կահկարասիններով, լապտերայուններով, թուշե ցանկապատերով:

Գարինը փորձված աչքով տեսավ, որ բանվորները լավ են զինված: Ամբոխի միջով ձեղքող-անցնող բեռնատարների վրայից բաժանում էին գնդացիրներ, նոնակներ, հրացաններ. . . Անկասկած, Շելգայի գործն էր դա. . .

Մի քանի ժամ առաջ Գարինն ամենայն վստահությամբ գորքերը դուրս կրերեք ապստամբների դեմ: Բայց հիմա ավելի ու ավելի ջղային, մեքենայի ոտնակն էր սեղմում միայն՝ սլանալով հայիոյանքների ու կոչերի միջով. «Կորչ՝ դիկտատորը: Կորչ՝ երեք հարյուրի խորհուրդը»:

Հիպերբոլիքը Շելգայի ձեռքին էր: Այդ մասին գիտեին, այդ մասին ձայնում էին ապստամբները: Շելգան հեղափոխություն էր դեկավարում այնպես, ինչպես դիրիժորը հերոսական սիմֆոնիա կկատարեր:

Դեռ ոսկու վաճառքի օրերին Գարինի հրամանով տեղադրված բարձրախոսները հիմա գործում էին նրա դեմ՝ աշխարհով մեկ տարածում էին համընդհանուր ապստամբության լուրը:

Գարինի նմանակը, հակառակ Պյոտր Պետրովիչի բոլոր սպասումների, սկսեց գործել վճռականորեն և նույնիսկ բավական հաջող: Նրա ընտիր գորքերը գրոհեցին բարիկադների վրա: Ոստիկանությունը՝ աերոպլաններից զազառումբեր էր նետում: Հեծելազորը թրատում էր մարդկանց խաչմերուկներում: Հատուկ բրիգադները ջարդում էին դռների փականքները, ներխուժում բանվորների տներն ու ոչնչացնում ամենայն կենդանի շունչ-արարածի:

Սակայն ապստամբներն անհողող էին: Մյուս քաղաքներում, գործարանային խոշոր կենտրոններում, նրանք վճռականորեն անցան հարձակման: Կեսօրին ամբողջ երկիրը բռնվել էր ապստամբությամբ. . .

Գարինը մեքենայից քամում էր նրա տասնվեց միտցագլանների ողջ արագությունը: Մրրիկի պես սուրում էր զավառական փոքրիկ քաղաքների փողոցներով՝ խոզեր, շներ հավեր զցելով մեքենայի տակ: Անցորդները չէին հասցնում աշխները ձպել, երբ դիկտատորի սև, վիթխարի, փոշոտ մեքենան, փոքրանալով ու ոհնալով, անհետանում էր շրջադարձի ետևում. . .

Նա կանգ առավ միայն մի քանի րոպե՝ բենզին վերցնելու և ոադիատորը ջուր լցնելու համար. . . Ու քշեց, սլացավ ամբողջ գիշեր:

Առավոտյան դիկտատորի իշխանությունը դեռ տապալված չէր: Թերմիտային ոռւմբերից հրդեհիված մայրաքաղաքը բոցավառվում էր, փողոցներում մոտ հիտուն հազար դիակ էր

թափված: «ԱՇ քեզ բարո՞ն», — քմծիծաղեց Գարինը, երբ կանգառում բարձրախտար խոխոացրեց այդ լուրը... .

Հաջորդ օրվա ժամը հինգին գնդակոծեցին նրա մեքենան... .

Ժամը յոթին, ինչ-որ փոքրիկ քաղաքով անցնելիս, նա հեղափոխական դրոշներ ու երգող մարդիկ տեսավ... .

Նա սլացավ նաև երկրորդ գիշերը՝ դեպի արևմուտք, դեպի Խաղաղ օվկիանոս: Լուսաբացին, երբ բենգին էր լցում, բարձրախտուի սև երախից վերջապես լսեց Շելգայի լավ ծանոթ ձայնը:

— Հաղթանակ, հաղթանակ... . Ընկերներ, իմ ձեռքին հեղափոխության ահավոր գենքն է՝ հիպերբոլիդը... .

Աստամները կրծուացմելով, լսելով վիճչն վերջ, Գարինը շարունակեց ձանապարհը: Առավոտյան ժամը տասին խճուղու եզրին նա տեսավ առաջին պլակատը: Տախտակե վահանի վրա հսկայական տառերով գրված էր.

«Ընկերներ... . Դիկտատորը գերի է վերցված ողջ-ողջ: Բայց պարզվեց, որ դիկտատորը Գարինի նմանակն է, փոխանձ: Պյոտր Գարինը զադունի հեռացել է: Նա փախչում է արևմուտք... . Ընկերներ, զգոնություն ցուցաբերեք, բռնեք դիկտատորի մեքենան... . (Հաջորդում էին նշանները): Գարինը չպետք է խույս տա հեղափոխական դատաստանից»... .

Օրվա կեսերին Գարինը նկատեց, որ իր ետևից մոտոցիկլետ է գալիս: Նա չսեց կրակոցի ձայները, բայց գլխից մի տասը սանտիմետր հեռու, մեքենայի ապակու վրա հայտնվեց գնդակի անցք՝ մանրիկ ճաքերով: Ծոծրակը սարսուց: Նա քամեց մեքենայի գազը մինչև վերջ, նետվեց բլրակի ետևը, թերվեց դեպի անտառապատ լեռները: Մի ժամից կիրառում էր: Շարժիչն սկսեց փնչփնչալ, խափանվեց ու լոեց: Գարինը դուրս թռավ, թերեց դեկը, մեքենան հրեց զցեց դարն ի վար և, դժվարությամբ շարժելով թմրած ոտքերը, զառիվերով սկսեց բարձրանալ դեպի սոճու անտառը:

Վերևից տեսավ, որ խճուղով երեք մոտոցիկլետ էին սլանում: Ետևինը կանգ առավ: Զինված, գոտկատեղից վերև մերկ մի մարդ ցատկեց մոտոցիկլետից և կռացավ անդունդի վրա, ուր ընկած էր դիկտատորի շախչախված մեքենան:

Անտառում Պյոտր Պետրովիչը վրայից հանեց բոլոր շորերը, տարատից ու տակի ֆուֆայկայից բացի, երեսանց թեթև ձղոտեց կոշիկներն ու քայլեց դեպի երկաթուղու մոտակա կայարանը:

Չորրորդ օրը հասավ Լոս Անջելոսի մոտի ծովափնյա մենավոր դաստակերտին, ուր հանգարում կախված էր միշտ թռչելու պատրաստ նրա դիրիժարլը:

Վաղ արշալուսը շառայլվեց անամպ երկնքում: Օվկիանոսից վարդագույն գոլորշի էր ելում: Գարինը, դիրիժարի գոնդոլի պատուհանից ցած թեքված, հեռու ներքևում հեռադիտակով դժվարությամբ գտավ զբոսանավի նեղլիկ պատիճը: «Արիզոնան» նիրհում էր հայելանման ջրերի վրա, որոնց կապույտը թափանցում էր բարակ մշուշարողի միջով:

Դիրիժարին սկսեց ցած իջնել՝ հուրիրատելով այգաբացի շողերի մեջ: Զբոսանավից նկատեցին, բարձրացրին դրոշը: Երբ գոնդոլը դիպավ ջրին, «Արիզոնայից» մի նավակ եկավ նրա կողմը: Ղեկի մոտ նստած էր Զոյան: Գարինը հազիվ ճանաչեց մաղամ Լամոլին, այնքան նիհարել էր նրա դեմքը: Թռավ նավակի մեջ այնպիսի ժայռով, կարծես ոչինչ չէր պատահել, նստեց Զոյայի մոտ, թփրփացրեց նրա ձեռքին.

— Ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ: Մի տիրիք, պստիկս: Զախողվեց՝ թքա՛ծ: Մի նոր շիլաշփոթ կսարքենք. . . Հը, ի՞նչ ես քիթդ կախել. . .

Զոյան, խոժոռվելով, երեսը շուր տվեց, որ շտեսնի նրան:

— Ես հենց նոր թաղեցի Յանսենին: Հոգնել եմ: Հիմա ամեն-ամեն ինչ միևնույն է ինձ համար:

Հորիզոնի եզրից երևաց արևը՝ վիթխարի գունդը բարձրացավ կապույտ անապատի վրա, և հալվեց մշուշը, անէացավ տեսիլքի նման:

Զգվեց արևային ուղին յուղափայլ ցոլքերի խաղով, և վրան գծագրվեց «Արիզոնայի» երեք շեղ կայմերի և վանդակավոր աշտարակի սև ուրվապատկերը:

— Վաննա, նախաձաշ և մի լավ քնել— ասաց Գարինը:

«Արիզոնան» թեքվեց դեպի Ոսկե կղզին: Գարինը որոշել էր հարված հասցնել ուղիղ ապստամբների սրտին՝ ետ խլել մեծ հիպերբոլիդին ու հանքահորը: Կտրել էին զբոսանավի կայմերը, նավախելի ու ցոռւկի երկու հիպերբոլիդին էլ քողարկել էին տախտակներով ու պարուսինով՝ նավի ուրվապատկերը փոխելու և Ոսկե կղզուն աննկատ մոտենալու համար:

Գարինը վստահ էր ինքն իր վրա, վճռական զվարք, նորից ետ էր եկել լավ տրամադրությունը: Մյուս օրն առավոտյան, նավապետի օգնականը, որ ստանձնել էր նաևի հրամանատարությունը Յանսենի մահից հետո, անհանգստացած ձեռքը պարզեց վեր. արագորեն փետրանման ամպեր էին ելնում օվկիանոսի արևելյան կողմից, ծածկում երկինքը հսկայական, տասը կիլոմետրանոց բարձրության վրա: Մրրիկ էր լինելու, թերևս օվկիանոսային փոթորիկ՝ թայֆուն:

Գարինը, տարված իր մտքերով, նավապետին զրողի ծոցն ուղարկեց:

— Պա՛հ, թայֆուն, հերն էլ անիծած, Ավելացրե՛ք արագությունը...

Նավապետը կամրջակի վրայից մոայլ նայեց արագորեն ամպերով պտտվող երկնքին: Հրամայեց ամուր փակել լուսանցույցները, տախտակամածի վրա լավ կապել նավակներն ու այն ամենը, ինչ ալիքը կարող էր քշել տանել:

Օվկիանոսը մթագնում էր: Քամին փշում էր պոռթկումներով, ծովայիններին սպառնալի սուլոցով նախազգուշացնելով վերահաս աղետի մասին: Փոթորկի համբավաբերների՝ բարձրագնա փետրանման ամպերի տեղը հիմա քուլա-քուլա ցածլիկ ամպեր էին սողում: Քամին ավելի ու ավելի սպառնագին էր ալեկոծում օվկիանոսը, անհանգիստ ծածանք առաջացնելով սուրում հսկայական ալիքների վրայով:

Եվ ահա արևելքից սկսեց մոտենալ ոչխարենու պես սև, ցածլիկ, կապարագույն խորքով մի ամպ: Քամու պոռթկումները դարձան մոլեզին: Ալիքները թակալվում անցնում էին նավակողի վրայից: Եվ արդեն ծածանքը չէր, որ խորշումում էր աղոտ գորշավուն ալիքների կատարները. հիմա քամին ամբողջ ջրաքողեր էր փրցնում դրանցից, ծածկում ջրափոշու մշուշով. . .

Նավապետն ասաց Զոյային և Գարինին.

— Գնացեք ցած: Քառորդ ժամից մենք թայֆունի կենտրոնում կլինենք: Շարժիչները մեզ չեն փրկի:

Փոթորիկը հարձակվեց «Արիզոնայի» վրա տասնմեկ բալի ողջ կատաղությամբ: Զրոսանավը, խորասուզվելով, կողքից կողք ընկնելով այնպես, որ հատակը մերկանում էր մինչև ողնափայտը, այլևս չենթարկվելով ոչ դեկին, ոչ պտուտակներին, հետզհետե նեղացող գալարներով քշվում տարվում էր դեպի թայֆունի կենտրոնը կամ «ջրափոսը», ինչպես ծովայիններն են ասում:

Երբեմն հինգ կիլոմետրի հասնող տրամագծով «ջրափոսը» թայֆունի պտուտակենտրոնն է. տասներկու բալանոց քամիներն ամեն կողմից սուրում են «ջրափոսի» ալիքաշրջանով՝ իրենց ուժերը հավասարակշռելով նրա մակերեսի վրա:

Շրջապտույտով նման մի «ջրափոս» էր ալանում խղճուկ այդ կճեպը՝ «Արիզոնան»:

Սև ամպերը քսվում էին տախտակամածին: Մթնեց այնպես, կարծես զիշեր իջավ: Զրոսանավի կողերը ճռչում էին: Մարդիկ, ջարդվածքներ չստանալու համար, կառչում էին ինչից պատահեր: Նավապետը հրամայեց իրեն կապել կամրջակի բազրիքից:

«Արիզոնան» ելավ ջրալեռան կատարը, թեքվեց կողքի ու նետվեց խորխորատը: Եվ հանկարծ կուրացուցիչ արև շողաց, մի վայրկյան կտրվեց քամին, և կանաչ-թափանցիկ, հալված ապակու փայլ ունեցող ալիքներ հայտնվեցին շուրջը՝ տասնահարկ ջրազանգվածներ, որ բախվում էին խլացուցիչ ճռիկունով, ասես ինքը՝ ծովի արքա Նեպտունը, զազազած՝ ձեռքերը շպացնում էր իրար. . .

Դա էլ հենց «ջրափոսն» էր՝ թայֆունի ամենավտանգավոր տեղը: Այստեղ օդի հոսանքներն ուղղաձիգ խոյանում են վեր՝ իրենց հետ ջրի գոլորշիները բարձրացնելով տասնյակ կիլոմետրեր, և այնտեղ սփռում այդ գոլորշիները փետրանման ամպերի ձևով, որ թայֆունի վերին գումաններն էին. . .

«Արիզոնայի» վրայից ալիքները սրբեցին տարան ամեն ինչ՝ նավակները, հիպերբոլիդների վանդակավոր աշտարակները, ծխնելույզն ու նավապետի կամրջակը՝ նավապետի հետ. . .

Խավարով ու պտուտամբրիկով շրջապատված «ջրափոսը» սլանում էր օվկիանոսով՝ ալիքների հրեշային հորձանուտի մեջ առած տանելով «Արիզոնան»:

Շարժիչներն այրվեցին, դեկը ջարդվեց:

— Էլ չեմ կարող դիմանալ,— տնքաց Զոյան:

— Երբսիցեւ վերջանալու է սա. . . Օ՛, անե՛ծք,— պատասխանեց Գարինը խոպոտ:

— Նրանք երկուսն էլ ջարդված էին, խոշտանգված պատերին ու կահույքին խփվելուց: Գարինի ճակատը պատռվել էր: Զոյան պառկած էր խցիկի հատակին՝ ամրակցված մահճակալի ոտքից կառչած: Հատակի վրա, մարդկանց հետ, դեսուդեն էին գլորվում ճամպրուկները, պահարանից թափված գրքերը, բազմոցի բարձիկները, խցանագոտիներ, նարինջներ, ամանեղենի կտորտանք:

— Էլ չեմ դիմանում, Գարին, ինձ ծովը զցիր. . .

Սիավոր ցնցումից Զոյան պոկվեց մահճակալի ոտքից, գլորվեց: Գարինը գլուխկոնծի թռավ նրա վրայով, զարկվեց դրանը. . .

Ճայթյուն լսվեց, զարհուրելի ճարճատյուն: Հորդող ջրի շառաչ: Մարդկանց ճիշ աղաղակ: Խցիկը մաս-մաս եղավ: Ջրի հուժկու հոսանքն առավ երկու մարդկանց, նետեց խլթիւթացող աղոտ-կանաչավուն հորձանուտը. . .

Երբ Գարինն աչքերը բացեց, նրա քթից մի տասը սանտիմետրի վրա կիսով չափ սաղափել իւցու մեջ մտած մի փոքրիկ ճնճակոր խեցգետին աչքերը չոել ու զարմացած բեղիկներն էր շարժում: Գարինը ճիզով հասկացավ. «Հա, ողջ եմ». . . Բայց դեռ երկար ժամանակ ուժ չուներ տեղից բարձրանալու: Ընկած էր կողքի, ավագի վրա: Ազ ձեռքը ջարդված էր: Դեմքը կնճռոտելով ցալից, նա այնուամենայնիվ կարողացավ իրեն քաշել ոտքերը, նստել:

Քիչ հեռու արմավենի կար. պաղ քամին կորացրել էր ծառի բարակ բունը, տերևներն էր քրքրում. . . Գարինը ոտքի ելավ, քայլեց օրորվելով: Շուրջն ամենուր կանաչակապույտ, արևացոյ ալիքներ էին, որ հասնելով ցածրադիր ափին, փշրվում էին խշշոցով. . . Մի քանի տասնյակ արմավենիներ քամու առաջ հովհարի նման փոել էին լայն տերևները: Ավագի

Վրա այստեղ-այնտեղ թափված էին փայտի կտորտանք, արկղեր, ինչոր լաթեր, ճոպաններ... Այն ամենը, ինչ մնացել էր «Արիզոնայից», որ խորտակվել էր ու ջրասույզ եղել ամբողջ անձնակազմի հետ՝ զարկվելով կորայան այդ կղզու խութերին:

Գարինը կաղալով գնաց կղզու խորքը, ուր, ավելի բարձր տեղերում, ցածլիկ թփուտներ կային և վառ կանաչ խոտ: Այնտեղ պառկած էր Զոյան՝ մեջքի վրա, ձեռքերը տարածած: Գարինը նատեց նրա մոտ՝ վախենալով ձեռք տալ մարմնին, որ չզգա մահվան սառնությունը: Բայց Զոյան ողջ էր. նրա կոպերն սկսեցին դողդողալ, ցամաքած շրթունքները պոկվեցին իրարից...

Կորայան այդ փոքրիկ կղզում անձրևաջրերից գոյացած լճակ կար. ջուրը դառնավուն էր, բայց պիտանի խմելու համար: Առափնյա ծանծաղուտներում խեցեմորթներ կային, մանր խխունջներ, մարջանապոլիպներ, ծովախեցքետիններ, մի խոսքով՝ այնպիսի բաներ, որ ժամանակին նախնադարյան մարդու ուտելիքն են եղել: Արմավենու տերևները կարելի էր օգտագործել որպես հագուստ և մարմինները պաշտպանել հարավային արևից:

Մերկ հողակտորի վրա նետված երկու մերկ մարդ կարող էին ապրել մի կերպ... Եվ նրանք սկսեցին ապրել Խաղաղ օվկիանոսի անապատում կորած այդ փոքրիկ կղզում: Հույս անգամ չկար, որ կղզու մոտով նավ կանցնի և, նկատելով նրանց, կվերցնի:

Գարինը խեցիներ էր հավաքում կամ շապիկով ձուկ որսում լճում: Զոյան «Արիզոնայից» ափ նետված արկղերից մեկի մեջ գտավ Ոսկե կղզում կառուցվելիք ապարանքների և զվարձարահների նախագծերն ամփոփող գրքի հիսուն օրինակ՝ շքեղ հրատարակությամբ: Նույն գրքում գետեղված էին նաև մաղամ Լամոլի՝ աշխարհի տիրուհու, սահմանած օրենքներն ու պալատական վարվելակարգի կանոնադրությունը...

Ամբողջ օրերով, արմավենու տերևներից սարքած հյուղակի ստվերում նստած, Զոյան թերթում էր անհազ երևակայությամբ ստեղծված այդ գիրքը: Մնացած քառասունինն օրինակից, բոլորն էլ՝ ոսկեզարդ սաֆյանե կազմով: Գարինը ցանկապարհապ շինեց քամուց պաշտպանվելու համար:

Գարինն ու Զոյան չեին խոսում իրար հետ: Ինչո՞ւ խոսեին: Եվ ինչի՞ մասին: Նրանք իրենց ամբողջ կյանքում մենակ էին եղել՝ ամեն մեկն իր համար, և ահա վերջապես կատարյալ միայնություն էին ձեռք բերել:

Նրանք խառնել էին օրերի հաշիվը և այլս չեին հաշվում: Երբ ամպրոպներ էին անցնում կղզու վրայով, լճակը լցվում էր թարմ անձրևաջրով: Ամիսներ շարունակ անամապ երկնքից մոլեգնորեն հուր էր թափում արևը: Այնժամ նրանք ստիպված էին լինում նեխած ջուր խմել...

Ի՞նչ իմանաս, երևի մինչև օրս էլ Գարինն ու Զոյան խխունջ ու ոստրե են հավաքում այդ փոքրիկ կղզում: Ուտել կշտանալուց հետո Զոյան նստում է, թերթում ապարանքների

հրաշք նախագծերն ամփոփող գիրքը, ապարանքներ, ուր մարմարե պունաշարերի և ծաղիկների մեջ հառնում է աշխարհի տիրուհու մարմարակերտ հոյակապ արձանը: Իսկ Գարինը, քիթն ավազի մեջ խոթած և պիշակ-քուրջը զիսին քաշած, խոմփացնում է՝ հավանաբար ինքն էլ երազում զանազան լավ-լավ հեքիաթներ տեսնելով: